

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՁՅԱՆ

նամակների ընթացքից

պատմվածք
էսսե
կոլաժ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2009

ՀՏԳ- 891.981-32 Խանջյան
ԳՄԳ- 84Հ-44
Խ 266

*Հեղինակն իր երախտագիտությունն է
հայտնում գրքի հովանավորին*

Խանջյան Գուրգեն
Խ266 Նամակներ ընթացքից: Պատմվածքներ, էսսեներ,
կողմեր/Գուրգեն Խանջյան.-Եր.:
Հեղինակային հրատարակություն, 2009.-272 էջ:

«Նամակներ ընթացքից». Գուրգեն Խանջյանի պատմվածքները,
էսսեներն ու կողմերն են (1985-2009թթ), մանուկն ու տարբեր
ժողովածուներում լույս տեսած: Այս գրքում տեղ գտած գործերը հեղինակի
կողմից հիմնովին վերամշակված են:

Գ-նդ 84Հ-44

ISBN 978-9939-53-449-7

**ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԳՐՈՂԱԿԱՆ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ
ՀԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Վերջին տարիներին Գուրգեն Խանջյանի ստեղծագործական կարեւորություններն ավելի շատ դրսևորվում են վիպագրության ու դրամատուրգիայի ժանրային տարածության մեջ, իսկ ահա փոքր արձակի, ի մասնավորի՝ պատմվածքի ու էսսեի ոչ այնքան հաճախակի երևումներն ընկալվում ու մեկնաբանվում են իբրև «վեպից վեպ» ստեղծագործական տարածության միջանկյալ փորձարկումներ ու հրապուրանքներ: Մա գուցե ճշմարիտ է գրողի ընթացային ներկա օրինաչափությունների համապատկերում, սակայն ընդհանրական, նախընթաց զարգացումները պարագրկող հայացքի պարագային փաստ է, որ Գուրգեն Խանջյանը մեր ժամանակների լավագույն պատմվածքագիրներից է, արդեն կարելի է ասել՝ իսկական վարպետ, ում փոքր արձակն իր մասնավոր հատկականություններով մեծապես նպաստել է ժանրի արդի նկարագրի ձևավորմանը:

1994թ. լույս տեսած «Շարժասանդուղք» պատմվածքների ժողովածուն, որն, ի դեպ, Խանջյանի առաջին գիրքն է, հատկանշվում էր երևույթների էքզիստենցիալ փորձը նկատմամբ, որը պայմանավորում էր համապատասխան կառուցվածք ու պատում: Թեմատիկ-բովանդակային երբեմն ընդգծված սևեռվածությունն ու գտնված հնարքների հաճախակի կրկնությունները ինչ-որ չափով թուլացնում էին ընդհանուր տպավորությունը, սակայն «Շարժասանդուղքով» հայ պատմվածքի զարգացման, ժանրային նկարագրի թարմացման համար բացվում էին նոր հեռանկարներ: «Ստվերներ խամաճիկների փողոցում» (1998) ժո-

ղովածուում ընդգրկված պատմվածքներն արդեն որակական նոր աստիճան էին հատկապես պատումի բնույթով: Եթե նախորդ ժողովածուում ինքնատիպությունը առավել հաճախ ներկայանում էր միջնորդավորված հղումների համատեքստում, ապա այստեղ Խանջյանի՝ ինքնացման տանող գրողական ջանքերը ոչ միայն զգալի էին, այլև համակարգված: Էքզիստենցիալ սևեռումներն այստեղ իրենց տեղը զիջել էին էքզիստենցիալ խաղարկումներին, որը հնարավորություն էր ընձեռում ոճական ու թեմատիկ ուշագրավ համադրումներ անել: «Մարդկանց տուն ուղարկիր» (2004) ժողովածուի փոքր արձակը ներկայանում է կոլաժի ու էսսեի ներժանրային մասնավորություններով: Հատկապես կոլաժի խանջյանական իրացումները հատկանշվում են տպավորիչ լուծումներով: Սա, հիրավի, պատումի նոր մակարդակ է, որ հուսով եմ՝ դեռ դրսևորվելու է Խանջյանի գրականության մեջ:

Ներկա՝ «Նամակներ ընթացքից» նոր ժողովածուն, ահա, ամփոփում է Խանջյանի գրեթե բոլոր պատմվածքները, կոլաժներն ու էսսեները, որոնք ընդգրկված էին վերը հիշատակված ժողովածուներում, ինչպես նաև նույն ժանրերի՝ 2004թ. հետո գրական մամուլում հրապարակված ստեղծագործությունները: Այլ կերպ ասած՝ Խանջյանն այս գրքով ամփոփում-ամբողջացնում է իր փոքր արձակի նկարագիրը: Նշեն, սակայն, որ սա հերթապահ մտահղացում չէ, այլ գրողական փորձառությամբ լուրջ ստեղծագործական իրացում՝ գեղագիտական նպատակապահ առանցքով, որի խնդիրը ոչ թե նախընթացի հավաքումն է մեկ գրքում, այլ՝ նախընթացով **նոր** գիրք ստանալը: Այս առումով՝ կարևորվել է երկու հատույթ:

Նախ՝ Խանջյանն ամբողջովին կամ մասնակիորեն վերանշակել է ժողովածուում ներառված գրեթե բոլոր գործերը, հատկապես՝ «Շարժասանդուղքում» ընդգրկվածները, քանզի դրանցում է, որ առկա էին գրողական սկզբին բնորոշ թերացումներն ու անհստակությունները:

Եվ ապա՝ ժողովածուում Խանջյանը պատմվածքների, կոլաժների ու էսսեների համար ապահովել է նոր համատեքստ, այ-

սինքն՝ ընկալման ու մեկնաբանման նոր հնարավորություններ: Այս իմաստով՝ շատ կարևոր է նաև ժողովածուի վերնագրի ընտրությունը:

Վերնագրում առկա **նամակ** բառը ցուցանում է Խանջյանի ժանրընկալման նոր մեկնակետերը: Այստեղ լավագույնս բնութագրված է Խանջյանի գրականության ու մասնավորապես՝ փոքր արձակի գործառնականության բնույթն այսպես ասած՝ հասցեատիրոջ առումով, մյուս կողմից՝ Խանջյանի պատումն իր չընդհատվող երկխոսական բնույթով, էպիստոլյար ժանրերին բնորոշ խոստովանական տարրերով, դիմումնային ձևերի հաճախադեպ կիրառությամբ՝ առավել հարազատ է նամակի ներքին տարերքին: Մյուս կողմից՝ գրողական փորձառության հեռադրությունը, կամ գուցե նաև՝ պատմվածքների՝ անցյալ ժամանակում ստեղծված լինելու պարագան են մղել Խանջյանին սեփական ստեղծագործություններն ընկալել ու իմաստավորել իբրև նամակներ:

Արդի հայ գրականության կայացման, ընդհանուր օրինաչափությունների ձևավորման գործում Գուրգեն Խանջյանի ավանդը, հիրավի, նշանակալից է: Արդեն պատկառելի ծավալ ունեցող նրա ստեղծագործական ժառանգության յուրաքանչյուր մասնավորություն թե՛ թեմատիկ, թե՛ ժանրային իրացումների առումով հարստացրել է արդի հայ գրականության նկարագիրը: Ուստի՝ ստացվել է այնպես, որ Խանջյանի գրականության մասին խոսել, դիտարկումներ կատարելը, չնչին բացառություններով, նույնն է, թե արդի հայ գրականության մասին խոսելը: Այդ առումով՝ եթե նրա «Թատրոն 301» ժողովածուն լիարժեք պատկերացում էր տալիս նաև վերջին տարիներին հայ դրամատուրգիայում կատարված բոլոր տեղաշարժերի ու նորարարությունների մասին, ապա՝ «Նամակներ ընթացքից» ժողովածուն ամբողջացնում է ոչ միայն Գուրգեն Խանջյանի փոքր արձակի ընդհանուր նկարագիրը, այլև բազմաթիվ առումներով մեկնակետեր է տալիս ժանրի արդի տեղաշարժերի համապատկերը ներկայացնելու համար:

ԱՌՆԵՏԸ

Դ-ն տարակուսած էր. արդեն մի քանի օր նրան համակել էր ինչ-որ տարօրինակ կանխագագացում, և նա ոչ մի կերպ չէր կարողանում կռահել, թե ինչ է ակնարկում այն: Առօրյայում չկար քիչ թե շատ շոշափելի որևէ փոփոխություն, որից կարելի լիներ գոնե հեռավոր կերպով գուշակել կանխագագացման խորհուրդը: Որքան էլ բծախնդրությամբ վերլուծում էր վերջին օրերի ընթացքը, արդյունքի չէր հասնում՝ առօրյան անփոփոխ էր. առավոտյան հապճեպորեն խփշտում էր իր սովորական սխտորով ձվածեղը, կապում մուգ կապույտ, երկարատև գործածության պատճառով արդեն տեղ-տեղ փայլող փողկապը, ճաղատը ծածկում նույն գույնի եզրավոր գլխարկով, վառում նեղ շրթունքներով սեղմած սիգարետը և թևի տակ դնելով կաշվե հնամաշ թղթապանակը՝ տանից դուրս գալիս: Վերելակի խցիկում գետնին էր գցում ծխացող սիգարետի մնացուկը, առատորեն թթում վրան, ապա կրնկով կոխրճում. թուքն ու պատռված սիգարետից թափված ծխախոտը միախառնվելով՝ հատակին գոյացնում էին լարձուն, զգվելի կեղտաբիծ: Ընդհանրապես՝ հաճախակի թքելու սովորություն ուներ՝ սեփական արտաթորանքներով նշան դնող կենդանու նման: Մետրոյում թունելախորշով մոտեցող լուսաշեղքը դեռ հեռվից նկատած, իբր խուճապահար, սկսում էր անհարկի հրմշտել մարդկանց, իսկ վագոնում բազմության մեջ այնպես էր հարմարվում, որ բռնակներից բռնվելու կարիք չլինի և անդադար կեղծ հորանջում էր՝ ուղևորների դեմքին փչելով սխտորահոտը: Գրասենյակում դժվարությամբ ու անհաջող քողարկելով չարությունը, շինծու ժպտում էր աշխատակիցներին, իսկ երբ նրանք շրջվում էին՝ թիկունքներին էր մեխում արդեն չքողարկված, թունոտ արհամարհանքով ու ատելությամբ լեցուն հայացքը: Երեկոյան, գործից տուն դառնալիս, հարմար առիթը բաց չէր թողնում իր ծուռ, ոսկրոտ ցուցամատով կտտացնելու ծնողների կողմից անուշադրության մատնված երեխաների գլխին կամ կոխրճելու երազանքներով տարված միամիտ անցորդի ոտքը: Տանը նախ փոխում էր հագուստը, ապա ընթրում և միացնում հեռուստացույցը՝ ինքն իրեն բարձրաձայն մեկնաբանելով էկրանային իրադարձությունները: Ոչ մի բան սրտով չէր, այդ պատճառով մեկնաբանությունները լեցուն էին գռեհիկ արտահայտություններով ու հայիոյանքով: Երբ դժգոհությունը հասնում էր ծայրագույնի՝ տեղից գայրացած վեր էր թռչում, թափով սեղմում հեռուստացույցի անջատիչը և պառկում

քնելու: Անկողնում երկար երազում էր՝ տարօրինակորեն ցնցվելով և հառաչելով. երազում էր մթության մեջ, նույնիսկ վարագույրներն էր վրա բերում՝ ասես զգուշանալով բացահայտումից:

Այդ, առօրյան անփոփոխ էր: Սակայն կանխագագացումը չէր չքանում, և Դ-ն ստիպված մտածում էր, որ այնուամենայնիվ, վաղ թե ուշ, ինչ-որ բան է լինելու: Իհարկե, այդ ինչ-որ բանը կարող է և տհաճ լինել, սակայն անհայտությունը միշտ հետաքրքրություն է պարունակում, և Դ-ն սպասում էր: Սպասում էր՝ ջանալով խույս տալ կաշուն, հիասթափեցնող այն մտքից, թե վերջին գիշերներին պատի ետևում հայտնված ճանկըտոցն ինչ-որ կերպ կապված է իր սպասումին: Սակայն օրերն անցնում էին, իսկ կյանքը կռահումներ չէր համար ոչ մի հենակետ չէր առաջարկում՝ թողնելով միայն ճանկըտոցի տհաճ ծայրը:

Սովորաբար, երբ ճանկըտոցի տհաճությունը հասնում էր գագաթնակետին, Դ-ն վերցնում էր հողաթափը և ծայնի ուղղությամբ կողմնորոշվելով՝ խփում պատին. պատի ետևում անմիջապես լռություն էր տիրում, ասես այնտեղ կենտրոնացած փորձում էին կռահել սենյակում տեղի ունեցածը: Սակայն քիչ անց ճանկըտոցը վերսկսվում էր:

Իսկ ծայնն օրեցօր ավելի որոշակի էր դառնում, ավելի մոտենում, և Դ-ն այլևս չէր փորձում խանգարել առնետին. այն բանից հետո, երբ հանդգնեց, թե կանխագագացումն ու պատի ետևում հայտնված ծայնն ինչ-որ կերպ կապված են՝ ճանկըտոցի պատճառած տհաճությունը վերափոխվեց սպասումով լեցուն հետաքրքրությամբ:

Դ-ին զարմացնում էր առնետի համառությունը. բնակարանում պաշար արած մթերք չկար, եղած-չեղածը փակված էր սառնարանում, առնետը սա պետք է կռահեր, չէ՞ որ առնետ էր, ուստի ի՞նչն էր նրան գործողության մղում...

Վերջապես մի առավոտ, երբ Դ-ն արթնանալով՝ նայեց պատի կողմը, անկյունում տեսավ նորաբաց մութ ձեղքը, որի կողքերը խնամքով հարթեցված էին՝ ասես խարտոցով, իսկ հատակին թափված էր փայտափոշին:

Այդ գիշեր Դ-ն լույսը վառ թողեց, նստեց անկողնում, ձեռքերի մեջ առավ ցցուն այտոսկրերով և մանրիկ աչքերով ձաղատ գլուխն ու սպասեց: Գիշերվա մի պահի, երբ քունն ուր որ է հաղթելու էր, ձեղքի կողմից ծվծվոց լսվեց: Դ-ն բարձրացրեց ծանրացած կոպերն ու տեսավ. առնետը նստած էր ձեղքի մոտ և ուշադրությամբ իրեն էր նայում: Որոշ ժամանակ այդպես լռելյայն ուսումնասիրեցին միմյանց, հետո առնետը ծվծվոց և անշտապ մտավ ձեղքը: Ծանոթությունը կայացած էր: Եվ Դ-ն հանկարծ զարմանքով հայտնաբերեց,

որ մտքով իսկի չի անցնում ազատվել առնետից: Նույնիսկ ճեղքը չփակեց, հակառակը՝ մի յուրոտ պանրակտոր դրեց ճեղքի մոտ, իսկ հաջորդ օրը նաև կաթ՝ պստիկ պնակով: Հյուրասիրությունները դուր եկան առնետին, և ճշտապահ հյուրի նման՝ նա ամեն երեկո սկսեց ներկայանալ ընթրիքի: Շուտով իսպառ վերացավ անվստահության անջրպետը, և նա արդեն համարձակորեն զբոսնում էր սենյակում՝ հոտոտելով անկյունները:

Դ-ն դժվարանում էր բացատրել իր բարյացակամությունն այդ գորշ կրծողի նկատմամբ: Ասես աներևույթ մի ուժի կամքով հայտնված արտառոց համակրանքն առավել տարօրինակ էր, որովհետև նա երբեք սեր չէր տածել կենդանիների հանդեպ, հակառակը՝ երբեք առիթը բաց չէր թողել քացահարելու դյուրահավատ շանը կամ կատվին: Եվ հանկարծ՝ համակրանք առնետի նկատմամբ: Դ-ն ինչ-որ տեղ լսել էր, թե առնետի սպերման շատ նման է մարդու սպերմային, սակայն միամիտ կլիներ դրանով բացատրել երկուստեք այդ համակրանքը: Ուստի, որտե՞ղ էին թաքնված նրանց կապող ամեղձվածային թելերը...

Ինչևէ, փաստը մնում էր փաստ՝ Դ-ի և առնետի միջև հաստատված էր բարեկամություն, որն օրըստօրե ամրապնդվում էր՝ ընդունելով նորանոր դրսևորումներ:

Չավեշտալի տեսարան էր, երբ Դ-ն, քստքստացնելով հողաթափերը և աններդաշնակ շվշվացնելով, ընթրիք էր պատրաստում, իսկ առնետը, հաճախակի սայթաքելով լաքապատ մանրատախտակի վրա, ամենուրեք հետևում էր նրան: Բավական էր Դ-ն կանգ առներ՝ առնետը, բաց չթողնելով ներկայացած առիթը, խոնավ մռուռը քնքշորեն քսում էր հողաթափերից դուրս մնացած նրա մերկ կրունկներին: Նման պահերին Դ-ն ակամայից հիշում էր կնոջը, ով ասում էր՝ «Չեմ հասկանում, այսպիսի հոտած ուղքերով ո՞նց կարելի է ապրել»:

Իր մտմտումները Դ-ն սովորաբար կիսում էր առնետի հետ.

«Այ հիմա կկտրտենք երշիկը, այսպես, հիմա լվանք կանաչին... Ու՞ր է կանաչին, երկարպոչ ավազակ, հը՞, ըհը, գտանք: Հերիք լիզես ոտքս, պանիր չի, համբերի մի քիչ, գնա սենյակ ու սպասի, հիմա կբերեն: Էհ, բարեկամս, եթե իմանայիր, թե ինչ թունդ վեճերի մեջ ընկա այսօր... Տականքներ: Ոչինչ, ոչինչ, քիչ մնաց, մոտ է ժամը, ես նախագգում եմ, գալիս է իմ ժամը, նրանք դեռ կտողան իմ առջև, նրանք դեռ կզղջան: Դու ինձ հավատում ես, չէ՞: Այ թե մարդ լինեիր, ինչեր կանեինք երկուսով... Մենակ դժվար է, նույնիսկ՝ ինձ համար: Համախոհներ են պետք: Բայց որտեղի՞ց... Շուրջս փալնքոտ, վախկոտ, նախանձ մարդիկ են, ու՞մ վստահես: Է, եղբայր, այդպես վրա

մի տուր, կխեղդվես»: Ի պատասխան՝ Դ-ն առնետից լսում էր տարբեր երանգների ծվծվոցներ, և դա լիովին բավարարում էր նրան, որովհետև տանել չէր կարողանում, երբ իր խոսքը միջամտում էին կամ իրեն խորհուրդներ տալիս, կամ էլ, որ առավել անտանելի էր, հակաճառում էին: Դ-ն խորապես համոզված էր՝ չկա և չի լինի այնպիսի մեկը, որն արժանի է քննարկելու իր մտքերը:

Երբ առաջին անգամ շոյեց առնետի գորշ մորթին, հայտնաբերեց, որ դա ոչ միայն զգվելի չէ, այլև՝ բավականին հաճելի: Առնետը փափուկ էր, տաք: Այդուհանդերձ, Դ-ն դեռ երկար ժամանակ չէր համարձակվում դիպչել անկենդան թվացող, մերկ պոչին, սակայն հետագայում վարժվեց նաև դրան: Սովորաբար, ընթրիքից հետո, երբ նստում էր հեռուստացույցի առաջ, առնետը, փորի տակ ծալելով մորթագուրկ, վարդագույն թաթիկները, տեղավորվում էր Դ-ի ծնկներին և տրվում փաղաքշանքներին: Հաճույքից նա փակում էր աչքերը, ժամանակ առ ժամանակ ինքնամոռաց ծվում: Առնետի ռիթմիկ շնչառությունից վերուվարող մարմնի ջերմությունն էլ Դ-ին էր հաճելի: Այդ հաճույքի մեջ նա երբեմն արտառոց թրթիռներ էր որսում, որոնց իմաստն ընկալել դժվարանում էր:

Չմռան վերջին օրն էր: Դ-ն երեկոյան տուն մտավ բարձր տրամադրությամբ, զույգ ծանր մթերապարկերով բեռնված: Նա և առնետն արդեն բավականաչափ լավ էին զգում միմյանց տրամադրությունները, այնպես որ առնետին հերիքեց մի թռուցիկ հայացք, որպեսզի անհապաղ վարակվի Դ-ի զվարթությամբ. նա սկսեց պտտվել սեփական առանցքի շուրջը և ուրախ ցատկոտել: Դ-ն հանեց գլխարկը, նշան բռնեց և նետեց: Նետումը դիպուկ էր՝ առնետին ծածկած գլխարկը, Դ-ի հռեռոցի ուղեկցությամբ, այս ու այն կողմ սահեց հատակի վրայով: Երբ առնետին վերջապես հաջողվեց ազատվել գերությունից՝ նա իր պլստան աչքերը կշտամբանքով ոլորեց Դ-ի վրա:

- Դե,- խոսեց Դ-ն,- մոտ արի, շնորհավորի բարեկամիդ. այսօր ծննդյանս օրն է: Եթե հավատանք ողորմածիկ տատիս, ես ծնվել եմ կեսգիշերից ընդամենը մեկ ժամ առաջ: Թե ինչու՞ շտապեցի, մի քիչ էլ համբերեի, էլի: Դու հասկանո՞ւմ ես՝ ինչ է նշանակում ծնվել փետրվարի քսանինին... Դա նշանակում է, որ իմ ծննդյան տոնը չորս տարին մեկ է լինում միայն:

Մթերապարկերի պարունակությունը կռահել ձգտող առնետի սուր մռուռը ստացավ այն արտահայտությունը, որը Դ-ն սովորաբար մեկնաբանում էր որպես ծայրահեղ:

- Այսօր պնակդ դնում եմ սեղանին: Քե՞ք ենք անելու, ես ու դու, և թքած առնետային ու մարդկային ցեղերի մյուս բոլոր ներկայացու-

ցիչների վրա: Ահա, այս բարձիկը քեզ համար եմ բերել, կոնենք սեղանին, իմ դիմաց: Այսպես: Հիմա կարող ես առք-փառք մեկնվել: - Դ-ն զգուշորեն բարձրացրեց առնետին և տեղավորեց ասեղների համար նախատեսված թավշյա փափուկ բարձիկին, ապա նայեց ու մտախոզվեց.- Կներես, պոչդ հաշվի չեմ առել: Լսի՛ր, իսկ ինչի՞նչ է պետք այդ անհեթեթ պոչը, հը՞: Արի կտրենք... Լավ, մի փքվի, կատակեցի, դու հոյակապ պոչ ունես, կրծողների ընտանիքի պոչերից լավագույնը: Գո՞հ ես... Իհարկե գոհ ես, շողոքորթություն բոլորն են սիրում՝ մարդ, թե կենդանի:

Դ-ն սկսեց փոխել հագուստը: Սովորաբար, այդ գործողության արագությունից առնետն անսխալ պատկերացում էր կազմում նրա քաղցածության չափի մասին: Պատահում էր, որ Դ-ն հագուստը փոխում էր ընթերցում հետո, ինչով մեծագույն հրձվանք էր պատճառում առնետին: Այս անգամ նա չհագավ տնային հանդերձները. բարձրացնելով ընդարձակ անդրավարտիքը՝ մոտեցավ զգեստապահարանին և հանեց շքեղ սև կոստյումը, որ նախատեսված էր տոնական օրերի համար:

- Ես ձեզ դու՞ր եմ գալիս,- հարցրեց, երբ արդեն հագել էր:

Առնետը լպստեց մոռուք՝ անհամբերությամբ նայելով մթերապարկերի կողմը:

- Պարզ է,- ասաց Դ-ն և սկսեց սեղան զգել:- Տես ինչ պանիր է՝ անցքերը մեծ, յուղոտ: Հոլանդական է: Կաթի փոխարեն այսօր կաթնասեր կստանաս: Սա ծիթապտուղ է, դու չես ուտի, սա՝ բաստուրմա, էլի չես ուտի, կծու է, խոզապուխտ էլ չես ուտի... Կուտե՞ս: Ահա միրգը, սա էլ՝ կոնյակ: Կոնյակ չես խմի, չէ՞: Մռութդ ես ծռում, ի՞նչ ես հասկանում կոնյակից:- Նա ձեռքն առավ շիշը և սկսեց բացել:- Գիտե՞ս, երբ բանակում ծառայում էի, պահեստապետ էի գորանոցի պահեստում, ձեր ձեռքից արծում չունեի, ստիպված՝ թակարդներ էի դնում: Բա ի՞նչ անեի, ցեղակիցներդ ինձ վստահված ամբողջ մթերքը փչացնում էին: Ճիշտ է, նրանց ներկայությունն անհրաժեշտ էր, որ տարածիս մեղքը վրաները զցեմ, բայց դե չափն անցնում էին:- Դ-ն լցրեց բաժակը.- Դեհ, սկսենք:

Առնետը, աչքը յուղոտ պանրակտորին, մի քիչ կաթնասեր խմեց, իսկ երբ հարձակվեց պանրի վրա, Դ-ն ծիծաղելով նկատեց.

- Գոնե անցքերը թող, ավազակ:

Քիչ հետո, երբ մարել էր քաղցի առաջին ալիքը, սիգարետ վառեց՝ բացելով օղանցքը. առնետը տանել չէր կարողանում ծուխը:

- Լսիր, ինչու՞ ես մենակ,- հարցրեց Դ-ն,- ու՞ր եմ տիկինդ, ճտերդ, հը՞: Թե՞ դու էլ քո ցեղի հետ նույնպիսի հարաբերությունների մեջ ես, ինչ ես՝ իմ:

Առնետը դադարեցրեց ծնոտների աշխատանքը և չարաձճիորեն ծանրեց քիթը:

- Չլինի՞... Տես, է, մտքովս չէր անցել:- Դ-ն մտաբերեց այն տարօրինակ թրթռները և քրքջաց:- Է՞գ ես: Լու՞րջ: Արի, արի տեսնեմ: Դե, դե, մի ամաչի:- Նա առնետին զգուշորեն շրջեց մեջքի վրա:- Առանձնապես տարբերություն չեմ տեսնում... Հա, հրես... Ի՞նչ էլ վարդագույն ծիծիկներ ունեք, տիկին: Դե լավ, մի կոտրատվեք, մենք ու մերոնք ենք: Չլինի՞ կույս եք...

Առնետը համեստորեն, սակայն ոչ առանց հպարտության, կկոցեց աչքերը: Դ-ն ծիծաղելով բաց թողեց նրան, վերցրեց լուցկու հատիկը և ետ ընկնելով աթոռի թիկնակին՝ սկսեց փորել երկար, դեղին ատամների արանքները: Լուցկին չարեց, կարիք չկար, ատամներն այնքան հեռու էին միմյանցից, որ լուցկին հենց այդպես էլ ազատորեն անցնում էր արանքներով: Որոշ ժամանակ ինքնամոռաց քչփորեց, հետո հատիկը հեռացրեց բերանից, սվսվացրեց՝ օղը ներսուղուրս մղելով, ծամծմեց բերանը լցված փշուրներն ու վերստին քչփորեց:

- Էհ, ինչ ասեմ,- խոսեց, երբ ավարտեց քչփորումն ու զցեց լուցկին:- Մարդիկ համառորեն չեն ցանկանում նկատել իմ Հատուկ Նշանակումն այս կյանքում, ինձ ի վերուստ տրված Հատուկ Առաքելությունը: Ցավալի է: Ժամանակները փոխվել են, մարդիկ այլևս չեն տոգորվում մեծ գաղափարներով, մանրախնդիր, շահամոլ են դարձել: Եվ նախանձ են, շատ նախանձ: Իմ սխալն էլ կա՝ երևի վաղ բացահայտեցի ինձ, նրանք ժամանակից շուտ տեսան իմ մեծ լինելը և անընդհատ խփեցին գլխիս՝ միշտ ստվերում պահելով ինձ՝ ինձ, ով ամենուրեք և ամեն բանում պիտի առաջինը լինեի: Հետո՝ համախոհներ չունեմ, իսկ առանց համախոհների դժվար է: Կար մեկը, որին ահագին ժամանակ ուսումնասիրում էի, սիրունիկ-միրունիկ, համակրելի տղա էր, ինձ էլ թվաց, թե հենց իմ փնտրածն է: Ո՞նց սխալվեցի: Կանչեցի մի օր ու խոսեցի հետը, քարտերս բացեցի՝ այսպես ասած: Պատկերացնում ես, ես նրան առաջարկեցի բան... էն... դե... լինել իմ բանը, էն, համախոհը, գաղափարակիցը, աջ ձեռքը՝ այսպես ասած: Իսկ նա լսեց ուշիմ, լսեց ու մեկ էլ, թե. «Լսի, քեզ մեկուսացնել է պետք»: Հիմա՛ր, միամիտ ապու՛շ, հումա-նիստ շան որդի... Մարդկանց մասին է մտածում, ասացեք խնդրեմ: Մարդիկ ո՞վ են, ո՞վ, քեզ եմ հարցնում... Կամազուրկ, աննպատակ ամբոխ, անդեմ բիոզանգված: Նրանց պետք է՝ ձևավորի և նպատակամղի ինձ նմանը, աշխարհին միապետ է հարկավոր, պարզապես անհրաժեշտ է:- Դ-ն կտրուկ բորբոքվեց, բռունցքը թափով խփեց սեղանին ու գոռաց.- Ըմբոստներին և անդամալուծներին վե-

րացնել...- Նրա հարվածից սեղանը ցնցվեց, առնետը, հավասարակշռությունը կորցրած՝ ընկավ:- Շուտ, բարձրացիր, ես չեմ սիրում, երբ ինձ ընդհատում են,- գոռաց Դ-ն: Առնետն արագորեն մազլցեց սեղանն ի վեր և սուսուփուս կծկվեց բարձիկին:- Մոռացա ասելիքս: Ասեցի՝ մի ընդհատեք: Չես հիշեցնի՞... Հա, հիշեցի: Ուրեմն այսպես՝ բոլորին տեսակավորել ըստ իմ հատուկ սիստեմի և բոլորին՝ աշխատանքի, պարապության ոչ մի վայրկյան, պարապությունն ամեն մեկի բանը չէ, պարապ մնալը թունավորում է հասարակ մարդու միտքն ու հոգին, ընկնում է ավելորդ ձգտումների հետևից, այլասերվում: Իսկ հոգնած, վաստակած մարդը ոչինչ չի ուզում, բացի փորը լցնելուց ու քնելուց: Ազատ պետք է լինի միայն էլիտան, այսինքն՝ ես և ինձ նմանները, եթե այդպիսիք ճարվեն, ինչում ես արդեն խորապես կասկածում եմ: Միայն տ, որ կառաջնորդի գառների անգլուխ հոտին: Պա՞րզ է: Ես պոպուլյար բացատրեցի, սխեմատիկ՝ այսպես ասած, մանրամասները, օրինակ՝ ինչպես անել, որ գառնուկներն իրենց կատարելապես երջանիկ զգան և այլն, առնետային ուղեղի բան չեն:- Դ-ն հանքային ջուր լցրեց բաժակի մեջ և ազահորեն խմեց:- Ոչինչ, ոչինչ, գալու է իմ ժամը, ես դեռ կլուծեմ իմ վրեժը, նրանք դեռ կսողան Մեծի առաջ, իսկ ես՝ ձիպոտով, ձիպոտով...- Նա որոշ ժամանակ մտասուզված լռեց, ապա ասաց.- Այ, եթե առնետ լինեի... Պատկերացնում ես, ինչե՞ր կանեինք միասին: Դուք, առնետներդ, կպաշտեիք ինձ, չէ՞: Դուք ավելի կազմակերպված ցեղ եք, ձեզ միայն գիտակից, խելացի առաջնորդ է պետք: Ես կհամախմբեի ձեզ և կառաջնորդեի ընդդեմ մարդկանց: Այդ խղճուկներն այնքան զորավոր չեն, որքան ձեզ թվում է: Մենք նրանց հախից կգայինք բացիլներով. ոչ մի ռումբ, ոչ մի պայթյուն, միայն մանրիկ, սիրունիկ բացիլներ: Աշխատասենյակիս պահարանում սրվակներն ու փորձանոթները տեսե՞լ ես, իսկ մեծ, հաստ պատերով կանաչ անոթը... Բա, սիրելիս, ձեռքերս ծալած չեմ նստում, հատուկ նեխախառնորդի վրա աճեցրած բացիլներ են: Դեռ չեն համապատասխանում իմ պահանջին, սակայն սկիզբը դրված է և հուսադրող է: Լսիր, իսկ եթե վարակը տարածել առնետների միջոցով, հը՞... Լավ միտք է, չէ՞: Թեև այդ ապուշները շուտով երևի իրենք իրենց կոտորեն, այդքան գենք են կուտակել, մի օր պայթելու է, չէ՞: Իմ բացիլները պետք է կանխեն նրանց. հո ես էլ այդ ոչխարների հետ չե՞մ կորչելու: Ձեզ ի՞նչ կա, կծկարեք գետնի տակ ու կփրկվեք: Աշխարհն առնետներին է մնալու:

Առնետը հանկարծ անհանգստացավ և պատրաստվեց իջնել սեղանից:

- Զուգարա՞ն,- կռահեց Դ-ն:- Գնացինք, ես էլ ունեմ դրա կարի-

քը:- Նա վեր կացավ: Նկատելով, որ առնետը գնում է իր ճեղքի կողմը՝ կանչեց.- Այդ ու՞ր, արի, իմ զուգարանից օգտվի, արի-արի, մի ամաչի:

Պետքն ավարտելով՝ նրանք վերադարձան սենյակ. առջևից, ձեռքերը մեջքին ազուցած, գալիս էր Դ-ն, ետևից, ոչ պակաս խրոխտ կեցվածքով՝ առնետը:

- Լսիր,- Դ-ն շփ տակ մնացած կոնյակը դատարկեց բաժակ մեջ,- հետաքրքիր է, ձեր՝ առնետային ճաշակով, դու գրավի՞չ էգ ես, թե՞... Երևի՝ ոչ այնքան, այլապես մենակ չէիր մնա:

Ի նշան բողոքի՝ առնետը սուր ծվծվաց:

- Այսինքն՝ գուցե գեղեցիկ ես, այնքան գեղեցիկ, որ քեզ արժանի որձ չի գտնվել, հա՞:

Առնետը սեթևեթանքով թարթեց աչուկները:

- Այ, եթե ինձ նմանն ընկներ ճանկը, բաց չէիր թողնի, չէ՞: Հիմար կինս չգնահատեց իմ արժանիքները: «Դու պետք է փառք տաս աստծուն, պետք է լողացնես ինձ նվերների մեջ, որ համաձայնվում եմ պառկել հետդ»։ պատկերացնում ես՝ ինչ էր ասում նա: Թեթևուիկ, հիմար կին: Հիմար կանայք, որ ցանկանում են հնարավորին չափ թանկ վաճառել իրենց հոտած մարմինները: Նողկալի պոռնիկներ: Շատ պետք է: Թքած ունեմ: Ինձ պես վառ երևակայություն ունեցողը առանց իրենց էլ կապրի,- Դ-ն մեքենաբար նայեց պատուհանագոգին դրված հեռադիտակին:- Այո, միմիայն վառ երևակայություն՝ և աշխարհի գեղեցկագույն կանայք քոնն են՝ երբ ուզես և ինչպես ուզես: Եվ ծախսեր էլ պետք չեն, ոչ մի կոպեկ:- Նա հռչաց:- Ինչու՞ ես խորամանկ ժպտում, հետևե՞լ ես... Հետևել ես, ավագակ:

Առնետը կախեց հայացքը:

- Դա արատ չի, չկարծես,- արդարացավ Դ-ն,- դա ուժեղացնում է ինձ, դարձնում անխոցելի: Ոչ մի կնոջ հմայք ինձ խելքահան անել չի կարող: Թքել եմ նրանց վրա, ես ուժեղ եմ և անկախ: Այդ լրբերին թվում է, թե գեղեցիկ ոտքեր ունենալը բավական է ուզած տղամարդուն հիմարացնելու համար: Այդպես էլ կա: Բայց դա չի տարածվում ինձ վրա: Պետիս քարտուղարուհին, օրինակ, ամեն անգամ մոտովս անցնելիս դիտավորյալ պտտում է թմբիկ հետույքը, իսկ ես պարզապես արհամարհում եմ, թող պայթի: Ի՞նչ իմանա այդ շեֆական լրբուկը, որ ես արդեն տասնյակ անգամ պառկել եմ իր հետ, և ինչպե՞ս, ի՞նչ ձևերով...

Առնետը դարձյալ քաղցեց և օգտվելով դադարից՝ մի մեծ կտոր խոզապուխտ մոտ քաշեց:

- Ըհիշտ է, մի քիչ էլ ուտենք:- Դ-ն ձեռքը տարավ բաժակին.- Ես

դեռ մի բաժակ կոնյակ ունեմ: Ափսոս, որ չես խմում:

Նրանք կենտրոնացած ծամում էին: Հետո Դ-ն ծխեց, նայեց ժամացույցին և ասաց:

- Ահա, կես ժամ մնաց: Իսկ ես արդեն խմեցի եղած կոնյակը: Ցրված եմ դարձել, մոռացկոտ... Էհ, կես ժամից, վաթսուն տարի առաջ...

Նա տխրեց, ազահորեն ներքաշեց սիգարետի ծուխն ու թեքվեց դեպի պատուհանը: Ամբողջ օրը տեղացած համարյա գարնանային անձրևը փոխվել էր ծյան: Քամու ծուղակն ընկած փաթիլները պտտվում էին փողոցային լուսարձակի շուրջը՝ խամրեցնելով նրա առանց այն էլ թույլ լույսը, լուսարձակի ժանգոտ գլխարկը մեկամաղ-ծոտ ճռճռում էր ու տարուբերում գետնին պատկերները իր դժգույն լուսաբիծը: Դ-ն անթարթ նայում էր անսպասելի ձնաթափից հանկարծակիի եկած անցորդներին, որոնք արդեն գարնանային թեթև վերարկուների մեջ կծկվել՝ շտապում էին ժամ առաջ հասնել իրենց տաքուկ բնակարանները: «Նրանց սպասում եմ», - մտածեց Դ-ն, հայացքը դարձրեց ցեխաջրի մեջ անդրադարձող սառը ցուքերին և տխուր հառաչեց:

- Ամբողջ վաթսուն տարի: Նրա աչքերը խոնավացան, դեմքը երկարեց, բերանի անկյունները կախ ընկան: Մայր, մայր... Ինչի՞նչ էի պետք: Չեմ հավատում, թե դու և այն հարբեցողը մտածել եք երեխա ունենալու մասին: Դուք պարզապես բավարարում էիք տալիս ձեր հարթած կրքերին: Հետո կանգնեցիք փաստի առաջ, որ ես էի: Նա իհարկե լքեց քեզ, և դու մնացիր մենակ քո սխալի հետ: Իսկ մարդիկ չեն սիրում անընդհատ աչքի առաջ ունենալ իրենց սխալները, և տարիներ անց դու էլ չքվեցիր՝ ինձ թողնելով անուժ պառավի հույսին: Ես քեզ խանգարում էի նոր սխալներ գործել:

Դ-ն լռեց: Դեմքն աստիճանաբար դաժանանում էր: Անցավ ընկալելի թուլությունը. օդանցքից դուրս նետելով սիգարետի մնացուկը՝ նա գոռաց:

- Բայց ես թքել եմ բոլորիդ վրա: Լավ թե վատ՝ դուք ձերն արիք. չէիք կարող չանել, Վերից էր հրամայված՝ Ես պետք է հայտնվեի: Մայր, հայր, տատ, կին... Գրողի ծոցը գնացեք բոլորդ՝ մանր, ճղճիմ մարդկային կապվածություններ: Ես վերափոխելու եմ աշխարհը, ես, ԵՍ...- Դ-ն հիստերիկ ծիծաղեց և նայեց առնետին:

Առնետը սպասում էր այդ հայացքին՝ որսաց ու պահեց իր չարագուշակորեն ձգող աչքերում: Դ-ի մարմնով սարսուռ անցավ, անթարթ, հիպնոսված նայում էր առնետի աչքերին՝ անկարող լինելով պրկել հայացքը, ներսում ինչ-որ արտառոց խլրտյուն էր սկսվել, ինչ-որ անբացատրելի, առեղծվածային բան էր կատարվում:

Առնետը ցատկեց սեղանից և դանդաղաբայլ գնաց դեպի իր ձեղքը. Դ-ն հմայված հետևում էր նրան: Մոտենալով անկյանը՝ առնետը շրջվեց և դարձյալ որսաց Դ-ի հայացքը, որ պատրաստական սպասում էր: Նրանք անթարթ նայում էին միմյանց աչքերի մեջ՝ ջանալով թափանցել ավելի ու ավելի խոր: Դ-ն անշարժացած էր: Քիչ առաջ սկսված ներքին խլրտյունն ահագնանում էր, թվաց՝ մի աներևույթ ուժ հատ-հատ մամլում է մարմնամասերը: Առնետը մի քանի անգամ մտավ-ելավ ձեղքով՝ ամեն անգամ հրավիրելով Դ-ին հետևել իրեն: Դ-ն հանկարծ պարզորոշ զգաց, թե ինչպես է փոքրանում իր մարմինը՝ փոքրանում և պատվում գորշ մազածածկույթով, որը սկզբում նոսր էր, սակայն մարմնի փոքրանալուն զուգընթաց՝ խտանում էր: Դ-ն ուզեց ինչ-որ բան ասել, սակայն նրա դեռևս մարդկային ականջներով սուր մշութից միայն անկապ ծվծվոցներ դուրս թռան: Կնճռվեց-հատակին բլուրվեց նրա սնամեջ դարձած հագուստը, և այդ կույտի միջից դուրս սողոսկեց մի գորշ առնետ. թափ տվեց-զցեց վզից կախ ընկած փողկապը, մոտ վազեց էգին, կանգնեց հետևի թաթիկներին և շարժեց բեղիկները: Էզը պտտվեց նրա շուրջը, հոտոտեց, հրեց քթով ու մտավ ձեղքը: Դ-ն նայեց շուրջը, մի պահ վարանեց, ապա վավաշոտ ծվծվալով հետևեց էգին:

Մ Ա Ն Թ Պ Ա Տ Ո Ւ Հ Ա Ն

Կարոն, որ սովորություն ուներ պատշգամբում վայելել սիգարետը, գոհունակության ժպիտով էր հետևում դիմացի նորակառույցի բնակեցմանը, քանի որ նույնիսկ ամենահրաշագեղ շենքն առանց բնակիչների՝ մռայլություն է արտածում: Պատշգամբներում, տեղ-տեղ, արդեն երևում էր խորովածի ծուխը, քամուց ծածանվում էր պարաններին շարված գույնզգույն լվացքը, գնում-գալիս էին լվացք փռող կամ հավաքող կանայք, տղամարդիկ չխկչխկացնում էին նարդին, թղթե սավառակներ կամ օձառափրփուր էին բաց թողնում մանուկները: Իսկ երեկոյան պատուհաններում մեկը մյուսի ետևից վառվում էին լույսերը: Մութ պատուհանների թիվն օրեցօր նվազում էր, և շուտով այդպիսի պատուհան չմնաց, բացառությամբ Կարոյի պատշգամբի ուղիղ դիմացի պատուհանի: Օրերն անցնում էին, իսկ անհայտ բնակիչն այդպես էլ չէր հայտնվում: Թվում էր՝ արտառոց ոչինչ չկա, բնակարանի բնակեցումը պարզապես ձգձգվում է, սակայն Կարոն ոչ մի կերպ չէր կարողանում վանել չգիտես որ-տեղից հայտնված, իր բնույթին այնքան օտար, չարագուշակության զգացումը, որ տարածվում էր այդ պատուհանից:

Կյանքով չափազանց հիացած և անդադար հրճվող մարդկանց նման, Կարոն էլ մի քիչ մանկամիտ էր: Իհարկե, ցանկությունը, որ շուրջն ամեն բան լինի պարզ, միշտ հասկանալի-մեկնելի, միշտ ժպիտով ու բարությամբ ողողված, գովելի է: Սակայն իր ցանկությունը Կարոն պարտադրում էր իրականությանը, և իրականը ցանկալիով ներկած՝ շրջանցում, անտեսում, մերժում էր ամեն մութ, խճճված, խորհրդավոր երևույթ: Ահա, այս մութ պատուհանն էլ էր ջանում անտեսել Կարոն, սակայն դա, զարմանալիորեն, ոչ մի կերպ չէր հաջողվում իրեն: Սկզբում սովորականի շրջանակներից չանցնող հետաքրքրությունը հանկարծ վերածվել էր անբացատրելի, անհեթեթ սազմաափի: Կարոն ինքն իրեն ստիպում էր չնայել *այն* կողմը, բայց աներևույթ մի ուժ նրա հայացքը տանում էր ու նորից գամում մութ պատուհանին՝ ստիպելով նորից վերապրել տիաձ, սարսեցնող զգացումը: Այո, Կարոն, ում միշտ դյուրությամբ հաջողվել էր շրջանցել, մերժել ամեն խորհրդավորություն, անսպասելիորեն միստիկ ակնածանք էր ապրում մի ինչ-որ մութ պատուհանից, որն իր հետ ոչ մի առնչություն չուներ և... չէր էլ ունենալու...

Լարվածությունն օրըստօրե ուժգնանում էր: Բանը հասավ այնտեղ, որ անիծյալ պատուհանը նա սկսեց տեսնել երազներում: Նույնատիպ երազների բովանդակությունը, փոքր տարբերություններով, այս էր.

Պատշգամբում կանգնած Կարոն տարակուսած փնտրում է նորակառույց շենքը, որն ասես գետնի տակ է անցել: Գուցե այն չի էլ եղել՝ առհասարակ: Հանկարծ սարսափով զգում է, թե ինչպես է իրեն լքում սեփական ուղեղը: Դուրս սողոսկելով գանգատուփի միջից՝ ուղեղի գորշավուն զանգվածը տարածվում է, ահազանում և գրավում չքված շենքի տեղը՝ ընդունելով նրա ուրվագծերը, դառնալով նրա նմանակը: Կարոն ձեռքին չգիտես որտեղից հայտնված փայտիկով հերթականությամբ հարվածում է ուղեղ-շենքի մութ պատուհաններին, և նրանց ետևում վառվում են լույսերը: Սակայն չարաբաստիկ պատուհանն այդպես էլ չի լուսավորվում, որքան էլ Կարոն անխնա հարվածում է իր կախարդական փայտիկով: Համբերահատ՝ նա շարտում է փայտիկը, ձակատը հպում սառն ապակուն ու նայում ներս... Այնտեղ, մթության մեջ, զալարվում են էլ ավելի մութ ինչ-որ ստվերներ՝ ձևափոխիկ, խորհրդավոր: Կարոն զայրանում՝ ոտքով ուժգին հարվածում է ապակիներին: Ուղեղ-շենքը դողդում է և դանդաղորեն փլվում: Երբ մարում է դողդույնը և ցրվում փոշին՝ Կարոն տեսնում է, որ շենքը վերածվել է փլատակների, և միայն անիծյալ բնակարանն է անվնաս մնացել՝ ամբարտավանորեն բազմելով փլատակներին, նա ծաղրալից ու չարագուշակ

հռչում է՝ բացուխուփ անելով մութ պատուհանի ճռռացող փեղկերը: «Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում...», - գոռում է Կարոն: Պատուհանն ավելի սաստիկ է հռչում և... Երազն ավարտվում է:

Այո, տազնապահար գիտակցությունը սանձել չէր հաջողվում, ողջամտությունը, որը կարծես երբեք չէր դավաճանել, հիմա շփոթված, խուճապահար թրթռում էր, ինչպես տարաբևեռ մագնիսների շրջապատման մեջ հայտնված մետաղի կտոր: «Ի վերջո՝ ի՞նչ է եղածը... Սովորական մի պատուհան, թող որ մութ, հետո՞ ինչ, վաղը-մյուս օրը կլուսավորվի...», - ինքն իրեն համոզում էր Կարոն, բայց ապարդյուն:

Վերջապես մի գեղեցիկ երեկո չարաբաստիկ պատուհանի ետևում լույս հայտնվեց՝ մոմի լույսի պես աղոտ, թրթռացող լույս: Կարոն երկար սպասեց, սակայն բնակարանի տերն այդ օրը այդպես էլ չերևաց: Իսկ առավոտյան, երբ սիգարետը փստփստացնելով պատրաստվում էր դուրս գալ պատշգամբ, նրան չէր լքում համոզվածությունը, որ իրեն այնտեղ արդեն սպասում են: Եվ իսկապես...

Տարօրինակ մարդուկ էր՝ նեղ ուսերով, անբնականորեն մեծ, ճաղատ գլխով, կարճահասակ և ըստ ամենայնի՝ հիվանդոտ: Կարոն տեսնելուն պես նա տարածեց ձեռքերը, կարծես ասելով. «Ու՞ր ես, այ մարդ, որքա՞ն կարելի է սպասեցնել», ապա ուրախ քրքջաց: Կարոն, շփոթված, գլուխը վերուվարեց՝ ի նշան բարևի: Մարդուկը կտրուկ լրջացավ, պատուհանագոգից վերցրեց հեռադիտակը, մոտեցրեց աչքերին և ուղղեց Կարոյի վրա. որոշ ժամանակ անշարժ դիտում էր, ապա ցած դրեց հեռադիտակը, շփեց ձեռքերն ու սկսեց հռչալ: Չընդհատելով հռչոցը՝ նա մի ձեռքով ցույց էր տալիս Կարոյն, մյուսով ոգևորված խփում ծնկներից, դրանով կարծես ավելի շեշտելով ծիծաղի սաստկությունը: Կարոն, տարակուսած, ձեռքով արեց, իբր՝ ի՞նչն է քեզ այդպես զվարճացնում: Դա ավելի ուրախացրեց մարդուկին, նա ավելի ուժգին քրքջաց, ծնկներին խփելով արդեն զույգ ձեռքերը: Կարոյի մարմնով տիաձ սարսուռ անցավ, նա մտավ սենյակ՝ ետևից ամուր քաշելով դուռը: Օրվա ընթացքում փորձում էր բացատրել պատահածը, ի վերջո՝ եկավ այն համոզման, որ դա կատակ էր, հարևանը պարզապես կատակասեր է, ուրիշ ոչինչ:

Առավոտյան նրան նոր անակնկալ էր սպասում: Հազիվ էր դուրս եկել պատշգամբ, երբ մարդուկը, հարգալից խոնարհվելուց հետո, ձեռքը տարավ քթին և այնպես ձևացրեց, իբր ձգում-երկարացնում է այն, ապա մատնացույց արեց Կարոյին և հռչաց:

- Այ քեզ բան...- փնթփնթաց Կարոն, մտավ սենյակ և մոտեցավ

հայելուն, երկար, ուշադիր զննեց իր քիթը... Ի՞նչն էր այդպես ուրախացնում մարդուկին, ակնարկում էր, թե իր քիթը երկա՞ր է...- Բոլորովին էլ երկար չի,- ի վերջո իրեն հանգստացրեց Կարոն և հեռացավ հայելուց: Սակայն օրվա ընթացքում, դեպքից դեպք, հայացքն այնուամենայնիվ զգում էր հայելու կողմը:

Հաջորդ առավոտյան մարդուկը դարձյալ ձգեց սեփական քիթը, այս անգամ առավել երկարացնելով նրա երևակայական չափերը, ապա մատնացույց արեց Կարոյին և հռչակեց: Կարոն թքեց սիգարետը և իր ետևից թափով շրխկացրեց դուռը:

- Վարսիկ,- կանչեց նա՝ հայելու առջև կանգնելով:
- Ի՞նչ կա,- հարցրեց կինը՝ սենյակ մտնելով:- Ի՞նչ է եղել, Կարո՛, գույնդ ինչի՞ ես զցել:
- Ոչինչ էլ չի եղել:- Կարոն քննախույզ նայեց կնոջն ու հարցրեց.- Լսի՛, իմ քիթը շատ ա՛՛ երկար:
- Քիթ է, էլի,- կինը զարմացած նայեց ամուսնուն, ապա սկսեց ծիծաղել, որովհետև Կարոյի տեսքը շատ էր զավեշտական:
- Չէ, բայց ոնց որ երկար ա, հը՞... Այլապես ինչու՞ ես ծիծաղում:
- Հո երեխա չես, Կարո,- լրջացավ կինը՝ զսպելով ծիծաղը:
- Բայց ծիծաղում էիր...

Հաջորդ օրը փորձեց խուսափել պատշգամբից, սակայն ապարդյուն, ներքին ուժեղ, անբացատրելի մի մղում նրան հրեց ու տարավ ճաղերի մոտ: Մարդուկը սպասում էր: Այս անգամ նա ձգեց ականջները, ռոտում ուրվագծեց փղի ականջների չափով ականջներ և, սովորականի պես, հռչակեց: Այդ գործողությունները նա կրկնեց նորից ու նորից, մինչև Կարոն, այլևս դիմանալու անկարող, լքեց պատշգամբը, նույնիսկ մոռանալով փակել դուռը:

- Կինն ամուսնուն գտավ հայելու առջև՝ ականջները շոշափելիս:
- Լոշտակ ես, էլի, հո գոռով չի,- մրթմրթում էր նա, մատներով առաջ թեքում ականջները, հետո մաժմժում քիթը և ձեռքը դարձյալ տանում ականջներին: Այնքան էր տարված իր անհեթեթ զբաղմունքով, որ կնոջը չնկատեց:
- Կարո՛, հո չե՞ս գժվել,- գոչեց կինը:
- Ի՞նչ...- ցնցվեց Կարոն:- Ո՞վ է գժվել... Չէ, ոչ մի գժվել... Բայց ինչի՞ ես նայում ականջներին: Դու էլ ես կարծու՞մ, թե...
- Կա-չկա, հիվանդացել ես:- Կինը մոտեցավ և շուրթերը հպեց ամուսնու ճակատին:- Տաքություն ունես ոնց որ: Գնանք, թեյ տամ, գնանք, Կարո ջան:
- Գնանք,- խեղճացավ Կարոն և հետևեց կնոջը՝ խուսափուկ հայացք նետելով պատշգամբի կողմը:
- Տաքություն իսկապես ուներ. անկողին մտավ:

Իսկ գիշերով, երազի մեջ, նրան այցելեց մարդուկը, նստեց կողքին և հարցրեց. «Հը՞, Կարո, ո՞նց ես»: «Ախր ի՞նչ ես ուզում ինձնից, այ մարդ, որտեղի՞ց հայտնվեցիր իմ գլխին», - դժգոհեց Կարոն: «Ես ուղարկված եմ քեզնից վրեժ լուծելու, ես նա եմ, ում միշտ ջանում ես անտեսել: Հիմա՞ ինչ կասես, էլի կանտեսե՞ս...», - ասաց մարդուկը: «Թող հանգիստ ապրեմ, ոնց ապրել եմ, ձեռքաչիր ինձնից, ի՞նչ կլինի», - խնդրեց Կարոն: «Հանգիստ չկա, պատրանք է,- ասաց մարդուկը, հետո մատը դեմ արեց Կարոյի փորին ու հռչակեց.- Փորդ էս ինչի՞ էսպես ուռեց, հո հղի չե՞ս, Կարո»: «Ըհը, հիմա էլ փորիս կպավ»: «Չէ, իսկապես, ոնց որ իններորդ ամսվա հղիություն լինի»: Կարոն սարսափով նկատեց, որ փորն իսկապես ուռչում է և... Արթնացավ:

Անկողնուց ելնում էր միայն զուգարան գնալու համար և ամեն անգամ ջանում էր չնայել պատշգամբի կողմը: Սակայն դիմանալ գայթակղությանը կարողացավ երկու օր միայն: Իսկ երրորդ օրը, երբ գլուխը կախ զցած ցանկանում էր անցնել պատշգամբի մոտով, թիկունքին զգաց դիմացի շենքից եկող ծանոթ հայացքը և մեխվեց տեղում, ապա կտրուկ շրջվեց, մոտեցավ դռանը և առանց բացելու՝ նայեց: Մարդուկն իր տեղում էր. նա որսաց Կարոյի հայացքը և ուրախացած՝ ձեռքով արեց, ինչպես հին ծանոթի:

Այս անգամ որպես ծաղրի առարկա էր ընտրված Կարոյի գլուխը. մարդուկը գրկեց սեփական ճաղատ գլուխը, հետո ձեռքերն աստիճանաբար հեռացրեց՝ մեծացնելով գլխի երևակայական ծավալը, մատնացույց արեց Կարոյին ու հռչակեց: Կարոն դուրս թռավ պատշգամբ, ձեռքը պարզեց մարդուկի կողմը և ամբողջ ձայնով գոռաց.

- Ինքդ ես հաստագլուխ, ինքդ, քեզ նայի...
- Մարդուկն ավելի ուժգին հռչակեց: Ծիծաղի սաստկությունից նա թռչկոտում էր տեղում՝ փորը գրկած: Հետո հիշեց և սկսեց մեծացնել փորի երևակայական ծավալը:
- Ախր մի հատ քեզ նայի, այլանդա՛կ,- բորբոքված գոռում էր Կարոն:

Մարդուկը խեղդվում էր ծիծաղից: Վարից, բամբասասեր մի պառավ, ցանկանալով պարզել աղմուկի պատճառը, վեր նայեց. նրա հայացքը դեմ առավ Կարոյի պարաշյուտային կիսավարտիքի բացվածքին:

- Գժվե՞լ ես, այ մարդ, գոնե շավարդ հագնե՛իր,- վրդովված գոչեց պառավը:
- Ինքդ ես գիժը, մենակ դու էիր պակաս...- պատասխանեց Կարոն, որին կինն աշխատում էր ներս քաշել:- Թո՛ղ, ես սրանց էն...
- Կարոն դարձավ լռակյաց ու կասկածամիտ, սկսեց խուսափել

մարդկանցից և այդ պատճառով՝ տանից դուրս չէր գալիս: Ծանր հոգեվիճակն օրեցօր խորանում էր, որովհետև ոչ մի կերպ չէր կարողանում ստիպել իրեն՝ չնայել *այն* կողմ: Ճիշտ է, հիմա նայում էր կիսաթափանցիկ վարագույրի ետևից, առանց պատշգամբ դուրս գալու, սակայն դա խոչընդոտ չէր մարդուկի համար. վարագույրի ետևում նա տեսնում էր Կարոյի ուրվապատկերը և նորից ու նորից ծաղրում նրան:

Մի օր էլ Կարոն ջարդուփշուր արեց տան հայելիները, փողոց նետեց արդուկը, որի նիկելապատ մակերեսը հայելային անդրադարձում ուներ, իսկ երբ լրջորեն սպառնաց պայթեցնել պատշգամբն ու դիմացի շենքը, հարազատներին ուրիշ ոչինչ չմնաց, քան բժիշկներին դիմելը:

Կարոյին տարան:

ՃԱՐՊՈՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ

Առավոտյան, սանրվելու համար հայելուն մոտեցած ճարպոն տեսավ սեփական արտացոլումը և սոսկաց: Սոսկումը, սակայն, արտաքնապես չարտահայտվեց, որովհետև այն, ինչը արտացոլված էր հայելով՝ որևիցե արտահայտություն ունենալ չէր կարող: Ճարպոն սարսափած հեռու փախավ: Հուսալով, թե դեռ քնած է, երագի մեջ է, նա մի քանի անգամ ուժգին կսմթեց իրեն և վախվխելով՝ վերստին գնաց հայելու մոտ... Ավաղ, երագ չէր, հայելու մեջ դարձյալ երևաց այն, ինչն արտահայտություն չուներ:

Հախուռն, խուճապահար մտքեր խլրտացին այդ արտառոց գլխում՝ ինչու՞, ո՞ր մեղքի համար... վերջապես՝ ո՞նց է ապրելու այսուհետև... ո՞նց է մարդամեջ դուրս գալու...

Այլևս չհամարձակվելով մոտենալ հայելուն՝ ճարպոն թուլացած փլվեց անկողնուն:

Անցած կյանքն ինքնաբերաբար հայտնվեց երևակայության մեջ ու գլորվեց՝ ասես աներևույթ ինչ-որ դրոմամբ, որ հուշում էր, թե հիշողությունները գուցե լույս սփռեն կատարվածի վրա: Թեև ի՞նչ իմաստ, բանը բանից անցած էր...

Այնուամենայնիվ, հիշողությունները գլորվեցին՝ սկիզբ առնելով այն հեռավոր ժամանակներից, երբ պստիկ, գանգրահեր մանչուկին կոչեցին ճարպո: Ֆիզիկական ճարպկությունը չէր պատճառը, ոչ, իր մականունը նա ստացավ այլ ճարպկությունների համար՝ տարիքին անհամապատասխան հարմարվողականություն, արագ արձագանք այն կողմի վրա, որտեղից շահ է ակնկալվում՝ չխորշե-

լով շողոքորթելուց և ստախոսելուց: Նույնիսկ մանուկ հասակում, երբ նոր էր սկսում խոսել և դեռ մականուն չուներ, եթե, ասենք, հարցնեին՝ «Պապային ես սիրու՞մ, թե՞ մամային», ճարպոն կմատնանշեր ծնողներից նրան, ում ձեռքին քաղցրավենիք կար, եթե երկուսի ձեռքին էլ կար, ճարպոն չէր շփոթվում, ասում էր՝ «Պապային եմ սիրում, մամային եմ սիրում», իսկ եթե քաղցրավենիքը ծնողների ձեռքին չէր, այլ երրորդ՝ նույնիսկ անծանոթ մեկի, ճարպոն ծնողներին ուրացած՝ նրան էր սիրում, նրա գիրկն էր մղվում: Արդեն դպրոցում ճարպոն կարող էր դասադուլ կազմակերպել, բոլորի հետ փախչել դասից, հետո աննկատ անջատվել, ետ գալ ու միայնակ նստել դասարանում. հաշվարկը հստակ էր, մեկ աշակերտի հետ միևնույն է՝ դաս չեն անցկացնի, այսինքն՝ նա ստանում է նույն ազատությունը, սակայն՝ նաև ուսուցիչների բարյացակամությունը շահելով, իսկ դասընկերներին կստի, իբր պատահաբար հանդիպեց հորը, որն էլ նրան գոռով քարշ տվեց դպրոց: Ճարպոյի այս կարգի հատկություններն, ըստ երևույթին, ժառանգական նախասկիզբ ունեին՝ նախատիպ՝ ոմն նախաճարպո, սակայն պակաս դեր չուներ նաև դաստիարակությունը. ճարպոյի ծնողներն ամեն կերպ խրախուսում էին նրա այդ հատկությունները՝ ուրախանալով, որ իրենց զավակն այս կյանքում չի կորչի. «Էս լակոտին ոնց գցես՝ ոտերի վրա կկանգնի»: Այդպես էր, մեջքին ընկնող չէր ճարպոն: Նույնիսկ բանակում, որից խուսափել չկարողացավ՝ որքան էլ փորձեց հիվանդություններ կեղծել, նա հաջողացրեց մի տաքուկ տեղ ձեռ գցել գորամասի պարենային պահեստում: Սրան, անշուշտ, քիչ չնպաստեցին տնից ուղարկած կոնյակ-սիգարետները, սակայն պետք էր ունենալ ճարպոյական հոտառություն և մոտեցում, կողմնորոշվելու համար, թե ում, ինչ, ինչքան, որտեղ և երբ:

Ջորացրվելուց հետո ուսումնառությունը շարունակել կամ որևիցե արհեստ սովորել չուզեց՝ ապավինելով միմիայն իր ճարպկությանը. ժամանակ չկար, ժամանակը փող էր: Եվ ի՞նչ մի հատուկ ուսում էր պետք բանջարեղենի բաժնում վաճառող աշխատելու համար... Այս գործի նրբություններն արագ յուրացրեց ճարպոն և շուտով այնպես հմտացավ, ասես վաճառող լինելը նախանշված էր ճակատագրով: Նրա գործողությունները՝ կապված մթերքի, կշեռքի, կշռամանի, կշռաքարերի և փողի հետ, կշարժեին ցանկացած առաջնակարգ աճապարարի նախանձը: Բացի այդ, նա հոգեբանի խորաթափանցություն էր դրսևորում, երբ ըստ գնորդի արտաքինի և դեմքի՝ որոշում էր թերակշռման կամ գերհաշվման չափը: Ճարպոն իր տարերքի մեջ էր: Սակայն, ինչպես նման դեպքերում հաճախ պատահում է և հատկապես՝ սկսնակի հետ, հեշտ փողը

ավելորդ վստահություն ներշնչեց, և մի օր, զգոնությունը կորցրած, Ճարպոն սայթաքեց: Իհարկե, կարող էր ուրիշ մի տեղ փնտրել ու գտնել, սակայն չուզեց, չկա չարիք առանց բարիք՝ մտածեց նա, և իսկապես՝ ի՞նչ է կառչել վաճառասեղանին, երբ դեմը անծայրածիր երկիրն է. երկիրն անծայրածիր, Ճարպոն՝ ճարպիկ:

Եվ այս անծայրածիր երկրում ապրանքի անհավասար բաշխում էր տիրում. մի տեղում մի ապրանքից շատ կար՝ թափած, մի ուրիշ տեղում դրանից ամենևին չկար, բայց կար մի ուրիշ բան, որից այն մի տեղում ամենևին չկար: Ճարպոն եռանդով լծվեց բաշխման այս անարդարությունը գոնե իր կարեցածի չափով մեղմելու գործին. բերում էր ու տանում, տանում էր ու բերում, էժան բերում՝ թանկ ծախում, էժան տանում՝ թանկ ծախում. ազգականին, բարեկամին, ընկերոջը, ծանոթին, անծանոթին...

Հետո ուրիշ ճարպիկներից տարբեր ճարպկություններ սովորեց՝ պիտակներ կեղծել ու տեղականը արտասահմանյանի տեղ իրացնել, մելխիրը՝ արծաթի, պղինձն ու լատունը՝ ոսկու, ցիրկոնը՝ ադամանդի և այլն, և այլն, և այլն: Հատուկ հոտառությունը Ճարպոյին օգնում էր խուսափել քրեական վտանգից, նա այդ վտանգն ասես ողնաշարով էր զգում՝ կանխավ, այնքան, որ միշտ հասցնում էր մաքրել հետքերն ու չքվել:

Ժամանակ անցավ, Ճարպոն մտածեց՝ նախ առևտրի ուսումնարանի դիպլոմ է պետք ձեռ գցել, ապա՝ խանութի վարիչի տեղ. հա, բա ի՞նչ, ինչքա՞ն գնա-գա, տանի-բերի, ջահել չի արդեն, ընտանիք ունի... Նույն փողը կարող է նստած տեղում սարքել, նարդի խաղալով ու գարեջուր խմելով, հանգիստ, ֆակտուրա ստորագրելով, ելքն ու մուտքն իրար բերելով, ներքևից վերցնելով՝ վերևին բաժին հանելով...

Սակայն մինչ այս, մինչ այն... Կատարվեց անհավատալին՝ մեծ երկիրն սկսեց քանդվել, սկզբում՝ դանդաղ, այնքան դանդաղ, որ համարյա ոչ ոք լուրջ չէր վերաբերվում, Ճարպոն՝ նրանց թվում. ո՞նց, սովետը քանդվի՞... չէ, շուրուխ են անում Կրեմլի բիծեքը, պրոփոկացիա, ուզում են տեսնեն՝ ով-ով ա: Ավաղ, հատուկ հոտառությունն այս անգամ խաբեց, երկիրը շարունակեց քանդվել ու վերջնականապես ավերակվեց:

Ճիշտ է, Ճարպոն այնուամենայնիվ ձեռքերը մի քիչ տաքացրեց օգնության նավթի, լոբու և դեղի, հետո էլ արտարժույթի փողոցային փոխանակման վրա: Սակայն դա կարճ տևեց. բոլոր քիչ թե շատ շահութաբեր ասպարեզները բաժանվեցին-կենտրոնացան ազդեցիկ մարդկանց ձեռքին, Ճարպոյի առջև դռները մեկիկ-մեկիկ շխկալով փակվեցին: Վիճակն այնքան վատացավ, որ Ճարպոն նույնիսկ

մտածեց պատերազմին մասնակցել՝ էնպես, կողքից, թալանի մասով, բայց ինքնապահպանման բնագոյն այնուամենայնիվ հաղթեց՝ բա որ խփե՞ն...

Այդպես գլորվեց մեկ տարի, երկուս, երեք... Ճարպոն խաղից իսպառ դուրս մղվեց: Ի՞նչ էր կատարվում, նույնիսկ էն տոտալիտար երկրում իր ճարպկությանն ասպարեզ գտնում էր, իսկ հիմա, երբ ազատ ձեռներեցություն է հայտարարված՝ ոչինչ չի ստացվում, ինչու՞, ճարպկությունը մնաց հին ժամանակներու՞մ, առաջ չի գալի՞ս... Հուսահատությունը կաթ-կաթ լցնում էր հոգին, բայց նա դեռ սպասում էր, ինքն էլ չգիտեր ինչին, բայց սպասում էր, տոնավաճառում ոտի վրա սիգարետ էր ծախում, յուր գնում ու սպասում. «Մի դուռ պիտի բացվի, էսպես մնալ չի կարող»: Ճարպոն նույնիսկ սկսեց եկեղեցի մտնել, մոմ վառել... Եվ ահա, մի գեղեցիկ օր...

Մի գեղեցիկ օր Ճարպոն հոգնած քայլում էր տոնավաճառի նեղ-լիկ անցումներով՝ բացարձակապես չկասկածելով, որ օրը գեղեցիկ է: Հին ծանոթ հանդիպեց՝ դպրոցական ընկեր, սիգարետ գնեց Ճարպոյից, ծխեց ու գրույցի բռնեց. բարև-բարևուս, ոնց ես-ոնց չես... Ճարպոն առանձնապես խանդավառ չէր այս հանդիպման առիթով՝ բժշկից, թող որ՝ հիվանդանոցի գլխավորի տեղակալ, ի՞նչ պիտի սպասեր, հո վիրաբույժի կամ գինեկոլոգի տեղ չէ՞ր խնդրելու, շատ-շատ՝ սանիտարի, բայց դա իրեն ի՞նչ պետք էր: Համենայնդեպս հարցրեց: Ու էստեղ բժիշկ ընկերը ոչ էս-ոչ էն, հանկարծ ասաց.

- Օրերս մի տեղ է բացվել, մեջը փող կա, բայց...
- Հը՞, - տագնապեց Ճարպոն:
- Բայց առանց նեղանալու...
- Այ մարդ, ի՞նչ նեղանալ, բանը բանից անցած ա, խոսի:
- Մերը պրակտոլոգիական հիվանդանոց է, գիտես:
- Եդ ո՞րն ա, էն քամակի հիվանդությունների՞...
- Հա. թութք, կիստա, թարախապալարներ... Մենք մի սափրիչ ունեինք, անցյալ շաբաթ մահացավ, տեղն առայժմ ազատ է:
- Ճարպոն անմիջապես կռահեց, թե ինչ էր սափրելու, եթե համաձայներ:
- Սուրճ խմենք,- առաջարկեց՝ ժամանակ շահելու համար:
- Չէ, այդքան ժամանակ չունեմ, ուրիշ անգամ,- մերժեց ընկերը:- Ասեմ, որ այդ տեղը երկար պահել հնարավոր չի, հիվանդներն իրենք իրենց սափրել չեն կարող, հասկանում ես, այնպես որ...-, ավելացրեց նա ու սպասեց:
- Ճարպոն սիգարետ վառեց, ծխեց, էլի ծխեց...
- Փողից հոտ չի գալիս, ախպեր,- վերջապես խոսեց նա,- անփո-

դուրսունից ա հոտ գալիս ու էն էլ՝ շատ գեշ:

Համաձայնվեց:

Հաջորդ օրը Ճարպոն հիվանդանոց ներկայացավ՝ արդեն սափ-րիչային պիտույքներով զինված: Ու սկսվեց...

Ավելի լավ գործ պատկերացնել չէր կարելի. հետույք սափրելը, դեմք սափրել չէր, ոչ բեղ կար, ոչ բակենբարդ, ոչ խոր կնճիռ: Իհարկե, այստեղ էլ մի քանի այլ նրբություններ կային, որոնք Ճարպոն արագ յուրացրեց, և ամբողջ արարողությունն արդեն մի քանի րոպեից ավելի չէր տևում. վերջապես՝ օժանելիքով թարմացում ու՝ թրաշո անուշ: Հիվանդների պակաս չկար. հաստ աղիքի հիվանդությունները տարածված էին, մարդիկ հերթազրվում էին և շաբաթներով սպասում վիրահատության: Ճարպոյի վաստակը բնականաբար չէր հարկվում պետության կողմից, թեյավճարի պես մի բան էր, բայց ի՞նչ թեյավճար, ոչ մի մատուցող երագել չէր կարող նման թեյավճար: Հիվանդանոցի տնօրինությունն էլ հարկ չէր վերցնում Ճարպոյից. ո՞նց փայ ուզեն մի մարդուց, որն իր փողը վաստակում է հետույք սափրելով:

Անցան տարիներ, Ճարպոն գոհ էր կյանքից, և թքած, թե ծանոթները, թաքուն, տարբեր անվայել մականուններ են կացնում. թող նախանձեն: Երբ նա իր շքեղ մեքենան կանգնեցնում էր հիվանդանոցի բակում և ինքնագոհ քայլում դեպի մուտքը, պատուհաններից նայող նորեկ հիվանդներին թվում էր, թե նա է հիվանդանոցի տնօրենը: Որքան մեծ էր լինում նրանց զարմանքը, երբ իմանում էին Ճարպոյի ով լինելը:

Ամեն բան հրաշալի էր ընթանում և այդպես էլ կընթանար երևի, եթե չկատարվեր այս անհավատալի դժբախտությունը, դժբախտություն, որին նախորդել էր անհեթեթ հոգեվիճակների մի ամբողջ շարք: Իսկ այդ շարքն, ամենայն հավանականությամբ, իր սկիզբն առավ այն չարաբաստիկ երեկոյից: Ճարպոն հյուր էր քրոջ տանը. սովորականի պես խոսում էր իր մեծ շրջապատի, ազդեցիկ մարդկանց հետ մոտիկ հարաբերությունների, լայն հնարավորությունների, վերջերս գնած թանկարժեք իրերի և նման այլ բաների մասին: Իրեն գովելու թե՛ միջոցին նրա հայացքը հանկարծ հանդիպեց հարևան սենյակում դասերը սերտող քրոջ դստեր հայացքին: Աղջնակի մեծ, պարզ աչքերի այդ հայացքն ասես շամփրեց Ճարպոյին. ինչ-որ առեղծվածային, խորհրդավոր բան կար նրա աչքերի երկնագույնի մեջ: Թվում էր՝ մանկան աչքերով Ճարպոյին է նայում ուրիշ մեկը, որ թափանցում է հոգու ամենաթաքուն խորշերը և *ամեն բան գիտի*: Հայացքը մեղադրող չէր, այլ՝ ներողամիտ, և դա ավելի վատ էր, որովհետև մեղադրանքի հետ կարելի է վիճել, կռվել: Ճար-

պոն իրեն անսպասելիորեն վատ զգաց, նույնիսկ կարմրատակեց, շփոթված ուղղեց փողկապը, ապա անտեղի ու բռնագրոսիկ հռռռաց, անզգույշ շարժումով դիպավ թեյի բաժակին ու զցեց այն:

- Ոչինչ, Ճարպո ջան, հիմա կհավաքեմ,- ասաց քույրը:

- Ինքս: Ճարպոն կռացավ ու սեղանի տակ մնաց շատ ավելի երկար, քան հարկավոր էր կոտրված բաժակի փշուրները հավաքելու համար: Էն դուռը փակեք, թող երեխան հանգիստ պարապի,- վերջապես ուղղվելով ասաց նա:

Հաջորդ առավոտյան Ճարպոն հանկարծ զարմանքով հայտնաբերեց, որ դժվարանում է սափրել դեմքը. շարժվող ածելու տակ հետույք տեսնելուն այնքան էր վարժվել, որ սեփական դեմքը սափրելիս՝ անսպասելիորեն ընկավ թյուրիմացության մեջ: Սա հաջորդ անգամ էլ կրկնվեց, և կամքի սաստիկ լարման գնով միայն Ճարպոյին հաջողվեց ավարտել դեմքի սափրումը: Հետո մոտ մեկ շաբաթ չսափրվեց, հուսալով, թե հիվանդագին երևույթն ինքն իրեն կանցնի: Ավաղ, չանցավ: Որքան էլ ասում էր էլեկտրական ածելին՝ փորձեց նաև այդ միջոցը, բայց դա էլ չօգնեց: Վերջապես ընդունելով սեփական պարտությունը, Ճարպոն սկսեց սափրվել վարսավիրանոցում, ուր թիկնաթռռին նստելուն պես փակում էր աչքերը: Հետո կատարվեցին առավել անհեթեթ դեպքեր, որոնք վերջնականապես մոլորեցրին Ճարպոյին. զուգարանում պետքն ավարտելուց հետո թուղթը մեքենայորեն տարավ դեմքին, իսկ ճաշելիս հակառակը՝ անձեռոցիկը բերանին տանելու փոխարեն, անսպասելիորեն իջեցրեց քամակին: Նույնպիսի անհեթեթություններ էին պատահում նաև, երբ վերցնում էր սանրը, ատամի խոզանակը, օձառը կամ ակնոցը:

Ճարպոն հանգիստ չունեի նույնիսկ քնի մեջ, ծանր երագները հալածում էին նրան, հատկապես մեկը, որ հաճախ էր կրկնվում. գործողությունը զարգանում էր հսկայական դահլիճում, ուր պատերին փակցված էին մեծ, զունազարդ գովազդներ, որոնք նույնն էին պատկերում՝ մաքուր ածիլված տռուզ հետույք և ժպտադեմ Ճարպոյին, ով մի ձեռքով քնքշորեն գրկել էր հետույքը, մյուսով ցուցանում էր բարդ մի սարքավորում. «ՃԱՐՊՈ ՖԻՐՄԱՆ ԱՈՒՋԱՐԿՈՒՄ Է ՍԱՓՐԻՉ-ՈՌՈՐՏՆԵՐԻ ՆՈՐ ՄՈՂԵԼԸ»: Դահլիճը լեցուն էր հանդիսականներով, կենտրոնում, լույսերի մեջ, կանգնած էր ինքը՝ Ճարպոն, նրա շուրջ պտտվում էին մազակալած հետույքներ: Հանդիսավոր մի ծայն վերից հարցնում էր՝ «Ուշադիր նայիր, Ճարպո, եթե գուշակես, թե սրանցից որի՞՞ հետևում է թաքնված քո դեմքը, փրկված ես, եթե ոչ՝ վայ քեզ»: Ճարպոն լարված նայում էր, ցանկանում էր մատնացույց անել այն մեկին, որի թշի խալը հիշեցնում

էր իրենը, բայց չէր համարձակվում, որովհետև կասկածում էր, թե խալն ապակողմնորոշող նենգ միջոց է: Իսկ անհիծյալ ծայնն անդադար շտապեցնում էր՝ «Ղե, Ճարպո, համարձակ»:

Արթնանում էր սաստիկ վախեցած ու քրտնած, աթոռի վրայից վերցնում էր սրբիչը և նպատակ ունենալով չորացնել դեմքը՝ քսում հետևին:

Ճարպոն հյուծվեց, սկսեց հաճախակի հիվանդանալ, փողոցով քայլելիս պատահում էր, որ խոսում էր ինքն իր հետ: Այլ բացատրություն չգտնելով ստեղծված վիճակին, նա ենթադրեց, թե պատճառը գերհոգնածությունն է: Որոշեց հանգստանալ, փոխել միջավայրը: Սակայն ավաղ, միջավայրի փոփոխությունը չտվեց ցանկալի արդյունք. հանգստյան տանը գտնվելու հենց երկրորդ օրը Ճարպոյին սկսեց թվալ, թե իր ով լինելը հայտնի է այստեղ, նրան թվում էր, ոչ, արդեն հանդգնած էր, որ հանգստացողները մի տեսակ հեզնական քնծածաղով են նայում իրեն: Երկար դիմանալ լարվածությանն անկարող եղավ և պարզապես փախավ հանգստյան տնից: Կնոջ հարցերին չպատասխանեց, փակվեց իր սենյակում, իսկ գիշերվա կողմ ներխուժեց խոհանոց, ջարդեց ձեռքի տակ ընկած սպասքը, պատառոտեց հագի շորերը, այնուհետև զգեստապահարանում եղած իր հագուստը և ասաց կնոջը.

- Ըհը, էլ հագնելու բան չունեմ, էլ տնից դուրս գալ չեմ կարող, վերջ, մնում եմ տանը, վերջ, հիմա էլ դու գնա փող աշխատի, վերջ...

Կինը արսափած փակվեց իր սենյակում: Ճարպոն, հենց այդպես՝ մերկ, ջարդված սպասքի բեկորներից արնած ոտքերով, ընկավ մահճակալին ու քնեց:

Իսկ առավոտյան մի աներևույթ ուժ նրան հրեց-տարավ հայելու մոտ, համոզելով, թե սանրվելու անհրաժեշտություն կա:

Երբ մոտեցավ հայելուն և բարձրացրեց հայացքը՝ սոսկաց, որովհետև հայելու միջից իրեն նայեց մի տռուզ, մաքուր ածիված հետույք:

Ծ Ե Ր Ո Ն Ի Ն Ե Վ Ծ Ո Վ Ը

Իսկ մինչ այդ ծերունին ամեն ամառ մեկնում էր ծովափնյա քաղաք-ամառանոցը, պատճառաբանելով, թե ծովային կլիման անփոխարինելի է իր առողջության համար, թե իր նախնիներն ապրել են ծովի ափին և իր գեներում խոր նստած է ծովի կարոտը: Սակայն ամեն տարի այդ բավականաչափ հեռավոր ուղևորությունը կատարելու իրական պատճառն այլ էր, մի պատճառ էր, որը ծերունին ինքն

իրեն էլ միայն բացառիկ անկեղծության պահերին էր խոստովանում: Պատճառը կանայք էին՝ ամառանոցային լողափերի կիսամերկ, հրաշալի կանայք: Հնարավոր է՝ ծերունու մեջ իսկապես նստած էր ծովի կարոտը, սակայն ամեն ամառ նրան ծովափ էր բերում ուրիշ կարոտ՝ սիրո կարոտը, որը ոչ մի կերպ չէր մարում այդ արդեն մարող մարմնում: Եվ ի՞նչ աներ ծերունին, ինչպե՞ս պայքարեր, ինչպե՞ս լռեցներ հզոր բնագոյը: «Հերիք է, էլի, այ մարդ, վեր ընկիր տանդ, ու՞ր ես նորից ոտավորվել, թռներդ ուր որ է ամուսնանալու են, իսկ դու...», - սեփական խղճի ու էլի չգիտես ում առաջ արդարացած լինելու համար մտովի կշտամբում էր իրեն նա, սակայն վերջում, այնուամենայնիվ, պահպանում էր թողության գրունտ նեղլիկ արահետը. «Չէ, փրկություն չկա ինձ, երևի հոգեկանս խախտված է, հաստատ, հիվանդ եմ»:

Ծովը նրա հոգուն խաղաղություն չէր բերում, հակառակը՝ տառապանք էր, որովհետև սիրային խրախճանքի այդ խառնարանում նա ընդամենը դիտող էր: Բազմիմաստ հայացքների խաղը նրան երբեք իր մեջ չէր առնում, շրջանցում էր: Սակայն այդ տառապանքի մեջ քաղցրություն կար, փոքրիկ, թաքուն հույս: Համարյա պատրանքային այդ հույսն ամաչում էր լիովին բացահայտել իրեն, մնում էր ենթագիտակցության ոլորտում և այնտեղից, անտեսելով խղճի բողբոջները, խռովում էր ծերունու հոգին, բորբոքում երևակայությունը: Երևակայության ստեղծած պատկերները հաջորդում էին միմյանց, բերելով խաբուսիկ սփոփություններ, որոնք բախվելով իրականության սառը պատին, չքվում էին՝ իրենց փոխարեն թողնելով առավել խորացած տառապանքի մութ խռոչներ, սակայն չքվում էին՝ վերստին հայտնվելու պայմանով:

«Գիշերով, անմարդ լողափի արդեն սառած քարերին պառկած կինը խուլ տնքում էր: Ծերունին մոտենում էր ու հարցնում.

- Ի՞նչ է եղել, գուցե կարողանա՞մ օգտակար լինել:
- Ինքս էլ չգիտեմ, - հառաչում էր կինը, - երևի թունավորվել եմ, կամ արևահար եղել: Այդպես էլ մնացի այստեղ պառկած, չկարողացա տուն գնալ: Գլուխս պտտվում է:
- Առաջին օրն է, որ լողափում եք:
- Այո:
- Ինչու՞ չխնդրեցիք, որ օգնեն ձեզ:
- Անհարմար զգացի, թվաց՝ թուլեցի թուլություն է, կանցնի:
- Չե՞զ հիմա թունդ թեյ է անհրաժեշտ:
- Այս ժամի՞ն...
- Ես ունեմ... Ես այստեղ մոտիկ եմ ապրում: - Ծերունին բռնում էր մանկամարդ կնոջ տաք ձեռքը. - Հենվեք ու գնանք: Շուտով կիսա-

ներք, իսկ հետո... Հետո ձեզ տուն կուղեկցեմ :

- Շնորհակալ եմ, դուք անչափ բարի եք,- կինը դժվարությամբ ոտքի էր կանգնում:- Այնքան մուռ է, ձեր դեմքը չեմ տեսնում:

Նա մի ձեռքով գրկում էր իրեն հենված կնոջ մեջքը, մյուս ձեռքը դնում իր մեջքը գրկած ձեռքին. այդպես, միմյանց սեղմված, նրանք անցնում էին ամայի լողափով և դուրս գալիս թփերով եզերված նեղ-լիկ արահետը: Իսկ լուսինը թաքնված էր անթափանց ամպերի ետևում:

- Ահա և մեր դարպասը: Զգույշ բացենք, մարդիկ արդեն քնած են երևի:

Բուրավետ ծաղիկների մեջ կորած փոքրիկ դարպասն այնուամենայնիվ ճռռում էր, սակայն դա չէր խռովում բաց պատուհանների ետևում խռմփացողների քունը:

- Ձեր սենյակում ավելի մուռ է, քան դրսում:
- Լույսը վառել չարժե, տանտիրոջը կարթնացնենք, թեև...
- Չէ, հարկավոր չի, աչքերս արդեն վարժվեցին:
- Ահա և թերմոսը: Տաք է: Մեր բերանների տեղը կգտնենք, չէ՞:
- Կգտնենք,- ծիծաղում էր կինը:

Թեև մուռ էր, բայց ծերունին պարզորոշ տեսնում էր կնոջ հյուսթեղ շուրթերը, թեթևակի շեղ աչքերը, նույնիսկ դնչիկի փոսիկը: Չէ՞ որ մուռը միայն կնոջ համար էր:

- Ահա բաժակը, վերցրեք: Զգույշ...- Նրանց ձեռքերը հանդիպում էին բաժակի վրա՝ նրա ջերմությունը դարձնելով անզգալի:

- Ոչի՞նչ, որ նստել եմ ձեր անկողնում:
- Այն լիովին ձեր տրամադրության տակ է, տնօրինեք:
- Իսկապե՞ս:- Կինը վերջին կումերն էր առնում:- Իսկ դուք որտե՞ղ կքնեք. այստեղ ընդամենը մեկ մահճակալ է:
- Որտեղ հրամայեք. կարող եմ՝ գետնին կամ աթոռների վրա:
- Թեյն իսկապես որ օգնեց, շնորհակալ եմ:
- Էլի կուզե՞ք, թերմոսում դեռ շատ կա, լցնե՞մ:
- Բավական է:- Կինը հրում էր դատարկված բաժակը:- Ասում եք՝ գետնի՞ն... Ինչի՞ նման է՝ եկա, ձեզ անհանգստացրի, խմեցի ձեր թեյը, հիմա էլ իմ պատճառով գետնի՞ն քնեք: Ոչ: Ինձ թվում է՝ երկուսով հիանալի կտեղավորվենք այս մահճակալին:

Երբ մտնում էր ծածկոցի տակ, կինն արդեն մերկ էր:

- Գրկիր ինձ,- շշնջում էր նա,- ամուր գրկիր, ավելի ամուր, այնպես, որ շունչս կտրվի... Այդպես: Սիրիր ինձ...
- Ես կհամբուրեմ քեզ ոտքերիդ մատներից մինչև մագերիդ ծայրերը,- շշնջում էր ծերունին, ում ծեր լինելը քողարկում էր մթությունը:

Իսկ առավոտյան, լույսը չբացված, կինը հեռանում էր»:

Երբ երևակայությունն ավելի էր բորբոքվում-սանձարծակվում՝ ներկայացնում էր ավելի համարձակ տարբերակ, որտեղ ավելորդ դուրս էր դառնում ծերունու ծեր լինելը քողարկող մուռը:

«Նստած էր աղմկոտ ռեստորանի մերձակա պուրակում, կիսա-րիսների տակ, ծխում էր: Ռեստորանից դուրս էր գալիս կարճ շրջազգեստով երկարոտն աղջիկը և նստում նրա կողքին.

- Սիգարետ չե՞ս հյուրասիրի, ծերուկ:
- Հաճույքով,- ծերունին հանում էր տուփը:- Ծխելու՞ դուրս եկար:
- Ոչ, ընդհանրապես դուրս եկա:- Աղջիկը վերցնում էր սիգարետը, նրա երկար մատները քսվում էին ծերունու ձեռքին, նրանք երկիմաստ ժպտում էին միմյանց: Ծերունու հայացքը սահում էր ցած՝ մերկ ազդրերին, ավելի ցած՝ ուր բացքի լոռիկների մեջ խաղում էին աղջկա կարմիր ներկած եղունգներով մատները:- Ձանձրացրին ինձ էդ լակոտները: Այնքան պարծենկոտ են, մեծամիտ, կարծես ամեն ինչ գիտեն, ամեն ինչ կարող են:- Աղջկա բերանից գինու հոտ էր գալիս, պչրոտ շարժումով ետ գցած մագերի ծայրերը քսվում էին ծերունու դեմքին:- Մի լռիր, մի բան պատմիր:

Ծերունին սկսում էր պատմել, բայց աղջիկն ընդհատում էր նրան.

- Լսիր, բայց դու համակրելի ծերուկ ես, գիտե՞ս:
- Իսկ դու հմայիչ աղջիկ ես: Էհ, եթե ջահել լինեի...
- Այսօր մի քիչ տխուր եմ, տխուր ու մի քիչ հարբած,- աղջիկը չարաճճի ժպտում էր ու անսպասելիորեն հարցնում.- Դու ինձ շատ ես ուզում, չէ՞: Ո՞նց վառվեցին աչքերդ: Բայց կկարողանա՞ս ինձ սիրել:

- ...
- Ջահելներից լա՞վ:
- Չգիտեմ:
- Հետաքրքիր է: Ես քեզ համար՝ ոնց որ համով կոնֆետ, չէ՞:
- Այդպես է:
- Ուրեմն գնանք, քանի հարբած եմ ու բարի: Խմելու բան ունե՞ս տանը... Իսկ տուն ունե՞ս:

- Ունեմ և՛ խմելու բան, և՛ տուն:
- Տանտերդ քիթը չի խոթի՞:
- Տանտերը հիմա քնած է, նա շուտ է պառկում քնելու:
- Իսկ պառա՞վդ:
- Պառավս... Պառավս վաղուց էնտեղ է,- ծերունին ցույց էր տալիս երկինքը և շփոթվում՝ ոչ այնքան աղջկա, որքան էնտեղ գտնվող պառավի առջև:
- Իմ խեղճ ծերուկ, վաղուց կին չի տեսել: Ոչինչ, հարբած բարի

աղջիկը կզվարճացնի նրան այս գիշեր:

Նրանք ելնում էին լուսնի ձերմակ լույսով ներկված արահետը, և աղջկա զնգուն ծիծաղից դողում էին ստվերները, և ճռռում էր պատիկ դարպասը, և անխռով խռմվիացնում էր բարեսիրտ տանտե-րը...»:

Հաճախակի այս ու այն կողմ պտտվող անհանգիստ, որոնող հա-յացքը մուգ ակնոցի ետևում թաքցրած, ժամանակ առ ժամանակ կանգնելով և ուղղելով կորացած մեջքը, թաշկինակով չորացնելով դեմքի ու վզի քրտինքը, ծերունին քայլում էր կանաչ փողոցներով, դուրս էր գալիս լողափ, նստում ծածկի տակ՝ աչքերին իջեցնելով ծղոտե եզրավոր գլխարկը, չհանելով հագուստը: Հետո ճաշում էր մարդաշատ ճաշարանում՝ սեղանի տակ ոտքը իբր պատահաբար կանանց ոտքերին հպած, մտածելով, որ բոլոր արարածներից միայն գեղեցիկ կինն է գեղեցիկ ուտում: Հետո էլի էր գրոսնում՝ մինչև ուշ գիշեր պտտվելով աղմկոտ սրճարանների, ռեստորան-ների, պարահրապարակների շուրջը: Տուն էր գնում, երբ լքում էին քաղաքի ձայները և մնում էին միայն փսփոցները բարձր թիերի ետևում, փսփոցներ, որ խանդով ու թախիծով էին լցնում նրա հո-գին, այդպիսի պահերին ցանկանում էր գազան լինել, կռվել արու-ների հետ հանուն էգի. չէ՞ որ ծեր գազանը նույնքան իրավունք ունի էգի տիրանալու, որքան ջահելը, ամեն բան վճռում է արդար մենա-մարտը՝ կամ մահ, կամ կյանք:

Տուն էր մտնում անձայն, փակում դուռը և աչքը զգուշորեն հպում պատի մեջ արված ձեղքին,- ամառանոցային տների վարձով սեն-յակները սովորաբար բարակ միջնապատերով են բաժանված լի-նում իրարից,-եթե հետաքրքիր ոչինչ չկար, մոտենում էր մյուս պատին: Ճեղքերը բացում էր գրպանի դանակով, կողմնակի աչքի համար աննկատ տեղերում, աշխատելով դրանք նմանեցնել բնա-կան ճաքի: Հարևան սենյակներում որքա՞ն մերկ կանանց կամ սի-րային տեսարանների է հետամուտ եղել՝ մթության մեջ պատի մոտ կծկված, աչքն ազահորեն ձեղքին սեղմած, լարված ու քրտնաթոր, հոշոտվող խղճով:

Հետո պառնում էր, վրան քաշում սավանը և անհանգիստ շուռու-մուռ գալիս անկողնում՝ տնքալով ու հառաչելով. քունը երկար ժա-մանակ չէր մոտենում: Փակ աչքերի առաջ հանկարծ հայտնվում էր սեփական կնոջ կենսագուրկ մարմինը, որը դանդաղորեն բարձրա-նում էր դագաղից՝ պոկոտելով պռունկների կպած սարդոստայն-ները, նստում էր, բացում դատարկ ակնախորշերը և հեգնական ժպտում. «Չհոգնեցի՞ր էդ անիծյալ աշխարհից, տնաշեն, մեղք չէ՞ս»:
«Հոգնել եմ», - պատասխանում էր ամուսինը, և չէր ստում, որով-

հետև գիշեր էր և օրվա վազվզոցից այնքան էր հոգնած, որ պատ-րաստ էր թթել աշխարհի վրա:

Սակայն բացվում էր նոր առավոտ, ծիկրակում էր արևը, լսվում էին լողափ զնացողների զվարթ ձայները, լուսամուտի միջով տես-նում էր պարաններից լողազգեստ-ցամքոց վերցնող գեղեցիկ ծե-քերը...

Եվ ամեն բան սկսվում էր նորից:

ԱՐԵՎԱՅԻՆ ՀՈՎԻՏ

Քարը ծնկիս դիպավ. ցնցվեցի ոչ այնքան ցավից, որքան անս-պասելիությունից: Մայրին հավաքված պատանիների խումբն ավե-լի ձայնարձակ հռեռաց:

- Ինչու՞ են ծիծաղում,- հարցրի ընկերոջս:

- Չգիտեմ: Երևի հագուստի համար,- կանգ չառնելով՝ պատաս-խանեց նա:

Նայեցի նրա, ապա իմ մուգ կապույտ արտահագուստին, ցեխա-ջուր ծծած մեր թեթև կոշիկներին և թոթվեցի ուսերս՝ հագուստ է, էլի:

- Հագուստ է, էլի,- հասնելով նրան՝ ասացի, հետո նկատեցի.- Շավարիդ գրպանը պատռել ես:

- Գիտեմ: Ցանկապատով անցնելիս եղավ: Ինձ թվաց, թե պա-տուհաններից մեզ նկատել են և ուր որ է աղմուկ կբարձրացնեն:

Մենք քայլում էինք քաղաքից դուրս տանող փողոցով: Նեղ փողո-ցի երկու կողմից դեպի հեռուն էին ձգվում բազմահարկ շենքերի սերտ շարքերը, որոնց կատարներով կտրված երկնքի ժապավենը վերում նույնքան գորշ, մռայլ ու անհրապույր էր, որքան ցեխոտ, ան-հարթ ասֆալտը մեր ոտքերի տակ:

- Թքած շավարի վրա. տեղ հասնելուն պես շարտելու ենք այս զզվելի հագուստը,- շարունակեց ընկերս:- Հովիտում միշտ տաք է, հագուստի խնդիր չկա, մի կիսավարտիք զցիր վրադ ու ապրիր քեզ համար:

Ջույգ ճաղապատ լուսամուտներով վեցտեղանոց սենյակում մեր ձերմակ մահճակալներն իրար մոտ էին: Ամեն օր, քնելուց առաջ, նա երկար, ոգևորված պատմում էր իր հովիտի մասին՝ այնքան, որ հովիտն արդեն ինձ էլ էր հարազատ դարձել: Արևային հովիտը:

- Այնուամենայնիվ, զարմանալի է՝ ո՞նց է, որ այնտեղ միշտ տաք է,- հարցրի ես. առաջին անգամ չէի տալիս այդ հարցը, սակայն հո-վիտի մասին խոսելը մեզ երբեք չէր հոգնեցնում:

- Կարծում եմ՝ ստորգետնյա տաք ջրերն են պատճառը:

- Հանկարծ հրաբուխ չլինի՞:
 - Չէ, տաք ջրեր են:
 - Եթե ամեն բան պատմածիդ պես է՝ ինչու՞ ուրիշներն էլ չեն գնում այնտեղ ապրելու:
 - Որովհետև մարդիկ սիրում են վերելակ, մետրո, մեքենաներ, ժխոր...
 - Շենքեր, աղբատարներ,- ավելացրի ես:
 - Իսկ հովիտը բոլոր կողմերից շրջափակված է բարձր լեռներով, այնտեղ տանող միակ արահետով հեծանիվը հազիվ անցնի:
 Ետևից մոտեցող ահավոր հռնդյուն լսվեց: Ընկերոջս դեմքն ակնթարթորեն գունատվեց ու սկսեց ջղաձգվել: Նա ձեռքերով ամուր փակեց ականջները, իսկ երբ վիթխարի բեռնատարն անցավ ու արագորեն փոքրանալով վերածվեց բզզացող ճանձի՝ հայիոյեց ետևից:
 Քաղաքից դուրս եկանք: Խճուղու երկու կողմերում անխնամ հողեր էին, քարակույտեր, կիսահալ ձյան ծակուտկեն պատառներ, որ երկար գործածած սպունգ էին հիշեցնում: Վաղ գարուն էր:
 - Հիշում եմ՝ մոտ մեկ շաբաթ մնացինք հովիտում,- դարձյալ խոսեց նա:- Հայրս երկրաբան էր, գործուղել էին ինչ-որ ապարներ ուսումնասիրելու: Իսկ ես ծանծրայթից մեռնում էի, անդադար տգտգում էի, որ ինձ տուն տանի. քաղաքին սովոր հիմարի մեկն էի: Հայրս ասում էր՝ ու՞ր տանեմ, մայրդ տանը չի, ու՞մ հետ թողնեմ: Ես էլ ասում էի՝ բայց ինչի՞ տանը չի, ու՞ր է...
 Գրպանիցս երկու հաբ դուրս բերեցի ու շարտեցի հողերի մեջ: Շարժումս նկատելով՝ ընկերս հարցական նայեց դեմքիս:
 - Առավոտվա բաժին դեղերն էին, չէի խմել. պետքս չեն,- բացատրեցի:
 - Ճիշտ է, կորչեն դեղերը, էլ ոչ մի դեղ, վերջ,- ոգևորվեց նա:
 Երկհարկանի մի շինություն երևաց արջուկում: Բաց պատուհաններից հաստոցների չխչխկոց էր լսվում:
 - Հաց չուտե՞նք,- ընկերս խորամանկ ժպտում էր:
 - Հա՞ց,- գարնացա ես:
 - Հաց,- հաստատեց նա և թեքվեց դեպի գործարանի բակը:
 - Բայց որտեղի՞ց:
 - Ճաշարանից թըրրի: Մտածեցի՝ երկար ճամփա ենք գնալու, կտվենք:
 - Բա որ տեսնեի՞ն... Հացի պատճառով ամեն բան կարող էիր փչացնել,- հանդիմանեցի ես:
 Նստեցինք մետաղյա սառը նստարանին: Նա կախ ընկած մեծ գրպանից հանեց չորացած հացը, կոտրեց ու կեսն ինձ տվեց:

- Ափսոս, ջուր չկա,- ասաց՝ նայելով ցամաք ցայտաղբյուրին:
 Երրորդ հարկի պատուհաններում երկու կին հայտնվեցին: Ջահել կանայք էին: Մեզ նկատելով՝ նրանք ինչ-որ բան խոսեցին ու քրքջացին: Կնոջական զնգուն ծիծաղը հաճելիորեն խուտուտ տվեց ներսս:
 - Ջուր չուզե՞նք,- հարցրեցի ընկերոջս:
 - Օտար կանանց հետ ի՞նչ գործ ունես,- վախեցավ նա:
 - Լավիկն են,- նկատեցի ես:
 - Ժամանակ չկա, դեռ ահագին ճամփա պիտի անցնենք:- Նրա սովորաբար դժգույն դեմքը թունդ կարմրատակել էր: Կանանց ծիծաղն ավելի զնգուն հնչեց:- Գնացինք այստեղից,- ընկերս կտրուկ վեր կացավ ու առանց ետ նայելու՝ արագ քայլեց դեպի խճուղին:
 - Քեզ ի՞նչ պատահեց,- ետևից հասնելով հարցրեցի ես:
 - Ոչինչ: Արևն արդեն թեքվում է, իսկ դու խելքդ տվել ես լրբերին: Մութը չընկած՝ տեղ պիտի հասնենք, չէ՞:
 - Լավ, մի բորբոքվի, կհասնենք:
 Լուռ քայլում էինք՝ շարունակելով ծամել հացը: Քաղաքը վաղուց արդեն չէր երևում:
 - Հովիտի կանայք ուրիշ են,- խոսեց ընկերս:- Նրանք կարծես այլ մոլորակից լինեն, բոլորը բարեհամբույր են, ժպտադեմ: Նրանք իրենց թույլ չեն տալիս ծիծաղել մեկ ուրիշի վրա:
 Էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց լռեց, որովհետև ճանապարհին, չգիտես որտեղից, հանկարծ մեծ, թավամազ գամփռ հայտնվեց, կանգ առավ ու կասկածանքով նայեց մեր կողմը:
 - Ի՞նչ ես կարծում, չի հարձակվի՞,- անհանգստացավ ընկերս:
 - Չգիտեմ: Ամեն դեպքում՝ արի շրջանցենք:
 - Ճիշտ է. ինքն իր համար, մենք՝ մեզ:
 Թևանցուկ՝ դուրս եկանք ասֆալտից և հողերի միջով բավականին մեծ կիսաշրջան գործելով՝ վերադարձանք խճուղի: Շունն ուշադիր հետևում էր մեզ ու ժամանակ առ ժամանակ զմռում՝ ո՛չ թշնամական, ավելի շուտ՝ գարնացած:
 - Երբեք չես իմանա, թե շան մտքինն ինչ է,- նկատեցի ես:
 - Համամիտ եմ,- արծազանքեց ընկերս: Նա հանկարծ կանգ առավ ու հաղթական ասաց.- Ահա և հովիտ տանող ճանապարհը:
 Նրա ցույց տված կողմում մի նեղիկ արահետ էր երևում, որն աստիճանաբար հեռանալով խճուղուց՝ իջնում էր դեպի ծորակը:
 - Ձորն անցնենք՝ ճանապարհը նորից վեր կտանի,- բացատրեց ընկերս, երբ արդեն քայլում էինք քարքարոտ արահետով:
 Մանր խիճը ռետինե բարակ ներբանների տակից ցավեցնում էր ոտքերս: Արդեն ծորակում՝ մեր գլխավերևով մեծ-մեծ թռչուններ

անցան ու ծածկվեցին ծառերի ետևում:

- Աղավնիներ են,- երանությամբ ժպտաց նա, ապա, նկատելով գարմանքս, ավելացրեց.- Հովիտի աղավնիները խոշոր են: Լեռների կողմը թե՛ն: Հրեն լեռները, տեսնու՞մ ես... Արևային հովիտը դրանց ետևում է: Հասնում ենք:

Դրանք ավելի շուտ բլուրներ էին, քան լեռներ: Սակայն ընկերոջս հասկանալ կարելի է՝ չէ՞ որ պատիկ մանչուկ է եղել, երբ հոր հետ եկել է այստեղ:

- Հրաշք բան է գարունը, չէ՞,- ասաց նա:- Գետի ափին տուն կկառուցեն, բակում յասամաններ կտնկեն ու ծիրանենի. ծաղկած յասամանից ու ծիրանենուց սիրուն բան չկա աշխարհում:

- Բալենին էլ սիրուն է,- նկատեցի:

- Հետո, եթե մի լավ աղջիկ հանդիպի՝ կամուսնանամ,- իմ ասածին անուշադիր՝ շարունակեց նա:

Երբ հասանք բլուրներին՝ արդեն իրիկնանում էր: Ցրտեց:

- Այս ոլորանի ետևում է,- ընկերոջս ձայնը հուզմունքից դողաց:

Արագ քայլեցինք, թեև հոգնած էինք, համարյա վազում էինք: Վերջապես անցանք ոլորանը: Ընկերս, որ առաջ էր ընկել, կանգ առավ: Պահ անց ես էլ կանգնեցի նրա կողքին, ցածրիկ հողաթմբի վրա:

Մեր առջևում մռայլ անապատ էր, ուժգին պոռթկումներով փչող քամին ցնցում էր գաճաճ փշուտները, հավաքում-ցրում աղբակույտերը՝ վեր հանելով թանձր փոշին ու թղթերի ծվենները, խուլ թխկթխկալով այս ու այն կողմ էին գլորվում դատարկ տուփերը, մայր մտնող արևի աղոտ լույսը օտարոտի սառնությամբ արտացոլվում էր ջարդված շշերի բեկորներից: Նայեցի ընկերոջս. հայացքս դեմ առավ նրա կրակացած, նիհար թիկունքին:

- Ես ետ չեմ գնա,- առանց շրջվելու՝ ասաց նա:- Լուսու՞մ ես, ես ետ չեմ գնա, երբեք:

- Ես էլ:

- Իսկապե՞ս,- նա շրջվեց ու արցունքոտ աչքերով խեղճ ժպտաց:

- Իհարկե: Ինչ-որ տեղ պիտի լինի այդ Արևային հովիտը, չէ՞:

- Ես էլ եմ այդպես կարծում. հո չի՞ կարող առհասարակ չլինել:

Թևանցուկ արինք միմյանց ու քայլեցինք ցուրտ անապատով, որի կորացող անհրապույր հարթությունը հեռվում ձուլվում էր հորիզոնին:

ԱՆՎԱՎՈՐ ԹՇՆԱՄԻՆԵՐ

Կատաղի հռնդյունով սլացող մեքենաներից յուրաքանչյուրն ասես բռնում էր նյարդաթելերիս ծայրերը, նյարդերս քաշում-փաթաթում իր պտտվող մասերի վրա, հետո հեռանալով՝ պոկոտում: Յուրաքանչյուր բջիջով զգալով պոկոտված ու պոկոտվող նյարդերիս ցավազին բողբոջը, շարժումների խախտված ներդաշնակությամբ քայլում եմ փոշոտ մայթով, սկամայից տրվելով դաժան մի երագանքի: Թեև ինչու՞ «դաժան», ոչ, բոլորովին էլ դաժանություն չէ, այլ ինքնապաշտպանության բնագոյով սնվող վրեժխնդրություն, որն արդարացիորեն պահանջում են հոշոտվող նյարդերս, սաստիկ նյարդայնությունից ծանրացած շնչառությունս, արնակալած ու անդադար արցունքով աչքերս, հոգնած, տնքացող ուղեղս, ահաբեկված տրոփող սիրտս: Եվ ահա, մտապատկերիս մեջ հայտնվում է ահռելի գերեզմանափոսը, որն իր մեջ ներառել է աշխարհի բոլոր մեքենաներին: Իմ երևակայությամբ դատապարտված այդ մեքենաներն անօգնական ոռնում են և փոսից դուրս գալու ապարդյուն փորձեր անում: Իսկ ես մտել եմ փոսն ու կատաղի հարվածում եմ նրանց փայլփլուն, լալիր ճռույթներին՝ բարձրացնելով և թափով իջեցնելով հսկայական մուրճը: Որքանով շուրջս՝ իրականության մեջ, ավելի է խտանում մեքենաների աղմուկը, երևակայությանս մեջ այնքանով ավելի կատաղի եմ հարվածում այդ անվավոր հրեշներին՝ հարվածում և հերթականությամբ լռեցնում նրանց նյարդածվատ ոռնոցները:

Փողոցի ոռնացող մասից հնարավորինս հեռու մնալու մղումով՝ քայլում եմ շենքերի տակով, համարյա քսվելով պատերին: Վիթխարի բեռնատարի գարհուրելի դղրդյունն ինձ վերջնականապես է դուրս բերում հավասարակշռությունից,- եթե մինչ այդ իմ վիճակը կարելի է հավասարակշռված համարել,- կորցնում եմ նույնիսկ մեքենաների գերեզմանափոսի մտապատկերը, որն աղավաղվում, վերածվում է թարթող, գրգռիչ գունաբծերի: Կույր գայրույթը գալաբում է աղիներս, մամլում սիրտս, թոքերս և լիքը լցնում ներսս: Սկսում եմ անհասցե հայիոյել, անբնականորեն ցնցել ուսս, վրավրա թարթել աչքերս: Կողմնակի հայացքի համար թերևս շատ անհեթեթ տեսք ունեն: Երևի ինձ խելագարի տեղ էլ դնեն: Գուցե իսկապե՞ս խելագար եմ... Չգիտեմ: Գիտեմ միայն, որ մեքենաները դիտերիմ թշնամիներս են, թշնամիներ, որ մտադրվել են ոչնչացնել ինձ: Նրանք դավեր են նյութում իմ դեմ, և ես նրանց հետ մտել եմ

լուռ, անողոք պայքարի մեջ: Բանն այնտեղ է հասել, որ ես չեմ տանում նրանց ոչ միայն աղմուկն ու ծուխը, այլև գոյությունն առհասարակ: Սա արդեն մոլազարության հասած թշնամություն է, ես դա գիտակցում եմ, սակայն ի՞նչ կարող եմ անել: Հիշում եմ, վերջերս փողոցով սուրացող մի մեքենայի անիվից պոկվեց և զլզլալով դեպի մայթ գլորվեց նիկելապատ, փայլփլուն թասակը: Հենց իմ կողքին այն զարկվեց մայթեզրի ելուստին ու անշարժացավ՝ շողարձակելով արևի տակ: Վերցրի այն, տարա տուն, բարձրացա ձեղնահարկ, տեղավորեցի բետոնե սալին և մեծ մուրճով ծեծեցի՝ հաճույքով նայելով, թե ինչպես է ճնթվում-փայլաթափվում թասակի նիկելապատ, լափրջ երեսը, հետո թքեցի վրան ու նետեցի աղբատարի մեջ: Սակայն հենց հաջորդ օրն ինձնից վրեժ լուծեցին: Փողոցային եռուզեռի գերլարված ժամին մի նիհար, ցեխոտ շուն, որ մինչ այդ հանգիստ նստած էր պաղպաղակի կրպակի կողքին, հանկարծ վճռեց անկյունագծով կտրել-անցնել խաչմերուկը: Իրեն սպառնացող վտանգի մասին հիշեց արդեն խաչմերուկի մեջտեղում՝ անհամբերությամբ ցնցվող մեքենաների շրջապատման մեջ: Խուճապի մատնվեց, ոչ մի կերպ չէր կարողանում կողմնորոշվել, աղետոտոր կլանչելով մերթ ընկրկում էր, մերթ նետվում առաջ: Մեքենաներից ամենաանհամբերը, այլևս անկարող լինելով սպասել, պոկվեց տեղից և սլացավ, քսվելով շանը, հնարավոր է նաև, որ ձգմեց թաթը, որովհետև շունը կլանչեց ու նետվեց առաջ՝ հակառակ կողմով ընթացող բեռնատարի տակ: Արգելակների ճռինչ լսվեց, ապա՝ կադկանձ. բեռնատարը կանգ առավ, սակայն անմիջապես էլ առաջ շարժվեց: Արնաշաղախ շունը, ասֆալտին ընկած, անբնականորեն ցնցվում էր և թափահարում թաթերը: Նրան երևի թվում էր, թե դեռ կանգնած է թաթերի վրա և փախչում է անիծյալ մեքենաներից. ըստ երևույթին՝ մթազնող գիտակցության մեջ դեռևս միացած էր մնում փախուստի ազդանշանը: Հաջորդ մեքենան անցավ զլխի վրայով. քթից փրփրալով հորդաց արյունը, ակնախորշից ձգված աչքը կախվեց ծռմռված մռուխին: Քիչ հետո շունը անձև մսեղիք դարձած՝ ծեփված էր ասֆալտին: Միայն պոչն էր պահպանել իր ձևը և տարուբերվում էր՝ կողքով սուրացող մեքենաների բարձրացրած քամուց: Այդ դեպքից հետո արգելակների ճռինչն իմ մեջ գուզորդվում է շան կաղկանձի հետ և աչքերիս առջև անմիջապես հայտնվում է այն տեսարանը: Ես տեսել եմ նաև մեքենայի տակ ընկած մարդու, սակայն շան դեպքն ավելի ազդեցիկ էր, գուցե այն պատճառով, որ մարդն անձայն մեռավ, գուցե նաև այն պատճառով, որ շունը չէ մեքենա ստեղծող:

Անցնում եմ փողոցն արգելված տեղում. խախտում եմ կարգը,

որովհետև անցումով անցնելու դեպքում ստիպված եմ լինելու քայլել թշնամիներիս բութ, սպառնալից մռութների առաջով, լսելու նրանց անհամբեր ոռնոցները և վախենալու, թե ուր որ է կհարձակվեն վրաս: Այո, ավելի լավ է խախտել կարգը. իր ամբողջ վտանգավորությամբ հանդերձ՝ դա ինձ ավելի անվտանգ է թվում, հարկավոր է միայն ընտրել հարմար պահն ու վազել...

Վերջապես անցնում եմ: Սակայն ինչի՞նչ է, չէ՞ որ տունս հակառակ կողմում է, ու՞ր եմ գնում...

ՓԱՆՈՒՍ, ՓԱՆՈՒՍ...

Փախու՞տ... Այո, ես փախչում եմ: Նյարդայնությունս հասել է իր գագաթին, գիտակցությունս փշրված է, և յուրաքանչյուր փշուրին հեծնել է գրգռված, խելացնոր մի նյարդ, հեծնել և քշում է: Ես քշվում եմ դեպի մոտակա կանգառը և նստում քաղաքից դուրս տանող ավտոբուսը: Այո, օգտվում եմ թշնամու ծառայությունից, ի՞նչ արած: Փակում եմ աչքերս և հիշում իմ մանկության փողոցը. մայթեզրով հոսող առվակ, բոբիկ ոտքերով առվակի ջուրը ձլփացնող արևխանձ երեխաներ, սալահատակով սուրացող փայտաշեն ինքնագլորներ, գնդակներ... նույն փողոցը, որի վրա հիմա էլ ապրում եմ, սակայն այն արդեն իմը չէ, անվավոր հրեշները գրավել են թե՛ այդ, թե՛ մյուս փողոցները:

Քաղաքից դուրս, առաջին իսկ կանգառում իջա ավտոբուսից: Վերջինս ցեխաջուր ցայտեցնելով կոշիկներիս՝ շարունակեց իր երթուղին. թվաց՝ կռահել է իմ ՈՎ լինելը:

Հեռվում, այնտեղ, ուր խճուղու նեղացող գորշ հարթությունն իջնում է վար՝ երևում է ծխամպով ծածկված քաղաքը: Խճուղու այն կողմում՝ սարալանջն ի վեր մագլցող գյուղակն է, իսկ այս կողմում՝ ասֆալտի եզրից աստիճանաբար հեռացող արահետը, որ կտրում-անցնում է կանաչ դաշտով: Դաշտի մեղմորեն օրորվող հարթության վրա տեղ-տեղ բարձրանում են փոքրիկ ծառախմբերը. քայլեցի այդ կողմ: Շուտով ստիպված եղա լքել արահետը և առաջանալ խոտի միջով: Արահետը տանում էր առավել գործնական նպատակների՝ դեպի դեղինին տվող ցորենի արտը. փախչողների համար պատրաստի արահետներ չկան:

Ահա և ծառերը: Հաստաբուն ծառի տակ մի հարթ քար կա. նստեցի ու փակեցի աչքերս: Լսողությունս հաճելիորեն շոյում եմ ծառախումբը եզերող առվի քջքոցը, ճանձերի հեռացող-մոտեցող բզզոցն ու ծղրիղների միալար ճռռոցը: Ծղրիղների երգը ծնում է այն զգացումը, թե ձմեռը դեռ շատ հեռու է, ավելին՝ ձմեռ առհասարակ գոյություն չունի: Նրանց անխռովությունը փոխանցվում է ինձ, և ես, ծառաբնին հենված, աննկատելիորեն ննջում եմ:

Սթափվեցի այտիս նստած մոծակի խայթոցից: Իրիկնանում էր: Շուրջս ոչինչ չէր փոխվել, միայն թեթևակի մթնել էր, և ծայների նախկին փունջը հարստացել էր սաղարթների խշշոցով: Հորիզոնում խտացող ամպերը հուշում էին, որ գեփյուռը շուտով կարող է փոխվել քամու:

Հանկարծ սաստիկ ծանծրայթ ապրեցի: Ծղրիղների, առվի, ճանճերի, զեփյուռի միօրինակ ծայները տաղտուկի և դատարկության ուժգնացող զգացում էին ներարկում: Հեռվում երևում էին քաղաքի կրակները: Քաղաքն իր թաթոռը աչքերով կանչում էր ինձ, ասֆալտը կանչում էր իր բնակչին, անհրապույր վերելակները, աղբատարների շուրջ վխտացող առնետները, բետոնե պատերը, գույնզգույն գովազդները, իրարանցումն ու հեղձուկը կանչում էին ինձ: Թերևս երբեք չկարողանամ գյուղում ապրել, այո, մեկընդմիջտ պետք է հրաժարվել այն պատրանքից, թե մի գեղեցիկ օր կփակեմ հաշիվներս քաղաքի հետ և կփախչեմ սարերում ծվարած մի գողտրիկ, խաղաղ գյուղակ: Չէ, փախուստ չկա, ինքնախաբեություն է, փախչել կարելի է միայն այսպես, դեպքից դեպք: Դեհ, իսկ հիմա հարկավոր է գնալ, տաղտուկն արդեն ճնշող է դառնում: Թունամշուշի մեջ ժխորող քաղաքը սպասում է ինձ, սպասում է, որ հոշոտի, և ես կամովին գնում եմ հոշոտվելու:

Տունդարձի ճանապարհը դժվարությամբ էի հաղթահարում: Գլուխս պտտվում էր: Մի տեսակ շշմել էի, աչքերիս առջև գորշ բծեր էին լողում՝ շեղելով կողմնորոշումս: Այնպիսի զգացողություն էր, ասես միանգամից մի ամբողջ թունդ սիգարետ էի ծխել: Պատճառը երևի մաքուր օդն ու լռությունն էին, նրանց անսպասելիորեն մեծ բաժինը, որին սովոր չէ մարմինս: Սակայն արդեն խճուղու վրա՝ մեքենաների խիտ հոսքը, ասֆալտից տարածվող ծուխն աստիճանաբար վերականգնեցին սովոր ինքնազգացողությունս:

Չեռքս պարզած՝ քայլում եմ ճամփեգրով: Վերջապես մի մեքենա դուրս եկավ հոսքից, թեքվեց իմ կողմ ու արգելակեց:

- Քաղա՞ք:

- Այո:

- Գյուղում բարեկա՞մ ունես,- ցույց է տալիս արդեն չերևացող գյուղակի կողմը:

- Ոչ,- պատասխանում եմ ես. վարորդի հետ խոսելու տրամադրված չեմ, ինձ համար նա սովորական մարդ չէ, այլ թշնամուս համախոհը, նրա մի մասը՝ լծակ, ատամնանիվ կամ անվաղող: Ատամնանիվի ավելի է նման: Հնարավոր է՝ վատ մարդ չէ, բայց ես ի՞նչ կարող եմ անել:

- Ռեզիններս փոխելու ժամանակն ա, արդեն մաշվել են,- ասում

է Ատամնանիվը:

Լռում եմ. ինձ ի՞նչ:

- Ռասպրեդվալն էլ բանի պետք չի, լսում ե՞ս ոնց ա տկտկում,- շարունակեց Անվաղողը:

- Կարծում էի՝ լուսարձակից է:

- Ոնց...- ապշում է Լիսեռն ու լռում:

Քաղաքը երախը բաց վիշապ է հիշեցնում: Խճուղին մտնում է հազարաչք այդ վիշապի երախը: Քիչ անց մենք արդեն վիշապի գոռգոռացող որովայնի մեջ էինք: Ահա և իմ փողոցը: Խաչմերուկից քիչ ներքև...

- Խաչմերուկից ներքև, շենքի անկյունում:

Ատամնանիվը գլխով է անում, հետո խոսել չի ցանկանում: Տալիս եմ հասանելիք դրամն ու իջնում:

Շքամուտքի պատին հենած մետաղյա ծողը դարձյալ գրավում է ուշադրությունս. արդեն երրորդ օրն է՝ դրված է այնտեղ: Ուռուցիկ զոլերով երկար, ծանր ծող է: Բայց ինչու՞ է այդպես գրավում ուշադրությունս... Մի պահ նույնիսկ թվում է, թե ժպտում է դավադիր ժպիտով, ասես միասին ինչ-որ թաքուն գործ ենք ձեռնարկել: Տարօրինակ է...

Առավոտյան, տանից դուրս գալիս, մոռացել եմ փակել օդանցքը և հիմա տունը փոշի ու ծուխ է լցվել:

Գլխացավս չի անցել. պառկում եմ և փորձում քնել: Բայց զուր եմ համառում, առանց քնաբերի մեկ է՝ չի ստացվի: Կուլ եմ տալիս հաբը և նորից պառկում: Ուղեղս սկսում է թմրել: Աչքերիս առջև լող են տալիս մարդկային կերպարանքներով ատամնանիվներ, անվաղողներ, լծակներ, լիսեռներ... Ահա և ինձ քաղաք բերած վարորդը՝ նստած է մի վիթխարի կարբյուրատորի մեջ. վառվող մոմը ձեռքին, աղերսող հայացքը վեր հառած մրմնջում է. «Աստված, ուզածս չորս անվաղող է, գոհացրու ցանկությունս, խնդրում եմ»: Հետո՝ մեքենաներով լեցուն գերեզմանափոսը. վարորդը գլխահակ կանգնել է փոսի եզրին, նրա մեքենան փոսի մեջ է, ինքը լուռ արտասվում է՝ յուղոտ գլխարկը ձեռքի մեջ տրորելով: Ապա՝ դարձյալ լծակներ, անվաղողներ, ատամնանիվներ... Եվ զուլավոր ծողը, դավադրորեն ժպտացող ծանր ծողը...

...Իմ մանկության փողոցն է: Ֆուտբոլ ենք խաղում: Խաղի թեժ պահին հանկարծ հազարավոր մեքենաներ շրջապատում են մեզ: Նրանց շչակներն անտանելի ոռնոց են բարձրացրել: Շրջափակման օղակն սկսում է արագորեն սեղմվել: Հսկայական անիվի տակ ընկած գնդակի պայթյունն ասես ազդանշան է, որպեսզի սթափվենք ապշությունից և փախչենք: Մեքենաները մռնչալով հետապնդում

են մեզ: Ընչակտուր՝ բարձրանում են աստիճաններով, վերջապես բացում դուռը, նետվում սենյակ և թաքնվում հեռավոր անկյունում: Անվավոր գազանները հավանաբար օկուպացնում են աշխարհը, և հերթը հիմա իմ տանն է հասել: Բայց ես ինչ-որ տեղ ապրելու իրավունք ունեմ... թե՞ ոչ: Նրանց գարհուրելի հռնդյունները մոտենում են: Ահա, արդեն հարվածում են դռանն իրենց բուխ մուրթներով: Ի՞նչ են անելու: Դուռը ծանրորեն ճռռում է և խորտակվում, թշնամիներս ներխուժում են: Ես ավելի եմ կծկվում իմ անկյունում: Դուրս չեմ գալու: Սա իմ բնակարանն է վերջապես: «Սա իմ բնակարանն է», - գոռում եմ: Սենյակն աստիճանաբար լցվում է կապտագորշ, կծկծացնող ծխով: Սկսում եմ շնչահեղձ լինել: Պարզ է, իմ դեմ գործում են նապաստակին բնից հանող որսորդական փորձված միջոցով: «Նապաստակը» սկսում է խեղդվել և այլևս անկարող լինելով դիմանալ՝ պատուհանից դուրս է նետվում: Հրշեջ սանդուղքից կախ՝ նայում եմ ցած. փողոցները լեցուն են աղմկող մեքենաներով, փողոցներն իսկի չեն էլ երևում՝ հայացքիս ընդգրկած ամբողջ տարածությունը ծածկված է մեքենաներով: Ծխապատ երկնքում ոռնում են ուղղաթիռները, ինքնաթիռներն ու հրթիռները՝ արտահայտելով իրենց համերաշխությունը ցամաքային գործընկերների խռովության նկատմամբ: Մարդիկ չկան, մեքենաները ձգմել են նրանց և ընթանում են նրանց տափակած մարմինների վրայով: Ծառերը չորացել են, թռչուններ չկան, շներ և կատուներ՝ նույնպես: Ողջ մնացած միակ արարածը ես եմ՝ հրշեջ սանդուղքից կախ ընկած: Իջնելը մահ է, պատուհանով ետ գնալը՝ նույնպես: Սակայն երկար այսպես կախված մնալ անկարող եմ, ուժերս սպառվում են: Հարկավոր է շտապ ինչ-որ բան ձեռնարկել... Գուցե՞ վե՞ր, դեպի տանի՞ք... Գլուխս պտտվում է և ասես արձիճով լցված՝ քաշում վար, երկաթը բռնած մատներս սկսում են թուլանալ-բացվել...

Արթնանում եմ: Երազիս պատճառը, հավանաբար, խաչմերուկում իրենց անզուսպ ոռնոցներով օրվա սկիզբն ավետող մեքենաներն են՝ թշնամիներս: Արագորեն հագնվում եմ և գնում խոհանոց: Սակայն բակի կողմից էլ հռնդյուն է լսվում: Պատուհանից նայում եմ՝ ցածում, երկու տղամարդ թթածածկը բաց մեքենային հակված՝ ուշադիր լսում են շարժիչի ոռնոցը: Նրանցից մեկը դժգոհ տարուբերում է գլուխը. շարժիչի աշխատանքը նրան դուր չի գալիս, էլ ո՞նց կլիներ: Այս կողմից աղմուկ, այն կողմից աղմուկ... Ու՞ր փախչեմ: Նյարդայնությունս գալարում է աղիներս, գայրույթը բարձրանում-հասնում է կոկորդիս, լցվում գլուխս և ճնշում աչքերիս, ասես ձգտելով խռոչներից դուրս մղել նրանց: Հանկարծ, երբ ինքնատիրապետման վերջին ծվենն էլ

է տարրալուծվում երկկողմ աղմուկի մեջ, պոկվում եմ տեղից, բացում դուռն ու նետվում ցած: Շքամուտքում դեմս է ելնում մետաղյա ձողը. վերցնում եմ այն ու արշավում բակ՝ ուր ոռնում է թշնամիս: Գործողություններիս համար հաշիվ տալ այլևս անկարող եմ, ես հիմա մերկ, գրգռված նյարդերի կծիկ եմ, բորբոքված ուղեղ: Ոչ, ուղեղս ընդհանրապես անջատված է, և մկաններս անմիջականորեն ենթարկվում են նյարդերիս: Ըստ երևույթին՝ գարհուրելի տեսք ունեմ, որովհետև շարժիչի վրա հակվածներն ինձ տեսնելով՝ փախչում են: Հարձակվում եմ թշնամուս վրա և ձողով հարվածում, հարվածում... Ի՞նչ հաճույք է տեսնել ու լսել, թե ինչպես է փշրվում այդ դողդացող հրեշը, ինչպես է ձմրթվում ու պատռվում նրա մետաղյա փայլվուն մաշկը: Չորս կողմից գոռում են, վրաս քարեր են նետում, բայց ինձ ետ պահել անհնարին է: Վերջապես լռում է գազանը: Վերջ, սրա հետ հաշիվներս մաքրեցի, հիմա՝ փողոց...

Վրա եմ ընկնում խաչմերուկում կանգնած մոտակա մեքենային՝ վառ կարմիր հրեշ: Վարորդը դուրս է պրծնում և փախչում: Փխլվող ապակիներ, պատռվող թիթեղ... Ի՞նչ հաճելի է: Սակայն հրեշը համառորեն չի լռում: Նորից եմ թափ առնում՝ գլխավերևումս բարձրացնելով ձողը: Սակայն...

Կրծքիս մեջ հանկարծակի բռնկված սոսկալի ցավը թևաթափ է անում ինձ. ձողը սահում-ընկնում է թուլացող ձեռքիցս: Հայացքս սկսում է խավարել: Ստիպված՝ ծնկի եմ իջնում թշնամուս առջև: Նա լայիճորեն հռռում է՝ տեսնելով իմ պարտությունը:

Այլևս ոչինչ չեմ զգում, ոչինչ չեմ լսում... Երանելի լռություն...

ՄՂՁԱՎԱՆՋՆԵՐ

Ժիրայրը դժվարությամբ բացեց միմյանց կպած կոպերն ու նայեց շուրջը, որտեղ, կիսախավարի մեջ, դավադիր քչիչոցներով այս ու այն կողմ փախսան մղձավանջի վերջին ուրվականները: Քունքերում թմբկազարկերի պես արծազանքում էին ուժգին սրտխփոցները: Արթնացել էր... Թմրած ուղեղին ստիպեց մտածել: Մտքերը ծուլորեն սողոսկեցին և քիչ անց խառնիճադանջ խժժոցով լցրին գլուխը: Փորձեց որսալ նրանցից ամենակարևորին, սակայն նա ճարակորեն խույս տվեց՝ փախչելով գիտակցության հեռավոր անկյուն ու այնտեղից չարախնդաց: Խիստ լարվելով՝ վերջապես կենտրոնացավ, և քիչ առաջ խույս տված միտքն սկսեց արագորեն ծավալվել: Այդ մտքից տագնապելով՝ մի կերպ բարձրացրեց ծանրացած, բարձին ասես սոսնձված գլուխը: Վեր կացավ: Որոշ ժա-

մանակ անշարժ սպասեց, մինչև դադարի գլխապտույտը և մարիականջների խշշոցը: Ապա դողացող, չենթարկվող մատներով փորձեց պոկել քրտնած մարմնին փաթաթված-կպած սավանը, սակայն ապարդյուն: Իհարկե, համառելու դեպքում այնուամենայնիվ կհաջողեր ազատվել սավանից, սակայն հիմա դրա ժամանակը չկար՝ ահագնացող տագնապալի միտքը շտապեցնում էր: Եվ հենց այդպես՝ խոնավ սավանով պարուրված, բախվելով աթոռներին և էլի ինչ-որ իրերի, հասավ խոհանոց: Ծնկի իջավ զագօջախի մոտ և ուշադրություն չդարձնելով սարդոստայնների ձեռքից կառչող զգվելի ծվեններին՝ անհամբերությամբ տնտղեց փոշոտ արանքը զագօջախի և պատի միջև: «Կա», - ուրախացավ՝ դուրս հանելով գինու կիսատ պարունակությամբ շիշը: Չմաքրելով փոշին, ատամներով քաշեց խցանը, թքեց գետնին և շշի դողացող բերանն ամուր սեղմեց չորացած շրթունքներին: Խմում էր ազահորեն, մեծ կումերով, միևնույն ժամանակ, որքան էլ տարօրինակ էր՝ դեմքը զգվանքից ծամածռելով: Հետո ափսոսանքով շուռումուռ տվեց շիշը, վերջապես համոզեց իրեն, որ այն դատարկ է և նետեց սեղանի տակ: Նյարդերը բորբոքված ընդվզումով արծազանքեցին գիշերային լուռությունը խախտած զրնգոցին: Սկիզբ առավ մի անորոշ վախ, որը գնալով սաստկանում էր: Հանկարծ պատի տակով պստիկ, մութ բիծ փախավ, ապա էլի մեկը: Երկրորդի գլխին տոն ուռուցք կար, որը նրան ստիպում էր թեքված վազել: Արագորեն վեր ձգեց ձեռքը, պատի վրա գտավ կոճակը և սեղմեց... Առատ լույսը ողողեց խոհանոցը՝ վանելով տեսողական խաբկանքը: Սակայն տեսիլային մկների ճատճատոցը որոշ ժամանակ դեռ արծազանքում էր ականջներում:

Վերադարձավ սենյակ և պառկեց արդեն սառած, խոնավ անկողնում: Գինին տարածվել էր մարմնով՝ առաջացնելով հաճելի թմբիր: Մեղմացան նյարդերի լարվածությունն ու ձեռքերի դողը, որոշ չափով պարզվեց ուղեղում տիրող խառնաշփոթը: Լուսամուտի այն կողմում մութն արդեն ճերմակում էր: Լսվում էր հավաքարարի ցախավելի ռիթմիկ քստքստոցը: Այդ ծայնն ինչ-որ չափով փարատում էր միայնության մռայլությունը, որը, սովորաբար, իրեն առավել զգացնել էր տալիս գինարբուքների տանջալից գիշերներին: Նման գիշերներին ժիրայրը գտնում ու ամուր սեղմում էր կնոջ տաքուկ ձեռքը՝ հուսալով, թե դա կօգնի ազատվելու սոսկալի մղձավանջներից: Հիմա կինը չկար: Ե՞րբ հեռացավ... Մի քանի ամի՞ս, թե՞ տարի է անցել... Չկարողացավ հիշել: Փոխարենը հիշեց կնոջ արցունքոտ աչքերը, երեխայի վախեցած դեմքը... Հետո հիշողությունները դարձան կցկտուր, հայտնվեցին ուրիշ դեմքեր, առանձին դեպքերի ան-

կապ պատահիկներ, ապա դրանք էլ տարրալուծվեցին մոռացության մշուշում, և ժիրայրը քուն մտավ: Քանի դեռ գինին պահպանում էր իր ազդեցությունը, քունն անխռով էր: Սակայն խմած քանակը բավարար չէր այդ վիճակը երկար պահելու համար, և քիչ անց քունն աստիճանաբար սկսեց դառնալ մակերեսային, անհանգիստ:

Մղձավանջներն, ինչպես միշտ, սկսվեցին ոչինչ չսպառնացող, նույնիսկ հաճելի երազից: Երազի էկրանին դեղնականաչ, տաք, հալելային մակերեսով ծովն էր: Լողափի ավազներին պառկած էին անծանոթ, կիսամերկ, ժպտադեմ մարդիկ: Ցորնագույն մազերը հավաքած-կապած մի կին լողում էր ափի մոտ՝ գեղեցիկ թևերը փոխնիփոխ վեր հանելով ու դարձյալ սուզելով ջրի մեջ: Իսկ ջուրը մի տեսակ թանձր էր, համարյա մածուցիկ: Հանկարծ այդ խաղաղ պատկերի վրա հայտնվեց մի պստիկ, գորշավուն բծիկ, լողաց էկրանի երկայնքով և ծվարեց հեռավոր անկյունում: Ժիրայրն աշխատում էր չնայել բծիկի կողմը, անտարբեր լինել, սակայն վերջինս գայթակղում՝ ձգում էր նրա հայացքը, և ամեն անգամ բռնվելիս՝ ժիրայրին պատում էր տագնապ: Հանկարծ, ասես խաղից հոգնած, թրթռացող բծիկը պոկվեց տեղից և սկսեց ահագնանալ: Իր չարագուշակ գորշությամբ նա շուտով գրավեց երազի ամբողջ էկրանը: Չքացավ ծովը, փոխարենը հայտնվեց աղձատված, վերքապատ մի դեմք, ապա՝ էլի մեկը... Խոցոտված, չար, սարսափելի դեմքերն արագ-արագ փոխարինում էին միմյանց, նրանք հոխորտում էին, հայիոյում՝ դեղնավուն թուք ցայտեցնելով բերաններից: «Մոտ չգաք, հեռու», - ուզեց գոռալ ժիրայրը, բայց խցանված կոկորդից ձայն դուրս չէր գալիս: Հանկարծ ուժգին թնդյուն լսվեց, էկրանն անսպասելիորեն բռնկվեց և... ժիրայրն արթնացավ:

Բայց դա թվացյալ արթնացում էր, իրականում սկսվում էր մղձավանջի հաջորդ պատկերը: Կողքին պառկած էր կինը: Ամուր բռնեց կնոջ ձեռքն ու գլուխը դրեց վրան: Հարևան սենյակից հայիոյանք էր լսվում: «Ովքե՞ր են», - հարցրեց կնոջը: «Չգիտեմ», - պատասխանեց կինը տարօրինակ, փոխված ձայնով: «Դուք ո՞վ եք, այս ժամին ի՞նչ գործ ունեք իմ տանը», - գոռաց: «Շուտ պիտի սատկացրած լինեի՞նք, քանի քնած էր, հիմա ձեռնը կզցի գլուխը: Ափսոս: Ոչինչ, վաղը նորից կգանք», - խոսեցին հարևան սենյակում: «Ձեր ուզածն ի՞նչ է», - գոռաց ժիրայրը և...

Դարձյալ թվացող արթնացում: Կինը չքացել էր: Չքացել էր նաև բնակարանը: Ժիրայրը հայտնվել էր մի խուլ, մութ նրբանցքում: Տնե-րի ծուռ տանիքները նեղիկ նրբանցքի երկու կողմերից ասես դիպչում էին միմյանց՝ խիտ ստվերներ զցելով թաց սալահատակին: Շուրջը՝ աղբակույտերի վրա, ցեխաջրերի մեջ, պառկած էին մոր-

թոտված, արնաշաղախ, այլանդակված ինչ-որ գազաններ: Նրանք գալարվում էին հոգեվարքի մեջ, աղիողորմ ոռնում և դեպի ժիրայրը երկարում իրենց զարհուրելի ճիրանները: Նրանցից մեկը, որ մինչ այդ կենդանության նշաններ չէր ցուցաբերում, հանկարծ վեր թռավ, կաղալով ծայրատված թաթի վրա՝ մոտ վազեց ու դեղնած ժանիքները խրեց ժիրայրի ոտքի մեջ, ծնկից քիչ ներքև: Ժիրայրը թափ տվեց ոտքը, բայց գազանը պոկ չէր գալիս: Հետո տեղից ելավ ևս մի գազան՝ բրդազուրկ մաշկով, թարախային խոցերով, հետո՝ էլի մեկը...

Այս անգամ իսկապես արթնացավ: Տնտղեց ոտքը. ատամների հետքեր չկային, սակայն ոտքը ցավում էր ճիշտ այն տեղում, որտեղից քիչ առաջ կառչել էր մղձավանջի գազանը:

Խմելու բան այլևս չկար,- որտեղի՞ց,- այն կես շիշ գինին էլ աստված գիտի՝ երբ է պահել, պահել ու մոռացել: Իսկ այսօր հանկարծ հիշեց: Հիշողության հետ վաղուց արդեն տարօրինակ երևույթներ էին կատարվում՝ մերթ անհուսորեն մոռանում էր երեկվա կամ նույնիսկ այսօրվա դեպքերը, մերթ էլ հանկարծ հիշողությունն ինքնակամ վեր էր հանում հեռավոր, կորած-մոլորած դեպքեր, որոնք ոչ մի կապ չունեին սովյալ իրադրության հետ:

Թվում էր՝ զլուխն ուր որ է կայաթի: Ծանրացած, ուռած կոպերով աչքերի առջև գորշ, տձև բծեր էին լողում, որոնք յուրաքանչյուր պահին կարող էին միավորվել-վերածվել ահաբեկող տեսիլքի: Սենյակի մութ անկյունից փսփսոց էր լսվում:

Պատի ժամացույցը հինգն անց կեսն էր ցույց տալիս կամ դրան մոտ մի ժամ: Վեր կացավ անկողնուց, հագնվեց՝ մի կերպ հնազանդեցնելով դողացող ձեռքերը, մեքենայորեն ուղղեց իրականում արդեն գոյություն չունեցող ցցված մազափնջերը և քայլեց դեպի դուռը: Ընթացքում քրքրեց գրպանները և ի ուրախություն իրեն՝ մի ճմրթված թղթադրամ հայտնաբերեց: Դուրս եկավ փողոց և համաչափությունից զուրկ անվճռական քայլք նրան տարավ առավոտյան սովորական դարձած երթուղով՝ դեպի շուկա:

Թթվավաճառների տակառներից այն կողմ, քարե ցածրիկ կամարների տակ ծաղկում էր Շողոյի բիզնեսը. չնայած վաղ ժամին՝ այնտեղ արդեն մարդաշատ էր:

- Բարլուս, Ժիրո,- կանչեցին այս ու այն կողմից:
- Ի՞նչ բարլուս,- Սաքոյի ծայնն էր,- չէք տեսնու՞մ՝ աշխարհն աչքին մթնած ա:
- Հարուր,- դժվարությամբ արտաբերեց ժիրայրը:
- Չկա, վերջինն էր,- պատասխանեց Շողիկը, որ այդ պահին արկղի տակ էր խոթում դատարկված շիշը:

- Ուզում ես սիրտը կանգնի՞, Շողակաթ,- կշտամբեց Սաքոն:

Շողակաթը, որ ինքն էլ արդեն զգացել էր իր կատակի դաժանությունը, մթերապարկի միջից հանեց տնական դեղնավուն օղու հերթական շիշը, դուրս քաշեց թղթե խցանը, հարյուր գրամ կամ մոտավորապես այդքան օղի լցրեց հաստապատ բաժակի մեջ ու դրեց ժիրայրի առաջ: Ժիրայրը դողացող մատներով բռնեց բաժակը և ատամներին խփելով՝ խմեց: Հետո տհաճությամբ ծամածռելով դեմքը՝ վերցրեց շիշ կողքին դրված հացի չոր կտորը, մի քանի անգամ հոտ քաշեց ու դրեց տեղը. հացն այնպես թրխկաց, ասես աղյուս լիներ:

- Շողո, էս հացի կտորը հնգամյակը մեկ ես փոխու՞մ, թե ավելի ուշ:

Շողոն չպատասխանեց. զբաղված էր նորեկներին սպասարկելով:

- Շողո, քեզ հետ եմ:
- Քու հավեսը չունեմ, Ժիրո,- վերջապես արձագանքեց Շողոն:- Փողը տուր, չմոռանաս, դուք մոռացկոտ եք:
- Փո՞ղ... Փող չունեմ:
- Ի...- գարնացավ Շողիկը:
- Իսկականից չունե՞ս,- հարցրեց Սաքոն:
- Էնպես հարցրիր, կարծես հիմա իմ փոխարեն կվճարես,- ծիծաղեց ժիրայրը:- Ունեմ, հանաք արի:
- Ինչքա՞ն ունես:
- Քե՞զ ինչ: Հինգ:
- Մի էդքան էլ ես ունեմ:
- Պահի, գարեջուր կխմենք:- Ժիրայրը հանեց իր թղթադրամը, տվեց Շողիկին.- Լցրու, Շողակաթ, երկուսիս:

Շողիկը վերցրեց փողը, տնտղեց և պահեց բազմածալ շրջագեստի խորքերում:

Խորշի հեռավոր անկյունից լսվում էր Նապոյի խաչոտ ծայնը.

- Լսի, Ավո, քեզ մի հարց տամ: Մի նստելով... դե, ասենք, մի երկու ժամում, ինչքա՞ն արաղ կխմես:
- Նայած ուտելիքին:
- Քո ուզածը:
- Նայած շրջապատին:
- Էլի քո ուզածը:
- Դե...- ծամծմեց Ավոն:- Շիշ, շիշ ու կես:
- Ի: Այ տղա, ես էլ գիտեմ կարգին խմող ես,- հիասթափվեց Նապոն:- Էդքանը մեռակ դոշիս մազերին ա կաթում, երբ խմում եմ: Կամարի տակ հավաքված խումբը ծիծաղեց: Ժիրայրը նույնպես

ծիծաղում էր, թեև անուշադիր էր եղել Նապոյի կատակաբանության նկատմամբ: Հիվանդագին ծիծաղ էր, նույն հաջողությամբ կարող էր լաց լինել, եթե շուրջը լաց լինեին:

- Գնա՞նք,- վերջին բաժակը դատարկելով՝ Սաքոյին դիմեց նա:
- Գնանք: Բա գործի չե՞ս:
- Ես արդեն վաղուց գործի չեմ:
- Հա,- ցավակցող տնքաց Սաքոն:- Լավ գործ ու՞ր ա, չկա:

Հաջողություն մաղթելով մնացողներին՝ նրանք քայլեցին դեպի շուկայի ելքը: Ժիրայրի քայլվածքն արդեն քիչ թե շատ հաստատուն էր, օղին համարյա լիովին հանել էր ընկձվածությունը, և նա նույնիսկ լկտի, վավաշոտ հայացքներ էր նետում կողքով անցնող կանանց, որոնք, սակայն, արհամարհանքով էին պատասխանում դեռևս բավականին երիտասարդ, բայց արդեն ծերունու պես կծկված-հոգնած-ձմրթված ժիրայրի անլվա աչքերի խաղերին:

- Դեռ կփոշմանի,- արդեն ելքի մոտ կնոջը հիշեց ժիրայրը:
- Կփոշմանի, բա ո՞նց,- միացավ Սաքոն:- Չփոշմանի՝ կծեծենք:
- Ու՞մ,- զարմացավ ժիրայրը:
- Ում ուզես. մի շիշ արադ առ՝ ծեծեն:

Աշխատելով հեռու մնալ գործի շտապող մարդկանց հոսքից՝ նրանք պատերի տակով դանդաղ քայլում էին դեպի գարեջրատուն:

Ցերեկվա քնի մեջ մղձավանջներն այնքան սարսափելի չեն: Այդուհանդերձ, արթնանալուց հետո ժիրայրի սիրտն ահաբեկված բաբախում էր, իսկ աչքերի առջև լող էին տալիս խոշոր միջատներ հիշեցնող սև բծեր, որոնք գալարում էին իրենց մազմզոտ վերջավորություններն ու թարթում մութ աչքերը: «Հագնված քնելն իր առավելություններն ունի,- դառը քնծիծաղեց ժիրայրը:- Ծիշտ է, շորերս ձմրթվել են, բայց, փոխարենը, հագնվելու կարիք չկա: Եվ ու՞մ եմ պետք ես՝ ձմրթված կամ արդուկված»: Մոտեցավ հայելուն՝ մի կերպ հաղթահարելով նրա նկատմամբ ունեցած վախը, հայացքն աշխատեց բևեռել միայն ցավող տեղին, և այդ տեղում՝ կարմրածուռած աչքի տակ, մի մեծ կապտուկ հայտնաբերեց: Որտեղի՞ց... Հիշեց գարեջրատունը, ծանոթ-անծանոթ դեմքեր, մեծ գավաթներով գարեջուր... Ապխտած ծուկ հյուրասիրեցին, հետո ծանոթ մեկը օղի բերեց, հետո... Որքան լարեց միտքը՝ այլևս ոչինչ հիշել չկարողացավ, հիշողությունն անհուտրեն փլուզված էր: Հետաքրքիր էր՝ ինչպե՞ս է տուն հասել...

Բերանում գարշելի համ էր, ուռած մատները նորից դողում էին և դժվարությամբ էին ծալվում, թեև՝ դողում էր ամբողջ մարմինը, դա

մնան էր տենդի: Իսկ ներսում նույն տիպի, տնքացող դատարկությունն էր, որի մեջ միայնակ լողում էր թախիծը: Դողերոցքը սաստկանում էր, փրկվելու միակ միջոցը խմելն էր, սակայն... «Փող չունեմ»՝ սարսափեցնող այս միտքը շամփրեց ժիրայրին: Մի պահ տատանվելով՝ նա բացեց զգեստապահարանը, դուրս քաշեց դարակը և ձեռքը մտցրեց նրա հեռավոր անկյունը՝ շորերի կույտի տակ: Գտավ: «Հարկավոր է շտապել,- մտածեց՝ թելից կախ ոսկյա խաչը գրպանում պահելով,- խանութն ուր որ է կփակեն»:

Եվ իսկապես, երբ շնչահատ տեղ հասավ, խանութն արդեն պատրաստվում էին փակել:

Ծանոթ վաճառողը ծանրութեթև արեց խաչը և ասաց.

- Տասը:
- Գունե տասնհինգ,- սակարկեց ժիրայրը:
- Քաշ չունի, ժիրո,- վաճառողը դարձյալ տնտղեց խաչը, թեև երկուսով էլ արդեն գիտակցում էին, որ գործարքն ավարտված է:- Որ ուզում ե իմանալ, էս խաչն ինձ իսկի պետք էլ չի, քո խաթեր եմ վերցնում:
- Լավ, տուր,- հանձնվեց ժիրայրը:

Փողը գրպանում սեղմած՝ նա քայլում էր դեպի սրճարան: Շտապում էր: Վերջապես իրեց ծանր դուռն ու մտավ ծխալեցուն սրահը: Սրճեփի ետևից հայտնվեց բարմենը, հարցական նայեց, սակայն ժիրայրին տեսնելով՝ հարցականն անմիջապես վերացրեց դեմքից և ձեռքն առավ օղու շիշը: Ժիրայրը խմեց հիսուն գրամը, շունչ առավ ու խնդրեց կրկնել:

- Միանգամից հարյուր ուզեիր, էլի,- տրտնջաց բարմենը՝ նորից լցնելով բաժակը:

Ժիրայրը դա էլ խմեց ու նոր միայն բերանը տարավ անլվա մատներով բռնած պանրակտորը:

- Մերոնցից մարդ չի երևացե՞լ, Հրա՛չ,- հարցրեց՝ դժվարությամբ կուլ տալով ծամած պանիրը:

- Հրեն, թերթ է կարդում,- ցուցանեց բարմենը:- Չերոնցից չի՞:

Ժիրայրը մոտեցավ ընկերոջը, քաշեց աթոռն ու նստեց:

- Հետաքրքիր է,- հարցրեց:

- Չգիտեմ,- պատասխանեց Մելքոնը՝ հայացքը լրագրից չկտրելով:- Մի ժամ է կարդում եմ, բայց ոչինչ չեմ հասկանում, տառերը մրջյունների պես փախչում են: Ու ոչ ոք չի ասում՝ մարդը տանջվում է, արի մի հիսուն հյուրասիրեմ:

- Է, դու էլ մի կողմ գցի թերթը, ի՞նչ ես կպել:

- Չի լինի: Թերթը սուլիդ տեսք է հաղորդում: Հիշիր, գինեմուղ միշտ պետք է սափրված լինի ու թևի տակ թարմ թերթ ունենա:

Սրճարան մտավ մի մարդ, որին տեսնելով՝ Մելքոնի դեմքը պայծառացավ:

- Այն փողկապավորին տեսնու՞մ ես,- հրեց նա ժիրոյի ուսը:
- Հետո ի՞նչ:

- Ինստիտուտում ենք սովորել, ճիշտ է՝ նա մի կուրս բարձր էր, բայց նշանակություն չունի: Ամոթ ինձ, թե փող չպուկեմ: Վաղեմի ծանոթների ջերմ հանդիպում, սենտիմենտալ ուսանողական հիշողություններ...

- Փորձիր:
- Կռահում եմ, թե ինչու չես խանդավառվում, փող ունես: Սակայն հավելյալ փողը դեռ ոչ ոքի չի դժբախտացրել: Միայն թե անունը չեն կարողանում հիշել... Բայց ոչինչ, գնացի...

Ժիրայրն անկիրք հայացքով հետևում էր ընկերոջ գործողություններին: Մելքոնը բռնել էր փողկապավոր մարդու թևը և ինչ-որ բան էր ասում: Անանկալի եկած մարդը չէր հիշում Մելքոնին: Բայց Մելքոնը համբերատար սպասում էր՝ աներեր պահելով ժպիտը: Վերջապես ողջագուրվեցին, թեև Մելքոնի ուսի վրայով երևացող փողկապավոր մարդու դեմքը տհաճություն էր արտահայտում:

- Այս էլ այսպես,- ասաց Մելքոնը՝ տեղը նստելով:- Պարտք է, մի օր կտամ, էլի:
- Կտաս, բա ոնց,- ծիծաղեց ժիրայրը:- Բա ու՞ր փախավ:
- Ասաց՝ այստեղ իմ ուզածը չկա ու փախավ, և լավ արեց, պարտապանի հետ նույն տարածքում գտնվելն անտանելի է:
- Դե ինչ, խմե՞նք:
- Ուրիշ էլ ի՞նչ:

Միայնակ կանգնած էր մետրոյի թունելում: Հեռվից երևաց գնացքի կուրացնող լույսը: Սակայն մի ուրիշ գնացք էլ հակառակ կողմից հայտնվեց: Ժիրայրն ընկրկեց հենց այն պահին, երբ գնացքները սաստիկ դղրդյունով բախվեցին միմյանց: Վագոնների ջարդված պատուհաններից մարդիկ պարզում էին արնաշաղախ ձեռքերը և օգնություն աղերսում: Լսվում էին աղեկտուր գոռում-գոչյուններ: Փակ դռների արանքներից արյուն էր ծորում: «Դուրս քաշիր ինձ, խնդրում եմ», - կանչեց մի աղջիկ՝ ձեռքերը ժիրայրին ձգելով: Ժիրայրը բռնեց ու դուրս քաշեց նրան: Տարօրինակ էր, աղջիկը կատարելապես մերկ էր, և մարմնի վրա իսկի քերծվածք էլ չկար: Ժիրայրը գրկեց նրան ու տարավ դեպի ելքը: Դեմքին էր խփում աղջկա ընդհատ շնչառությունը: Կիսախուփ կապույտ աչքեր, կիսաբաց հյութեղ բերան, երկար շագանակագույն մազեր... Ժիրայրը հանկարծ զարմանքով հայտնաբերեց, որ ինքն էլ մերկ է: Մերկ

մարմինների տաք հպում, երկիմաստ հայացք... Սակայն ինչու՞ է մազակալում աղջկա մարմինը... Հաստ բեղ, կոպիտ մկաններ... Սա արդեն աղջիկ չէր, տղամարդ էր: Ժիրայրը փորձեց գրկից գցել խտացող մազածածկույթով այդ մարմինը, բայց նա ամուր կառչել էր իր պարանոցից: Աչքերը նույն երկիմաստությունն էին արտահայտում: Հիմա նա արդեն մարդ էլ չէր, մարդանման կապիկ էր կամ կապկակերպ ինչ-որ զագան, որն իր բրդոտ թաթերով սեղմում էր ժիրայրի պարանոցը և հռչում: «Ավելորդ աղմուկ մի բարձրացրու: Մեզնից բացի էստեղ ոչ ոք չկա, մի կոտորտվի...»:

Կատաղի արագությամբ սլացող ինքնաթիռի սրահում կիսամութ էր: Ուղևորները, չգիտես ինչու, հավաքվել էին ժիրայրի շուրջը և վախեցած նայում էին նրան: Ինքը՝ ժիրայրը, ամուր կապկակված էր բազկաթռոչին: Հանկարծ նկատեց, որ ինքնաթիռը սլանում է ուղիղ դեպի հանդիպակաց ժայռը: Ուզեց գոռալ, զգուշացնել, սակայն... Պարզվեց՝ սրահը դատարկ է, մարդիկ չքվել են: Ոչ մի կերպ չէր հաջողվում ազատվել կապանքներից: Իսկ վիթխարի ժայռը արագությամբ առաջ էր գալիս: Խլացուցիչ պայթյուն, կուրացնող լույս և...

Անհայտացան ինքնաթիռն ու ժայռը, ժիրայրը հայտնվեց կիսախավար մի անձավում: Նրան, ձեռքից բռնած, առաջ էր տանում ալեգարդ ծերունին: Գետինը թաց էր, լպրծում: Ժիրայրն անդադար սայթաքում էր, բայց ծերունին ժամանակ չէր տալիս ոտքի կանգնելու՝ քարշ էր տալիս նրան մամռապատ քարերի վրայով, և այնպես հեշտորեն, ասես ժիրայրն անկշիռ էր: Ընկնող կաթիլների ձայների միջով լսվում էր ինչ-որ մեկի թույլ ոտնածայնը: Շուտով երևաց ոտնածայների տերը՝ դպրոցական պայուսակը ձեռքին, կարճ տաբատով մի տղա: «Ահա, բերեցի», - զեկուցեց ծերունին, բաց թողեց ժիրայրի ձեռքն ու անհետացավ: Ժիրայրն ուշադիր նայեց և հանկարծ ճանաչեց իր պայուսակը, ապա հայացքը դարձրեց տղայի դեմքին և ապչեց՝ ինքն էր՝ պստիկ ժիրիկը, որ կշտամբանքով նայում էր իրեն՝ ժիրայրին: Ուզեց փախչել այդ սարսեղենող հայացքից, սակայն ոտքերը չենթարկվեցին: Տղայի դեմքն այլալվեց, խստացավ, շրթունքները սեղմվեցին միմյանց, նա մի կողմ նետեց պայուսակը և ժիրայրի սարսափած հայացքի առջև՝ հանկարծ սկսեց արագորեն մեծանալ. հագուստը ճղրտվեց, դեմքը մազակալեց ու կնճռապատվեց, աչքերն արյունակալեցին... Ժիրայրի առաջ արդեն կանգնած էր անորոշ սեռի, հիվանդոտ մի պառավ, որ նույնպես ինքն էր: Պառավը մի ձեռքով ամուր բռնեց նրա թևը, մյուս ձեռքը տարավ սեփական գոտկատեղին, ուր, ցնցոտիների տակից, մետաղային փայլ երևաց: «Թո՛ղ, ես մեղք չունեմ», - խնդրեց ժիրայրը: «Հանգիստ, չթալրտաս», - փտած ատամների արանքներից թուրք

ցայտեցնելով՝ սաստեց պառավը, և ժիրայրի գլխավերևում փայլատակեց կացինը: Ժիրայրը թափով ձիգ տվեց թևը և շապկի ծվենը պառավի ձեռքում թողած՝ մի կողմ թռավ, բայց կորցրեց հավասարակշռությունն ու տապալվեց սառը ջրափոսի մեջ:

Արթնացավ: Ջգացողությունն ավելի սուսկալի էր, քան նախորդ առավոտյան: Ծանր հեղքը ոչ մի կերպ չէր հանդարտվում, գլուխն ասես պոմպով ձիգ փչված լիներ՝ այնքան ձիգ, որ աչքերն ուզում էին ակնախորշերից դուրս պրծնել, տագնապալի դողերոցքը սաստկանում էր: Սարսափով հիշեց, որ գիշերային գինարբուքից հետո դարձյալ մոռացել է խմելու բան բերել տուն: Այնուհանդերձ, փնտրեց՝ նախ գազօջախի ետևում, ապա ամենուր, շուռումուռ տվեց նաև պահարանում եղած օժանելիքների շշերը, որոնք, ավաղ, դատարկ էին: Շուկա գնալու համար վաղ էր: Մնում էր միակ միջոցը՝ մեծ հանրախանութի պահակը, ումից գիշերվա ուզած ժամին կարելի էր խմիչք ձեռք բերել:

Գրպանում փող չկար. մի՞թե ամբողջը ծախսել է... Գուցե կորցրել է... Կամ հանել են գրպանից... Ինչ որ է, հիմա պետք է հասնել պահակ Բենոյի մոտ, այնտեղ մի բան կմտածի, պարտքով կվերցնի:

Հագուստը կպել էր վաղուց ի վեր լոգանք չտեսած մարմնին, տաբատն ազդրերի միջև խոնավացած էր, համարյա՝ թաց, և միամտություն կլիներ դա բացատրել առատ քրտնաթորությամբ միայն, սակայն ժիրայրին հաջողվեց միամտեցնել իրեն:

Դրսում ցուրտ էր, ձեռքերը մտցրեց գրպանները, բայցև անմիջապես հանեց, որովհետև այդ կերպ դժվարացավ հավասարակշռել օրորվող, թույլ մարմինը: Մայթեզրի ծառերի վիթխարի, մութ ստվերները վախեցնում էին, ժիրայրը քայլում էր նրանցից հեռու՝ համարյա քսվելով պատերին: Արդեն խանութի մոտ նրան հանկարծ թվաց, թե հաստաբուն ծառի ետևից մետաղային փայլ տեսավ, հետո՝ չարագուշակ ինչ-որ քչփչոց լսեց: Ժիրայրը ցնցվեց և արագացրեց քայլերը: Սակայն մղձավանջի ցնցոտիավոր պառավը ետ չէր մնում, համառորեն գալիս էր՝ մի ծառից մյուսի ետևում թաքնվելով և թուևոտ չարախնդալով:

Պահակը նստած էր խանութի դռներից ոչ հեռու, պաղպաղակի կրպակի մոտ, դատարկ արկղերի վրա:

- Ժիրո՞,- ճանաչեց նա:
- Ես եմ: Խմելու բան տուր, Բենո,- հեռապառ սասց ժիրայրը՝ անդադար ետ նայելով: - Շուտ արա:
- Չունեմ, ժիրո ջան, վերջի շիշը հենց նոր տարան: Մի քիչ շուտ գայիր, էլի, այ տղա:

- Կատակի ժամանակ չի, Բենո:
- Կատակ չեմ անում, իսկականից չունեմ:
- Բեզ համար էլ չունե՞ս պահած, գոնե մի հարուր...
- Ես չեմ խմում, լյարդս հիվանդ ա, մոռացել ե՞ս: - Բենիկն ուշադիր նայում էր ժիրոյի դեմքին: - Ես ի՞նչ օրի ես, այ տղա,- սասց,- հայլիի մեջ քեզ տեսել ե՞ս... Մի խմի էդ անտերը, էլի:
- Քարոզ մի կարդա, խմելու բան տուր:
- Ախր որտեղի՞ց, հո խանութի դուռը չե՞մ ջարդելու:
- Ժիրայրը հանկարծ կտրուկ շրջվեց, նայեց պաղպաղակի կրպակի կողմն ու վախեցած ընկրկեց:
- Կրպակի ետևը մտավ,- այլայլված՝ սասց:
- Ո՞վ:
- Բռնի դրան, Բենո:
- Ո՞ւմ...
- Մտավ կրպակի ետևը, բռնի դրան:
- Բեզ ի՞նչ եղավ, այ տղա:
- Պահի դրան, պինդ պահի, չթողես, Բենո,- խնդրեց ժիրայրը՝ շարունակելով ետ-ետ գնալ, հետո սայթաքեց ու ընկավ: - Չթողես, Բենո:
- Մինչ տարակուսած Բենիկը համենայնդեպս տնտղում էր կրպակի ետևամասը, ժիրայրը ոտքի կանգնեց ու փախավ:
- Սպասի, ժիրո, ախր էստեղ ոչ ոք չկա,- կանչեց պահակը:
- Բայց ժիրայրը շարունակում էր փախչել: Շուտով նրա երեքուն ուրվապատկերը տարրալուծվեց մթան մեջ:

ՃԵՊԸՆԹԱՅԸ ԽԱՎԱՐԻ ՄԵՋ

Ճեղքից փչող օդի շիթը ցրում էր ալեխառն մազերը, հեռուն հառած փնտրող աչքերը բորբոքված էին, արնակոխ, նիհար, ցայտուն ոսկրագծերով ու բարձր ճակատով դեմքը՝ լարված և այնքան գունատ, որ թափանցիկի տպավորություն էր ստեղծում:

- Ես ճեղքի մոտից երբևէ հեռանում ես,- հեզնեց գվարթ դեմքով մարդը, ով հենց նոր զուգարանից դուրս եկել՝ ձեռքերն էր թաշկինակով չորացնում:
- Կանգնած եմ, էլի,- խուսափուկ պատասխանեց գունատ դեմքով մարդը:

Վագոնի վերջում, զուգարանային խցիկին կից պատի վրայի ճեղքը հայտնաբերելուց հետո, նա, թվում է, էլ դուրս չէր գալիս այդ անկյունից, ասես ճեղքից նայելը նրա միակ հետաքրքրությունն ու

նպատակն էին:

- Ուրեմն՝ ասում ես մութ է, էլի,- շարունակեց հեզնել Ջվարթադեմը՝ աչքով անելով ճաղատ մարդուն, որ հենց նոր մոտեցել էր:

- Մութ է,- կիսաձայն, բայց վստահ կրկնեց Գունատը:

Ի տարբերություն գնացքի մնացյալ ուղևորների, ովքեր դուրսը տեսնում էին մեծ լուսամուտների ապակիների միջով, ձեռքը հայտնաբերած Գունատն այն կարծիքին էր, թե դրսում անթափանց խավար է և սոսկալի ցուրտ: Թեպետ ձեռքից դուրս նայել ոչ ոք չէր ցանկանում, սակայն բոլորն իրենց պարտքն էին համարում ծաղրել նրան՝ վկայակոչելով սուրացող գնացքի լուսամուտների առջևով փախչող հրաշալի տեսարանները՝ արևի լույսով ողողված հովիտները, ծաղկաշատ դաշտերը, կապույտ սարերը... Գունատը չէր համառում, չէր համոզում՝ համարելով, որ յուրաքանչյուրն իրավունք ունի նայելու իր դիտանկյունից և տեսնելու այն, ինչ իրեն է երևում, սակայն չպետք է պնդի, թե հենց իր տեսածն է իսկականը:

- Լսի՛ր, թքի՛ այդ ձեռքի վրա, գնանք մեզ հետ: Ճաշի ժամ է,- ձեռք չէր քաշում Ջվարթադեմը:

- Այո, իսկապես որ,- մղկտալով միացավ Ճաղատը:- Ախր, մեղք եք, սիրելիս, ձեզ նայելիս սիրտս կտոր-կտոր է լինում...- Նա դարձավ Ջվարթադեմին.- Ինձ թվում է, թե այս խեղճը ոչ ուտում է, ոչ խմում:

- Ուտում եմ՝ երբ պետք է: Առանց ինձ ճաշեք, շնորհակալ եմ,- սասց Գունատը:

- Ահ, նա անուղղելի է,- ձեռքը թափ տվեց Ջվարթադեմը:

- Այո, բայց մեղք է, իրոք որ... Հարկավոր է օգնել, ինչոր կերպ համոզել, ստիպել վերջապես:

Նրանց մոտեցավ հարբեցողը՝ աչքերն ուռած, դեմքը հողագույն. ըստ երևույթին՝ նոր էր արթնացել: Նա բարեկամաբար հրեց Ճաղատի ուսը, աչքով արեց Ջվարթադեմին, խեթեց Գունատին ու հարցրեց.

- Խմելու բան չունե՞ք, բարեկամներս:

- Հարգելիս, ախր մեղք եք, այդ անիծյալ խմիչքը կործանում է ձեզ, իրոք որ, ձեզ նայելիս սիրտս կտոր-կտոր է լինում:

- Գլուխ մի տար, ավելի լավ է ասա՝ խմելու բան ունե՞ս:

- Այդպես չի կարելի ախր, հարգելիս...

- Կարճ,- գայրացավ Հարբեցողը,- խմելու բան ունե՞ս:

- Չունեմ,- կտրուկ խեղճացավ Ճաղատը, ապա դարձավ Ջվարթադեմին.- Գուցե դու՞ ք...

- Կա, անշուշտ,- լայն ժպտաց Ջվարթադեմը:

- Բայց իսկապես որ, կործանվում է մարդը...

- Վերջ տուր նվնվոցիդ, թող խմի, ի՞նչ է եղել, լավ գինին դեռ ոչ ոքի չի վնասել:

- Ապրես,- ոգևորվեց Հարբեցողը և ճաքճքած բերանով համբուրեց Ջվարթադեմին: Փոքր-ինչ մտմտալով՝ համբուրեց նաև Ճաղատին:- Դեհ, գնացինք, եղբայրներ, ի զե՛ն:

Վագոնի միջանցքով նրանք քայլեցին դեպի Ջվարթադեմի խցիկը. միջանցքը նեղ էր կողք-կողքի քայլելու համար, և Ճաղատը, ստիպված, մեկ քայլ ետ ընկավ:

- Ամեն ինչ հոյակապ է,- ցնծում էր Ջվարթադեմը:- Կյանքն ուրախ է ու պայծառ: Առաջ, եղբայրներ, առանց տարակուսանքի:

- Այո, այո,- ծղրտում էր Ճաղատը:- Բայց այն խեղճը սովամահ կլինի, իրոք որ:

- Թքա՛ծ: Գինի տվեք ինձ, ու՞ր է գինին:

Նրանք շրջանցեցին միջանցքի կենտրոնում ճառասացի շուրջ խմբվածներին և մտան խցիկ:

Այդ ընթացքում Գունատին էր մոտեցել խաղացողը:

- Ու՞ր գնացին,- հարցրեց՝ խաղաթղթերը ճարակորեն պտտելով:

- Ոնց որ թե խմելու,- պատասխանեց Գունատը՝ հայացքը ձեռքից դուրս հառած:

- Խմելու՞: Հետաքրքիր միջոցառում է: Թուղթ չխաղա՞նք:

- Ոչ:

- Գուցե նարդի՞:

- Խաղերի սիրահար չեմ:

- Ի՞նչ եք ասում: Իսկ ինչի՞ սիրահար եք, ձեռքից դուրս նայելու՞,- ծաղրեց Խաղացողն ու գնաց: Խմբի կողքով անցնելիս, իբր պատահաբար, հրեց ճառասացին: Վերջինս ստիպված եղավ ընդհատել կրակոտ ճառը, որպեսզի բարձրացնի ձեռքից ընկած թուղթը:

- Առանց հուշաթղթի չես կարո՞ղ ճառել,- հեզնեց Խաղացողը:- Անգիր սովորիր, անգիր:

- Եղբայրներ,- վրդովվեց ճառասացը՝ դիմելով հավաքվածներին,- թղթի վրա միայն վիճակագրական տվյալներ են, ես հո մեքենա չե՞մ, որ ամեն բան հիշեմ: Ուշադրություն մի դարձրեք այս սուբյեկտի վրա, եղբայրներ, ճանաչում ենք սրանց: Քշել պրովոկատորին...

- Հեռացի՛ր, թե չէ՛ ծեծ կուտես,- լսվեց այս ու այն կողմից:

Ջգալով, որ իրավիճակը սրվում է ոչ իր օգտին, Խաղացողը խոհեմորեն հեռացավ:

- Տեսա՞ք,- գոռում էր ճառասացը:- Տեսա՞ք, ինչ կեղտոտ, ստոր միջոցների են դիմում: Ոչ, այսպես շարունակվել չի կարող, մենք թույլ չենք տա այլևս: Կամ ազատություն կամ մահ, այլ ուղի չկա

այլևս: Ժողովրդավարություն, եղբայրներ, սա է միակ ուղին այլևս: Միայն ժողովրդի ընտրյալները պիտի առաջ տանեն ժողովրդին, հավասարը՝ հավասարին:

- Բայց հենց դարձան կառավարող, կմոռանան հավասարությունը,- լսվեց կասկածոտ մի ձայն:

- Թույլ չենք տա, ետ կկանչենք և նորերին կընտրենք,- պատասխանեց ճառասացը:- Ուստի վանկարկենք, եղբայրներ, հա-վա-սարություն...

- Հա-վա-սարություն...- ոգևորված կանչեց խումբը՝ վեր պարզելով բռունցքները:

Ճառասացը հուզվեց, ձեռքը խոթեց գրպանը, հանեց թաշկինակը և սկսեց չորացնել քրտնած դեմքը, հետո հանկարծ հիշեց և տագնապած՝ ձեռքը նորից գրպանը խոթեց:

- Դրամապանակս,- աղեկտուր գոռաց նա,- եղբայրներ, ու՞ր է դրամապանակս:

- Հա-վա-սարություն,- շարունակում էին գոռալ «եղբայրները»:

- Մի բոպե, սպասեք, դրամապանակս է չքացել...

- Հա-վա-սարություն...

- Մինչև դրամապանակս չվերադարձնեք, ոչ մի հավասարություն, թե չէ ի՞նչ է ստացվում, ես ճառ ասեմ, իսկ դուք այդ ընթացքում դրամապանակս... Այսինքն՝ ես չեմ պնդում, թե հատկապես դուք եք... Սակայն փաստը մնում է փաստ...

Խմբից անջատվեց մոտ ժամապահը մինչև աչքերն իջեցրած մեկը և մոտեցավ ճառասացին:

- Մինչև գտնեք ձեր դրամապանակը, ես կխոսեմ,- առաջարկեց նա՝ հուզված շփելով ձեռքերը: Ամեն ինչից երևում էր, որ առաջին անգամ է իրեն փորձելու այդ ասպարեզում:

- Մի բոպե, մի բոպե,- բողոքեց ճառասացը:- Միասին փնտրենք:

- Թող խոսի մարդը,- լսվեց խմբի միջից:- Նոր ինքդ էիր հավասարություն քարոզում:

- Ամեն ցանկացող որ խոսի՝ շունը տիրոջը չի ճանաչի,- գոռացին ուրիշները:

- Հավասարությունն էլ ու՞ր մնաց...

Ամեն պահ ծեծկռտուքի փոխվելու պատրաստ իրարանցում սկսվեց: Ճառասացը փորձում էր հանգստացնել բորբոքված մարդկանց: «Նաղաղվեք, եղբայրներ,- գոռում էր նա:- Համոզված եմ, դրամապանակը դիտմամբ գողացան, որ պառակտում զցեն մեր մեջ, դա սադրանք էր, մատնիչի ձեռքն էր, հանգստացե՛ք...»:

Միջանցքում հայտնվեց հրաշեկ մագերով կինը, նրան ուղեկցում էր խնամքով ածիլված, անթերի հագնված, սրածայր բեղիկով մի

տղամարդ:

- Ճանապարհ տվեք,- բեղը սղալելով՝ դիմեց նա:

Հավաքվածները մեկեն լռեցին ու մի կողմ քաշվեցին՝ ճանապարհ բացելով Հրաշեկ կնոջ համար:

- Այ սա կին է...- լսվեց հմայված մի ձայն:

- Հա-վա-սարություն,- ծվծվաց մեկ ուրիշը:

- Սսկվիր,- սաստեց առաջինը:- Ինչպիսի՞ ոտքեր են, աստված իմ, ինչպիսի՞ ոտքեր:

- Գիտնականի կինը չէ՞:

- Այո: Բայց գիտնականը կնոջով զբաղվելու ժամանակ չունի:

Խումբը հռչաց՝ վերջապես դուրս գալով քարացումից: Ճառասացը որսաց հարմար պահը.

- Այո, եղբայրներ, հրաշալի կին է: Սակայն չշեղվենք, չմոռանանք, որ մեզ վեհ նպատակներ են հետապնդում այլևս...- Ինչու՞ ասացի «հետապնդում», երևի ավելի ճիշտ կլիներ ասել՝ սպասում, մտածեց նա և որպեսզի ժամանակ շահի առավել լավ ձևակերպումի համար՝ նետեց խմբին.- Հա-վա-սարություն...

- Հա-վա-սարություն,- չհապաղեց հետևել խումբը:

- Մեր առջև վեհ նպատակ է փարոսում այլևս,- նոր շնչով վերսկսեց ճառասացը, սակայն ձայնը լսելի չեղավ, խումբը ոգևորված շարունակում էր վանկարկել:

Վագոնի հեռավոր անկյունում, ընդարձակ թիկնոցով փաթաթված-քնած մարդն արթնացավ, խոժոռ նայեց աղմկող խմբին, ապա՝ ձեռքի ժամացույցին, ու դարձյալ ընկղմվեց քնի մեջ: Ճառասացի հայացքից չվրիպեց Թիկնոցավորի այդ շարժումը:

- Եղբայրներ,- գոռաց նա՝ մատը տնկելով քնած մարդու կողմը, դուք չգիտեմ ինչպես, բայց ինձ այս մարդը կասկածելի է թվում:

- Մարդ ա՛ք քնել ա, էլի, կասկածելի ի՞նչ կա:

- Բանն էլ հենց դա է: Քնել է: Միշտ քնած լինել անկարելի է: Ձեզ չի՞ թվում, որ նա պարզապես ձևացնում է, իրականում ականջ է դնում, շատ հավանական է նաև, որ ձայնագրում է: Այո, համոզված եմ՝ նրա թիկնոցի տակ ձայնագրող սարք կա պահած:- Ճառասացը բարձրացրեց ձայնը՝ ձեռքը կաշեպատ դռնով խցիկի կողմ պարզած.- Բայց թող ձայնագրի, ավելի լավ, մենք թաքցնելու բան չունենք: Թող նրա տերերը լսեն մեր խոսքը՝ ժողովրդի խոսքը, ճշմարտության խոսքը:

- Թող լսեն:

- Մենք թաքցնելու ոչինչ չունենք:

- Չունենք...

Միջանցք ելավ Գիտնականը՝ ճմրթված հագուստով, խառնված մազերով, բայց՝ երջանիկ: Նա նայեց չորսբոլորը, մատներով ուղղեց թեքված ակնոցը, բազմանշանակ ժպտաց և մտավ պատահած առաջին իսկ խցիկը, որտեղ՝ փայտյա չոր նստարաններին, դեմ հանդիման նստած էին անկիրք դեմքերով երկուսը:

- Թույլ կտա՞ք,- հարցրեց Գիտնականը և պատասխանի չսպասելով՝ նստեց: Ապա, առանց նախաբանի, գրպանից հանեց մետաղյա փոքրիկ, փայլփլուն մի իր և հանդիսավորությամբ դրեց սեղանին:- Ահա,- հպարտորեն ասաց և գորովանքով շոյեց սեղանի գորշ հարթության վրա շողշողացող սարքը. այդպես երևի նայում է մայրը իր նորածին մանկիկին:

Անկիրք դեմքերով տղամարդիկ թոթվեցին իրենց ուսերը:

- Սա անսպառ էներգիա տվող սարք է, պարզապես հրաշք է,- ոգևորված խոսեց Գիտնականը:- Քանի գոյություն ունի արեգակը, այս սարքը մեզ էներգիա կտա: Որքան ցանկանանք: Էներգիայի քանակը կախված կլինի սարքի չափերից: Հրաշք է, չէ՞:

Սակայն ներկաները կատարելապես անտարբեր էին թե՛ Գիտնականի, թե՛ նրա սարքի նկատմամբ:

- Երևի չեք հավատում,- համառեց Գիտնականը:- Հիմա բացատրեմ, պոպուլյար ձևով: Ուրեմն՝ սա մի բացառիկ մարտկոց է, որ իր մեջ հավաքում և փոխակերպում է արեգակի էներգիան: Արդեն փորձարկել եմ, հիանալի է աշխատում, անխափան, անթերի...

- Էհ, էս տարի ամբողջ բերքս փչացավ,- հանկարծ խոսեց անկիրքներից մեկը:- Մի կաթիլ անծրև չեկավ, լսվա՞ծ բան էր:

- Այո, անհաջող տարի է,- հոգոց հանեց մյուսը:- Գործարանի տանիքը փլվեց, չենք աշխատում, տանիքն ենք վերականգնում...

- Շուտով այս սարքի շնորհիվ շատ խնդիրներ կկարգավորենք, նույնիսկ տեղումների խնդիրը. պատկերացնո՞ւմ եք, կունենանք այնքան անծրև, որքան պատվիրենք: Կատակ չեմ անում,- միջամտեց Գիտնականը՝ քնքշորեն շոյելով իր սարքը:

- Իսկ երկրաշարժերի, ցունամիների, ջրհեղեղների դեմն առնել կկարողանա՞ք ձեր այդ սարքով,- հեզնեց դռների մեջ հայտնված Խաղացողը:- Գուցե կկարողանաք այնպես անել, որ մեր կանայք չդավաճանե՞ն մեզ:- Նա ներս մտավ, նստեց և հանեց խաղաթղթերը:- Ոչ, հարգելիս, ձեր այդ սարքը հեռու է կատարելությունից, այնպես որ, ավելի լավ է թուղթ խաղանք:

- Դուք հավանաբար չհասկացաք...- փորձեց ճշտել Գիտնականը:

- Շատ լավ էլ հասկացանք. վերցրեք ձեր սարքը, մի խանգարեք, տեղ բացեք թղթախաղի համար:

- Ես չեմ խաղում,- վիրավորված նետեց Գիտնականը և դուրս եկավ:

- Սկսե՞նք,- անկիրքներին դիմեց Խաղացողը:- Ժամանակն ինչ-որ կերպ սպանել պետք է, չէ՞:

- Փողո՞վ,- զգուշավոր հարցրեց նա, ով դժգոհում էր անծրևի պակասից:

- Դու՛ ասացիր: Բայց քիչ, սիմվոլիկ, միայն՝ որպեսզի խաղը հետաքրքիր լինի:

- Քիչ՝ կարելի է:

- Այո, քիչ՝ կարելի է: Բաժանեք:

Խաղը սկսվեց: Խաղացողը վրա-վրա պարտվում էր՝ գերագույն հրճվանք պատճառելով հակառակորդներին: Բանն այնտեղ հասավ, որ նրանք առաջարկեցին բարձրացնել խաղագումարը, չկասկածելով, որ հենց դրան է տանում Խաղացողը իր կեղծ պարտություններով:

Իսկ Գիտնականն արդեն հարևան խցիկում էր ցուցադրում իր հրաշք սարքը՝ գինու շուրջ հավաքվածներին: Ջվարթադեմը, ում դեմքը խմած գինուց առավել էր գվարթացել, ոգեշնչված գոռում էր.

- Բռավո՛, Գիտնական, բռավո՛: Առա՛ջ և առանց տարակուսանքի:

Ինչպիսի՜ հորիզոններ են բացվում մարդկության առջև... Պատկերացնո՞ւմ եք, բարեկամներս: Աստված իմ, որքա՛ն հրաշալի է կյանքը... Խմենք, խմենք, բարեկամներ:

- Իսկ պայթեցումներ կատարել այդ սարքով հնարավո՞ր է,- իր մութ անկյունից առաջ եկավ մռայլ դեմքով մարդը:

- Ինչու՞ ոչ, ամեն բան էլ կարելի է,- ծուղակը չնկատեց Գիտնականը:- Հզոր էներգիա, անսպառ հնարավորություններ...

- Պարզ է:- Մռայլադեմը դարձյալ ետ ընկավ:- Ձեր սարքը նույն հաջողությամբ կարող է ծառայել չար ուժերին. դեն գցեք, քանի ուշ չէ:

- «Չար ուժերին»,- ծաղրեց Ջվարթադեմը:- Չարը վերացած է, սիրելիս, մենք վաղուց վերացրել ենք, քնած եք մնացել:

- Վերացրե՞լ եք,- թունոտ քնծիծաղեց Մռայլադեմը:- Այդ ե՞րբ, թույլ տվեք իմանալ:

- Երբ, երբ... Նրան ժամկետներ են պետք: Ասացի՜ վերացրել ենք և վերջ,- հակաճառություն չտանող Ջվարթադեմը սկսեց բորբոքվել:

- Ձեռ քաշեք,- Մռայլադեմն արհամարհանքով թափ տվեց ձեռքը:- Չարի բանակը գնալով միայն ստվարանում է, կարող եք չկասկածել:

- Այնուամենայնիվ, թույլ տվեք կասկածել,- մեջ ընկավ ճաղատը, որ հենց նոր կուլ էր տվել ծամած պատառը և վերջապես խոսելու:

կարողություն էր ձեռք բերել:

- Այո: Հենց ձեզ պես հոռետեսներն են ամեն բան փչացնում,- գոռաց գայրույթից կարմրատակած Ջվարթադեմը:- Չարը հենց հոռետեսության վրա է բույն դնում: Մենք նրան վերացնում ենք, դուք, ձեր հոռետեսությամբ, վերակենդանացնում:

- Ստացվում է, որ աշխարհի արատավորության համար ե՞ս եմ մեղավոր:

- Այո, դու՛ք և ձեզ նմանները:

Մռայլադեմը էլ ավելի մռայլվեց, կծկվեց ու ետ ընկավ՝ իր ամբողջ տեսքով ցույց տալով, որ այլևս չի խոսելու: Նինջից նոր սթափված Հարբեցողը նայեց նրան, գինու շշին և դարձավ Գիտնականին.

- Լսի՛, մեզ համար հանգիստ խմում էինք, էս ի՞նչ կռիվ գցիր: Խմում ես՝ խմի, չես խմում՝ խնդրեմ...- նա ցույց տվեց ելքը:

- Չդիպչելի,- բողոքեց Ջվարթադեմը:- Գիտությանը չդիպչել: Մենք բոլորս միասին նրա ուղեղի մի ծալքն էլ չարժենք:- Ապա դարձավ արդեն տեղից ելած Գիտնականին.- Ուշադրություն մի դարձրեք, հարգելիս, նստեք, խնդրում եմ, նստեք:

- Ոչ, գնամ:

- Վիրավորեցին մարդուն,- մղկտաց Ճաղատը:- Իրոք որ...

- Ոչ, ոչ, բոլորովին չեմ վիրավորվել. պարզապես որոշ հաշվարկներ ունեմ անելու:

- Հաշվարկե՞ր,- բանիմացորեն ասաց Ջվարթադեմը:- Չենք համարձակվում խանգարել. առաջ և առանց տարակուսանքի:

- Ցտեսություն,- մաղթեց Գիտնականը և դուրս եկավ:

- Նեղացրինք խեղճ մարդուն, ի՞նչ սրտաճմլիկ բան է,- տնքաց Ճաղատը:

Իր խցիկում առանձնանալուց առաջ Գիտնականը վճռեց զուգարան մտնել, որպեսզի հետո բնական պետքի պատճառով ստիպված չլինի ընդհատել աշխատանքը: Գունատի մոտով անցնելիս նա կանգ առավ, զրպանում շոշափեց սարքը, բայց այդպես էլ դուրս չբերեց:

- Նախկին կարծիքի՞ն եք,- հարցրեց:- Մու՞թ է:

- Այո, անթափանց խավար և սոսկալի ցուրտ,- պատասխանեց Գունատը:

- Լույս չերևա՞ց,- Գիտնականի ծայնի մեջ հեզանքի երանգ կար:

- Չերևաց: Բայց հույսս դեռ չեմ կորցրել: Կուզե՞ք նայել ձեռքից...

- Ոչ,- վախեցավ Գիտնականը:- Լուսամուտների միջով էլ ամեն բան լավ երևում է:

- Ոնց կուզեք, ձեր կամքն է:

Գիտնականը դարձյալ շոշափեց սարքը և դարձյալ չհամարձակվեց դուրս բերել:

- Բայց հնարավոր չէ, որ բոլորը սխալ լինեն և միայն դուք՝ ճիշտ,- ասաց նա՝ սեփական անհամարձակությունից նյարդացած:

- Մի՞թե ես նման բան եմ ասել:

- Չէ, բայց...

- Գիտե՞ք, գոյություն ունի մի վիճակ, որ գտնվում է ճշտից կամ սխալից, վատից կամ լավից, չարից կամ բարուց անդին, այսպես ասած՝ երրորդ վիճակ:

- Չեմ հասկանում և չեմ էլ ուզում հասկանալ:

- Ճիշտ էլ անում եք. երրորդ վիճակը տրամաբանությունների, կշռադատությունների չի ենթարկվում, այն կարելի է միայն զգալ, կռահել...

- Մի խոսքով՝ անհեթեթություն: Փորձից այն կողմ ոչինչ չկա:

- Ոնց կուզեք, ես հո չե՞մ պարտադրում:

- Գնամ, գնամ հաշվարկներս անեմ:

- Գնացեք, հարգելիս, ցտեսություն:

- Ցտեսություն... Բայց ինչու՞ եք հեզանքով խոսում:

- Աստված մի արասցե, ի՞նչ հեզանք, Ձեզ թվաց:

- Ինչէ՛, ժամանակ չկորցնենք զուր բաների վրա:

Գիտնականը քայլեց դեպի իր խցիկը, բայց հանկարծ հիշեց, որ զուգարան էր մտնելու և ետ դարձավ: Նրա ետևից վազեվազ զուգարանին մոտեցավ Հարբեցողը և մի քանի անգամ հրեց դուռը՝ դժգոհելով. «Էս ո՞վ մտավ, է՞»: Երբ Գիտնականը վերջապես դուրս եկավ, Հարբեցողը զարմանքով հարցրեց.

- Գիտնականն է՞լ զուգարան գնա:

- Իհարկե,- ներողամիտ ժպտաց Գիտնականը:- Մենք էլ բոլորի պես մարդ ենք՝ կենսաբանություն:

- Բայց քո կենսաբանությունը ոնց որ խախտված ա:

- Ինչու՞:

- Փուչիկդ շատ դանդաղ ա դատարկվում:

- Ոչ, պարզապես մտքերով էի ընկել:

- Մտքերո՞վ,- զարմացավ Հարբեցողը, սակայն այլևս անկարող լինելով դիմանալ՝ իրեն զցեց զուգարան:- Չգնաս, հարց ունեմ,- կանչեց այնտեղից:- Լսի՛ր, ես լսել եմ, որ ձեր սարքերի կոնտակտները սպիրտով եք մաքրում, ճիշտ ա՞...
Բայց Գիտնականն արդեն հեռացել էր:

Ճառասացն ու իր խումբը դարձյալ աղմուկ էին բարձրացրել: Թիկնոցով պարուրված մարդն արթնացավ, նայեց նրանց, ապա

ժամացույցին, և նորից թեք ընկավ իր անկյունում: «Քիչ մնաց», - ինքն իրեն ասաց նա ու քնեց:

Ճառասացը մի պահ ընդհատեց ճառը, կասկածանքով նայեց Թիկնոցավորին, ապա վերստին դարձավ խմբին:

- Ի՞նչ ենք թողնելու մենք մեր մատաղ սերնդին, մեր հերթափոխին՝ սա է գերխնդիրը: Մենք բարոյական, ինչու չէ, նաև պատմական իրավունք չունենք նրանց կտակելու մեր այս կեղծիքներով, չարիքով, անարդարությամբ լեցուն իրականությունը, մենք պետք է վերջապես վերջակետ դնենք իշխելու մոլուցքով տառապողների այս տխուր պատմությանը: Եվ եթե հարկ եղավ՝ զենք էլ կբարձրացնենք հանուն մեր վեհ նպատակների իրականացման: Թող հույս չունենան, թե կկոտրեն մեր կամքը... այլևս: - Ճառասացը շրջվեց կաշեպատ դռնով խցիկի կողմը և բարձրացրեց ձայնը: - Լսու՞մ եք այդտեղ, մեր միաբանությունը ջլատել ձեզ չի հաջողվի այլևս:

Կաշեպատ դուռը նույն պահին բացվեց, խցից դուրս եկան զույգ հաղթանդամ տղաներ՝ մուգ, խիստ կոստյումներով, օսլայած ձերմակ վերնաշապիկներով, նեղ փողկապներով:

- Ձեր տոմսը կարելի՞ է տեսնել, - հարցրեց Ճառասացին նրանցից մեկը:

- Ինչու՞, - վրդովվեց Ճառասացը, - դուք ինչ է, հսկի՞չ եք:
- Եթե հարցնում ենք, ուրեմն՝ հարցնում ենք, - չոր նկատեց երկրորդը: - Ցույց տվեք:

- Ահա, խնդրեմ, - Ճառասացը հանեց և նրանց տվեց տոմսը: Առաջինը վերցրեց, տնտղեց ու ասաց.
- Ձեր տեղը տասնմեկերորդ խցում է, ինչու՞ եք դուրս եկել միջանցք ու մարդկանց հանգիստը խանգարում:

- Այ քեզ բան, - առարկեց Ճառասացը: - Տոմսը միայն տեղի՞ համար է, խցիկից դուրս գալու իրավունք չունե՞մ: Գուցե զուգարա՞ն էլ չի կարելի գնալ: Ծիծաղելի է: Եթե այդպես է՝ դու՞ք որ իրավունքով եք ազատ շրջում:

- Մեր տոմսն ուրիշ տոմս է: Ցույց տա՞նք:
- Կարիք չկա, ինձ համար պարզ է, թե ինչ տոմս է ձեր տոմսը:
- Այո՞:

- Այո: Սակայն դա ձեզ իրավունք չի տալիս...
- Տալիս է, - անվրդով ընդհատեց առաջինը:
- Ուրեմն՝ այսպես, - ասաց երկրորդը: - Գնում եք ձեր խուցը, և մենք այլևս չենք տեսնում ձեզ և ոչ էլ ձեր ձայնն ենք լսում... այլևս: Եղա՞վ: Խանգարում եք, մարդիկ բողոքում են:

- Սուտ է, չեմ հավատում. ո՞վ է բողոքում...
- Ձեք հավատու՞մ: Հիմա, - առաջինը նշան արեց ընկերոջը:

Երկրորդը գնաց և շուտով վերադարձավ ոտքերը հազիվ շարժող մի ծերուկի հետ:

- Սա՞ է բողոքում, - հարցրեց Ճառասացը:

- Հենց ես, - իրեն վիրավորված զգաց ծերուկը: - Ամբողջ օրը գոռոռում եք, ձվձվում... Չի կարելի, չէ՞:

- Լսեցի՞ր, - Ճառասացին հարցրեց առաջինը, ապա դարձավ ծերունուն: - Դուք գնացեք, հայրիկ, հանգիստ եղեք, մենք թույլ չենք տա, որ սրանք աղմկեն:

Ծերունին փնփնթալով հեռացավ:

- Դրան գերեզմանից հանեցի՞ք, որ վկայություն տա, - կծեց Ճառասացը:

- Չափն անցնում ես, - զգուշացրեց երկրորդ տղամարդը:
- Ձեր անձնագիրը տվեք տեսնեմ, - պահանջեց առաջինը:
- Խնդրեմ, - Ճառասացը տվեց անձնագիրը: - Ծննդյան վկայական էլ չտա՞մ:

- Սա ձեր նկա՞րն է, - հարցրեց առաջին տղամարդը:
- Բա էլ ու՞մ: Միայն թե այդտեղ առանց բեղի եմ:
- Հա՞... Իսկ իշխանություններին զգուշացրե՞լ եք:
- Ի՞նչը...

- Որ հիմա բեղ ունեք: Նոր նկար պետք է փակցնեք, այլապես ո՞վ կերաշխավորի, որ սա դուք եք: Ամենևին նման չեք: Ես, օրինակ, կասկածում եմ, խիստ եմ կասկածում... - Առաջինը դարձավ ընկերոջը: - Ի՞նչ կասես:

- Կասկածելի է, իհարկե, - համաձայնեց երկրորդը:
- Ծաղրում եք: Ուրեմն ամեն անգամ բեղ կամ մորուք թողնելիս նոր նկա՞ր պիտի կացնել:

- Այո, պետք է: Բանը միայն բեղը չէ, նկարում ահագին չաղ եք:
- Տասը տարվա նկար է, նիհարել եմ, այսպիսի պայմաններում չաղ չես մնա:

- Ուրեմն պայմանները ձեզ դուր չեն գալիս: Պարզ է: Դե ինչ, եկեք մեզ հետ, ձեր բողոքները գրավոր ներկայացնենք պետին:

- Ոչ մի տեղ էլ չեմ գա, - իրաժարվեց Ճառասացը և շրջվեց դեպի խումբը: - Եղբայրներ, տեսնու՞մ եք՝ ինչ կամայականություններ են իրենց թույլ տալիս այս...

- Չայնո կտորի, - ընդհատեց առաջինը: Նրանք երկու կողմերից բռնեցին Ճառասացի թևերը և քարշ տվին դեպի կաշեպատ դուռը:
- Եղբայրներ, - գոռում էր Ճառասացը:

«Եղբայրներ» առաջ եկան: Տղամարդկանցից մեկը շրջվեց ու դիմեց ամենից առաջացածին:

- Դուք էլ եք ցանկանու՞մ մեզ հետ գալ: Խնդրեմ, առաջ անցեք:

- Ոչ,- վախեցավ խուճուճմազ երիտասարդը:- Ես... Ես ուզում էի իմ խցիկը գնալ... Այնտեղ, վագոնի վերջում:

- Ապրես, գնա: Խուճեմ երիտասարդ ես, ի՞նչ գործ ունես խառնակ-չուբուրանների հետ: Թեև, եթե դու էլ բողոք ունես, կարող ես գալ. ընթացք կտանք, գործ կբացենք...

- Ի՞նչ գործ, չէ,- վախեցավ երիտասարդը:- Ես բողոք չունեմ: Պարզապես պարապ էի...

- Պարա՞պ,- ուրախացած մեջ ընկավ խաղացողը:- Գնանք թուղթ խաղանք, դրանից լավ զբաղմունք:- Նա կռացավ երիտասարդի ականջին ու շշնջաց.- Գնացինք, շուտ, գլուխդ փորձանքի մեջ մի դնի:

- Գնանք:- Երիտասարդը մեղավոր ժպտաց փողկապավոր տղամարդկանց.- Մենք գնանք, թուղթ խաղանք:

- Գնացեք:

Տղամարդիկ շարունակեցին իրենց երթը՝ տանելով ճառասացին:

- Պինդ կացեք, եղբայրներ, ես դեռ կվերադառնամ,- գոռաց ճառասացը դռնից ներս հրվելու պահին:

Խումբն աստիճանաբար ցրվեց. քիչ անց վագոնի տարբեր անկյուններում կարելի էր տեսնել նրա ահաբեկված, դավադրորեն փսփսացող բեկորներին:

Չուզարանի մոտ ետուառաջ էր ճեմում բեղիկավոր տղամարդը, որ զուգարան մտած հրաշեկ կնոջն էր սպասում. ժամանակ առ ժամանակ նայում էր ապակու մեջ երևացող իր արտացոլմանը, սղալում յուղով օծված փայլփլուն մագերը կամ ուղղում փողկապը:

- Չքնաղ կին է, այնպես չէ՞,- դիմեց նա Գունատին, բայց Գունատը չպատասխանեց:- Տեսնում եմ՝ կանայք ձեզ չեն հետաքրքրում:

- Մերն անվերջ գայթակղություն է, հագեցում չկա,- վերջապես խոսեց Գունատը:

- Չկա, թող չլինի, ի՞նչ անենք, դրանից լավ բանի պիտի նվիրվե՞ս:

- Հո չի՞ կարելի ամբողջ կյանքը կանանց հետևից վազվզելուն նվիրել:

- Չէ, եղբայր, զուր չի, որ կպել ես էդ ձեղքին. ձեղքերի մեջ հետաքրքրագույնն ես գտել,- հռչեաց Բեղիկավորը. բեղիկի սուր ծայրերը ետ գնացին, ինչից նրա դեմքը կատվային դարձավ:

Չխկաց զուգարանի դուռը:

- Դուրս է գալիս տիրուհիդ,- նկատեց Գունատը:

Բեղիկավորը սիրամարգային քայլքով մոտեցավ դուրս եկած կնոջը:

- Իմ հրաշք, այլևս այսքան երկար չլքես ինձ, աղաչում եմ...

- Ուրեմն հետը զուգարան մտի,- Հարբեցողի գռեհիկ ծայրն էր:

- Լկտի՞,- ճչաց կինը:

- Դե, դե, փիսիկ,- զգուշացրեց Հարբեցողը՝ ձեռքը դիպցնելով կնոջ փարթամ կրծքին:

Բեղիկավորը թափ առավ և հարվածեց: Դիպուկ հարված էր, ծնոտին: Հարբեցողը երերաց ու փռվեց զուգարանի առջև: Կինն ու տղամարդը հեռացան:

- Տեսա՞ր ոնց խփեց: Խփեց ու փախավ,- Գունատին բողոքեց Հարբեցողը, որ պատերից կառչելով՝ մի կերպ ոտքի էր կանգնել:- Ոչինչ, ես նրա հերը կանիծեմ, ոչինչ: Ախր մեր Գիտնականի կինն ա: Ոչինչ, ես նրա հախից կգամ... Այ, զուգարան մտնեմ-դուրս գամ...

Պատուհանների ետևում երեկո էր՝ արնագույն մայրամուտ: Թեև Գունատն իր ձեղքից դարձյալ խավարն էր տեսնում:

Միջանցքով անցնում էր տեր հայրը, հերթականությամբ նայելով բոլոր դռներից ներս: Վերջապես Ջվարթադեմի խցիկի առջև նա կանգ առավ, հոտոտեց և խաչակնքեց.

- Ընդունելի լինի ձեր ընթրիքը, զավակներս: Աստված է՛լ ավելի շքեղ սեղանների արժանացնի:

- Վերջին խոսքն ավելի շատ բաժակաճառի էր նման,- ճաղատի ականջին փսփսաց Ջվարթադեմը, ապա դիմեց տեր հորը.- Համեցեք, տեր հայր, մասնակցեք մեր համեստ ընթրիքին:

- Ծնորհակալ եմ, որոյակ իմ:- Տեր հայրը չստիպեց երկրորդ անգամ խնդրել. մտավ ու տեղավորվեց սեղանի մոտ:

Քիչ հետո եկավ նաև Հարբեցողը՝ քթի տակ հայիոյելով.

- Ես քու էն...

- Ի՞նչ է պատահել,- հարցրեց Ջվարթադեմը:

- Գիտնականին ասում եմ՝ կինդ էն բեղավորի հետ քաշ ա գալի: Իսկ նա թե. «Ես վեր եմ ստոր զգացմունքներից, խանդը նվաստացնում է մարդուս»: Պատկերացնում եք: Ուրիշը լինե՞ր, հիմա սպանել էր էդ լակոտին, իսկ սա ասում ա. «Ես գիտության նվիրյալն եմ, իմ ժամանակը սուղ է: Իսկ կինը մնում է կին, նրան մեղադրել չեմ կարող»:

- Ճիշտ է ասում,- խոսեց Մռայլադեմը:- Ի՞նչ ես քիթդ խոթում ուրիշների գործերի մեջ:

- Ո՞նց...- զարմացավ Հարբեցողը:

- Լավ, վերջ տվե՞ք,- միջամտեց Ջվարթադեմը:- Ավելի լավ է պոետին բերենք, թող ծաղկացնի սեղանը:

- Նրա սուտ պաթոսն ու՞մ է պետք:

- Պետք է ինձ, քեզ, բոլորիս:
- Ինձ պետք չէ,- համառեց Մռայլադեմը:- Նրա հիացնունքն ամեն մի գիրքի ճակատամբ տաղտկալի է:
- Ի՞նչն է գիրքը, բնություն՞նը, սե՞րը, կյանքը... Չէ, հարգելիս, ինքնասպան լինելու ժամանակդ եկել է,- ասաց Ջվարթադեմը:
- Աստված մի արասցե,- վախեցավ Ճաղատը:- Ժամանակավոր հոռետեսություն է, կանցնի:- Նա դարձավ Մռայլադեմին.- Չփորձես, լսու՞մ ես, չփորձես:
- Ճիշտ է, Աստված թույլ չի տալիս: Կյանքը Բարձրյալի պարգևն է, նա է տնօրինում:- Տեր հայրը դժվարությամբ էր խոսում` քերանը լիքն էր:
- Չեմ ուզում այսպիսի պարգև, չեմ ուզում,- գռռաց Մռայլադեմը:
- Կանհիծեմ:
- Թքած:
- Ի՞նչ:- Տեր հայրը կույ տվեց կիսածամած պատառն ու ձգվեց:
- Վերջ տվեք,- միջամտեց Ջվարթադեմը:- Երեկոն չփչացնենք: Պինի լցրեք, մինչև ես պոետին գտնեմ: Առաջ և առանց տարակուսանքի:
- Նա Պոետին գտավ Բեդիկավորի խցիկի առջև` դռան արանքով գաղտագողի ներս նայելիս:
- Է, սիրելիս, էս ի՞նչ բանի ես:
- Ոչինչ, այնպես...- Պոետը հանկարծակիի եկած` պոկվեց դիտանցքից:
- Ոգեշնչվու՞մ ես,- ծիծաղեց Ջվարթադեմը:- Հրաշեկի հե՞տ է:
- Ըհը,- տնքաց Պոետը:- Ինչպիսի՞ կին է, ինչպիսի՞ կին:
- Մի վիհատվիր, դեռ ջահել ես, ամեն բան դեռ առջևում է, կանայք դեռ կսիրեն քեզ:
- Կարծու՞մ եք:
- Համոզված եմ:- Ջվարթադեմը մտերմաբար գրկեց Պոետի նիհար ուսերը:- Գնանք, հասարակությունը սպասում է: Առավտից փնտրում ենք քեզ, ու՞ր ես:
- Փակվել էի իմ խցում: Գրում էի:
- Ապրես:
- Գինի ունե՞ք:
- Ունենք, ամեն բան ունենք:
- Ընթրող խումբը ցնծությամբ դիմավորեց Պոետին: Միայն Մռայլադեմն էր, որ ավելի մռայլվեց և դժգոհ մրթմրթաց. «Բերին ռոմանտիկ ապուշին»:
- Դեհ, տեղ տվեք մեր տաղանդին,- ասաց Ջվարթադեմը:- Եվ գինի լցրեք:

- Անձայն չխմես, որոյակս, մի բան արտասանիր,- խնդրեց տեր հայրը, որ արդեն գինով էր ու կուշտ:
- Այո, այո,- ծղրտաց Ճաղատը:- Սակայն նախ գուցե մի քիչ ուտեր խեղճը:
- Կհասցնի:
- Պոետը բարձրացրեց բաժակը, երազկոտ աչքերը կիսախուփ արեց, հազաց և արտասանեց.

*Մայրամուտի այս հրաշք պահին
Բոսորն է լողում բաժակիս մեջ,
Եվ ջերմ բարեկամներ:*

- Բաժակի մե՞ջ,- թունոտ ծիծաղեց Մռայլադեմը:
- Հենց բաժակի մեջ, ի՞նչ կա որ, շատ էլ դիպուկ էր,- Պոետին պաշտպանեց Հարբեցողը, ում անչափ դուր էր եկել գինու բաժակի մեջ լողալու միտքը:
- Քիչ անց, արդեն կարմրատակած Պոետն ինքն սկսեց, առանց հրավերի. ետ գցեց երկար մագերը, երկնագույն աչքերը հառեց լուսամուտից դուրս և արտասանեց.

*Աշուն է՝ խոնավ ու թախծոտ:
Բայց մերկ ու թաց ճյուղին արդեն գարունն է թրթռում,
Եվ նրա հրաշեկ վարսերը...*

- Նա շրջեց հայացքը լուսամուտից և հազաց` հուշելու համար, որ ավարտել է:
- Վե՞րջ,- չարախնդաց Մռայլադեմը:- Բա հրաշեկ վարսերն ինչ, նու՞յնպես թրթռում էին մերկ ու թաց ճյուղին:
- Ես հրաժարվում եմ քննարկել, պոետիան քննարկելի չէ,- վիրավորվեց Պոետը:
- Իսկ իմ կարծիքով հրաշալի էր,- նկատեց Ջվարթադեմը,- և ամենակարևորը` լավատեսական:
- Այո, միայն սուտ լավատեսությունը կարող է աշնան ցեխոտ ճյուղին թրթռացող գարուն տեսնել,- հեզնեց Մռայլադեմը:- Իսկ ձմեռն ի՞նչ, չքվե՞ց, ձմեռը կու՞լ տանք, անտեսե՞նք: Անտեսե՞նք իրականությունը: Չեզ եմ հարցնում` աշնանից հետո ձմեռ պե՞տք է գա, թե՞ ձմեռն էլ Չարի հետ վերացրել եք:
- Մողեռնիզմի ոգին ձեզ համար չէ, արստրակտ մտածողությունից զուրկ եք, նաև` երևակայություն չունեք, հարգելի պարոն,- բորբոքվեց Պոետը:

- Ո՛նց հուզվեց խեղճը,- մղկտաց ճաղատը, ապա դիմեց Մռայ-
լադեմին.- Հանգիստ թողեք նրան, արվեստագետի հոգին նուրբ է,
ոյուրաբեկ:

- Խեղճ արվեստ:

- Իսկ իմ կարծիքով հրաշալի էր,- կրկնեց Ջվարթադեմը:- Դու՞ք
ինչ կարծիքի եք, տեր հայր:

- Ես դեռ պետք է խորհեմ: Հրաշեկ վարսերն ինչ-որ կասկածելի
են...

- Ոչ, բարեկամներ, թույլ տվեք այնուամենայնիվ բացատրել,- չէր
հանգստանում Պոետը:- Սա ճապոնական ավանդույթների և մո-
դեռն մտածողության սինթեզ է, հասկանու՞մ եք...- ասաց նա Մռայ-
լադեմին, սակայն հանդիպելով վերջինիս հեգնանքին,
հիասթափված թափ տվեց ձեռքը.- Ասենք, ո՞նց հասկանաք:

- Իհարկե,- դառը քննադատեց Մռայլադեմը:- Ի՛նչ օրն ընկա, ամեն
մի դեղնակտուց խելք է սովորեցնում:- Նա կտրուկ վեր կացավ.- Ես
գնացի,- չոր նետեց ու դուրս եկավ:

- Վերջ, հիմա կմտնի իր խորշը և մի քանի օր դուրս չի գա,- եզրա-
կացրեց Ջվարթադեմը:

- Թքա՛ծ,- թեք Հարբեցողը:

- Բայց մեղք է մարդն, իրոք որ:- Ճաղատը թմբլիկ ձեռքերով գրկել
էր սեփական գլուխը:

- Խորհեցի,- հանկարծ հայտարարեց տեր հայրը և դարձավ Պոե-
տին.- Ձեր այդ սինթեզ ասածը բանի պետք չէ, սիրելիս: «Ճապոնա-
կան: Մոդեռն»: Իսկ ու՞ր մնաց մերը, ու՞ր մնացին մեր
ավանդույթները: Օտարամոլ:

- Պոեզիան ազատություն է, նա իմ և քո չի հարցնում, պոեզիան
կոսմոպոլիտ է:

- Ի՞նչ,- չհասկացավ Հարբեցողը:

- Տեսնում եմ բոլորդ էլ դեմ եք ինձ: Ես լքում եմ ձեզ:

- Լքում ես, լքի, առանց քեզ էլ կապրենք մի կերպ:- Հարբեցողը
ձեռքն առավ շիշը:

- Չարտասվես, արցունք տանել չեմ կարող,- գոչեց Ջվարթադե-
մը:- Լսու՞մ ես, մի արտասվիր:

- Հանգիստ թողեք տղային, մենք իրավունք չունենք այդքան դա-
ժան ինելու,- մեջ ընկավ Ճաղատը և քնքշորեն բռնեց Պոետի ձեռ-
քը.- Նստիր, սիրելիս, մի վիրավորվիր, նրանց մեջ գինին է խոսում:

- Չեմ վիրավորվում: Բայց գնամ, հիմա մնալ չեմ կարող...

- Ուրեմն իրարից չենք նեղանում, այո՞:

- Այո:- Պոետի աչքերը ժպտացին արտասուքի միջով:- Բայց հի-
մա գնամ՝ ձեր թույլտվությամբ:

- Հասկանում եմ, այս իրադրությունը ձեզ ստեղծագործելու մղեց,
չէ՞,- հարցրեց Ճաղատը:

- Այո,- մեղավոր ժպտաց Պոետը:

- Գնա, որդյակ իմ, և մտածիր ասածներիս մասին:- Տեր հայրը
խաչակնքեց.- Աստված ետ պահի քեզ մոլորությունից:

Պոետը խոնարհվեց և դուրս եկավ:

- Պոետների մեջ գիշատչային ինչ-որ բան կա, չէ՞ք կարծում,- խո-
սեց Ջվարթադեմը:- Յուրաքանչյուր իրավիճակ օգտագործում են
ոգեշնչվելու և մի քանի տող կորգելու համար:

- Արդարացի չեք, հարգելիս, մի՞թե խեղճը նման է գիշատչի: Ոնց
որ հրեշտակ լինի, իրոք որ, նույնիսկ գիտնականի կինն այդքան
հմայք չունի:

Հարբեցողը հռեռաց՝ մատը Ճաղատի վրա թափ տալով.

- Կասկածելի հայտարարություն էր, ես կասեի՝ երկնագույն:

- Վերջ տվեք ձեր գրեհկություններին,- վրդովվեց Ճաղատը:

Դռների մեջ հայտնվեցին փողկապավոր տղամարդիկ. նրանք
ժլատ ողջունեցին ներկաներին և դիմեցին տեր հորը.

- Տեր հայր, ձեզ այնտեղ հրավիրում են, գործ կա:

- Եղավ, գալիս եմ:- Տեր հայրը ելավ տեղից:- Դեհ, գոհ եմ, հաջո-
ղությամբ մնաք,- մաղթեց նա և հետևեց սուրհանդակներին:

Իսկ Պոետն իր խցիկը մտնելուց առաջ մոտեցել էր Գունատին:

- Դու՞ք էլ չեք հավանում իմ բանաստեղծությունները,- հարցրեց
նա:

- Կներեք, բայց ծանոթ չեմ:

- Իսկապե՞ս: Կարդա՞մ,- ոգևորվեց Պոետը:

- Ինչի՞ մասին եմ:

- Արևի, սիրո, աշնան և զարնան, և նորից սիրո, կանաչ ճամփա-
ների...

- Եվ նորից սիրո,- լրացրեց Գունատը:

- Այո: Կարդա՞մ:

- Ուրիշ անգամ, եթե դեմ չեք, հիմա հոգնած եմ:

- Պարզ է- տխրեց Պոետը:

Միջանցքում դարձյալ աղմուկ էր բարձրացել: Համարձակություն
հավաքած խումբը շրջապատել էր կաշեպատ դուռը և վանկարկում
էր՝ «Ա-գա-տուր-յուն...»:

Խցիկի դուռը բացվեց, դուրս եկան փողկապավորները:

- Ի՞նչ եք առնվում, ի՞նչ է պատահել,- հարցրեց առաջինը:

- Ա-գա-տել...

- Ազատե՞լ: Մենք ոչ ոքի չենք բռնել, որ ազատենք: Խնդրեմ, թող

ինքը դուրս գա և ափ:

Փողկապավորները ետ քաշվեցին, նրանց փոխարեն հայտնվեց ճառասացը. բարձրացրեց ձեռքը, սպասեց, մինչև խումբը խաղաղվի և խոսեց.

- Եղբայրներ, մենք փոքր-ինչ անարդարացի էինք մեր եզրակացությունների մեջ, մեր կարծիքը փոքր-ինչ խեղաթյուրված էր: Այսպիսի լուրջ գործերը տաք գլխով չեն արվում: Ծայրահեղ միջոցների դիմել չի կարելի, պետք է հաշտության եզրեր փնտրել, փորձել հասկանալ միմյանց: Ես հիմա բանակցություններ եմ վարում, և ընթացքը հուսադրող է: Այնպես որ՝ խաղաղվեք, եղբայրներ, խաղաղվեք և սպասեք:

- Ինչքա՞ն սպասենք, հերիք եղավ,- գոռացին խմբից:

- Պարզ է,- կողքինին ասաց մորթե փափախով մարդը:- Սա էլ դավաճանեց մեզ, երևի չաղ պատառ են օգել բերանը:- Նա շրջվեց դեպի խումբը և գոռաց.- Դավաճանություն է, եղբայրներ, նրան կաշառել են: Հերիք է: Ոչ մի բանակցություն: Ես հիմա սրանց...

Փափախավորը գրպանից ծանր մի փաթեթ հանեց, ինչ-որ բան սեղմեց և նետեց կաշեպատ դռնից ներս: Պահ անց պայթյուն լսվեց, խցիկից ծուխ ժայթքեց: Հագից խեղդվելով դուրս թռան ներսում գտնվողները՝ ճառասացը, փողկապավոր տղամարդիկ, տեր հայրը և շքեղ կոստյումով մի ծերուկ: Փափախավորն իրեն նետեց ազատված խցիկը:

- Կխեղդվես, ապուշ,- գոռաց ճառասացը:

- Քո մասին մտածիր, ես հակազազ ունեմ,- լսվեց ներսից խուժայնը:

Միջանցքում իրարանցում սկսվեց, որ շուտով վերածվեց ծեծկռտուքի:

Գունատը շրջվեց և նայեց միմյանց քիթմռութ ջարդող մարդկանց... Ինչ-որ բան էր փոխվել, բայց պատճառը ծեծկռտուքը չէր: Հոգին ճնշեց ծանր կանխագագուճը: Հանկարծ կռահեց և աչքերով փնտրեց վագոնի հակառակ ծայրում: Տեսավ: Թիկնոցով պարուրված մարդն արթնացել էր և ժամացույցին էր նայում:

- Վերջ, ձեր ժամանակն ավարտվեց,- հնչեց հզոր, աներեր, հանդարտ ձայնը: Նա կանգնել էր լայն բացած ոտքերի վրա, դեմքով դեպի խումբը, սակայն դեմքը չէր երևում թիկնոցի տակից:

- Ո՞նց թե ավարտվեց... Ո՞վ է այս մարդը, որտեղի՞ց բուսնեց...

- Իրոք որ...

- Այ մարդ, քեզ համար քնած էիր, ի՞նչ պատահեց հանկարծ. հանգիստ քնի, էլի:

Թիկնոցավորի ձայնն ավելի բարձր հնչեց.

- Ձեր երթուղին ավարտված է, վերջ:

- Ավարտվա՞ծ է...

- Ինչպե՞ս... Ինչու՞...

- Մի՞թե...

Այո, ավարտված է,- հայտարարեց թիկնոցավորը: Նրա սահմուկեցնող քրքիջից շուրջն ամեն բան դողաց:

Շարունակվող քրքիջն աստիճանաբար հեռանում էր և դրան զուգընթաց հանկարծ սկսեցին հալչել, անէանալ վագոնի պատերը: Քիչ հետո մարդիկ սարսափած տեսան, որ հայտնվել են դատարկ, մութ ու ցուրտ տարածության մեջ:

- Ու՞ր է Գունատը,- լսվեց մի ձայն,- նա միշտ դուրս էր նայում, նա տեղյակ է այս խավարին ու ցրտին:

Մարդիկ գտան Գունատին ու ամուր սեղմվեցին նրա շուրջը: Երբեք այդքան մոտ չէին եղել միմյանց: Նրանք ուզում էին...

Բայց արդեն անկարող եղան: Որովհետև սառչում էին: Սառչում էին՝ միմյանց սեղմված, անշարժ հայացքները սառը գետնին մեխած: Միայն Գունատն էր նայում վեր՝ անթափանց երկնքին, և նրան թվաց, թե այնտեղ, հեռվում, ինչ-որ բան շարժվեց, նրան նակ թվաց, թե ինքը կարող է պոկվել գետնից և բարձրանալ այնտեղ...

- Թողեք ինձ,- աղեկտուր գոռաց,- թողեք...

Սակայն մարմնային զանգվածն արդեն սառել էր՝ սառել և ամուր կպել նրան՝ զրկելով շարժման հնարավորությունից...

ՇԱՐԺԱՍԱՆԴՈՒՂԷ

Վերևում, շարժասանդուղի վերջում, այնտեղ, ուր սանդուղքին խռնված մարդկանց գորշ, անկանոն շարքը բարակում-աներևութանում է, մեզ բոլորիս հրապուրող, մշտապես լարված գայթակղության մեջ պահող Վարդագույն Լուսապսակն է՝ սանդուղքի բնակիչների իղձերի ու ձգտումների գագաթնակետը: Բոլորս ենք ճգնում հասնել նրան, թեև ընթացքը դժվարին է և օրըստօրե ավելի է դժվարանում: Դա է պատճառը, որ հիմա առավել զգուշավոր եմ դարձել և ո՛չ միայն չեմ վազում աստիճաններով, այլև չեմ էլ քայլում. պարզապես կանգնած եմ: Ուժեր խնայելը հիմա առավել կարևոր է, կարևոր է գոհ չգնալ Կայծակնային ձեղքումով առաջ անցնելու գայթակղությանը, և շարժասանդուղքը, թող որ մի քիչ ուշ, ի վերջո, ինքը տեղ կհասցնի: Իսկ եթե փորձեմ քայլելով կամ որ ավելի վատ է՝ վազելով արագացնել ընթացքս, ինքս ինձ կենթարկեմ ուժասպառվելու վտանգին, որովհետև նախկին եռանդն այլևս

չունենմ, հոգնել եմ: Բացի այս՝ նման ձեռնարկումը միշտ կապված է որոշակի ռիսկի հետ, չէ՞ որ քայլելու, առավել ևս վազելու ժամանակ կարող ես կորցնել հավասարակշռությունը, իսկ նման դեպքերում մի հաջող աքացին էլ լիովին բավական է, որպեսզի հայտնվես այնտեղ՝ անդունդում, մի բան, որից բոլորս, բնականաբար, սարսափում ենք. եթե ետ գլորվողը դեռևս չի կորցնում ոտքի կանգնելու և ընթացքը վերսկսելու հնարավորությունը, ապա անդունդ գահավիժողը նման հնարավորությունից զրկված է, գործնականում՝ հավերժորեն. համենայնդեպս՝ ես այնտեղից ետ եկողների չեմ տեսել, թեև վաղուց արդեն շարժասանդուղքի վրա եմ: Շուրջս եղած խոսակցություններն էլ, հիմնականում, նրանց մասին են և իհարկե՝ նաև հաջողակների մասին.

« - Իմացա՞ք, առավոտյան, ետընթացի ժամանակ Ս-ն չդիմացավ, անդունդը գլորվեց:

- Խեղճ մարդ, որքա՞ն մաքառեց:
- Ո՞տք էին օգել:
- Ասում են՝ հոգնել էր, քնել ու կորցրել հավասարակշռությունը:
- Եվ իհարկե, ոչ ոք օգնության ձեռք չմեկնեց:
- Օգնության ձե՞ռք... Դուք ինձ զվարճացնում եք, հարգելիս, կարելի է կարծել՝ առաջին օրն եք սանդուղքի վրա:
- Իսկ Տ-ն, ասում են, հասել է իր նպատակին, հիմա նա այնտեղ է՝ Վերևում:
- Մի քանի տարի առաջ, հիշո՞ւմ եք, մեր կողքին էր:
- Այո: Հետո հավաքեց ուժերն ու անսպասելիորեն դիմեց Կայծակնային ճեղքման:
- Համարձակ քայլ էր:
- Դեհ, Տ-ն ուժեղ մարդ է:
- Ո՞վ է ուժեղ... Թուլամորթի մեկն է, նրան մանկուց եմ ճանաչում:
- Գողության մոլուցք էլ ունի, ժամացույցի պատմությունը չե՞ք հիշում:
- Եթե վերից պարան չօգեին, նա ինքնուրույն այդ քայլին դիմողը չէր:
- Ուրեմն՝ ճի՞շտ են ասում, թե Այնտեղ բարեկամներ ունի:
- Իհարկե: Իսկ դուք, միամիտ մարդ, կարծում էիք ինքնուրու՞յն հասավ: Որի՞ցս էր առավել: Հենց մեկը դուք, տաղանդավոր մարդ եք, սակայն ո՞րերորդ տարին է արդեն, տեղում դոփում եք:
- Իսկ Շ-ի պատմությունը լսեցի՞ք...»:

Ինձ շրջապատող մարդկանց կազմը մնայուն չէ. ոմանց հաջողվում է առաջ անցնել, մյուսները, հակառակը, ետ են ընկնում, առա-

վել դժբախտներն էլ գահավիժում են անդունդը: Սակայն տեղաշարժերն այնքան հաճախակի չեն, և իրար կողք կանգնածները հասցնում են մտերմանալ, թեև այդպես էլ՝ միմյանց երբեք լիովին չեն վստահում. մտերմությունը՝ մտերմություն, բայց շարժասանդուղքն ունի իր օրենքները, որոնք ստիպում են միշտ աչալուրջ լինել, կանխելու համար ուզած անակնկալ: Լիովին վստահել նույնիսկ եղբորդ չես կարող: Կարգին քունը մեզ համար չէ. քնում ենք կիսախուփ աչքերով, ականջներս ձայնի պահած: Բավական է մի անտվոր շարժում կամ ձայն՝ մենք արդեն արթուն ենք ու սթափ: Էլ չասած այն, որ շարժասանդուղքը անսպասելիորեն կարող է միացնել հակառակ ընթացքը, որն, ըստ ամենայնի, ընտրության լրացուցիչ միջոց է: Հիմնական տեղաշարժերը կատարվում են հենց ետընթացի ժամանակ: Առավել փորձվածները՝ «հին ոսկորները», ետընթացը կանխազգում են բնագոյրեն՝ սկսվելուց մի քանի րոպե առաջ. նրանց համակում է հանկարծածին տագնապը, նրանք ամուր կառչում են բազրիքից, լայն չռում ոտքերը և սրտատրոփ սպասում: Երբ միանում է ետընթացը՝ շուրջը քառային խառնաշփոթ է սկսվում, մարդիկ հրմշտում են միմյանց, գորգոռում, հայիոյում և գլխապատառ առաջ վազում ետ գնացող սանդուղքով, որպեսզի գոնե մնան իրենց տեղում: Ետընթացը երկար չի տևում, այդուհանդերձ՝ շատերը չէ, որ կարողանում են դիմակայել: Վաղուց, երբ դեռ անփորձ էի, մի քանի անգամ ես էլ եմ գլորվել ետ և ամեն բան սկսել նորից: Սակայն, փառք աստծո, անդունդն ընկնելուց կարողացել եմ խուսափել: Անդունդը սկսվում է սանդուղքի եզրից և ձգվում նրա ամբողջ երկարությամբ: Այն լցված է գաղջ, գարշահոտ գոլորշով, այնպես որ, նրա խորության մասին միայն մոտավոր գուշակություն կարող եմ անել՝ ելնելով ընկնողների թշվառ աղաղակների մարման տևողությունից: Ըստ իս՝ անդունդը պետք է որ բավականին խոր լինի: Սանդուղքի մյուս կողմում գորշ պատն է: Ոչ ոք չզգիտի, թե ինչ կա նրա ետևում, այդ իսկ պատճառով այն անվանում ենք Անհայտության պատ: Երբեմն թվում է, թե պատի ետևից մեզ հետևում են. դրա համար ոչ մի փաստ չկա, բացի սերնդե-սերունդ փոխանցվող հեքիաթանման պատմություններից: Սակայն ոչ մի կերպ չենք կարողանում թոթափել կասկածը, թե պատն ինչ-որ չափով թափանցիկ է՝ հեռուստացույցի հանգած էկրանի նման, և նրա մեջ շարժվում են անորոշ, մութ ուրվապատկերներ: Ծայրահեղ վիատության պահերին շատերն են իրենց գլուխը հպում Անհայտության պատին, հուսալով, թե նա նոր լիցք կհաղորդի իրենց: Ոմանք առարկություն չընդունելով այնդում են, որ պատն իսկապես ունի այդ գերբնական օժտվածությունը, սակայն ուրիշներն էլ համարում են, որ այդ հա-

վատն ինքնախաբեություն է ընդամենը: Անհայտության պատը ձգվում է մինչև Վարդագույն Լուսապսակը և դեռ նրանից էլ հեռու՝ ստեղծելով անվերջության թվացում:

- Կարծես սկսվում է, հը՞,- տազնապած ասում է հարևանս:

Տազնապան անմիջապես փոխանցվում է ինձ. բոթբոթում են հարևաններին՝ գործելու համար առավել ազատ տարածություն գրավելու մղումով: Քիչ անց սկսվում է ետընթացը: Հևասապառ, քրտնմխած վազում ենք, որպեսզի հակառակ ընթացք միացրած սանդուղքը մեզ ետ չտանի: Վերից կատաղի հայիոյանք է լսվում. բարձրացնում են հայացքս և տեսնում՝ միմյանցից կառչած երկու հոգի գլորվում են ուղիղ մեզ վրա: Մենք ճիշտ ժամանակին «քաղաքապարտություն» ճանապարհ ենք տալիս. նրանք գլորվում են ցած՝ այդպես էլ չկարողանալով վերականգնել հավասարակշռությունը:

- Նայիր, Շ-ն ձեռքեց,- հարևանիս հևասապառ ծայնն է:

Իսկապես, Շ-ն բարձրացել էր բազրիքի վրա և ջանալով չդիպչել շարժվող ժապավենին, ձեռքերը լարախաղացի պես տարածած՝ երերալով վազում էր վեր: Վարդագույն լուսապսակի հենքին՝ նա դեպի վառվող լապտերը թռչող թիթեռ էր հիշեցնում: Սակայն Շ-ն, ի տարբերություն թիթեռի, գուրկ էր թևերից և, վերջ ի վերջո, կորցնում է հավասարակշռությունն ու ընկնում անդունդը: Նրա գազանային ոռնոցը դեռ երկար հնչում էր ականջներիս մեջ:

- Հրեցին, նկատեցի՞ր:

- Չտեսա: Մենք խոսում էինք՝ շարունակելով վազել:

- Հրեցին, հաստատ, ես տեսա: Էն հաղթանդան լակոտն էր: Էդ հաստափորը հեռուն կզնա, թեև բութ է:

- Կամաց խոսիր:

- Ինչու՞: Կարծում ես՝ համախոհներ՞ ունի:

- Չի բացառվում: Նրա մոտալուտ վերելքին շատերն են հավատում, նույնիսկ ասում են, թե նրա այստեղ գտնվելը թյուրիմացություն է՝ ինչ-որ խճճված պատմություն, որի մանրամասներին տեղյակ չեմ, բայց լսել են, որ վերևում նստած նրա հայրիկը ձեռնարկել է որդուն շուտափույթ վեր հանելու խնդիրը:

Նախագզու շացումս անհիմն չէր, բայց ուշացած էր, նույնիսկ համոզված չեմ, թե հարևանս հասցրեց լսել վերջին բառերս՝ նրան ցած գլորեցին: Դա կատարվեց այնքան արագ, որ չհասցրի տեսնել հրողին, սակայն կասկածում եմ, որ դա արեց մեզնից մի աստիճան ցած կանգնած մոխրագույն կոստյումով մարդը՝ միամիտ երևալու իր ճգնանքով չափն անց է կացրել՝ հասնելով համարյա մանկական արտահայտության, որ անբնական էր ու զավեշտալի: Քիչ անց նրան պարան նետեցին, ինչը հաստատեց իմ կասկածը: Վեր մազ-

ցելիս նա թունոտ հայացք զցեց իմ կողմը:

Սկսեցի շնչասապառ լինել, սակայն կանխագագացումը, թե ետընթացն ուր որ է ավարտվելու է, նոր լիցք հաղորդեց՝ ավելի աշխույժ շարժեցի ոտքերս, նույնիսկ թվաց, թե հաջողվել է ոչ միայն մնալ տեղում, այլև մի քանի աստիճան վեր գնալ:

Գլուխս կախ՝ նայում եմ դոփող ոտքերիս տակից փախչող սանդուղքին. շրջակա իրարանցումին լավ է հիմա չնայել՝ ավելորդ հույզերն արագացնում են ուժասպառությունը: Սակայն սուր ճնոցը, այնուամենայնիվ, ստիպում է բարձրացնել հայացքս: Հավասարակշռությունը կորցրած կինը սլանում է ուղիղ ինձ վրա: Եվս մի քանի աստիճան՝ և նա իմ գրկում է: Ջգում եմ կնոջ մարմնի տաք հպումը, նույնիսկ հասցնում եմ հիանալ գեղեցիկ դեմքով... Բայց՝ միայն այդքանը. նրան պահել չեմ կարողանում, որովհետև ինչ-որ մեկը հարվածում է ոտքիս և քիչ է մնում ինքս էլ գլորվեմ: Հավասարակշռությունս պահպանելու համար ինքնաբերաբար տարածում եմ ձեռքերս, և նա, դուրս սահելով իմ գրկից, շարունակում է գլորվել: Ձեռքիս է մնում է մետաքսյա փափուկ, երկնագույն գլխաշորը:

- Պահեք նրան,- գոռում եմ:

Նրան, իհարկե, ոչ ոք չի պահում. շարունակում է գլորվել, գարկվում է բազրիքին, շրջվում գլխիվայր ու անաղմուկ գահավիժում անդունդը: Գուրոշու մակերեսին մի պահ երևում են ցրված մագերը, ծաղկավոր շրջագգեստը, մերկացած ոտքերը, կապույտ կոշիկները, և կինն իսպառ չքանում է մշուշում:

Երկար նայեցի նրա ետևից: Լավ է, որ ետընթացն ավարտվել էր, այլապես այդ զգացմունքային գեղումը թանկ կնստեր վրաս:

Սանդուղքը առաջ է շարժվում:

Վերջապես ազատ շունչ քաշեցինք: Քիչ անց կսկսեմ քննարկումները: Բայց ես խոսելու տրամադրված չեմ: Անդունդ ընկած կնոջ աչքերը ոչ մի կերպ չեն հեռանում մտապատկերիս միջից: Տարօրինակ է, ինչու՞ էր այդպես համակերպված իր վիճակին, ինչու՞ ջանք չէր գործադրում փրկության համար: Գուցե հոգնե՞լ էր մաքառումից ու անձնատուր եղել ճակատագրին: Բայց չէ՞ որ ջահել է ու գեղեցիկ: Կռահում եմ, որ «գեղեցիկը» կապ չուներ տրամաբանության ընթացքի հետ, ըստ երևույթին՝ չգիտակցված ցանկություն էր՝ նրա գեղեցիկ լինելը մեկ անգամ էլ հիշելու:

Անցան օրեր, սակայն ես ոչ միայն չմոռացա նրան, այլև, անընդհատ բորբոքելով երևակայությունս, կարողացա մտերմանալ հետը.

«- Շնորհակալ եմ, եթե դուք չլինեիք...- նա ժպտում է:

- Շատ գեղեցիկ եք:

- Չափազանցնում եք:

- Ամենակին: Գիտե՞ք, միասին ավելի հեշտ կհաղթահարենք այս ճանապարհը:

- Բեռ չե՞մ լինի:

- Ոչ, ինչ եք ասում»:

Եվ այսպես շարունակ, այլևայլ տարբերակներով: Երևակայությունս ավելի էր բորբոքում նրա մազերի բույրը պահպանած մետաքսյա գլխաշորը, որ կապել էի վզիս: Սակայն յուրաքանչյուր երևակայական երկխոսությունից հետո վերադարձն իրականություն ավելի ու ավելի տհաճ էր: Ինձ միայնակ ու օտարացած էի զգում: Մռայլված հայացքով նայում էի վեր՝ Վարդագույն լուսասակին, և նրա ճաճանչները մի տեսակ կեղծ էին թվում, իր ամբողջ շքեղությամբ հանդերձ՝ ինչ-որ անբնական, սինթետիկ բան կար այդ վարդագույն լույսի մեջ, որ նախկինում չեմ նկատել: Գուցե հիմա էլ այդպես չէր, տրամադրությունս էր մեղավոր պարզապես:

- Է, եղբայր, ձեռքից գնում ես,- ասում է մի աստիճան վեր կանգնած ծերուկը՝ հեզմական ժպիտը երկար վրաս պահելով:- Ես վաղուց էի կասկածում, որ դու երազող ես: Զգույշ մնա, շարժասանդուղքը ռոմանտիկներին չի սիրում:- Իմ կործանումը կանխատեսող նրա հայացքը միայն արտաքինապես է ցավակցող, խորքում ջերմանում է նենգ չարախնդությունը:

- Դեռ ո՞րք ես, փլատակ,- չկարողացա ինձ զսպել:- Ի՞նչ ես այդպես կառչել սանդուղքից, այն կողմ անցնելու ժամանակն է:

- Ի՞նչ...- ծերուկը թունոտ ծիծաղեց և անսպասելիորեն դեմքիս դեմ տվեց երեք մատների կոմբինացիան՝ այնքան մոտիկ, որ բութ մատը քսվեց այտիս.- Սա տեսնու՞մ ես, փվնքոտ:

Նշան բռնեցի ծնոտին, բայց հարվածի պահին նա մի քիչ իջեցրեց գլուխը, և բռունցքս դիպավ քթին:

- Դեռ կզոջաս,- չարությամբ նետեց նա՝ թքելով բերանը լցվող արյունը:

Ձայրույթս սկսեց արագորեն մարել՝ տեղը զիջելով խղճի խայթին: Ոչ, տրամաբանորեն հեռու էի ինձ մեղադրելուց, սակայն խիղճը, հավանաբար, միշտ չէ, որ ենթակա է տրամաբանությանը:

Հաջորդ ետընթացն ինձ համար վերջինը եղավ: Չտեսա՞ ով իրեց, կարծում եմ՝ ծերուկն էր. երբ գլորվում էի, վերից լսվեց նրա թունոտ ծիծաղը: Փորձեցի կանգնել, բայց ետ գնացող սանդուղքը փախցրեց ոտքերս ու փռվեցի: Երկրորդ փորձս ավելի հաջող էր, սակայն նոր էի պատրաստվել ուղղելու մեջքս, երբ մի ուժեղ աքացի դարձյալ տապալեց ինձ: Կորցնելով կողմնորոշումս՝ ինքս չզգացի, թե ինչպես հայտնվեցի բազրիքի այն կողմում՝ անդունդի պռնկից կախ: Մատներս կառչել էին շարժվող բռնակից, որն ինձ ետ էր քարշ տա-

լիս: Հարկավոր էր ձգվել, քանի ձեռքերս չեն ուժասպառվել: Սակայն ինչ-որ մեկը, ասես կռահելով մտադրությունս, ոտքով հարվածեց մատներիս: Ցավը սաստիկ էր, բայց դիմանում էի և քիչ անց, այնուհանդերձ, փորձեցի մագլցել: Այս անգամ երկի փայտով հարվածեցին: Մատներս այլևս անկարող եղան ենթարկվել գիտակցության աղերսանքին և բացվեցին դավաճանաբար: Ճեղքելով գաղջ գոլորշին՝ սուրացի ցած: Տարօրինակ է, ընկնելու ժամանակ վախին միախառնվեց պստիկ մի հետաքրքրություն, որն առավել շոշափելի դարձավ արդեն անդունդի հատակին, երբ շրմփացի թաց հողաթմբին, շարժեցի ձեռուտոս և հասկացա՝ ողջ եմ:

Ցավում էր մեջքս, մի փոքր էլ ծոծրակս. վայրէջքը շատ ավելի բարեհաջող էր, քան կարող էի պատկերացնել: Ցավը միանգամայն տանելի էր, նույնիսկ հաճելի, որովհետև հիշեցնում էր ողջ մնալու: Հեշտորեն ոտքի կանգնեցի և նայեցի վեր. հայացքս թաղվեց գոլորշու մեջ: Նույն գոլորշին էր, սակայն նրան նայում էի արդեն վարից: Այնտեղ, վերևից, խուլ արծազանքներ էին լսվում՝ արթնացնելով հայրենաբաղձության նման ինչ-որ զգացումներ:

Կանգնած էի Անհայտության պատին մոտիկ, շարժասանդուղքի տակ: Աղոտ լույսը սառնորեն արտացոլվում էր թաց, լայրծուն գետնին: Հանկարծ հնչեց բարձրախոսի անկիրք ձայնը՝ «Բարի գալուստ Անհաջողակների քաղաք»: Շրջվեցի ձայնի կողմը և տեսա այդ քաղաք կոչվածը. նեղ, մութ, ցեխոտ փողոցներ, խարխուլ տներ, որոնց հագիվ լուսավորված կեղտոտ պատուհանների ետևում ալարկոտ ստվերներ էին շարժվում, ծուռտիկ հեռագրասյուներ, ջարդված լապտերներ, աղբակույտեր, որոնցում վխտում էին առնետները:

Մրսում էի, ծխել էի ուզում: Քրքրեցի գրպաններս, բայց սիգարետ չգտա: Քայլեցի պատի մոտով: Կաչուն ցեխը դժվարացնում էր քայլելը: Շրջակայքից գարշելի հոտ էր գալիս:

Շուտով հանդիպեցի մազակալած դեմքով մի ցնցոտիավորի, որ նստած էր չեչոտ քարին՝ պատից հեռու, և ուշադիր նայում էր վեր: Ինձ նկատելով՝ հարցրեց.

- Նոր ընկա՞ր:

- Ի՞նչ իմացար:

- Նորեկներն են սանդուղքի տակով քայլում: Ես կողմ արի: Իմ նստած տեղից ավելի մոտ գնալը վտանգավոր է,- զգուշացրեց նա:- Այսինքն՝ քո գործն է, բայց խորհուրդ չեմ տալիս:

- Ինչու՞:

- Վերևից թքում են, խնչում, բան-ման գցում...

- Պարզ է:

Հենց այդ պահին, ասես ցնցոտիավորի ասածը հաստատելու համար, վերից ինչ-որ գարշահոտ զանգված ընկավ և ծեփվեց գետնին, ցայտերը նախշեցին կոշիկներս:

- Էժան պրծար,- նկատեց ցնցոտիավորը:
- Ծխելու բան չունե՞ս,- հարցրեցի:
- Չէ:
- Ծխել եմ ուզում: Խանութը հեռու՞ է:
- Նստիր ու սպասիր:
- Ինչի՞նչ:- Այնուամենայնիվ նստեցի նրա կողքին, քարի վրա:

Նա թեթևակի բարձրացրեց կարկատած լայն տաբատի միջից հագիվ նշմարվող ոսկրոտ հետույքը, տակից հանեց լրագրի խուճնացած էջը, կիսեց ու կեսն ինձ տվեց.

- Քարը խոնավ է, դիր տակդ: Հեմոդոյը դեռ ոչ ոքի երջանկություն չի բերել:
- Թու՞ղթն է, որ պիտի փրկի:
- Կարևորը համոզմունքն է, որ քո մասին հոգ ես տանում:
- Չասացիր, թե ինչի ենք սպասում:- Թուղթը դրեցի տակս:
- Ծխել չէիր ուզու՞մ:
- Վերի՞ց,- վերջապես կռահեցի ես:

- Բա էլ որտեղի՞ց:- Նա լռեց ու կտրուկ վեր նայեց:- Ահա, ինչ-որ բան է իջնում:

- Իսկ եթե նորից...
- Կղկղա՞նք... Չէ, նման չի: Բայց ծխախոտ էլ չի:- Նա վեր թռավ տեղից, վազեց պատի մոտ ու ճարպկորեն որսաց ընկնող իրը՝ օգտագործելով գրպանից արագորեն հանած ցանցը:- Մտով կարկանդակ է: Սոված չե՞ս:

- Ոչ:- Զգվանքով նայում էի մասամբ կերված կարկանդակին:
- Է, եղբայր, քո բանը դժվար կլինի, զգվողներն ազատ ապրել չեն կարող, ստիպված ես լինելու աշխատել, բայց, իհարկե, ոչ սպիտակ վերնաշապիկով ու փողկապով,- նա մատնացույց արեց հագուստս և ծիծաղեց:- Էստեղ հագուստիդ համապատասխան աշխատանք չկա:

Լռեցինք: Պատի տակ ինչ-որ բան կայծկլտաց:

- Ահա և սիգարետը,- ասաց ցնցոտիավորը:- Վերցրու, ծխիր, ես դեռ պետք է սնվեմ, կարկանդակի այս փառապետ մնացորդն ինձ է սպասում: Եթե զգվում ես, մի հարմար խողովակ գտիր ու սիգարետը մեջը մտցրու: Այ այն ապակյա խողովակի կտորը կարծես հարմար է, այն, որի ծայրը ցցված է փալասների միջից:

Չսխալվեց, նրա ցույց տված խողովակը,- նախկինում քիմիական կամ բժշկական ինչ-որ սարքի մաս,- ասես հատուկ նախատեսված

էր ծխամորձի տեղ օգտագործելու համար:

- Հետո դեմ չգցես, էլի պետք կգա,- զգուշացրեց ծանոթս:- Չես ուզի՞ ինձ կտաս:

Թաշկինակով մաքրեցի խողովակի ծայրը և սիգարետը մյուս ծայրին հագցնելով՝ ծխեցի: Ծխելու ընթացքում, սովորության համաձայն, անհանգիստ նայում էի շուրջս: Ցնցոտիավորը նկատեց և քմծիծաղեց.

- Հանգիստ վայելիր, սանդուղքի վրա չես, ոչ ոք չի հրի, ու՞ր հրեն: Նորից նստեցի չէջոտ քարին, որի ծակոտկենությունը պարզորոշ տպվել էր վրան դրված թերթին: Ծանոթս հոտոտեց սիգարետի ծուխը:

- Թանկարժեք է,- նկատեց:- Ի՞նչ ֆիրմա է:
- Չգիտեմ, չի երևում:

- Ամենավերից գցած կլինեն:- Նա բերանը տարավ կարկանդակը, սակայն վերջին պահին նկատեց ցցված բարակ պարանը:- Ոնց որ առնետի պոչ լինի,- ասաց:- Դրա համար էլ չեն կերել,- անվորով նկատեց, ապա դուրս քաշեց պարանը կամ պոչը և ախորժակով կծեց կարկանդակը:- Այո,- նորից խոսեց՝ ծամելով,- աշխատանք ճարելը հեշտ բան չի, համ էլ՝ քիչ են վճարում, այնպես որ՝ ես գերադասում եմ ազատ լինել: Ես և ինձ նմաններն այստեղ են սնվում՝ սանդուղքի տակ:

- Եթե լավ վարձատրվող աշխատանք լինի, կիրաժարվե՞ս ազատությունից:

- Պրովոկացիոն հարցեր մի տուր: Ազատությունը չի վաճառվում:- Ցնցոտիավորը բերանը խոթեց վերջին պատառը և յուղոտ ձեռքը մաքրեց շալվարի վրա:- Ահա և իմ սիգարետը: Ինչ էլ մոտիկ գցեց ու կարևորը՝ ժամանակին:- Նա բարձրացրեց ծխացող քնթուկը և պատն ի վեր գոռաց:- Շնորհակալ եմ, բարի մարդ:- Ապա դարձավ ինձ.- Մի վիատվիր, այստեղ էլ կարելի է ապրել, կվարժվես աստիճանաբար. մի քիչ ցուրտ է, մի քիչ մութ, մի քիչ կեղտոտ, բայց, փոխարենը, ոչ մի տեղ չես շտապում, շնչասպառ չես լինում, սրան-նրան չես հրում...

Փողոցի մեզ երևացող անկյունում սովերներ հայտնվեցին, մոտեցան միմյանց և սկսեցին փսփսալ: Նրանց գլխավերևում ճռճռալով ճռճվում էր ծուռտիկ լարին կապած երթևեկությունն արգելող նշանը:

- Այստեղ մեքենանե՞ր կան,- հարցրի ծանոթիս, որը երանությամբ վայելում էր սիգարետի մնացուկը:

- Հատուկենտ,- պատասխանեց նա:- Նշանի տակ կանգնածներին տեսնու՞մ ես... Դավադիրներ են:

- Նրա՞նք:
- Կամաց:
- Ինչու՞:
- Լրտեսներ:
- Ի՞նչ լրտես...
- Սովորական: Վերից են ուղարկում: Շենքի մոտի մեծ տակառը տեսնու՞մ ես:
- Տեսնում եմ...- Ջարմանքով նկատեցի, որ տակառը մերթ ընդ մերթ ցնցվում էր ու շարժվում դեպի նշանի տակ հավաքված խումբը:- Մի՞թե...
- Այո: Տակառի վրա երևի անցքեր կան:
- Գուցե ես էլ եմ լրտես, չես կասկածու՞մ:
- Դու՞, - ծիծաղեց ծանոթս:- Լրտեսները չեն շրմբում կեղտի մեջ, նրանք իջնում են մեզ անհայտ ինչ-որ խորշերով: Հետո՞ տեսքդ, պահվածքդ... Ես փորձված մարդ եմ:- Վերից մի փայլուն իր ընկավ:- Օհո՞, - ուրախացավ նա,- մի ամբողջ տուփ, միջից ընդամենը երեք հատիկ է պակասում: Խեղճի ձեռքից դուրս է պրծել երևի: Այսպիսի անուշադիր մարդը շուտով ինքն էլ ցած կգա: Վերցրու՛, մարդավայել ծխենք:
- Իսկ ի՞նչ դավադրություն են պատրաստում նրանք,- ասացի՝ վերցնելով առաջարկված սիգարետը:
- Ուզում են պայթեցնել սանդուղքը:
- Կհաջողվի՞:
- Չեմ կարծում: Լրտեսները լավ են աշխատում: Եվ ի՞նչ իմաստ, ի՞նչ է փոխվելու... Անհաջողակներ այլևս չեն լինի: Ծիծաղելի է:
- Նրանց զգուշացնել է պետք, տակառը շատ մոտեցավ:
- Իրենք արդեն նկատել են: Լսիր:
- Ես լարեցի ուշադրությունս. խումբը երգում էր՝ երգ, որ ոռնոցի էր նման:
- Հարբա՞ծ են ձևանում,- կռահեցի:
- Տեսնում եմ՝ համակրում ես, կարող ես միանալ, եթե ցանկանում ես: Իսկ ես չեմ ցանկանում, ինձ համար այսպես էլ վատ չէ: Կանայք էլ կան, գիտե՞ս: Ճիշտ է, որակի համար չեմ երաշխավորի, բայց դե ուզածդ կնոջ մարմին տաք է... Եթե դիակ չէ:- Ցնցոտիավորն ուրախ քրքջաց սեփական կատակի վրա:- Ի դեպ, այս քանի օրս մի հմայիչ կին ընկավ:
- Երկնագույն գլխաշորով,- անհանգստացած հարցրի ես՝ իսպառ մոռացած, որ գլխաշորն իմ վզին է:- Սև մազերով, ծաղկավոր շրջագետտով...
- Եվ կապույտ կոշիկներով:

- Հիմա որտե՞ղ է:
- Ի՞նչ իմանամ: Բայց հեռու չէր գնա, նոր ընկածները ընկած տեղից շատ չեն հեռանում: Հանգիստ նստիր ու սպասիր. փնտրելու ամենաարդյունավետ միջոցը մի կետում սպասելն է:
- Փնտրել չես սիրում, դավադիրներին չես միանում... Ինչո՞վ ես ապրում:
- Հավատով:
- Ու՞մ կամ ինչի՞ն ես հավատում:
- Անհայտությանը:
- Պատի՞ն:
- Պատին հավատացողները շատ են. հովանոցները քաշում են գլխներին, մոտենում և աղոթում: Խոռոչներում մոմեր չնկատեցի՞ր:
- Ուշադիր չեմ նայել: Ուրեմն՝ պատին չես հավատում:
- Չէ: Ես հավատում եմ նրան, ինչը պատի ետևում է, այսինքն՝ անհայտությանը:
- Իսկ եթե չկա՞...
- Ինչպե՞ս կարող է չլինել անհայտությունը, դա միակ բանն է, որ հաստատ կա: Կուզե՞ս, ինձ միացիր:
- Սպասիր, շունչ առնեմ, նոր ընկա: Իսկ վեր բարձրանալու ոչ մի հնար չկա՞... Դե, ասենք, եթե պատի մեջ աստիճաններ փորենք, կամ էլ՝ պարանով... Ոչ ոքի չի՞ հաջողվել:
- Կարծեմ մի երկուսին հաջողվել է: Երկրորդ անգամ ընկնելն ավելի ցավոտ է:
- Վերից ինչ-որ ստվեր երևաց:
- Մա՞րդ է,- հարցրեցի:
- Չէ: Մարդն էսպես չի սավառնի:- Ծանոթս արդեն ոտքի էր ելել և սավառնող ստվերի տակ այս ու այն կողմ էր վազվզում:- Այ քեզ հաջողություն...- պայծառացավ նա, երբ վերջապես որսաց բաձկոնը:- Ի՞նչ լավն է... Այս անցքը կկարկատենք, կոճակ աղբակույտի մեջ կձարվի... Հոյակապ է:- Նրա հայացքը հանկարծ կտրվեց բաձկոնից և ուղղվեց փողոցի կողմը.- Ի՞նչ էի ասում, տեսա՞ր, որ փնտրելու լավագույն միջոցը տեղում սպասելն է:
- Ես անմիջապես կռահեցի և վազեցի նրա ցուցանած ուղղությամբ:
- Նա էր, երկնագույն գլխաշորի տիրուհին, նրա՛ կապույտ կոշիկներն էին կտկտացնում թաց գետինն իմ առջևում:
- Դու՞ք,- զարմացավ նա, երբ հավասարվեցի իրեն:
- Ճանաչեցի՞ք... Ընդամենը մի պահ տեսնվեցինք այնտեղ՝ վերևում: Ցավում եմ, որ չկարողացա պահել ձեզ:
- Ե՞րբ ընկաք:
- Այսօր:- Քանդեցի վզիս կապած գլխաշորը, սվեցի նրան.- Ահա,

վերցրեք, ձերն է:

- Շնորհակալ եմ:- Նա կապեց գլխաշորը, որը փոքր էր վարսերը լիովին ներառելու համար և գուցե նաև այդ պատճառով՝ շատ էր սազում իրեն:

- Սկսե՞լ եք վարժվել:

- Ես երկրորդ անգամ եմ այստեղ. դա վաղուց էր, ես այն ժամանակ դեռ շատ ջահել էի:

- Հիմա էլ ջահել եք:

- Այո՞...- Նա ժպտաց, հպանցիկ նայեց ցուցափեղկի ապակուն՝ ուղղելով գլխաշորը: Կեղտոտ ապակու ետևից մեզ էր նայում մի ցուցանակ՝ «Վաճառվում են ուրախ դիմակներ: Էժան գնով կարող եք ձեռք բերել ամենալավատեսական ծիծաղը: Կարելի է՝ ապառիկ» և՝ հռեռացող մի ապուշի դիմանկար:

- Ուզում էիք ինչ-որ բան պատմել ոնց որ:

- Վերից,- սկսեց նա,- դեպքից դեպք, տեսչներ են ուղարկում այստեղ: Շրջում են, դիտում, ուսումնասիրում, հարցուփորձ անում, գրի առնում... Մի խոսքով՝ տարբեր ձևականություններ, որովհետև մեկ է՝ ամեն բան մնում է նույնությամբ: Եվ ահա, այդ տեսուչներից մեկը՝ համակրելի մի երիտասարդ, սիրահարվեց ինձ ու տարավ վեր: Սկզբում ամեն բան լավ էր, նույնիսկ՝ շատ լավ: Բայց հետո նա դարձավ ավելի ու ավելի անտանելի: Յուրաքանչյուր առիթով հիշեցնում էր, թե որտեղից է ինձ դուրս քաշել, թե որքան երախտամոռ եմ և այլն: Մնում էր ամեն օր մոմ վառելի առջևը: Չդիմացա՝ փախա նրանից: Բայց զգոնությունս կորցրել էի, ճիշտ կողմնորոշվել չկարողացա ու գլորվեցի:

- Ցավալի է: Ամենավերևում էիք:

- Համարյա: Վարդագույն Լուսապսակն այնքան մոտ էր, որ թվում էր՝ բավական է ձեռքս մեկնեմ ու կդիպչեմ:- Նա մտասույզ եղավ:- Գիտե՞ք, ինձ թվում է մեծ, հարատև երջանկություն չի լինում: Ի՞նչ եք կարծում:

- Գուցե:

- Բայց փոքր ուրախություններն էլ մի բան արժեն, չէ՞:

Այդպես զրուցելով քայլում էինք ցեխոտ, մութ, ծուռտիկ փողոցով:

ԱՂՋԻԿԸ, ԺԱՄԱԳՈՐԾԸ, ԵՍ

Առավոտից նյարդային անբացատրելի լարվածության մեջ եմ:

Վերջերս առհասարակ անհանգիստ եմ դարձել, անհանգիստ ու զգուշավոր: Պատճառն ըստ երևույթին հետապնդումն է՝ ինձ հետապնդում են: Չեմ կարող հաստատապես պնդել, թե ճանաչում եմ հետապնդողին, - կասկածները որպես փաստ ընդունել չեմ ցանկանում, - բայց ես լսում եմ նրան՝ նրա ձայնը, որ նման է ժամացույցի տկտկոցի կամ քունքերի մեջ արծազանքող սրտխփոցի: Երբ միայնակ եմ՝ լսելի է միայն սեփական տկտկոցս, սակայն երբ մարդկանց մեջ եմ՝ ականջներս է լցվում անհամար տկտկոցների ժխորը:

Ժխորն այսօր հատկապես բարձր է: Փորձեցի ականջներս բամբակով փակել: Ժխորը նվազեց, փոխարենը, սակայն, ուժգնացավ ներքին տկտկոցս, յուրաքանչյուր զարկի հետ այն ասես ծակում է ուղեղս. դա նման է հատուկ հրացանով բետոնի մեջ մեխ խփելուն: Հանեցի բամբակը. այսպես առավել տանելի է: Սակայն ամենուրեք ուղեկցող այդ աղմուկն ինձ վերջնականապես հանել է հավասարակշռությունից, ես ապակողմնորոշվել եմ, և կամազուրկ հետևում եմ հետապնդողին - տարօրինակ է՝ հետապնդողը նաև առաջնորդում է:

Գործից հետո, ամեն երեկո, ես արագ քայլում եմ տուն տանող ամենակարճ ճանապարհով, որպեսզի բոլոր առաջ հասնեմ և միացնեմ հեռուստացույցը: Սակայն այսօր, որքան էլ տարօրինակ է, տուն հասնելու համար ընտրել եմ բեկբեկուն մի շրջագիծ, որն անհամեմատ երկարացնում է ճանապարհը: Իսկ այս երեկո վերջին մասն է. իր խորհրդավորությամբ սարսեցնող, միևնույն ժամանակ սաստիկ ձգող հեռուստաշար է՝ «Մահվան դեմքը»: Վարողն էլ շատ հաջող է ընտրված. ցածր, թավ, ասես այլչափումային ձայնով, արձանի պես անհույզ, սակայն գրավիչ, կանոնավոր դիմագծերով ու կազմվածքով ջահել կին է, որին նախկինում երբեք չեմ տեսել, գուցե միայն այս հեռուստաշարի համա՞ր եմ հրավիրել... Սակայն զարմանալի է, այսօր երբ խոսք բացեցի այդ հաղորդման մասին, պարզվեց, որ աշխատակիցներիցս ոչ ոք այն չի դիտում, ավելին, նրանք պնդում էին, թե նման հաղորդում առհասարակ չկա: Բայց չէ՞ որ ես դիտում եմ այն ահա արդեն մի քանի օր: Նրանք ծիծաղեցին՝ ասելով, որ իմ հեռուստացույցը հավանաբար աշխատում է ու-

րիչ ինչ-որ չափման ծրագրով: Կարծեցի՝ կատակում են, ցանկանալով զվարճանալ իմ շփոթությամբ: Սակայն հետո ինձ ցույց տվին ծրագրաթերթը, և ես համոզվեցի՝ նման հաղորդում իսկապես նշված չէ: Մութ խնդիրը պարզաբանման կարիք ուներ, և ես հավանորեն երկար կմնայի մտատանջությունների գրկում, եթե չլիներ հետապնդումը, որի խորհրդավոր հևքը թույլ չէր տալիս երկար կենտրոնանալ որևէ կողմի վրա: Եթե այնուամենայնիվ ցանկանում էի կենտրոնանալ՝ նախ պետք է հաշտեցնեի այդ երկուսին: Սակայն կասկած ունեմ, թե նրանք առանց այն էլ բարեկամներ են՝ դավադիրներ, որ դուրս են իմ միջամտության հնարավորությունների սահմանից: Ամենախելամիտը՝ ժամանակին ապավինելն է կարծում եմ. չէ՞ որ արդեն ընթացքի եմ դրված: Դրա մի ապացույցն էլ ճանապարհս երկարացնող շրջուղին է, որով հիմա գնում եմ՝ կամքիս հակառակ: Անշուշտ, միամտություն է կարծել, թե այս շրջագիծը միայն երկարացնում է ճանապարհս. ո՞րն է ապացույցը, թե շրջագիծն ինձ ի վերջո տուն է հասցնելու:

Կանգառում ցուրտ է, ավելի ցուրտ, քան շրջակայքում: Օդը թափանցիկ է, մի տեսակ բյուրեղային, և իմ յուրաքանչյուր շարժում կարծես փշրում է այն: Մթնոլդ երկինքը մակարդվող արյան գույն ունի:

Բարձրացա ավտոբուս և հետո միայն հիշեցի, որ երթուղային համարին չեմ նայել: Իհարկե, տվյալ իրավիճակում, ավելի ճիշտ՝ հոգեվիճակում, համարի խնդրով ծագած անհանգստությունս ծիծաղելի էր, սակայն, այդուհանդերձ, տուրք տվի հետաքրքրության և մոտեցա ուղևորներին: Նրանք ընդամենը երեքն էին՝ անկիրք դեմքերով մարդիկ, որոնց սեռական պատկանելությունը կռահել դժվարացա:

- Ներեցեք...- սկսեցի, բայց չշարունակեցի, որովհետև նրանք արդեն թոթվեցին իրենց ուսերը և մատնացույց արին վարորդին: Ես մոտեցա նրան:

- Կներեք, համարին մոռացա նայել, ո՞ր երթուղով եմք գնում:
- Ի՞նչ տարբերություն,- առանց իմ կողմ շրջվելու պատասխանեց վարորդը՝ աչքերին իջեցնելով վանդակավոր կեպին: Բոլոր երթուղիներն այնտեղ են տանում: Կուզե՞ս, ուղևորներին հարցնեմք: Նա վերցրեց բարձրախոսը և հարցրեց.- Ես ճի՞շտ եմ ասում:
- Ճիշտ ես ասում, իհարկե,- միաձայն պատասխանեց հերոնֆրոդիտ ուղևորների եռյակը:
- Լսեցի՞ր,- ինձ դարձավ վարորդը.- Այնպես որ, հանգիստ նստիր և սպասիր: Ավելորդ հարցեր էլ չտաս, վարորդի ուշադրությունը շեղել չի կարելի:

Նստեցի: Վարորդի հայելու մեջ մի պահ որսացի դժգույն, լարված դեմք: Վարորդի դեմքն այդպես էլ չտեսա:

Մեքենան կանոնավոր կանգ էր առնում բոլոր կանգառներում: Սակայն ոչ ոք չէր մտնում, և դա այն դեպքում, երբ կանգառները լեցուն էին սպասողներով: Մարդիկ նայում էին մեքենային և կասկածանքով մի կողմ քաշվում: Վարորդը մի քիչ սպասում էր, փակում դռները և ընթանում առաջ: Իսկ ինչու՞ «առաջ»... Ի՞նչ իմանամ՝ ուր ենք գնում, գուցե ե՞տ...

- Ետընթաց չկա, ետընթացը հակասում է դիալեկտիկային,- բարձրախոսով հեզնում է վարորդը: Ծուղակ է, հարգելիս, ծուղակ. ետընթաց չկա, իսկ առաջընթացը տանում է վերջին: Սրահում կարող ես ետ քայլել, սակայն միևնույն է, մեքենան առաջ է սլանում՝ տանելով քո միամիտ վրդովմունքը, այնպես որ՝ իզուր ես տագնապում, քեզնից ոչինչ կախված չէ, հանգիստ նստիր տեղդ:

- Նստիր, նստիր, քեզնից ոչինչ կախված չէ,- կրկնեց անկիրք եռաձայնը:

Հերթական ուղրանից հետո կտրուկ վայրէջք սկսվեց: Մեքենայի արագությունն աստիճանաբար մեծանում էր: Մայթերը, շենքերը, մարդիկ կայծակնապես փախչում էին մեր կողքերով: Քիչ անց շրջակայքը վերածվեց մուգ կետերով լցոնված մածուցիկության, որը ձեղքելով մենք սլանում էինք ավելի ու ավելի մեծ արագությամբ:

- Ահա,- անվրդով ասաց վարորդն ու հորանջեց,- արգելակները հրաժարվում են աշխատել: Նա սեղմեց կոճակը, և մեքենայի դռները շրխկալով բացվեցին.- Խնդրեմ, ցանկացողները կարող են դուրս գալ:

Ուղևորները ծիծաղեցին խամաճիկային եռաձայնով: Տարօրինակ է, սակայն հայտնաբերեցի, որ ես էլ եմ ծիծաղում:

Մեքենան խփվեց մայթեզրին, երեքալով բարձրացավ մայթ, հարվածեց ինչ-որ բանի և դղրդաց: Աչքերս փակեցի: Լսվեց պատռվող թիթեղի ձռննչ, փշրվող ապակու գնգոց, ապա ցնցվող մեքենան փնջացրեց և անշարժացավ: Իներցիայի ուժն ինձ թափով մի կողմ նետեց:

Բերանքսիվայր ընկած էի փոշոտ հատակին: Փործեցի բարձրանալ. զարմանալի է, սակայն դա ինձ հաջողվեց անսպասելիորեն հեշտ: Ճիշտ է, գլուխս և կուրծքս ցավում էին, սակայն՝ միանգամայն տանելի: Նայեցի չորսբուլդոզ: Ուղևորները չկային, վարորդն էլ էր չքվել: Մի կերպ դուրս սողացի ծռմռված դռների արանքով և հայտնվեցի մայթին:

Մեքենայի շուրջն արդեն մարդիկ էին հավաքվել:
- Խեղճ երեխա,- լսեցի կողքիս կանգնած մեկի ձայնը:

- Երևի դպրոցից տուն էր գնում,- ասաց մեկ ուրիշը:

Ջարդված մեքենայի քիթը՝ բուլդոզի կնճռոտ մռուխ, դեմ էր առել բետոնե հաստ սյանը, սակայն արանքում ինչ-որ բան կար... շագանակագույն գործվածքի ծալք: Մոտ գնացի: Վերարկու էր, վերարկու, որը մեքենայի և սյան միջև մնացած աղջնակի հագին էր: Չեղանիս ընկած էր դպրոցական պայուսակը:

- Մեքենան հրենք,- առաջարկեց մեկը:

Ծանր մեքենան հրելը հեշտ չէր, սակայն մեզ հաջողվեց մի փոքր ետ տալ այն: Մամլումից ազատված՝ աղջնակի անշնչացած մարմինն ընկավ պայուսակի կողքին: Սոսկալի տեսարան էր. երեարկով մի կողմ քաշվեցի: Քիչ հետո, երբ գլխապտույտս անցավ, զգացի, թե ինչպես է ուժգնանում տկտկոցների ժխորը, իսկ երբ նայեցի շուրջս, հանկարծ տեսա մի բան, որ նախկինում անտեսանելի էր ինձ՝ մարդկանցից յուրաքանչյուրի գլխավերևում մի մուգ պսակ կար, որում արագ թարթում էին ֆոսֆորային թվանիշեր: Նույնպիսի պսակ կար նաև աղջնակի գլխավերևում, սակայն նրա թվացույցը կանգ էր առել, անփոփոխ թիվը թրթռում էր՝ հավանաբար մարմնի մեջ ինչ-ինչ կենսական պրոցեսներ դեռևս շարունակվում էին, բայց քիչ անց ժամացույցն իսպառ մարեց:

Փողոցային շան գլխավերևում նույնպես թարթում էր թվացույցը: Շուրջ փորձում էր մոտենալ դեպքին: Ինչ-որ մեկը խփեց նրան: Շուրջ կաղկանձելով՝ փախավ և հեռվում նստած՝ շարունակեց հետաքրքրված նայել անցուդարձին:

- Խեղճ երեխա, տանը հիմա նրան անհամբեր սպասում են:

Շրջվեցի: Նրանք կանգնած էին ետևում՝ անկիրք դեմքերով այն երեք ուղևորները: Նրանք նորից միաձայն էին խոսում:

- Նրա ընթրիքը հիմա սեղանին սառչում է:

- Էհ, վազվզում ենք, թռչկոտում... Իսկ ժամացույցները կտկտում են, և ոչ ոք չգիտի ժամը,- շարունակում էր եռյակը,- միայն նա գիտի, Նա: - Եռյակն ակնածանքով մատնացույց արեց քիչ հեռու կանգնած մարդուն, վերջինս հանեց կեպին և համեստորեն խոնարհվեց: Նա էր՝ վարորդը: «Ահա նա, բռնեք»,- գոռացի, սակայն կոկորդիցս ձայն դուրս չեկավ, պարզապես բացուխուփ էի անում բերանս՝ ափ ընկած ձկան պես: Վարորդը ծիծաղեց՝ ծամածռելով հողագույն դեմքը: Գլխարկի եզրից սարդոստայնի զգվելի ծվեն էր կախված: Մինչ դուրս կգայի քարացումից, վարորդն անհայտացավ, չքվեց նաև եռյակը:

Մթնել էր: Թույլ անձրև էր մաղում: Ճռճռալով ճոճվում էին լապտերները՝ աղոտ լուսաթփեր տարուբերելով թաց գետնին: Քայլում

էի ճլմփացնելով փոսորակներում հավաքված անձրևաջուրը: Տիպիկ հոտ էր տարածվել, ինչպիսին լինում է անձրևաթափի առաջին պահերին: Չգիտեի՝ ուր եմ գնում, պարզապես աննպատակ թափառում էի: Հիմարություն, աննպատակ ոչինչ չի լինում, լինում են շատ խոր թաքնված չգիտակցվող նպատակներ, որոնց թաքուն դրդմամբ կատարած գործողություններին նպատակի բացակայություն ենք վերագրում:

Մութ շքամուտքում գրկախառնված՝ տկտկում էին տղան ու աղջիկը:

- Սիրում եմ,- տկտկաց տղան:

- Կրկնիր... ընդհատվող տկտկոցով խնդրեց աղջիկը:

- Ես քեզ հավերժ սիրելու եմ:

Հեռացող ականջներիս մեջ որոշ ժամանակ դեռ արձագանքում էր վերջին տկտկոցը՝ «Հավերժ, հավերժ, հավերժ...»:

Փողոցի անկյունում առջև բուսնեց մի ծերուկ՝ ձեռնափայտին հենված փլատակ: Երբ անցնում էի կողքով՝ իր չոր մատներով հանկարծ ամուր բռնեց թև:

- Օգնիր անցնեմ:- Ծանոթ երանգ կար այդ ճռճռան ձայնի մեջ:

Ծերուկը կախ ընկավ թևիցս, և ես նրան քարշ տվի դեպի մյուս մայր: Հանկարծ տեսա, որ փողոցի ծայրից կատաղի արագությամբ մեր կողմ է սլանում լույսերն անջատած մի մեքենա: Փորձեցի արագացնել քայլերս, սակայն ծերուկը մեխվեց տեղում՝ ո՛չ ինքն է շարժվում, ո՛չ ինձ է թողնում: Մեքենան սուրաց՝ քսվելով վերարկուիս փեշին: Սիրտս ահաբեկված տրոփում էր: Իսկ ծերուկը հանկարծ սկսեց քրքջալ: Ճանաչեցի՝ վարորդի քրքիջն էր, այո, վարորդն էր: Սակայն մինչ բերանս կբացեի, վարորդ-ծերուկը թողեց թև և վազեց գիշերային փողոցով: Շենքի տանիքից երեք ազռավ պոկվեցին և թռան նրա ետևից: Շուտով թե՛ ազռավների կռկռոցը, թե՛ վարորդի ոտնաձայները մարեցին փողոցի ծայրում:

Տկտկում էին ծառերը, տկտկում էր թաց խոտը, անձրևն ու քամին, մայթերն ու շենքերը, տկտկում էր ամբողջ երկրագունդը, գուցե՛ն՝ տիեզերքը: Փակեցի ականջներս, այդպես, ականջներս ձեռքերով սեղմած, մտա զբոսայգու ծառուղին, որի եզրերով շարված հանգած լապտերներն առավել էին շեշտում ընդհանուր մթությանը: Անձրևն անսպասելիորեն կտրվեց, ցուրտը սկսեց սաստկանալ: Միակ լուսարձակող լապտերին հենված հարբեցողն ինչ-որ բան էր ասում: Ականջներս բաց թողի, որպեսզի լսեմ, բայց էլ չխոսեց:

Պուրակից դուրս էի գալիս, ծառուղին աննկատ վերածվել էր ցե-

խոտ արահետի: Քայլելը դժվար էր, ներքաններս ծանրացնում էր կաչուն ցեխը: Արահետի երկու կողմերում աղբակույտեր երևացին, վխտում էին առնետները, տեղ-տեղ նրանք այնքան շատ էին, որ դիտվում էին ինչպես խլրտացող ամբողջական զանգված: Մի աղբակույտից մյուսը վազելիս առնետները հաճախ սուրում էին ուղղակի ոտքերիս առջևով, պատահում էր՝ նաև վրայով:

Աղբակույտերը մնացին ետևում, դրանց փոխարեն հայտնվեցին շիրմաքարերը՝ գերեզմանատուն էի մտնում:

Այստեղ կատարյալ լռություն է, խորհրդավոր լռություն: Լարվել էի սեղմված զսպանակի պես և դարձել զգայուն, ինչպես շիրմաքարի վրայից ինձ հետևող կատվի բիբը: Երբ ծափ զարկեցի՝ նպատակս ոչ այնքան կատվին քշելն էր, որքան սեփական ես-ը վերջապես զգալը: Ծափս ճայթեց լռության մեջ և աստիճանաբար մարեց՝ արծազանքելով ավելի ու ավելի հեռվում:

- Շշ, կամաց...

Կինը նստած էր ճամփեզրի ցածրիկ նստարանին, ինձ շատ մոտիկ. ինչպե՞ս չէի նկատել... Սիրտս անսպասելիորեն սեղմվեց, լուռ նստեցի նրա կողքին՝ այնքան մոտիկ, որ մեր ծնկները քսվեցին միմյանց: Իսկ նստարանը երկար էր. մի՞թե սեռական բնազդն իրեն չի կորցնում մուսկիսի այնպիսի հզոր հույզի ներկայությամբ, ինչպիսին վախն է: Նստած եմ և զգում եմ կանացի մերկ ծնկի հաճելի հպումը: Լուսնի լույսով երևում է նրա սիրունիկ կիսադեմը, պաղած հոգիս սկսում է ջերմանալ:

- Մի գրկիր,- կինը ցույց է տալիս շիրմաքարերը,- նայում եմ:

- Թքած, մի վախենա,- նրա գեղեցիկ ազդրերը մեջս քաջություն են ծնել, ավելի ճիշտ՝ նրանք բթացրել են վախը, և քաջության ծնունդն այս դեպքում արդեն մի մեծ քաջություն չէ:

- Ե՞ս վախենամ,- ծիծաղում է՝ շողշողացնելով ձերմակ ատամնաշարը: Սակայն նրա ծիծաղի մեջ ինչ-որ անբնական երանգ կա: Այտին մի սիրուն փոսիկ է գոյանում: Մի փոքրիկ փոսիկ էլ ողորկ դնչիկին կա: Այո, նրա ծայնի մեջ տարօրինակ երանգ կար, սակայն փոսիկների հմայիչ խաղը մոռացնել է ստիպում այդ բանը: Մոտեցնում եմ ընդհատվող շնչառությունս. նա անսպասելիորեն իմ կողմն է շրջում դեմքը, և մեր շուրթերը հանդիպում են: Նրա բերանը հողի համ ունի: Սակայն ես դա չեմ զգում: Ես չեմ նկատում նրա մազերից կախված սարդոստայնը:

- Ժամ առաջ ատում էիր ինձ, հիմա համբուրում ես: Ի՞նչ փոփոխական է կյանքը:

- Ո՞վ ես,- սթափվեցի ես ու նոր միայն նկատեցի, որ կինը նման է

այն առեղծվածային հեռուստաշարի վարողին:

- Ժամագործ եմ. այսօր քո տեսած բոլոր ժամացույցները ես եմ սպասարկում: Կարող եմ նաև վարող լինել կամ՝ վարորդ,- ծիծաղեց նա: Դա արդեն վարորդի ծիծաղն էր: Նստարանի տակից հայտնվեցին կատուները և մլռտալով փարվեցին նրա ոտքերին: Կատուները միաձայն էին մլռտում: Նրանք երեքն էին, մեկը՝ շիրմաքարի վրայից քիչ առաջ ինձ հետևող կատուն էր:

- Այո,- ասացի՝ ինչ-որ բան ասած լինելու համար: Ձեռքս շարունակում էր գրկած պահել նրա մեջքը:

- Այո,- կրկնեց նա:- Հիմա մենք մտերիմնե՞ր ենք:

- Աղջնակը մեղք էր:

- Ի՞նչ կարող եմ անել, նրա ժամացույցն այդ ժամի վրա էր լարված: Լարողը ես չեմ, ես միայն սպասարկում եմ, ես կատարածու եմ: Դու ճիշտ վարվեցիր, ինձնից խուսափել անհնարին է, ճիշտը մտերմանալն է: Դա դժվար բան է, բայց քեզ հաջողվեց: Այսուհետև դու ընթանալու ես հակառակ ուղղությամբ՝ որպես ելակետ ընդունելով ինձ:

- Դա ինձ ի՞նչ է տալու:

- Հասկանում եմ: Սակայն միամիտ մի եղիր, հակառակ ուղղությամբ ընթանալը հավերժություն չի նախատեսում:

- Ուրեմն քեզ ճանաչելը միայն ավելացնում է տառապանքը:

- Բայց ինձ չճանաչելը հեռու է տանում կյանքը ճիշտ գնահատելուց: Իսկ դու ցանկանում ես շուրջդ տեղի ունեցողից ինչ-որ բան հասկանալ, այնպես չէ՞: Հակառակ դեպքում չէիր համարձակվի ինձ փնտրել: Այո, այսուհետև այլ կերպ ես տեսնելու կյանքը, այդ տառապալից անպետքությունը: Նկատելով վրդովմունքս՝ նա քնծիծաղեց: Մի վիրավորվիր, ընդամենը իմ կարծիքն է. իրավունք ունե՞մ սեփական կարծիքի:

- Ունես, իհարկե ունես,- մլռտացին կատուները:

- Ցավոք՝ ունես,- համաձայնեցի: - Բայց ես սիրում եմ կյանքը, որքան էլ երբեմն ատելի լինի:

- Սպանիչ համատեղություն է՝ սեր և ատելություն: Դեհ, գնամ իմ բանին: Իսկ դու գնա ու գնայվիր այդ սիրելի ու ատելի խաղով: Ցտեսություն չեմ ասում, քանի որ հիմա միշտ քեզ հետ եմ:

Ժամագործը հեռացավ. կատուները հետևեցին նրան:

Իսկ ես, նրանից անբաժան, քայլում եմ դեպի արթնացող քաղաքը, և որքան ավելի ենք հեռանում միմյանցից, այնքան ավելի ամուր է սեղմվում նա ինձ. չէր սխալվում, երբ ասում էր, թե այսուհետև միշտ ինձ հետ է:

Կրկին անցնում են աղբակույտերի մոտով: Կարկատած պարկն ուսն առած մեկը խառնշտորում է աղբը, նրա աչքերը վառվում են պեղումներ կատարող հնագետի հետաքրքրասիրությամբ: Վերջին աղբակույտից գլորոշի է բարձրանում, ըստ ամենայնի՝ նոր բերված թարմ աղբ է, եթե աղբը կարելի է թարմ համարել: Գլորոշին միշտ չէ, որ թարմության նշան է, թեև թարմ հասկացությունն էլ հարաբերական է՝ անսկիզբ ու անվերջ ընթացող քիմիական պրոցես, որի մի փուլը մարդիկ թարմ են համարում, քանի որ հենց այդ փուլն է համապատասխանում իրենց կարիքներին, որոնք կամ բորենիները, օրինակ, թարմության մասին բոլորովին այլ կարծիք ունեն:

Մտնում են ծանոթ զբոսայգու ծառուղին: Լապտերի տակ պառկած հարբեցողն անխռով խոնկացնում է՝ պղպաղակներ գոյացնելով սեփական փսխունքի մեջ: Դուրս են գալիս փողոց:

Նայում են, և ինձ չի լքում այն թվացումը, թե շուրջս ամեն բան մի տեսակ թափանցիկ է. թափանցիկ շենքերի միջով տեսնում են ուրիշ թափանցիկ շենքեր, միմյանց հատող փողոցներ, նրանցով քայլող թափանցիկ մարդկանց:

Մենք քայլում ենք հակառակ ուղղություններով՝ ես և թափանցիկ բազմությունը, որի միջով ճանապարհի հարթելն ավելի ու ավելի դժվար է դառնում: Ինձ կոպտորեն հրում են՝ բազմությունը չի սիրում հակառակ ուղղությամբ ընթացողներին: Ստիպված բարձրանում են զբոսայգին փողոցից բաժանող պարիսպի վրա: Քայլում են պարսպի վրայով և նայում աղմկող ամբոխին: Աղմուկը գնալով սաստկանում է: Մարդիկ կասկածանքով են նայում իրար և ավելի արագացնում իրենց քայլերը, վախենալով, թե ետ կմնան: Արդեն վազում են, հրճուտում, քաշքշում միմյանց՝ ամբողջովին կլանված այս խաղով: Նրանք կոխկրտում են ծաղիկները, ջարդում ծառերը, թքում, միզում պատերին, հայիտյում այն ամենը, ինչը խոչընդոտում է խելացնոր երթին: Երբեմն թվում է, թե փողոցով սլացող գորշ գանգվածի մեջ տեսնում են ժամագործի հեզնաժպիտ դեմքը:

Հենափայտերի վրա անհեթեթորեն ոստոսացող մեկն աղեկատուր կանչում է.

- Էյ, բա ե՞ս...Ախր ես մնացի...- Նա կառչում է կողքից անցնող մարդկանց հագուստներից, սակայն բանի տեղ դնող չկա՝ նրան կոպտորեն հրում են ու երթից հանում:

- Դու էիր պակաս, հաշմանդամ...

- Ախր ես մնացի... շքամուտքի միզված աստիճաններին ընկնելով գոռում է հաշմանդամը, հետո շրջվում է և հենափայտով հարվածում վազող մեկին: Ուրեմն ինձ չեք տանում, հա՞, ես ձեր էն...-

հայիտյում է և կատաղած թափահարում փայտը: Ի վերջո նրան հրում, գցում են շքամուտք և դուռը փակում:

Հորիզոնում, ծառերի, շենքերի ետևից հայտնվում է արեգակը և շուրջն ամեն բան ողողում իր լույսով:

- Արևը դուրս եկավ, նայեք, ի՞նչ սիրուն է արևածագը,- գոռում է մի աղջնակ:

- Թքած,- պատասխանում են նրան,- ամեն առավոտ տեսնում ենք, մի կողմ քաշվիր:

- Նայում եք, բայց չեք տեսնում,- համառում էր աղջիկը, որ կանգնած է ամբոխաերթի կենտրոնում և վեր պարզած ձեռքերով ցույց է տալիս բարձրացող արեգակը: Նա հիշեցնում է մեքենայի և սյան արանքում մնացած այն աղջկան:

Նրան հրում՝ ցած են գլորում, սակայն կարողանում է բարձրանալ: Ժխորն ուժգնանում է: Աղջկա ձայնը չի լսվում, բայց նա շարունակում է գոռալ՝ թափահարելով նիհարիկ ձեռքերը: Մագերը գզգզված են, հագուստը ձղձղված, մարմինը ճանկառված ու արնոտ: Այնպիսի տեսք ունի, կարծես բռնաբարվել է տասնյակ ստահակների կողմից: Նա կանգնած է դեմքով դեպի արեգակը, և նրա երկնագույն աչքերում առկայծում են վաղորդյան շողերը. դեմքով դեպի արեգակը և դեպի վրա եկող ամբոխը: Հանկարծ կորցնում են նրան տեսադաշտից. տազնապած ձգվում են ու փնտրում...

Գտա. աղջիկը բերանքսիվայր ընկած է գետնին, նրան անտարբերությամբ կոխկրտում են: Ցատկում են պարսպից և այս ու այն կողմ հրելով մարդկանց՝ ճանապարհ բացում դեպի աղջնակը: Վերջապես հասնում, գրկում և բարձրացնում են նրան: Իր փոքրիկ, տաք ձեռքերով գրկում է պարանոցս, դեմքը քսվում է դեմքիս, արնոտվում են, նրա ճակատից հոսող արյունն է: Լարելով ուժերս, նրան մի կերպ դուրս են հանում խառնաշփոթից:

Ճակատի վերքը կարծես այնքան վտանգավոր չէ, բայց արյուն շատ է կորցրել. ցայտաղբյուրի ջրով լվանում են, ապա թաշկինակս թրջում, դնում վերքին: Արնահոսությունը դադարում է: Վերստին բարձրացնում են նրան և տանում դեպի զբոսայգու խորքը: Նա բացում է աչքերը և խնդրում.

- Հեռու մի տար...

Վերադառնում ենք ու տեղավորվում պարսպի եզրին: Աղջնակը շարունակում է գրկած պահել պարանոցս:

Այդպես, գրկախառնված, մենք դիտում ենք անհեթեթ անցուդարձը՝ Աղջնակը, ես, ժամագործը:

ՊԱՌԱԿՏՈՒՄ

Կարծում եմ՝ արդեն կարելի է համոզված ասել՝ Նա ինձ վերջնականապես լքեց:

Սակայն ինչու՞ եմ հանկարծակիի եկել, ինչու՞ եմ անընդհատ աշխատում խաբել ինքս ինձ՝ իբր կատարվածն անսպասելի էր, չէ՞ որ դա վաղուց սկսվեց, և ես պետք է որ արդեն նախապատրաստված լինեի: Երևի մարդու բնույթն է այսպիսին՝ երբ թանկարժեք բան է կորցնում, խուսափում է եղելության սթափ ու անկեղծ քննությունից, որովհետև կանխագգում է, որ արդյունքում ինքն է նստելու մեղադրական աթոռին: Հենց այս պատճառով է, որ ինքնախաբեության թմրադեղը միջոց ընտրած՝ խաղում է մի կատակերգություն, որի թե՛ դերակատարը, թե՛ հանդիսատեսը ինքն է: Դերակատարը մեծագույն հմտությամբ է խաղում շփոթվածի իր դերը, մեղքերը բարդում իրենից անկախ ինչ-ինչ հանգամանքների անբարենպաստ զուգահեյությունների վրա, դրանց տալով խորհրդավոր, ճակատագրական կանխորոշվածության երանգ, և որքան ավելի խորհրդավոր են հանգամանքները, այնքան ավելի խաբված, հետևաբար նաև անմեղ է ինքը, և դերակատարից անմիջապես վերածվելով հանդիսատեսի, հիացմունքի արցունքն աչքերին՝ հաճույքով հավատում է իր անմեղության վարկածն ապացուցող կատակերգությանը:

Մեր տարակեցությունն սկսվեց, երբ ես առաջին անգամ լրջորեն մտածեցի Կարևոր Մարդու հետ մտերմություն հաստատելու մասին՝ մի մարդու, ում նշանակալից կեցվածքը, ինքնավստահ ու ամբարտավան հայացքը, կնիք բռնելու սովոր փափուկ ձեռքը և շուրջը տարածված ակնածալից շշուկները վկայում էին, թե նրա հովանավորությունը ձեռք բերելու դեպքում իմ առջև կարող է բացվել դեպի որոշակի և ըստ ամենայնի՝ բարձր դիրքի տանող հարթ ուղի: Այդ ուղին ամենակարճն ու հեշտ հաղթահարելին էր, և ես զգացի, որ անկարող եմ հրաժարվել ընձեռված հնարավորությունից: Այդպիսի հնարավորություն իսկապես կար, հարկավոր էր միայն գործել՝ անվրեպ ու արագ: Սկզբի համար անհրաժեշտ էր ազատվել որոշ ավելորդություններից, ինչպիսիք էին՝ ռոմանտիկ զգացումներն ու երազանքները, ճշմարտություն և արդարություն փնտրելու մանկականությունը, սենտիմենտալ գեղումները, որոշ սովորություններ և նման այլ բաներ: Ես նման էի այն օդապարիկին, որի միջից, նրա

անընդհատ վերելքն ապահովելու համար, ժամանակ առ ժամանակ դուրս են նետում ոչ այնքան պիտանի թվացող որևիցե բեռ: Ճիշտ է, հետո հանկարծ կարող է հայտնվել այն կասկածը, թե դեմ նետված բեռը այնուամենայնիվ կարևոր էր, և այդպիսի կասկած իմ մեջ արդեն իսկ երբեմն հայտնվում էր, սակայն նա ավելին չարժեք, քան դեմքին նստած ճանճը, որին քշում ես, իսկ նա քիչ անց բզզալով վերստին հանգրվանում է նույն տեղում. ճանճը մնում է ճանճ, և նույնիսկ ամենահամառ բզզոցը շարունակվում է մինչև դիպուկ հարվածը միայն, որից հետո նրան հատակից ավլած փոշու հետ գցում են աղբարկղը:

Եվ ահա, երբ ես աստիճանաբար ազատվում էի ընթացքս խոչընդոտող ավելորդություններից և «անխնա հարվածում համառ ճանճերին», հանկարծ հայտնաբերեցի, որ **նա** ժամանակ առ ժամանակ անջատվում է ինձնից, նստում իմ դիմաց ու թերահավատ ժպիտով նայում դեմքիս: Այս արտառոց երևույթը կրկնվեց ավելի ու ավելի հաճախակի, ապա եկավ ժամանակ, երբ նա սկսեց պարզապես հեռանալ: Մտմտումներիս բեռի տակ՝ սկզբում առանձնապես նշանակություն չէի տալիս սրան, առավել ևս, որ նա հեռանում էր կարճ ժամանակով միայն, իսկ վերադառնալիս մտերմաբար ժպտում և վերստին միանում ինձ: Սակայն այդ ժպիտն աստիճանաբար խամրեց, իր տեղը զիջելով օտարացման ուժգնացող արտահայտությանը: Բացակայություններն էլ օրըստօրե դարձան ավելի երկարատև: Առավոտյան, երբ ես դեռ ճմլկոտում էի անկողնում, նա արագ հագնվում էր ու դուրս գալիս տնից: Պատուհանից հետևում էի նրա հեռացող անտարբեր թիկունքին, որն ասես լուռ ակնարկ լինեք այն մասին, թե մեր ուղիներն այսուհետ տարբեր են: Հոգիս սկսում էր դատարկվել, երբ տեսնում էի, թե ինչպես է նա, ձեռքերը բաձկոնակի գրպանները խրած, աստիճանաբար տարրալուծվում գործի գնացող մարդկանց գորշ զանգվածում: Տազնապած՝ բացում էի պատուհանն ու կանչում, բայց նա չէր շրջվում: Օրվա ընթացքում այլևս չէի տեսնում նրան, թեև երբեմն հանկարծ թվում էր, թե թիկունքիս գգում եմ տաք, հարազատ շունչը, սակայն, երբ ուրախացած շրջվում էի՝ դեմ էի առնում դատարկությանը, որի միջից լսվում էր խուլ քմծիծաղ, ուրիշ ոչինչ: Տուն էր դառնում միայն ուշ գիշերով, հոգնած պառկում էր կողքիս ու անտարբեր հորանջում: Չէր խոսում, ինձ հետ ընդհանուր ոչինչ ունենալ չէր ցանկանում: Ես զգուշորեն հակվում էի ու խնդրում՝ «էլ մի հեռացի, մնա, մի քիչ էլ սպասի, գուցե մի ձև գտնենք...»: Հոգնած թափահարում էր ձեռքը, կարծես ասելով՝ «Հիմարություններ դուրս մի տուր, թող բնեն»: Եվ անմիջապես քնում էր: Ես նրան այլևս հարկավոր չէի: Ա-

նավոտյան, երբ արթնանում էի և աչքերս դեռ փակ՝ շոշափում անկողինը, նրա տեղն արդեն պաղած էր լինում:

Հիմա արդեն մի քանի օր է՝ նա բոլորովին չի երևում, նույնիսկ գիշերով, և ես սկսում եմ համոզվել, որ վերջնականապես էլ լքել ինձ: Կարծես կռահում եմ՝ ըստ երևույթին՝ նա շարունակում է հանդիպել այն աղջկան, որին տեսնել ես այլևս չեմ համարձակվում: Եվ ինչպես տեսնեմ, երբ վերջապես հաջողության եմ հասել Կարևոր Մարդու անհրապույր, սակայն հեռանկարային դատեր մոտ: Եվ հիմա, երբ հրավիրված եմ Կարևոր Մարդու ծննդյան տոնակատարությանը, նա, հավանաբար, այն աղջկա ուսերը գրկած՝ մութ այգում ազատ նստարան է փնտրում:

Ես ջանում եմ կապել անիծյալ փողկապը, իսկ... *Նա սիրո խոսքեր է շնջում:*

Ես բծախնդրորեն փայլեցնում եմ կոշիկներս, իսկ... *Նա դեմքը թաղել է աղջկա մազերի մեջ և սիրո խոսքեր է լսում:*

Ես տոպրակի մեջ եմ տեղավորում վերջին փողով գնած նվերը, իսկ... *Նա համբուրվում է:*

Դեմքիս քաշած դեռևս զգվելի, սակայն արդեն քիչ թե շատ սովոր դիմակը, բռնագրոսիկ ժպտում եմ սեղանակիցներիս, իսկ... *Նա արդեն աղջկա տանն է:*

-Ի՞նչ հրաշալի տեսք ունեք այսօր, - ստում եմ Կարևոր Մարդու կնոջը՝ ապագա զոքանչիս, իսկ... *Նա կիսամութ սենյակում ամուր գրկել է աղջկան:*

- Իսկապե՞ս, Դուք արդեն զբաղվում եք իմ գործով,- ասում եմ Կարևոր Մարդուն՝ ապագա աներոջս, և զգում, թե կեղծիքն ինչպես է կաթ-կաթ լցնում ներսիս գորշ դատարկությունը՝ դատարկություն, որ գոյացել է Նրա հեռանալու հետևանքով: Իսկ... *Նա, վերմակի տակ պառկած, թրթռացող անհամբերությամբ սպասում է՝ պատի մեծ հայելու մեջ ընթրոշխներով մահճակալի այն կողմում մերկացող աղջկա գալարուն մարմնի արտացոլումը:*

- Որքան երախտապարտ եմ,- ծամածռվում եմ ես, իսկ... *Աղջիկն իր տաք մարմնով ամուր սեղմվել է նրան՝ աչքերը կիսախուփ, ինքնամոռաց...*

- Ցտեսություն:- Միջանցքում Կարևոր Մարդու անհրապույր դուստրը փորձում է համբուրվել ինձ հետ: Դա նրան կարծես թե հաջողվում է: Սակայն ես ոչինչ չեմ զգում: Ես նման եմ ապակյա դատարկ անոթի: Ապակյա դատարկ անոթին հպված խոնավ, բարակ շրթունքներ: Հպման փաստն ակներև է, սակայն ապակին չի զգում՝ այն պարզ պատճառով, որ ապակի է, այն էլ՝ դատարկ անոթի ապակի: Իսկ... *Նա բերանով ամուր փակել է աղջկա վառվող շուրթե-*

րը:

Շփելով անդադար լարվածությունից հոգնած դեմքս՝ վերադառնում եմ տուն: Դատարկ փողոցում արծազանքում եմ դատարկված մարդու բծախնդրորեն փայլեցված կոշիկները: Իսկ... *Նա քրտնած մեջքը մահճակալի թիկնակին հենած՝ վայելում է հետսիրո սիգա-րետը:*

Վերջապես տանն եմ. կեղծելու կարիք թվում է՝ չկա այլևս, սակայն դիմակս համառորեն չի լքում արդեն սովոր տեղը: Հետաքրքիր է, իրավիճակների նման զարգացման դեպքում ինչպիսի՞ն կլինեն իմ և դիմակիս փոխհարաբերություններն ապագայում... Գրողը տանի, դարձյալ փորձում եմ խաբել ինձ, դարձյալ ներկայացում եմ խաղում: Ի՞նչ փոխհարաբերության մասին է խոսքը, երբ ինքս հենց դիմակ եմ, որ կամ. չէ՞ որ նա ինձ վերջնականապես է լքել:

Ծանր հոգեվիճակներում սովորաբար երաժշտության օգնությանն եմ դիմում: Ահա հիմա էլ, միացնում եմ ձայնարկիչը, հանում ձայնապնակը, տեղադրում սկավառակին, իջեցնում ասեղը... Լսվում է ծանոթ խշշոցը և... Սակայն ինչու՞ ոչինչ չեմ զգում... Մի՞թե երաժշտություն զգալու հատկությունը նա տարել է իր հետ...

... Հիմա ծնե՞մ է, և ես հեռավոր հույս եմ փայփայում, թե գուցե ցուրտը նրան ստիպի վերադառնալ. չէ՞ որ հագին թեթև, հնամաշ բաճկոնակն էր ընդամենը: Իսկ եթե նա չի մրսում, եթե ցրտի զգացողությունը ինձ է թողել... Երևի այդպես էլ կա, որովհետև ես հիմա սաստիկ եմ մրսում՝ մրսում եմ, թեև արդեն ահագին ժամանակ է՝ ապրում եմ Կարևոր մարդու ջերմացնող ստվերում:

Հ Ա Յ Ե Լ Ո Ս Ա Ռ Ջ Ե Վ

Գործից հետո սովորաբար տուն եմ գալիս. ու՞ր գնամ: Եվ, ուրեմն, այդ երեկոն սովորական երեկո էր, մյուսներից չտարբերվող: Օրվա ընթացքն էլ սովորական էր, արտասովոր ոչինչ էր եղել կարծես, ուստի դժվարանում եմ բացատրել, թե ինչով էր պայմանավորված այն տագնապը, որն ունեի տուն մտնելիս՝ տագնապ, որ սկսվել էր դեռ առավոտյան և օրվա ընթացքում անընդհատ ուժգնանալով՝ երեկոյան հասել էր գագաթնակետին: Նախորդ գիշեր այցելած տարօրինակ երազը կարո՞ղ էր պատճառ լինել... Զգիտեմ: Սակայն չունենալով այլ պատճառաբանություն, ստիպված եմ հաշվի առնել այդ կասկածը, առավել ևս, որ օրվա ընթացքում երազի պատկերները ժամանակ առ ժամանակ հայտնվում էին աչքերիս

առջև՝ հայտնվում, որոշ ժամանակ պտտվում, չքանում, ապա, քիչ անց, դարձյալ հայտնվում: Երագում կանգնած էի բեմահարթակին, ծաղրածուի խայտաբղետ հագուստով, կատարելապես անդեմ՝ գլուխս ասես մեծ ձու լինեք: Հանդիսականներ չկային: Այսինքն՝ դահլիճ էլ չկար. բեմահարթակից ներքև, ուր պետք է սկսվեր կամ վերջանար դահլիճը՝ փողոցն էր, փողոցային անցուղարձը, որ կատարելապես անտարբեր էր իմ արտառոց վիճակին: Շուրջս հարյուրավոր դիմակներ էին թափված: Չգիտես որտեղից եկող հեզնական ձայնը հարցրեց. «Դե՞հ, ինչպիսի՞ դեմքով եք նախընտրում հանդես գալ, շնորհ արեք, ընտրեք, տեսեք ի՞նչ հարուստ ընտրանի է»: Վերցնում էի կենդանի թվացող դիմակները, տնտղում ու մի կողմ գցում: Այդ միջոցին աներևույթ մեկը հանկարծ ձեռքս խոթեց մի դիմակ և շշմաց. «Սա ամենահարմարն է, չեք զղջա»: Լսիրշորեն ժպտացող դիմակ էր, որն սկսեց արագ-արագ փոխել արտահայտությունները: Այնպիսի տպավորություն էր՝ ասես նա ցանկանում է ցուցադրել իր բոլոր ունակությունները. լսիրշ ժպտը փոխվեց շո-ղոքորթության, ապա արտահայտությունը խստացավ, բարեհամբույր դարձավ, գայրացած, պաշտոնական, քծնող ու վերստին լսիրշ: Ես դեռ մտմտում էի՝ նա հանկարծ պոկվեց-դուրս թռավ ձեռքիցս, ծեփվեց դեմքիս՝ սեղմելով քիթբերանս այնպես, որ սկսեցի շնչահեղձ լինել և... Արթնացա:

Երբ տուն մտա, զգացի, որ սաստիկ հոգնած եմ, սակայն դա աշխատանքն ավարտած մարդու սովորական հոգնածություն չէր, որը կարելի էր մեղմել բազմոցին պառկելով. ինչ-որ այլ՝ հոգեկան հոգնություն էր, նյարդային լարվածություն, որն աներևույթ սեղմում, կենսագրկում է մկաններդ և հարյուր մետր չանցած՝ թվում է տասը կիլոմետր ես քայլել:

Միջանցքի կախիչները՝ առաջ պարզված մետաղյա չորս ճանկեր՝ միշտ ինչ-որ բան պահանջողի տեսք ունեն. կախեցի վերարկուն՝ բավարարելով առաջինին. մյուս երեքն ասես ավելի երկարեցին, հերթով նրանց հանձնեցի վզոցս, բաձկոնս, և քանի որ տալու բան չմնաց՝ հագա հողաթափերս ու մտա սենյակ: Ձեռնունայն մնացած ճանկի դժգոհությունը որոշ ժամանակ մեխված մնաց մտապատկերիս մեջ. նա, կարծես թե, գլուխս էր ակնարկում...

Դեմքիս մկանները տնքում էին հոգնածությունից, նրանք կծկվել-հավաքվել էին աչքերիս շուրջը՝ դիմախաղի լարվածության կենտրոնը երևի աչքերն են: Նայեցի հայելուն, հայելու՞ն, թե հայելու մեջ. հայելու թվացյալ խորությունը, իրականում՝ հարթությունը, միշտ շփոթության մեջ է գցում, աչքերս փոքրացել, շեղացել էին: Բայց

միայն դա չէր հյուսիսային եղջերվապահի նմանվելու պատճառը, նմանությունը խորացնում էր մորթե գլխարկը, որ մոռացել էի հանել: Ահա, թե ինչ էր ակնարկում մետաղյա ճանկը. հանեցի գլխարկը, տվեցի նրան ու նստեցի հայելու առջև, թեև դեմքս կարող էի մերսել առանց հայելու մեջ նայելու... Ինչևէ: Մերսեցի: Քիչ անց հաճույքով զգացի, որ մաշկիս տակ խուտուտ եկավ: Լավ նշան էր: Դա դարեցրի մերսումը և նայեցի... Ահա, աչքերս կարծես վերգտնում են իրենց իսկական ձևը: Սակայն... Այ քեզ բան... Բացի հոգնությունից ու տագնապից, մեջս ուրիշ զգացում չկա հիմա, բնականաբար՝ դեմքս էլ նույնը պիտի արտահայտի, իսկ նա... Նկատելով, որ իրեն հետևում են՝ զգուշացավ, ապա հարցական նայեց, ասես ճգնելով պարզել, թե իրենից ի՞նչ է պահանջվում, ի՞նչ ձևացնի: Փորձեցի հանգստացնել՝ մտովի համոզելով, որ նայողը ես եմ, ասել կուզի՝ ինքը: Բայց ապարդյուն. հայելու միջից ինձ նայողը և՛ ես էի, և՛ ոչ: Քրքրեցի թղթապանակս, գտա մի թուղթ, որի վրա պետիս մակագրությունը կար, դեմ արի հայելուն: Ապշեցուցիչ էր՝ դեմքս անհապաղ բարեհամբույր դարձավ, քծնող: «Սթափվիր վերջապես, ապու՛շ», գոռացի: Լրջացավ, այնպես է ձևացնում, իբր ուշադրությամբ լսում է: Ես գոռում եմ, իսկ նա՝ լսում: Մարմնովս տհաճ սարսուռ անցավ, որպիսին լինում է, երբ արգանակի հետ անզգուշաբար ոսկրափշուր ես կրվ տալիս: Ինչու՞ հատկապես այս համեմատությունը հիշեցի... Հավանաբար այն պատճառով, որ դեմքս հիմա ինձ կպած մի օտար մարմին էր թվում: Ստացվում է, որ հայելու միջից ինձ նայողը ես չեմ, այլ մի դիմակ, որն արյունովս սնվելով հանդերձ՝ ինքնուրույնություն է ձեռք բերել: Ծիծաղելի է, ավելի շատ՝ ցավալի, ես չունեմ այն դեմքը, որն ըստ իմ նախկին և ինչպես պարզվում է թյուր կարծիքի՝ պետք է որ ունենայի: Ես այն կորցրել եմ: Ե՞րբ, ինչպե՞ս, որտե՞ղ...

Կորցրած որևէ բան գտնելու համար երևի թե հարկավոր է ետ գնալ նույն ճանապարհով, որով գալիս կորուստ ունենալու անզգուշությունն ես ունեցել: Փակեցի աչքերս, լարեցի հիշողությունս և ետ պտտեցի մտքիս տեսագրությունը՝ սկսած այսօրվա դեպքերից, մինչև ապրած տարիներիս խորքը: Ընդհանուր ֆոնը հիմնականում գորշ էր, միայն երբեմն, կարճատև, բռնկվում էր ու գունավորվում, մերթ էլ հանկարծ այնպես էր մթազնում, որ հագիվ էի տարբերում ինչն ինչոց է: Փակ աչքերիս առջևով փախչում էին անցած դեպքեր, դեմքեր, հիմնականում ծանոթ, երբեմն էլ՝ անծանոթ: Տարօրինակ է՝ ժամանակ առ ժամանակ հիշողությունդ հստակորեն վեր է հանում իրադարձություններ, որոնք, թվում է, բացարձակորեն անծա-

նոթ են, քեզ հետ երբևէ չեն առնչվել, միևնույն ժամանակ՝ անչափ կարևոր բաները հաճախ անհետ կորչում են և մտալարման սաստիկ ճիգերով նույնիսկ՝ չես կարողանում ի հայտ բերել: Հետաքրքիր է, ի՞նչ սկզբունքով է ղեկավարվում ուղեղը, երբ հիշողության մեջ պահելու համար զատում է պետքականն ու անպետքը: Գուցե այն, ինչ կարևոր է թվում, իրականում ամենևին էլ կարևոր չէ՞, և հակառակը՝ կարևոր է այն, ինչին մատների արանքով նայեցիր...

Գորշ ֆոնը փոքր-ինչ լուսավորվեց, կորացած մեջքս սկսում է ուղղվել... Մի՞թե այսպիսի ձիգ կեցվածք են ունեցել: Հասակս բարձրացավ, ճաղատս լցվեց սև, կոշտ մազերով, քայլվածքս դարձավ անկաշկանդ, ապա փոխվեց թեթև վազքի: Վազքս դառնում է ավելի ու ավելի թեթև: Արդեն թռչկոտելով եմ վազում: Սկսեցի փոքրանալ: Պատժված եմ՝ գլխիկոր կանգնած եմ մեր հին տան գունաթափ անկյունում, թնկթնկալով քիթս եմ վեր քաշում, ականջս էլ այրվում է և մյուս ականջիս համեմատ կարծես մի քիչ երկարած է, բլթակի վրա պարզորոշ նկատելի են հորս մատնահետքերը. տուժում էր այն ականջս, որովհետև հայրս ծախլիկ էր: Առավել փոքրացա. ձեռուտս կապկպած՝ պառկած եմ բարուրում, դեմքս եմ ծամածռում, քանի որ պատուհանով թափանցող ճառագայթներն ընկնում են ուղիղ աչքերիս՝ արևն այն ժամանակ հիսուն տարով ջահել էր:

Հասա սկզբին: Սակայն ոչինչ չպարզվեց: Գուցե ետընթացում էր մեղավոր, չէ՞ որ դեպքերին հակադարձ հաջորդականությամբ հետևելով կարելի է խեղաթյուրել պատճառահետևանքային տրամաբանությունը: Ուստի այս անգամ փորձեմ առաջ գնալ՝ ելակետ ընտրելով բարուրում պառկած մանկիկին, քանի որ նրա դեմքը, կնճռոտ, անպաշտպան խմորի գունդ,- անշուշտ դեռևս իսկականն է: Ուրեմն՝ առաջ:

- Զիզգնեցի՞ր:

Հանկարծակիի եկած՝ նայեցի հայելուն... Սոսկալի էր՝ այնտեղից ինձ էր նայում մի մեծ, ողորկ ձու. դեմքս չկար:

- Այստեղ եմ, այստեղ,- նորից լսվեց ձայնը:

Այս անգամ ճիշտ կողմնորոշվեցի ու գտա նրան. դեմքս նստած էր բազմոցի անկյունում և հեզնական նայում էր ինձ:

- Ասում եմ, չիզգնեցի՞ր,- կրկնեց:- Զես պատկերացնում, թե ինչ անհեթեթ, ծիծաղելի տեսք ունես: Ի՞նչ է պատահել, այնպես ես շփոթվել, ասես կյանքդ քո փոխարեն մեկ ուրիշն է ապրել: Ի՞նչ մի դժբախտություն է պատահել...

Ապշահար նայում էի նրան՝ խոսելու անկարող:

- Մինչև հիմա չես հասկացե՞լ,- շարունակեց նա,- ես որքան ինք-

նուրույն լինեմ, դու այնքան հեշտ կապրես: Հանգիստ ապրի, էլի, այ մարդ:

- Թքել եմ քո ինքնուրույնության վրա,- վերջապես խոսեցի ես,- ինձ իմ իսկական դեմքն է պետք:

- Ռոպեական թուլությանը տուրք մի տուր, հարցին սթափ մոտեցիր:

- Այսքան սթափ երբևէ չեմ եղել: Որտե՞ղ է իսկական դեմքս, ի՞նչ ես արել նրան:

- Ի՞նձ ես հարցնում... Որտեղ կորցրել ես, այնտեղ էլ փնտրիր: Մի ծակ մտած կլինի՝ սարսափից դողալով, եթե արդեն ինքնասպան չի եղել: Լսի՛ր, այդ դեմքով ո՞նց ես ապրելու, ո՞նց ես գործերդ կարգավորելու, ո՞նց ես մարդամեջ դուրս գալու, մտածե՛լ ես... Կխրտնացնես բոլորին, կփախչես քեզնից:

- Ով պետք է՝ կմնա:

- Ոչ ոք չի մնա: Իսկական դեմքով, բայց՝ սոված, տկլոր ու մեմակ,- ծաղրեց նա ու հռռաց: Խելքդ գլուխդ հավաքի, այ մարդ, ուշքի...

Զիսուցեց խոսքն ավարտել՝ բռնեցի ու ձեռքս մտցրի բերանը: Պատռվող շրթունքներից արյունը ծորաց ձեռքիս: Ուզում էի ձեռքս ավելի խոր տանել և շուռ տալ նրան, ինչպես գուլպան եմ շուռ տալիս, բայց նա հաջողացրեց կծել ու օգտվելով իմ շփոթությունից՝ փախավ: Վազեցի ետևից: Հասցրեց մտնել զուգարան ու փակել դուռը:

- Դուրս չեմ գա,- բղավեց:- Դու ինձ վիրավորեցիր: Այս էր շնորհակալությունդ երկար տարիների անձնագրի ծառայության համար, հա՞: Վերջապես, դու՞ չես ինձ ստեղծել, չեմ հասկանում:

- Ես եմ ստեղծել, ես էլ կվերացնեմ: Բացիր դուռը:

- Երբեք: Ախր առանց ինձ դու ոչինչ ես, գրո: Վաղը զղջալու ես, հաստատ: Բայց հիշիր, մինչև ծնկաչոք ներողություն չխնդրես...

- Ի՞նչ, ներողություն...ն...

Ուսով ուժգին հրեցի. փակադակը շխկոցով ընկավ սալիկների վրա, դուռը բացվեց: Կեղտոտ սպիտակեղենի կույտին մեխված՝ նա սարսափահար նայում էր ինձ ու դողում: Բռնեցի ու սկսեցի խեղդել: Կապտող դիմակն արագ-արագ փոխում էր արտահայտությունները՝ ժպիտ, զայրույթ, քծնանք, աղերսանք... Փրկվելու վերջին, օրհասական ջանքերն էին: Բայց նրան սպանելով՝ ինքս ինձ չէի՞ սպանում արդյոք...

ՉԱՐԱԳՈՒՇԱԿ ԱՐԾԻՎ

Տղամարդու կեցվածքն արծվայինի էր նման՝ առաջ հակված, փոքր-ինչ կորամեջք, լարված ու զգոն: Չարագուշակ: Այդպես, հողաթմբին կանգնած, նա բարձրացել էր թաղման մրսած, հոգնած թափորի վերում և կլանված հետևում էր հանգուցյալի շուրջը տեղի ունեցող անցուդարձին: Ո՞վ էր... Հայացքն անթափանց էր, ինչը ոչ միայն չէր քողարկում խորությունը, այլև ավելի էր շեշտում այն: Բարձրահասակ էր, ջլուտ, ճերմակող քունքերով՝ թխահեր: Կինը մի քանի անգամ փոխեց տեղը, որպեսզի գրավի նրա ուշադրությունը, սակայն ջանքերն ապարդյուն անցան՝ տղամարդն ամբողջովին կլանված էր հուղարկավորությամբ: Կինն ակամայից թշնամացավ հանգուցյալին: Երբ թափորի մեջ առնված քայլում էր դեպի գերեզմանատան ելքը, ափսոսանքով մտածեց, որ եթե ամառ լիներ, տղամարդն անշուշտ կնկատեր իրեն, բայց ձմեռ էր, իր բոլոր հաղթաքարտերը քողարկված էին հաստ, ընդարձակ հագուստի տակ: Սակայն ներքին ծայրը հուսադրում էր, թե տղամարդն այնուամենայնիվ նկատել է իրեն, գոնե մեկ անգամ որ՝ հաստատ նայեց, թեկուզև՝ մետաղային սառնությամբ, փութանցիկ:

Չայնը չսխալվեց. գերեզմանատան դարպասից ոչ հեռու՝ տղամարդը մոտեցավ ու խոսեց թավ ձայնով:

- Գերեզմանատունը խորհրդավոր է, չէ՞:

- Երկի...

- Գիշերով ավելի խորհրդավոր է, թվում է՝ ընկել ես ուրիշ չափում:

- Գիշերո՞վ:

- Այո: Չեք եղե՞լ, - հարցրեց տղամարդն այնպես, կարծես խոսքը սրձարանին էր վերաբերում:

- Իհարկե ոչ: - Կինը տարակուսած թոթվեց ուսերը: - Ազգակա՞ն էր:

- Ոչինչն էլ չէր, պարզապես անցնում էի ու հետաքրքրվեցի. սեփական փորձիդ հնարավորություններից դուրս բաները հետաքրքիր են:

- Տարօրինակ հետաքրքրություն է:

Լուռ քայլեցին: Թեև հնարավոր է՝ ինչ-ինչ բառեր մերթ ընդ մերթ փոխանակում էին, սակայն կինը չէր հիշում. այն, ինչն արագորեն

խմորվում էր նրանց մեջ՝ բառերով անարտահայտելի էր, մղում էր անխոս գործողությունների:

Նախաբաններ չէղան, բայց կինն իրեն դրա համար չէր նախատում՝ ամեն բան այնքա՞ն անկեղծ էր ու բնական: Տղամարդն ուժեղ էր, նաև՝ քնքուշ, և այդ երկու հատկությունների ներդաշնակ դրսևորումներն աննկարագրելիորեն հաճելի էին դարձնում նրանց մերձեցումները: Ճիշտ է, նրանից ինչ-որ օտարոտի, չարագուշակ սառնություն երբեմն զալիս-սողոսկում էր կնոջ մարմնից ներս ու թեթև ճանկում խորքերը, սակայն դա այնքան ուժ չուներ, որ խանգարեր վայելքին. հազիվ զգալի, պստիկ տագնապ էր, որ հայտնվում էր ընդմիջումներին ու անմիջապես անհետանում՝ կրքի նոր ալիքի ծնունդի հետ: Իսկ ալիքները հաջորդում էին միմյանց՝ քիչ տեղ թողնելով ընդմիջումներին: Տղամարդու ամուր ձեռքերն ու զգայուն շրթունքները նորից ու նորից կերտում էին կնոջ մարմինը, կինը նորից ու նորից հառնում էր ինքն իր առջև՝ մերկ, գեղեցիկ, գիշող: Տղամարդու կրքի հորձանքներում նա իսպառ կորցնում էր իր ես-ը, և դա ավելի էր խորացնում հաճույքը: Բացարձակապես չգիտեր, թե ուր է սլանում և որն է վերջը՝ չգիտեր ու չէր էլ ուզում իմանալ՝ երջանկությունը կարճատես է, գուցե՝ կույր:

Իսկ վերջը, պարզվեց, դարանակալել է մոտերքում, նա եկավ արագ ու անսպասելի՝ անսպասելի, որովհետև սերը ոչ միայն անկում չէր ապրում, այլև իր տարերքի գագաթին էր:

Պառկած էին քրտինքից խոնավացած անկողնում, սավանդ փախել-կծկվել էր պատի մոտ ինչ-որ տեղ: Տղամարդը շոյում էր կնոջը, և կինն անընդհատ հետաձգում էր անկողինը կարգի բերելու մտադրությունը: Հանկարծ զգաց, որ տղամարդու մատները ոչ այնքան շոյում, որքան շոշափում են՝ մաշկի տակ ասես ինչ-որ բան փնտրելով: Տիպիկ զգացողություն էր, սարսռեցնող, նույնիսկ թվաց, թե սենյակում կա ևս մեկը, և այդ նրա մատներն են իրեն շոշափում: Երբ տարակուսած նայեց, տղամարդը մատը դրեց նրա շուրթերին՝ կանխելով դուրս թռչելու պատրաստ վրդովմունքը: Դեմքը տխուր էր. նրա դեմքն առհասարակ տխուր էր, սակայն այս տխրությունը չափազանց էր: Կնոջ շուրթերին հպված մատին միացան մյուս մատները և շարունակեցին շոշափել՝ ծնոտը, այտուկերը, քունքը, ձակատը...

- Մենք էլ չենք հանդիպելու, - խոսեց նա կիսաձայն:

Կնոջը հանկարծ թվաց, թե վաղուց գիտեր այդ մասին, նույնիսկ ավելի վաղ, քան ժանդապեցել էին, ու նաև գիտեր, թե ինչ է լինելու հետո... Գիտեր, բայց մտաբերել չէր կարողանում: Արտառոց զգացում էր, որ փչացած ժամացույցի ճռճանակի անկանոն խփոցով

տրոփում էր ուղեղի մեջ:

- Ինչու...- ուշացած հարցրեց՝ հեռացնելով տղամարդու ձեռքն իր կրծքից, որովհետև ինքն իրեն սկսել էր պատկերվել մաշկատված, ոսկորները մսերի միջից այստեղ-այնտեղ դուրս ելած:

- Ընտելանում ենք միմյանց:
- Վախենում ես բե՞ռ դառնամ:
- Չէ, դա չի:
- Ուրեմն ի՞նչ:

Տղամարդը սիգարետ վառեց: Տաբատը, որի գրպանից հենց նոր հանել էր տուփը, ընկավ: Հատակին լքված, տարակուսած, կծկված տաբատն իր վիճակով նման էր կնոջը: Սակայն տաբատն ի վերջո բարձրացնելու էին...

- Մտերիմների մահն անտանելի բան է,- լսվեց ծխաբուլայի այն կողմից:

- Չեմ հասկանում...
- Մահը ծանր է ազդում վրաս, հատկապես՝ մտերիմ մարդկանց մահը: Իսկ մենք սկսել ենք մտերմանալ:
- Բայց ես չեմ մահանում:
- Բոլորս ենք մահանում, սկսած ծնունդից՝ ամեն ժամ, ամեն րոպե...

- Հիվանդ չե՞ս:

- Հնարավոր է: Սակայն կարող է և հակառակը լինել՝ շատ եմ առողջ:- Անկողնում տաք էր, սակայն տղամարդու մարմինը փշաքաղվել՝ դողում էր:- Հիշում եմ,- շարունակեց նա,- մի անգամ, աննրբանկատորեն, պապիս ներքաշեցի մահվան մասին խոսակցության մեջ: Նա ութսունն անց էր: Ուշ կռահեցի արածիս ամբողջ դաժանությունը, փորձեցի քաջալերել վհատված ծերուկին, թե՛ ամուր մարդ ես, դեռ երկար կապրես: Նա տխուր ժպտաց ու ասաց. «Հրաշքներ չեն լինում, իմն անցանվ, էսօր-էգուց եմ»: Սակայն հանկարծ նկատեցի՝ հայացքի խորքում, այնուամենայնիվ, կա հույսի փշրանքը: Այդպես է, բոլորն էլ, թվում է, գիտեն, որ հրաշքներ չեն լինում, սակայն քչերն են, որ հոգու խորքում չեն հավատում հրաշքին, որը միայն իրենց համար է նախատեսված: Պապս մեկ տարի անց մահացավ: Նրա մահից կարճ ժամանակ անց տարօրինակ փոփոխություններ կատարվեցին տատիս հետ: Տանից հազվադեպ դուրս եկող նստակյաց այդ կինը հանկարծ դարձավ թափառական: Առավոտից դուրս էր գալիս և վերադառնում միայն գիշերով: Ծանոթ-բարեկամների էր այցելում, մտնում խանութները, գրույցի բռնվում սրա-նրա հետ... Տնեցիներին թվաց, թե նրա հոգեկանը խախտվել է: Բայց ես կռահում էի պատահածը՝ նա պարզապես փախչում էր

մահից: Ցերեկով դա գուցե հաջողվում էր, սակայն պատկերացնում եմ, թե որքան տառապալից էին նրա գիշերները: Մի անգամ, երբ օրվա թափառումներից հոգնած պառկել էր բազմոցին, մոտեցա, գրկեցի ու շոյեցի ձերմակ մազերը: Ջարմացած նայեց ու հանկարծ կռահեց, որ ես գիտեմ... Ի՞նչ սահմանկենող հայացք էր...

- Սևեռվել ես: Չե՞ս կարողանում ազատվել:- Կինը հիշեց, որ նախորդ օրն էլ տղամարդը, այս կամ այլ կերպ, անդրադառնում էր իրեն տանջող մտքերին, սակայն ինքն անուշադիր էր, սերը խլացրել էր նրան:

- Ազատվե՞լ,- քնծիծաղեց տղամարդը,- չէ, չեմ կարող, ու հենց դրա պատճառով էլ փախա հարազատ քաղաքից, որտեղ ծնվել եմ, մեծացել, ունեմ բարեկամներ, ընկերներ... Որովհետև ամեն օր տեսնում էի, թե ինչպես են նրանք մեռնում, ինձ ամեն օր բարևում էին կմախքներ և հիշեցնում, որ ես էլ նույնպիսի կմախք եմ...

- Արի էլ չխոսենք այդ մասին:- Կինը փորձեց շոյել նրա լարված դեմքը, բայց տղամարդը ետ քաշվեց:

- Եթե չխոսենք, ի՞նչ, դեռ կդադարի՞՞ գոյություն ունենալ:- Դողացող ձեռքով նա նոր սիգարետ վառեց:

- Դու իսկապես հիվանդ ես:

- Չգիտեմ...

- Ջարմանալի է, որ կարող ես ծանոթություն փնտրել կանանց հետ:

- Սիրո բնագոյը չի մարում, բնության հզոր զենքն է, խաբում է, բռնալորին, անխտիր:- Լռեց: Ինքնամոռաց շոշափում էր սեփական դեմքը: Հանկարծ շրջվեց ու հարցրեց.- Երբեք չե՞ս փորձել երևակայությամբ կառուցել կմախքիդ պատկերը,- նրա մատներն արդեն կնոջ դեմքով սահեցին:

- Ոչ,- կինը սոսկաց և կոպտորեն հրեց նրան:

- Գնամ. լավ է, որ արդեն ինքդ էլ ես ուզում դա:- Տղամարդը սկսեց հագնվել՝ բարձրացնելով տաբատը:- Երեք օր կամ երեք տարի, կամ էլ, թեկուզ, երեք դար, ի՞նչ տարբերություն, տիեզերական անեզրության մեջ դրանք հավասար բաներ են, ժամանակը սուրում է, և ոչ ոք ոչ ոքի պատկանել չի կարող, որովհետև բոլորս նրան ենք պատկանում, ՆՐԱՆ:- Տղամարդը կտրուկ զգաստացավ և շշջաց.- Լսու՞մ ես, ՆԱ սպասում է, անդադար, ամենուրեք...

Կինն ակամայից լարվեց, և նրան թվաց, թե իսկապես՝ ծայրեր է լսում՝ շրշում, փսփսոց... Հանկարծ սաստիկ ցանկություն ունեցավ վառելու բոլոր լույսերը, միացնելու ընդունիչը, հեռուստացույցը, բացելու ծորակները... Իսկ ամենից շատ ցանկանում էր, որ տղամարդը հեռանա, անմիջապես:

Սավանը մերկ մարմնին փաթաթած՝ նա կանգնել էր պատուհանի մոտ և նայում էր գիշերային թրթռուն ստվերների միջով հեռացող տղամարդու կորամեջք ուրվապատկերը: Տղամարդն ինքն էլ կարծես ստվեր լինե՛ր՝ ինքն իրենից փախչել ցանկացող ստվեր, չարագուշակ արծվի ստվեր:

Անցավ ժամանակ, և կնոջն ավելի ու ավելի հաճախակի էր թվում, թե տեսնում է նրա արծվային չարագուշակ կերպարանքը՝ երեկոյի մթնող երկնքով սավառնելիս, թևերը վարի տարածքների վրա լայն տարածած: Հետո Չարագուշակ Արծիվը ներխուժում էր կնոջ դեղնախավար սենյակը և լուռ թառում մահճակալի թիկնակին՝ նրա գլխավերևում. թառում էր, ուղղում գորշ թևերը, թարթում խորհրդավորությամբ փայլող աչքերն ու սպասում, սպասում...

ՓՈՍ

Այդ խելահեղ շրջապատույտի մեջ հայտնված Փորողը հանկարծ ցանկացավ հիշել, թե երբ փորեց իր առաջին փոսը: Սկզբում այդ ցանկությունն անտեղի, անժամանակ թվաց, սակայն հետո կռահեց, որ հիշողությունը հիմա այն միակ բանալին է, որը պատելով կարելի է հուսալ, թե վերջապես կպարզվեն կախարդված շրջանն ընկնելու պատճառները: Ուստի՝ ե՞րբ փորեց առաջին փոսը... Եթե դժվարանում է հիշել, ուրեմն շատ վաղուց էր: Ըստ ամենայնի Փորողի ձակատագիրը նրա համար կանխորոշված էր ի սկզբանե՝ գեների խորհրդավոր, գաղտնի քվեարկությամբ:

Պատանեկան անփորձ ձեռքերով, հախուռն փորած առաջին փոսերին հաջորդեցին բազմաթիվ ուրիշ փոսեր, որոնց հաշիվը կորցրել էր: Ամեն անգամ, երբ բահը զնգոցով դեմ էր առնում որևիցե կարծր բանի, սիրտն անհանգիստ բաբախում էր, ծնկի էր իջնում, ետ տալիս հողը և հանում գտածը: «Սա է», - ուրախանում էր՝ հագուստի փեշով փայլեցնելով հայտնագործությունը: Սակայն անցնում էին օրեր և հանկարծ պարզվում էր, որ փայլը խաբուսիկ է, գտածոն՝ անարժեք: Փայլուն դատարկության զնգոցը դառնում էր նյարդայնացնող, զգվելի, և նա դեմ էր զցում անպետքությունը: Թեև հազվադեպ, բայց պատահում էին նաև արժեքավոր հայտնագործություններ, որոնք կարծես հուշում էին ապագա գործողությունների ընթացքը, ուրվագծում դեպի գլխավորը տանող ուղին: Նման գտածոները գրպանում որոշ ժամանակ քնքշորեն տնտղելուց հետո՝ պահում էր ձեղնահարկի սնդուկում և դարձյալ նետվում փնտրտուքների հորձանապատույտը:

Անցնում էր ժամանակը, որը նրա համար հաշվվում էր փոսերով, թվում էր՝ ամեն բան գնում է թեև դժվարին, սակայն քիչ թե շատ նախատեսելի, ըմբռնելի հունով. ճանապարհը քարքարոտ էր, դժվարանց, բայց առաջ տանող: Նա անտրտունջ համառությամբ հաղթահարում էր դժվարությունները և ավելի ու ավելի խորանում իր պրպտումների մեջ:

Սակայն վրա հասավ մի ժամանակ, երբ ուղին կարծես միացրեց իր ծայրերը՝ գոյացնելով այդ անիծյալ շրջագիծը, Փորողին սկսեց խեղդել թվացումը, թե ինքն անդադար պտտվում է՝ այդ արտառոց պտույտի ժամանակ պարբերաբար հասնելով իրեն, հասնելով ու անցնելով: Ետ նայող հայացքից աստիճանաբար հեռանում էր ինքը՝ ավելի ջահել ու նվազ մտահոգ, իսկ առջևում էլի ինքն էր՝ մտահոգությունների բեռան տակ ծռված, կծկված: Երբեմն, մի կերպ զսպելով շարժման թափը, հասցնում էր մի քանի բառ փոխանակել ինքն իր հետ: Այդ կարճ գրույցները սկզբում բավականին արգասաբեր էին, խորհուրդ կար նույնիսկ առաջին փափուկ հողակտորները սասանող պստիկ Փորողի թոթովանքներում: Սակայն շրջանը մնում է շրջան, և պարբերաբար կրկնվող հանդիպումները շուտով սպառեցին իրենց բովանդակությունը, պտույտները դարձան ծանծրալի ու անիմաստ՝ աշուն, ձմեռ, գարուն, ամառ, աշուն... Գիշեր, ցերեկ, գիշեր, ցերեկ, գիշեր... Եվ դատարկ փոսեր, փոսեր, փոսեր... Գիտակցությունն ասես չորացել էր, զգայությունը՝ բթացել, բնազդները՝ պապանձվել... Երագներն էլ ոչ մի նոր բան չէին առաջարկում, համառորեն ներկայացնելով նույն պատկերը՝ հեռավոր մշուշի միջից երևացող մի կանաչ կաղնի, միշտ նույն կողմի վրա զցած իր անշարժ ստվերով:

Շրջապատույտներն սկսեցին արագանալ. Փորողն այնքան սրընթաց էր պտտվում, որ թվում էր՝ ուր որ է վերջապես կպոկվի փակ համակարգից: Այդ գլխապտույտ արագացումն իսպառ աղավաղեց ժամանակի զգացողությունը, գիշերն ու ցերեկը միախառնվեցին և սկսվեց մղձավանջային կիսամութը՝ իր պողպատյա սառը ցուլքերով: Ամառվա տապին հանկարծ ձյուն էր թափվում, փչում էր ցուրտ քամին, որի պոռթկումներին գերի փաթիլները մերթ սուրում էին վեր՝ կապարային երկինք, մերթ իջնում ու քշվում սառած գետնի վրայով, ամեն անգամ չմոռանալով զարկվել դեմքին, խցկվել օձիքի տակ, լքվել աչքերը: Ձնամրրիկի միջով նա քայլում էր՝ սեղմված փոքրիկ տղայի և զառամյալ ծերունու միջև, և եթե փոքրիկը անցյալով վկայակոչված փաստ էր, ապա զառամյալի գոյությունը կասկած էր հարուցում: Թեպետ այդ խելահեղ շրջապատույտում արդեն անցյալն էլ էր զրկվում հստակությունից, որովհետև ապագան

կրնկակոխ հալածում էր նրան, հասնում, անցնում ու նորից հալածում: Շրջապատույտները դառնում էին միմյանց հախտուն փոխարինող, միմյանցից առաջացող և միմյանց մեջ կորչող երևույթների անհեթեթ, մոծավանջային փոթորիկ: Սնդուկում թաքցրած գտածոներին դեռևս հավատացողի համար սա անսպասելի էր, ահաբեկող: Նա տենդորեն փորում էր, սակայն աշխատանքն անպտուղ էր ինչպես երբեք, հողը փուխր էր, փուչ, գործիքը խոչընդոտի չհանդիպելով՝ ամբողջովին խրվում էր դատարկության մեջ: Փորողը հոգնել էր, ուժասպառվել, երբեմն կորցնում էր ինքնատիրապետումը և մղվում՝ մի կողմ նետելու բահն ու քլունգը, մոռանալով, որ դա հնարավոր չէ, որ դա նույնն է, թե նետել սեփական ձեռքը կամ ոտքը:

Անսպասելիորեն սկիզբ առավ մի արտառոց զգացում, որի ազդեցությամբ սկսեց թվալ, թե լսում է ձայներ, որ դուրս են մարդկային ընկալման հնարավորությունից: Շուրջը, լիակատար լռության մեջ, հանկարծ շշուկներ էին հայտնվում, փսփսոցներ, տոսափներ, շրշում... Թվում էր՝ աներևույթ ինչ-որ էակներ անարգել անցնում են իր միջով, պտտվում չորս կողմը և կամացուկ, նրբորեն հրում որոշակի ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ անսպասելիորեն դադարեց խելահեղ շրջապատույտը. շրջագծի ծայրերը հեռացան միմյանցից, ճանապարհը կրկին դարձավ առաջ տանող: Ճիշտ է, հիմա այն ավելի քարքարոտ էր, ավելի դժվարանց, բայց Փորողն ուրախ էր, որովհետև վերջապես ազատվել էր միօրինակությունից: Նոր ընթացքի ժամանակ նա հաճախ էր շեղվում ու երևի թե շուտ չհայտնաբերեր սխալը, եթե ներսում բացված առեղծվածային զգայարանը կամացուկ շշուկներով չկողմնորոշեր նրան: Թվում էր՝ այդ զգայարանը Փորողի մեջ է ուրվագծված *դրսից*, որտեղից անհայտ ու աներևույթ մի ձեռք ուղղորդում էր նրա գործողությունները: Փորողը սկզբում կասկածով էր վերաբերում սրան, սակայն անցավ ժամանակ և կասկածը փոխարկվեց լիակատար վստահության, նա նույնիսկ խոստովանեց ինքն իրեն, որ սիրում է այդ *աներևույթին*:

Հերթական բարձունքը հաղթահարելուց հետո Փորողի առջև բացվեց մի լայնատարած հարթություն, որը ձգվում էր մինչև հորիզոնի գիծը, և այնտեղ, հեռվում, երևաց հինավուրց, կիսաքանդ վանքի ուրվապատկերը: Վանքի մի կողմում եղեգնուտներն էին ու նրանց միջից հազիվ նշմարվող լճակը, իսկ մյուս կողմում՝ հսկայական կաղնին, որի ստվերում խոտը, ի տարբերություն շրջակայքի արևխանձ խոտի, դալար էր և հյութեղ: Սրան թերևս մի բացատրություն կար, այն է՝ կաղնու ստվերն անշարժ է՝ միշտ նույն տարածքի վրա ընկած: Այո, դա երազի կաղնին էր, արդեն վիթխարի և կիսով չորացած:

«Երևի հենց այստեղ է որոնումներիս վերջը», - մտածեց Փորողը: Արևի լույսով ողողված կանաչ սաղարթի միջից լսվեց սոխակի զվարթ դալալը, և նրա ողջույնի երգն այնքան զիլ էր, որ համարյա խլացնում էր կաղնու հակառակ՝ չոր կողմում ծվարած ագռավի կռկռոցը: Փորելու համար գետնին նախնական նշումներ անելու կարիք չկար, տեղը նախանշված էր ստվերով, որը երբեք չէր շարժվելու:

Հարկավոր է փորել ստվերը:

Փորողը պտտվեց ծառաբնի շուրջը, մի հարթ, քարագուրկ տեղ ընտրեց, որտեղ էլ մի ծածկ սարքեց չոր խոտ ու ճյուղից:

Գիշերով սոխակը լռեց, փոխարենը՝ սաստկացավ ագռավի կռկռոցը, որը տհաճ զգացումներ էր արթնացնում և խանգարում քնելուն: Փորողը քարեր նետեց կռկռոցի ուղղությամբ, սակայն ջանքերն ապարդյուն էին: Ճիշտ է, ագռավն այնուամենայնիվ թռավ, բայց միայն՝ որպեսզի տեղափոխվի կաղնու հակառակ՝ կանաչ կողմը և շարունակի կռկռալ: Նրա կռկռոցն ասես ծերունական փնթփնթոց լիներ: Փնթփնթոցը և լուսնի լույսով երևացող ագռավի աղոտ ուրվապատկերը մանկության հուշ արթնացրին՝ կուզը ցից մի պառավ, որ ամեն երեկո գերեզմանատան կողմից իջնում էր նեղլիկ փողոցով, անցնում իրենց պատուհանների տակով և դժգոհ փնթփնթում. «Չեք լսում ինձ, ոչ ոք չի ուզում ինձ լսել: Ոչինչ-ոչինչ, կգա ժամը, մոտ է, էն ժամանակ կխնդրեք, բայց ուշ կլինի, ոչ ոք չի փրկվի: Մոտ է ժամը, մոտ...»: Պատուհանի գոգին նստած՝ նա միշտ ցանկանում էր վազել պառավի ետևից և հարցնել, թե ում և ինչի մասին է խոսքը, սակայն վախենում էր. պառավին ոչ ոք չէր սիրում, նրան հանդիպելիս մեծահասակները թեքում էին ճանապարհը, իսկ երեխաները՝ քաշում էին նրա հնամաշ սև վերարկուի փեշը, հեռու փախչում և ծամածռություններ անում: Անտարբեր չէին նաև շները, որոնք թշնամական հաչոցներով պառավին ուղեկցում էին մինչև փողոցի ծայրը, բայց կծել չէին համարձակվում: «Ո՞վ է, մամ, ինչու՞ ոչ ոք չի սիրում նրան...», - հարցնում էր մորը: «Ասում են, որ նա փործանք է բերում, - պատասխանում էր մայրը, - նրա հետ խոսողը մինչև կյանքի վերջը դատապարտված է մթության մեջ խաբխափելու: Քնիր և մոռացիր, տղաս»: Քնում էր և երազում տեսնում պառավին: Բայց նրա կնճռապատ դեմքը չար չէր, տխուր էր: «Ինձ ոչ ոք չի սիրում, - ասում էր պառավը, - բոլորը ծոխ ծլվլոց են սիրում՝ քաղցր-մեղր, սուտ ծլվլոց, ինձ լսել չեն համարձակվում: Գոնե մոտ արի մտա: Մի վախենա, արի...»: Խղճում էր պառավին, բայց դուռնալ, այդուհանդերձ, չէր համարձակվում, թեև աներևույթ մի ուժ համառորեն հրում էր նրա կողմը: «Ոչինչ, վաղ թե ուշ գալու ես, աչքերիցդ

երևում է: Առայժմ քնիր, ուժ հավաքիր, ինձ լսելու համար շատ ուժեղ պիտի լինես»:

Վերջապես հասկանալով, որ ագռավը չի լքելու կաղնին, Փորոզը հրաժարվեց նրան քշելու մտքից, և քանի որ քնել չէր հաջողվում, վճռեց սկսել գործը:

Բուսականության փտած մնացորդներից կազմված առաջին շերտերը հեշտությամբ էին փորվում: Բահով կտրված հողի մեջ լուսնի լույսով տեղ-տեղ փայլվում էին որդերի խոնավ, լարծուն կծկունները, այս ու այն կողմ էին փախչում խուճապահար ուտիճները: Հետո բահը հանեց ինչ-որ կրծողի, հավանորեն՝ առնետի, փտող կմախքը, որի խոռոչներում բույն էին դրել սպիտակ, պարարտ որդերը: Գետնի տակ նույն աշխույժ կյանքն էր, և ընդհատակի բնակիչները դժգոհ էին բահի միջամտությունից: Սակայն գոհ էր ագռավը, նա ամեն անգամ իջնում էր բահի նետած թարմ հողի վրա և որդ կամ ուտիճ կտցում: Փորոզն ականա կերակրում էր իր քունը խանգարած թռչնին: Ուշ գիշերով դարձյալ պառկեց քնելու՝ շատ էր հոգնել, ագռավն էլ կարծես հոգնել էր ու չէր կռկռում այլևս, կշտացած-փքված թառել էր չոր ճյուղին ու փակել աչքերը, սև փետուրները փայլում էին լիալուսնի լույսով՝ այնքան մոտիկ, ասես՝ թիրախ... Կուշտ ուտելուց բնագոյնը բթացե՞լ են... Ոչ, թերևս վստահում է, համոզված է, որ Փորոզն իրեն չի վնասի:

Մինչև քուն մտնելը, հոգնած մարմինը չոր խոտերին հանձնած, նա լսում էր գիշերային ձայները, և դրանք խորհրդածելու առիթ էին տալիս, հնարավոր է նաև, որ խորհրդածելու ցանկությունն էր մղում կենտրոնանալու ձայներին: Եղեգնուտի կողմից լսվեց կատվի սոված մլավյունը, ապա՝ առնետի պատասխան ծվծվոցը. դատելով ծվծվոցի մարտական երանգից, կատուն իր ընթրիքը հեշտությամբ չի հայթայթելու, եթե առհասարակ հայթայթելու է: Վանքի մոտ զգվռտվում էին շները, զգվռտոցի ընդհանուր աղմուկի մեջ առանձնանում էր աղեկտուր մի վայնասուն, որն աստիճանաբար խլանալով՝ փոխվեց դատապարտվածի սոսկալի ոռնոցի: Կաղնու մոտերքում ճատճատում էր բվի ճանկն ընկած դաշտային մուկը: Լճափին սարսափահար կռում էր գորտը, որին երևի խայթել էր օձը: Իր հերթին գորտն էլ քիչ առաջ երևի խժժել էր որդին կամ ճանճին... Ամենուրեք սեփական գոյությունը պահպանելու համար կյանքի մի ձև ստիպված էր լափելու մի ուրիշ ձևի: «Սպանող չլինելու համար մեկ միջոց կա միայն՝ ինքնասպան լինել», - մտածում էր Փորոզը:

Հաջորդ օրը բահը դեմ առավ ամուր ապարներին. հիմա առաջ գնալ կարելի էր միայն քլունգի օգնությամբ:

Անցնում էին օրեր, ապարներն առավել դժվարությամբ էին տեղի տալիս: Սակայն Փորոզին ոչինչ ետ պահել չէր կարող: Փոսի եզրից վեր՝ արդեն չէին երևում նրա այնքան մազերը, երևում էր վերուվարող քլունգը կամ հողը նետող բահը: Այլևս կանգ չէր առնում մանր-մունր գտածոներն ուսումնասիրելու համար՝ առանց ժամանակ վատնելու ընթանում էր դեպի գլխավորը, դեպի վերջը:

Սկսեց ցրտել: Սոխակը լքել էր կաղնին, ծառը հիմա անբաժան տնօրինում էր ագռավը, որի կռկռոցը վաղուց արդեն չէր գրգռում Փորոզին: Արեգակն անցնում էր երկինքն ամբողջովին պատած թանձր ամպաշերտերի ետևով, ծածկվում էր ներքի այն կողմում, սկսվում էր երեկոյան աղջամուղջը: Ստվերներն աղավաղվում էին, մութը խտանում էր, գալիս էր գիշերը, և Փորոզը նոր միայն դադարեցնում էր գործը՝ դուրս էր սողոսկում փոսից և հոգնած պառկում ծածկի տակ: Մինչև քուն մտնելը քիչ ժամանակ էր տևում, սակայն այդուհանդերձ հասցնում էր լսել մարմնի ձայները և զգալ, թե ինչ դժվար է դրանք խլացնել: Մարմինն ամուր կառչած է հոգուն (հնարավոր է նաև հակառակը), և ոչ մեկը, ոչ մյուսն ազատ լինել չեն կարող: Մարմինն ունի իր համառ պահանջներն ու ցանկությունները, որոնք հնարավոր է առավելագույնս զսպել, սակայն իսպառ արհամարհել անկարելի է: Ահա հիմա էլ, ընտրելով մինչև քուն ընկած կարճ, ուժասպառ ժամանակը, մարմինը բարձրացրել է իր հերթական՝ այս անգամ վավաշոտ ձայնը, երևակայությունը լցնելով կանացի մերկության մանրամասներով: Ինչպե՞ս ազատվել ստինքների ու ազդրերի մտատեսիլային արշավանքից: Չսպված, բավարարում չստացած ցանկությունները հանգիստ չեն թողնում նույնիսկ քնի մեջ, շարունակում են հալածել երազների ձևով: Մերկ կինը, որ երագի լճափին մոտեցավ նրան, կարծես թե ծանոթ էր, այսինքն՝ ծանոթ էին նրա մարմնի առանձին մասերը և դրանից ելնելով՝ նա ծանոթ էր թվում առհասարակ: Լճակի կողմից սառը քամի էր փչում, և կնոջ ձեռքի տաք հպումը հաճելի էր կրկնակի: Երբ փորձեց գրկել, կինը ետ քաշեց ձեռքը, ծիծաղելով դուրս պրծավ գրկից, վրան զցեց չգիտես որտեղից հայտնված սև թիկնոցն ու փախավ: Վազեց ետևից: Կինը դանդաղ էր վազում, ասես խաղում էր: Երբ վերջապես հասավ ու բռնեց նրան՝ սոսկաց, որովհետև թիկնոցի միջից իրեն նայեց կուզը ցից, կնճռոտ, հողագույն դեմքով պառավը: Հրեց նրան: Երագի պատկերը մի պահ խզվեց... Պառավը հայտնվեց լճակի կենտրոնում, նա խեղդվում էր, օգնություն աղերսում... Ի՞նչ պառավ, դարձյալ այն մերկ, գեղեցիկ կինն էր, պառավ չի եղել, շփոթմունք էր երևի: Նետվեց ջուրը, լողաց դեպի խեղդվող կինը, ափ հանեց նրան և սեղմեց գրկի մեջ: Սակայն գրկի միջից դարձյալ

նայեց պառավը: Փորձեց փախչել, բայց պառավն իր մագիլներով ամուր կառչել էր ու թունոտ քրքջում էր: Հրեց նրան և... Պատկերը դարձյալ խզվեց...

Սոխական այդպես էլ չվերադարձավ, կաղնին ամբողջովին չորացել էր՝ ոչ մի կանաչ տերև, ոչ մի կենդանի ընծյուղ, կուզիկ ագռավը վաղուց արդեն համարձակորեն իջնում էր չորացած ծառից և նշանակալից կեցվածքով շրջում փոսի եզերքով՝ պարբերական կռկռոցներով ուղեկցելով Փորողի գործողությունները, գործիքները խիստ մաշվել էին, սակայն դա չէր անհանգստացնում Փորողին, որովհետև զգում էր՝ ավարտը մոտ է, և համոզված էր՝ սա վերջին փոսն է:

Այո, հանգուցալուծումը մոտ էր, Փորողն օրըստօրե ավելի պարզորոշ էր զգում նրա խորհրդավոր շունչը: Սակայն որքան գործը խորանում էր դեպի ավարտը, շուրջը և ներսում պտտվող հարցերի քանակն ավելանում էր պակասելու փոխարեն, և էլի տարօրինակ էր՝ հարցերի մեջ քիչ չէին այնպիսիները, որոնց պատասխանները կարծես թե վաղուց արդեն գտել էր ու այլևս չէր կասկածել: Ապանակ վախը, որ վերջին օրերին հաճախակի էր այցելում: Սրա պատճառը հավանաբար խորհրդավոր անհայտի հետ մոտավորտ հանդիպման կանխագագացումն էր: Գիշերներով, երբ սթափությունն աստիճանաբար տեղի էր տալիս և քունն ուր որ է հաղթելու էր, գալիս էր վախը՝ իր սառն ու լարծուն շոշափուկներով, որոնք դուրս էին սողոսկում փոսից, երկարում-ձգվում էին դեպի նա և ամեն կողմերից շոշափում մարմինը. թվում էր՝ նրանք տնտղում, արժևորում են մի բան, որը վաղ թե ուշ իրենց է պատկանելու: Հետո շոշափուկներից երկուսն իրենց ծծիչներով կաչում էին քունքերին, և շեշտակի լիցքապարպումը հանկարծ շամփրում էր ուղեղը: Փորողը սարսափած վեր էր թռչում և տենդագին շփում տնքացող քունքերը: Իսկ շոշափուկներն անմիջապես ետ էին քաշվում և չքանում փոսի մեջ:

Գործիքները վերջնականապես ջարդվեցին, անպետքացան: Սակայն չնորոգեց, ժամանակ չկար և իմաստ էլ չունեք. գործը շարունակեց կոշտացած մատներով: Որովհետև վերջը շատ մոտ էր, նրա շունչն արդեն խփում էր չորացած արմատների խճճումներն ատամներով քանդել ջանացող Փորողի քրտնած դեմքին: Էլի մի քիչ՝ և ամեն բան պարզվելու էր...

Վերևում քամի բարձրացավ, մթնում էր, ուժգնացավ ագռավի չարագուշակ կռկռոցը, սակայն Փորողը ոչինչ չէր նկատում, նա չէր նկատում նույնիսկ պլոկված մաշկով մատների, ջարդարտված եղունգների, տեղահան եղած ատամների ցավը: Ահա և վերջին սալաբարը...

Մութն առավել խտացավ, կուզը ցցած ագռավը փաթաթվեց սև թիկնոցով, հենվեց ցուպին ու փնթփնթալով հեռացավ, ոչ, փախավ: Լուռ էր: Շուռ տված սալաբարի տակից սառը խոնավություն և տհաճ մգախոտ փչեց: Սրտի դողով մաքրեց-հեռացրեց հողաշերտը և... վերջապես դուրս բերեց: Հաստ, սև ապակի էր՝ անկանոն բազմանկյան ձևով, ձեռնափից քիչ մեծ, անկյուններից մեկը վերջանում էր ոսկրյա կոպիտ բռնակով: Ապակու վրայից թևքով սրբեց փոշին: Լուսինն ամբողջովին ծածկված էր խիտ ամպաշերտերի ետևում, սակայն սև հայելու ներսը տեսնելու համար արտաքին լուսավորության կարիք չկար, հայելին ուներ սեփական, ներքին լույս, որի շնորհիվ նկատելի էր նրա խորության ամբողջ անսահմանությունը: Եվ այդ անսահմանության մեջ ծնվում ու չքանում, միանում ու փլուզվում էին ինչ-որ մութ, անձև գոյացություններ: Այդ ամենը գտնվում էր համընդհանուր քառասյին շրջապատույթի մեջ: Տեղ-տեղ կուրացնող բռնկումներ էին հայտնվում և անմիջապես էլ մարում: Ուրիշ... ոչինչ: Ուրիշ ոչի՞նչ...

Տագնապած շուռումուռ տվեց հայելին, դարձյալ սրբեց, համարյա փայլեցրեց ու նորից նայեց: Համընդհանուր քառասյի միջից հանկարծ դուրս եկավ ու ընդառաջ քայլեց մի կմախք: Եկավ, կանգնեց և իր մութ ակնախոռոչներով նայեց: Փորողը բարձրացրեց թևը, կմախքի թևը նույնպես բարձրացավ, թեքեց գլուխը, գանգը նույնությամբ թեքվեց: Հետո, ասես ցուցադրությունն ավարտված համարելով, կմախքը փուլ եկավ և վերածվեց ոսկրակույտի: Հայելու մեջ մրրիկ բարձրացավ, վեր հանեց ոսկրակույտը, որը մրրիկին հանձնված՝ ոլոր-մոլոր լուսաբծով սլացավ հեռու: Քիչ անց, ասես հարցական նշաններից կազմված այդ ֆոսֆորափայլ շարանը չքացավ, մարեց, անհայտացան նաև անորոշ գոյացումները, մնաց միայն մութ դատարկությունը, ոչինչ: Վերստին փայլեցրեց հայելին: Սակայն ապարդյուն, հայելու մեջ, ավաղ, անդարձորեն իշխում էր մութ ոչինչը:

Այսքա՞նը...

Հոգու խորքում հանկարծ գլուխ բարձրացրեց խղճահարությունը, որն ահագնացավ արագորեն և գրավեց ողջ էությունը. Փորողը սկսեց սաստիկ խղճալ բոլորին ու ամեն բան՝ սկսած միաբջիջից մինչև մարդ, քարի կտորից մինչև մոլորակներ ու աստղեր... Սիրտն ուժգին ձնվեց, աչքերն անգորությունից ու անելանելիությունից խոնավացան:

Վերևում գոռու-գոչյունների աններդաշնակ, զարհուրելի աղմուկ բարձրացավ, խաբվածների ոռնոցը սաստկանում էր և տարածվում երկնքով: Երկինքը սառն էր ու անտարբեր:

Նա կատաղած մի կողմ նետեց հայելին, գլուխն առավ ափերի մեջ և թուլացած փլվեց փոսի հատակին: Հայելին սլացավ՝ թեքորեն հատելով հորիզոնի դժգույն լուսաբիծը, ապա որպես մի բուժմե-րանգ՝ կորագծով սուրաց ետ, դեպի ելակետը: Փորողը լսեց ետևից սրընթաց մոտեցող հայելու շվվոցը, բայց անշարժ մնաց. շարժվելն իմաստ չունեց: Բացի այդ, մոտեցող հայելին փակ համակարգից դուրս պրծնելու վերջին հույսն էր, թող որ պատրանքային, սակայն այդուհանդերձ հույս էր՝ ջրափրփուր, որին ստիպված ապավինում է խեղդվողը:

Հարվածը շեշտակի էր, ուժգին: Փորողն անբնականորեն ջղացնցվեց ու փռվեց քարերի վրա: Երկինք հառած հայացքի մեջ աստիճանաբար պաղեց և դաշված մնաց վերջին հարցը, և նա ար-դեն չէր զգում, թե աստկացող քամին ինչպես է վրան շուռ տալիս փոսեզերքի խոնավ, սառը հողը:

ՎԱԽԸ

Վ-ն այլևս չէր քննարկում օրեցօր ծանրացող իր հոգեվիճակը. քննարկումներն անօգուտ էին, գալիս էին, գնում, իսկ վախը մնում էր, մնում և ուժգնանում: Վախն ասես ճահիճ լինե՞ր՝ որքան ավելի տենդագին էին նրանից դուրս պրծնելու ջանքերը, այնքան ավելի խոր էր խրվում Վ-ն: Ի վերջո՝ ճահիճն իսպառ կուլ տվեց նրան, վա-խը լցրեց ողջ էությունը, կծկեց մկանները, շղթայեց գիտակցություն-նը, թափանցեց ամենահեռավոր բջիջները և դարձավ արմատացած, կայուն հոգեվիճակ, որն ընթանում էր միմիայն արա-գացմամբ՝ իր ետևից քարշ տալով դիմակայելու անկարող, դատա-պարտված Վ-ին: Այդ ծանր զգացման անդադար, տևական ճնշման տակ նա աստիճանաբար կծկվեց, փոքրացավ ու մարդկանց սկսեց նայել վարից՝ զգուշացած, մեղավոր ու մի քիչ էլ հարցական: Այդ-պես նայում է կրիան, երբ ձգնում է պարզել՝ վտանգավոր չէ՞ արդ-յոք գլուխը գրահի միջից ամբողջովին հանելը: Վ-ն, սակայն, այն կրիան էր, որի համար անվտանգ իրավիճակներ գոյություն չունեն՝ կրիա, որին երբեք չի լքում սոսկումը, թե իր գրահը թափանցիկ է ու փխրուն, իսկ իրականությունը՝ թշնամական, նենգ ու դաժան:

Վախվորած-կծկված Վ-ին տեսնելով՝ մարդիկ հանկարծ հայտ-նաբերում էին, թե որքան ուժեղ ու համարձակ են իրենք, ակամայից խորին հարգանքով էին լցվում սեփական անձի նկատմամբ՝ ձգվում էին, խստանում ու կարծես ավելի բարձրանում կծկված Վ-ի գլխա-վերևում. նույնիսկ կուշտ կերած գիշատիչը, որը բոլորովին միտք

չունի հոշոտելու պատահաբար դեմը ելած նապաստակին, հենց միայն վերջինիս խուճապից գրգռված՝ ծվատում է նրան, այսինքն՝ եթե դու ինքնակամ ներկայանում ես որպես զոհ, դիմացինիդ ոչինչ չի մնում անելու, քան իրեն գիշատիչ զգալը: Իհարկե, ի տարբե-րություն բացահայտ գիշատիչների, մարդը, հնարավոր է, որ մեծա-հոգություն ցուցաբերի «նապաստակի» նկատմամբ, սակայն խորքում կմնա նույն գիշատիչը, որովհետև նման մեծահոգությունը սեփական հզորության հաճելի փաստը վայելելու մարդկային տար-բերակն է պարզապես: Մուրացկանին նվիրած մի քանի դրամը՝ գրպանում մնացած հարյուրն ըմբռնվածն էլ հիանալի միջոց է, սե-փական բարեկեցության մասին մեկ անգամ ևս հիշելու միջոց՝ մու-րացկանի հաշվին:

Վ-ի վախն արդեն հիվանդագին էր՝ շրջապատող իրականու-թյունը նրան ահաբեկում էր իր համարյա բոլոր դրսևորումներով: Վ-ին վախեցնում էին գովազդները, կարգախոսներն ու ցուցանակները, ավտոմատ սարքերն ու ինքնուրույն գործողություն կատարող խաղալիքները, մեքենաները, ընդունիչները, շենքերն ու հեռագրայուները, իսկ հեռախոսները թվում էր՝ ամենաչնչին ձայնն իսկ որսացող և Ուր Հարկն է հաղորդող լրտեսներ են: Սակայն ամե-նից սարսափազդուն հեռուստացույցից էր վերջինս կրակում էր, պայ-թեցնում, զոռզոռում, հոխորտում, հայիոյում, լաց լինում, խորհուրդ-ներ տալիս, հանդում, զգուշացնում, սպառնում... Անհիճյալ տուփը Վ-ի վրա էր թափում համայն աշխարհի կեղտը՝ անարդարություն-ներ, բռնություններ, ահաբեկչություններ, այդ ամենը համեմելով սի-րունիկ հաղորդավարուհիների շինծու ժպիտներով, ասես դրանք ի վիճակի են ցրելու մռայլությունը: Կամ՝ ի՞նչ կարող էր փրկել սիրա-յին սենտիմենտալ մեղորամը, երբ նրանից առաջ և հետո, օրվա ի-րադարձությունների էկրանին, պայթում էին ուղևորներով լեցուն մեքենաներ ու ինքնաթիռներ, բախվում գնացքներ, սուզվում ական-ներին դեմ առած նավեր, տնքում էին խեղանդամվածները, թաղում էին զոհերին, երբ մի տերություն սպառնում էր ավերակների վերա-ծել մի ուրիշ տերության, երբ ելուզակների խումբն օրը ցերեկով մորթում էր անմեղ մարդկանց, երբ կուշտ կերածների կողքին մա-հանում էին սովից, երբ սպիտակն ատում էր սևին, արևմուտքն արևելքին և հակառակը:

Այդպես, օր-օրի, քարշ էր տալիս Վ-ն իր վախեցած-կծկված գո-յությունը: Փողոցներով կարծես ոչ թե քայլում, այլ գլորվում էր: Ոչ մի տեղ կանգ չէր առնում՝ ձգնելով պահ առաջ սպրդել փողոցային իրարանցումից: Միայն սպորտային խանութի մոտ դանդաղեցնում

էր ընթացքը, որպէսզի տեսնի ցուցափեղկի գնդակներն ու գնդիկները: Կլոր ձևերը հաճելի էին Վ-ին, հարազատության շունչ էր առնում նրանցից: Վաղուց կռահել էր կլոր ձևի առավելությունները՝ միայն կլորն է հասցնում շփման նվազագույն հնարավորության, իսկ եթէ կլոր ձևի հետ հասնել առավելագույն ողորկության՝ շփումը գործնականում կվերանա: Առավել հաճելի էին բիլիարդի գնդերը, հատկապէս մանկական բիլիարդի գնդիկները, որ պստիկ էին, մետաղյա, նիկելապատ: Վ-ն հաճախ էր մտովի վերցնում ապակու ետևից իրեն ժպտացող գնդիկը՝ այն, որ մյուսների հետ խմբված չէր կանաչ պաստառի կենտրոնում, այլ առանձնացած էր ու միայնակ կանգնած մութ գցանցքի պռնկին. վերցնում էր գնդիկը, երևակայությամբ շոյում ողորկ մակերեսը և գլորում փողոցն ի վար.

Եվ գլորվում էր գնդիկը փոշոտ, մարդաշատ, աղմկոտ փողոցներով, պլստում-անցնում ոտքերի արանքներով, հեշտորեն շրջանցում արգելքները, անվնաս դուրս պրծնում նույնիսկ ամենավիթխարի անվաղողների և թրթուրների տակից: Նրան ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, ոչ ոք չէր փորձում կանգնեցնել, միայն մանուկներն էին հայացքներով հետևում՝ ճպճպացնելով զարմանքից լայնացած աչուկները: Գնդիկն ազատ էր: Նա դուրս էր սահում անհեթեթ իրարանցումից, գտնում անաղմուկ, անմարդ վայր, պտտվում՝ փորելով իր հանգրվան կոնը և խաղաղվում: Հետո թափվում էր ծյունը, փաթիլները սկզբում հալչում էին՝ դիպչելով ողորկ մետաղին, սակայն նրանց համառությունն ի վերջո սպիտակ, փափուկ շերտով ծածկում էր գնդիկին, և աստիճանաբար հաստացող շերտը նրան ավելի ու ավելի էր մեկուսացնում աշխարհից, թողնելով պստիկ, սեղմ մի աշխարհ՝ նրան ծածկած փաթիլների հարևանությամբ: Գնդիկը չէր մրսում, նա և նրան ծածկած ծյունը գտել էին համակեցության ներդաշնակությունը: Հետո գարուն էր գալիս, և ջերմացնող օդը նույնքան լավ հարևան էր, նաև՝ ուռչող հողը, և գլխիկները ծանրորեն բարձրացնող, սաղմնային ամոթխածությունը դեռևս չնետած ծիւղերը, և կապույտ երկինքը, որ թեև հեռու էր, բայց, այնուամենայնիվ, մոտիկ, որովհետև նույն ջերմացնող օդի շարունակությունն էր, թող որ՝ փոփոխվող, թող որ՝ ցրտաշունչ դարձող, չէ՞ որ հետո, հեռու ինչ-որ տեղ, դարձյալ ջերմանալու է, ինչ-որ տեղ էլ գուցե գգվելու է ճիշտ նույնպիսի մի գնդիկի և կապելու է երկու գնդիկ եղբայրների ու էլի շատ ուրիշների, որովհետև անվերջություն է, իսկ անվերջության մեջ անպայման գոյություն ունեն անվերջ քանակությամբ միանման գնդիկներ և...

Եվ միանման կծկված, վախեցած մարդիկ:
«Է՛յ, որտե՞ղ եք, վախեցած եղբայրներ, ձայն տվեք...»,- նայելով

երկնքին՝ կանչում էր Վ-ն ու շարունակում գլորվել փողոցով:

Գիշերով նրան այցելում էին ծանր մղձավանջները, որ սկսվում էին սթափության և քնի սահմանագծում, ապա շարունակվում արդեն երագի ձևով՝ ամբողջ ընթացքում պահպանելով իրական լինելու տպավորությունը: Նախ լսվում էին երգեհոնի հոգեպարար հնչյունները, որոնց, սակայն, աստիճանաբար խլացնում էին թմբուկների ու ժգնացող կոպիտ, որոտընդոստ համազարկերը: Քիչ հետո թմբուկներին էր միանում մեքենաների, ինքնաթիռների, հրթիռների հռնդյունը, և երգեհոնը վերջնականապես լռում էր: Վ-ն հանկարծ սոսկումով տեսնում էր, որ դեպի իրեն է գալիս ծխով պարուկած մեծ թափորը, թափորի առջևից՝ խոժոռադեմ, զայրացած մարդիկ, որոնք սուլում էին Վ-ի վրա, սաստում, սպառնում՝ թափափարելով համերաշխ բռունցքները: Մարդկանց ետևից գալիս էին շունչ առած հեռախոսներն ու հեռուստացույցները, մեքենաներն ու ինքնաթիռները, ալեհավաքներն ու հակազագերը, հրացաններն ու ռումբերը, տանկերն ու հրթիռները... Թափորը եզրափակում էին բարալիկ ոտքերի վրա ճռվող ցուցանակներն ու կարգախոսերը՝ «ԵԼԲ ԶԿԱ», «ԱՌԱՆՑ ԹԱԿԵԼՈՒ ԶՄՏՆԵԼ», «ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է», «ԶԳՈՒՇԱՑԻՐ ԱՎՏՈՍԵՔԵՆԱՅԻՑ», «ԱՅՍՏԵՂ ԶԿԱՆԳՆԵԼ», «ԶՓՈՐԵԼ, ՎՏԱՆԳԱՎՈՐ Է», «ԶԴԻՊԶԵՍ, ՄԱՀԱՑՈՒ Է»: Թափորն անսպասելիորեն շրջապատում էր Վ-ին, հեռվում զարհուրելի պայթյուն էր լսվում, երկինք էր բարձրանում վիթխարի, չարագուշակ Սունկը, Վ-ն ասրսափահար փակում էր աչքերը, ձեռքերով ցավեցնելու չափ սեղմում ականջները և աղեկտուր գոռում՝ «Ինձ հանգիստ թողեք, ես ոչ մի վատ բան չեմ արել, ի՞նչ եք ուզում, թողեք ինձ...»: Հետո մի պատկեր, որ փորձում էր աննկատ, նենգորեն թափանցել մղձավանջի մեջ, սակայն ինչ-որ բան միշտ խանգարում էր, և մղձավանջում հայտնվում ու հապճեպորեն չքանում էին այդ պատկերի առանձին բեկորները միայն. խունացած պատի տակ փայտյա կոպիտ, երկարուկ նստարան, որ ամուր մեխված էր գետնին, խոնավ գետնին՝ արյան բծեր... Երկաթյա ծանր դուռ: Պատկերի այդ բեկորները և՛ ծանոթ էին, և՛ անծանոթ... Հու՞շ էին, թե կանխագուշակություն...

Առավոտյան, մռայլ մղձավանջներից սթափվելով, նստում էր, տրորում ուռած աչքերն ու մտածում՝ «Ո՞րն է իմ մեղքը, հենց միայն ծնվելը բավարա՞ր պատճառ է մեղավոր լինելու»:

Վ-ի շարժումներն օրեցօր ավելի աններդաշնակ էին դառնում, կաշկանդված, անհամարձակ: Կատարելիք յուրաքանչյուր գործողությունից առաջ հոգին կրծում էր կանկածը՝ կարելի՞ է, արդյո՞ք հանցանք չէ արածը... Հոգեմաշ ապրումները, անդադար հուզում-

ները ծայրաստիճան զգայուն էին դարձնում առանց այն էլ զգայուն Վ-ին. նա ամբողջ մարմնով շղացնցվում էր, երբ լսում էր իր անունը, ցնցվում էր նույնիսկ պատահական գոռոցից կամ անսպասելի աղմուկից, իսկ դռան զանգի ծղոտոցը կատարյալ խուճապի էր մատնում նրան. գունատվում էր, դողում և ընկնում երկընտրանքի մեջ՝ «Տեսնես ո՞վ է, բացե՞մ, թե՞... Ոչ, թող կարծես, թե տանը չեմ: Իսկ լու՞յսը... Ի՞նչ անենք, գուցե դուրս գալիս մոռացել եմ մարել: Այո, սակայն...»: Եվ այսպես շարունակ:

Երբեմն, երեկոյան աղջամուղջում Վ-ին անսպասելիորեն համալուծում էր մի թվացում, թե քայլում է մութ ոչնչի միջով ձգված նեղ, երրուն ժապավենի վրայով, իսկ տիեզերքի անեզրությունից հայտնվում ու վրան է գալիս անընդհատ ծավալվող խավար, անձև մի զանգված, որի խորքերից գարիուրելի ոռնոցներ էին լսվում, երևում էին շարժվող սովերներ: Տպավորությունն այնպիսին էր, ասես այնտեղ է կենտրոնացել այն ամեն չարը, որ գոյություն ունի տիեզերքում: Ոռնացող այդ զանգվածը մոտենում էր ու տարածվում, ինչպես ջրի մեջ կաթեցված սև թանաք, նրա սահմանկենտրոն շունչը սաստիկ տարուբերում էր ժապավենը, որով գլորվում էր Վ-ն: Նա ահաբեկված կանգ էր առնում, շրջվում՝ ցանկանալով փախչել, սակայն պարզվում էր՝ հրեշավոր զանգվածը համապարփակ է: Վ-ն մնում էր կանգնած չարիքի կենտրոնում, փախչելու տեղ չունեց: Ժապավենը խղճուկ ճռում էր՝ աստիճանաբար տարրալուծվելով զանգվածի մեջ, սակայն, որքան էլ տարօրինակ է, Վ-ն մնում էր կախված, չէր ընկնում: Թեև ու՞ր ընկներ, դրանից էլ խոր վի՞հ, դրանից էլ դժոխային դժո՞խք... Հրեշավոր զանգվածը շջնում էր. «Տիեզերքի պատմությունը չարի պատմությունն է, չլինեք չարը, չէր լինի շարժում, ամեն բան կանգ կառնեք ու կմահանար»: «Մի՞թե ճիշտ է ասում...»՝ մտածում էր Վ-ն և հավաքելով համարձակության փշրանքը՝ բացում աչքերը, բացում ու նայում մութ զանգվածի միջով: Եվ հանկարծ տեսնում էր, թե ինչպես է հեռվում ծնվում աղոտ թրթռացող լույսը: Ինչու՞ էր այդպես աղոտ, գուցե պատրաստ էր, ինչպես՞ ս հասնել նրան... Լույսը մարում էր: Չարախնդալով կորչում էր նաև մութ զանգվածը: Վ-ն սթափվում էր ու նայում շուրջը, և հանկարծ մարդիկ աննկարագրելիորեն հարազատ էին թվում, ուզում էր մոտենալ ու գրկել առաջին պատահածին, սակայն դա մի պահ էր, հաջորդ պահին վախը սաստիկ կաշկանդում էր Վ-ին, նա կախում էր գլուխը, կծկվում և շարունակում ճանապարհը:

Առավոտ էր: Դուռը կիսաբացելով և չորս բուրդը զգուշավոր հայացքով զննելուց հետո Վ-ն դուրս դուրս եկավ տանից, բարձրաց-

րեց թիկնոցի օձիքը և գլորվեց գործի: Մղձավանջների մնացորդները չէին լքում գիտակցությունը, բորբոքված ուղեղը նրանց պարբերաբար արտանետում էր, և մղձավանջների բեկորները, միմյանց հաջորդող պատկերներով, ուրվագծվում էին Վ-ի առջևում՝ առանց այն էլ խրթին իրականությունը դարձնելով բացարձակ անհեթեթություն:

Տանից քիչ հեռու, շինարարության հրապարակում ծյուր էին հալեցնում. խարույկի վրա մեծ դույլի մեջ բլթբլթացող ծյուրն առատ մրածուխ էր արձակում: Բանվորներից մեկը փայտով խառնում էր դույլի պարունակությունը, մյուսը, հողաթմբին նստած, դանակով քերում էր տաբատին և կոշիկներին թափված-չորացած ծյուրը: Բետոնե սալերի տակից երկու շնիկ դուրս եկան, մոտ վազեցին աղբակույտին, վախեցած վնասացին ու ետ փախան իրենց պաստարանը: Վ-ն մոտեցավ ու նայեց: Աղբակույտի ետևում, փոստրակի մեջ, պառկած էր երրորդ շնիկը՝ ամբողջովին ձթակույլ. վրայից ծորած ծյուրը չորացել-կպել էր գետնին՝ գրկելով նրան շարժելու հնարավորությունից, թեև նա արդեն ի վիճակի չէր շարժվելու, երբեմն միայն թույլ ջղածգվում էր ու կամացուկ վնասում, ծյուրը փակել էր քիթմուրթը, տեղ-տեղ խաշել-պլուկել մաշկը: Վ-ն ուսի վրայով գաղտագողի նայեց հողաթմբի վրա նստած բանվորին: Վերջինս լկտի ժպտաց, թքեց հողին, շրջվեց ընկերոջ կողմն ու ինչ-որ բան ասաց, հետո երկուսով բարձրաձայն հռիռակեցին: Առավել վախեցած, առավել կծկված՝ Վ-ն շարունակեց ճանապարհը: Հիշեց, դա նման էր գետնին փխլվող ծմբուկի ծայնի, բակի տղաներն արեցին՝ կատվի ձագին գողացան նկուղից, դրեցին սալաքարին, մի ուրիշ սալաքար թփով իջեցրին վրան. քարերի արանքից արնախառը մածուցիկություն ցայտեց:

Աշխատանքային օրվա վերջում Վ-ին իր մոտ կանչեց պետը, գոռոռաց, թեև Վ-ն առիթ էր տվել, պարզապես բարկացած էր, իսկ ու՞մ վրա կարելի էր պարպել բարկությունը, եթե ոչ՝ Վ-ի, լավագույն քավության նոխազը նա էր: Հոխորտացող պետի առջև կծկված Վ-ն հանկարծ սարսափով հայտնաբերեց, որ կորցնում է մարմնի մասերը. որտե՞ղ են ոտքերը, որտե՞ղ է գլուխը, ձեռքերը... Ի՞նչ են անում ձեռքերը սեղանի վրա, գուցե ծնկների՞ն է պետք դնել... Ոչ, ավելի լավ է խցկել ծնկների միջև, այո, այսպես կարծես թե ոտքերն էլ գտնվեցին... Սակայն անմիջապես էլ կորան ձեռքերի հետ միասին: «Զգաստ», հանկարծ հիշեց Վ-ն մի հեռավոր ձայն, «Շարքերում չխուսել: Աջ ուսն առաջ՝ քայլով մարշ»: Ապա՝ ավելի հեռավոր մի ձայն՝ «Եղիր պատրաստ», և մանկական ծանոթ ձայնի անվստահ պատասխանը՝ «Միշտ պատրաստ»: Հետո մտապատկերում

հայտնվեց կիսամութ, ցուրտ նկուղը, երկաթյա ծանր դռնով, որին պստիկ պատուհան կար, խոնավ պատի տակ՝ փայտյա կոշտ նստարան, թաց գետնին անուժ փռված մարդն ինքն էր՝ Վ-ն, արնաշաղախ դեմքով, տեղահան արված ատամներով, ջարդած կողոկերով: Ներքին ձայնը պահանջեց բաց չթողնել այդ հուշը, իբր այն շատ կարևոր է, իբր կարող է մեկնել հիվանդագին հոգեվիճակի պատճառները: Սակայն Վ-ն որքան էլ լարեց հիշողությունը, պատկերը ոչ միայն շարունակություն չունեցավ, այլև խզվեց ու անդարձորեն չբացավ, ասես գիտակցության այդ կետի վրա արգելք էր դրված, որը միայն մի պահ էր թուլացրել զգոնությունը: «Գնա», - վերջապես պարզվեց պետը: Վ-ն լուռ դուրս գլորվեց առանձնասենյակից:

Տունդարձին սովորականի պես դանդաղեցրեց ընթացքը խանութի մոտ՝ հայացքը չկտրելով ցուցափեղկից, որտեղից իրեն էր ժպտում ծանոթ գնդիկը՝ ժպտում էր իր իսկ աչքերով, իր իսկ դեմքով, ասես ինքը, ինչ-որ կախարդանքով, ուրվագծով էլ է գնդիկի մեջ: Ամբողջ երեկո գնդիկը տպված մնաց մտապատկերում. դա նույն իր պատկերն էր, միայն թե՛ փոքրիկ, ողորկ ու կլոր: Այդպես էլ անկողին մտավ: Պատի ետևում պարզորոշ լսվում էին հարբած հարևանի կատաղի հայիոյանքն ու նրա կնոջ հիստերիկ ծղրտոցը: Վ-ն ականջն ամուր սեղմեց բարձին, մյուս ականջը ծածկեց վերմակի եզրով. ձայները խլացան, և քիչ անց հաջողվեց քնել՝ ընդամազ գնալով երազ-մոլորականքին, որը երկար չսպասեցրեց:

...Տուն բերեց ձթակուլով շնիկին և քարերի միջև ձխված կատվին: Լվաց-մաքրեց շանը, կատվին ուղղեց-ձև տվեց: Նրանք կենդանացան և պահանջեցին կերակրել իրենց: Կերակրեց: Սակայն նրանք չէին հագենում. անդադար լափում էին ու արագորեն մեծանում, և շուտով հասան վիթխարի չափերի: Իսկ Վ-ն, հակառակը, փոքրանում էր, և հանկարծ սարսափով տեսավ, որ նրանք, երախաբաց, գալիս են իր վրա: «Ես ձեզ փրկեցի...», - գոռաց նա ու փախավ: «Դու ինչ է, մարդկանց ցեղից չե՞ս», - պատասխանեցին կենդանիները՝ հալածելով նրան: Քիչ հետո, երբ սարսափահար շրջվեց՝ զարմանքով հայտնաբերեց, որ իրեն արդեն հալածում է ծխով ու փոշով պարուրված թափորը. գազանները չբացել էին: Շարունակեց վազել, սակայն ուժերը սպառվում էին: Վերջապես համոզվելով, որ փախչել չի հաջողվի՝ Վ-ն կանգ առավ ու կծկվեց: Ահա, արդեն շրջապատման մեջ է, թափորն իր գլխավերևում է, իրեն անխնա կոխարձում են, խփում... Սակայն տարօրինակ է, ինչու՞ ցավ չի զգում... Պարզապես այստում է ներբանների տակից, ոստոստում, գլորվում՝ մնալով կատարելապես անվնաս: Մի՞թե...

Երազը շարունակվում է, թե՞ արթնացել է... Կարծես թե իսկապես արթնացել է և... Անկողնուց ցած է գլորվում: Փորձեց կառչել վերմակից, բայց ապարդյուն, ձեռքերը չենթարկվեցին. ձեռքեր չկային...

Ընկավ հատակին՝ տախտակների միջև եղած ձեղքի որոգայթը, և շարունակեց գլորվել՝ զգալով աստիճանաբար լայնացող ձեղքից փչող զովը: Արդեն պատի մոտ՝ ձեղքն այնքան լայնացավ, որ Վ-ն կորցրեց հենակետերը, սահեց և ընկավ մութ, փոշոտ խորշը, հատակի տակ:

«Սա վատ ապաստարան չի, - խիտ, փափուկ փոշեշերտի մեջ ընկղմվելով՝ մտածեց Վ-ն: - Այստեղ ինձ չեն գտնի»:

ԹԻԿՆԱՊԱՐԿ

Գիշերային մեջքացավի մասին Մ-ն կռահել էր դեռևս առավոտյան, երբ անկողնուց ելնելով՝ սեփական հողաթափը մթության մեջ առնետի տեղ ընդունեց, նույնիսկ թվաց, թե պարզորոշ լսեց զգվելի ծվծվոցը: Լույսը վառելուց հետո թյուրիմացությունը պարզվեց, սակայն հոգին պաշարած նողկանքն այդպես էլ չջրվեց, ավելին՝ վերածվեց սաստկացող կանխազգացման, և Մ-ն թեև դժկամորեն՝ այնուամենայնիվ, ստիպված էր համաձայնել անդադար նույնը հուշող մտքի հետ, թե հողաթափ-առնետի ծվծվոցը պատահական զգայախաբություն է, այլ քողարկված նախազգուշացում:

Այդ գիշեր մեջքը սովորականից ուժգին ցավեց. բութ, տնքացող ցավ էր թիակների միջև, որը, ինչպես միշտ, տարածվում էր դեպի թևատակերը՝ փոխվելով քորի անզուսպ զգացման: Աշխատում էր տուրք չտալ՝ լավ իմանալով, որ այդ թուլությանը զիջելը անարդյունք լինելուց բացի նաև վնասակար է. չէ՞ որ քորելիս քորելու տենչը միայն սաստկանում է, հետո գալիս է մի պահ, երբ սկզբում անվտանգ թվացող այդ գործողությունն աննկատ վերաճում է անսանձ մոլուցքի, նմանվելով այն մեքենայի արագացմանը, որի արգելակները վայրէջքի միջոցին վթարվել են: Այդուհանդերձ, ինքն իրենից ծածուկ, մեջքը ժամանակ առ ժամանակ քսում էր մահճակալի թիկնակին՝ ամեն անգամ ներքուստ արդարանալով, թե դա կատարվում է ակամա, բնազդաբար: Հետո, երբ ձեռքերը դավաճանորեն շարժվեցին դեպի կոնակը, զգաց, որ պարտվել է և այլևս չընդդիմանալով՝ ինքնամոռաց տրվեց թուլությանը: Վայելքն աննկարագրելի էր, քորելը դադարեցրեց միայն այն ժամանակ, երբ նկատեց, թե ինչպես արնոտվեցին մատները: Արյունը միշտ անբա-

ցատրելի վախ էր ներշնչում, որին միախառնված էր մեղքի անորոշ զգացումը, նույնիսկ պստիկ կաթիլ արյունը, երբեմն էլ պարզապես արնագույնը տհաճ հիշողություններ էին արթնացնում՝ ոչ նշանակալից թվացող հիշողություններ, որոնք վաղուց պիտի ջնջված լինեին: Հիմա էլ, երբ նայեց արնոտած եղունգներին, հառնեցին մշուշոտ հուշապատկերները՝ պարսատիկի քարից ջախջախված կրծքով թռչուն, գլխատված աքլորի արնաշաղթ արտոց, շեղքի շարժումին հետևող գետնած գառան աչքեր, մեքենայի տակից վայնասունով փախչող շուն, արյունվա դեմքով մի պատանի... Եվ էլի մի աղոտ հիշողություն, որն իրենը չէր, այդ իսկ պատճառով առավել տարակուսանք էր պատճառում. անծանոթ ինչ-որ քաղաքի խուլ նրբանցքում, հողաշեն տան պատի տակ կծկված, արնածոր որովայնն ամուր գրկած, կատարվածը դեռևս չգիտակցող հայացքով իրեն նայող մի մարդ էր: Ի՞նչ քաղաք էր, ո՞վ էր այդ մարդը... Գուցե նախնիներից մեկի ժառանգաբար փոխանցած հիշողությունն էր... «Ես նրա փոխարեն պատասխանատու չեմ», - մտապատկերի առաջ արդարացավ Մ-ն, սակայն ծայրը դողաց:

Տհաճ տեսիլքները ցրելու համար նա հայացքը հառեց առաստաղին և փորձեց տարվել իր գիշերային խաղով, որը, սովորաբար, փոխարինում էր ազդեցությունն արդեն կորցրած քնաբերին: Խաղն, ըստ էության, մանկական էր՝ առաստաղի ճաքերն ու անձրևակաթի հետքերը մտովի համադրելով՝ զանազան պատկերներ ստեղծել: Սակայն ուժգնացող մեջքացավը բռնանում էր երևակայության վրա, պատկերները չէին կառուցվում: Այդ ցավն ու ճնշող կանխագացումները թույլ չէին տալիս մտածել որևիցե այլ բան, և անկարող լինելով չենթարկվել՝ Մ-ն մեկ անգամ ևս վերհիշեց սկիզբն ու զարգացումը, փորձեց դարձյալ փնտրել պատճառն ու կռահել ապագան: Դրա համար հարկ եղավ գնալ շատ հեռու՝ մինչև ծայրագույն սահմանը, որից այն կողմ ինքն իրեն չէր հիշում: Հիմա, անդրադառնալով այն հեռավոր օրերին, երբ ծանոթությունն աշխարհի հետ սկսվում էր մանկական խաղերից, մտովի խոստովանեց, որ տհաճ զգացողություններն արդեն իսկ գոյություն ունեին, թեև հայտնվում էին հազվադեպ, հիմնականում՝ քնելուց առաջ: Ցավեր չէին, թույլ տնքոցներ էին թիակների ոլորտում, բնականաբար՝ լուրջ անհանգստության տեղիք չէին տալիս: Ծնողները դա վերագրում էին հոգնածությանը և պատվիրում քիչ վազվզել: Մոր հոգատար ձեռքերի շփումները, հոր ոգևորող կատակները սովորաբար մեղմում էին տնքոցները, և փոքրիկ Մ-ն քնում էր խաղաղ, երջանիկ ժպիտը դեմքին: Երազ էր տեսնում՝ իրենց բակը, բակի մեջտեղում՝ հորն ու մորը, նրանց ետևում՝ պապին ու տատին, քիչ այն կողմում

կանգնած էին մյուս պապն ու տատը և էլի բազմաթիվ տարեց մարդիկ, որոնց չէր ճանաչում, սակայն ենթագիտակցությունը հուշում էր, որ օտար չեն: Նրանք լուռ, մեղավոր հայացքներով նայում էին և ակնարկում առաջ պարզած իրենց ձեռքերը. յուրաքանչյուր ձեռնափին՝ մի պստիկ քար՝ սեպագրեր հիշեցնող ինչ-որ խզբզանքներով: Մ-ն մի հին, գունաթափ թիկնապարկ էր բերում նկուղից, որպեսզի քարերը հավաքի-լցնի մեջը, բայց պարկը ձեռքին հենց դուրս էր գալիս նկուղից, փոթորիկ էր բարձրանում, բակում հավաքվածները այս ու այն կողմ էին փախչում՝ սարսափած նայելով մթագնած երկնքին: Ծերունիներից ամենատարեցն ու պատկառազուրն էր միայն, որ հեռանում էր դանդաղ, արժանապատիվ քայլվածքով, և ալեգարդ գլուխը դարձնելով ասում. «Դեռ շուտ է, այ թույլ, դեռ խաղդ խաղա»: Այսպիսին էր չարաբաստիկ զգացողությունների սկզբի մասին հիշողությունը: Իսկ պատանեկության օրոք նրանք դարձան նվազ զգալի և գրեթե մոռացվեցին, հավանաբար՝ խլացան, չէ՞ որ շուրջն ամեն ինչ զվարթ թնդում էր, ներկան հիասքանչ էր, ապագան՝ հստակ, հասանելի, և երկուսը բազմապատկած երկուսով՝ միշտ չորսի էր հավասար: Սակայն պատանեկությունն անցավ կայծակնային արագությամբ, իներցիայի ուժով հետը տանելով նաև իրեն չպատկանող մի քանի տարի, թերևս դա էր պատճառը, որ հասունությունը վրա հասավ անսպասելի, առանց նախազգուշացման, և Մ-ն իրեն զգաց այն գորտի վիճակում, որն ուրախ ցատկոտելով՝ հանկարծ հայտնվել է երախը բաց օձի առջև: Ամեն բան կտրուկ փոխվեց, նախկին պարզ ճշմարտությունները խճողվեցին, ապագան աստիճանաբար ուրվագծվեց մութ ու կասկածելի: Մեջքի տնքոցների բնույթն էլ փոխվեց, դրանք սկսեցին այցելել ավելի ու ավելի հաճախակի՝ դառնալով այն աստիճան ծանր ու ճնշող, որ ստիպված դիմեց բժիշկներին: Վերջիններս, սակայն, հիվանդագին ոչինչ չհայտնաբերեցին՝ առաջ քաշեցին սեռական անբավարարվածության հետևանքով առաջացած նյարդային խափանումների վարկածը և խորհուրդ տվեցին ամուսնանալ:

Սակայն կինը, սեռական կանոնավոր հարաբերությունները, ոչինչ չփոխեցին, հակառակը, թիկունքի տնքոցները, տհաճ զգացողություններն առավել ուժգնացան: Եվ ահա, ծնողների մահից հետո մեջքը ճնշող ծանրությունը վերածվեց բութ, հոգնեցնող ցավի, որը տարածվում էր՝ փոխվելով քորի անզուսպ ցանկության:

Մ-ն համարյա միշտ կանխագույն էր գիշերային մեջքացավը: Կանխագագացումը սովորաբար ներս էր սողոսկում դեռևս առավոտյան, նախ՝ ծածուկ, վախվորած շշուկով, ապա՝ ավելի ու ավելի հա-

մարծակ, բարձրաձայն, հոգին պարուրում էր խորհրդավոր, անբացատրելի թախիծը, տազնապը, անորոշ սարսափը: Օրվա ընթացքում տազնապի սարսուռը սաստկանում էր և արդեն երեկոյան սկսվում էին ցավերը: Մ-ն հապճեպորեն կուլ էր տալիս քնաբերի մի քանի հաբ և մտնում անկողին՝ հուսալով քնի գրկում խույս տալ ծավալվող ցավից: Գիշերվա մի պահ, հավանաբար՝ երբ հաբերի ազդեցությունն սկսում էր թուլանալ, քունը դառնում էր մակերեսային և հայտնվում էին մղձավանջները, որոնք Մ-ն շփոթում էր իրականության հետ- միշտ չբանում էր ենթագիտակցության միջով անցնող այն թե-ազդանշանը, որը ժամանակ առ ժամանակ պիտի գզուշացներ, թե տեղի ունեցողն ընդամենը մղձավանջային երազ է, դրանում համոզվում էր արթնանալուց հետո, այն էլ՝ ոչ միանգամայն, որովհետև քնատ աչքերը դեռ երկար սքողում էին երազի գորշ, ծխաբուլաների նման անորոշ սավառնող տեսարանները:

Ի վերջո՝ սկսեց կասկածել, որ մեջքացավերն ու մղձավանջները չարաբաստիկ ինչ-որ բան են ակնարկում, որ ցավի յուրաքանչյուր բռնկում, մղձավանջով լեցուն յուրաքանչյուր գիշեր իրեն մոտեցնում են խորհրդավոր անհայտության:

Տարիներն անցնում էին, ցավերն ու ծանր հոգեվիճակները կրկնվում էին ավելի հաճախակի, արտահայտվում ավելի ուժգին: Մղձավանջի բնույթը նույնպես փոխվում էր՝ եթե նախկինում դա հողմի պես պտտվող տձև, անմեկնելի կերպարանքների աղմկոտ խառնաշփոթ էր, ապա հիմա կերպարանքները հստակվել էին՝ վերածվելով սարսափազդու քարե դիմակների, իսկ խառնաշփոթը՝ դիմակահանդեսի: Կերպարանք առած փոքր ու մեծ քարերը, ծուռ-ծուռ դոփելով, շուրջպար էին սկսում, իսկ շրջանի կենտրոնում անսպասելիորեն հայտնվում էր նկուղի հնամաշ թիկնապարկը, որ անհեթեթորեն ցատկոտելով՝ չարագուշակ ծվծվում էր: Դա առնետային ծվծվոց էր, և Մ-ն քնի մեջ ցնցում էր ոտքերն ու ձեռքերը, ջանալով վանել ծվծվացող առնետների աներևույթ ոհմակի հարձակումը: Հանկարծ լռում էին ձայները, ամեն բան ներծծվում էր սպասման լարվածությամբ, քարե դիմակներն ու թիկնապարկն անշարժացած ակնածանքով նայում էին երկինք և ինչ-որ բան ակնարկում, իսկ մառախլապատ երկնքից լսվում էր ուժգնացող շվվոցը: Մ-ն աչքերը բարձրացնում էր ակնարկների ուղղությամբ, սակայն հայացքը թաղվում էր անթափանց մշուշում, ոչինչ տեսնել չէր հաջողվում: Երբ շվվոցն այնքան էր սաստկանում, որ թվում էր թմբկաթաղանթներն ուր որ է պայթելու են՝ Մ-ն արթնանում էր, ծանր հեալով նստում և տարակուսած նայում էր շուրջը, որտեղ՝ կիսամութի մեջ նենգ չարախնդալով, անհայտանում էին վերջին դիմակ-

ները:

Հիմա, հիշելով այս ամենը, հոգուն համակեց տազնապալից սարսափի մի նոր ալիք: Միևնույն ժամանակ, տարօրինակորեն, սարսափին համատեղ ծայր առավ մի նենգ հետաքրքրություն սպասվող մղձավանջի նկատմամբ:

Վերստին փորձեց խմբավորել առաստաղի ճաքերն ու անձրևակաթի հետքերը: Ստացվեց կարծես: Հայտնվեցին ծանոթ պատկերները, որոնցից մի քանիսն ասես մանկության հուշ լինեին, միայն ճաղապատ պատուհանի վերի անկյունի ուրվանկարը, որը միշտ ծառս եղած նժույգ էր հիշեցրել, այժմ նմանվել էր պոզավոր սատանայի: Պատճառը... Անձրևակաթի թարմ հետքերն էին, որոնք նժույգը սատանայի ձևափոխելուց բացի, նաև կտուրը վերանորոգելու հոգս էին հուշում: Կտուրի վերանորոգման մտահոգությամբ էլ՝ անսպասելիորեն քուն մտավ՝ հենց այն պահին, երբ մտածեց, թե այդ գիշեր քնել առհասարակ չի հաջողվի: Քնեց կիսանստած, մեջքը բարձին ամուր սեղմած, մտահոգության, տազնապի և հետաքրքրության արտահայտությունները դեմքին տալած:

Երագի սկիզբն, ինչպես միշտ, ոչ մի վատ բան չէր սպառնում. դարձյալ մանկության բակը, ծերունիները... Ինքը դարձյալ իջավ նկուղ՝ ճռռացնելով փտած աստիճանները, որոնց, կարծես, երագի ժամանակն էլ էր մաշել: Իսկ երբ թիկնապարկը ձեռքին վերադարձավ բակ՝ մղձավանջային հանդեսն արդեն սկսվել էր: Այս անգամ հանդեսին մասնակցում էին թե՛ բակում հավաքվածները, թե՛ անսպասելիորեն հայտնված քարե դիմակները, և դա դեռ բոլորը չէր: Հանդեսի մասնակիցների քանակը գնալով բազմապատկվում էր: Քառասյին աղմուկ, իրարանցում սկսվեց: Հայտնվեցին նաև պարսատիկի քարից ջնջված թռչունն ու մորթած հավերը, վայնասուն բարձրացրած շունն ու սարսափած գառը, հայտնվեց պատի տակ դանակահարությունից մեռնող մարդը, բակ լցվեցին հեռու-մոտիկ ծանոթներ, ընկերներ, հարազատներ, նույնիսկ՝ ծանոթ իրեր: Մ-ի շփոթված հայացքի առջև հողմի պես պտտվեց անցած կյանքը: Բակի տարբեր անկյուններում, միմյանց արագ-արագ փոխելով, տեղի էին ունենում կյանքի առավել նշանակալից դեպքերի կրկնությունները: Ամենամութ անկյունում՝ սանդղահարթակի տակ, սիրային տեսարան էր. Մ-ն անմիջապես ճանաչեց հարբած, անհրապույր կնոջը, որին հիշելիս միշտ ամոթ է ապրել: Կինն ինքնամոռաց մլթաում էր, իսկ ինքը... Մի՞թե այսպիսի անասնական տեսք ունեն մարդիկ կրքի ցնցումների պահին:

Սաստիկ քամի բարձրացավ, սանդուղքին հենած թիկնապարկն սկսեց անհանգիստ ցնցվել ու ծվծվալ, բակում հավաքվածները

սարսափահար նայեցին արագորեն մռայլվող երկնքին, ապա, կարեկցանքով, Մ-ին ու գլխապատառ փախան: Վերից լսվեց ուժգնացող շվվոցը: Մ-ն նույնպես փորձեց փախչել, սակայն ոտքերը խրվեցին կակող ասֆալտի մեջ: Մորիկի վերածվող քամին մաքուր սրբեց խավարած բակը: Քարե դիմակներն, ասես հրամանով, մեկը մյուսի հետևից անշնչացան, դարձան քարաբեկորներ և բլուրվեցին բակի կենտրոնում: Բլրակի կողմ շարժվեց չարագուշակ ծվծվացող թիկնապարկը: Շվվոցն ուժգնանում էր, և հանկարծ Մ-ն ստկունով տեսավ, թե ինչպես վերից, ձեղքելով մշուշը, դանդաղորեն, հանդիսավոր, իջնում է դժգույն, համարյա թափանցիկ, ահռելի մի ձեռք: Ձեռքի մոտենալուն զուգընթաց՝ թիկնապարկն ավելի անհանգիստ էր ծվծվում: Ճռվելով մածուցիկ ասֆալտի մեջ խրված ոտքերի վրա՝ Մ-ն օգնություն հայցող աչքերով նայեց լուսամուտների: Լուսամուտների ետևում ստվերներ շարժվեցին, բայց չբացան արագորեն, նրան նայեցին ապակիների սառը, անտարբեր ցլոքերը: Ապա և՛ լուսամուտները, և՛ տները ալիքվեցին և ծվեն-ծվեն հանձնվելով մորիկի պոռթկումներին՝ տարրալուծվեցին խավարում: Ամայացավ: Մնաց միայն ասֆալտի գորշ, քամով լիզած անձայրածիր հարթությունը, քարերի կիտուկը, ծվծվացող թիկնապարկը և Ձեռքը: Ձեռքն արդեն հավասարվել էր ասֆալտի հարթությանն ու մոտենում էր քարերին: Նա վերցրեց քարերից ամենափոքրը, գցեց թիկնապարկի մեջ, ապա բարձրացրեց թիկնապարկը և թիկունքից մոտեցրեց Մ-ին: Մ-ն հուսահատ աղաղակեց. «Չեմ ուզում, չեմ...»: Մի նենգ քրքիջ պատասխանեց նրան: Թիկնապարկն այնքան էր մոտեցել, որ առաջ պարզած ամրակապիչներն արդեն քսվում էին թիկունքին: Մի փոքր էլ և...

Վերջապես արթնացավ: Սիրտն ահաբեկված բաբախում էր, ասես ուզում էր դուրս պրծնել մարմնից: Տարօրինակ էր՝ մեջքը չէր ցավում: Սակայն երբ հենվեց մահճակալի թիկնակին՝ զգաց, որ մեջքի և թիկնակի արանքում խանգարող բան կա: Ձեռքը ետ տարավ, շոշափեց և... սոսկաց: Թիկնապարկն էր: Սարսափից դողացող ձեռքերով ամուր կառչեց ու ձիգ տվեց, բայց ուժեղ ցավը զսպեց նրան, և նա կռահեց՝ պարկն իր միսուարյունից է, պոկել անկարելի է:

Գլորվեցին տարիներ, Մ-ն քարշ էր տալիս նգովյալ պարկը: Նա երևի հարմարվեց, համակերպվեց իր վիճակին, եթե չլինեք մի հանգամանք՝ ժամանակ առ ժամանակ մղձավանջները կրկնվում էին, հայտնվում էր Ձեռքը, պարկի մեջ գցում մի նոր՝ նախորդից մեծ քար, և առավոտյան արթնանալով՝ Մ-ն ստկունով հայտնաբերում էր, որ թիկնապարկը ծանրացել է:

Հագուստի տակ թիկնապարկը չէր երևում, մարդիկ չէին տեսնում

այն, միայն նկատում էին, թե ինչպես է օր-օրի կորանում Մ-ի մեջքը, խոր կնճիռներով ակոսվում մտահոգ դեմքը:

Երբեմն վիատությունը հասնում էր ծայրագույնի, և Մ-ն վճռում էր վերջ տալ այս ամենին՝ վերջապես ազատագրվել թե՛ իրենից, թե՛ անհօյալ թիկնապարկից: Սակայն ներսից հզոր մի բնագոյ ամեն անգամ, ճիշտ ժամանակին, առարկություն չընդունող ծայրով հրամայում էր չանել այդ բանը: Եվ Մ-ն ենթարկվում էր՝ շարունակելով քարշ տալ ծանրացող բեռը:

Վաղուց արդեն չկային երազանքներ, ձգտումներ, սպասումներ... Կար միայն մեկ սպասում, որը, թվում է, իր հզոր թևերի մեջ էր առնելու Մ-ին՝ վերացնելով հոգս ու ծանրություն: Սկզբում այդ սպասումը խորհրդավոր անորոշությամբ էր շղարշված, սակայն հիմա Մ-ն կռահում էր, թե Ով է թաքնված շղարշի ետևում, և որքան էլ տարօրինակ է՝ չէր սարսափում իր կռահումից, թշնամանքով չէր լցվում Եկողի նկատմամբ, հակառակը, երբ սենյակի լռության մեջ հանկարծ որսում էր ծանոթ շրշյունը՝ ժպտալով թեքվում էր ու մտերմիկ աչքով անում:

Փետրվարյան մի ցուրտ առավոտ Մ-ն քնից արթնացավ այնպես, ասես չէր էլ քնել. մի կերպ կիսաբացեց բորբոքված աչքերը, հրեց վերմակը և անխոհեմորեն համարձակ՝ վեր կացավ անկողնուց: Սակայն անսպասելի ծանրությունը կտրուկ ծնկի իջեցրեց նրան: Թիկնապարկի մեջ նոր քար էր ավելացել: Փորձեց կանգնել, չստացվեց, մարմինը չէր ենթարկվում: Անասելի ճիգից աչքերը մթնեցին, և նա դեռ երկար այդպես չոքած մնաց: Հետո, երբ շրջակայքը վերստին լուսավորվեց, Մ-ին հաջողվեց հավաքել ուժերը, որոնք, սակայն, հերիքեցին անկողին վերադառնալուն միայն: Պառկեց՝ հարմարվելով թիկնապարկին: Հիշեց մղձավանջը, որը գիշերվա ընթացքում այցելել էր, լքել, այցելել, լքել... Ամեն բան նույնությամբ էր, միայն թիկնապարկն էր աննախադեպ զվարթացած՝ ցատկոտում էր, ծվծվում, քրքջում նույնիսկ... Մեկ էլ՝ Ձեռքը չկար, Նա հայտնվեց միայն լուսաբացին, երբ Մ-ն քնի մեջ ուրախությամբ մտածեց, թե այս անգամ խուսափելու է նոր քարից, հայտնվեց՝ ձեղքելով ամպերի կուտակումները և հանդարտ հանդիսավորությամբ սահեց ցած: «Պետք չի, չեմ դիմանա», - աղեկտուր գոռաց Մ-ն՝ նկատելով Ձեռնափին ծվարած ահռելի քարը, սակայն Ձեռքն անկասելիորեն մոտենում էր...

«Չդիմացա, տես՞ր...», - մրմնջաց Մ-ն՝ վեր նայելով: Այնտեղ ինչ-որ բան կատարվեց, ինչ-որ շարժում սկսվեց, թե՞ թվում էր... Հանկարծ նրա հայացքի առջև կակղեցին՝ ծվեն-ծվեն անհետացան

առաստաղ ու տանիք, ետ քաշվեցին անպաշերտերը, երևաց կապույտ, վճիտ բիծը: Մ-ն, կռահած, ժպտաց: Հայտնվեց Ձեռքը, թվաց, թե նա էլ է ժպտում: Երկար, դժգույն մատները տաքուկ հպվեցին հոգնատանջ մարմնին, Ձեռքը շոյում էր Մ-ին, ինչպես մանկիկի: Ապա վարժ, սահուն շարժումով հանեց թիկնապարկը, մի կողմ նետեց և հանդարտորեն վեր բարձրացավ՝ հրավիրելով Մ-ին հետևել իրեն: Մ-ն վերջապես ուղղեց մեջքը և հաշտված, խաղաղված հայացքը վեր հառելով՝ անշարժացավ:

ԱՆՎԵՐՋ ՈՐՈՆՈՒՄ

Փոշոտ առաստաղից կախված կեղտոտ լամպ, ճռճան աթոռ, հատակի մաշված տախտակների մութ ձեղքերից փչող բորբոսահոտ սառնություն: Ծեփաթափ պատից կառչած՝ խռխռում է հնաճ ընդունիչը: Շռված, գունաթափ պահարան, սեղանին՝ հացի փշրանք, սոխի ձլորած կտոր: Խունացած, ճմրթված վարագույր. պատուհանից երևում է գործարանի սև ծխնելույզը...

Նա այստեղ եղել է, նրա բույրը դեռ սավառնում է անշուք սենյակի սառն օդում:

Մութ սանդուղք, միգահոտ շքամուտք. դուրս եմ գալիս փողոց: Անձրև՞ է, թե՞ ձյուն... Կաթիլները տալվում են դեմքիս, խոնավ ցուրտը թափանցում է մինչև ոսկորներս: Ջրիկ, լարծուն ցեխ, որի մակերեսից դեղնավուն յուղոտ բծերով անդրադառնում է փողոցի աղոտ լույսը: Հոգնած ծնգալով անցնում է իրիկնային տրամվայը. գուրոշապատ ապակիների ետևում՝ կծկված, մութ կերպարանքներ: Արագ եմ քայլում՝ ձլփացնելով ցեխը: Մրսած մացառուտի միջով տանող արահետ. մացառները ճանկում են ձեռքս: Սարդոստայն հիշեցնող գետնատարած ինչ-որ բույս, սատկած առնետ, գարշահոտություն: Ցեխի մեջ՝ թղթի ծվեմներ, ժանգոտ տուփեր, ռետինի կտորտանք, ուրիշ աղբ, որի միջից ծեր, զգզված կատուն փտած մետաղի է դուրս քաշում: Ապա՝ երկաթուղային կամրջի կողքով իջնող մետաղյա լարծուն աստիճաններ. սայթաքում եմ, բայց հասցնում կառչել թաց բազրիքից: Երկաթգծի կողմից՝ մագուրի հոտ. հեռվում խուլ ոռնում է չչակը:

Նա այստեղով իջել է:

Մերթ ընդ մերթ խավարի միջից դուրս եմ լողում դեմքեր՝ տարակուսած, խոժոռ, վախեցած, անհույզ, հիվանդ:

Գորշ, աղյուսաշար կոպիտ պատերով վիթխարի շենք. երկաթյա ծանր դռան ետևում՝ չարագուշակ լռություն: Վերում ճոճվում է ան-

լույս լապտերը: Հրում եմ. դուռը սուր ճռնչալով ներս է թողնում ինձ: Լքված գործարան: Ի՞նչ է որոնել նա այստեղ: Ջարդված ապակիներով ցանցապատ լուսամուտներ. սուլում է միջանցիկ քամին: Առաստաղի մութ վիհից հսկայական չղջիկների պես կախ ընկած ինչ-որ ստվերներ չարագուշակ ճռռում են: Ներբաններիս տակ՝ երկաթի կտորտանք, խճճված ժանգոտ լար: Խորհրդավոր ճռռոցն ուժգնանում է, ստվերները ետևում ավելի եռանդուն են շարժվում: Այստեղով նա սարսափած վազել է: Խեղճ: Նեղ ետնադուռը կիսաբաց է: Ցցված մեխը պատռում է թևքս: Դեմքս մտրակում են գաճաճ ծառի թաց ճյուղերը: Մետաղալարով կցնցած թիթեյա ցանկապատ, երկարուկ բակ, անկյունում՝ քանդած, ժանգապատ հաստոց, մեջտեղում՝ այրված անվաղողի մնացորդներ: Ցանկապատի մոտ ցցաբաշ մի շուն հոշոտում է իր թուլակազմ ցեղակցին. աղիողորմ ոռնոց: Բակի ծայրում ուրիշ շենք է՝ էլի գորշ, էլի վիթխարի:

Նա մտել է այս դռնով:

Մեծ լողավազան. խունացած-բորբոսնած բարձր պատերի երկայնքով՝ նեոնային լամպեր, մեծամասամբ՝ ջարդված: Կիսախավար: Լողավազանը դատարկ է, հատակին՝ աղբ. տեղահան սալիկի տակից երևում է առնետի սուր մռուրթ:

Հանկարծ զգում եմ՝ նա այստեղ է: Հայացքով որոնում եմ: Հեռվում, լողավազանի մյուս ափին տեսնում եմ նրան՝ նիհար ծնկները բարալիկ ձեռքերով գրկած, ողորկ դնչիկը ծնկին հենած՝ նստել է երկարուկ նստարանի ծայրին: Անհույզ նայում է դիմացի պատին: Վազում եմ լողավազանի ափով: Գետնին, ձղձղված ներքնակների վրա՝ ցնցոտիավոր մարդիկ: «Կամաց, քնած ենք»: «Կներեք, բայց պիտի անցնեմ... Ես զգուշորեն...»: Սակայն մինչև հասնում եմ՝ նա արդեն չկա, զնացել է: Նստարանը դեռ պահպանում է նրա ջերմութունը: Անցնում եմ նստարանների արանքներով: Պատի տակ մի հաղթանդամ տղամարդ է քնած՝ գինու շիշը ձեռքին: Հանկարծ ամուր բռնում են թևս: Շրջվում եմ: Վառ կարմիր ներկած բերանով մի կին է՝ ծերացող, գլխարկի եզրերին՝ արհեստական մանուշակներ. էժանագին օժանելիքի հոտ, էժանագին գինու և ծխախոտի հոտ: «Քնած տղամարդուն տեսնու՞մ ես... Սիրուն տղամարդ է, չէ՞»: «Սիրուն է»: «Պառկում էի հետը: Փող էի տալիս... Սիրուն է, չէ՞»: Երեկ ուզում էի ինձ կամրջից զցել, ունեցած-չունեցածս տվի նրան, բայց չկարողացա, հենց ցած նայեցի՝ սարսափեցի, գլուխս պտտվեց, երբեք չեմ կարողանա: Հիմա ոչինչ չունեմ, ետ չի տալիս: Կգա՞ս հետս, սանդուղքի տակ մի հարմար տեղ կա...»: «Շտապում եմ»: «Դե գնա, որ շտապում ես»: Ծուռտիկ միջանցք, վարագուրած դուռ. կինողահիլի է, անկիրք դեմքերով մի քանի հանդիսական: Օդը ծանր է,

քրտնահոտ: Կարկատած էկրանին՝ հին, խզխզան կինո:

Նա այստեղ է... Ահա՛, առաջին շարքում:

Մանրատախտակը սաստիկ է ճռռում: «Եկա՞ր»: «Այնքա՛ն են ուրոնել քեզ...»: «Սառած ես. ահա, տաքացիր», - ինձ է պարզում փոքրիկ, տաքուկ թաթիկները. ցուցամատին թանաքի հետք կա: Տաք շնչառությունը շոյում է դեմքս: «Մազերիդ ճերմակը շատացել է», - նկատում է: «Գիտեմ, գիտեմ...», - դեմքս թաղում եմ նրա փափուկ խոպոպիկների մեջ՝ ծանոթ բուրմունք. հոգիս լցվում է անուշ ջերմությամբ: «Բանթդ կորցրե՞լ ես», - հարցնում եմ: «Կորցրել եմ: Մազերս խառնվա՞ծ են»: «Խառնված են»: «Սանրս էլ կորցրի»: «Ցրված, երազկոտ աղջիկ ես»: Չարաճճի ժպտում է՝ կնճռոտելով պեպենոտ քթիկը: «Չգնա՞նք այստեղից», - հարցնում եմ: «Գնա՞նք...»:

Փողոցն ամայի է: Նրա ոտքերը ճլմփացնում են ցեխաջուրը. պստիկ կոշիկները պատռված են: «Գուլպաներդ թաց են երևի»: «Թաց են»: «Խեղճ աղջիկ»: «Խեղճ աղջիկ», - ծաղրում է. բերկրությունը սեղմում է կոկորդս: Երկաթուղային կամրջի կողքով բարձրացող լարծուն աստիճաններ, սառը բազրիք: Ցեխոտ արահետ. մութ մացառների ետևից՝ սոված շան հևոց: «Մազերս կսանրե՞ս»: «Կսանրեմ: Կուզե՞ս, հյուսք անենք»: «Չէ, թող ազատ մնան»: Մեր գլխավերևով ազոավներ են թռչում, կռկռալով թառում են մերկ ծառի ճյուղերին: Նրա ձեռքն ափիս մեջ հանկարծ լարվում է: Վարից, մեծ աչուկների քննող հայացքով նայում է դեմքիս: Ուռցնում է շրթունքները, փչում՝ ետ տալով աչքին ընկած խոպոպիկը: Ի՞նչ եղավ... «Ի՞նչ եղավ, ինչու՞ ես այդպես նայում», - տազնապեցի: Սիրունիկ դեմքը խոժոռվում է. «Թող ձեռքս»: «Սպասիր, քեզ հազիվ գտա»: «Իզուր էլ գտար, թող», - քաշում է ձեռքը, սայթաքում՝ ընկնում ցեխոտ գետնին: Վախեցած՝ ծնկի եմ իջնում, փորձում եմ բարձրացնել: «Թող: Դու էլ ես այս ցեխոտ աշխարհից», - փոքրիկ ձեռքով հրում է ինձ ու ոտքի կանգնում: «Այդպես չի, սխալվում ես...»: «Այդպես է: Դու ոչինչ չես կարող... Դու միայն կարող ես մազերս սանրել, բայց ես... ես կապույտ մեծ երկինք եմ ուզում, ես... ես ուրիշ բան եմ ուզում, ուրիշ, հասկանո՞ւմ ես»: «Մի գնա, սպասիր», - խնդրում եմ: Բայց նա վազում է՝ հեռու, ավելի հեռու...

Այլևս չի երևում. չքվեց մթնում: Ես մնում եմ նստած ցեխաջրի մեջ. անուժ եմ: Սակայն բարձրանալ է պետք. չէ՞ որ նա մենակ է այս սառը, ցեխոտ, անձայր խավարում:

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ

Փոքրիկ աղջկա գոյությունը սարսափ է ներշնչում հայելիների նկատմամբ, երբ սենյակում առանձնացած՝ մտածում եմ նրա մասին:

Երբ սենյակում առանձնացած մտածում եմ նրա մասին, աշխարհը դրսում վերածվում է աստիճանաբար մոռացվող շփոթի՝ ժանտաշունչ տրոփող գորշ զանգված, որը պատուհանի այն կողմից ժամանակ առ ժամանակ ներս է խցկում իր կառչուն մազմուկները՝ փորձելով աղտոտել փոքրիկ աղջկա կաթնային մաքրությունը մտապատկերիս մեջ և կարծես հուշում է, թե փոքրիկ աղջիկը նույնպես իրենն է: Զուր է դրսի ջանքը՝ փոքրիկ աղջկան չեմ տալու:

- «Բարև ձեզ»:

- «Բարև, փոքրիկս»:

Ողջույն, սիրելիս...

Դեռևս աշնանը նրա մարմինը չուներ հնացած զգեստը հանդգնորեն պրկած այս կորույթները, այսպես սահուն ու այսպիսի պշրանքով չէր նետում աչքերին իջած մազափունջը, քայլքը չուներ այսքան նազանք, քամու վեր թռցրած փեշն այսպես հապճեպ չէր իջեցնում ու սեղմում ծնկների միջև...

Իսկ ծնռանը մի քանի անգամ հանդիպեցինք ընդամենը. մինչև կոշիկները հասնող ընդարձակ վերարկուի մեջ էր, նապաստակի չալպտուրիկ մորթուց գլխարկը հոնքերին իջեցրած, քթիկ-բերանիկը խավոտ շարժով ծածկած... Չմեռային հանդերձների միջից համարյա չէր երևում: Բայց աչքերը տեսնում էի, մեր հայացքները հանդիպում էին: Մեր աչքերը միշտ էլ հանդիպել են. թեև վարանոտ, սակայն նայում է աչքերիս, չի փախցնում հայացքը:

Եվ երբեք էլ մանկական չի եղել նրա հայացքը՝ այդ սև-մոխրագույն-կանաչ-դարչնագույն-կապույտ-երկնագույն աչուկների հայացքը: Համոզված եմ՝ նույնիսկ բարուրում նրա աչքերն ունեցել են այս ամենակուլ կախարդանքը, որը մեկնել անհնարին է, ինչպես տիեզերքի Սև խոռոչ: Մեկնության կամ տրամաբանության որևէ տքնանք առհասարակ անհեթեթ է, եթե վերաբերում է փոքրիկ աղջկան: Եվ երեսպաշտություն կլինի, եթե ասեմ, թե նա ցանկալի դարձավ այս գարնանը միայն, երբ նրան տեսա պատշգամբում, իր չթեզգեստով, որը հազիվ էր զսպում փոքրիկ աղջկա ծնեռային նիրհից արթնացող մարմինն իր մեջ: Փոքրիկ աղջիկը նույնքան ցանկալի էր

նաև աշնանը, երբ նիհարիկ էր ու չորուկ, ինչպես տղեկ, ցանկալի էր ծմռանը, երբ հագուստների միջից միայն երևակայությամբ էր երևակվում, ցանկալի էր միշտ՝ իր ծնունդից էլ առաջ, որովհետև նախանշված էր որպես անեծք, որպես տառապանք, գուցե՝ կործանում նաև: Սա էլ ճակատագրի ընտրած ինձ սպանելու ձևն է երկի:

Եվ, ուրեմն, ահա նա՝ փոքրիկ աղջիկը, որ միշտ ինձ է, բայց երբեք ինձ չէ:

Եվ ահա փոքրիկ աղջկա գինեմուլ հայրը, որին հաճախակի հյուրասիրելը փոքրիկ աղջկան տեսնելու ևս մի միջոց է: Նա վարանոտ թակում է դուռս, անհամարձակ մտնում սենյակ, որպեսզի փորձի հորը տուն տանել: Հայրն ըմբոստանում է, կախաբունակ բերանից փսխի՞նք ցայտեցնելով հայիոյուն: Փոքրիկ աղջիկն ամաչում է, շառագունում, կախում գլխիկը. սևաթույր մազերը մանրիկ այլակներով թափվում են, վարագուրում սիրունիկ դեմքը՝ տեսանելի թողնելով միայն քթիկը, վիրավորանքից ուռցրած շրթունքները, մարմարյա դնչիկը: Իսկ հայրը խմում է ու խոսում, խմում է ու խոսում... Հետո գրկում ենք ոտքերի վրա այլևս կանգնել չկարողացող այդ մարդուն ու քարշ տալիս միջանցքով: Անշտապ: Որովհետև նրա թիկունքում հանդիպել են մեր ձեռքերը. ափս քնքշանքով ծածկել է դողացող թաթիկը, և փոքրիկ աղջկա ջերմությունը, նաև էլի ինչ-որ բան, որ անուն չունի, թափանցում-անցնում էր մարմնիս միջով՝ փոխելով բջիջներիս նյութը, խառնելով նյարդերիս սովորույթը, պղտորելով բանականությանս հյութը: Նա, ում քարշ էինք տալիս անշտապ, պատրվակ էր, չկար, փոքրիկ աղջիկը որք էր այս ընթացքում: Հոր անդադար, անհասցե հայիոյանքից չէր շառագունում այլևս, չէր լսում նրան: Մատներն անհամարձակ շարժվում էին ձեռքիս մեջ՝ նոր աշխարհ բացողի զգուշավորությամբ, աչքերի խորքում բարձրանում էր առեղծվածը, տարերքը...

Հարբած հարևանիս պառկեցրինք մահճակալին՝ բերանքսիվայր: Հետո ինչ-որ բան էինք փնտրում մթության մեջ. փոքրիկ աղջիկը երբեմն դիպչում, հպվում էր ինձ, մազերը քսվում էին դեմքիս, բույրն արբեցնող էր: Պարզվեց՝ ծածկոցն ենք փնտրում, որն այժմ էր. ծածկոց՝ հարբածին մեկուսացնելու համար: Սակայն ու՞ր է այն ծածկոցը, որ կմեկուսացնի մնացյալը: Ինչ-որ բան ասացի. կիսաբացեց շուրթերն ու ինքն էլ ինչ-որ բան ասաց: Դեմքիս դիպավ շունչը՝ պատանեկան, առողջ, տաք... Հանկարծ հիշեցի, որ շատ են ծխահոտ, որ... որ շատ են ապրել... Սակայն նրա կիսախուփ աչքերը, անհամբերությամբ թրթռացող կիսաբաց բերանը մոտենում էին... Վաղուց մոռացված զգացում, ոչ, երբեք չվայելած անհայտ զգացում, որովհետև փոքրիկ աղջիկը մեկն է ու միակը:

Հողաթափերը կորցրել է- խավար հատակին՝ զույգ շփոթված, կաթնաձերմակ ոտնաթաթեր՝ առածգական ու կենսաթրթիռ. կռանում են ու դեմքս հպում: Իսկ նա անշարժ է, անխոս, լարված. սպասում է...

Լռությունը խախտած զիլ խոնկոց. աշխարհն է, որ հարբածի կուկորդով հիշեցնում է իր մասին: Ուզում են պայթեցնել-գրողի ծոցն ուղարկել աշխարհը: Որքա՞ն հզոր է հմայքդ, փոքրիկ աղջիկ, որքա՞ն անուժ են ես հմայքիդ առաջ: Ու՞ր ես տանում, ո՞ր ամայի քարերին են խփելու...

Ու դարձյալ սենյակս: Դարձյալ հայելիների սարսափը, որին քո գոյությունն է ծնունդ տալիս: Գուցե կտրատե՞մ դեմքս բազմաթիվ խոր կտրվածքներով... Բայց ի՞նչ է տալու... Թաքստո՞ց սպիների տակ, արդարացու՞մ, փախու՞ստ... Թե՞ խելագարություն՝ փոքրիկ աղջկա պատճառով:

ՆԱՎԵՐ, ԳՆԱՑՔՆԵՐ

Աղջիկը ոտքը խփեց գետնին՝ ոչ ու էլի ոչ.

- Ես չեմ կարող հիմա լողանալ, չեմ ուզում: Դու չասացիր, թե պիտի լողանամ:

- Իսկ լողազգեստն ինչու՞ գնեցինք, ի՞նչ ես կարծում:

- Մտածեցի՝ նվեր է, դու նրան լողազգեստ ես նվիրել այն օրը:

- Չէ, նա իր լողազգեստն ուներ:

- Ինչ որ է, ես հիմա ծով մտնելու հավես չունեմ:

«Բայց ես վճարել եմ», - ուզեց ասել ծերացող տղամարդը, սակայն հենց պատկերացրեց այդ բառերն իր բերանից դուրս եկած՝ զգվեց ինքն իրենից:

- Պիտի մտնես, - մեղմ, բայց հաստատուն պնդեց նա:

- Ու՛Ֆ, զգում եմ՝ կյանքս ուտելու ես էսօր, տուր լողազգեստը:

Յոդով հագեցած ծովային օդի հոտը, աղջկա՞ ուսերին հասնող խարտյաշ մազերը, վառող արևը, մեղմալիք, կապտականաչ ջուրը, արևխանձ մարդիկ... Ամեն բան ասես նույնությամբ էր պահպանվել, նույնիսկ՝ առափնյա սրճարանը, ահա, այս թերթի կրպակն էլ նույնությամբ կա, միայն գույնն է փոխված, թե՞ թարմացված է պարզապես:

- Այ նայիր, ափից քսան մետր հեռու մի մեծ քար կա, հրեն, էն երկուսը քարի վրա են կանգնած, տեսա՞ր... Կհասնես քարին, կկանգնես, կշրջվես դեպի ափ, նորից ջուրը կզգվես ու լողալով կգաս, այդքանը:

- Այդքանը,- ծաղրեց աղջիկը:- Ես ի՞նչ է, գլուխս է՞լ պիտի թրջեմ: Չերագես: Բա սանրվածքս, բա մակիյաժս... Չէ, առանց դրա յուլա գնա:

Տղամարդը դարձյալ ուզեց ասել, թե վճարել է և դարձյալ զգվեց իրենից ու լռեց, սակայն հայացքը խոսում էր:

- Լավ, ես գնացի հանդերձարան,- զիջեց աղջիկը:- Ի՞նչ ես մեխվել, չլինի՞ չես լողանալու:

- Ես չէ... Ես այն օրը չլողացա, մի քիչ մրսած էի:

- Այն օրը, այն օրը... - աղջիկը փնթփնթալով քայլեց, հետո կանգ առավ. հեռվում գնացք էր անցնում. հայացքով ուղեկցեց, հոգոց հանեց ու մտավ փայտաշեն խցիկը:

Անվարժ էր լողում, շնալողով. տղամարդը գոռաց՝ թևալո՞ղ, թևալո՞ղ... Աղջիկը չլսեց, տղամարդն էլ մտածեց, որ մեկ է՝ լսի էլ՝ չի կարողանալու, ու նստեց լողափը փողոցից բաժանող ցածրիկ պարսպին: Մանր ալիքների կատարները կայծկլտում էին համատարած կապույտի վրա, ասես աստղեր լինեին՝ երկնքում. ծերացող տղամարդը կկոցեց աչքերը՝ աղջիկը համառ շնալողով ճեղքում էր շրջված երկինքը, խարտյաչ գլուխն էր երևում, մեկ էլ մորեգույն լողազգեստով ամփոփված հետույքը, հասավ քարին, կանգնեց. հիմա ամբողջ մարմինն է երևում ծնկներից վեր. նայեց ու նետվեց ջուրը, ու դա էլ անշնորհք ստացվեց, բայց դե ջահել, սիրուն աղջիկն ինչ էլ անի՝ տգեղ չի: Դուրս եկավ ափ, ցատկոտեց մեկ, ապա մյուս ոտքի վրա - ջուրն էր հանում ականջներից:

- Ցամքոց, իհարկե, հարկ չհամարեցիր առնել,- կշտամբեց:

- Մտքովս չանցավ,- մեղավոր ժպտաց տղամարդը:

- Ուրեմն սպասիր, մինչև չորանամ:

- Պաղպաղակ բերե՞մ:

- Ավելի լավ է՝ գարեջուր:

Նա տաք քարերին կիսապառկած՝ գարեջուր էր խմում, ծխում, նայում հեռվում անշարժ լողացող մեծ շոգենավին: Իսկ տղամարդը նրան էր նայում ու մտածում՝ ո՞վ է ավելի սիրուն, սա՞, թե՞ նա... Հետո կռահեց, որ անցած ժամանակն ամեն դեպքում նախապատվության նժարը նրա օգտին է ծանրացնելու և ձեռքաչեց անհիմաստ համեմատությունից, վերջապես՝ ի՞նչ կարևոր է...

Աղջիկը չորացավ, փոխեց հագուստը և մեկնեց տոպրակը.

- Վերցրու լողազգեստդ:

- Ինչի՞ս է, թող մնա, պետք կգա:

- Լավ, թող մնա, բայց դու՛ պահիր, ինձ իմ պայուսակը հերիք է: Ու՞ր կիրամայեք հիմա:

- Զբոսայգում ծուռ հայելիների սենյակ կա:- Տղամարդը վերցրեց

տոպրակը. նրանք քայլեցին:

- Պատկերացնում եմ,- փռթկաց աղջիկը:

Սրագազաթ կիպարիսներով զույգ կողմերից եզերված ասֆալտե արահետը նրանց տարավ դեպի գվարձանքների հրապարակ: «Այստեղ, աջի վրա», - կանչեց ծերացող տղամարդը, որ առաջ էր անցել: Սակայն հայելիների սենյակը չկար, տեղում՝ հրածգարան էր: Ծառայողն ասաց՝ «Ոնց էլ հիշում եք, էդ ե՛րբ էր»:

- Կրակե՞նք, - հարցրեց աղջիկը. ծովային ջրով ներկերից ու քուկներից լվացված նրա դեմքն ավելի թարմ էր, նույնիսկ մանկական ինչ-որ երանգ կար:

- Եսպես քեզ ավելի է սազում. ներկերը մեծացնում են:

- Ասում եմ՝ չկրակե՞նք:

- Կրակենք,- տղամարդը գրպանից հանեց ակնոցը:

Ջույգ օդամուղ հրացաններ, տասական կոտորակ, առջևում՝ ռետինե թիրախներ՝ արջ, վարազ, նապաստակ, սկյուռ... Նրանցից մի քանիսն ընկան, մյուսները համառորեն մնում էին կանգնած: Աղջկա մագափունջը խանգարում էր՝ յուրաքանչյուր կրակոցից առաջ փչում-հեռացնում էր: Փիղը երերաց, բայց այդպես էլ չընկավ. վերջ, կոտորակները սպառվեցին:

- Էլի՞,- հարցրեց տղամարդը:

- Չէ, մեկ է, մենք մրցանակ չահող չենք:

- Դու ո՞ր մրցանակն ես ուզում, ասա՝ առնենք:

- Արի դու մի գարեջուր էլ առ:

- Երեկ երևի խմել ես:

- Էն էլ ոնց:

Այս անգամ լցնովի գարեջուր խմեց, ազահորեն ձգեց գավաթի միջից, փրփուրի ծվենը մնաց վերի շրթունքին, հանեց վարդագույն լեզուն, լիզեց բերանը, ապա սիգարետ տեղավորեց այնտեղ. ծխում էր ու ծուխն օդակներով փչում վեր:

- Եսպես կարո՞ղ ես, - հարցրեց:

- Չէ:

- Դու երևի չես էլ ծխում:

- Թողել եմ:

- Չես ծխում, գարեջուր չես խմում... Ուզում ես երկա՞ր ապրել, ինչի՞դ է, չի հոգնացնու՞մ:

- Չէ, ինչու, գարեջուր խմում եմ, բայց հիմա ինչ որ չեմ ուզում:

- Պարզ է: Դե առաջնորդիր:

- Ավտոկայանի կողքին ճաշարան կա, էնտեղ ընթրենք:

- Ընթրենք, դեմ չեմ: Բայց զգուշացնում եմ, ավտոկայանի կողքին ճաշարան չկա, ռեստորան է ու լավ էլ թանկանոց, հետո չլացես:

- Առաջ ճաշարան էր: Լավ, թող ռեստորան լինի:
- Ոնց տեսնում եմ՝ շատ փող ունես, ծերուկ:
- Կա մի քիչ, գնացինք:
- Ահագին հեռու է:
- Տաքսի կվարձեի, բայց մենք ոտքով գնացինք այն օրը:
- Ուզում ես ճշգրտությամբ կրկնե՞լ, չի ստացվի, հարյուր տարի է անցել:

- Անցել է,- հոգոց հանեց տղամարդը:- Լավ, չչարչարեմ քեզ,- ա-
սաց ու մոտեցավ դեղին մեքենային:

- Իսկ ինչու՞ չփորձեցիր նրան գտնել:
- Նրա՞ն, հիմա՞...- զարմացած նայեց տղամարդը:- Ինչու՞...

Աղջիկը նստեց կողքին, գլուխը գցեց թիկնակին ու փակեց աչ-
քերը. պատուհանից փչող քամին նրա մազերը խփում էր ծերացող
տղամարդու դեմքին ու հաճելիորեն խուտուտ տալիս, տղամարդը
ժպտում էր:

- Հայր ու աղջի՞կ եք,- հարցրեց վարորդը:
- Այո,- չոր պատասխանեց աղջիկը՝ չբացելով աչքերը:
- Բայց էնքան էլ նման չեք:
- Ես մորս եմ նման. էլի հարցեր կա՞ն:

Թեև աղջկա ազդրերը մերկացած էին ընդհուպ մինչև վարտիքը,
իսկ կուրծքը՝ համարյա մինչև պտուկները, մատուցողը չնայեց
նրան, վարժ շարժումով սեղանին սահեցրեց ճաշացուցակն ու
գնաց:

- Երբ ներկված չեմ, օրինակելի աղջկա տպավորություն եմ թող-
նում երևի, հա՞:

- Այդպես է,- հաստատեց տղամարդը:- Մենյուն նայիր:
- Կարոտախտոթ թանկ է նստելու վրադ:- Աղջիկը մոտ քաշեց կա-
շեկազմ ճաշացուցակը:- Այսպես ուրեմն, ես շոգեխաշած թառափ
կուտեմ, խեցգետնի մսով սալաթ, այս կոկտեյլը, էլ ի՞նչ... Հա, լուծ-
վող սուրճ, և հարյուր հիսուն գրամ պլոմբիր պաղպաղակ՝ ընկույ-
զով ու մեղրով, վերջ:

Տղամարդը հավի մսով ու լապշայով ապուր պատվիրեց, ծիթապ-
տուղ, պանիր, հանքային ջուր:

- Գոնե էսպիսի լավ օրով մի քիչ խմիր:
- Հետո, ավելի ուշ,- պատասխանեց տղամարդը:

Կերան լուռ և արագ, քաղցած էին: Սուրճը խմելիս աղջիկը նկա-
տեց.

- Ինչ-որ բան էիր ուզում հարցնել ոնց որ:
- Ուզում էի: Բայց չեմ հարցնի. ձեր սերունդը չի սիրում, երբ հար-
ցեր են տալիս:

- Երևի ուզում էիր հարցնել, թե՞ ո՞նց էս օրին հասար, աղջիկա:
Ճի՞շտ է:

- Մոտավորապես:
- Հարգելի իմ ծերուկ, ես ուսանող եմ, ես էստեղ չեմ ապրում, այլ
էստեղից ոչ շատ հեռու, մի մեծ ու գորշ քաղաքում, որտեղ մարդուս
գերխնդիրը ձանձրույթի դեմ պայքարելն է: Իսկ էստեղ եկել եմ ուս-
ման վարձս վաստակելու:

- Սեզոնային աշխատանք:
- Այո: Տուն եմ վարձել և աշխատում եմ:
- Իսկ ծնողներդ...
- Ծնողներ կան, բայց չլինելու պես են. խմում են իմ ծնողները,
հարգելի ծերուկ, թունդ են խմում:

- Տեղի աղջիկները չե՞ն նեղում:
- Պատահում է, բայց ես պինդ եմ: Գնացի՞նք:
Դրսում արդեն մութ էր: Շոգ չէր, բայց տաք երեկո էր: Ծերացող
տղամարդն արծակեց վերնաշապիկի վերին կոճակը և թաշկինա-
կով սրբեց վիզը:

- Ասում են՝ ավկոհոլիզմը ժառանգական է,- ասաց աղջիկը:
- Ասում են:
- Բայց ես առանձնապես սեր չունեմ, միայն գարեջուր եմ սիրում,
ո՞վ չի սիրում:

- Իհարկե,- ցրված արծազանքեց տղամարդը:
- Լրիվ անցյալիդ մեջ ես, կենդանի մարդուն կողքիդ չես տեսնում:
Էդպես էգոիստ եք ծերուկներդ, միայն ձև եք անում, թե մատաղ
սերնդի մասին հոգ տանելը ձեր հիմնական առաքելությունն է, իրա-
կանում թաքուն ձեռ-մեռ եք գցում:

- Քեզ հետ պատահե՞լ է:
- Էն էլ ինչքա՞ն, ութ տարեկանից սկսած՝ լիքը էդպիսի հուշեր ու-
նեմ:

- Լսիր, ինչու՞ ես ինձ ծերուկ ասում, այդքան ծեր ե՞մ որ... Նոր-նոր
եմ սկսում ծերանալ:

- Ինձնից մի հարյուր տարով մեծ ես:
- Քանի՞ տարեկան ես:
- Տասնինը:
- Այսպիսի տարբերությամբ պատահում է, որ ամուսնանում են:
- Պատահում է, բայց դրանք լավ ամուսնություններ չեն: Լավ, ե-
թե վատանում ես, էլ ծերուկ չեմ ասի, կասեմ՝ տղամարդ: Այ տղա-
մարդ, հիմա ու՞ր ես տանում ինձ:

- Պարահրապարակ:
- Խորացանք: Որտե՞ղ է:

- Նավահանգիստ չհասած՝ մեծ զբոսայգի կա, էնտեղ:
Սրտի խորքում ինչ-որ տեղ տղամարդը հույս էր փայփայում, թե պարահրապարակը գուցե չկա արդեն, բայց կար, նույնությամբ, երաժշտությունն էր միայն ուրիշ՝ բասերի միալար, ուժգին դմբդմբոց, էլեկտրոնային կրկնվող հնչյուններ՝ պարզունակ ու հոգնեցնող: Պարելու համար գուցե վատ չէր, բայց դա չէր նշանակում, թե ինքը պարելու է: Այն օրը պարել էր, այո, սակայն և՛ պարերն էին ուրիշ, և՛ տարիքը:

- Դե՞, պարու՞մ ենք,- կանչեց աղջիկը ռիթմիկ ճոճվելով:
- Չէ, ինչ ես խոսում:
- Մի կոմպլեքսավորվիր, տղամարդ, ուզում ես պարել՝ պարիր, քեզ ոչ ոք չի նայելու, հավատա:
- Չէ, ես չեմ կարող...
- Այն օրը չե՞ս պարել:
- Այն օրը... Այն օրը ուրիշ ժամանակի մեջ է:
- Բայց դու ուզում ես քսերոքսել այն օրը, չէ՞, ուրեմն պարի, թող լիակատար լինի վայելքդ, տղամարդ:
- Չէ: Ու տղամարդ էլ մի ասա, անհեթեթ է հնչում մի տեսակ:
- Լավ, կասեմ պարոն: Հիմա ինձնից ի՞նչ է պահանջվում, պարոն:
- Ուզում եմ, որ պարես, իսկ ես կնայեմ. կարծում եմ՝ դու սիրում ես պարում:
- Չկասկածես: Գնացի:
Աղջիկը շուտ մոռացավ, որ տղամարդը նայելու է, միախառնվեց պարող բազմությանը: Տղամարդը լարվում էր, որպեսզի չկորցնի նրան՝ տեսադաշտից՝ նշան ընտրելով նարնջագույն շրջագեստը, որ զվարթ թրթռում էր, ոստոստում, կորչում, հայտնվում... Ահա, մոտ եկավ, ժպտաց, լեզու ցույց տվեց, դարձյալ հեռացավ, միախառնվեց... Ինչ-որ քաշքշուկ սկսվեց այնտեղ... Աղջիկը կտրուկ առանձնացավ բազմությունից, վազեց տղամարդու կողմը:

- Գնանք էստեղից, շուտ:
- Ինչու՞:
- Հետո կասեմ, գնանք, արի...
Մինչ այս, մինչ այն՝ երկու ջահել տղա մոտեցան ու կոպտորեն քաշեցին աղջկա թևը:

- Ի՞նչ է եղել, տղերք,- փորձեց զսպել նրանց տղամարդը:
- Դու մի խառնվի, ծերուկ, դու գնա տուն, մածուն խմի ու քնի:
Ծերացող տղամարդը հավաքեց-կենտրոնացրեց մարմնի բոլոր ուժերը և հարվածեց. տղան երերաց, և եթե չլինեք բազրիքը՝ հավանաբար կտապալվեք: Երկու զույգ բռունցքներ կարկտահարեցին տղամարդուն: Ընկավ: Աղջիկը ծղրտալով մեջ գցեց իրեն,

ինչ-որ մեկը գռաց՝ «Ոստիկանություն»: Տղաները փախան:
Արդեն զբոսայգու նստարանին՝ աղջիկը թափ էր տալիս տղամարդու հագուստի փոշին, ասելով.

- Էս ինչ կարգին տղամարդ է իմ ծերուկը, ո՞նց շրխկացրեց քիթ-բերնին...

- Ծանո՞թ էին,- խոսեց տղամարդը և նոր միայն զգաց ծնոտի ցավը:

- Համարյա: Երեկ թեղ եմ մոտներից, հասկացա, որ փող տվող չեն ու թռա: Ուու՛, այլանդակներ: Խեղճ ծերուկ, ասացի, չէ՞, որ թանկ է նստելու էս արկածը:

- Ժամանակը ետ պատելու ուզածդ փորձ երևի պատժվում է. հուսանք, որ իմ պատիժն այսքանն էր: - Տղամարդը նայեց աղջկան. լուսնի լույսը մի տեսակ հեռացնում էր նրա դեմքը, ասես սև-սպիտակ կինո լինեք:- Դու նրան շատ ես նման,- ասաց:

- Հենց նույն օ՞րը ծանոթացաք:

- Չէ, ինչ ես ասում,- համարյա վիրավորվեց տղամարդը:- Երեք օր առաջ: Նա զովացուցիչ ջրեր էր վաճառում սրճարանի կողքի կրպակում: Երեկ անցա՝ այդ շենքը չկա, տեղը հյուրանոց է:

- Շա՞տ էր սիրուն:

- Սիրուն էր, իհարկե, բայց բանը դա չի...

- Իսկ ի՞նչն է բանը:

- Գիտե՞ս... Ոնց բացատրեմ այս... Մեծ կյանք եմ ապրել, ամեն բան տեսել եմ, բայց վերջերս ետ նայեցի ու հանկարծ հասկացա, որ դրանից լավ օր չեմ ունեցել:

- Խեղճ, ժամանակի ծերուկ,- աղջիկը համբուրեց նրա այտը:- Անցյալն անդադար փորփորելը հիվանդագին բան է: Արի պառկենք արդեն, գնանք քո հյուրանոցը, պառկենք, ես քեզ էնպես սիրեմ, որ նոստալժիկ դուրս թռչի մեջիցդ, դառնաս առողջ, կենսուրախ ծերուկ: Ինչ է, դուք էդ բանը չե՞ք արել... Ասեմք ի՞նչ տարբերություն, դուք չեք արել, մենք կանենք, հա՞... Վճարել ես, չէ՞:

- Արել ենք: Բայց՝ ոչ հյուրանոցում:

- Չլինի՞ թփերի մեջ... Աստված իմ:

- Լողափի ծայրում մի անմարդ տեղ կա ...

- Կարգին անկողինը թողած, տաք ջուրն ու ցամքոցը թողած... Չես զգու՞մ, որ ծիծաղելի է: Լավ, գնացինք, բայց եթե շորերս կեղտոտվեցին, կոմպենսացնելու ես:

- Անշուշտ: Բայց մի շտապիր դեռ:

- Արանքում էլի՞ բան կա:

- Մի ժամի չափ զբոսայգում նստեցինք:

- Նախավարժանք: Համբուրվում էիք: Բայց դու հասկանու՞մ ես,

որ իմ բերանը համբուրվելու համար էնքան էլ մաքուր չի:

- Ինքդ ես երևի զգվում ինձնից, պատճառ ես փնտրում:
- Ամենահին: Թարմ ածիված, օծանելիքի բուրմունքը վրադ... Քեզ ի՞նչ է եղել: Դե ցույց տուր, ու՞ր է պատմական նստարանը:
- Էդ մեկը չեմ հիշում, էս կողմերում էր:
- Ուրեմն սա էլ ձեռ կտա, նստենք: Մոտ արի:

Վերևում վիթխարի մագնոլիայի փարթամ սաղարթը ծածկել էր լուսինն ու աստղերը, սպիտակ, մեծ ծաղիկների բուրմունքը մեղմորեն իջնում էր, պարուրում նստարանը, հետո գեփյուռի հերթական ալիքը տանում, տարածում էր այն: Մոտակայքում լապտեր չկար, մութ էր, սակայն ծերացող տղամարդն այդուհանդերձ անհանգիստ էր՝ զգուշավոր նայում էր ծառուղուն:

- Մի լարվիր: Ինչու՞ չես կարողանում թքել աշխարհի վրա, գոնե երբեմն:
- Աշխարհի վրա ո՞նց թքես, ոնց էլ թքես՝ թուքը բումերանգի պես վրադ կգա:
- Է, ծերուկ, տես, թե ո՞նց է վախեցրել աշխարհը քեզ, ո՞նց է կաշկանդել... Իսկ դու չես համարձակվում մի կարգին, հավեսով թքել վրան: Տուր ձեռքդ, դիր էստեղ: Է՛, էս կողմ նայի, ես էստեղ եմ:

Աղջկա բերանից զարեջրի ու ծխախոտի հոտ էր գալիս, սակայն դա բոլորովին տհաճ չէր, հակառակը, մոռացված հաճույքներ էր արթնացնում, և տղամարդն արդեն չէր նկատում ծառուղով քայլող մարդկանց:

- Վերջին անգամ ե՞րբ ես համբուրվել,- հարցրեց աղջիկը:
- Չեմ հիշում:
- Դե գնացինք, որտե՞ղ են քո էդ թփերը:
- Էդպես միանգամից չէ...
- Ինչու՞, էլի՞ ինչ-որ բան կա:
- Այո: Մենք իջանք նավահանգիստ, էնտեղ մի փոքրիկ զբոսանավ էր կանգնած, բարմենը մի հաղթանդամ նավաստի էր, թեև խարխիս կար դաջված, հարցրի՝ մի շիշ գինի չե՞ք վաճառի, ասաց՝ հենց մի շիշ էլ մնացել է: Սպիտակ կիսաքաղցր գինի էր, մոլորվական, թղթ բաժակներ էլ տվեց, բայց ծակ էին, շիջ խմեցինք:
- Ըհը, հիմա էդ զբոսանավը էնտեղ կանգնած՝ քեզ է սպասում, բարմենն էլ կասի՝ ու՞ր ես, մարդ աստօ՛ճ, մեռա սպասելով, գինիդ թթվում է...
- Բարմենն իսկապես մեռած է երևի, այն ժամանակ արդեն հիսունին մոտ կլիներ,- տխրեց ծերացող տղամարդը՝ ասես խոսքը շատ հարազատ մարդու մասին էր:

Նավահանգստում մի վիթխարի նավ էր կանգնած՝ ձերմակ,

բարձր, լույսերով ողողված: Բազրիքներին կռթնած մարդիկ շքեղ հագնված էին, խնամված, անուշաբույր սիգարներ էին ծխում ու ժպիտներ ուղարկում ցած:

- Էհ, մի օր մի էսպիսի նավ կնստեմ ու հայրա՛...,- ասաց աղջիկը:- Էյ, ծերուկ, ու՞ր ես,- կանչեց՝ նկատելով, որ տղամարդը կողքին չէ:
- Էստեղ եմ, արի,- ձեռքը թափահարեց նստարանին նստած տղամարդը:
- Չլինի՞ նույն նստարանն է,- հարցրեց աղջիկը:
- Չէ, բայց տեղը մոտավորապես էս է:
- Մի քառասուն տարի անցել է երևի:
- Մի քիչ էլ ավելի:
- Ուու՛, էդ ե՞րբ էր...
- Վերջերս:
- Նա քո առաջինն էր, չէ՞, ծերուկ:

Տղամարդը գլխի շարժումով հաստատեց:
- Լավ, բա հետո ի՞նչ եղավ, ու՞ր կորավ հուրիփերիդ:
- Հետո՞,- տնքաց տղամարդը:- Հաջորդ օրվա ինքնաթիռի տոմս ունեի, թռա տուն:

- Թռար, ընկար ուրիշ կյանքի մեջ ու մոռացար. դուք էդպես եք:
- Ինստիտուտ էի ընդունվել, ծնողներս թույլ տվին, որ մենակ ձամփորդեմ: Առաջին ազատությունս էր:
- Լսի՛, բայց կկարողանա՞ս որ...

Ծերացող տղամարդն անմիջապես կռահեց, թե խոսքն ինչի մասին է:

- Մինչև վերջերս կարողանում էի,- ասաց կեսկատակ:
 - Կնոջդ հե՞տ: Դա հաշիվ չի, ստանդարտ իրավիճակ է, մեռած էլ լինես՝ կստացվի: Դե լավ, մի տագնապիր, կատակեցի, իհարկե կստացվի:
 - Չեմ տագնապում,- ասաց ծերացող տղամարդը, սակայն տագնապն աչքերից չէր հեռանում:
 - Զբոսանավդ քեզ չի սպասել, ի՞նչ ենք անելու:
 - Դու նստիր, ես գնամ մոտակա խանութից գինի բերեմ:
 - Չէ, դու՛ նստիր, ուժերդ խնայիր, հոգնել ես, ե՛ս կգնամ, ես շուտ կգամ:
 - Հեչ էլ չեմ հոգնել, ի՞նչ ես հնարում: Բայց եթե ուզում ես՝ գնա,- համաձայնեց տղամարդը, որպեսզի աղջիկը չմտածի, թե չի վստահում իրեն:- Ահա, վերցրու,- ասաց՝ գրպանից փող հանելով:
 - Սա շատ է:
 - Ոչինչ, լավ գինի բեր, շոկոլադ էլ:
- Աղջիկն արագ էր քայլում, վերջին կետը՝ նարնջագույն շրջագ-

գեստն էր, շուտով դա էլ տարրալուծվեց մթան մեջ: Տղամարդը հայացքը դարձրեց ծովին: Երկար նայում էր ծածանվող սև ջրերին, ուր դեմքեր հայտնվեցին խորքերից, ամառ եկան, ծուռ ժպտացին, հեռացան, ուրիշները եկան... Հայացքը բարձրացրեց երկինք՝ նույնը: Փակեց աչքերը՝ նույնը: Փողոցի կողմից արգելակների ճռռոց լսվեց: Շրջվեց: Տաքսի էր, ասես՝ պատվերով:

«Օդանավակայան», - ասաց՝ երբ արդեն նստել էր վարորդի կողքին:

Կ Ա Ռ Ա Մ Ա Տ Ո Ւ Յ Ց

Մենակ էր գնալու, - հո փոքր չի՞, - հարյուր անգամ գնացել է այդ ճանապարհով: Տանից նեղ, թեք մայթով կիջնի մինչև լինոնադի խանութը, արագ կվազի-կանցնի գիժ Կլարայի ամառ-ձմեռ բաց պատուհանների առջևով, նավթի կիսանկուղային կրպակի մոտով կթեքվի նեղլիկ նրբանցքը, որի երկայնքով անվերջանալիորեն ձգվում է բետոնե հաստ պատը: Պատի այն կողմում՝ երկաթուղու գծերն են: Իսկ նրբանցքի մյուս մայթի աղյուսաշեն տան գետնահարկից կքրքջան քուրդ աղջիկները, ապա կխոսեն խարույկի ճարձատյուն հիշեցնող իրենց լեզվով, երկրորդ հարկի փայտյա ծեփած պատշգամբից խաչափ կհաչի ծեր բուլդոզը, որի չփակվող երախից փսիները կկախվի, կծգվի, կպոկվի ու ճտտոցով կընկնի սալահատակին, արևածաղիկ վաճառող պառավի աթոռակի մոտ: Ահա և բետոնե պատի մեջ փորված անցքը. անցքով ներս մտնել և նույն պատի տակով, բայց՝ մյուս կողմից, ետ գնալ եկած ուղղությամբ: Ժանգոտ պահեստային գծեր, որոնց վրայի հինգ, թե վեց վագոնների դուռ-պատուհաններն ամուր ճաղապատ են, այդ վագոններում ժամանակ առ ժամանակ բնակեցնում են ինչ-որ տեղից բերած և ինչ-որ տեղ տանելիք ձերբակալվածների, որոնք ամենևին էլ սարսափելի չեն, երբ ճաղերի արանքով խոսում են հետը: Պահեստային գծերը ավարտվում են՝ խրվելով բարձր հողաթմբի մեջ, այն կողմում՝ մագութի վիթխարի ցիստեռնն է, որի անցքից ներս գոռալիս՝ ձայնը բարձր արձագանքվում է, և որի մեջ բակի տղաները գարնանը խեղդեցին կատվի երկու ձագերին: Սլաքավարի տնակի մոտից ևս մի քանի քայլ՝ և արդեն հարկավոր է անցնել գծերը՝ զգույշ, բայց արագ: Խճածածկ արահետն այն կողմում աստիճանաբար կլայնանա, կբարձրանա գծերից և կծածկվի ասֆալտով: Պահասենյակ, բեռնակիրների սայլակներ, թերթի կրպակ, գարեջրի կրպակ, պաղպաղակի կրպակ, ծանր փայտյա նստարաններ, մեծ, փարթամ արմավենիներ՝ հսկայական թաղարներում, սյուներ, կամարներ,

դիվահար սլաքներով՝ պատի վիթխարի ժամացույց, տոմսավաճառների պատուհանիկներ... Կառնատույց:

Հայրն էր գանգել, Մոսկվայից, մոր հետ էր խոսել: Տղան տանը չէր եղել, հարևան փողոցում ճան էր խաղում, եթե իմանար հայրը գանգելու է՝ տնից դուրս չէր գա, իսկի մի ռուպեով էլ դուրս չէր գա, բայց ի՞նչ իմանար: Հայրն ասել էր. «Վաղուց չեմ տեսել, ո՞նց է: Թող գա կայարան: Հանկարծ չուշանա, գնացք քիչ է կանգնելու: Ասեք՝ նվեր ունի ինձնից ստանալու»: Տատը քթի տակ խնդմնդալով ասաց. «Տեսնես մի կարգին նվեր է: Գոնե շալվար լինի, երեխան շալվար չունի»: Մայրը, թե. «Չէ մի... Էդքան փող չի ունենա»: «Էդպես մի ասա,- նկատեց պապը,- եթե մարդուն Մոսկվա են գործուղել, ուրեմն գործերը վատ չեն»: «Նա փոխվողը չի... Ասենք՝ իմ ինչ գործն է՝ փոխվող է, փոխվող չի», - մայրն այնպես թափ տվեց ուսը, ասես վրայից ինչ-որ բան է ուզում գցել: «Մենակ եմ գնալու, փոքր չեմ», - ասաց տղան, որ փոքր չէր՝ արդեն տասնմեկ տարեկան էր: «Թող գնա, մոտիկ է», - ասաց պապը: «Վայ,- ծնկներին խփեց տատը,- գծերը ո՞նց մենակ կանցնի, գժվել ե՞ք»: «Կանցնեմ,- համառեց տղան,- ամառից անգամը չի»: «Էն որ վրացու հացի եք ուղարկում, գծերով չի անցնում», - նկատեց պապը: «Գծերով էլ որ...», - փափկեց տատը: «Գծերով է,- հաստատեց տղան ու դարձավ մորը: - Կանաչ կոշիկներն են հագնելու»: «Էդ մի գույգ նոր կոշիկը պահել ենք՝ հագնես-գնաս դպրոց...», - դժգոհեց տատը: «Թող հագնի,- ասաց մայրը,- հո հին կոշիկներով չի՞ գնալու»: «Բա ո՞նց, հո հին կոշիկով չի՞ գնա,- կրկնեց պապն ու նայեց սեղանին.- Արաղն ո՞վ վերցրեց, բերեք»:

«Զգույշ կանցնես գծերը, չորս կողմդ լավ կնայես՝ նոր», - տնից դուրս գալիս ասպարեց մայրն ու կտրուկ շրջվեց, բայց տղան հայելու մեջ տեսավ նրա արցունքը:

Հետո նա համարձակ քայլում էր մեծ կառնատույցով: Երբ ավարտվել էր խճածածկ արահետը և սկսվել ասֆալտը՝ տղան մի փալատով մաքրել էր փոշոտված կանաչ կոշիկները, և հիմա նրանք վառ էին, ինչպես կառնատույցի խորքում աճող բարդու դալար տերևները: Շատ կուզենար երկարփողք տաբատով գալ կայարան, բայց չուներ. տատը սկսեց փոքրացնել քեռու զոլավոր տաբատը, բայց գործը կիսատ թողեց, ասաց. «Թող շոգերն անցնեն, քրտինքը լցվում է աչքերս»: Իսկ այս կարճփողք տաբատը նաև լայն էր ու ընդգծում էր սրունքների նիհարությունը, տղան դա տեսնում էր ցուցափեղկերի արտապատկերում՝ ամռանից, կողքից, մյուս կողքից, նույնն էր՝ ծնկների մոտ ավարտվող լայն փողքեր, միջից՝ բարախկ սրունքներ:

Աղջնակը, որ կարճ, զսպանակի պես ծիգ հյուսքեր ուներ, փայտյա մեծ նստարանին նստած՝ պաղպաղակ էր ուտում. ուտքերը բարձրացրել՝ կրունկներով հենել էր նստատեղին, դանդաղ ճռճում էր՝ աջ, ձախ, և ախորժակով լիզում օձառի պես ողորկ պաղպաղակը, որ ծորում էր մետաղյա մեծ-մեծ կոճակներով վանդակավոր շրջագետտին, սակայն ո՛չ ինքը, ո՛չ էլ կողքին նստած ակնոցավոր հայրը չէին տեսնում: Աղջնակը որսաց տղայի հայացքը, ծամածռեց դեմքը և լեզու ցույց տվեց՝ երկար, վարդագույն, շարժուն, ինչպես հողից նոր հանած անձրևաորդ: Տղան ամաչեց, կախեց գլուխն ու արագացրեց քայլերը:

Բարձրախոսն արդեն հայտնել էր՝ «Մոսկվա-Երևան ճեպընթացը դուրս է եկել հարևան կայարանից»: Տղան կառամատույցի ծայրին հասած՝ ուռնաթաթերի վրա ձգվել ու նայում էր այն կողմ, որտեղից ուր որ է երևալու էր գնացքը: Ցածում ռելսերի եզրերով աճող խոտն ու փշերը մագուրոտ էին: Ահա, կտրուկ ցնցվեց կոճակայտերի արանքից ցցված վտիտ, դեղնավուն ցողունը, ապա՝ դարձյալ, առավել ուժգին: Մոտեցող դղիրը՝ և մետաղյա վիթխարի բուլդոզը դուրս սահեց փոշոտ սկացիաների թունելից, եկավ՝ անդադար ահագնանալով: Գնացքի թափից տղան փորձեց կռահել, թե որքան հեռու կկանգնի ութերորդ վագոնը, ապա վազեց: Փնչոց, արգելակների ճռինչ, տամբուրներում խրոխտ կանգնած ուղեկցորդներ՝ ծառայական ցցուն գլխարկներով, երկփաթեթ դեղին-կարմիր դրոշակներով, նրանց թևատակերից կամ ուսերի վրայից կառամատույցը տեսնել ճգնող ուղևորների դեմքեր, պատուհանների սպիտակ վարագույրների՝ երկգագաթ լեռը... Անցավ հինգերորդը, վեցերորդը, յոթերորդը... Ահա, հետևից լսեց իր անունը, ապա ձայնը կրկնվեց, բայց արդեն առջևից: Ավելի արագ վազեց, թեև շնչակտուր էր լինում արդեն: Երկաթյա կարճ սանդուղք, վերում ճռինչով բացվող կամրջակ, նեղ միջանցքում խռնված բազմություն, որը գնացքը կանգնելու և պես՝ դուրս հորդեց կառամատույց:

Հոր ամուր, մեծ, արևահար ձեռքերը թեթևորեն բարձրացրին նրան, և վերից կառամատույցն այդքան անժայր ու անհայտ չէր թվում այլևս, նստարանին նստած աղջնակն էլ փոխված էր՝ կծկված, մի տեսակ խղճուկ:

- Մարգանք չես անում, մկաններդ կիսելի նման են:

- Անում եմ, քիչ...

- Շատ արա, ուժեղ պիտի լինես, հո թույլ չե՞ս լինելու: Գանտել չունե՞ս:

- Ունեմ, կես կիլոյանոց: Տղան նայում էր իրեն գրկած ձեռքի գնդված մկանին, որի վրա փքվել էր կապույտ երակը:

- Կեսը քիչ է, տասը տարեկան ես արդեն:

«Տասնմեկ», - ուզեց ուղղել տղան, բայց լռեց:

- Երբ գաս ինձ մոտ, քեզ էսպանդեր կնվիրեմ, - շարունակեց հայրը: - Չմեռվա արձակուրդին գալու ես, չէ՞:

- Չգիտեմ...

- Ես կզանգեմ, կխոսեմ մորդ հետ: Հիմա կտանեի, բայց արձակուրդդ արդեն վերջանում է:

«Դեռ ահագին կա»:

- Հետո... բանը... Էն նոր ծնված եղբայրդ ձվձվում է, ամբողջ օրը լաց է լինում, բոլորին խառնել է իրար: Երրորդը լավ ավարտեցի՞ր:

«Չորրորդը», - ցանկացավ ճշտել տղան, բայց միայն ասաց.

- Հինգերով ու չորսերով:

- Ապրես: Լսի, էս ձեր կայարանում գարեջուր չեն վաճառում...

Փոքրիկ, քրտնած ձեռքը սեղմվեց մեծ, առողջ ափի մեջ, և նրանք քայլեցին կառամատույցով:

- Պաղպաղակ կուտե՞ս:

- Չէ:

- Կոկորդի պատճառով:

- Կոկորդի:

- Էստեղ կանգնի, ես գարեջուր վերցնեմ, վագոնում խմելու բան չի մնացել:

Կրպակի առջև մեծ հերթ էր, բայց հայրը, չգիտես ոնց, արագ ետ եկավ՝ բերելով գարեջրի քրտնապատ շշերը:

- Գնացի՞նք, - ասաց և քայլեց դեպի գնացքը, հետո հայացքն ընկավ տղայի կոշիկներին: - Ի, տղամարդ է՞լ կանաչ կոշիկ հագնի, - կատակեց:

- Պապն է առել, - կարմրելով արդարացավ տղան, ապա սիրտը ճնվեց պապին դավաճանած լինելու զգացումից:

- Ո՞նց է պապը, խմու՞մ է... Ո՞նց են ձերոնք:

- Լավ են...

- Միշիկ, էս շշերը վերցրու ձեռիցս, - գոռաց հայրը դեպի կիսաբաց մեծ պատուհանը, այնտեղից զույգ մագոտ ձեռք դուրս սահեց և տարավ գարեջուրը: - Սեղանի տակի տուփը տու՛ր, Միշիկ, - հիշեց հայրը, և նույն մագոտ ձեռքերից մեկը, որին ռուսատառ դաշվածք կար, նորից դուրս սահեց՝ հանելով ոչ մեծ արկղը: - Ահա, - ասաց հայրը, - սա քեզ, սուվենիր, Մոսկվայից:

- Շնորհակալություն, - դժվարությամբ արտաբերեց տղան՝ վերցնելով արկղը:

- Շնորհակալությունս ո՞րն է: Լսի՛ր, ախր ինչի՞ մի կարգին մարգանք չես անում, է: Խոստացիր, որ կանես:

- Կանենմ:

- Ու աշխարհից էլ մի ամաչի, թող ինքը քեզնից ամաչի: Գլուխդ բարձրացրու, բարձր պահի, բարձր: Չէ, հայացքդ մի կախի: Ըհը: Իսկ հիմա թքի: Թքի-թքի, ասֆալտին, այ էստեղ, թքի:

- Ո՞նց...

- Թքի, ասու՞մ եմ: Ըհը, ապրես:

- Շարժվեց,- ասաց տղան՝ ցույց տալով արդեն ահագին առաջացած վագոնը:

- Թուշդ մոտիկ բեր:

Տղան նորից զգաց թեթև ծակոցները դեմքին և ծխախոտի սուր, բայց հարազատ հոտը:

- Ախր գնաց...

- Մի վախի, չեմ մնա: Ձերոնց կբարևես:

Հայրը վազեց ու թեթևորեն ցատկեց հեռացող վագոնի կամրջալին. երբ ցատկելու համար ոտքը ձգեց՝ տղան տեսավ նրա տաբատի մաշվածքը: Հետո հոր խիտ մազերով գլուխը հայտնվեց ուղեկցորդի դեղին-կարմիր դրոշի վրայից: «Հունվարին կսպասեմ», - լսվեց աղմուկի միջից:

Գնացքն անընդհատ արագացնում էր ընթացքը, արդեն այնքան հեռու էր, որ կիսածալած ձեռքի բթամատն աչքի դեմ պահելիս՝ լիովին ծածկում էր այն. մի պստիկ բթամատ ծածկում էր մի ամբողջ գնացք՝ տասնյակ վագոններով, հարյուրավոր ուղևորներով, որոնց մեջ էր տղայի հայրը:

Տղան իջեցրեց բթամատը, որն այլևս ոչինչ չուներ ծածկելու հեռու ռելսերի վրա, և քայլեց դատարկվող կառամատույցով: Աղջնակը դեռ նստած էր ննջած հոր կողքին, տղային տեսնելով՝ դարձյալ հանեց լեզուն: Տղան թեքվեց, թեք գետնին և շարունակեց քայլել՝ աղջկա ականածանքով ուղեկցված: Երբ իջավ արահետ ու մնաց մենակ, թևատակից դուրս բերեց արկղն ու տնտղեց: Փայտը կողքերից պստիկ անցքեր ուներ, որոնց միջով, սակայն, ոչինչ չէր երևում, իսկ երեսին կապույտ տպվածք կար, խանութի կնիք էր՝ կիսով ջնջված: Աչքերը հարմար երկաթ փնտրեցին, հետո նկատեց պատի տակ գնդակ խաղացող մեծ տղաներին և հրաժարվեց արկղը բացելու մտքից, տունն էլ արդեն հեռու չէր:

«Երեխայի ձեռքից վերցրեք, ինքներդ բացեք», - ասաց տատը: «Չէ, ես եմ բա...բա...բա...բացելու», - գոռաց տղան, տարօրինակորեն ցնցելով ուսը: «Իհարկե, դու ես բացելու, հանգստացիր», - նրա գլուխը շոյեց մայրը: «Վերցրու, սրանով հարմար կլինի», - պտուտակահանը մեկնեց պապը:

Տուփի մեջ կրիա էր՝ անշարժ, գլուխն ու ոտքերը զրահի տակ

քաշած. տղան հանեց տուփից, դրեց սեղանին: Անձայն նայում էին: Մութ խոռոչից մի պահ հայտնվեց կրիայի պլշած աչքերով տափակ գլուխը, բայց և անմիջապես ետ քաշվեց: «Նա կենդանի սիրում է, մի ժամանակ շուն էր պահում, չէ՞...», - նկատեց պապը: «Փոխանակ...», - սկսեց տատը, բայց մայրն անմիջապես ընդհատեց. «Սուս»: «Քիչ խոսի», - ավելացրեց պապը: Իսկ տղան հանկարծ հիշեց հոր տաբատի մաշվածքը: «Ասում են՝ կրիայից համով ապուր է լինում», - չէր հանգստանում տատը: «Քո գործը չի, իմ կրիան է, - գոռաց տղան: - Ես կանաչ կոշիկներն էլ սրանից հետո չեմ հագ...հագ...հագ...հագ...»: Նա կակազեց ու այդպես էլ չավարտելով խոսքը՝ գրկեց կրիային ու սենյակից դուրս վազեց:

ՀԱՅԿՈՒՀՈՒ ՊԱՐԸ

Ստոիկ ծառի սեղմ փչակը կանացի ամոթոյթի էր նման: Ծառը ցանկանում է: Թեև, ինչու՞ ոչ: Ի՞նչ իմանաս՝ մարմնական կյանքում բավարարում չստացած մեկի հոգին չէ՞, որ ծվարել է ծառի մեջ ու իր անհագուրդ կրքի կարոտով ներսից փչակել բնափայտը:

Իսկ դիմացի սարավանջի ծառերը հեռվում չեն գատվում միմյանցից, գունային բծեր են՝ կանաչ, դեղնականաչ, դեղին, դեղնակարմիր... Նաև՝ ներս ընկած գորշավուն բծեր՝ հատած ծառերի տեղերում: Լանջի մեջտեղով, վարից վեր անցնող խոր փլուզվածք կա՝ կապտասև մեծ ճաք՝ կարմրաշեկ քարակույտերով շուրթված, - սարն է՞լ է ցանկանում, - ճաքից ոչ հեռու՝ տապալված հոսանքակիր աշտարակ, որը թեք ընկած վիթխարի սև ագռավ է հիշեցնում: Ապա՝ դարձյալ կանաչ, դեղնականաչ, նաև գորշավուն բծեր: Ցածում գետի պողպատագույն ժապավենն է, գետափի դարավանդին՝ եկեղեցի, որն իր հավաք գծագրով կտրատում է լանջի գունագեղ պատկերը. վարդագույն պատեր, վերծիգ գմբեթ, կամարածև շքամուտք, դեպի խճուղին իջնող արահետ... Վերջ, կտավին այսքանը բավական է: Գորշավուն բծերին կարելի է գույն տալ, տապալված աշտարակը կարելի է չպատկերել, կարելի է չտեսնել նաև ասֆալտապատ խճուղին: Կարելի է: Իսկ եկեղեցին, օ՛, եկեղեցին... Առավոտյան ստվերն այս կողմում է, կեսօրից հետո՝ այն, առավոտյան նկարես՝ ուրիշ է, ցերեկով՝ ուրիշ, երեկոյան՝ ուրիշ, գիշերով՝ ուրիշ ու ուրիշ, երբ էլ նկարես՝ ուրիշ է, մինչև վրձինը տանես-բերես՝ արդեն ուրիշ է եկեղեցին, օ՛, եկեղեցին...

Թքած: Ինչու՞ նկարես՝ ուրիշ լինի, թե չլինի ուրիշ, ի՞նչ նոր բան է ասելու նա առավոտյան, ցերեկով, երեկոյան կամ հենց թեկուզ գի-

շերով: Ինքնախաբերություն, անխորհուրդ, անպտուղ վարժանք, ձեռնահարություն: Տաղտուկ:

Ձգվանքով նետած վրձին, ուտքով կոպտորեն հրած նկարակալ, մեջքի տակ ճորթվող խոտ, աչքերն արևից պատվարած կոպեր, ուրոնք անմիջապես վեր են ածվում էկրանի՝ վառ կանաչ, վարդագույն, կարմիր, սև բծիկների կերպասփոխիկ խաղերի համար: Գույներ, գույներ, գույներ... Պրծում չկա նույնիսկ փակ աչքերով: Ձայներն էլ գույներ են՝ սաղարթների խշռոցը՝ դեղնականաչ, ծառաբնի ճռռոցը՝ գորշ կամ շագանակագույն, առվակի քջջոցը՝ երկաթագույն, մեղվի բզզոցը՝ դեղին-սև, հեռու թփերի խշրտոցը...

Հեռու թփերի խշրտոցը դեռ անգույն է... Ի՞նչ կենդանի է... Միայն թե շատ մեծ ու ագրեսիվ չլինի: Արդեն մոտակա խոտերն է խշրտացնում... Շուն է: Մեծ է, բայց ագրեսիվ չի կարծես: Ինչ-որ բան է փնտրում: Բերեց: Վրձինն է: Խելացի շուն: Բայց ո՞վ խնդրեց, ինչու՞ ես մոռոթ խոթում քեզ չվերաբերող գործերի մեջ:

- Բա՛, - լսվեց ետևից, - էսպես խելոք շուն աս մեր Չալուն: Փոքրամարմին ծերուկն ասես մեծ սունկ լինի՝ բորբոսապատ կոճղին հենց նոր բուսած: Մեր եկեղեցին ե՞ս նկարում: Նա հանեց ծառայողական մեծ գլխարկը, քորեց ավելաքան խիտ մազերով գլուխը, գլխարկը վերստին տեղը դրեց, բայց սնկի հետ զուգորդումն անդարձորեն կորած էր արդեն:

- Շունը մոտեցել՝ ջինսի փողքն էր հոտոտում:
- Չի կծի՞:
- Չէ, մի՛ վախի: Էս ի՞նչ աս, արդեն հավաքվում ե՞ս:
- Հա:
- Մի կարգին նկարեիր, էլի, թե չէ էս խառը-խշտիկ գծերով մեր եկեղեցին կճանաչվի՞:
- Ուշ է, վաղը կգամ, կամ էլ՝ չեմ գա:
- Մտքով կնկարե՞ս:
- Հա, մտքով:
- Չէ, մի ավարի, արի ու մի կարգին նկարի: Նկարիչ շատ աս գալի մեր կողմերը, բայց քեզ հեջ չեմ տեսել:
- Ես էլ քեզ չեմ տեսել:
- Դե որ ես քեզ չեմ տեսել, դու ինձ ո՞նց կտեսնես: Լսի, մեկ էլ ու՞ր գնաս-հասնես քաղաք, արի էսօր ինձ մոտ մնա, առավոտ կգաս՝ գործի կանես, հը՞: Առավոտվա լույսերի մեջ գիտե՞ս ոնց աս պլպլում, ինչ գույներ աս խաղացնում անտերը... Վայ, մեղա քեզ, Տեր, մեղա, մարդուս լեզվից միամիտ ինչ ասես չի թռնի, մեղա:
- Մեծ մեղք էր, մեղա ասելով վայ թե չպրծնես:
- Ինչի՞, Աստված չգիտի՞, որ միամիտ ասված խոսք էր ու էն էլ է-

լի սիրով էր ասված, մեռնեմ Աստծուս զորությանը, նա ամեն բան գիտի ու հասկանում աս:

- Ուրեմն փրկված ես:
- Բա ոնց: Հիմա ինչ ես ասում, գալիս ե՞ս: Լավ արաղ ունեմ՝ տան-ծի, լավ պանիր՝ ոչխարի...
- Հեռու՞ է:
- Չէ: Էն բլրի թարս փեշին աս, հանգիստ գնալով՝ կես ժամ: Գնացի՞նք: Շերուկը ոտքի ելավ. անտառապահի հնամաշ համազգեստը մեծ էր վրան:

Կողք-կողքի քայլող շան և տիրոջ քայլվածքները նման էին: Ջուր չեն ասում, որ շներն ի վերջո նմանվում են իրենց տերերին: Հնարավոր է՝ որ ամենևին էլ այդպես չէ: Սակայն այս երկուսը հաստատ նման էին իրար: Ջգաստացան, ինչ-որ բան զգացին: Թխկ, թխկ՝ թխկացրին սապրոզները, թփ, թփ, թփ, թփ՝ թփթփացրին թաթերը՝ արահետից դուրս, թփերի հետևում՝ թխկ-թխկ, թփ-թփ-թփ-թփ: Շունը նորից արահետ եկավ, այս ու այն կողմ նայեց, հրացանն իջեցրեց ուսից ու դարձյալ մտավ թփերի մեջ: Շերուկը բրդոտ գլուխը հանեց ծառի հետևից, հոտոտեց օդն ու դարձյալ ետ գնաց: «Էլի ծառ են կտրել անտերները», - մթմթթաց շունը, հանեց գլխարկն ու քորեց գլուխը, դժգոհ փնջացրեց և նստեց տիրոջ կողքին: «Այ թե մի ձեռս կընկնեք, ես ձեր տիրու... Գնացի՞նք»:

Կաշաղակների կաշկաշյուն, փութանցիկ գեփյուռից անհանգստացած սաղարթներ, բույրեր, բույրեր... Հոտ: Տաճ հոտ: Ուտքերի տակ՝ փշրվող ապակու ձայն, թիթեղի ճռռոց: Թխկ-թխկ, թփ-թփ-թփ-թփ...

- Ըհը, կերել-գխկտվել են, զիբիլը շաղ տվել անտառով ու գնացել: Ես ձեր տիրու... Ձերոնցից են՝ քաղաքից, էս տեսակ զիզի-բիզի բաներ նրանք են խմում: Սապրոզի հուժկու հարվածից կոկա-կոկա-յի տուփը կարմրավուն աղեղ գծեց օդում ու անձայն սուզվեց բարձր թփերի մեջ: Ասա, քե՛ք եք անում՝ մարդավարի արեք, էս ճյուղերն ինչի՞ եք ջարդում-պրճոկում, էս զիբիլը, էս կրակը... Հե՛յ-հե՛յ, - հանկարծ գոռաց ծեր անտառապահը, և նրա գոռոցի մեջ ավելի շատ կարոտ կար, քան գայրույթ: «Հե՛յ-հե՛յ», - գլորվեց լանջով:

Մթան կապտասև թանձրույթը դանդաղորեն բարձրանում էր ծառաբներով՝ աստիճան առ աստիճան կլանելով սաղարթները: Ճռռացին ծղրիղները: Ծառերի ետևում փախչող խշրտոց լսվեց, հեռոց, ընդհատումն ինչ-որ ձայն, որ ծիծաղ էր հիշեցնում: Շերունու արմատախիլ ականջների տեղում բուրդը զգաստացած ցցվեց, նա հոտոտեց օդը, թեքվեց, նայեց տիրոջը: Շունը հանեց գլխարկը, քորեց գլուխն ու խորամանկ-բանիմաց ժպտաց: Թխկ-թխկ, թփ-թփ-

թփ-թփ՝ շարունակվեց ճանապարհը:

Բլուրը շրջանցված էր: Արահետը կտրուկ վեր տարավ, ապա նույնքան կտրուկ ուղղվեց: Երկու ծերուկ կամ երկու շուն արագացրին քայլը: «Հասանք», - ասաց նրանցից մեկը: Երկաթյա շրջանակներով ցանցկեն թեթև դարպասը ճռռալով ետ գնաց:

- Իսկ գյուղն ո՞ր է:

- Գյուղն ինչի՞ր ա: Սա անտառապահի տունն ա, անտառապահն էլ ես եմ, մոտերքում ուրիշ տուն չկա: Իսկ գյուղը ներքևում ա. էն հեռու կրակները տեսնում ե՞ս... Էն, էլի... Չես տեսնու՞մ: Դե որ չես տեսնում՝ ինչ ասեմ: Էնտեղ ա:

Բակը նույն անտառային տարածքն էր՝ թեթև ցանկապատերով զատված, խորքում՝ ճերմակ պատերով տնակն էր՝ փայտաշեն ընդարձակ պատշգամբով: Տնակի առջև ցածրիկ, երկարուկ սեղան կար, սեղանից քիչ հեռու՝ կոպիտ քարերից օջախ, որի վրա քլթքլթում էր մրոտ կաթսան: Կաթսային հակված էր նիհարիկ մի սիլուետ:

- Հայկուհի ջան, սոված եմք, սեղան զցի: Հյուրը քաղաքից ա, նկարիչ, մեր եկեղեցին ա նկարում, էս գիշեր կմնա մեր տանը:

Խոտերի մեջ կչկչալով փախան չալպտուրիկ հավերը. փախուստը ետևից առաջնորդում էր խոշոր աքաղաղը: Հայկուհին նայեց աքաղաղին. օջախի կրակները վարից լուսավորում էին դեմքը՝ ստվերներ զցելով վեր, ինչից դեմքն արտասովոր գծագիր և արտահայտություն էր ստացել: Բայց ոչ, միայն ստվերները չէին պատճառ, աղջկա դեմքն առհասարակ էր տարօրինակ, և աքաղաղին հետևող այդ ժպիտը՝ նույնպես: Դա մանկամիտի, խենթի ժպիտ էր՝ ծուռ, լարված, բնագոյային անսքող փայլատակումներով:

- Թռռնիկս ա,- կիսածայն բացատրեց անտառապահը, ասես գաղտնիք էր ասում:- Սանկուց անտառի սեր ունի, գյուղում չի մնում, փախչում-գալիս ա ինձ մոտ: Հերն ու մերը արդեն ձեռ են քաշել, թողել են իմ հույսին: Սովորելու հետ էլ գլուխ չունի, դպրոցը կիսատ թողեց: Բայց անտառը ինձնից լավ գիտի, հա, ամեն բան ճանաչում ա ու հասկանում՝ թուփ ու ծառ լինի, թե կենդանի արարած: Մի տեսնես էժի պես ոնց ա վազում քար ու քրայով, ոնց ա գետում լող տալիս, ձուկ բռնում... Ոչնչից վախ չունի շան աղջիկը:

- Քանի՞ տարեկան է:

- Դե մի տասնյոթ-տասնութ կլնի, հա: Խեղճը, նկատեցիր երևի, մի քիչ բան ա, մի քիչ խևոտ ա, մանկուց: Բայց դե շատ ջիգարով ա շան աղջիկը, շատ: Էհ...

Հայկուհին կարծես կռահել էր, որ իր մասին են խոսում, դրանից էր դեմքին դեռևս պահպանված ժպիտն ավելի ծուռ ու լարված

դարձել: Մարմինը նիհար էր, դեմքը, հակառակը, կլորավուն, լիքը, կզակը չէր առանձնանում, քիթն ուղիղ էր, կարճ, մսեղ, բերանը՝ փոքր, շրթունքներն՝ ուռուցիկ, աչքերը կլոր էին, դուրս պրծած, մանրիկ ալիքներով ուսերին իջած մազերին չոր տերևներ էին կպել-խճճվել, ճակատը չէր երևում մազերի տակից, սակայն ըստ երևույթին՝ լայն չէր: Ծանոթ էր այդ դեմքը... Բայց ո՞նց, որտեղի՞ց...

- Շուտ արա՛, Հայկո՛, սոված մեռանք:

Գորշավուն զգեստը, որ համարյա հասնում էր մերկ ոտնաթաթերին, ձմրթված էր, տեղ-տեղ էլ՝ ճղճղված:

- Արի, արի լվացվենք, մինչև ժամ գա:

Ընթրիքի սեղանը զցող Հայկոյի շարժումները հստակ էին, կանացի սեթևեթանքի ոչ մի նշույլ, ոչ մի ավելորդություն. կաթսան սեղանին տեղափոխեց առանց ձիգի, առանց ավելորդ լարվածության, թեև տաք բռնակները մերկ ձեռքերով էր բռնել, ափսեները քաթանե սփռոցին նստացրեց սահուն ու ճշգրիտ:

- Արաղը մոռացար, արաղը, Հայկո՛:

Հայկուհու դեմքին նորից հայտնվեց ծուռ ժպիտը. արագ մտավ տուն ու ետ եկավ՝ բազմածալ լրագրային թղթով խցանված օղու շիշը ձեռքին: Մի ոտքը մի քիչ կարճ էր կարծես... Թե՞ քայլվածքն էր այդպիսին՝ թեթևակիորեն մի կողմի վրա թեքված: Շիշը նույնպես սահուն ու ճշգրիտ նստացրեց սեղանին. առարկաները և նրանց հարաբերությունները, շփումը լավ զգացողի գործողություններ էին նրա գործողությունները՝ զգացողի, ոչ գիտակցողի: Մատները ջղուտ էին, ծուռտիկ, եղունգները՝ կարճ, մսի մեջ խրված, ինչը կրծելու սովորության արդյունք էր հավանաբար:

- Դեհ, անցանք գործի,- հայտարարեց տանտերը՝ շիշը ձեռքն առած:- Ողջություն բոլորիս:

Օղին թունդ էր, այրող, բայց՝ հաճելի: Հայկուհին հանգիստ խմեց, առանց դեմքը ծամածռելու, բայց հետո հանկարծ հազաց ու թքեց թփերի մեջ:

- Չուկ քաշի,- դատարկած բաժակն իջեցնելով՝ ասաց ծեր անտառապահը:- Գետի ծուկ ա, Հայկոյիս բռնածո:

Ընթրիքը սկսված էր. տապակած ձուկ, լավաշ, դարձյալ օղի, եփած հավի միս, լավաշով փաթաթած պանիր, կանաչ տխ ու էլի օղի: Հայկոն ետ չէր մնում, խմում էր՝ անուշադրության մատնելով պապի խեթ հայացքը, թեև այդ հայացքն ավելի շուտ ցուցադրություն էր հյուրի առաջ:

Բակը հանկարծ լցվեց զանգուլակների ծնգծնգոցներով:

- Էժն ա, էկավ, իցմա կմտնի բոստանը, ես քու տիրու... Հայկո՛, Չալո՛, շուտ արե՛ք:

Հայկոն արդեն վազում էր՝ ձեռքին ասես օդից խլած մահակը թափահարելով և անհողաբաշխ աղաղակելով: Վազեց նաև շունը: Երկուսով քշեցին այծին. տան ետնամասում աստիճանաբար մարեցին ծլնգծվածները, հաչոցը և Հայկոյի «Հու-հու-հու»: Տարօրինակ էր՝ այծը նույնպես նման էր ծեր անտառապահին, թեև շանն ամենևին նման չէր:

- Էդ անտերին թևիցդ զցի, կկծի:

Դեղնականաչ փայլփլուն բզեզ էր, որ ամուր կառչել էր վերնաշապկի թևքից ու շարժում էր երկար բեղիկները:

- Սրանք կծող չեն ինչքան գիտեմ:

- Էդ առաջ էր, որ կծող չէին, հիմա լավ էլ կծում են,- ծերուկը զգուշորեն, բայց արագ «գողացավ» բզեզը:

- Այդպես չի լինում:

- Լինում է: Նայի սրան, էսպես երկար, բեջուռա բեղ ե՞րբ ուներ, բա էս քիթը, ոնց որ քոռ բվի քիթ, հրե՛ս...- Նա շրջել և ցույց էր տալիս երկու մատով բռնած բզեզին, որը տենդագին տարուբերում էր անձոռնի վերջույթները: Էնպես էլ անպետք հոտ ա հանում անտերը:

- Գցի, թող գնա:

- Չէ, սատկացնելու եմ,- վճռեց անտառապահը և բզեզին զցեց ոտքի տակ, հետո նայեց ու տարակուսեց.- Էս ո՞ր կորավ անտերը... Փախավ, քու տիրու...

Հայկուհին եկավ: Գլխին չոր խոտ ու ծաղկից անփույթ հյուսած պսակ էր դրել, ոստոտ հաստ ճյուղը դեռ ձեռքին էր: Չէր նստում, սեղանից քիչ հեռու կանգնած ժպտում էր՝ մերթ պապին, մերթ հյուրին:

- Ասա էդ զիբիլն ինչի՞ դրիր գլխիդ, այ շան աղջիկ: Գիժ ա, է՛, գիժ,- ծերունին կամացուկ ծիծաղեց, հետո կտրուկ տխրեց, շրջվեց ու թաքուն սրբեց աչքերը:

Իսկ Հայկոն շարունակում էր կանգնած մնալ: Գլխի այդ դարձունը, մազերի պսակը, ձեռքի փայտը, լիքը դեմքը, կլոր աչքերը ... Դե իհարկե, Ֆլորան, Ռեմբրանդտի հայտնի Ֆլորան, միայն թե՛ ճմռթված, ձղձղված զգեստով, գավազանը՝ ոստոտ ճյուղ, պսակը՝ չոր խոտուծաղկից: Ապշեցնող նմանություն էր:

- Հայկուհի, կթողնե՞ս նկարեմ քեզ:

Աչքերը ոլորվեցին, ժպիտը պաղեց, զգաստացավ, այտը ջղացնցվեց... Չհասկացա՞վ:

- Լուրջ եմ ասում, Հայկո, ուզում եմ քեզ նկարել, առավոտյան, անտառում մի սիրուն տեղ կգտնենք...

Հայկոն քրքջաց, ճյուղը ձեռքից զցեց և անզուսպ քրքջաց: Ծեր

անտառապահը մի պահ տարակուսեց, ապա ինքն էլ քրքջաց:

- Միամիտ մարդ,- ասաց,- Հայկոն իսկի մի րոպե հանգիստ կմնա՞, որ դու էլ նկարես:

- Ընդմիջումներով կանենք...

- Բան դուրս չի գա վայթե: Մտքով նկարի, էլի. մի բոլ նայի, որ հիշես, հետո մտքով նկարի:

- Մի թեթև էսքիզ գոնե անեմ:

- Ի՞նչ կասես, աղջի՛,- թռռանը դիմեց ծերունին, ապա տեսնելով, որ Հայկոն նոր ուժով է քրքջում՝ եզրակացրեց.- Չէ, լինելիք բան չի: Վերցրու, վերցրու խմենք:

- Շատ չխմեցի՞նք:

- Շիշը կիսատ թողե՞նք:

Օղին արդեն չէր այրում, խուտուտ էր տալիս: Հայկոն նստեց. լամպի լեզվակը պարեց աչքերի մեջ: Նա նույնպես խմեց: Սեղանի տակ... Սեղանի տակ ի՞նչ... Հայկուհու ո՞տքը... Այո, Հայկուհու ոտքը, որ չորուկ էր, բայց տաք, կենսաթրթիռ: Պատահաբա՞ր հպվեց: Բայց ետ չի քաշում: Լամպին հառած, սակայն լամպը չտեսնող հայացքը լարված է, դեմքով ստվերներ են փախչում: Գինովցած անտառապահը փորձող հայացքով նայում է թռռանը. ծեր սատիր, որ նման է իր այծին, իր շանը, իր աքաղաղին, կնճռոտ հաստաբուն թթենուն: Հայկուհու ոտքը տաք է, բայց տղայական՝ մկանուտ ու կոշտ: Ծանր է շնչում: Գուցե օդու՞ց է: Ծեր սատիրը տրորում է արնալեցուն աչքերը, հանկարծ սկսում է երգել՝ բռունցքները ձիթմիկ խփելով սեղանին: Բաժակներն ու ավսենները ցնցվում են, դատարկ շիշը երերում, բայց չի տապալվում, հավի ոսկորները ոստոստում՝ խաչվում են, անջատվում ու նորից խաչվում, ձկան գլուխն աչքով է անում մերթ այս, մերթ այն կողմից: Երգի բառերը որսալ-տարբերել հնարավոր չէ, մեղեդին անծանոթ է, տարաշխարհիկ: Հայկոն կամացուկ ձայնակցում է՝ ռնգային հնչյուններ արտաբերելով, գլուխը սկսում է ձիթմիկ տարուբերվել, ձեռքերը բարձրանում են, դանդաղորեն ելնում է տեղից, շարժումներն ավելի ու ավելի համարձակ են դառնում... Պարում է Հայկուհին՝ ինքնամոռաց, վերացած, ասես շարժումները դրսից են կառավարվում-հուշվում՝ անտեսանելի թելերի ձգումով: Մութ անտառի ֆոնին գալարվում, տարուբերվում է նրա տղայական ձկուն մարմինը, ձիգ ցնցվում են պստիկ կրծքերը, վերուվարում են ձեռքերը, ծալվում-ուղղվում, ծալվում-ուղղվում են ոտքերը, մազերը խփվում են դեմքին՝ մութ խազերով պատռելով շառագունած մաշկը, աչքերը խուփ են, բերանը կիսաբաց: Ի՞նչ պար է, որտեղի՞ց...

Սատիրի երգը սպառվեց: Դանդաղորեն մարում է պարը: Հայկո-

յի շրթունքից մածուցիկ թուք է կախվել, բայց ինքը չի նկատում կամ կարևորություն չի տալիս, մարմինը ցնցվում է, թրթռում՝ ռիթմի կախարդանքից չձերբագատված: Ծեր անտառապահի շաղված աչքերով գլուխը հոգնած թեքվել է ուսին:

- Չքնե՞նք, ուշ ա,- մրթմրթաց նա:
- Ես պատշգամբում կքնեմ:
- Վախենամ մրսես, գիշերները ցուրտ ա անում արդեն:
- Չեմ մրսի:
- Հայկո ջան, հյուրն ուզում ա դրսում քնի, տաք վերմակ կգես:

Դարձյալ անկարելի էր որոշել՝ լսե՞ց Հայկոն, դեմքի լարված ժպիտը նման չէր արծազանքի, ավելի շուտ ներքին անցուդարձի արտահայտություն էր. սեղանն էր հավաքում, և շարժումները նույնքան ճշգրիտ էին, ճարպիկ, ասես չէր եղել օղին, վազվզոցը օրինախախտ այծի ետևից, պարը: Իսկ ծեր անտառապահը վայելում էր սառը թանը և ժամանակ առ ժամանակ աչքով անում՝ երևի մտերմիկ մթնոլորտը պահպանելու ձգտումով:

Հայկուհին իր եռանդը պատշգամբ էր տեղափոխել, ինչը վկայում էր, որ այնուհանդերձ լսել է հյուրի անկողինը դրսում գցելու պահի ապսպրանքը:

- Էհ, գնացինք քնելու,- տեղից վեր կացավ ծեր անտառապահը:- Լավ կծածկվես, չմրսես: Բարի գիշեր:
- Բարի գիշեր:

Անիրականության զգացում էր ծնում այս ամենը՝ փափուկ, տաք, չոր ծաղիկների հոտ արծակող մաքուր անկողինը պատշգամբում, փայտյա նախշատաշ բազրիքը, մեծ աստղերը թանաքագույն երկնքում, լուսնի ճերմակ լույսի մեջ սևին տվող սաղարթները, շնագայլի հեռավոր հաչը, ծղրիղների մոտիկ երգը, ծեր անտառապահի խոսքից-ֆսֆսոցը բաց պատուհանի ետևում, դռան կամացուկ ճռռոցը... Դռան ճռռո՞ցը... Նաև ոտնաթաթերի մոտեցող փափուկ քսքսոց, քղանցքի շրշյուն, ստվեր գլխավերևում:

- Հայկո՞...
- Պատասխանի փոխարեն՝ բերանը փակող տաք, դողացող ձեռնափ: Ընդարձակ գիշերանոցի ներքո՝ ընդհատ շնչառություն: Վերմակի եզրը ետ է գնում, Հայկուհին մտնում է անկողին: Մարմինը չորուկ է, բայց տհաճ չէ ամենևին, ցանկալի է նույնիսկ, թեև՝ ահաբեկող: Թափված մազերով գլուխը վերում կտրել-փակել է լիպուսների կեսը՝ մյուս կեսը ճերմակ պսակ դարձնելով իր համար: Վայրի կատվի մլթսոց հիշեցնող կրծքային հառաչներ է արձակում Հայկուհին, մարմինը պրկվում-թուլանում, պրկվում-թուլանում է, ջղածիզ մատները փնտրում են տենդագին, հախուռն, ցավեցնող, աչքերն

աղերսում են, պահանջում...

Վրիժառու խածոց, հիասթափ հառաչանք՝ և Հայկոն դուրս է սահում անկողնուց: Շառագունած դեմքին ոչնչացնող արհամարհանք կա, ցատում, աչքերը ոլորվում են ջրից հանած այն ձկան պես, որի գլխին հարվածել են թիակով: Սաստիկ հնոցն ասես ուր որ է կպատռի նիհար կուրծքը: Չոր խոտուծաղկի օղակը պրկում է գլխից ու շարտում, ապա կտրուկ շրջվում է ու խուլ մռնչյունով խուժում բակ: Բակի գիշերային լռությունը պայթում է խառնաշփոթ աղմուկից՝ շխկրտալով փլուզվում է վառելափայտի շարը պատշգամբի տակ, վայնասուն զցած փախչում է շունը, զանգուլակների խուճապահար ծլնագոցներն ընդմիջվում են վախեցած մկկոցներով, սարսափահար կչկչալով բակ են լցվում հավերը, Հայկոյի ռազմաշունչ աղաղակին հետևում է օղ բարձրացող թարտոց, որն այնուհետև գահավիժում-զարկվում է գետնին ու փախչում գետնի վրայով: Լռություն:

Բակով սահում է ճերմակ գիշերանոցը, լողում աստիճաններով, ապա պատշգամբով և չքանում դռան մուրթ բացվածքում: Պատուհանից առազաստի պես ուռչում-պրկվում դուրս է պրծնում վարագույրը և անմիջապես էլ թուլանում-սմքում-ետ գնում: Դարձյալ լսելի է շնագայլի հաչոցը հեռվում, ծղրիղների ճռռոցը մոտերքում, ծեր անտառապահի անխռով խոսքից-փսսոցը պատուհանի ետևում... Ծեր անտառապահը...

... Ծեր անտառապահը դահճի արնագույն հագուստով է, կորսայր տապարը ձեռքին՝ պատրաստ կանգնած է հսկայական կոճղի առջև: Անտառի թավուտից հայտնվում-մոտ է լողում Հայկուհին՝ ռեմբրանդոյան Ֆլորայի ոսկեկար, շքեղ զգեստով, մազերը գույնզգույն, թարմ ծաղկեպսակի տակ կրկած: Աչքերը կատաղի ոլորում է, զարդանախշ գավազանը զարկում գետնին և աղաղակում: Իսկ արնագույն դահիճը, հրամանին հնազանդ, տապարով անհամբեր հարվածում է մերկ կոճղին՝ շխկ, շխկ, շխկ... Շունն ու այծը քարշ տալով մոտ են բերում... Ո՞վ է... Ի՞նչ ծանոթ է դեմքը... Մի րոպե... Բայց արդեն ուշ է... Շխկ, շխկ, շխկ...

- Ջարթնեցի՞ր: Վայ թե ես զարթնացրի, գիտե՞ս: Ներող կըլնես: Բարևույն:- Ծեր անտառապահը բակում փայտ է ջարդում՝ շխկ, շխկ, շխկ...

- Բարի լույս:
- Հազնվի իջի, Հայկուհին ուր որ է կգա՝ հաց կտա: Լուսը չբացված՝ փախել ա անտառ, թռոջ վերցրել, գնացել ա ձուկ բռնելու: Ես փետերն ինչի ա շուռ տվել, էն խեղճ աքլորի վիզն ինչի ա օլորել... Առավոտ նայեմ՝ գլուխը պրկած, խոտերի մեջ գցած: Էլի գժությունը բռնել ա շան աղջկա: Դե լվացվի, մինչև լվացվես՝ երևի կգա, հաց

Կուտենք:

- Առավոտյան ուտելու սովորություն չունենմ:
 - Այ քեզ զարմանք... Բա ե՞րբ ես ուտում:
 - Կեսօրին:
 - Ու՞ր էդպես ավալ-թավալ:
 - Շտապում եմ:
 - Եկեղեցու մոտ կըլնե՞ս:
 - Զէ՛, քաղաքում գործ ունեն, հազիվ էլ հասնեմ ավտոբուսին:
 - Էն կժի մեջ կաթ կա, գոնե կաթ խմի:
 - Շնորհակալ եմ, չեմ ուզում: Մնաք բարով:
 - Գնաս բարով: Էն անտերը մոռացար... Վայ, մեղա քեզ, կներես...
- Հյուրը ետ դարձավ, վերցրեց պատշգամբում մոռացած նկարա-կալը, ապա արագաքայլ դուրս եկավ բակից:

Բ Ե Բ Ի

«Այս, Բեբի, սիրելիս...

Այն ժամանակ դա զվարճալի էր, գիտե՞ս. հանկարծ հիշեցի, չգիտեմ էլ՝ ինչու: Դա նման էր պահունակից սահունորեն մղվող վարդագույն շրթների: Հիմա անշուշտ վիրավորական է քեզ համար նման համեմատությունը, խոսքս այն ժամանակի մասին է, երբ քեզ նոր էի տուն բերել, թանկագինս:

Երբ առաջին անգամ տուն բերեցի Բեբին՝ մեկ ամսական էր. նվնվում էր, ծվծվում, սվսվում, խցկվում էր վերմակիս տակ, խուտուտ տալով սողսողում, փնտրում-գտնում մատս կամ կուրծքս, որ նրան, կարծում եմ, առավել էր հաճելի, գտնում էր, իր պստիկ մռութիկով ամուր բռնում ու ծծում, ծծում... Այնքան խեղճն էր, այնքան անուշիկ: Հիմա արդեն մեծ շուն է, հզոր թաթերն ամենաուժեղ տղամարդու ձեռքերից էլ ուժեղ են: Երբ այդ թաթերով գրկում է մեջքս կամ հենվում ուսերիս, միշտ բողբում եմ՝ կամաց, արջ, ոսկորներս կջարդես: Քնքշորեն եմ ասում իհարկե, կատակով, այլապես կվիրավորվի ու մոտ չի գա, շատ դյուրաբեկ հոգի ունի Բեբին: Իմ սիրելի Բեբի: Նրանք ուզում էին էգ թուլա կապել գլխիս, դա բացահայտ էր, որովհետև ընկերուհիս ասաց. «Էս շագանակագույն էգիկն ավելի ճարպիկ է ու առողջ», ամուսինն էլ, թե՛ «Հա, սևը ոնց որ մի քիչ հիվանդոտ լինի»: Անմիջապես կռահեցի, որ անկեղծ չեն և ասացի՝ ինձ սևուկն է դուր գալիս, համ էլ երկու էգ մի տանը չափազանց կլինի: Ասում են՝ նվիրած ծիու ատամները չեն հաշվում, բայց ինձ իսկապես էգ շուն պետք չէր, և պստիկ Բեբին էլ իսկապես շահել էր

համակրանքս: Էլի ինչ-որ պատճառաբանություններ բերին, հետո մտքերի մեջ ընկան: Եթե շարունակեին համառել, հրաժարվելու էի առհասարակ: Ի՞նչ լավ էր, որ չհամառեցին: Ընկերուհուս ասացի, - ուսանողական ժամանակների ընկերուհի է,- ասացի՝ սևուկին տալիս ես՝ տուր, մյուսն ինձ պետք չի: Ասաց՝ «Ոնց կուզես, քեզ համար ենք ասում, վերցրու»: Բայց երկուսի աչքերում էլ թաքնված ավստասանք կար: Մի խոսքով, վերցրի Բեբիս, տուն բերեցի՝ գրկիս մեջ սեղմած:

Պատահական շուն պահել չէի ուզում, բայց մաքրացել շուն գնելու փող չունեի, և ահա, պատահաբար, ընկերուհուս հանդիպեցի, զրուցեցինք, պարզվեց՝ իրենց շունը վերջերս ծնել է, երկու թուլա է մնացել, մեկը խոստացավ նվիրել: Կարծում եմ՝ պատահական ոչ չինչ չի լինում, ինչու՞ այդքան տարիներ չէինք հանդիպել և հենց այդ օրը հանդիպեցինք: Մի խոսքով, ինչպես արդեն ասացի, նվիրեցին սևուկին: Կինոլոգիական կանոններից ելնելով՝ Բեբին ցեղական շուն համարվել չի կարող: Դեհ, գիտական մանրախնդրություն է, ի՞նչ կարող ես անել, կինոլոգի հետ վիճելը նույնն է, թե գլուխդ խփես հայելու մեջ երևացող զլխիդ: Սակայն մենք թքել ենք կինոլոգիական ոսկրացած պատկերացումների վրա, մենք մեր պատկերացումներն ունենք, ճիշտ չեն ասու՞մ, Բեբի: Ծիծաղելի է, ազնիվ խոսք, հայիդյանք է տարրական տրամաբանության հասցեին: Ուրեմն, եթե ամենամաքրացել թիզեն-շնաուցեր տիկինը հավանում է հարևանի նույնքան մաքրացել դոբերման-պինչերին և տիրոջից թաքուն կուշտ սիրաբանում է իր սիրեցյալի հետ՝ նրանցից սերված թուլաները ինչ, բանի պետք չե՞ն, փողոցային շնե՞ր են: Այս Բեբիս նայելով մարդու աչքը չի կշտանում՝ երկարատ, նրբագեղ, ջլապինդ՝ ինչպես դոբերման հայրիկը, իսկ շնաուցեր մայրիկից... Նրանից քիչ բան է ժառանգել, միայն կոշտ մազափնջերը մռութին, փորատակին ու թաթերին, մնացյալում՝ իսկը դոբերման: Ականջներն ու պոչը կտրել տվի՝ ինչպես վայել է դոբերմանին: Խեղճն այնպես էր մղկտում, այնպես էր մղկտում... Ես էլ՝ նրա հետ: Բայց դե կարգ է, պիտի արվեր, ուրիշներից ինչո՞վ ենք պակաս: Վերջերս զբոսայգում մի հեղինակավոր շնագետ, որ հիացած հայացքը չէր կտրում Բեբիից, մոտեցավ, ներկայացավ, ապա. «Գիտե՞ք, տիկին, եթե չլինեին այդ տեսական ստանդարտները, որոնց ենթակա ենք, ուզենք, թե չուզենք, անձամբ ես ձեր շան արտաքինը գերազանց կգնահատեի»: Հետո էլի զրուցեցինք, ու նա ասաց. «Շատ ուշագրավ խառնուրդ է ստացվել, սա կարող է մի նոր տեսակի ստեղծման գաղափար տալ»: Այսպես ահա, իմ սիրելի Բեբին նոր տեսակի առաջնեկն է: Լուրջ մասնագետ էր, ոչ այն հիմարի պես, որին Բեբիի

ականջները կտրող բժշկի մոտ հանդիպեցինք, ասաց՝ գուր մի տանջեք շանը, կտրեք-չկտրեք՝ մեկ է, միայն ապուշը չի նկատի, որ ցեղական չի: Ուզում էի ասել, թե ամենամեծ ապուշը հենց ինքն է, բայց լռեցի: Մենք թքած ունենք ոսկրացած կարծիքների վրա, ճիշտ չե՞մ, Բեբի, ուտեմ փոչոտ մռուրթ: Ի՞նչ անենք, թե իրենց փտած ստանդարտներին չենք համապատասխանում, մենք բարձր ենք ստանդարտներից, իրենց ցուցահանդեսները թող իրենց մնան, դրանք էլ դրամաշորթության ձև են, աչքիս առաջ փողոցային շանը կովկասյան գամփռի տեղ անցկացրին, ինչ է թե ականջները կտրած էին ու ինքն էլ՝ հաղթանդամ: Ցուցահանդեսները ձևական բան են, մենք դեռ ցույց կտանք մեզ որտեղ պետք է, չե՞, Բեբի: Կարճ պոչն է թափահարում. նրբերշիկի է նման, չէ, մի քիչ հաստ է նրբերշիկից: Երբ այսպես վեր է հանում, ակամայից ամուսնուս եմ հիշում: Շատ է նման: Եվ նույնությամբ էլ անկայուն է, վեր չելած՝ հանկարծ իջնում է: Չլինի՞ ծաղրում ես Բեբի, լավ էլ անում ես, տեղն է նրան: Հեռանալիս ասաց. «Չեմ պատկերացնում, թե աշխարհում գտնվի մեկը, որ որոշի իր կյանքը կապել քեզ հետ: Տեսներ հիմա, թե ոնց ենք ապրում ես ու Բեբիս: Լավ, չարժե հիշել, ճիշտ չե՞մ ասում, Բեբի: Ի՞նչ եղավ, ինչ ես գոմոմ... Վերի հարևանն է տուն եկել: Չի սիրում վերի հարևանին: Ես էլ չեմ սիրում: Վաղուց էի կասկածում, որ տականքի մեկն է, իսկ երբ Բեբին չսիրեց՝ համոզվեցի: Բայց մի հաչա, Բեբի, խնդրում եմ: Երբ իրենց երեխաները ձվձվոց են գցում, դա ոչինչ, բնական է համարվում, իսկ հենց իմ շնիկը մի թեթև հաչում է, անմիջապես բողբոջում են: Ահա, հեռախոսը զնգաց, համոզված եմ՝ հարևաններից է: Այդպես էլ կար, ցածի հարևանն էր, ասաց. «Երեխային հազիվ ենք քնացրել, շան ձայնը կտրեք»: Ասացի՞ փողոցից է, որտեղ մի շուն է հաչում՝ մեզ եք զանգում: Էլ չհաչաս, Բեբի, աղաչում եմ, դրանց գուլխը չունեն: Անցյալ անգամ էլ բողբոջում էին, թե երբ շունը վագում է՝ թաթերը կտկտացնում են իրենց առաստաղը: Կարծես իրենք բարձերի վրայով են քայլում: Եվ հետո, ես միշտ խնամքով կտրում եմ Բեբիի եղունգները: Ախ, հիմարներ, եթե միայն իմանայիք, թե ինչ զարմանահրաշ շան հարևանությամբ եք ապրում...

* * *

Բազմոցին պառկած՝ լուսանկարների ալբոմն ենք թերթում: Բեբին գլուխը դրել է ծնկներիս: Ուշադիր նայում է նկարներիս: Այս գանգրահերը ուսանողական ընկերս է, սիրուն տղա է, չե՞, Բեբի: Երկար ժամանակ սիրահարված էի, մոտ մեկ տարի: Ի՞նչը: Ինքն էլ

կարծես անտարբեր չէր, բայց մինչև վերջ չէր բացվում: Հանդիպում էինք: Բայց գծավեցինք: Որովհետև անդադար ուզում էր, ամեն հանդիպմանը: Իսկ ես չէի զիջում: Ո՞նց զիջեի: Հո չէի՞ կարող հենց էնպես վերցնել ու զիջել կուսությունս: Տարիներ անց հանդիպեցինք, ասաց՝ «Գիտե՞ս, եթե զիջեիր, ամուսնանալու էի, հաստատ վճռել էի»: Տարօրինակ տղա: Ասում եմ՝ իսկ չէիր կարող նախ ամուսնանալ, սովորաբար այդպես են անում: «Ոչ, ասում է,- խնդիրն այն է, որ դու ընդունակ չեղար գոհաբերության հանուն սիրած մարդու: Իսկ դա ինձ հուշեց, որ միայն քեզ ես սիրում ու լավ կին լինել ինձ համար չես կարող»: Չգիտեմ, ինձ թվում է՝ փուլ խոսքեր էին, առհասարակ մի քիչ շատախոս էր ոնց որ: Բայց անուշիկն էր... Նայիր, Բեբի, լավն է, չէ՞: Ի՞նչ եղավ քեզ: Խռովեցի՞ր: Խանդու՞մ ես: Հա, էլի, խանդում ես: Մռութը շրջել է, հիմա կսկսի ոռնալ: Մի ոռնա, սիրելիս, գիտես, չէ՞, երբ ոռնում ես, սիրտս կտոր-կտոր է լինում: Անցած-զնացած պատմություն է, մոռանանք, կուզե՞ս պատռեմ նկարը: Էհ, եթե նրա հետ ամուսնանայի, գուցե երջանիկ լինեի: Իսկ ամուսինս... Հիմար մարդ չէր, չէ, բայց դա բավարար չէր լավ ամուսին լինելու համար: Շատ էր նվիրված իր հարազատներին, ընկերներին, գործին, չափազանց: Մեկ-մեկ էլ խմում էր: Իսկ ով մեկ-մեկ խմում է, հնարավոր է՝ մի օր հարբեցող դառնա: Ուզում էր երեխա ունենանք, շատ էր ուզում, ասում էր՝ «Հերիք է, այս ռեստիդոլ սերը տանել անկարող եմ այլևս, արի մարդավարի ապրենք, երեխա ունենանք...»: Բայց ես չէի ուզում, ասում էի՝ սպասիր, ոտքի կանգնենք, ամրանանք, շտապելու չի: Անկեղծ ասած՝ չէի վստահում, թույլ մարդ էր, վախենում էի մի օր լքի ինձ, և չսխալվեցի, այդպես էլ եղավ, մի գեղեցիկ օր իրերը հավաքեց ու գնաց: Դե լավ, հերն էլ անիծած: Միայն թե մի թթվիր, Բեբի, տղաս: Շաքար տամ՝ կիսաշտվե՞ս, հա՞: Գիտեմ՝ վնասակար է, աչքերը ձաթոտում են, բայց հազվադեպ՝ երկի թե կարելի է, ախր շատ է սիրում շաքար: այնպես ախորժակով խրթխրթացնում է, որ մարդ ինքն էլ է ուզում: Ամուսնուս լուսանկարը մնացել էր գրադարակի վրա, խորքում, ինքը մոռացել էր, ես էլ չէի նկատել, մի օր տեսնեմ՝ Բեբին քաշել-գցել է գետնին ու կտոր-կտոր արել: Շատ խանդոտն է: Եվ լավ էլ արել է, ես պիտի պատռած լինեի, պարզապես չէի նկատել: Այդ նույն տեղում հիմա Բեբիս լուսանկարն է: Դուրը գալիս է. հաճախ կանգնում է ետևի թաթերին, առաջի թաթերը հենում գրադարակին, նայում ու ժպտում, բեղիկներն այսպես ետ են գնում... Այնքան զվարճալիս է:

Դե՞, հաշտվեցի՞նք: Արի, արի գրկեմ քեզ, պատլիկս: Ուու՛, ինչ ծանր է մեր Բեբին, ինչ ուժեղ է, ինչ մեծ է... Ու՞ր ես քաշում, խալու վրա՞...

* * *

Շենքում մի ծեր կին է մահացել, հարևան մուտքից: Ավելի ճշգրիտ՝ երեք օր առաջ էր մահացել, բայց այսօր հայտնաբերեցին: Ես էլ մտածում էի՝ Բեբիս ինչու՞ է անհանգիստ այս քանի օրս: Իսկ երեկ ուժով քաշեց ինձ, տարավ այն մուտքի մոտ, հոտոտեց, ապա գայլի պես ոռնաց, այդպես արտասովոր երեք չէր ոռնացել: Ծանր բան է մենակությունը- եթե թռչակ բերող փոստատարը չկասկածո՞ր խեղճ կինն էլի դեռ երկար կմնար իր դամբարանում, այնքան, մինչև հոտը հասներ սանդղահարթակ: Իսկ Բեբիս գիտեր պատահածի մասին, նրա չարագուշակ ոռնոցը հենց դա էր ակնարկում: Անկեղծ ասած՝ առանձնապես չէր սիրում ողորմածիկին, միշտ հաչում էր վրան, երբ նա արևկող անելու էր դուրս գալիս պատշգամբ: Սակայն դժբախտությունը մոռացնել տվեց հակակրանքը. իմ խելոք, իմ բարի Բեբի: Իմ հանձարեղ Բեբի: Այո, հանձարեղ, չափազանցություն չէ, վերջնականապես համոզվել եմ, և քանի որ համոզվել եմ, ուրեմն կարելի է արդեն ասել այդ մասին, տանել չեմ կարող, երբ չիստատակած, չստուգված երևույթների շուրջը վաղաժամ աղմուկ են բարձրացնում: Վերջերս, օրինակ, մեծ աղմուկ բարձրացրին ինչ-որ մի գյուղի ինչ-որ մի տան պատին իբր հանկարծ հայտնված Մարիամ Աստվածածնի պատկերի առիթով: Ամբողջ ժողովուրդն էր խոսում, նույնիսկ՝ թերթերը, հեռուստատեսությունն ու ռադիոն: Եվ ի՞նչ: Նույնքան կտրուկ էլ լռեցին, որովհետև պարզվեց, որ սովորական խարդախություն է: Իմ բնակարանում մի քանի անգամ իրենք իրենց միացել-անջատվել են բոլոր լամպերը, պայթել է լոգարանի հայելին, շրջվել է աղբադուլը... բայց ես աղմուկ չեմ բարձրացրել, ռադիո կամ հեռուստատեսություն չեմ վազել, թե՛ եկեք-հասեք, տունս լցվել է անհայտ էներգիայով կամ աներևույթ այլ-մոլորակայիններով: Ի դեպ, Բեբիին բերելուց հետո այդ երևույթները չքացան և առ այսօր չեն հայտնվում: Ահա, ուրեմն, այդ զարմանալի, արտառոց հատկության մասին. Բեբին անսխալ տարբերում է լավ ու վատ մարդկանց, սա միանշանակ է, իմ կողմից վերջնականորեն ստուգված-ապացուցված: Երբ օրեր առաջ կաշառակերության համար ձերբակալեցին վարի հարկի մեր հարևանին, մյուսներն ապշած էին. «Չի կարող պատահել,- ասում էին,- մեր շենքի ամենաազնիվ, անկաշառ, բարի մարդն է, թյուրիմացություն է կամ էլ ուրիշի մեղքն են ուզում բարդել վրան»: Իսկ ես ոչ միայն չէի զարմացել, այլև վաղուց սպասում էի նման մի բանի, որովհետև Բեբիս չէր սիրում այդ «բարի» մարդուն, հազիվ էի զսպում, որ չհար-

ծակվի վրան: Ասում էին՝ «Ի՞նչ է ուզում էս զզվելի շունն էս աստվածային մարդուց»: Աստվածային, ոնց չէ: Պատռվեց կեղծավորի դիմակը: Շնորհիվ Բեբիի ես հիմա ճշգրիտ գիտեմ՝ մեր շքամուտքի բոլոր հինգ հարկերում ընդամենը երեք լավ մարդ կա, ևս չորսը լավը դառնալու ուղու վրա են, սակայն յուրաքանչյուր պահի կարող են սայթաքել, որովհետև թուլակամ են, մնացյալը անպետք, չարական, նախանձ մարդիկ են:

Քրոջս, օրինակ, Բեբին չի սիրում: Եվ ճիշտ էլ անում է, ինքս էլ համոզվեցի, որ բարի պտուղ չի: Հիմա համարյա հավատացած եմ՝ այն աղամանոյա մատանին տարիներ առաջ նա է թռցրել տնից, իսկ մենք էլ ում ասես, որ չկասկածեցինք: Երևի վախեցրել էր, թե մայրիկը կարող է ինձ նվիրել, որովհետև ես շատ էի սիրում այդ մատանին ու միշտ ակնարկում էի մայրիկին այդ մասին, բայց նա չհասկանալու էր տալիս: Հետո քիչ մնաց մեղքն ինձ վրա բարդեն: Քույրս ասաց. «Ես տեսա, թե նա ոնց էր մտել մայրիկի սենյակն ու իրերն էր քրքրում, հետո կարմրած դուրս եկավ ու արագ մտավ իր սենյակը»: Սուտ: Դեմ չեմ, մտել էի, բայց բոլորովին այլ նպատակով, նոր զգեստիս համար կոճակ էի ընտրում կոճակների տուփում: Ցույց տվի ընտրածս կոճակները, ասացի՝ առ, տես, ինչ եմ վերցրել, իսկ կարմրել էի, որովհետև կոճակների տուփը թախտի չուլուփալախի մեջ է, մինչև կռացած փնտրում էի՝ արյունը լցվեց գլուխս: Երկար ժամանակ խռով էինք, եղբայրս հաշտեցրեց: Հիմա, երբ պատրաստվում է այցելել ինձ,- փառք աստծո, դա այնքան հաճախ չի լինում,- նախապես զանգում, զգուշացնում է, որպեսզի Բեբիին փակեմ պատշգամբում: Խեղճ Բեբի, պատահում է՝ ժամերով այդպես մնում է փակի տակ ու տխուր կաղկանծում: Իր շատախոս ամուսնու և երկու լկտի դստրիկների հետ նստում են ու դատարկաբանում: Բեբիս մի մազը չեմ փոխի... Այ, եղբորս նկատմամբ վերաբերմունքը այլ է: Իհարկե, չեմ ասի, թե շատ սիրում է, բայց որ համակրում է, դա բացահայտ է: Իսկ կար ժամանակ, որ գժի պես սիրում էր, եղբայրս դեռ շքամուտք չմտած՝ իրեն հուզված գցում էր միջանցք, դուռը ձանկռտում... Ցավոք, այդ հրճվանքը հիմա չկա այլևս. էլի դիմավորում է, էլի լիզում ձեռքերը, բայց այդքանը, հետո գնում է սենյակ ու անտարբեր պառկում բազմոցին: Եվ ես գիտեմ, թե ինչու փոխվեց Բեբիի վերաբերմունքը: Դա սկսվեց այն օրից, երբ եղբայրս վաճառեց մեր հայրական տունը, առանց որևէ մեկի հետ խորհրդակցելու: Հիմա կնոջ տանն է ապրում: Իհարկե, ոչ քույրս, ոչ ես հայրական տանն այլևս գրանցված չէինք, այսինքն՝ իրավական տեսակետից որևիցե պահանջ ունենալ չէինք կարող, սակայն իրավականից բացի կա նաև բարոյականը... Վերջապես,

դա նրա խղճի գործն է, անձամբ ես իրեն սրտիս խորքում վաղուց ներել եմ: Թեև վերջին տարիներին, մայրիկի մահից հետո, հայրիկին լավ չէր նայում: Խեղճ հայրս թաքուն բողոքում էր՝ «Սեր մեջ մնա, բայց եղբայրդ ու նրա կինն իմ մահն են երազում»: Ասում էր՝ «Երբեմն ինձ թվում է, թե կինը ճաշիս մեջ դանդաղ ներգործող ինչ-որ թույն է խառնում»: Չէի հավատում, հանգստացնում էի, մտածում էի՝ մեծ մարդ է, սևեռուն մտքեր ունի... Չէ, հիմա էլ չեմ հավատում, զուր մեղք չառնեմ վրաս, թու-թու-թու, Աստված չանի: Միշտ ժամանակին կերակրում էին, ժամանակին լողացնում, զբոսանքի հանում. այս և նման հարցերում ամեն բան կարգին էր, այո: Սակայն նրանց վերաբերմունքում թաքնված մի բան կար, մի թաքուն, ես կասեի՝ չարագուշակ սառնություն, ինչը երբեմն որսում էի նրանց հայացքների խորքում:

Լավ մարդ էր հայրիկը: Բեբին նրան սիրում է: Թեև երբեք չի տեսել. երբ Բեբին բերեցի, լուսահոգի հայրս արդեն մի քանի տարի էր, որ լքել էր այս աշխարհը: Բայց Բեբին մարդկանց տարբերում է նաև լուսանկարներով. երբ նրան ցույց եմ տալիս հորս լուսանկարը՝ կլանչում է ու լիզում ձեռքս: Իսկ ահա, եթե մորս լուսանկարը վերցնեմ՝ կկատաղի, բաշը կցցի, կհաչա... Եվ որքան էլ ցավալի է՝ ես համաձայն եմ Բեբիի հետ: Մահացածի մասին վատ չեն խոսում, բայց այդուհանդերձ պիտի խոստովանեմ՝ մայրիկը, մեղմ ասած, բարի պտուղ չէր: Բամբասկոտ էր, ժլատ: Հայրս, օրինակ, ինչ էլ անեի, չէր պատժում, դեհ, ասենք, մի քիչ կխրատեր, կամ թեթևակի կթփացներ տուտուզս: Պատժում էր մայրիկը, և դա անում էր սահիստի հրճվանքով. այսօրվա պես հիշում եմ, թե ինչ անողորմությամբ էր քաշում ականջս, ոնց էր ժամերով կանգնեցնում իր սիրած պատժարանում՝ խոհանոցի պատի և գազօջախի արանքում, դեմքով դեպի փոշոտ խողովակը, մեկ ոտքի վրա... Մինչև այսօր գազօջախները տհաճ զուգորդումներ են ծնում:

Այո, իմ Բեբին մարդկանց տարբերում է նաև լուսանկարներով: Անկասկած է: Այս մասին մի անգամ պատմեցի ծանոթներիցս մեկին: Թերահավատորեն ծիծաղեց ու ասաց՝ «Չնեղանաս, բայց լրիվ խելքդ թռցրել ես շանդ վրա»: Իսկ վերջերս հանկարծ հայտնվեց՝ ամուսնու լուսանկարը ձեռքին: Ասում է՝ «Կես տարի է՝ փող աշխատելու է գնացել Ռուսաստան, վախենամ՝ էնտեղ կին ճարած լինի, մանակներից եմ զգում»: Կանչեցի Բեբիին, լուսանկարը դրեցի դեմ: Նայեց, հոտոտեց, հետո ընկերուհուս նայեց, նորից լուսանկարին ու վնգստաց, սկզբում՝ կամաց, հետո հանկարծ նստեց ու ոռնաց երկար: Ընկերուհուս ասացի՝ հանգիստ մնա, ամուսինդ, գլուխը կախ, առավոտից իրիկուն աշխատում է, կանանց համար

ոչ ժամանակ ունի, ոչ ուժ ու հավես: «Հը՞, հարցրի Բեբիին, երբ ընկերուհիս գնաց, ասում ես՝ չի դավաճանում»: Նորից նստեց ու այնպես ոռնաց, այնպես ոռնաց... Անմիջապես հասկացա ինչն ինչու է. ընկերուհուս ամուսինն արդեն չկա, որջ չէ: Այո, այդպես է, կասկած համարյա չունեմ: Ուր որ է՝ ստանալու է ամուսնու մահվան լուրը:

* * *

Առավոտյան զբոսնում էինք սովորականի պես, սովորականի պես ես նստում էի թենիսի գնդակը, Բեբին որսում էր ու բերում, բերում-դնում էր ոտքերիս մոտ, նա սիրում է իմ ոտքերը, և պահանջում, որ դարձյալ նստեմ: Հերթական անգամ գնդակը բերելիս հանկարծ կանգ առավ, բերանից զցեց գնդակը, նայեց ծառերի կողմ ու վնգստաց: Թերևս վնգստոց էլ չէր, բայց չզիտեմ, թե ուրիշ ոնց անվանեմ այդ ծայրը: Ինչևէ, դա չի կարևոր, կարևոր է, որ նման ծայր Բեբին հանում է զուգվելու պատրաստ էգ շուն տեսնելիս: Անհանգստացած նայեցի: Նույն այն քնձռոտ, բզկտված փողոցային շունն էր, որ նախորդ օրն էլ այդպես աննկատ, օձի պես, հայտնվեց, կանգնեց ծառերի մոտ ու նիհար քամակը տարուբերելով՝ սկսեց գայթակղել Բեբիին: Ֆու՛, Բեբի՛, կեղտոտ է, մոտ չգնա՛՝ գոռացի: Դժկամությամբ, բայց ենթարկվեց, եկավ-պառկեց ոտքերիս մոտ, Բեբին ոտքերս շատ է սիրում, ամիսներ առաջ մի ահավոր չիբան էր բուսնել սրունքիս, այնքան լիզեց, մինչև լրիվ մաքրեց-վերացրեց: Ինչ վերաբերվում է պուրակում խաղացող ցեղական էգերին՝ ամեն բան կարգին է, անհանգստություն չունեմ, նրանց տերերը Բեբիին մոտ չեն թողնում: Օրեր առաջ, օրինակ, թռավ ջահել դոգի վրա, դոգն էլ կարծես դեմ չէր, բայց տերը վազեվազ եկավ ու փոկը թափահարելով քշեց Բեբիին: Չէ, ինչ վերաբերում է ցեղականներին՝ հանգիստ եմ, ի վերջո՝ նրանք գոնե մաքուր են: Իսկ այս լիրբը կարող է հազար ու մի հիվանդություն ունենալ, ո՞նց մոտ թողնեմ: Այդպես ասացի՝ ֆու՛, մոտ չգնաս, տեղով վարակ է, Բեբի՛, ֆու՛: Իսկ այն լիրբը ծառի հետևից դուրս եկավ ու գայթակղում է: Դարձյալ կանչեցի՝ մոտ արի՛, Բեբի՛, գնդակը բեր, բեր գնդակը: Բայց նա նույնիսկ ականջն իմ կողմը չթեքեց, պոկվեց տեղից ու վազեց: Ես էլ վազեցի, ի՞նչ արած: Թող դրան, Բեբի՛ գոռում եմ: Անօգուտ: Քիթն արդեն մտցրել է լրբի ոտքերի արանքը: Ամրակը մի կերպ զցեցի վզափոկի օղակին ու ետ քաշեցի: Մեկ էլ տեսնեմ՝ այդ լիրբը բաշը ցցել, հաչում է վրաս: Քար վերցրի ու խփեցի: Կլանչելով փախավ: Երբ արդեն չքվել էր, ասացի՝ արի, Բեբի, արի խաղանք, այդ կեղ-

տոտը մեզ վայել չի, ոտքն էլ կաղ է: Բեքին չնայեց էլ ինձ, գլուխը կախեց ու քայլեց տան կողմ: Այդպես անխոս քայլեցինք մինչև շքամուտք: Ու մեկ էլ, հակառակի պես, հայտնվեց հարևանի սիամական կատուն՝ մի զգվելի ճիվաղային արարած, ճարպոտ ու լկտի. մեջքն ուռցրեց՝ օձի պես ֆշշում է: Բեքին սովորաբար բանի տեղ չի դնում, թեթև գոմռում-անցնում է: Բայց այսօր անսպասելիորեն վրա տվեց ու հակռեց մեջքը: Կայծակնային արագությամբ կատարվեց, չհասցրի պահել: Մի քանի անգամ ուժգին թափահարեց ու շարտեց իրենց դռան փալասին: Ցնցվում էր, նվնվում... Լավ էր՝ ոչ ոք չտեսավ, սուսուփուս բարձրացանք տուն: Մի կես ժամից հարևանը զանգեց, թե՝ «Ձեր շունն է մեր կատվին զգե՞լ»: Ասացի՝ չէ, ի՞նչ եք ասում, Բեքին ձեր կատվին շատ է սիրում, ուրիշ շուն է եղել երևի, հազար ու մի անտեր շուն է մտնում բակ: Մինչև վերջ չհավատաց, բայց դե՛ ապացույց չուներ: Հարցրեցի՝ հո չի՞ սատկել խեղճը: Չէ, չէր սատկել. սատկող պտուղ չի: Ջուր տաքացրի, որ լողացնեմ Բեքին, ինքը խռոված-պառկած էր պատշգամբի կարպետին: Կոնֆետ տվի, շոկոլադ, ասացի՝ բա եղա՞վ, տղա ջան, բա մի կեղտոտ լրբի պատճառով հարազատ տիրուհուց կխռովե՞ն: Գլուխը բարձրացրեց, բայց դեմքին չի նայում: Կոնֆետը մոտեցրի բերանին, ու մեկ էլ՝ հա՛փ, մատս կծեց: Բեքին ինձ կծի՞: Արցունքն աչքերիս՝ ապշահար կանգնել եմ: Արնոտ մատս ցույց տվի՝ էս ի՞նչ արիր, ասացի, անշնորհակալ, բա ես սրան եմ արժանի՞, ո՞նց քեզ թույլ տվիր: Միանգամից խեղճացավ, կլանչեց, թաթերը դրեց ուսերիս ու լիզում է դեմքս, ո՞նց է լիզում... Հետո սկսեց մատիս արյունը լիզել: Ուզում է հասկացնել, որ դիտմամբ չի արել, պատահաբար ստացվել է: Դե, իհարկե, ես էլ հիմարն եմ, կոնֆետի կեսից ավելին ձեռքիս պինդ պահել՝ դեմ եմ տվել քթին, թե՛ կեր: Նրա խելքն էլ իրենը չի շոկոլադի համար: Հաշտվեցինք: Ասացի՝ տես, ոչ յոդ եմ քսում, ոչ էլ կապում մատս, որ իմանաս, թե տիրուհիդ ինչքան է սիրում քեզ: Երեկոյան բազմոցին նստած՝ արևածաղկի սերմ էինք չրթում ու հեռուստացույց նայում: Բեքին լիզում էր սրունքներս, ծնկներս, ազդերս... Այնքան հաճելի է նրա փշոտ, գալարուն, տաք լեզուն:

Չարաճճի Բեքի, հարազատս, այլևս չվշտացնես ինձ, խնդրում եմ:

* * *

Ընդունելության էի գնացել ներքին գործերի նախարարություն. երկու շաբաթից ավելի է՝ հերթագրվել եմ, վերջապես բարեհաճեցին կանչել: Ինձ ընդունած պաշտոնյայի կոչումը չկարողացա որոշել. երբ մտա՝ վերնաշապիկի ուսերին չորսական փոքր աստղեր

էին, իսկ քիչ հետո հազավ կիտելը, որի ուսադիրներին արդեն մեկական մեծ աստղեր էին փայլում, դե արի ու գլուխ հանի: Սակայն իզուր եմ այսպես մանրանում, այդ ապուշն արժանի չէ դրան: Հետաքրքրված, նույնիսկ չափազանց հետաքրքրված էր լսում ինձ. ես էլ ուրախացա, մտածեցի՝ լուրջ մարդ է: Սակայն պարզվեց, որ այդ հետաքրքրվածությունը դիմակ է, նա ասաց. «Ես ձեզ լիովին հասկացա, տիկին: Եկեք այսպես անենք, բերեք ձեր շանը, մենք այստեղ լավ մասնագետներ ունենք, և եթե ձեր շան հոտառությունն իսկապես բացառիկ է, գուցե գնենք»: Հոտառություն: Ախր ես հոտառության մասին չեմ խոսել, առավել ևս՝ շանը վաճառելու: Ասացի՝ հոտառությունն իսկապես հիանալի է, սակայն խոսքն այդ մասին չէ, երևի ուշադիր չեղաք: Այս անգամ դեմքը պակաս հետաքրքրություն արտահայտեց, փոխարենը առավել ուշադիր լսեց: Ասացի՝ շունս եզակի տաղանդ ունի, իսկական էքստրասենս է: Միջամտեց, թե. «Հիվանդություննե՞ր է ախտորոշում»: Եվ ժպտաց. Օ՛, ինչպես եմ ձանաչում կնամուղ տղամարդկանց այդ երկիմաստ ժպիտը: Ասացի՝ կարող է և ախտորոշել: Որովհետև հիշեցի՝ մի երեկո Բեքին քիթը պարբերաբար հպում էր փորիս ու կլանչում, չէի հասկանում բանն ինչ է, իսկ գիշերով մի այնպիսի փորացավ սկսեց, որի նմանը չեմ ունեցել. թունավորվել էի, հավանաբար՝ եղբորս տանը կերած երշիկից: Ուստի ասացի՝ այո, կարող է և ախտորոշել, սակայն խնդիրդ դա չէ, իմ շունն անսխալ տարբերում է վատ և լավ մարդկանց: Ասացի՝ այդպես թերահավատորեն մի ժպտացեք, հազար անգամ ստուգել եմ, ասացի՝ դա դեռ բոլորը չէ, Բեքին մարդկանց տարբերում է նաև լուսանկարներով, պատկերացնում էք, թե դա ինչ նշանակություն կարող է ունենալ ձեր ծառայության համար: «Որքան էլ հանձարեղ լինի ձեր շունը,- ասաց,- մենք չենք կարող շներին վստահելով վարել մեր գործերը»: Ասացի՝ ես չեմ ասում, թե շան վերաբերմունքի հիման վրա մեղադրանք հարուցեք, պարզապես շունը ձեզ կօգնի նախապես իմանալ, թե ում հետ գործ ունեք, այսինքն՝ կասկածյալն առհասարակ ընդունա՞լ է հանցագործ արարքի, թե ոչ: Իսկ նա, թե՛ «Լսեք, անպայման ուզում եք վաճառե՞լ ձեր շանը, փողի կարիք ունեք երևի, հա՞»: Ասացի՝ զժվե՞լ եք, Բեքիս աշխարհի ամբողջ հարստության հետ չեմ փոխի, պարզապես ցանկանում եմ օգնած լինել ոստիկանությանը: Այդ պահին թաշկինակն ընկավ ձեռքիցս, կռացա, նա նույնպես կռացավ, տեսնեմ՝ փայլող հայացքը մեխել է կրծքերիս, որ մասամբ մերկացել էին կռանալու պատճառով: Իսկ իմ կրծքերը, օ՛, դա մի ուրիշ պատմություն է: Մի խոսքով, դեմքը միանգամից փոխվեց, փափկեց, ասում է. «Գիտե՞ք, ամեն դեպքում պետք է տեսնել շանը: Գուցե անցնե՞մ ձեզ

մոտ»: Ասացի՝ իսկ չե՞ք վախենում, որ նա հանկարծ կբացահայտի ձեզ: Ծիծաղեց. «Որ այդպես է,- ասաց,- եկեք դրսում հանդիպենք, առանց շան, և հանգիստ քննարկենք խնդիրը»: Ցանկասեր սրիկա: Ոչ, ասացի, իմաստ չունի, ասացի, ինձ ամեն բան պարզ է, ասացի: Միամիտ, հիմար կին եմ, չէ՞, Բեբի: Կարգին երկրում ապրեինք՝ հիմա լրագրողներից հանգիստ չէինք ունենա, իսկ այստեղ... Մենք սրանց ինչի՞ն ենք, սրանց նպատակը մարդկանց վրա կեղծ մեղադրանքներ բարդելն ու դրամ շորթելն է: Իսկ ես, իմ միամիտ խելքով, ուզում եմ օժանդակել հանցագործությունների բացահայտման գործին: Ծիծաղում ես վրաս, չէ՞, Բեբի: Լավ, մոռանանք: Սեղան չզգե՞նք, ճաշի ժամն է: Բեբին սեղանի մոտ է ճաշում, իմ կողքին, աթոռին նստած: Երբ պատլո էր, հիշում եմ, մի համեղ պատառ կփախցնեք պնակից, կմտներ սեղանի տակ: Բայց արագ վարժվեց, հիմա շատ վայելուչ է պահում իրեն: Միայն թե՛ չփչփացնում է: Դեհ, շունը որքան էլ ցանկանա՝ փակ բերանով ուտել չի կարող: Որպեսզի իրեն վատ չզգա, մի անգամ ես էլ սկսեցի բարձր չփչփացնել, սակայն դա նրան դուր չեկավ, գայրացած գոմռաց վրաս: Հիմա, Բեբի, մի քաշի: Գրիչն է քաշում ձեռքիցս: Ախր քո մասին եմ գրում, գրում եմ, թե ինչ հրաշալի շնիկ ես դու: Հիմա կձաշենք, սիրելիս, մի անհանգստացիր, քեզ երբևէ քաղցած թողե՞լ եմ...

* * *

Այսօր Բեբին անչափ վշտացրեց ինձ. այնքան լաց եղա, այնքան լաց եղա... Աչքերս ուռել են: Անխիղճ տղա: Եվ ու՞մ պատճառով:

Առավոտյան լավ չէի զգում ինձ, ճնշումս իջել էր, գլուխս ցավում էր, աչքերիս առջև մշուշ էր... Իսկ նա համառորեն նստել է դռան մոտ՝ պահանջում է զբոսանքի տանել: Ասացի՝ Բեբի, անուշիկս, տիրուհիդ իրեն վատ է զգում, այսօր դուրս չգանք: Ոչ, նա չհեռացավ դռան մոտից, սկսեց ճանկռել դուռը, կաղկանծել: Խիղճս տանջեց: Հագնվեցի, դուրս եկանք:

Չբոսայգու ցանկապատի տակ, փողոցի կողմից, մի ցնցոտիավոր հարբեցող էր նստած, փող էր մուրում: Բեբին մոտ վազեց ու ո՞նց է լիզում, ո՞նց է լիզում նրա քիթմուրթը: Չավեշտալին այն է, որ հարբեցողն էլ նրան էր պաշպչում: Հետո ասաց. «Տիկին, դուք իմաստուն շուն ունեք»: Ասացի՝ իսկ դուք լավ մարդ եք երևում, վաղը ձեզ համար հագուստ կբերեն: Ամուսնուցս մնացած հագուստ կար տանը: Ասաց. «Տիկին, դուք անչափ բարի եք, բայց այսօրվա գինին գերադասում եմ վաղվա հագուստից»: Փող տվեցի: Ուրախացած վեր թռավ տեղից, համբուրեց ձեռքս ու վազեց խանութ: Չարաճճի

ժպիտ ուներ, կապույտ պարզ աչքեր: Ժամանակին սիրուն տղամարդ է եղել երևի: Այսինքն՝ հիմա էլ դեռ ոչինչ: Եթե խմելը թողնի, սափրվի, լողանա, հագնվի՝ կարգին տղա կդառնա, չէ՞, Բեբի՝ ասացի: Սակայն Բեբին կողքիս չէր արդեն՝ զբոսայգում էր: Նստեցի ծառի տակ: Գնդակ նետելու ուժ չունեի: Իսկ նա վազվզում էր, հոտոտում ծառաբները, հեռագրայունները, հետո միզեց ակացիայի բնին: Ու հանկարծ, ասես գետնի տակից, հայտնվեց այդ փրչոտ սատանան: Ո՞նց է խունջիկ-մունջիկ գալիս, ո՞նց է կոտրատվում... Ոչխարի բրդի պես երկար բուրդ ունի՝ ցեխոտ, զգզված, կախկախված: Նման գարշանքի տեսած չկամ, այն մեկը սրա համեմատությամբ պարզապես գեղեցկուհի էր: Գոռացի՝ Բեբի, մոտ չգնաս, գործ չունես: Բայց լսողն ո՞վ է: Ախր եթե շատ էլ ուզեմ՝ չէր կարողանալու կենակցել այդ գաճաճի հետ, դրա համար նրան հատուկ պատվանդանի վրա էր պետք հրամցնել: Մի փայտ վերցրի, որ քշեմ լկտիին, մեկ էլ շրջվեմ՝ չկան, չքացել են: Այդպես հիվանդ, անուժ՝ ամբողջ շրջակայքը ոտի տակ տվի ու անդադար գոռում եմ՝ Բեբի, Բեբի: Լակոտները ծիծաղում են վրաս, ետևիցս կանչում. «Գիժ, գիժ»: Ախ, Բեբի, դու իսկապես գիժ կդարձնես ինձ: Այդպես էլ չգտա նրան: Աչքերս կարմրատակած, ինքս հուսահատ՝ եկա տուն: Ու նայեմ՝ դռան մոտ նստած է, գլուխը մեղավոր կախ զցած: Չդիմացա, ցախավելը վերցրի ու խփեցի, խփեցի, ասացի՝ ուրեմն էդ քնձոտ սատանի պատճառով տիրուհուդ էս օրն ես գցում, հա՞, դավաճանում ես, հա՞... Անծպուտ՝ գնաց, պառկեց պատշգամբում: Մեջքից արյուն էր գալիս: Ծեծից չէր, այդքան ուժեղ չեմ խփել, երևի շներն էին զգել այն լրբի պատճառով: Տեղն է քեզ՝ ասացի: Ուզում էի վերքերը լվանալ, չթողեց, խռոված պառկել էր: Հետո հանկարծ ներխուժեց խոհանոց ու կատաղած ծվատեց ցախավելը: Ասացի՝ էս ի՞նչ արիք, ավազակ, բա տունն ինչո՞վ ենք ավելելու: Ու ծիծաղեցինք: Միացրի ձայնարկիչը. երաժշտություն սիրում է Բեբիս: Հետո գինի խմեցինք, ավելի ճիշտ՝ նրան կաթ տվի՝ հետը մի քիչ գինի խառնած: Բեբին պաշտում է այդ կոկտեյլը, հատկապես՝ կարմիր գինով և քաղցր կաթով: Խմում էինք, օպերետների արիաներ լսում... Վերջնականապես հաշտվել էինք: Եվ մեզ ոչ ոք պետք չէր:

Ամուսինս ասում էր՝ «Դու խաբեցիր ինձ, դու երբեք չես սիրել ինձ, կեղծում էիր, որովհետև քո վերջին շանսն էի»: Տարիքս էր ակնարկում: Աստված իմ, որքան էի ատում նրան այդ բառերի համար, մի անգամ նույնիսկ ապտակեցի: Ախր սուտ է ասում, իսկապես սիրել եմ, պարզապես... զգացմունքս արագ մարեց. այդպես լինում է կյանքում, հո միակ դեպքը չի՞: Չնայած սրան՝ միշտ ընդառաջում էի իր ցանկությանը, համարյա միշտ: Համաձայն եմ, առանձնակի կրքով

չէի անում դա, բայց չէի մերժում, չէ՞: Ուրիշ կին լիներ... Ախր մի անգամ ձեռնահարության վրա բռնացրի, գիշերով, իրեն թվում էր՝ քնած եմ: Մի անգամ էլ ինձ հետ կենակցելիս ուրիշի անուն տվեց: Իսկ ես միշտ հավատարիմ եմ եղել: Մեկ անգամ, միայն մեկ անգամ... Այն էլ ինքն էր մեղավոր, հուսահատության եզրին էր հասցրել, այնպե՛ս լքված էի զգում ինձ, այնպե՛ս թշվառ... Ոչ, ես դա երբեք դավաճանություն չեմ համարի, երբեք, ինքը, իր վարմունքը դրդեցին: Ամբողջ չորս օր չկար, չքվել էր, մի երկտող էր թողել միայն. «Գյուղից լուր բերին, մայրիկը ծանր է, շտապ մեկնում եմ»: Ինչու՞ պիտի հավատայի: Ճիշտ է, հետո պարզվեց, որ սուտ չէր: Սակայն ինչու՞ պիտի հավատայի մի ինչ-որ երկտողի: Եվ հետո, մի՞թե կարելի է ջահել, սիրելի կնոջը ամբողջ չորս օրով լքել, ինչ էլ լինի պատճառը: Ի՞նչ եղավ, մեռա՞վ մայրիկը: Իհարկե ոչ: Չէ, ինքն է մեղավոր, հաստատ: Իսկ այն սևամորուս սատանան... Ծանոթ չէինք, կինոյում ծանոթացանք: Պատկերացնում ես, Բեբի, տիրուհիդ միայնակ գնացել էր կինո, միայնակ, լքված, դժբախտ: Ֆիլմի ժամանակ, ինքս էլ չնկատելով, անդադար հառաչել եմ, նա էլ, կողքիս էր նստած, թեքվեց ու ականջիս շշնջաց. «Ո՞ր անսիրտն է այսքան վշտացրել ձեզ պես հմայիչ, քնքուշ կնոջը, ես կսպանեմ նրան, ազնիվ խոսք»: Չայնն այնքան առնական էր, ինքնավստահ, ինչ-որ կախարդանք կար այդ ծայնի մեջ: Էլի խոսեց, բայց ես խոսքը չէի ընկալում, միայն՝ ձայնի կախարդանքը: Մի խոսքով, ծուղակն էի ընկել, փրկություն չկար: Այն ժամանակ լավիկն էի, շատ ջահել չէի արդեն, բայց լավիկն էի, ձիգ, բարեկազմ: Իսկ հիմա երբեմն նույնիսկ վախենում եմ հայելուն նայել: Այո, վախենում եմ: Նայում եմ, Աստված իմ, մի՞թե սա այն բարակմեջք աղջիկն է, որ երազում էր պարուհի դառնալ...

* * *

Բեբին համարյա անդադար հաչում է, արդեն մի քանի օր է, բուրդի վրա: Սարսափելի է: Նույնիսկ այն հարևանների վրա, որոնց կարծես թե սիրում էր: Չգիտեմ ինչ է պատահել: Մի՞թե լավ մարդկանց քանակը այսպես արագորեն նվազում է: Նրա հաչոցն ասես զգուշացում լինի: Երեկ բակում պատառոտեց գնդակը՝ մի երես առած, անպատկառ լակոտի, որ ամբողջ օրը պարսատիկով խփում է ծտերին կամ ջարդում պատուհանները: Այդ լկտի անդաստիարակին տեղն էր իհարկե: Բայց ո՞նց բացատրես: Ստիպված՝ նոր գնդակ գնեցի, տվեցի իրենց, գնդակներն էլ, պարզվում է, ահագին թանկ են: Հիմա կապը չեմ արձակում, նույնիսկ՝ զբոսայգում: Դժվար

է, փոկը հազիվ եմ պահում, հոգիս հանում է, ախր շատ ուժեղ է իմ Բեբին: Չի ուզում ինձ ցավ պատճառել, այլապես կբաշի-կպոկի փոկն էլ, ձեռքերս էլ: Առավոտյան դարձյալ մոտեցավ ցանկապատի մոտ նստած հարբեցողին, լիզեց դեմքը, եթե դա կարելի է դեմք համարել: Հետո հանկարծ սկսեց հաչել. մերթ լիզում էր, մերթ հաչում, ասես ինչ-որ բան է ուզում հասկացնել, իսկ հարբեցողը ոչ տեսնում էր, ոչ լսում, ոչ զգում, անշարժ նստած էր, դեմքը թմբուկի պես ուռած, բուր, ճպռոտ կոպերի տակ աչքերն ասես ձվածեղի անարձագանք ծվեններ լինեին: Բեբին թողեց նրան, հիմա էլ սկսեց իմ վրա հաչել ու չհանգստացավ այնքան, մինչև փող դրի գլխարկի մեջ: Բեբիի այս՝ հաճախ հիստերիկության հասնող վարքը ինձ էլ է հանում հավասարակշռությունից, ծանր է ազդում նյարդերիս: Սկսել եմ մղձավանջային երազներ տեսնել: Այս գիշեր, օրինակ, Բեբիի հետ, երազում, փախչում էինք մեզ հալածող ինչ-որ արարածներից: Վազում էինք մութ թավուտներով, բարձրանում-իջնում ճռճաացող մամռապատ աստիճաններով, խրվում տիղմի մեջ, ելնում, դարձյալ վազում: Հետո Բեբին չքվեց: Բայց հևոցը լսում էի մոտակա ծառերի ետևից: Ու հանկարծ առջևս, հենց գետնի տակից, խոյացավ մի վիթխարի, ահավոր սատանայական կերպարանք՝ մագոտ մարմինը թիկնոցով փաթաթած, գլուխը՝ լերկ, շողարծակող ֆոսֆորային աչքերով, աննկարագրելիորեն ջլապինդ: Կմկմալով հարցրի՝ Բեբին ու՞ր է: Իսկ նա անբնական ձայնով գոռաց. «Շունը չկա, ես եմ շունը, և մնացյալ ամեն բան նույնպես ես եմ, մոտ արի, կին»: Սարսափած-քրտնած արթնացա, նստեցի անկողնում ու տեսա Բեբիին, որ ակնապիշ ինձ էր նայում ու կաղկանձում: Գրկեցի նրան ու նորից քնեցի: Եվ կրկին նույն երազը, փոքր ինչ այլ տարբերակով, ուրի մասին պատմելը նույնիսկ ամոթ է:

Բեբիի ընթրիքին հիմա միշտ մի քիչ հանգստացնող դեղ եմ խառնում: Ինքս էլ եմ ընդունում նույն դեղից: Իսկ այսօր, որքան էլ տարօրինակ էր, հաչեց եղբորս վրա: Եղբայրս, թե՛ «Երևի գյուղի հոտն առավ վրայիցս, անսովոր էր իր համար»: Բայց չեմ կարծում դա լինի պատճառը: Նա ընկերոջ հետ գյուղում հողամաս է վերցրել, մշակում են: Համոզում էր, թե՛ «Արի, ապրի հողամասում, մի քիչ գործ կանես, բերքից քո բաժինը կվերցնես, և՛ առողջարար է, և՛ շահավետ»: Ասացի՝ իսկ կնոջը ինչու՞ չես տանում, եթե այդքան առողջարար է: Ապուշ կտրած նայում է դեմքիս: Ասացի՝ ի՞նչ է, քրոջդ նուրբ ձեռքերին վայել է հող փորել, կնոջդ՝ ո՞չ: Կմկմաց, թե՛ «Ղե, կինս երեսնամեթին է նայում, դու մեռակ ես, ազատ...»: Ասացի՝ վերջ, էլ չխոսես այդ մասին, եթե չես ուզում գժտվենք, և իմացի՞ր ես մեռնակ չեմ, ես Բեբիի հետ եմ: «Ինձ ճիշտ չհասկացար», - ասաց, բայց

աչքերը մեղավոր կախ զցեց: Շատ լավ էլ հասկացա: Թե չէ՝ Բեբին ինչու՞ հանկարծ հաչեց վրան:

* * *

Երեկո է: Հոգուս մի անասելի թախիծ է պատել: Բեբին էլ տխուր է: Երբ տխուր է լինում՝ գնում-պառկում է պատշգամբում ու կամացուկ կաղկանծում, երգելու պես: Եթե գնամ-նստեմ մոտը, ինքը կհեռանա սենյակ, փորձել եմ: Շատ զգայուն շուն է: Մի հաբ դրեցի ափիս, մոտեցրի քթին,- վերջերս չեմ մանրում ու խառնում կերակուրին, վարժվել է հաբն ամբողջությամբ կուլ տալուն,- լիզեց կերակվում մռուրթը շրջեց պատուհանի կողմը: Լիալուսին է: Լիալուսինը միշտ ինչ-որ տհաճությունների նախանշան է: Պահարանից հանեցի գինին, միացրի հեռուստացույցը և պառկեցի բազմոցին: Քիչ հետո, երբ հաբը ներգործի, Բեբին էլ կգա մոտս: Շատ խռովկան է դարձել: Եվ շատ նյարդային: Հաճախ կանգնում է դռան մոտ, վնգստում ու ամբողջ մարմնով դողում, ինչպես տենդի մեջ: Անցյալ օրը տարա մի հայտնի կինոլոգի մոտ: Ասաց. «Միայն խնդրում եմ, ոչինչ չթաքցնեք, ամեն բան պատմեք, եթե ուզում եք արդյունքի հասնենք»: Ջրուցեցինք: Նայեց, տնտղեց շանը: Բեբին նրան լիովին վստահում էր, ասես վաղեմի բարեկամներ լինեին: «Պարզ է,- ասաց,- սարսափելի ոչինչ չկա: Հասուն, առողջ շուն է: Էգերի հետ զոնե երբեմն կցեք և ամեն բան կկարգավորվի»: Խոսում է ու խորամանկ, բազմանշանակ ժպտում. հետաքրքիր սուբյեկտ է: Ասում եմ՝ բայց ո՞նց կարող եմ թույլ տալ, որ կցվի պատահած փողոցայինի հետ, հազար ու մի հիվանդություն կա... Իսկ ցեղականներին մոտ չեն թողնում: Դարձյալ խորամանկ ժպտաց. «Կներեք,- ասաց,- բայց ինձ թվում է, որ դուք պարզապես չեք ուզում: Այդպես պատահում է, շատերն են խանդում իրենց շներին: Մայրերն ինչպե՞ս են խանդում իրենց որդիներին կամ... Ես, օրինակ, ճանաչում եմ մաքրացող էգ շներ ունեցողների, որոնք հիանալի թուլաներ կարող են ստանալ և ահագին էլ փող աշխատել, բայց այդ էգերն այդպես էլ չեն ճաշակում մայրությունը՝ իրենց տերերի խանդի պատճառով»: Հենց այդ պահին էր, որ գիտակցությանս մեջ հայտնվեց սկզբում անհեթեթ թվացող միտքը, ինքս ինձ խոստովանել չէի ցանկանում, սակայն հետագա ամբողջ մեր խոսակցության ընթացքում այդ միտքը չէր լքում գիտակցությունս: Լինում են նման կաշուն մտքեր, որ հայտնվելով՝ մեխվում են ու ազատվել հնարավոր չի: Օրինակ, մի երեկո, առանց մի ինչ-որ դրդապատճառի, մտապատկերիս մեջ հանկարծ հայտնվեցին տարբեր չափի ֆալոսներ: Աստված իմ, որքան վատ էի

զգում ինձ, որքան էի ամաչում ինքս ինձնից, ամբողջովին կարմրատակել էի, նույնիսկ սրտխառնոց զգացի, սակայն ֆալոսային արշավանքը ձեռ չէր քաշում ամբողջ երեկո, մինչև մի լիքը բաժակ գինի խմեցի ու համարյա հարբած քուն մտա: Բժշկի առանձնասենյակում հայտնված միտքը նույնպես պոկ չէր գալիս: «Լավ,- ասաց բժիշկը,- Բեբին և դուք ինձ դուր եք գալիս, կաշխատեմ օգնել ձեզ, մի հարմար էգ կգտնեմ, թողեք ձեր հեռախոսը»: Հետո սուրճ հյուրասիրեց, էլի խոսեցինք դեսից-դենից, իսկ երբ տուն եկա՝ հանկարծ հիշեցի, որ հեռախոսիս համարը մոռացա թողնել: Ոչինչ, մոտ օրերս կանցնեմ նորից:

Ահա, քիչք երևաց դռան ետևից: Մի քիչ այդպես կկանգնի, ապա կգա-կպառկի կողքիս: Վերջապես կհաշտվենք, թե չէ արդեն քնելու ժամն է, իսկ ես, եթե Բեբին չգրկեմ, քուն չեմ մտնի: Դե արի, արի, չարաճճի սղա:

* * *

Կծկվել եմ բազմոցի անկյունում, արդեն վաղուց, չեմ համարձակվում տեղից շարժվել: Դա առավոտյան եղավ: Հոգնած էի, անտրամադիր: Այդպես լինում է, չէ՞, արթնանում ես, վեր կենում անկողնուց և արդեն հոգնած ես ու անտրամադիր: Ասացի՝ Բեբի, կյանքս, արի այսօր հրաժարվենք զբոսանքից, տիրուհիդ անտրամադիր է, եղանակն էլ վատն է, մտիր վիճակիս մեջ: Չմտավ: Նստեց դռան մոտ, ու սկսվեց բողոքի հաչոցը: Նորից խնդրեցի, համոզեցի, հետո մոտեցա ու շոյեցի գլուխը: Իսկ նա հանկարծ հափ՝ բռնեց խալաթիս փեշը, քաշեց ու պատռեց: Թանկարժեք մետաքսյա խալաթ էր: Ասացի՝ ավազակ, ախր ինչու՞ ես վնասարարություն անում, ո՞ր վատության համար. կերակրում եմ, լողացնում, բան անում... Բայց նրա պետքը չէ, նստել է դռան մոտ ու հաչում է: Նախաճաշ տվի, իր սիրած երշիկով ձվածեղը, իսկի մոտ չգնաց, պառկեց դռան տակ ու ոռնաց: Հիմա մտածում եմ՝ այնուամենայնիվ, երևի թե պիտի տանեի զբոսանքի: Բայց, ախր, իսկապես ինձ թույլ, ընկճված էի զգում: Եվ հետո, ինչու՞ պիտի միշտ ես զիջեմ: Դատարկած բաժակը նորից գինի լցրեցի, նստեցի ու քիչ-քիչ խմում էի: Ու մեկ էլ, Բեբին մտնում է սենյակ և հենց մեջտեղում, խալու վրա, պագում-կեղտոտում: Այ քեզ բան... Էլի է պատահել, որ զբոսանքի չեմ հանել, և ոչինչ, սովորականի պես գնացել-կեղտոտել է զուգարանի սալահատակին: Ուրեմն ի՞նչ, բողոքի ցույց, վրեժխնդրություն: Իհարկե, վրեժ է լուծում: Ասացի՝ վրեժ ես լուծում տիրուհու՞ց, չես ամաչու՞մ, անպիտան: Ու հանկարծ գայրույթը միանգամից խեղդեց

կոկորդա, չղիմացա, ինքս էլ չգիտակցեցի, թե ոնց ստացվեց՝ չանթեցի լվացքի մեքենայի փողրակն ու խփեցի: Գռզմռաց, մերկացրեց ատամները: Նորից խփեցի: Այս անգամ շրջվեց ու հարձակվեց վրաս, կծեց՝ ազդրս, ձեռքս: Բեթին հարձակվի ինձ վրա՞...

Հիմա կծկվել եմ բազմոցի անկյունում: Իսկ նա նստած է գետնին, մի քանի քայլի վրա: Երկու անգամ փորձեցի վեր կենալ, բայց այնպես սպառնալի գռմռաց, որ դարձյալ մեխվեցի տեղում: Քնքուշ խոսքեր ասացի, իր սիրած խոսքերը, բայց ապարդյուն:

Ախր, Բեթի, թանկագինս, այս ի՞նչ է կատարվում մեզ հետ: Չէ՞ որ սիրում եմ քեզ, դու լավ գիտես: Մի՞թե մեղավոր եմ...

Երկար այդպես մնացի նստած: Ու մտածում էի: Ու վերջնականորեն համոզվեցի՝ պետք է իրականացնել այն, ինչի մասին վերջերս հաճախ մտածում եմ՝ նույն այն միտքը, որ առաջին անգամ այցելեց ինձ բժշկի առանձնասենյակում: Ուրիշ միջոց չկա: Այո, եթե ուզում եմ Բեթին միշտ ինձ հետ լինի, ամբողջովին իմը լինի...

Դե, ասացի, արի հաշտվենք, սիրելիս, հերիք է, որքան տանջեցիր տիրուհուդ: Խալաթս պատռեցիր, խալին... Փոխանակ ես նեղանամ, դու՞ ես նեղանում: Նայիր, ոնց ես կծել, արյուն է գալիս, տեսնու՞մ ես: Դե արի, արի սիրեմ քեզ: Մոռանանք: Կուզե՞ս, գնանք զբոսնելու: Գնա՞նք: Դե փոկը բեր: Չէ, չի շարժվում տեղից: Սակայն հայացքը կարծես փափկել է: Մի քիչ էլ սպասեմ: Ասենք, չսպասեմ՝ ի՞նչ կարող եմ անել:

Այո, Բեթին ամորձատել է պետք, միակ միջոցն է: Եվ ոչ մի դաժանություն էլ չկա, այս մասին մտածել եմ. միայն առաջին հայացքից է դաժանություն թվում: Երբ արդեն ամորձատված եղավ՝ ցանկություններ չի ունենա, ուստի էլ ի՞նչ դաժանության մասին կարող է խոսք գնալ: Հանգիստ, խաղաղ ու ամենակարևորը՝ անվտանգ կապրի իր համար: Այո, անվտանգ, սա շատ կարևոր է: Ավելի դաժան չի՞ լինի, եթե, ասենք, մի քնձռոտ լրբի պատճառով որձ շները գզեն-հոշոտեն կամ մեքենայի տակ ընկնի, կամ էլ վարակվի որևիցե անբուժելի հիվանդությամբ: Չէ, ամորձատումը ոչ միայն դաժանությունն է, այլև բարեգործություն է: Եվ մի՞թե ինձ համար հեշտ է գնալ այդ քայլին, մի՞թե անձնագոհությունն է, մի՞թե ես... Բայց ի՞նչ արած: Ուստի որոշված է՝ վաղվանից զբաղվելու եմ այդ հարցով: Միայն թե հիմա հանգստացնեմ նրան: Պետք է հասնել դեղորայքի պահարանին, հանգստացնող հաբերից չի հրաժարվի, սիրում է: Երկու հաբ հիմա կտամ, երկուսը՝ գիշերով, քնելուց առաջ:

Դե թող, Բեթի, թող մոտենամ պահարանին, սիրելիս, գիտես, չէ՞, որ աշխարհում ամենից շատ քեզ եմ սիրում, քեզնից բացի էլ ոչ ոք չունեմ: Դե ներիր ինձ, ներիր տիրուհուդ: Հա, ծնկաչոք ներողութ

յուն եմ խնդրում, չարաճճի տղա, դե թող հաբերը վերցնեմ...

Ու էլի միասին կլինենք, ոչ ոք մեզ պետք չի լինի, նորից կպառկենք բազմոցին, երաժշտություն կլսենք, հեռուստացույց կնայենք, արևածաղկի սերմ կչրթենք, գինի կխմենք... Ու կապրենք էդպես: Բեթի, սիրելի Բեթի...

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

... Ու ամենևին էլ մարդատյացություն չէ սա, հավատացնում եմ. բազմաթիվ իսկական մարդատյացների եմ ճանաչում, որոնք, սակայն, միշտ մարդկանց հետ են, ինչպես ասում են՝ ուս-ուսի, թև-թևի: Կրկնում եմ՝ անհրաժեշտ տարածության պահպանումը մարդատյացության դրսևորում համարել չի կարելի: Ավելին ասեմ, թեև ինչու՞ ավելին, և ոչ՝ ճշմարիտը (ասելով ճշմարիտը, չգիտես ինչու՞ թվում է, թե ասում ենք ավելին), ուստի ասեմ ճշմարիտը՝ ես մարդասեր եմ: Մեծ մարդասեր: Սեր: Սերն իհարկե այն բառը չէ, որ կուզենայի օգտագործել, սակայն ստիպված եմ օգտագործել, որպեսզի խուսափեմ թյուրըմբռնումներից: Դեհ, քանի որ առիթ եղավ, ասեմ՝ սեր հասկացությունն առհասարակ անօգտագործելի է, եթե ուզում ես որևիցե խնդիր ճանաչել ամբողջ խորությամբ: Այդպես է: Սեր ասելով՝ հեշտորեն պրծնում ենք խորքն իսկապես տեսնելու գլխացավանքից: Դառնանք...

Ի՞նչ է, պարոն, շատախոսելու անհրաժեշտությունն ունեք, արդեն հասունացավ... Լցված միզապարկի պես է, գիտեմ, մինչև չդատարկես, չես հանգստանա: Սակայն ինչու՞ ես: Երկու սեղան այն կողմ նստած պարոնն է, արդեն խմած է և հայացքով զրուցակից է փնտրում, ավելի ճիշտ՝ ունկնդիր. վախենամ ընտրությունն ի վերջո իմ վրա կանգ առնի, ինչպես ասում են՝ կարկուտը ծեծած տեղն է ծեծում:

Դառնանք մարդասիրությանը: Անձամբ ինձ թվում է՝ սերն այս դեպքում գրավել է խղճահարության տեղը՝ մարդասիրություն ասվածը ես խղճահարությամբ եմ զգում: Ես խղճում եմ մարդկանց, բոլորին՝ անցած-գնացածներին, ներկաներին, նրանց, ովքեր գալու են... Խղճում եմ, ամենայն անկեղծությամբ եմ ասում: Երբեմն, բավականին հաճախ, հատկապես մութն ընկնելուց հետո կամ հենց ընթացքում, խղճահարությունն այնպես անգթորեն է հոշոտում հոգիս, որ կարող եմ լաց լինել, եթե ձեռիս տակ խմիչք չլինի: Թեև, խմելուց հետո կամ հենց ընթացքում՝ էլի լաց եմ լինում: Երբեմն, բավականին հաճախ, երբ մտածում եմ մարդ արարածի ճակա

տագրի մասին, ես կանվանեի՝ անանձնական մտածումներ, անսպասելիորեն, ոչ, հանկարծակիորեն, այո, հանկարծակիորեն զգում եմ...

Ահա, ահա, գալիս է պարոնը, ուղիղ իմ կողմը: Եկավ: Ի՞նչ: Ազատ է, այո, կարող եք նստել:

Մարդասեր եմ՝ ինչպես ասացի, այո, անհերքելի ճշմարտություն է, և սույնը հաստատող էլի շատ ապացույցներ ունեմ, որոնց մասին խոսելը անհամեստություն կլինի պարզապես: Սակայն մարդասեր լինելը մի՞թե անպայմանորեն նշանակում է մշտապես սերտ շփումների մեջ լինել մարդկանց հետ, մշտապես մխիթարության խոսքեր շնչալ նրանց ականջին, գուրգուրել, ողորմություն բաժանել... Կարծում եմ՝ ոչ: Ես մարդասեր եմ տարածության վրա, որովհետև...

Ինչու՞ եք անհանգիստ, պարոն, մի թխկթխկացրեք պոռոջ, նյարդայնացնում է, չէ՞: Լավ չե՞ք զգում ձեզ: Չլինի՞ մրսած եք: Թաշկինակը, իհարկե, թաշկինակը հանեք, հո սեղանին չե՞ք փռշտալու: Առողջություն:

Որովհետև, մեղքս ինչ թաքցնեմ, շատ անսպասելի, անկանխատեսելի, պարզապես վտանգավոր արարած է մարդը, այսինքն՝ մենք: Եթե, օրինակ, շունը ժանիքները մերկացրած գալիս է վրադ, պարզ գիտակցում ես, որ կծելու միտք ունի: Իսկ երբ գործը մարդու հետ է՝ դժվար է կռահել ձեր շփման զարգացումն ու հատկապես՝ ավարտը: Նույնիսկ ամենաբարի նպատակներով մոտեցած մարդու միտքն ի՞նչ իմանաս՝ քիչ հետո որ կողմը կծովի: Կյանքիս փորձից հարյուրավոր վառ օրինակներ կարող եմ հիշել: Վտանգավոր է, այո... Բայց դե, սա է մարդը, ի՞նչ կարող ես անել: Ուստի...

Մի ցնցեք ուսս, էյ, գրում եմ, չե՞ք տեսնում:

Ուստի խղճահարությունը, որքան էլ սաստիկ, չպետք է կուրացնի, չպետք է խանգարի, որպեսզի ես ապահովեմ սեփական անվտանգությունս. իրավունք ունեմ, չէ՞: Այս մասին վաղուց եմ մտածում: Միշտ երազել եմ պաշտպանական «թասակ» ունենալ՝ յուրահատուկ անտեսանելի թաղանթ, որը թույլ չի տա ինձ մոտենալ առավել, քան ցանկանում եմ, մոտավորապես՝ էլեկտրական պարպումներով պաշտպանվող ձկների նման: Պատրանք է, համաձայն եմ: Սակայն արի ու տես...

Ի՞նչ է, ինչու՞ եք ծամածռում ձեր բորբոսնած քիթը, պարոն... Հեռանու՞մ եք... Չդիմացա՞ք, հի-հի-հի...

Արի ու տես, որ ես այնուամենայնիվ գտա իմ «թասակը»: Գտա, այո: Ամեն բան սկսվեց ատամնացավից. պողպատյա շապիկի տակ երկար տարիներ անհանգստություն չպատճառած սեղանատամն հանկարծ ցավեց՝ ուռցնելով լինդս, ապա՝ նաև այտու: Դեմքս ծռվել

էր, շատ զավեշտալի տեսք ունեի- ի տարբերություն մեծամասնության՝ ես կարողանում եմ ինքս ինձ վրա ծիծաղել՝ նույնիսկ ամենաթշվառ իրավիճակներում: Բժշկի չգնացի,- ատամնաբուժական գործիքների նկատմամբ հիվանդագին վախ ունեմ,- ապավինեցի ժամանակին: Երկու, թե երեք օրից, հաց ուտելիս, շապիկը հանկարծ պոկվեց ու ընկավ. հետաքրքիր էր, երկար տարիներ այդ երկար կտորը սեփական մարմնամասերից չէի տարբերել, բայց երբ ընկավ ու ատամներին տակ տհաճորեն խրթաց՝ անմիջապես օտարացավ, ասես դրսից մտած լինեք բերանս: Շապիկից զրկված ատամն սև էր, փտած և գարշելի հոտ էր արձակում, ինչին, սակայն, արագ վարժվեցի: Եթե անկեղծ լինեմ,- իսկ ես միշտ անկեղծ եմ,- այդ հոտը սկզբում էլ տհաճ չէր ինձ. սեփական հոտերն ամիսատարակ տհաճ չեն լինում: Ուռուցքն արագորեն իջավ, վերացավ նաև ցավը. ատամն այլևս անհանգստություն չէր պատճառում, սովորական ատամ էր, միայն թե՛ սև, է ի՞նչ անենք, սև կամ սպիտակ՝ էական տարբերություն չեմ տեսնում: Հոտն էլ, ինչպես ասացի, չէր խանգարում: Բայց չէր խանգարում ինձ, իսկ ուրիշների՞ն...

Հաջորդ օրը նկատեցի, որ ծանոթներս իրենց հեռու են պահում ինձնից, նույնիսկ նրանք, ովքեր խոսելիս, պատկերավոր ասած, սիրում են բերանդ մտնել: Եվ բոլորն աշխատում էին կարճ խոսել, արագ, տհաճությամբ փնջացնելով և այս կամ այն կողմ թեքելով իրենց դեմքը: Իհարկե, մարդկանց կարծիքն անձիս վերաբերյալ անկարևոր չէ, սակայն ձեռքբերումս անհամեմատ ավելի կարևոր էր, այնպես որ՝ ներքին պայքարը երկար չտևեց: Սկիզբը դրված էր:

Հիմա հազվադեպ եմ լողանում, այն էլ՝ մաս-մաս, որպեսզի մարմինս միանգամից հոտազերծ չանեմ: Իսկ ներքնահագուստս փոխում եմ միայն, երբ արդեն անհուսորեն քրքրված է: Մշտապես սոխ ու սխտոր եմ ուտում,- նաև առողջարար է,- էլի մի քանի միջոցներ եմ կիրառում, բայց դա իմ գաղտնիքն է, չեմ ուզում բացել: Արդյունքն ավելի քան գոհացուցիչ է՝ անհրաժեշտ տարածությունը ձեռք է բերված: Ծանոթներս մի քանի մետրից ավելի մոտ չեն գալիս: Եթե անհրաժեշտություն կա՝ տարածության վրա արագ խոսում եմք, իսկ եթե չկա անհրաժեշտություն՝ բարևում եմք միմյանց ու անցնում: Ինչ վերաբերում է անծանոթներին՝ շատ ժամանակ պետք չէ նրանց, որպեսզի կռահեն տարածություն պահպանելու անհրաժեշտությունը, ինչպես այն պարոնին, որ նստեց սեղանիս մոտ. հարբուխ չունենար՝ ավելի շուտ կկողմնորոշվեր: Մարդատյացություն չէ, կրկնում եմ. այ հիմա նայում եմ նրան,- ուրիշ ունկնդիր է գտել,- և սիրտս կտրատվում է խղճահարությունից, որովհետև հասկանում եմ, ամեն մարդ արտահայտվելու կարիք ունի, ուզում է

դատարկել հոգին, պատմել իր մասին, ցուցադրվել... Բայց ես այլևս չեմ կարող, ի վիճակի չեմ, նյարդերս չեն դիմանում, սաստիկ հոգնել եմ և... Եվ վախենում եմ, իրավունք ունեմ, չէ՞: Վերջապես, եթե բոլորին խղճում եմ, ինձ չխճա՞մ... Թեկուզ մեկ բացառությամբ մարդասիրությունը՝ արդեն մարդասիրություն չէ:

Գիտեմ, որ բամբասում եմ, անվայելուչ մականուններ են կացնում, բայց... Չէ, չեմ ասի՝ թքած, սակայն նաև ոչ մի գնով չեմ զիջի ձեռքբերումս: Սիրենք միմյանց տարածության վրա, այսպիսի սերը, հավատացնում եմ, ավելի կայուն է ու երկարատև:

Այո, վերջապես ունեցա երազանքներիս «թասակը»: Իհարկե, սա կատարյալ տարբերակ չէ, սակայն մարդուս ո՞ր երազանքն է կատարելապես իրականանում: Հիմնական թերությունը կանանց հետ հարաբերվելու խնդիրն է: Ցանկություն, այո, ցանկություն: Սակայն կարծում եմ, նույնիսկ համոզված եմ, որ իմ «թասակը» կանանց բնագոյային խորքերը գրգռելու, վայրի կրքեր բորբոքելու հատկություն ունի, միայն համբերեն, միանգամից չնետեն «Թու» և հեռանան: Գուցե հաջողվի՞ հոտառությունը կորցրած կին գտնել, որը նաև հմայիչ լինի, գոնե մի քիչ, կամ, գոնե, շատ տգեղ չլինի: Դե լավ, ի վերջո, պաշտպանված ու հանգիստ ապրելը մի՞թե առավել կարևոր չէ: Ի՞նչը, օրինակ, կարող է համեմատվել այս հաճույքի հետ, որ վայելում եմ այստեղ՝ սրճարանում, ոտքս ոտքիս գցած, անկախ ու անտագնապ. նստել եմ ինձ համար, գրառումներ եմ անում, ծաղրանկարներ... Իսպառ մեկուսանալ չեմ կարող, չէ, կատարյալ միայնությունը սպանիչ է ինձ համար, տեսակս է այդպիսին, մարդասեր եմ, չէ՞: Պարզապես...

Պարզապես, տարածություն է անհրաժեշտ իմ և ՁԵՐ միջև, տիկնայք և պարոնայք: Նկատեցի՞ք, դիմումս գլխատառերով առանձնացրի: Սա այն մեծ սիրուց և հարգանքից է, որ անշուշտ տածում եմ ՁԵՐ նկատմամբ, սիրելիներս:

ՊԱԽՄԵԼ

- Ես պախմել ասածը շատ գոռ բան ա, ընգեր, թե ճիշտ ժամանակին ու իրա չափով չարիր՝ պրծ, կարա տա՝ սպանի,- խոսեց Նապոն՝ լույսը հագիվ բացված. անկողնուց վեր չէր կացել, ոնց կար՝ էդպես մնում էր՝ մեջքի վրա պառկած, աչքերն առաստաղին արած ու երկի՝ դեռ փակ:- Այ իմ հերը, ախպեր, գիղա՞ս ինչից մեռավ... Կարծում ես ծերությունից կամ ցիռոզի՞ց... Չէ, էնի էրկաթի պես առողջ մարդ էր, էնի սխալ պախմելից զոհվավ. ամեն ասծու օր, հենց

լուսը բացվում էր, սֆթից պախմել էր անում, հետո նոր գնում մանու-մենտի այգին պարբեժկի: Էդ անգամ թե ինչ սատանա մտավ մեջը, ասեց՝ գնամ ֆռֆռամ, հետո պախմել կանեմ: Ու էդ էր, ախպեր, խփեց տարավ, սիրտը աբշիրնի տրաքքրել էր: Բա, իսկ դու ասըմ ես...

Ես բան չէի ասում, ի՞նչ ասեի... Ցավում էի Նապոյի հոր ճակատագրական վրիպումի համար, բայց ոչ այնքան, որ վայ-վույս գցեմ. մարդ էր, մեռավ-գնաց, ցավալի է՝ բայց մարդիկ առհասարակ ունեն էդ հատկությունը:

- Ձեն չես հանում, ընգեր,- համառեց Նապոն:- Մի բան արա, պախմել՝ սատկեցի:- Ես անգամ նա կտրուկ վեր կացավ անկողնուց՝ քրտնահոտ ալիքելով շուրջը:

- Հո չասիր, Նապո՛, քեզ թվում ա՝ ես չեմ սատկու՞մ: Փող հանի՛ անեմ, մի բան էլ, էրկուս էլ: Տենց մի նայի, ես չունեմ, էրեզ քոքը տվիմք:

Ճմրթված հագուստի գրպաններն է փորփորում՝ տաբատի, բաճկոնի, վերնաշապիկի... Սեղանի դարակը քաշեց-հրեց ճռռացնելով, նույնիսկ գլխարկը վերցրեց սեղանի վրայից՝ նայեց. թե դրա տակ փողն ինչ էր անելու...

- Չկա,- ծայրը դահճի կացնի պես կախվեց օդում:

Նապոն,- լրիվը՝ Նապոլեոն,- «Կույրերի կոմբինատի» պահակն էր: Իննսունականների էն դժվար տարիներին նրա պահակատանը միշտ տաք էր ու լուսավոր. հոսանքը երեք կայանից էր «կացնում» Նապոն՝ մեկն անջատում էին, միանում էր մյուսին, սա էին անջատում՝ էն մյուսին: Դե պարզ է, նրա պահակատանը միշտ մարդաշատ էր, հատկապես՝ ձմեռով, հավաքվում էին տղերքը՝ Գռնոն, Մխոն, Համոն, Ժոռը, Գոգոլը, Սեթին... ու մինչև ուշ գիշեր՝ զինարբուք, թղթախաղ, նարդի... Հետո մեկը-երկուսը տուն գնալու տրամադրություն չէին ունենում, կամ էլ ի վիճակի չէին լինում, մնում էին գիշերելու «Նապոյի բուդկեն», այն է՝ երկու ճռռռան «կոկա», պստիկ սեղան, սեղանի վերում՝ պատից կախ՝ թեք զիզագով ճաքած հայելի, որի ետևում արծաթի շերտը տեղ-տեղ քերված էր՝ դեմք սպիավոր էր ցուցանում, ինքնաչեն էլեկտրական վառարան՝ «կազյոլ» տիպի, «տմբուշկա»՝ Նապոյի մահճակալի գլխամասին մերձ, մաշած տախտակներով հատակ, որի տակ, հատկապես «կազյոլի» մոտակայքում, ձստձստում էին առնետները, էլ ի՞նչ... Կարծես՝ վերջ... Հա, պատի ժամացույց, որի կկուն դուրս ցցված՝ լքվել էր, շղթան էլ չկար, ինչ-որ մեկին պետք էր եղել՝ տարել էր: Ճռռան դուռը բակ էր տանում, մեծ բակ էր, բակում՝ առանց ունի-տազի, դասական «չոքած» տիպի զուգարան, բնականաբար՝ կեղ-

տոտ, բազմաթիվ կատուներ՝ աղբակույտերին, թեք ծառի միակ հաստ ճյուղին, պատերի տակ, նրանցից մեկը՝ անպոչ, երեքտասնի, միշտ կասկածով էր նայում գնացող-եկողին, մի փրչոտ շուն էլ՝ հեռավոր պատի տակ կապած, կապը հաճախ արծակվում էր, բայց շունը չէր հեռանում կապաչափ տարածքից, համարձակությունը չէր հերիքում, եթե բան է՝ հանկարծ սխալմամբ հեռացավ, պոչը քամակն էր կոխում ու հաչալը մոռացած՝ կլանչում: Կատուները չէին վախենում շնից, պատահում էր՝ թաթով խփում էին քթին, ֆշշացնում սպառնալի, որ երես չառնի հանկարծ:

Նապոն կեղծանուն ուներ՝ Քառակուսի Նապո, էդ անունը «Նալբանդյանի» Համոն էր դրել. մի անգամ, «Կոպեկանոց» կաֆեում խմում էին, նայեց, նայեց ու՝ «Արա, էս Նապոյի գլուխը՝ ոնց որ Կիևակի տորթը կարոբկով դնես վզին, քառակուսի ա»: «Ես իրա ջախել վախտի նկարը տեսել եմ, էսպես չէր, խմելուց ա էդել: Վախենամ՝ էլ չդժվի», նկատեց Բաբայան Յուրան: Նապոն տխուր ժպտաց ու ծանր հոգոց հանեց միայն. հանդուրժող էր:

Հո միշտ պահակ չի՞ եղել Նապոն... Չէ, սովետի օրոք մատակարար էր աշխատում մի մեծ գործարանում, նույնիսկ նկարն է փակցված եղել պատվո տախտակին, մեկ եռամսյակ, հետո բացահայտվել է նրա սերը խմիչքի նկատմամբ ու նկարը հանել են: Բայց լավ է չհիշի իր էդ փառապանծ անցյալը. ժամերով կպատմիկ հոգնացնի, վերջում էլ արցունքի կաթիլը կգլորվի մետղ քթով, կհասնի ծայրին, կծանրանա ու կլթոցով կընկնի գինու մեջ, Նապոն կսթափվի, գինին կբաշի գլուխն ու կտնքա՝ «Ուրիշ երկիր էր անտերը»...

- Լավ չի, - ասաց՝ երկար լռելուց հետո:
- Հատկապես ո՞րը:
- Տանը հետս կռիվ են անում, ախպեր:
- Երևի խմած գնում՝ ավել-պակաս խոսում ես...
- Չէ, վաբ՛շե ձեռն չեն հանում, բայց՝ էլի: Խմած մարդուն չեն հարգում մերոնք, ապեր, չէ:
- Որդե են սիրում որ... Գիդաս իմ տանը ինձ համար խելքներն է-թում ա՞:
- Հա՞, - սփոփվեց Նապոն: - Բայց դե Ռուսաստան ըտենց չի, ախպեր, ընդե խմածը տրանսպորտ մտավ՝ վռնազ հելնում են, տեղ են տալիս... Հաստատ, իմ աչքով եմ տեսել: Բա: Էն գյոզալական «Կոպեկանոցն» էլ փագին, խի՞... Ասա էդ կաֆեն ոնց ես փագըմ, ես հըլա հեչ, բայց ըտե Հրաչն ա նստե, ըտե Շիրազն ա նստե, Քոչարն ա նստե, ըտե Ֆրունզն ա նստե, ըտե Շերենցն ա նստե... Չենք հարգում մեր մեծերին, չէ: Մի բան ասա, այ ախպեր, հո սենց չե՞նք մնա-

լու, գլխս ճաքավ:

Ակամայից նայեցի նրա քառակուսի գլխին, փորձեցի ճաքած պատկերացնել այն, չստացվեց. որևէ բան պատկերացնել առիասարակ դժվարանում էի, ինձ թվում էր՝ իմ գլուխն էլ հիմա քառակուսի է:

- Սենց չենք մնա, Նապո ջան, մի վախի:
- Հա՞ որ...
- Հա: Մտածենք:
- Էէ՛, մեր մտածելուց խեր չկա, ընգեր: Կայնի զանգեմ Մխոյին, է-րեզ ահագին թեփոշ էր ապերը:
- Կքոֆի, էնի մինչև տասերկուսը քնող ա:
- Բայց հո չե՞նք մեռնելու... Թող քոֆի, զանգում եմ: - Նապոն պտտում է հեռախոսի ժանգոտ ֆռիկը, տազնապով սպասում: - Մխո՞... Չքոֆես, ընգեր, վատ եմ: Հա, էլի, ջոզում ես: Ի՞նչ... Որդե՞... Կայ քու ցավը տանեմ... Քնի՛, քնի՛ ախպերս, հրեշտակները քեզ պահակ:
- Հը՞, - հարցնում եմ:
- Էրեզ, թաքուն, մի հատ բոմբ շիշ պահել ա, սև օրվա, ասում ա՝ լավ չեմ հիշում, էրկուսից մեկը՝ կամ կոյկի տակ ա, կամ զուգարանում, բաչոկի մեջ: Դու կոյկի տակ նայի, ես թռա զուգարան:
- Սպասի, կարող ա գտնում եմ, մեկ էլ չգնաս... - ասացի: Բայց Նապոն արդեն չբվել էր: Գլուխս կախեցի՝ չկա, էն մյուսի տակ... էլի չկա: - Ստեղ չկա, - գոռացի Նապոյի հետևից:
- Հես ա, բերին, - դողացող ձեռքով շիշը գրկած՝ ներս ընկավ Նապոն: - Կայ, Մխո ջան, մեռնեմ կյանքիդ, ախպերս, մեռնեմ էն կախ պռոշիդ, էն լոշտ ականջիդ, էն...
- Նապոն մեջտեղ բերեց թեյի մեծ, հաստ պատերով բաժակները, մեկի պռոշը կրծած էր, բացեց շիշը, լիքը լցրեց, խմեցինք... Նայեցինք իրար՝ չէ, քիչ էր, էլի լցրեց՝ կես-կես, դա էլ խմեցինք: Ահագին ժամանակ լուռ էինք, ջանում էինք մեզանով անել ներառած գինին, որը համառորեն օտարի պես էր պահում իրեն: Ահա, կարծես նույնացանք վերջապես...
- Ծիշտ չենք անում, չէ, - հանկարծ եզրակացրեց Նապոն. անկուռ-հելի էր՝ ինչ էր անցել մտքով:
- Պախմեղի կարմիր գիծը հատել էինք, լավ էր, այսինքն էնքան վատ չէր, ուրեմն՝ լավ էր ու դեպի ավելի լավն էր գնում. կես շիշ էլ դեռ կար, իսկ շիշը լիտրանոց էր՝ բոմբ, մինչև դա խմեցինք՝ աստված ոնց էլ լինի՝ մի դուռ կբացեր:
- Պորթվեցինք ցեմտր խմիչք ա, ընգեր, ով ինչ ուզում ա ախ... Ոնց որ զակուկեն էլ հետն ըլնի, ըտենց չի՞:

- Տենց ա,- համաձայնեցի. մեղք կլիներ չհամաձայնելը:
- Բայց դե ճիշտ չենք անում, էլի,- դարձյալ դառնացավ Նապոն:
- Էդ ո՞րը, է:
- Էս էլ ձգենք, ասեմ:
- Ձգեցինք, Նապոն լայնբերան հու՛արեց, շունչ քաշեց, պահեց, կուլ տվեց ու խոսեց.
- Ասում եմ, մի էրկու նանար բերեինք, ընգեր, կամ էլ գոնե մեկին, հեչ որ ուրիշ բան չէ՝ մի քիչ սիրունություն կմտներ օրվա մեջ, թե չէ ըհը՝ վեչնի էս ա՝ տղերքով իրար դեմ նստած, ոնց որ գոմիկ ըլնենք, ախպեր... Բայց մենք հո գոմիկ չենք, չէ՞...
- Դե չէ, դու էլ, հանգստացի: Բայց ու՞ր ա մեզ նանար, զապոյի մեջ մտած՝ սաղին ցրում, կորցնում ենք:
- Մեկը կա ստե:
- Ստե՛ որդե՞:
- Ստե, էլի:
- Կույրերի կոմբինատու՞մ:
- Հա:
- Չհասկացա... Քյոռ ա՞...
- Դե ոնց ասեմ... էնքան էլ չէ...Մի աչքից: Գիդա՞ս ինչ կա, մենք էլ կարծես մի ընենց տենալու բան ենք...
- Հա, բայց...
- Էլ ի՞նչ բայց, քեզ ասում եմ՝ մի աչքից... Էն մյուսն էլ՝ կեսով: Պրոստը աչքերին չպտի նայես, մնացածը տեղն ա՝ քիթը-միթը, ոտերը-բանը... Ապեր, մեզ էտի իսկն ա: Հետո, պակասավորի մեջ իրա կայֆը կա, բա ո՞նց... Ֆրեյդ չես կարդու՞մ, չեմ հասկանում... Չէ, արխային, կարգին նանար ա: Ընկերուհի էլ կունենա...
- Իրա կրուզից:
- Բա չէ, կոնսերվատորիայից:
- Ինչ ասեմ... Կանչի, լավն էղան՝ էղան, չեղան՝ խմիչքը կա ու կա:
- Դե մի չրթ էլ խմենք՝ էթամ:
- Բայց էս ժամին ի՞նչ են անում կոմբինատում:
- Ի՛... Հո չասիր... Դրանք լուսը չբացված՝ ստե են, ախպեր:
- Որ ի՞նչ...
- Ջբաղվըմ են, տուներ մնան՝ ի՞նչ անեն. խմբակ-մմբակ ունեն՝ ասնունքում են, երգըմ... Մարդ կա՝ երգըմ-երգըմ ա, հետո էլ հավես չի ունենում տուն գնա, հենց ստե էլ մնում, քնում ա, հա՛, էս կոմբինատի մեջ կալդավսկոյ բան կա, մի աչքով չնայես: Դե ես գնամ... Չգնա՞մ...
- Գնա: Բայց դուխո տեղն ա՞:
- Հեչի պես: Առանց ինձ չխմես, ընգեր:

- Արխային: Բայց շատ չուշանաս:
- Նապոյի բացակայությամբ գանգ եղավ, պախմելային խռպոտ ձայնով մեկը հարցրեց՝ Նապոն ըտեյա՞, ասացի՝ չէ, շատ զարմացավ, թե՛ ոնց... Բա ու՞ր ա, ասացի՝ մոտերքում ա, շուտով կգա, բայց խմելու բան չունի, ասաց՝ ես ունեմ, կես ժամից ըտեյեմ, իրան ասա կազոյը տժցնի, մի էրկու կարտուլ-մարտուլ դնի վրեն, ժոռը գալիս ա:
- Նապո, քեզ ժոռը գանգեց,- հայտնեցի, երբ Նապոն եկավ:- Ասեց՝ խմիչքը վերցրած գալիս եմ:
- Թող գա, իսկը վախտով ա:
- Հը՞, ախպեր, բան չես ասում, ընդե չե՞ն հուրի-փերիներդ:
- Խի չեն, լավ էլ՝ են:
- Բա հետո՞:
- Ա դե եսիմ, է՛:- Նապոն «տմբուշկից» կարտուլ էր ջոգում՝ շարում սեղանին:- Ասին՝ մենք խմողների հետ գործ չունենք: Բա, ընգեր: Թե քյոռ աչքով ոնց էլ ջոգեց՝ խմող ենք:
- Խի քիթ էլ չունի՞:
- Էէ, մեր մոտ խմողին չեն հարգըմ, ընգեր, չէ:
- Լավ, նստի, քեզ մի սպանի:
- Քաճի հմա՞ր... Էս ինչ ես ասըմ, ախպեր, էդ էր պակաս: Լից: Այսինքս, թող ես լցեմ, դու սխալ ես լցում:
- Նապոն լցրեց բաժակները. ձեռքերն արդեն չէին դողում, վերջ՝ դաժան պախմելին, նոր օր էր սկսվել: Ճիշտ է, վաղն էլի առավոտ էր լինելու ու ըստ ամենայնի՝ էլի դաժան, բայց դե հիմա ո՞վ էր էդ մասին հիշում, հիմիկվա վիճակը հավերժություն էր թվում, էլ ոչ մթնելու էր, ոչ լուսանալու... Ժամանակն էլ խնդիրներ չէր առաջադրելու, կանգ էր առել ժամանակը դեղին-կանաչ-կարմիր տաքի մեջ...

ՉԱԼՈՅԻ ՎԵՐՋԻՆ ԿՌԻՎԸ

Չալոն ցատկեց «Նիվայի» ետնադռնից, ձիգ կանգնեց, հոտոտեց օդը, ապա հզոր թաթերով հողը փորեց-ետ տվեց՝ առավել սաստկացնելով ներկաների հիացմունքը: «Այ էսի շուն ա, ախպեր, իսկական հայկական գելխեղդ, հեչի պես մի յոթանասուներկու քաշ ունի», - խոսեց խճուղու մերձակա դաշտում հավաքվածներից մեկը: «Վայթեմ ավել էլ ըլնի», - նկատեց հարևանը: Հանդիսատեսի նկատմամբ կատարելապես անուշադիր՝ Չալոն ետնաթաթը վեր հանեց՝ միզեցնչան դրեց խոտին ու վստահ հայացքով տնտղեց շրջակայքը... Ախտյանը չկար. նա չէր կարող լինել էն մանր-մունր շներից, որ առվի

ափին խմբված՝ աշխույժ հաչում էին, նա պիտի լիներ մոտավորապես իր բոլոր-ջանին: Չկար, ուշանում էր: Նախորդ կռվին, - մոտ մեկ ամիս առաջ էր, - երբ մեքենայից իջավ, ախտյանն արդեն սպասում էր՝ աժդահա, փռչուտ. հենց Չալոյին տեսավ՝ շղթան խշխշացրեց, առաջ եկավ, ճանկերեց հողն ու ահարկու գոմառաց: Բայց հո տեսքն ու գոմառո՞ցը չէին կռվելու... Փորձված Չալուն շուտ գտավ հակառակորդի թույլ տեղերը, որոնց մի մասը դեռևս հեռվից էր կռահել՝ շարժուձևից, և ահա, հինգ-վեց բուռեց հազիվ անցած, Բաստրն արդեն չունեի այն հպարտ, ահարկու տեսքը, նույնիսկ փոքրացել էր մի տեսակ, քրտինքից ու Չալոյի թքից բուրդը թրջվել-կպել էր մարմնին, ցից պոչն աստիճան առ աստիճան իջնում էր, մի քիչ էլ՝ ու ատամ խփեց՝ պոչը ոտերի արանքը խրած, ինչը նշանակում էր՝ ընդունում էմ պարտություն: Չալուն դադարեցրեց մարտը, գլուխն ու պոչը բարձր պահած՝ հաղթանակի իր ծիսական պտույտը կատարեց պարտված հակառակորդի շուրջը, ապա գնաց-կանգնեց տիրոջ կողքին: Բաստրն էլ իր տիրոջ կողմը քայլեց՝ գլխահակ, մեղավոր... Հեռանալիս, սակայն, ետ նայեց մի հայացքով, որ ասում էր՝ դեռ հանդիպելու ենք: Էհ, հանդիպենք, մե՞զ ինչ կա՝ պատասխանեց Չալուն՝ առատ միգելով մոտակա թփերին:

- Էսօրվա դրությամբ Չալոյիս հավասար չուն չկա, դեպուտատի Ջուլումն ա, էն էլ դիխանի չունի, ձմեռը տեսար՝ չկարաց մինչև վերջ կռվի, հալից ընկավ, իսկ էն եզդու Բաստրը վաբշե խայտառակ էղավ, հինգ բուռեց չէր անցել՝ ծվվոցը գցեց, հիմա եզդին ասում ա՝ հիվանդ էր, չպտի կպցնեի, թասիքի գցին. սուտ, հեչ էլ հիվանդ չէր, ասում ա՝ բեր, մեկ էլ կպցնենք, ասում եմ՝ ինչքա՞ն փող կդնես, ասում ա՝ չէ, փողով չէ, հենց ընենց կպցնենք, ասի՝ հենց ընենց տար ձեր գյուղի տուգիկների հետ կպցրա, - պատմում էր տերն ինչ-որ մեկին:

- Ասում են, Գռնոն Դաղստանից շուն ա բերել, մենակ տենաս, ստեղ դրա հավասարը չկա, - խոսեց ինչ-որ մեկը, բայց արծագանքի չարժանացավ:

Կարմիր մեքենայի կիսաբաց դռան մոտ մի այլանդակ արարած էր խոճկորի պես ճղճղում: Շուն էր, բայց մի տեսակ արտառոց, ուրիշ, հոտն էլ էր անսովոր: Գլուխը մեծ էր, մարմինը՝ փոքր, մազը՝ կարճ, Չալուն էլ երկարամազ չէր, բայց սրա մազը շատ էր կարճ, կարճ ու կոշտ՝ խոզի մազի պես, ականջները համարյա ամբողջովին կրծած-պոկոտված էին, աչքը՝ ծաված-խեղված, դնչի տակի միջև կերված-սպիացած, էլի սպիներ ուներ՝ մռութին, գլխին, կրծքին, թաթերին... Էս ինչքա՞ն են ծեծել էս խեղճին... Սրան բերել են՝ որ ի՞նչ: «Չալո ախպեր, փող եմ դրել, վարի չտաս, խայտառակ չանես,

լսում ե՞ս, քու հետ եմ, երկար-բարակ չծգես, միանգամից կուտես-կարծացնես դրան»: Չալուն ցցեց երկու երրորդի չափով հատած պոչը, սրեց-տարուբերեց համարյա մինչև արմատ հատած ականջները, ճերմակի վրա դարչնագույն մեծ բծերով մորթու տակ մկանները ձգեց-խաղացրեց, փորեց հողը, մարտական թավ դռնոց արտաբերեց հզոր կրծքի միջից ու նայեց ճամփին... Մեքենա չէր երևում, ախտյան չկար... Ու՞մ ուտի-պրծացնի...

- Ջուլումը չոբան ա, ընգեր, Ջուլումով մի չափի,- նորից խոսեց ինչ-որ մեկը,- էսի պիտբուլ ա, էսի լրիվ ուրիշ բան ա, էսի ամերիկյան պարոդ ա, հատուկ կռվի համար ա ստեղծված, սրանց ջխտով գցում էին փոսը ու տարվողը փոսից էլ դուս չէր գալիս, սերունդ էր տալիս մենակ հաղթած շունը, սրանք ոչ վախ ունեն, ոչ ցավ են զգում, երկաթի պես բան են, գելի վրա քսի տվիր՝ եթում ա, արջի վրա քսի տվիր՝ եթում ա...

- Տո լավ, է՛,- ընդհատեց տերը,- ըստե՞նց հեքիաթներ շատ ենք լսել, մի հատ հլա դրան նայի, քսան կիլո հազիվ ըլնի:

- Քաշով չի:

- Քաշով էլ ա: Եթե Չալուն պտի էս ճիվաղին կրվի, լավ ա իմ ձեռով գյուլլեմ իմ շանը: Ու էլ չկոռաս, էղա՞վ:

Սև սպորտային կոստյում հագած դատավորը մոտեցավ, տիրոջ հետ կիսածայն խոսեց, տերը գլխով արեց, դատավորը շրջվեց ու ձեռքը բարձր թափահարեց կարմիր մեքենայի կողմը:

Ճիվաղին, փոկով մի կերպ գսպած, մոտ էին բերում. խոճկորային ճղճղոցը գնալով գլում էր, կարմիր լեզուն կախ էր ընկել, ժանիքը մերկացրած լնդերը դողում էին անհամբեր: Չալուն վերջապես հասկացավ՝ ուրիշ շուն սպասել պետք չի, սրա հետ է կռվելու: Վիթխարի գլուխը զարմանքից ծած՝ նայեց տիրոջը:

- Հա, էսի ա, Չալո, կեր-պրծցրու, ինչքան շուտ՝ էնքան մեր օգուտն ա,- ասաց տերը՝ շան ծոծրակի կաշին բռի մեջ հավաքած՝ ամուր պահած:

- Թողե՛ք,- հրամայեց դատավորը:

Այլ դեպքում Չալուն ընդառաջ կնետվեր ու կրծքով կխփեր հակառակորդին, հաճախ հենց այդ առաջին ընդհարումն էլ կանխորոշում է ով ով է, Ջուլումն, օրինակ, դիմացավ ու մինչև վերջ համառ կռիվ տվեց, իսկ Բաստրը տապալվեց, հետո ճիշտ է՝ շուտ ոտքի կանգնեց, իբր՝ սայթաթել եմ, բայց արդեն կռահել էր, որ պարտվելու է, հանուն տիրոջ էր կռվում, Չալուն էլ չշտապեց, թողեց խաղը մի քիչ երկարի: Իսկ հիմա ու՞մ խփի կրծքով... Իր կուրծքն՝ ուր, դիմացինինն՝ ուր... Անելիքը չէր գտնում Չալուն, մի քանի քայլ առաջ վազեց, կանգնեց ու սպասեց: «Ջոմբի, ֆա՛ս», - հրամայեցին ճիվա-

դին, ու նա ինքնամոռաց նետվեց Չալոյի վրա: Չալոյի արծազանքն ուշացած էր՝ ճիվաղը հաջողեց հարձակումը, նրա քառակուսի ծնոտը, ինչպես պողպատյա մեքենայի սարք, շխկալով փակվեց՝ իր մեջ առած Չալոյի բոխախը, որը եթե այդքան հաստ ու ընդարձակ չլիներ՝ չէր կարողանալու պաշտպանել խռչափողը հակառակորդի ժանիքներից: Չալուն թափ տվեց իրեն, բայց պոկել Չոմբիին չկարողացավ, հողերին քսելով առաջ տարավ, հետ տվեց, հարմարացրեց ու որսաց թաթը ծնկից վերև, սեղմեց ծնոտները, թուլացրեց, նորից սեղմեց... Ուրիշ շուն լիներ՝ ծվոցը գցել էր, պոչը քամակը կոխել, բայց սրա պետքը չէր: Չալուն քաշքշեց, թափ տվեց ու վերջապես պոկեց ճիվաղին իրենից, պոկեց ու շարտեց: Հողին հագիվ իջած՝ Չոմբին արդեն կողմնորոշվել էր՝ շրջվեց ու ետ սուրաց: Հանդիսատեսները հրճվանքից դժժացին: Բայց Չալուն այս անգամ ժամանակին փախցրեց իրեն և օդի մեջ խլեց ախոյանին իր սլացքից: Մոտ երկու րոպե ծամում էր գետնին գցած պիտբուլի վիզը՝ տակից, կողքից, վերից... Այնպիսի տպավորություն ուներ, ասես անվադող է ծամում՝ էն, որ տերը գցել է բնի մոտ ու երբեմն գլորում է հրամայելով՝ բռնի՛, Չալո: Նորից սեղմեց ծնոտները, նորից թափ տվեց ճիվաղին ու աչքի տակով նայեց տիրոջը, Չոմբիի տիրոջը, դատավորին՝ հը՞, պրծա՞վ, թողնեմ-տանե՞ք էս լեշը: Բայց չէր պրծել, նոր էր սկսվում. Չոմբին տակից հարմարացրեց, պտտվեց, առաջ մղվեց ու բռնեց Չալոյի ետնաթաթը: Այ քեզ ճիվաղ... Չալուն ուշացած ետ քաշեց, թաթը չեկավ, կալանվել-մնացել էր Չոմբիի երախտում: Ահավոր ցավից կատաղած՝ գամփռը շրջվեց, ճիզով հասավ ու հափռեց թշնամու աչք-ականջը: Որքան թաթի ցավն ուժգնանում էր, ծնոտներն այնքան ավելի ամուր էին սեղմվում, թվում էր՝ ախոյանի գլուխն ուր որ է ճթթալով կճաքի: Չոմբին վերջապես թողեց Չալոյի թաթը, որն արդեն դժվարությամբ էր հենվում հողին, սկզբում նույնիսկ վեր քաշվեց-կախվեց փորի տակ, հանգստացավ մի քիչ: Չալուն շարունակելով գլխից բռնած պահել՝ տարավ, բերեց, թավալեց ճիվաղին փոշիների մեջ ու թողեց էդպես: Հը՞, էլի ե՞ս գալու՝ հարցնում էր նրա ժանիքաբաց, թթակաթ երախտը: Բա չէ, մնալու եմ՝ արծազանքեց գետնից բարձրացող պիտբուլի մկանուտ, չոր գլուխը. եկավ՝ համարյա նույն եռանդով ու ոգևորությամբ, թեև արյունը ծորում էր աչքից, լցվում բերանը, մասամբ էլ կաթում գետնին, եկավ թափով, արգելակեց ու թեք կանգնեց Չալոյի քթի տակ. լնդերը դողում էին, առջևի թաթը, որի վրա մարմնի ծանրության շատ մասն էր, ջղացնցվում էր անհամբեր՝ գետնից կտրվելու պատրաստ, ցեխի ու արյան սվաղի միջից պլալացող աչքերը թիրախ էին փնտրում, վերջապես շարժվեց, բայց խաբուսիկ, շեղեց

գամփռի ուշադրությունը, ապա մյուս կողմից նետվելով՝ լիերախ հափռեց ականջը: Չալուն էլ անմասն չմնաց՝ բռնեց ախոյանի կուրծքը վզից քիչ ցած: Բայց ժանիքները կարգին չէին խրվում, շատ չոր, պինդ, մկանուտ էր ճիվաղի կուրծքը, ջանքի ապարդյուն վատնում էր, պետք էր ուրիշ թիրախ գտնել. Չալուն անուշադիր իր կալանված ականջին՝ թողեց ախոյանի կուրծքը, գլուխը թեև մեծ ճիզով, սակայն արագ իջեցրեց ու որսաց թաթը ծնկից ներքև, որսաց ու վեր հանեց: Չոմբիի մարմինը պրկված գալարվեց օդում՝ ձգնելով հարմար դիրքի գալ, բայց չհաջողեց, Չալուն պոկեց նրան իր ականջից, գցեց գետնին ու թողնելով թաթը՝ ծոծրակը բռնեց, ապա ծոծրակն էլ թողեց՝ ականջը չանթեց, հետո մռութը, հետո մեջքը... Թափ էր տալիս, խփում գետնին, բարձրացնում, նորից թափ տալիս՝ անխնայ ծախսելով եռանդը, ասես վերջն էր, էլ պետք չէր գալու: Տերը կողքից ոգևորում էր. «Ապրես, ապրես, վերջացրու դրան, թափ տուր, մի հատ էլ»: Չոմբին չէր պայքարում, թուլացած հանձնվել էր, նրա տերն էլ չէր գոռում, թե՛ «Խմի դրա արունը, սպանի դրան, Չոմբի՛», բայց տագնապած էլ չէր, հանգիստ նայում էր: Չալուն կարծեց՝ վերջ, պարտված է հակառակորդը, թաթը դրեց վրան ու հաղթական նայեց շուրջը: Սակայն պահ առաջ անշարժ ընկած պիտբուլի մարմինը հանկարծ պրկվեց-ուլորվեց Չալոյի թաթի տակ, դուրս պրծավ ու հարձակվեց: Ճիվաղը պինդ բռնել էր գամփռի վիզը կողքից՝ սեփական թաթը համենայնդեպս ետ քաշած-անհասանելի դարձրած, միակ հասանելի թիրախը կուրծքն էր թիակի մոտ, ուր Չալուն անհապաղ խրեց իր ժանիքները: Լարված մարտնչում էին: Համարյա անշարժ այս պայքարը երկար տևեց, ոչ մեկը զիջելու միտք չուներ: «Չբաժանե՞նք», - առաջարկեց դատավորը: Ենատերերը համաձայնեցին. յուրաքանչյուրը ետևից գրկեց իր շան մեջքն ու քաշեց: Չալոյին ծանոթ էր այս կարգը՝ թողեց ախոյանին: Չոմբին չէր թողնում: Դատավորը գրպանից հանեց փայտյա սեպը:

- Ատամները չջարդես,- գգուշացրեց Չոմբիի տերը:
- Առ, ինքը բացի,- դարձրեց դատավորը:
- Չէ, դու բացի:
- Ինչի՞, ինքը էլ ես քու շնից վախում:
- Ես բացեմ՝ ո՞վ քաշի:
- Դե քաշի,- ասաց դատավորն ու սեպը խրեց պիտբուլի ատամների արանքը, ուժ տվեց, էլի...

Վերջապես Չոմբիի ծնոտները հեռացան իրարից, նրան քաշեցին-մի կողմ տարան... Թթակոլով, ցեխոտ, արնոտ՝ ճիվաղն էլի անվրդով տարուբերում էր իր առնետային պոչը: Չալուն կատաղած էր, մկաններն անզուսպ դողում էին, խուլ, խռպոտ դողոցը գնում-

գալիս էր կոկորդով, ամբողջ էությամբ մարտի էր մղվում:

- Ղավայ, թողում ենք,- հրամայեց դատավորը:

Շներին թողեցին երկորոգ ռաունդի: Փոշի բարձրացավ նրանց թաթերի տակից, մարտը նոր թափով վերսկսվեց: Չալոն սովոր էր կռվել աչք-աչքի, ատամ-ատամի, կուրծք-կրծքի, իսկ կարճահասակ պիտրուլի սև-շագանակագույն զոլերով մարմինը ներքևում էր, օձի պես գալարվում էր, նետվում մերթ այս, մերթ այն կողմ՝ ահռելի գամփռին ստիպելով անսովոր մարտ վարել՝ գլուխն անդադար կախ, մարմինը հակած, թաթերը կիսածալ լարած:

Չալոյի շնչառությունը նկատելիորեն ծանրանում էր, մկաններն ուշացումով էին արձագանքում: Իսկ ճիվաղն աշխույժ էր ու առավել էր աշխուժանում՝ ախոյանի հոգնությամբ ոգևորված: «Քեզ քիչ մնաց», - ասում էին նրա թեթև, վստահ շարժումները:

Չալոն, լեզուն հանած հևալով՝ անշարժ հետևում էր ըմբշամարտիկի պես իր շուրջը պատվող Ջոնքիին, որը հարմար պահ էր ընտրում հարձակման համար: «Չալո», - տազնապած գոռաց տերը: Բայց Չալոն անարձագանք էր, շարունակում էր աչքի տակով հետևել ախոյանի շարժումներին. հասկացել էր՝ սրա հետ իր իմացած կարգով մարտ վարել չի կարելի, սա ուրիշ բան է, սա իսկի կարծես շուն էլ չի: «Սպանի դրան, Չալո, ուրիշ ճար չկա», - հուշեց տերը: Չալոն գլուխը թեքեց աղմկող հանդիսատեսների կողմը, իբր՝ ուշադրությունը շեղվեց: Ջոնքին չհապաղեց՝ նետվեց բացված, անպաշտպան վզի կողմը: Գամփռը սպասում էր դրան, վերջին ուժեղը հավաքած՝ փախցրեց իրեն ու կողքից՝ ընթացքի մեջ հափռեց ճիվաղի բաց վարդագույն փորը, որ միակ փափուկ, խոցելի տեղն էր նրա մարմնի վրա: «Իա՛, չոբանն էլ փորից խփի՞», - գարմացավ ինչ-որ մեկը: Չալոն սեղմեց ծնոտները: Ջոնքին խուլ ծվաց: Չալոն առավել սեղմեց ու թափ տվեց: Ճիվաղի փորը պատռվեց, արյունը պզզաց գամփռի մոտիքին: Գամփռը մեկ էլ թափ տվեց ու ախոյանին զգեց-թողեց գետնին: Գուրգեն արձակող աղիները ետևից քարշ տալով՝ Ջոնքին կանգնեց ու մերկատամ վրա եկավ: Սակայն Չալոյին չհասած՝ երերաց, փռվեց-մնաց հողերի մեջ:

Չալոն չկատարեց իր ծիսական պտույտը հաղթած ախոյանի շուրջը, ծանրաբայլ գնաց դեպի մեքենան: «Ապրես, Չալո ջան», - ասաց տերը՝ վզափոկը մոտ բերելով: Փոկն ու տիրոջն արհամարհած՝ գամփռը շարունակեց քայլել մեքենայի կողմը:

Շաբաթներ անց, երբ տերը նրան դարձյալ մարտի տանելու ուզեց, Չալոն մոտ չգնաց մեքենային, մնաց նստած բնի առաջ, նույնիսկ կամաց, հազիվ լսելի գոմռաց՝ դողացնելով լնդերը: Տերը գոռաց, քաշեց, քաշքշեց, բայց ապարդյուն. Չալոն այլևս կռվի չէր գնալու, չէր ուզում:

ԳԻՐ-ՂՈՒՇ

Ուսուցիչը հոգնել էր՝ էս աշակերտները գնում-գալիս, կառչկում էին ու միշտ՝ նույնը. «Ախր, ուստա, մենք սենց ամեն բան թողինք, ընգանք քու հետևից, ու էս ինչքան վախտ ա անապատներով քաշես տալի, կարող ա՞ գիդաս ուղտ ենք, ո՛չ խմածներս ա մի բան, ո՛չ կերածներս, ամիսներով կնիկ չենք տեսնում, բա էսի կյանք ա՞, որ մենք ապրում ենք: Չէ, բան չենք ասում, ուստա ես, վրեդ ահագին խելք կա, հարգում ենք, իսկականից հարգում ենք ու հլա սիրում էլ, բայց հետո՞... Բա մի բան չես ասելո՞ւ, կոնկրետ, մեր վերջն ի՞նչ ա, այսինքս՝ վերջը պարզ ա, վերջից էն կողմ մի բան ըլնելու ա՞, մի բանի տեր դառնալու ե՞նք, թե էլի՞՝ էս բոմժ վիճակը, երկինքներով էլ պտի էլի քաշ տաս էս կողմ, էն կողմ: Չէ, թե ազգին իսկականից պետք ա, մենք դուրբան, բան չենք ասում, բայց մեջներս մի քիչ կասկած կա, մի նեղացի, հլա քեզ մի թոպե դիր մեր տեղը, դիր ու մարդկայինով նայի»:

Ուսուցիչը լսեց, հայացքն իջեցրեց, որ բարկությունն ու տհաճությունը չերևա, փայտի պոչով հողը փորփրեց ու շվշվացրեց, իբր՝ ես հանգիստ եմ, ու էդպես հանգիստ էլ վերջում ասաց՝ «Լավ ա լինելու, տղերք, իզուր եք իրար անցել, հաստատ լավ ա լինելու, համենայնդեպս՝ էստեղի ամենալավից հազար անգամ լավ, քիչ մնաց, հեսա ես գնալու եմ, արդեն պարզ զգում եմ...»: «Վայ մեզ», - մղկտաց Պետրոսը: «Մի վրազի, ուստա, ո՞ւր ես վրազում», - ասաց Սիմոնը: «Միամիտ մի եղեք, իմ վրազել-չվրազելով չի, որ կանչում են՝ պիտի գնաս, օրենք ա: Ուրեմն, ի՞նչ էի ասում... Հա, ես որ գնացի, էնտեղ արդեն ամեն բան կպատրաստեն, ու որ դուք գաք, ես իմ Հոր կողքին նստած...»: «Ա՞ջ, թե՞ ծախ», - հարցրեց Թովմասը: «Ի: Պարզ չի՞, որ աջ: Ու դուք որ գաք, ձեզ ամենալավ ձևով կդիմավորենք»: «Լավ ա», - ասաց Թադևոսը: «Չէ, բայց հարց կա, - ասաց Թովմասը: - Բա որ հանկարծ, աստված ոչ անի, ես քեզնից շուտ գնամ ընդե, բա մի նշանաբան չկա՞, որ Հորն ասեմ, իմանա՞՞ քեզնից եմ էկել»: «Ձեզնից ոչ ոք ինձնից շուտ չի գնալու, ես դա գիտեմ»: «Բայց խի՞ ես էդքան վստահ, է՛, քարից ընկնել կա, օձի կծել կա...», - համառեց Թովմասը: «Լինելու բան չի, ես եմ ձեզ ասում: Չհասկացա, - հանկարծ վրոդովվեց ուսուցիչը, - կարող ա՞՞ ձեր աչքի առաջ չէր, որ ջրերի վրայով գնացի-էկա, կամ էլ՝ որ էն քոռին տեսնել տվի, բա էն Ղազարի գո՞րծը... Չեք հիշո՞ւմ արդեն... Արա դուք լրիվ հաբրգել եք, Հորս արև: Չէ, ես ձեզնից ձեռ եմ քաշելու, թագա

թիմ հավաքեն»։ Հիտուը զայրացած-տիրական հայացքի տակ պահեց նրանց. աշակերտները լռեցին, գլուխները կախ գցեցին, կծկվեցին-մի բուռ դարձան։ «Հանգստացեք, ամեն բան լավ կլինի, էդ ես եմ ձեզ ասում՝ Քրիստոսը», – ասաց ու մտերմիկ թխփացրեց մոտիկ կանգնած աշակերտի ուսը, մյուսներն էլ իրենց ուսերը կամաց մոտ բերին։ Խաղաղվեցին տղերքը. իհարկե, մի քանի օրից, նույնությամբ տազնապած, էլի գալու էին, բայց հիմա լրիվ խաղաղվեցին, նույնիսկ՝ Թովմասը։ Եվ միայն Հուդան չխաղաղվեց, թեև արտաքննապես չէր մատնում իրեն. մի քանի քայլ հեռացավ ու փնթփնթաց քթի տակ. «Չէ, ախպեր, էսի մեր գլուխը հարթուկում անոց որ, հա, էսի մեզ հաստատ կքաշի. եղունգ ունես՝ գլուխդ քորի, Հուդա ջան, իսկը ժամանակն ա»։

Էդպես, տասնմեկը խաղաղված, մեկը՝ չէ, պառկեցին քնելու ձիթենիների պուրակի հողերին։

Երբ Հուդան տարբերեց-հաշվեց տասներկու խռմփոց, աննկատ վեր կացավ ու փափկաքայլ գնաց քաղաք՝ ուղիղ Կայափայի դուռը. այսինքն՝ ի՞նչ ուղիղ, հակառակը. վերից ու վարից, աջից ու ձախից՝ բոլոր նեղլիկ, ծուռտիկ փողոցներով գնաց-եկավ, մի փողոցով՝ կաղի պես, մյուսով՝ կծկված, երրորդով՝ դիք-ուղիղ... Երբ մոտեցավ դռանը՝ կույրի նման փայտով հարվածում էր գետնին ու պատերին։ Ներս թողին։ Կայափան կիսաքուն էր՝ երկու աչքով ծուլացավ նայել, մերթ մի աչքով էր նայում, մերթ մյուս. հարցրեց. «Խեղ լինի, լուսը չբացված՝ էս ի՞նչն է բերել ձեզ, հարգարժան Հուդա»։ «Իմացա՞ մեր ուսուցչին փնտրում եք...»։ «Ձեր ուսուցչի՞ն... ո՞վ է»։ «Ղե, էն Հիտուսն, էլի»։ «Փնտրել ե՞նք, – հարցրեց Կայափան քիչ հեռու կանգնած քահանային. վերջինս գլխի շարժումով հաստատեց։ – Ասա, – դարձյալ Հուդային նայեց Կայափան»։ «Ասեմ. եթե ինձ լավ նայեք՝ տեղն էլ, իրան էլ ցույց կտամ ձեզ, վերցրեք-տարեք», – ասաց Հուդան՝ թեթևացած մտածելով, որ դժվարն անցավ։ «Այ քեզ միամիտ մարդ, – կեսբերան ծիծաղեց Կայափան՝ վերջապես բացելով զույգ աչքերը, – ուրեմն քեզ թվում ա, թե մենք իրան ու իրա տեղը չգիտենք, հա՞... Ուզո՞ւմ ես ասեմ՝ հիմա դու նրան թողել ես էն տափակ բլրի լանջին, ծիթենիների պուրակում, ծառի տակ քնած»։ «Ի...», – զարմացավ Հուդան։ «Բա», – ծաղրեց Կայափան։ «Բա որ՞ բա, բա ինչի՞ չեք վերցնում»։ «Սպասում էինք՝ մատնություն լինի, ներսից, էս ա՛՛ եղավ։ Անկեղծ ասեմ՝ կարծում էինք առաջինը Թովմասը կլինի, բայց նա մինչև կգցեր-կբռներ, դու ավելի շուտ հասկացար՝ ինչը, որտեղ ու ինչի»։ «Ուրեմն ես ձեզ պետք եմ», – ուրախացավ Հուդան։ «Հա։ Բայց մեծ վարձատրության հույս չունենաս»։ «Ղե, գոնե... մի հարուր...», – ծամծմեց Հուդան։ «Չէ հա, – քմ-

ծիծաղեց Կայափան, – ամեն մի քրջոտ խելքը գցածի համար որ էդքան ծախսի տակ մտնենք, մեր գանձարանը միշտ դատարկ կըլնի. դու գանձապահ ես, չէ՞, կհասկանաս»։ «Բա ինչքա՞ն», – լարվեց Հուդան։ «Ղե, մի... երեսուն, էլի, հա, երեսուն, լավ գին ա»։ «Գոնե երեսունհինգ», – համառեց Հուդան։ «Երեսունհինգ... – Քահանայապետը քրքրեց քսակը, հաշվեց, ասաց. – Երեսուն, էս ա, մեր վիճակն էլ վիճակ չի, տեսնում ես, վերջինն եմ տալիս, կուզես՝ ուզի, չէ՞ թող գնա»։ «Լավ, տուր», – համաձայնեց Հուդան։ «Դուք-ով խոսի, այ տղա, հորոխպերդ չես, – կշտամբեց Կայափան։ – Քսակը թող, քոնը միջինն ա։ Ըհը։ Ղե հիմա գնա»։ Կայափան թիկունքը հենեց բարձերին ու փակեց աչքերը։ Քնեց։

Հուդան դուրս եկավ, թեքվեց՝ մի խուլ-ապահով փողոց մտավ, լուսնի լույսով հաշվեց փողերը, համոզվեց՝ չեն խաբել։ Հա, բայց չպայմանավորվեցին, բիծեն անմիջապես քնեց... Հիմա հո հետ չի՞ գնալու... Չէ, իհարկե։ Դրան մի անգամ էլ արթնացնի՞ վայ թե ծեծեն։ Վերջապես թող իրենք մտածեն, պետք եղավ՝ կգտնեն։

Ու էսպես, ահագին փող շահած մարդու թաքուն ոգևորությամբ, Հուդան քայլեց գինետուն. ինչ-ինչ՝ բայց գինետան տեղը լավ գիտեր, գինետան ու քահանայապետարանի։ Իհարկե, դարձյալ պտտվեց տարբեր փողոցներով, մի անկյունում նույնիսկ փող մուրաց երկու մութ կերպարանքներից, տարօրինակ էր՝ նրանք տվին ինչ-որ բան, և Հուդան, թիկնոցով փաթաթված, վերջապես հրեց գինետան դուռը, որի փայտը ներծծված էր գինու և կերակուրների գոլորշիներով։ Կիսախավարում երկու քնած կերպարանք տեսավ, մեկը՝ վաճառասեղանի ետևում, մյուսը՝ սեղաններից մեկի. այս երկրորդն իրեն պետք չէր և փառք աստծո՝ չարթնացավ էլ, իսկ առաջինն ի պաշտոնե բացեց աչքերը, վերցրեց փողը, լցրեց գավաթը ու դարձյալ քնեց, բայց՝ աչքերը կիսախուփ, ի պաշտոնե, և այդ կիսախուփը լրիվ խուփ եղավ՝ երբ Հուդան, գինին խմած, դուրս եկավ և չափազանց զգուշավորությունից կշռույթը հաճախ փոփոխող իր քայլերի դոփյունը հեռացրեց մինչև անլսելիություն։

Քանի դեռ մութն իշխում էր, գնաց ընկերների մոտ։ Բոլորը քնած էին։ Ինքն էլ պառկեց։ Բայց քունը չէր տանում։ Մտածեց, որ պատճառը լիպուսինն է, հետո էլի մտածեց, էլի ու ասաց ինքն իրեն՝ «Տո, դե լավ, է՛, Հուդա ախպեր, շատ էլ լավ ես արել, հեջ դարդ մի անի, հո դու էլ սրանց նման հարի՞ք չե՞ս... Սրանց ասում ա՝ ամեն ինչ թողեք - իմ հետևից էկեք, ասում ա՝ ամեն ինչ լավ կլինի, բայց՝ հետո, երբ ուտներդ ձգեք, ասում ա՝ հերս անհամբեր ձեզ ա սպասում, ասում ա՝ դուք էլ իմ ծախ, չէ, աջ կողմը կկանգնեք, սրանք էլ ականջները կախում են ու սեպերը քշտում, մի վախտ հետո ուշքի են

զալիս, էլի գնում-մկկում, նա էլ նորից քննում-ուղարկում ա: Բայց դե դու էլ հո նրանց թայը չե՞ս, Հուդա ախպեր, դու ստեղ կոնկրետ գործի վրա էկար, չէ՞, ըհը, էկել ես զանծապահ աշխատես, չէ՞, ըստից-ընդից փող հավքես, չէ՞, ըհը, մի էրկու կոպեկ էլ փախցնես-ջեբդ գցես... Հենց էլ՝ հա, բա ո՞նց, բանող եզան բերանը չես կապի, օրերով էս գծերի հետ անապատներով թրև եմ զալի, սրանց գլխում՝ թիթեռներ ու ծտեր, իմ գլխում՝ թվաբանություն, հազար ու մի դարդ ունեմ, տունս տուն չի, թագա տուն պտի սարքեմ, պտի պսակվեմ, բա ո՞նց, մի կարգին, նամուսով աղջիկ բերեմ՝ ինձ էլ նայի, մորս էլ, խեղճ մամա, լրիվ պառավել ա, էհ... Եսպես, էլի: Բա հո չե՞մ թողնի գլուխս մուֆթա ուռցնի էս ուսուցիչը, էսի այսր լրիվ ֆազերը գցած ա, մենակ ես չեմ ասում, իրա ծնողն էլ ա ասում, տո հենց սաղ աշխարհն ա ասում, ախպեր: Էն ազարկին ավելի ա հարգում ու սիրում, մենակ տենաս ոնց ա քնքշանում, շոյում՝ «Մարիամիկ ջան, քուր ջան, կյանք, էնքան մորս նման ես... Ո՞նց ես, հեչ ի՞նչ արիք աղջկերքով, ո՞ր գյուղը մտաք, ո՞ւմ համոզեցիք, հո խաթրիդ չկապա՞ն, գիդաս, չէ՞, ամեն օր քու փրկության համար աղոթում եմ Հորս, կծեմ էն սիրուն թշերդ»: Դզիկ, անլուրջ մարդ: Մի օր քնից հելնում ա, հերթով սաղիս մագերը շոյում, ժպտում, թե՛ սիրեք իրար, էտի կփրկի աշխարհը. ասում ենք՝ էդավ, սիրեցինք, վարպետ: Է, մյուս օրն էլ թարս ոտից ա հելնում, թե՛ լրբի տղեք, քացու տակ եմ գցելու սաղիդ, բա չէ, գիդաք էկել եմ սիլի-բիլի անեն հետներդ: Էդպես կատաղած գնում ա քաղաք, ստեղ-ընդեղ կռիվ գցում... Էն օրը քարերով վրա տվին, ինքը ցվրվեց, ինձ քիչ մնաց քրքրեն, հագիվ համոզեցի, թե հիվանդ մարդ ա, ինձ դրել են հետը հիվանդապահ, որ նայեմ՝ չվատանա... Աչքիս տակ կապտացրին՝ ուղարկին: Չէ, էտի ազգիս գլխին մի փորձանք ա բերելու, հաստատ, էնքան ա անելու, մինչև հռոմեացիք կատաղեն, զաթի մահանի են սպասում, վրա տան՝ ազգս սրի քաշեն: Բա տենց ճիշտ կլնի՞... Բա հիմա լավ չի՞ մի խելառ կորի, քան թե՛ ազգս... Չէ, ամեն բան ճիշտ ես արել, Հուդա ջան, հեչ դարդ մի անի, հեչ: Դե քնի, ախպեր ջան, քնի, խելոք ջան, քնի-հանգստացի, սիրուն ջան, դեմդ իլա եքա կյանք կա ապրելու»:

Մտածեց, խաղաղվեց ու քնեց Հուդան: Ժամանակ առ ժամանակ արթնանում էր, նույնությամբ, բայց արագացված՝ էլի մտածում ու էլի քնում. էսպես, մինչև լուսաբաց:

Լուսաբացին աչքերը բացեց, տեսավ ուսուցիչը բարձրացող արևն իրենով փակած-փոխարինած՝ նայում է աշակերտներին ու երանելի ժպտում, ինչպես չոբանն իր մաքիներին: «Ըհը, դե արի համբերություն բեր ու սրան դիմացի, Հուդա ախպեր»,– մտածեց

Հուդան: «Բարլուս, ուստա»,– ասաց: «Բարևն Աստծուն, աշակերտ,– պատասխանեց ուսուցիչը՝ շարունակ ժպտալով:– Վերկաց, Հուդա ջան, ազիգ, բերաններս չորացավ, ծարավ մեռանք, մոտդ փող կլնի...»: «Չկա»,– ընդհատեց Հուդան: «Դե լավ, հա, ագահություն մի անի, քու մոտ միշտ էլ մի բան ըլնում ա, հանի գիրդուչ գցենք, տենանք ով ա գնում գյուղ՝ հաց ու գինի բերի: Դե վերկացեք, այ թամբալներ, վեր, վեր»:

«Ըհը, դե արի ու...»:

ԿԻՍԱՎԵՐ ՏԱՆ ՊԱՀԱԿԸ

Եվ հիմա, ահա, կանգնած եմ այստեղ, այս... Սակայն չչտապենք, քանի որ իրադարձությունը, կարծում եմ, արժանի է՝ որպեսզի պատմեմ սկզբից ու հանգամանորեն, որքան էլ անհամբեր լինեմ:

Առավոտյան իմ զուգարանը լքված տան մեծ սենյակն է. մի անգամ պատահաբար հայտնաբերեցի բետոնե սալերով ցանկապատված այդ կիսավեր տունը, հավանեցի և այնուհետ սկսեցի ամեն օր հաճախել: Առհասարակ, շուտ վարժվող ու սովորություններիս գերին դարձող խառնվածք ունեմ: Եթե, ասենք, երկու օր, վրա-վրա, նույն սրճարանում խմեմ առավոտվա գինիս, երրորդ օրը ոտքերս իրենք իրենց ինձ քարշ կտան այնտեղ: Օրինակը թեև բնորոշ, սակայն անշուշտ հնացած է. վաղուց արդեն սրճարաններում չեմ խմում, սրճարանային հավելավճարը, ինքներդ եք հասկանում... Սակայն չչեղվեմ, այլապես... Միտքս շատ է անզուսպ ու կամայական, եթե ազատ թողնեմ՝ կարճ ժամանակում այնպիսի հեռուներ կտանի, որ շուտ վերադառնալ չեմ կարողանա: Եվ հետո, ցավեցնող են այդ հեռուները, այնպիսի զգացողություն եմ ունենում, կարծես միտքս ինձ մերկամարմին՝ փշերի վրայով է քարշ տալիս: Սակայն դարձյալ չեղվում եմ, չի կարելի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի մասին խոսելիս՝ չոշափել նաև ամբողջը: Ուստի դառնամ վերջին դեպքերին, որոնք ինձ համար, կարելի է ասել, շրջադարձային եղան, որովհետև այժմ, ահա, կանգնած եմ այստեղ, այս... Դարձյալ առաջ ընկա... Եղբայր, մի՞թե չես կարող զսպել քեզ, սա ի՞նչ կամազրկություն է:

Օրեր առաջ էր, ուրեմն, եթե ստույգ՝ չորս օր առաջ, առավոտյան վաղ արթնացա, փորս ցավում էր, ուռել ու ցավում էր. ատամների սակավությունը սովորաբար առատ գազագոյացման պատճառ է դառնում, եթե, իհարկե, ինչ-որ բան ուտում ես: Արթնացա և դուրս սողոսկեցի թփերի միջից՝ ստիպված հրելով ընկերներիս մարմին-

ները, այո, մարմինները, որովհետև, երբ գիշերային գինարբուքից հետո այսպես իրար գլխի թափված-քնած են՝ մարմին են, ուրիշ ոչինչ, կուզես հայհոյիր, կուզես գրպանները դատարկիր, ոչ կլսեն, ոչ կզգան: Լավ ասացի՝ գրպանները դատարկիր. ավր նրանց գրպանները, եզակի բացառությամբ, միշտ դատարկ են, հատկապես առավոտյան, եթե առհասարակ գրպան մնացել է այդ քրքրված հագուստների վրա: Օրինակ, ինձ համար օգտագործելի էր բաձկոնիս միայն մեկ գրպանը՝ ներքին ձախը, ինչը հուշում է, որ բաձկոնի նախկին տերը ձախլիկ է եղել: Ի դեպ, հետաքրքիր է, ո՞նց է հիմա այն բարի մարդը, ի՞նչ է անում, կա՞, չկա՞... Ցավալի է, սակայն բաձկոնները մեծամասամբ իրենց տերերից երկար են ապրում: Ինչևէ: Դուրս սողոսկեցի, ուրեմն, ստուգեցի շուրջը թափված շշերը, որոնք, ավաղ, դատարկ էին, խոտերի մեջ սիգարետի մի կարգին մնացուկ գտա, մտքի բերանս ու ելա փողոց: Մնացուկը կարող էի շուտ վառել, բայց ես սիրում եմ սենյակում պազած ծխել, պրոցեսին համընթաց՝ այսպես ասած: Վերջապես հասա ցանկապատին և նոր միայն անցնող մեկից կրակ խնդրեցի: Նա նայեց ճմրթված մնացուկիս, գրպանից հանեց տուփը, բայց չմեկնեց ինձ, ինքը միջից սիգարետ հանեց ու տվեց, ինքն էլ չթթացրեց հրահանը: Հասկանում եմ, ձեռքերս կեղտոտ էին, բայց մարդիկ սովորաբար զուգարանից հետո են լվացվում, այնպես չէ՞:

Պազել էի կոնքի վրա, ծխում էի: Փորկապ էի, կարմիր գինուց միշտ փորկապ եմ ունենում: Չեմ սիրում կարմիր գինի, բայց միշտ չէ, որ սիրած խմիչքն է ընկնում ձեռք, մեծամասամբ՝ հենց հակառակն է լինում: Ես, օրինակ, ծիրանի օղի եմ սիրում, բայց դա ուրիշ պատմություն է: Այդպես պազած ծխում էի ու մտածում կյանքի, մարդկության, աշխարհ մասին: Մտածում էի, թե որքան աննկատ է մարդ սկսում գլորվել, հերիք է թեկուզ մի պստիկ բան գիջես, մի թեթև սայթաքես՝ անկումդ սկսված է, արտաքնապես գուցե դեռ նկատելի չէ, բայց ծնագունդն արդեն գլորվում է: Դե իսկ եթե գլորվեցիր՝ նորից կանգնելը շատ դժվար է: Այդպես մտածում էի, առհասարակ սիրում եմ մտածել, երևի իմ ամենասիրած զբաղմունքն է: Երբեմն, երբ մի քիչ փող է ընկնում ձեռս, խմիչք եմ վերցնում, ծխելիք և իջնում ձորը, մենակ նստում եմ ծառի տակ, կամաց-կամաց խմում, ծխում ու մտածում: Իսկ երբ վերադառնում եմ մերոնց մոտ, նրանք այնպիսի կասկածանքով են նայում, կարծես անձնական կյանքի իրավունքից զրկված եմ: Վրդովեցուցիչ է: Սակայն դառնանք այն օրվա դեպքերին: Գործս ավարտել և արդեն պատրաստվում էի վեր քաշել շավարս, երբ հանկարծ հայտնվեց նա: Ուղղեց համազգեստը, ձեռքն առավ գոտուց կախ ռետինե մահակը

և խրոխտ կանգնեց դռների մեջ: Իմ կողմը չէր նայում, ասես չէր նկատում: Որոշ ժամանակ մնացի այդպես կիսանստած-կիսականգնած, հետո վերջապես սթափվեցի ու քաշեցի շավարս: Դուրս չեկավ, մտածեցի՝ սրա հետ գլուխ դնել չարժի, սուսուփուս մոտեցա դռանը, որ դուրս գամ: Իսկ նա մահակը սպառնալի պտտեց ու հրամայեց՝ «Ետ դարձ: Ետ գնա, քեզ եմ ասում, է՛յ»: Համենայնդեպս ընկրկեցի ու հարցրի. «Բայց ինչու՞»: «Որովհետև սա պահակակետ է, և ես այստեղ պահակ եմ կարգված», հպարտ պատասխանեց նա: «Հավանաբար շփոթել եք, սասացի, սա արդեն վաղուց լքված, կիսավեր տուն է, ի՞նչ պահակակետ»: «Բացատրություններ տալու լիազորված չեմ, կտրեց նա, սասացի պահակակետ է և վերջ, ավել-պակաս չխոսես»: «Համաձայն եմ, գիջեցի ես, պահակակետ է, ուստի թույլ տվեք լքել ձեզ վստահված տարածքը»: «Ո՛չ մի դեպքում: Հրամայված է՝ ոչ ոքի չթողնել»: «Ներս չթողնել՝ դա հասկանալի է, բայց դուրս...», համառեցի ես: Սակայն նա անհողդողդ էր. «Չեն ճշտել, ուրեմն՝ ո՛չ ներս, ո՛չ դուրս: Ես անում եմ այն, ինչ հրամայված է, պա՞րզ է»: «Պարզ է, սասացի՝ զգալով, որ համառելն անիմաստ է: Եվ որքա՞ն պետք է մնամ այստեղ»: «Մինչև պահակության ավարտը», չոր պատասխանեց նա: «Իսկ դա, ներեցեք, որքա՞ն է, եթե գաղտնիք չէ»: «Որքան սահմանված է: Եվ չփորձես ինձ համոզել կամ կաշառել, կպատժեմ, ծայնդ կտրած նստիր»: Այ քեզ փորձանք՝ մտածեցի, աստված գիտի որքան՝ ծարավ նստել այս խելագարի կողքին... Իսկ ընկերներս երևի արդեն արթնացել, դուրս են եկել գործի, «սանրում են» մոտակա փողոցները, իսկ այն երկուսը, որ դժվարանում են քայլել, մեկը սաստիկ հոդացավ ունի, մյուսը արնածոր հեմորոյ, զբաղեցրել են իրենց անփոփոխ տեղերը՝ զբոսայգուն հարող մայթի երկու ծայրերում, ցանկապատի տակ, ճմրթված գլխարկներն առջևները դրած: Ես սովորաբար խաչմերուկներում եմ աշխատում. ընտրում եմ լուսացույցի տակ կանգնած մեքենաներից առավել հավատ ներշնչողը, մոտենում և նայելով «զոհիս» ուղիղ աչքերին՝ ասում, չեմ խնդրում, չէ, պարզապես ասում եմ. «Կներեք, այնպես ստացվեց, որ այսօր փողի խիստ կարիք ունեմ, օգնեք, եթե ի վիճակի եք»: Հաշվել եմ՝ երեք-չորս մոտեցումներից մեկն արդյունավետ է լինում: Հետո կանանց կուղարկեն գինու՝ մտածեցի, իսկ ես այստեղ կալանված եմ մի ինչ-որ ապուշի կողմից: Պատմեմ՝ չեմ հավատա: Ճար չկար, լուռ նստեցի քարին: Աչքի պոչով նայում էի նրան: Վրդովմունքս անսահման էր: Սակայն ստիպված էի խոստովանել, որ համազգեստը սագում է այդ խենթին: Բոլորովին նոր համազգեստ էր՝ ճռճռա սապոգներ, շողշողացող ճարմանդներ, կոճակ-

ներ... Տեսնես որտեղից է ձեռ գցել: «Ի՞նչ ես էդպես նայում», - հարցրեց նա՝ որսալով հայացքս: «Երևի նոր եք մտել ծառայության, այո՞», - ասացի: «Քեզ ի՞նչ, - կտրուկ բորբոքվեց նա: - Վեր կաց, վեր կաց ասում եմ: Նստել է էստեղ ու ավել-պակաս դուս է տալիս: Վեր: Իսկ հիմա՝ վազքով մարշ: Դե՞...»: «Աստծու սիրուն, - ասացի, - ես հիվանդ սիրտ ունեմ, վազելն ինձ հակացուցված է»: «Ձայնդ կտրիր: Հրամայված է՝ վազքով, ուրեմն կատարիր», - գոռաց գիժն ու մահակով հարվածեց մեջքիս: Ճարահատյալ վազեցի: «Շրջանը լայնացրու: Այդպես: Ավելի արագ, արագ», - հրամայում էր նա ու ժամանակ առ ժամանակ խփում ուսերիս, մեջքիս: Սկսեցի շնչակտուր լինել, հազալ, փռշտալ: «Լավ, - ասաց, - հիմա քայլիր, ձեռքերդ դիր մեջքիդ ու քայլիր»: Քայլեցի: Վազելուց հետո քայլելը նույնիսկ հաճելի էր: Բայց քիչ անց նորից վազքի հրաման հնչեց: Այդպես, մերթ քայլում էի, մերթ վազում: Կեսօրին հոգեառու մի մեծ քար բերեց դռան մոտ, թաշկինակը փռեց ու նստեց: «Ճաշի ժամն է», - ասաց և կանաչ քաթանե պայուսակից, ուր նաև հակագազն էր, մի մեծ բուտերբրոդ հանեց: «Կարո՞ղ եմ նստել», - հարցրի, որովհետև շարունակում էի վազել: «Ո՞նց կուզես, - ասաց, - կամքը քոնն է»: Նստեցի շրջանակից գուրկ պատուհանի գոգին: Սարսափելի հոգնել էի: Չէի կարողանում հիշել, թե վերջին անգամ երբ էի այդքան վազել, հավանորեն՝ երբեք: «Հանկարծ չփորձես փախչել, - պատուհանն ակնարկելով զգուշացրեց նա, - մեկ է՝ կբռնեն»: «Իսկի մտքովս չի էլ անցնում, - ասացի. իսկապես չէր անցնում: Նա ախորժակով չփչփացնում էր: Իսկ ես շրջվել ու դուրս էի նայում: «Էյ, բռնի», - կանչեց ու նետեց հացի կտորը. երևի կշտացել էր: Ես մինչև գոնե մի բաժակ չխմեմ՝ ուստի չեմ կարող, բերանս թուք չի գոյացնում, բայց կերա, որպեսզի չբարկացնեմ նրան: Հացից երշիկի հոտ էր գալիս: Ինքը, պատին հենված, ծխում էր: «Սիգարետ չե՞ք հյուրասիրի», - խնդրեցի: «Անմիջապես երևում է, որ պրոֆեսիոնալ մուրացկան ես, - ասաց: Քիչ հետո գցեց ծխացող մնացուկը. - Ա՛ռ, ծխիր, քանի բարի եմ»: Տանել չեմ կարողանում, երբ այդպես թքոտում եմ սիգարետի պղջը, անձամբ ես, օրինակ, բացարձակապես չոր եմ ծխում: Ծխում էի ու մեկ-մեկ նայում նրա համազգեստին: «Ի՞նչ է, դուրդ գալի՞ս է», - հարցրեց: «Այո, հրաշալի համազգեստ է», - խոստովանեցի ես: Ինքնագոհ ժպտաց, ապա նայեց սապոզներին: «Սապոզներս փոշոտվեցին քո պատճառով, - ասաց, - Փալաս-փուլուս չկա՞՞ էդտեղ»: Բետոնի կտորտանքի տակից մի ճղրտած թաշկինակ գտա ու տվի նրան: Չվերցրեց. «Ինչու՞ ես տալիս, մաքրիր, դուրդ գալիս եմ սապոզներս, չէ՞»: Ենթարկվեցի, ի՞նչ կարող էի անել, կատարյալ գժի հետ գործ ունեի: Մաքրում էի սապոզները, քիթս ակամայից որսում

էր թարմ կաշվի հոտը: Պատանեկությանս երազանքը հանկարծ հստակորեն պատկերվեց մտապատկերիս մեջ՝ ես գեներալ եմ, չէ, մարշալ եմ, կանգնած եմ բարձր հարթակին, ցածում՝ բազմահազարանոց բանակն է՝ ձիգ շարքերով, անշարժ, անձպուտ, սպասում է հրամանին, կուզեմ՝ աջ կուղարկեմ, կուզեմ՝ ձախ, կուզեմ՝ թշնամու դեմ, կուզեմ՝ երկու մասի կբաժանեմ ու իրար դեմ կհանեմ, ինչ ուզեմ՝ կանեմ, ամեն բան միայն ինձնից է կախված, իմ հրամանից: Մտքերով տարված՝ չէի նկատել, որ շոյում եմ նրա շողշողուն ճարմանդը, կոճակները: Նա հանկարծ կոպտորեն հրեց, ասելով՝ «Է՛, է՛, ու շքի արի, ես այդպիսի բաներ չեմ սիրում»: Անմիջապես կռահեցի, թե ինչ անցավ խելառի մտքով, ուզում էի բացատրել, բայց չթողեց ձայն հանեմ, «Ընդմիջումն ավարտվեց, ոտքի՛, վազքով մարշ», - գոռաց: Վազեցի արդեն սովոր շրջանով, ի՞նչ անեի, անասունի հետ հո գլուխ չէի՞ դնելու: Երրորդ, թե չորրորդ շրջանն էի վազում՝ հանկարծ զգացի, թե ինչպես է գոյանում իմ մեջ այդ արտառոց զգացողությունը: Առաջ անցնելով ասեմ... Բայց ոչ, չարժե առաջ անցնել: Ուրեմն, ինչպես ասացի, պարզորոշ զգացի այդ արտառոց հոգեկան շփոթը, որը, սակայն, կարճ տևեց, որպեսզի կարողանայի հասկանալ, և հետո այդ ապուշն անդադար գոռում էր, չէր թողնում կենտրոնանամ. «Արագ, ավելի արագ, ոտքերդ բարձր, կանգ չառնել...»: Ի վերջո անուժ փռվեցի հատակին և ասացի՝ «Ինչ կուզեք, արեք, այլևս չեմ կարող, մեռնում եմ»: «Չես մեռնի, - ասաց, - հինգ րոպե հանգիստ և նորից վազք»: Սիգարետ ուզեցի, չտվեց. «Չի կարելի, - ասաց: - Կտրուկ դադարն էլ է հակացուցված, վեր կաց, քայլիր»: Քայլեցի ճարահատյալ: Բայց իրավացի էր խենթը, այդպես շունչս ավելի հեշտ տեղը եկավ: Դրսում արդեն մթնում էր: Նա նայեց ժամացույցին և նկատելի ափսոսանքով հրամայեց. «Կանգ ա՛ռ: Վերջ: Ես գնացի, մնաս բարով», - ապա շրջվեց ու հեռացավ: Պատուհանից հետևեցի, մինչև չքվեց փողոցի ծայրում, և ինձ անմիջապես գցեցի գրոսայգի: Լավ էր, ընկերներս երեկոյան բաժին գինու վերջը չէին տվել դեռ. մի շնչով դատարկեցի շշում մնացածը: Տարակուսած նայում էին: Ասացի՝ «Փորձանք պատահեց, ոստիկանություն ընկա»: Ոչ մեկին չպատմեցի եղելությունը, չգիտես ինչու՝ համոզվածություն կար մեջս, որ չպետք է պատմեմ: Իսկ առավոտյան, ոտքերս իրենք տարան ինձ դեպի լքված տունը: Իհարկե, կարող էի ավելի վաղ գնալ և մինչև նրա գալը գործս ավարտել-հեռանալ: Սակայն, անկեղծ ասած, ուզում էի տեսնել նրան. համատեղ անկացրած մախորդ օրն արել էր իր սև գործը: Այո, գուցե տարօրինակ էր, բայց այդպես էր՝ ուզում էի տեսնել հոգեառիս, անկարող էի հակառակվել ցանկությանս: Ինձ նաև շատ հետաքրք-

րում էր՝ գալու՞ է գիժը, թե՞ այնուամենայնիվ ինչ-որ բան շփոթել էր: Եկավ: Ճիշտ ժամին: Ես ժամացույց չունեմ, սակայն փողոցին ու երկնքին նայելով անսխալ որոշում եմ ժամանակը: Եկավ ու կարծես չգարնացավ ինձ տեսնելով, թեև ասաց՝ «էլի՞ այստեղ ես, անտեր շուն»: «Ինքը ես շունը», - մտովի պատասխանեցի ես, և դա երևի տպվեց դեմքիս, որովհետև կտրուկ խոժոռվեց ու գոռաց՝ «Աջ դարձ: Չախ դարձ: Աջ ուսն առաջ՝ քայլով մարշ: Վազքով մարշ»:

Մինչև կեսօր վազում էի, քայլում, նույնիսկ փորսող տվի՝ անիծելով բախտս: Փորսող տալիս անցյալս էի հիշում. երբ խրվում ես հիշողությունների մեջ՝ չարչարանքները հեշտ ես տանում: Հիշեցի պատանեկությանս երազանքները, ուրիշ բաներ, և հենց նայեցի նրան, - ուզում էի տեսնել համազգեստը՝ հիշողությանս որոշ մանրամասներ ճշգրտելու համար, - հոգեկան այն արտառոց շփոթը կրկնվեց, այս անգամ՝ շատ ավելի հստակ, ինձ հանկարծ պարզորոշ թվաց, թե ես ես չեմ, այլ՝ ինքը, իսկ ինքը ինքը չէ, այլ՝ ես: Նախկինում պատահել է, որ ուրիշներին նայելիս հանկարծ մտածել եմ, թե ինչու՞ եմ ես, այլ ոչ այն անցորդը, պաղպաղակ վաճառողը կամ ոստիկանը, այո, ինչու՞ եմ ես, այլ ոչ մեկ ուրիշը, ի՞նչն է, որ ինձ համոզում է ասել՝ ես ես եմ: Բայց դրանք միայն մտորումներ էին, իսկ, ահա, լքված տանը փորսող տալիս շատ հստակ զգացի՝ ես ես չեմ, այլ նա, ինձ նույնիսկ թվաց, թե այդ նա է փորսող տալիս, իսկ ես, համազգեստ հագած, հրամաններ եմ արձակում: Եվ հոգնածությունն էլ կարծես չէի զգում, թեև քիչ առաջ մկաններս ցավազին տնքում էին, ինչպես շան երախ ընկած կատու կամ կատվի երախն ընկած մուկ:

Կեսօրին մի ամբողջ սիգարետ հյուրասիրեց՝ երևի խղճաց. նկատել էի՝ նրա երկարատև բարկությունը դեպքից դեպք կարող էր փոխվել կարճատև բարության, բայց հետո ավելի էր կատաղում, ասես փոշմանած՝ որ բարություն է ցուցաբերել: Ես ծխում էի, ինքն ուտում: Հետո ինձ տվեց հաց-կարագ-ջեմի մնացորդը, իսկ ինքը սիգարետ դրեց բերանը: Թզի ջեմ էր, իմ սիրածը: Ինքս ինձ ցածրածայն ասացի. «Էհ, մի բաժակ գինի լինե՛ր...»: Լսեց: Քնծիծաղեց: «Ականջիդ օղ արա, հարբեցող, - ասաց, - իմ ծառայության ժամանակ ոչ մի կաթիլ ալկոհոլ, այլապես խիստ կպատժեմ: Իսկ հիմա մի երկու թափով դուրս եմ գալիս, չփորձես փախչել, մոտերքում եմ, կբռնեմ»: Ասացի՝ «Փախչող լինե՛ի՝ չէի գա»: «Մարդուս տրամադրությունը առավոտյան ուրիշ է, կեսօրից հետո՝ ուրիշ, իսկ գիշերով՝ ավելի ուրիշ», - նկատեց գիժը: «Չեմ փախչի, - հանգստացրի նրան: - Բայց ձեր ուզածը այստեղ էլ կարող եք անել»: «Էդ էր պակաս, - ասաց, - ես ու դու հո մեկ չե՞նք»: Քիչ մնաց ասե՛ի՝ մեկ ենք, որովհետև

այդ պահին սկսել էր թվալ, թե ինքս ինձ հետ եմ խոսում: Սակայն խոսողը ես չէի, նա էր, ուստի ի՞նչ է ստացվում՝ ինձ թվաց, թե նա՞ է ինքն իր հետ խոսում... Բայց դա կարող էր թվալ միայն իրեն... Խճճվում էի, սակայն զսպել մտքիս ընթացքը չէի կարողանում: Լավ է, շուտ վերադարձավ. ուղղեց կիտելը և խրոխտ կեցվածք ընդունած՝ հրամայեց. «Զգաստ: Վազքով մարշ»:

Տարօրինակ էր, սակայն գիշերով, երբ ծառի տակ նստած գինի էի խմում, հանկարծ հայտնաբերեցի, որ կարոտում եմ նրան: Ուզեցի գիշերն արագ անցնի: Իհարկե, գիշերը կարճելու լավագույն միջոցը քնելն էր, բայց ընկերներս շատախոսելու էին տրամադրված, երթնեկությանս աղմուկը փողոցի կողմից նույնպես չէր դադարում:

Առավոտյան վախեցած արթնացա, կարծեցի՝ քնով եմ անցել, բայց երբ ուշադիր նայեցի չորս կողմս, ապա երկնքին, տեսա, որ անհանգստությունս զուր է: Մեր կանանցից մեկն անխռով խնձփացնում էր՝ ծունկը փոքիս դրած: Միգել էր վրան: Կրծքագրպանից մի ճմռված սիգարետ էր ցցվել. չէի ուզում խանգարել խեղճի քունը հենց միայն թույլտվություն հարցնելու համար, պարզապես վերցրի: Ձեռքս դիպավ կրծքին, դա նույնն էր, թե դիպելը ցելոֆանե տոպրակի, որի մեջ մի քիչ գոլ ջուր կա: Թափ տվի վրայիցս խոտ-ծղոտը, դուրս եկա փողոց: Հավաքարարը քթի տակ հայիոյելով էր ավլում մայթը: Թույլ տվեց, որ վառեմ սիգարետս իր սիգարետի կրակից՝ շարունակելով հայիոյել՝ «Էս ինչ կեղտոտ ժողովուրդ ա ապրում էս քաղաքում, ես սրանց տիրու...»: Կարեկցանքով կկոցեցի աչքերս ու հեռացա: Ծխելով քայլել ամայի փողոցներով՝ ինչպիսի՞ հաճույք է, ասես քաղաքի տերը լինես:

Երբ նա եկավ, ես լուրջ տեսքով քարին նստած՝ նախորդ օրվա թերթն էի աչքի անցկացնում, որ ցանկապատի մոտ գտա: Դեռ հեռվից գոռաց. «Է՛յ, անտեր շուն, եկե՛լ ես»: Չայն չհանեցի, գլխի թեթև շարժումով բարևեցի ու շարունակեցի կարդալ: «Թերթ էլ է կարդում, սրան տեսեք», - գարնացավ նա: Հիմարի մեկը: Ես բարձրագույն կրթություն ունեմ, համարյա... մինչև երրորդ կուրս, հետո հեռացա, այսինքն՝ հեռացրին, մի դեպք պատահեց ու... Մի խոսքով, թերի բարձրագույն: Ուզում էի ասել այս մասին, բայց «երրորդ կուրս»-ի վրա հանկարծ սևեռվեցի-մնացի: Այդպես լինում է երբեմն՝ խոսքիս կեսից գիտակցությունս հանկարծ արգելակում-մնում է: Նա ապշած նայում էր, թե ոնց եմ ջղաձգվելով կրկնում՝ «երրորդ կուր... մինչև երրորդ կը... կու-կու-կու...»: Անիծյալ թերի բարձրագույնի հիշողությունները միշտ ցավ են պատճառում: «Չես կարողանում առաջ գնալ, լռի՛ր», - խորհուրդ տվեց: Հեշտ է ասել, կարծես ինձնից է կախված: «Ուտքի, զգաստ», - հուժկու գոռաց նա: Հետաքրքիր էր՝ անմի-

ջապես ազատվեցի սևեռումից և ոտքի կանգնելով ասացի՝ լսում եմ: Ու սկսվեց վազքը: «Տեսնում ես, վարժությունները բուժիչ են քեզ համար,- նկատեց խելաբը, ապա կտրուկ լրջացավ ու հրամայեց.- Պայթյուն առջևից»: Տարակուսած նայեցի. խորամանկում էի, իրականում լավ էլ գիտեի, թե ինչ պիտի անեմ, պարզապես ժամանակ էի շահում, որ շունչ առնեմ: «Ի՞նչ է, բանակում չե՞ս ծառայել»,- հարցրեց: «Ծառայել եմ,- պատասխանեցի,- բայց այդ հրամանը ծանոթ չէ»: «Ուրեմն այսպես, պիտի անհապաղ շրջվես թիկունքով դեպի պայթյունը և քիթբերնի վրա քեզ զցես գետնին,- բացատրեց նա: Հասկացա՞ր: Դե որ հասկացար... Պայթյուն առջևից»: Անմիջապես շրջվեցի թիկունքով դեպի երևակայական պայթյունը և փռվեցի գետնին: «Վատ չէ,- գլխավերևումս լսվեց նրա ձայնը:- Բայց կրունկներդ ցցված են, իջեցրու: Գլուխդ լավ սեղմիր գետնին, էլի՛, էլի՛: Նա ներբանով սեղմեց գլուխս՝ կատակելով.- Լավ է՝ ես սեղմեմ, քան բեկորները խփեն-տանեն: Վեր կաց, մեկ էլ փորձենք»: Ջգաստ կանգնած էի՝ սպասելով նոր հրամանի: «Պայթ...», - սկսեց նա և, օ՞գարմանը, սևեռվեց-մնաց: Պարանոցն ու դեմքը ջղածգելով կրկնում էր՝ «Պայթ... պայթ... պայթ...»: Վերջապես լռեց: Անթարթ նայում էինք միմյանց: Հանկարծ ինձ սկսեց թվալ, թե ամեն ինչ գիտեմ նրա մասին: Ուզում էի ձշտել և հարցրի՝ «Ներող եղեք, ուզում եմ հարցնել՝ պատահաբար հո գյուղից չե՞ք»: «Քեզ ինչ, քոստ շուն,- ֆշշացրեց:- Ատում ես գյուղից եկածներին, հա՞»: «Ոչ, ինչու՞, ինքս էլ... Ճիշտ է, գյուղում չեմ ծնվել, բայց ծնողներս գյուղից են, ի վերջո՞՝ բոլորիս արմատներն էլ գյուղից են», - արդարացա՝ զգալով, որ կատաղում է: «Ինձ չես խաբի, ես գիտեմ, ասում ես, քեզ նմաններին լավ եմ ճանաչում: Ոչինչ, ոչինչ, մի երկու ամիս էստեղ պահակություն կանեմ, հետո սպայի կոչում կստանամ, էն ժամանակ կտեսնենք, թե ով ով է», - վերջին բառերը կարծես մի ուրիշի էին ուղղված: «Երևի լավ բարեկամներ ունեք վերևներում», - փորձեցի սիրաշահել, բայց ինչպես պարզվեց՝ անհաջող, որովհետև նա սկզբում վախեցավ, նույնիսկ կծկվեց մի տեսակ, հետո սաստիկ կատաղեց ու գոռաց. «Ավել-պակաս դուս ես տալի: Ոտքի՛, զգաստ: Փողո ներս քաշի, մռուրթ բարձրացրու»: Մի պահ մտածեց, ապա հանեց կողքից կախած հակազագն ու տվեց՝ «Վեց վայրկյան, հակացա՞ր»: «Ներեցեք,- բողոքեցի,- նորմատիվը, որքան գիտեմ, ութ վայրկյան է»: «Էր, հիմա վեց է: Նա պատրաստ պահեց վայրկյանաչափը: Ուշադիր, սկսում ենք: Վագնե՛լ հակազագը»: Մինչև ընդմիջում ինձ այդպես էլ չհաջողվեց վեց վայրկյանում հագնել անիծյալ ռետինե թաղանթը, որ քաշում-պոկում էր մագերս, երկու անգամ հաջողացրի ութ վայրկյանում հագնել, բայց դա նրան չբավարարեց: Ուտինը դաղել

էր դեմքս, աղի քրտինքն ասես մերկ մաշկիս վրայով էր հոսում: «Լավ, ընդմիջումից հետո կշարունակենք», - ասաց հոգեառա՝ ժամացույցին նայելով: Ուժասպառ՝ նստեցի չեչոտ քարին: «Լսիր, գիտե՞ս, հակազագը քեզ շատ էլ սազում է, ոնց որ՝ քո վրայով կարած, լուրջ եմ ասում, դեմքիցդ հազար անգամ սիրուն է,- հռռռաց նա: Քո տեղը լինեմ՝ հակազագով կապրեմ, միակ շանսդ է՝ կանանց ուշադրությանն արժանանալու»: Աչքս ընկավ ծնկներիս հանգրվանած հակազագին ու թվաց, թե նա էլ է հռռռում վրաս: Իսկ գիժն արդեն լավիում էր իր բուտերբրոդը, որն այս անգամ ապխտած երշիկով էր: Երշիկի բույրը հասնում էր քթիս: Ինձ չառաջարկեց: Ոչ էլ սիգարետ տվեց: Քարերի արանքներում մնացուկ փնտրեցի, չգտա, փոխարենը մի հայելու բեկոր ընկավ աչքովս, վերցրի, նայեցի... Դեմքս ասես եփած բազուկ լինեք, ճմրթած բազուկ: Շարտեցի հայելին: Նա շրջվեց ձայնի կողմը, ապա հայացքը սենյակում պտտելով՝ հրամայեց. «Ջգաստ: Ոտքի՛: Ես ի՞նչ է պահակակետի վիճակը, քեզ եմ հարցնում, խոզանոցը սրանից մաքուր է: Սա էնպիսի մի պահակակետ պետք է լինի, որ նկատեն, զարմանան, պարզատրեն: Շուտ արա, անտեր շուն, կարգի բեր տարածքը: Էն քարերն էլ հավաքի, սիրուն շարի պատի տակ, դավայ, անցի գործի, մենակ թե փոշի չբարձրացնես»: Ինչ-որ տեղ նույնիսկ ուրախ էի նման շրջադարձի համար՝ հակազագից պրծա: Մաքրեցի տարածքը, քարերը հավաքեցի, խնամքով կիտեցի պատի տակ, բայց նա նայեց, նայեց ու դժգոհ նկատեց. «Չէ, այդտեղ չի նայվում մի տեսակ, հակառակ պատի տակ տեղափոխիր»: Անիծյալ գեղազետ: Այդպես, մինչև օրվա վերջը, քարերը տեղափոխում էի մի պատից մյուսի տակ և հակառակը: Օրվա ավարտին փայլեցրի նրա փոշոտ սապոգները, ուզում էի նաև ճարմանդը փայլեցնել, բայց չթողեց. «Չէ,- ասաց,- գոտին քեզ վստահել չեմ կարող»: Մի հարցնող լինե՞ր՝ ինչու՞ չես կարող, կուտե՞մ: Արդեն մահու չափ հոգնել, զգվել էի այդ խենթից, և համազգեստն էլ ամենևին չէր սազում ապուշին: Մի՞թե սրանից պրծում չունեմ՝ մտածում էի: Ու հենց այդտեղ էր, որ գլխի ընկա վերջապես... Բայց նորից առաջ եմ ընկնում...

Մի խոսքով, այսօր առավոտյան, երբ նա միջանցքով գալիս էր դեպի սենյակ, ես շունչս պահած՝ թաքնվել էի պատի ետևում: «Էյ, անտեր շուն, ու՞ր ես», - կանչեց: Ձայն չհանեցի: «Չլինի՞ չես եկել», - մի տեսակ կարծես տխրեց նա ու նստեց քարին: Նույն պահին թափով գլխին իջեցրի ձեռքիս պատրաստ պահած տախտակը: Ծանր տնքաց ու փլվեց գետնին: Պաղած աչքերում զարմանք կար: Բայց նրանով հրձվելու ժամանակ չունեի. արագ հանեցի հագուստս, ապա հանեցի նրա համազգեստն ու հագա, իսկ իմ հագուստը նրան

հազցրի: Հեշտ բան չէր: Վերջապես գլխարկս էլ դրեցի գլխին ու նա-
յեցի՝ իսկը անտեր շուն: Այդպես էլ ասացի՝ «Թու՛, անտեր շուն»: Հա-
մազգեստը ճիշտ վրայովս էր՝ ուղղեցի-հարթեցրի գոտուս տակ,
ճարմանդը թեթով փայլեցրի, տաբատի փողքերն ավելի խորը
մտցրի սապոգների մեջ, վերցրի մահակն ու կանգնեցի դռան առաջ:
Իսկ նա սկսել էր ուշքի գալ: Ճոճվելով մի կերպ կանգնեց ու աչքե-
րը չռեց վրաս: Ասացի՝ «Հը՞, անտեր շուն, ո՞նց ես»: Ապուշացած՝
մերթ համազգեստիս էր նայում, մերթ իր հագի կեղտոտ, ճմռթված
ցնցոտիներին: «Ջգա՛ստ: Աջ դարձ: Վազբով մարձ», - հրամայեցի:
Փորձեց հակաճառել, բայց մահակն անհապաղ իջեցրի վզին. սու-
սուփուս վազեց:

Հիմա ես եմ կիսավեր տան պահակը:

ՆԱՄԱԿ ԸՆԹԱՑՔԻՑ

«Ողջույն, սիրելիս:

Գուցե կեղծ ես համարում այն, որ «սիրելիս» եմ ասում քեզ: Սա-
կայն հավատացնում եմ, կեղծության երանգ չկա, իսկապես սիրելի
ես՝ եղել ես, կաս ու կլինես, որքան էլ արարքս, թվում է, հակառակը
պիտի վկայեր: Ուստի կրկնում եմ՝ ողջույն, սիրելիս: Գիտե՛ս, միշտ,
չէ, միշտ չէ, ժամանակ առ ժամանակ, այո, ժամանակ առ ժամա-
նակ, բայց հաճախ՝ հիշում եմ մեր համատեղ անշարժությունը՝ բազ-
մոցը, հեռուստացույցը, խոհանոցը, անկողինը... Օ՛, անկողինը, այո,
անկողինը և քո անկողնային չարաձիթությունները, որ, իհարկե,
աննման էին: Մի խոսքով, ամեն բան հիշում եմ ամենայն մանրա-
մասնությամբ, և երբ հիշում եմ, հավատա, շատ քերմ, շատ անուշ
զգացում սեղմում է կոկորդս: Չէ, սխալ չմեկնաբանես, անկողնում
անշարժություն չէր, չէ: Բայց անկողինն ինքը, իր բոլոր ներքին
խլրտյուններով հանդերձ, էլի անշարժության տարրերից էր:

Ինչու՞ հեռացա: Ասեմ:

Բայց չէ, հիմա չեմ ասի, չի հասունացել դեռ:

Գրում եմ քեզ ռուսական անծայրածիր տափաստանից, գուցե՝
թաթարական կամ բաշկիրական, չէ, բաշկիրյան, թե՞ այնուամենայ-
նիվ բաշկիրական... Դե լավ, մեկ է: Մի խոսքով, հարթ, տափակ տեղ
է, որ աջից ու ձախից, նաև առջևից ու ետևից ձգվում է մինչև հորի-
զոնի գիծը, և նույնիսկ մի բարդի չի ցցվում տեսադաշտում: Ճիշտ է,
հոսանքակիր աշտարակներ կամ նման այլ բաներ հանդիպում են,
սակայն, երբ խոսում ենք բնությունից, բնականաբար՝ արհեստա-
կան կառույցներ նկատի չունենք: Թեև գիտե՛ս, հավանորեն արդեն

ժամանակն է, որ երկաթետունն էլ բնության տարր համարենք: Ի
վերջո, ի՞նչ է նշանակում արհեստական, ինչու՞ ենք մեր արարումը
արհեստական համարում, իսկ Աստծունը՝ բնական: Արարումը ա-
րարում է, և այն ամենը, ինչ կա հողագնդի վրա՝ բնական է, ստեղծ-
վել է, այո, բայց էլի բնությունից է վերցվել, հո դրսից չէ՞, և ինչ բան
է դուրսը, չկա նման բան: Վերցնենք, թեկուզ, չայրվող սինթետիկ
պլաստիկը... Վայ, կներես, մի պահ մոռացա, որ նամակ է գրածս,
պարզապես այս թեման ինձ շատ է հուզում, եթե մնայի անշարժու-
թյան մեջ, անպայման սրանով կզբաղվեի: Մի խոսքով, ողջույն, սիրե-
լիս, գրում եմ քեզ ընթացքից, եթե առավել ճշտություն ես ուզում՝
զննացքից, ինչն էլ վերջո նույնն է, կարծում եմ: Ահա, արդեն մի քա-
նի ամիս է, որ ընթացքի մեջ եմ, գուցե՛ն՝ մեկ տարի կամ ավելի, ես
չեմ հաշվում, ժամանակը չեմ հաշվում, ժամացույց չեմ պահում, օ-
րացույց՝ նույնպես. ժամանակն արհամարհելը՝ «Ընթացքի մարդու»
սկզբունքն է, նրա երջանկությունը: Վայրկյաններ, րոպեներ, ժամեր,
օրեր՝ ընթացքի մեջ գործուն չեն, անհեթեթ են նույնիսկ: Ենթադ-
րենք, ոտքերդ աստիճաններն ի վար կախած, նստած ես տամբու-
րում, ծխում ես կամ արևածաղկի սերմ չրթում, և անցնում է մեկ ժամ,
այդ ժամի սկզբում, ենթադրենք, մի աննշմար, աշխարհից մոռաց-
ված գյուղակի կայարանում էիր, իսկ վերջում՝ մի մեծ, աղմկոտ քա-
ղաք ես մտնում, սակայն հնարավոր է նաև, որ ամբողջ այդ ժամը,
սկզբից վերջ, անցել ես նույն համատարած աղուտներով, ոչինչ չի
փոխվել կամ համարյա չի փոխվել, իսկ կարող է այնպես լինել, որ
ժամի սկզբում կանգնած էիր մի անիծված կայարանում՝ ժամն ա-
վարտվելիս էլի կանգնած ես այդտեղ, կանաչ լույս չկա ու չկա (տա-
կանքներ): Ուրեմն ինչի՞ մասին է այդ մեկ ժամ կամ վաթսուս րոպե
կամ երեք հազար վեց հարյուր վայրկյան կոչվածը... Կատարելա-
պես ոչնչի: Տարվա եղանակների հերթագայությունից խոսելն էլ ան-
հեթեթ է, որովհետև ցերեկով, ասենք, տաք ծովափին ես,
վերնաշապկիդ կոճակներն ես քանդում շոգից, իսկ արդեն հաջորդ
առավոտյան կարող է պատահել, որ ձյունածածկ լեռնանցքում
հայտնվես, մուշտակ գցես վրադ (մուշտակ, իհարկե, չունեն, պատ-
կերավորության համար ասացի): Չկա, չկա տարվա եղանակ, չկա
ժամ ու ամիս, կա ընթացքի հարափոփոխ հրաշքը, կան պատու-
հանների այն կողմում ընդամառ էկող, հավասարվող, փախչող տա-
րածքներ, որոնք ասես պլաստիլինից լինեն, կտրուկ
շրջապտույտների ժամանակ պտույտի ներսում հավաքվում-կլոր-
վում-սեղմվում են, իսկ պտույտից դուրս, հակառակ պատուհանից
նայելիս՝ բացվում-սփռվում-ցրվում: Ամբողջ վիթխարի զանգված-
ներ աչքիդ առաջ խաղալիքի պես պատռվում են, փլվում, խոյա-

նում, գահավիժում, շաղափվում, տրոհվում... Հեքիաթ է: Հաճախ հաճույքից աղիներս գալարվում են, շունչս կտրվում է: Ափսոս, որ դու չես հասկանա այդ հրաշքը, ինչպես չէիր հասկանում ավանգարդային երաժշտությունը, որը նույնպես խաղում է ժամանակի ու տարածության հետ՝ սեղմում, թողնում, կրճատում, տրոհում, խառնում, անհեթեթացնում, ոչնչացնում... Սա որպես վիրավորանք չընդունես հանկարծ, իսկապես, չասացի, որ վիրավորեմ, և առանձնապես մեծ բան էլ չէ՝ կան մարդիկ, որոնք զգում են երաժշտություն, կան մարդիկ՝ ոչ, սարսափելի ոչինչ չկա, փոխարենը դու, ասենք, հիանալի զգում ես բույրերը, իսկ ես՝ ոչ այնքան: Ի դեպ, ծայնադարանս պահպանիր, խնդրում եմ, մնացյալն անմնացորդ՝ քեզ, բայց ծայնադարանս ու գրքերս չվաճառես: Մեկ է, շատ փող տվող չի լինի: Փող ասացի՝ հիշեցի. դեպքից դեպք մի քիչ փող ընկնում է ձեռքս, մտածում եմ (ազնիվ խոսք) կեսը կամ գոնե քառորդը ուղարկեմ քեզ (ազնիվ խոսք), բայց միշտ ինչ-որ անկանխատեսելի ծախսեր են մեջ ընկնում... Քեզ են հյուրասիրում, հետո ստիպված՝ դու ես հյուրասիրում, հետո ուրիշ ինչ-որ... Մի խոսքով, ընթացքի մեջ եմ, անակնկալները շատ են, հետո կարծում եմ, որ կարիքի մեջ չես երևի, աշխատում ես, ազգականներ-բան, գուցե նաև... Լավ, դա թողնենք, իմ գործը չէ: Չէ, ինչ-որ տեղ իհարկե վերաբերվում է ինձ, բայց աշխատում եմ սթափ դատել, բը...բը...բը...բարձր կանգնել, չէ՞ որ ինքս եմ հեռացել, ուստի նույնիսկ ծիծաղելի կլինեն... սակայն այդուհանդերձ... Մի խոսքով, թողնենք սա:

Ինչու հեռացա, հա, հիմա կարծես թե հասունացավ: Թեև վաղուց պիտի հասունացած լինեիր, վաղուց, գոնե հեռանալու նախօրյակին, պիտի բացատրած լինեիր, այլ ոչ թե բավարարվեի այն հիմար երկտողով՝ «Մնալ այլևս չեմ կարող, չսպասես, չմեղադրես», կարծեմ այսպես էր, չէ՞: Սակայն մյուս կողմից էլ, այսր, բռնկվող խառնվածք ունես՝ կորբորվելի, խուճապի մեջ կընկնելի, չէիր թողնի կարգին բացատրեմ, և ինչ էլ ասեի՝ կմնայիր քո համոզմունքին՝ իբր փախչում եմ մի ինչ-որ լրբի հետ կամ լրբի մոտ. խանդը շատ կուրացնող բան է, գիտեմ: Կարող էի, անշուշտ, առաջարկել, որ գաս հետս, բայց կգայի՞ր... Իհարկե ոչ, դու կայունություն սիրող մարդ ես՝ տունտեղ, կայուն-հաստատուն կենցաղ, կին ես վերջապես... Բացի այդ, քո ներկայությունը անշարժության երանգ կհաղորդեր ընթացքին՝ թող որ հաճելի, չեմ ժխտում, սակայն ընթացքը կզրկվեր իմաստից, սկզբունքից, նաև հմայքից ինչ-որ տեղ: Խճճված եմ արտահայտվում, այդ՝ Առավել նրբանկատ լինելու ջանքից է, չեմ ցանկանում ավելորդ անգամ վշտացնել քեզ, առանց այն էլ մեղավորության զգացումը կրծում է հոգիս, երբեմն: Սակայն այլ կերպ չէի կարող,

հավատա: Անսպասելի՞ էր... Քեզ համար՝ այդ, չեմ ժխտում: Պատճառը, սակայն, ինձ չհասկանալն էր: Իսկ ես ուզում էի, որ հասկանաս, տարբեր առիթներով փորձում էի խոսք բացել ինձ հուզող խնդրի շուրջը: Բայց դու միշտ սխալ էիր ընկալում՝ մերթ կատակի վերածելով, մերթ էլ կեղծիք համարելով՝ կեղծիք, որն իբր կոչված է կոծկելու իմ հերթական դավաճանությունը. խանդ, անհիճյալ կույր զգացում, որ տեղ չի թողնում սթափ մտածողությունը: Իսկ ես երբեք չեմ դավաճանել քեզ, գոնե հիմա պետք է հավատաս, որովհետև ստելու կարիք չկա կարծես՝ չէ՞ որ քեզ իմ կողքին պահելու պարագան օրակարգից դուրս է այլևս: Այստե՞ղ, գնացքու՞մ... Դեհ, այստեղ ուրիշ... Այստեղ... Տղամարդ եմ վերջապես, մարմնական ցանկությունները միշտ չէ, որ կարելի է և պետք է զսպել: Պատահական, ընթացքային հանդիպումներ, որոնք դավաճանություն համարել էլ չի կարելի, անհիճյալ լիբիդոյից ազատվելու համար միայն, այդքանը, ոչ մի կայուն կապ, աստված չանի, այլապես ի՞նչ իմաստ ունի ընթացքը: Ընթացքը...

Ընթացքին մոտիկ եմ եղել դեռ մանկուց. մեր տունը երկաթուղային կայարանի հարևանությամբ էր, երկաթգծի ափին՝ եթե կարելի է այսպես արտահայտվել: Քեզ դրվագներ իմ մանկությունից պատմել եմ, բայց դու կարծես անտարբերությամբ էիր լսում, աչքերիցդ էի կռահում, ուստի անդրադառնամ թեթևակի: Սակայն անկեղծ լինեմ և խոստովանեմ, որ ես էլ առանձնակի հետաքրքրությամբ չեմ վերաբերվել քո մանկական հիշողություններին. այսպիսին ենք մարդիկս կամ գոնե մարդկանց ջախջախիչ մեծամասնությունը՝ ծայրահեղորեն եսասեր, ուրիշի խնդիրները մեզ հետաքրքրում են միայն, երբ կանում են մեր շահագրգռություններին, մնացյալում մեր հետաքրքրությունն ամբերես է, կեղծ էթիկետ, իսկ մտքում անդադար կրկնում ենք՝ «Դե շուտ պրծի, էլի, հասկացանք, գլուխ ցավացրիր արդեն...»: Այդպես է, չէ՞... Քանի անգամ եմ կարդացել դա քո հայացքում կամ դու՝ իմ: «Դա քո պրոբլեմն է»՝ ընդունված արտահայտություն, որ մարդիկ հաճախ ասում են միմյանց, և նույն այդ մարդիկ, տեղն ընկած տեղը, համառորեն կանդեն, թե նվիրյալ քրիստոնյա են: Սակայն շատ հեռացա, ետ գամ: Ուրեմն, մանկությունս կայարանի հարևանությամբ անցավ: Նույնիսկ փակ պատուհաններով սենյակում՝ միշտ հստակ լսվում էր. համար այսինչ գնացքը դուրս է եկել հարևան կայարանից կամ՝ համար այսինչ գնացքը ժամանում է երկրորդ պլատֆորմից և այլն: Մեկնող կամ ժամանող գնացքների շչակները, անիվների ռիթմիկ խփոցը միշտ ականջներինս մեջ էին, և ինձ թվում էր (հատկապես գիշերներով և

հատկապես՝ եթե պատուհանից դուրս չէի նայում), թե իմ սենյակն էլ մի գնացք է, ես ճամփորդ եմ, ուուու... Հեռանում եմ, հեռու՝ հորս խստությունից, հեռու՝ պապիս նյարդ սղոցող խռմփոցից, հեռու՝ լկտի կրտսեր եղբորիցս, որը տանում էր մորս սիրո նաև իմ բաժինը, հեռու սպանիչ դասերից, հատակի տակ ծվծվացող առնետներին... Ուուու... Արտառոց է, գրեցի այս տողերը և հանկարծ գնացքի սաստիկ կարոտ համակեց հոգուս, գնացքի կարոտ՝ գնացքում նստած։ Գուցե մանկությամբ կարոտն է, որ շփոթեցի գնացքի կարոտի հետ։ Սակայն չսկեռվեմ, կանգ չառնեմ, կանգ առնելը դեմ է ընթացքին։ Շարունակեմ։ Մեկ րոպե միայն, փորձեմ շրջել խռմփացող հարևանուհուս։ Չէ, չի ստացվում, պինդ է քնած։ Մեկ անգամ էլ փորձեմ։ Չէ, դարձյալ չհաջողվեց, լպստեց մտել շուրթերը, անհասցե հայիոյեց ու շարունակեց խռմփացնել։ Այ քեզ պատուհաս։ Շատ խմեց երկի։ Համեղ երշիկ ուներ՝ բելառուսական, խաշած ձու, ես էլ մի շիշ օղի ուներ... մի խոսքով։ Երկաթգծից էի խոսում։ Դպրոց հասնելու համար ամեն օր մոտ երկու կիլոմետր ռելսերով էի քայլում՝ ցատկելով մի փայտակոճից մյուսը, կամ էլ՝ հենց ռելսերի վրայով, ինչպես լարախաղաց։ Մագուրի հոտը հարազատ, անուշ բույր էր։ Կողքովս գնացքներ էին սուրում՝ քամի խփելով դեմքիս։ Բայց հերիք է այս մասին։ Իհարկե, չեմ ժխտում մանկական տպավորությունների նշանակությունը, սակայն միայն դա չէ, հաստատ միայն դա չէ ընթացքային լինելուս պատճառը։

Ի՞նչ պատահեց, ինչու՞ տագնապեց հոգիս հանկարծ... Ախ այո, պարզ է, կանգ ենք առնում։ Կանգառ է։ Ամեն բան պաղեց, քարացավ։ Թու՛։ Քիչ առաջ ես տեր էի, ես ավերողն էի ձևերի, հիմա ստրուկն եմ նրանց, նույնիսկ՝ ամենափոքրիկ քարի։ Մյուս կողմից՝ հանգիստն էլ անհրաժեշտ է երբեմն, որպեսզի հետո առավել զգաս ձևերի սրընթաց ավերումների հրաշալիքը. յուրաքանչյուր կայարան հանգիստ է ավերումներից հետո՝ նոր ավերումներին ընդառաջ։ Սակայն հանգիստը պիտի կարճատև լինի, երկարատև կանգառներն անտանելի են, իսկ ուշացումները՝ պարզապես տառապանք. մի բան է սփոփում՝ ուշացումից հետո, սովորաբար, չվացուցակին հասնելու համար, առավելագույն արագությամբ ենք սլանում, աննկարագրելի կայֆ...

Մի բան էլ հիշեցի, սա քեզ երբեք չեմ պատմել. ազգականներիցս մեկը՝ մի հարբեցող, որ տարիներ անց սառեց-մեռավ իր ցախանոցում, մի անգամ,- տասներկու, թե տասներեք տարեկան էի,- փսփսաց ակննջիս. «Դու ձերոնց հարագատը չես, քեզ վերցրել են, երկու ամսական էիր»։ Ասաց ու գնաց շվշվացնելով։ Հետո էլի շուտ-շուտ գալիս էր մեր տուն, զրուցում մերոնց հետ, օղի խմում, կատա-

կում, բարեկամաբար աչքով անում ինձ, կարծես չէր եղել այն թաքուն փսփսոցը։ Բայց ժպիտի խորքում ինչ-որ դավադիր բան, այնուամենայնիվ, մնում էր։ Կասկածները կրծում էին հոգիս, նայում էի հայելուն ու հարցնում՝ ո՞վ ես։ Հիմա էլ հաճախ տալիս եմ ինձ այդ հարցը, բայց հայելուն էլ չեմ նայում, դրովհետև հայելին ժամանակն է։ Մի րոպե, ինչու՞ պատմեցի այս պատմությունը... Տեսնու՞մ ես, ծգծգվող կանգառը շփոթ է մտցնում գիտակցությունս։

Փոքր, մռայլ կայարան է։ Ագռավները խռնվել են աղբակույտերի վրա։ Կառամատույցի ցեցը կերած ասֆալտով դողդոջուն պառավներ են ետառաջ քայլում՝ եփած կարտոֆիլ ու թթու վարունգ առաջարկելով։ Կարտոֆիլը գոլորշի չի արձակում արդեն, յուղը սառել-կպել է ափսեին, իսկ այ վարունգի տեսքն ախորժածին է։ Պառավները թև տարբեր, բայց այնքան նման են իրար՝ մրսած, կծկված, հայացքները տարտամ, ինչպես իրենց անծայր տափաստանները։ Ի՞նչ եղավ, ինչու՞ չենք մեկնում, անշարժության տաղտուկն արդեն սև խոռոչներ է շաղափում հոգուս մեջ։ Դուրս գամ, տեղեկանամ։

Իմացա, հանդիպակացն է ուշանում։ Բայց ուր որ է կերևա, կանաչն արդեն տվել են։ Ահա, շարժվեցինք։ Դիմացինը երևաց։ Կատաղի արագությամբ է մոտենում։ Մենք էլ սկսեցինք արագություն հավաքել։ Հավասարվեցինք... Ո՞նց ենք փախչում միմյանցից, ո՞նց ենք փախչում...

Գնացքը ընթացքի միջոցներից ամենահրաշալիս է։ Ուրիշներին գուցե մեքենան կամ ինքնաթիռն է հարմար, բայց ինձ համար գնացքն անփոխարինելի է։ Հասկանու՞մ ես, սիրելիս, մեքենան կամ ինքնաթիռը, իրենք լինելով շարժման մեջ՝ քեզ զրկում կամ համարյա զրկում են շարժվելու հնարավորությունից. նույն աթոռին, նույն ուղեկիցների կողքին, այստեղ նստեցիր, այնտեղ պիտի իջնես, վերջ։ Չոր պրագմատիզմ։ Գոտիդ կապիր, չծխես, վեր չկենաս... Բռնություն է։ Իսկ գնացքը... Օրերով, շաբաթներով գնում ես, հարևաններդ իջնում են, ուրիշներն են գալիս, սրանք էլ են փոխվում, ինքը ազատ ես՝ գնա, շրջիր վագոններով, զրուցիր, շախմատ խաղա, մտիր ճաշարան, գարեջուր խմիր, դուրս արի տամբուր, ծխիր... Շարժում դրսում, շարժում ներսում... Հրաշք չի՞, սրանից մեծ վայելք մի՞թե հնարավոր է։ Եվ հացի փող էլ կարող ես վաստակել, հնարավորություններ կան։ Վերցնենք թեկուզ հենց վագոն-ռեստորանը. միշտ էլ ինչ-որ գործ պատահում է, այսօր առավոտյան, օրինակ, կանչեցին կարտոֆիլ ու տխրաբարձելու, կանգառը կարճատև էր, իրենց ուժերով չէին հասցնի, համ էլ հարբած էին առավոտից, չէ, գիշերվանից։ Վատ չվճարեցին, չհաշված ձրի նախաճաշը՝ օմլետ,

ծիրապատուղ, հաց-կարագ, մի կտոր շվեյցարական պանիր, թեյ: Այսպիսի նախաճաշից հետո կարելի է նույնիսկ չճաշել: Չարմացած ես երևի, մտածում ես՝ պատկառելի գիտաշխատող էր, էս ինչ օրի է հասել: Սակայն այդպես չէ, սիրելիս, կներես, բայց կաղապարված մտածողության ստրուկն ես, դու չգիտես, թե ինչ է նշանակում պարզապես ապրել, այո, հենց այնպես, ապրել և վերջ: մեծ, դժվարին, բայց հմայիչ արվեստ է՝ պարզապես ապրել, ամենակարևորը՝ ազնիվ է: Իսկ վիճակագրության կրկնակի կապերն առանց իմ հոգնած հսկողության էլ հաջողությամբ կճեղքվեն: Ամենակարևորը՝ սեփական խառնվածքին, տեսակին, գուցե նաև՝ ճակատագրին, հարազատ լինելն է: Այսպես եմ մտածում, և հիմա միշտ, ամեն քայլափոխին, ջանում եմ ավելի մոտենալ ինքս ինձ: Ուստի՝ ընթացք, ընթացք, ընթացք...

Երբ ընթացքի մեջ չես՝ տեսնում ես նյութի դանդաղ ընթացքը ժամանակի մեջ, իսկ երբ ընթացքի մեջ ես՝ տեսնում ես պահի մեջ անշարժացած նյութի դրվագների հաջորդումը: Վերջինս ինձ առավել է հրապուրում: Ինձ առհասարակ բնորոշ է...

Չէ, չխաբեմ ինքս ինձ, մեկ է՝ նախ պիտի ասեմ այն բանը, մինչև չասեմ՝ առաջ գնալ չեմ կարողանա: Ուստի ասում եմ. հիմնավոր կասկածներ ունեմ, որ, մեղմ ասած, այնքան էլ լավ չէ ձեր այդ անշարժ աշխարհը: Թերևս ինչ-որ բան ի սկզբանե է սխալ դրվել ու այդպես էլ շարունակվում է: Գուցե հենց այդպես էլ նախատեսված էր, և ամեն բան ճիշտ հունով է գնում, չգիտեմ, բայց ինձ համար որ՝ հաստատ լավ չի, իսկ ես, ինչպես արդեն ասել եմ, ինձնով եմ չափում, իմ տեսակին եմ հավատարիմ:

Ահա, կարծես կարելի է շարունակել: Ինձ առհասարակ բնորոշ է այսպես ասած «ճամպրուկային» հոգեվիճակը, դեռ մանկուց, անկախ երկաթգծերին մերձ լինելու հանգամանքից...

Էէ՛, այս տիկինն արդեն հոգիս հանեց, կենտրոնանալ չի թողնում: Փորձեմ քորոցով թեթև ծակել ազդրը, գուցե արթնանա ու շրջվի կողքի: Ահա, կարծես թե հաջողվեց, շրջվում է, հետույքը քորեց ու շրջվում է: Բայց էլի է խռմփացնում: Դե լավ, պիտի դիմանամ ստիպված, ժամ-ժամուկեսից իջնելու է: Նա կիջնի, կգա նոր հարևան, նոր մարդ, բոլորովին նոր, հասկանում ես, մարդ, որին երբեք չեմ տեսել, չգիտեմ, բայց հաստատ գալու է, որովհետև տեղը թափուր է, իսկ Օրենքը թափուրություն չի հանդուրժում: Ես չգիտեմ՝ կի՞ն է, տղամա՞րդ, գեղեցի՞կ է, նվա՞զ գեղեցիկ, խռմփացնում է, ֆսֆսացնում, շախմա՞տ է սիրում, թղթախա՞ղ, չգիտեմ, բայց նա հավանաբար արդեն ճամպրուկն է փակում կամ էլ անհանգիստ մարդ է ու արդեն եկել է կայարան, պատվում է տեղեկատու ծառա-

յության մոտերքում: Հետո... Հետո գնացքից կիջնի նաև նա, և կգա մի ուրիշ նոր մարդ, ապա ևս մեկը... Հետո գնացքը կավարտի իր երթը, ես նույնպես կիջնեմ, ստիպված, բայց անմիջապես էլ, կայարանից չհեռացած, ուրիշ գնացք կնստեմ, հետո էլի գնացք կփոխեմ... Փառք աստծու, երկիրն անձայրածիր է՝ գնա-արի, գնա-արի...

Այո, ինձ, ուրեմն, բնորոշ է ճամպրուկային կոչված հոգեվիճակը, ճամպրուկային խառնվածք ունեմ, նույնիսկ համոզված եմ, որ դա էր բարորհից հաճախակի դուրս ընկնելուս պատճառը (տատս է պատմել): Ժամանակավորության զգացողությունն ի ծնե նստած է մեջս, իշխող է. «Ահա ես, եկել եմ, բայց շուտով գնալու եմ», և այսպես միշտ՝ թե՛ ամբողջի, թե՛ նրա առանձին հատվածների նկատմամբ՝ մանկապարտեզ, դպրոց, աշխատանք, տուն... «Ահա եկել եմ, բայց ինձ մի վերաբերվեք այնպես, ինչպես միմյանց, որովհետև ես ուր որ է գնալու եմ»: Հիշում ես, ինչ դժվարությամբ էիր համոզում, որ սեմյակի պաստառը փոխեմ կամ ուրիշ նման բան անեմ, հիշում ես: Չէի ծուլանում, հավատա, պարզապես իմաստ չէի տեսնում, դա նույնն է, թե պաստառ փոխել այստեղ, վագոնախցիկում, ծիծաղելի է, չէ՞: Պաստառը կուպեում փոխած, թե տանը՝ հավասարապես անիմաստ է ինձ համար, որովհետև՝ «Ես այստեղ երկար չեմ մնալու, ես եկել եմ, որ գնամ», որովհետև՝ «Որտեղ ես չկամ, այնտեղ գուցե ինչ-որ հետաքրքիր բան է կատարվում», որովհետև՝ «Մնալ, առհասարակ, անհնարին է»: Ի վերջո, մեծ հաշվով, բոլորս էլ եկել ենք, որ գնանք: Շատ եմ ուզում, որ հասկանաս ինձ, զգալ երևի չես կարողանա, բայց գոնե հասկանաս, գոնե հավատաս՝ եթե հասկանալ էլ չես կարող, որպեսզի չմեղադրես: Սա կարևոր է ինձ համար: Դե լավ, սիրունիկ գլխիկը ցավացրի երևի, վերջացնեմ: Ամուր համբուրում եմ շրթիկը և դարձյալ խնդրում՝ աշխատիր հասկանալ ինձ:

Հետզորություն.

Լսիր, զավեշտալի բան կատարվեց. փակեցի ծրարը, կայարանում իջա ու գցեցի փոստարկղը, իսկ երբ ետ եկա խցիկս՝ հանկարծ հայտնաբերեցի, որ նամակն ընկած է հատակին, հողաթափերիս մոտ, այսինքն՝ դատարկ ծրարն եմ ուղարկել: Պատկերացնում եմ զարմանքդ, երբ կստանաս ու կբացես այն: Թեև, գիտե՞ս, դատարկ ծրարն էլ ինչ-ինչ տեղեկություններ բովանդակում է: Իսկ նամակը վաղը կուղարկեմ, նոր ծրար կգնեմ ու կուղարկեմ, այսօր արդեն ուշ է: Հա, ես մտածեցի... ծայնապակներս ու գրքերս այնուամենայնիվ կարող ես վաճառել, եթե քեզ հարկավոր չեն: Հենց ծայնապակներից ու գրքերից խոսեցի՝ սիրտս մի տեսակ նվաճեց, սեղմվեց... Ես դա անվանում եմ ասոցատիվ սեղմում: Սակայն նշանակություն

տալ պետք չէ՝ կսեղմվի էլ, կթուլանա էլ, բնույթն է այդպիսին: Հանգիստ վաճառիք, եթե փողի կարիք ունես և իհարկե՝ եթե գնորդ ճառես:

Գրում եմ ու մտածում՝ գուցե արդեն մոռացե՞լ ես ինձ, գուցե ուրի՞շ մեկին ունես արդեն ու չես ուզում, որ հիշեցնեմ իմ մասին, գուցե հասցեդ էլ փոխված է հիմա... Հնարավոր է, իհարկե: Սակայն... սակայն պիտի գրեմ, որովհետև... Որովհետև, երևի թե պետք է լինի մի հասցե, ուր կարելի լինի գրել ժամանակ առ ժամանակ:

ԱՆՄԱՐԳ ԼՃԱՓԻՆ ԹՈՂԱԾ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

«Իսկ գիշերները, այն գիշերները... Գիշերներն այլ են, բոլորովին այլ, ասես նույն կյանքի մասը չլինեն, և խնդիրը մութը չէ... Սակայն ի՞նչ կապ ունեն գիշերները, մտքիս ընթացքն ուրիշ մեկնարկ ուներ, երբ վերցրի գրիչը: Ինչու՞ են գիշերները հանկարծահայտ սև բծով ընդմիջում ցերեկային խոհերս, ինչու՞ չեն բավարարվում իրենց պատկանելիք ժամանակով: Հեռու, հեռու... Վահենե՛, Վահենե՛, Վա...

Վարորդը, այո, վարորդը... Երեկ պատահաբար հանդիպեցի, խանութում, կարծեցի՝ չի ճանաչի, ահագին ժամանակ է անցել, բայց ինձ տեսնելուն պես՝ գունատվեց ու ընդգծված շրջվեց՝ թիկունքը դեմ անելով քթիս: Ասացի՝ իզուր եք այդպես թշնամացած, դեպք էր՝ եղավ-անցավ, կարևորն այն է, որ ձեզ համար ամեն բան բարեհաջող ավարտվեց: «Հեռու,- ֆշշացրեց նա,- հեռու ինձնից, դու տեղով փորձանք ես»: Տարօրինակ մարդ: Նա պնդում էր, թե ես ինձ պարզապես նետել եմ մեքենայի տակ: «Թույլատրելի արագությունից էլ դանդաղ էի գնում,- ասում էր,- տուժածը կանգնած էր մայթին, ծխում էր, եթե արագ գնայի՝ ո՞նց կնկատեի, որ ծխում է, ու հանկարծ, երբ ընդամենը մի երկու մետր էր մեզ բաժանում, նա պոկվեց ու իրեն կտրուկ առաջ գցեց, չվազեց, չէ, եթե վազեր՝ կհասցնեի փախցնել մեքենան, պարզապես թռավ մեքենայի առաջ ու մեխվեց: Արգելակեցի, մեքենան խփեց ու շարունակ նրան, եթե արագ գնայի՝ չէր փրկվի, ինչքան էլ արգելակեի՝ չէր փրկվի»: Այսպես ասաց վարորդը: Չառարկեցի, չէի ուզում նրան վնասել, և հետո ի՞նչ իմանամ՝ գուցե իրավացի է մարդը, չէ՞ որ ոչինչ չեմ հիշում՝ ո՛չ մեքենան, ո՛չ ինձ, ո՛չ էլ հիշում եմ, թե ինչ էի անում այդ փողոցում, այդ ժամին: Չեմ հիշում: Ես առհասարակ ոչինչ չեմ հիշում, վթարի հետևանքով հիշողությունս կորցրել եմ: Բժիշկներն ասում են՝ բա-

ցառված չէ, որ տարիների ընթացքում այն վերականգնվի: Գուցե: Սակայն ես նույնիսկ չգիտեմ՝ դա լավ է, թե՞ վատ, որովհետև ինչպե՞ս գնահատեմ մի բան, ինչը հիմա բացարձակորեն գնահատել չեմ կարող: Տրամաբանական է, չէ՞: Թեև, իհարկե, ամեն բան չէ, որ կորսվել է, այլապես ո՞նց կգրեի, կբայլեի կամ... Չէ, որոշ, ես կասեի արմատական բաներ, այնուհանդերձ, պահպանվել են: Հոգեբույժներից մեկը կատակում էր. «Ինձ թվում է՝ ձեր հիշողությունից ջնջվել է այն, ինչ կուզեիք, որ ջնջվեր»: Ասաց ու ժպտում, ծակող հայացքը մեխեց աչքերիս մեջ: Աչքերս, այո, աչքերս... Հիվանդանոցում ուշքի գալով և աչքերս բացելով՝ երկար ժամանակ դեռ աղոտ էի տեսնում շրջակայքը, մշուշի միջով: Չայներ լսում էի, սակայն հեռացած, անտարբերելի, փչացած ընդունիչի ընդհատում ձգձգոցի նման: Պառկած՝ հենց իմ դիմաց տեսնում էի մի մեծ, գորշասպիտակ առարկա, որ նման էր օդում սլացքն ընդհատած-անշարժացած հրթիռի, ինձ անդադար թվում էր, թե այն ուր էր կպոկվի ու կգարկվի քիթբերանիս: Օրեր հետո, երբ գիտակցությունս քիչ թե շատ պարզվեց, հասկացա, որ ճոպանից կախված այդ հրթիռը ոչ այլ ինչ է, քան սեփական ոտքս, սակայն հասկանալուց հետո էլի քիչ ժամանակ պետք չեղավ վարժվելու համար այն մտքին, թե գիպսով ամփոփված այդ այլանդակությունն անմիջական կապ ունի ինձ հետ: Հետո եկան նրանք, գիշերով, չէ, գիշեր չէր, ցերեկ էր, եկան, նստեցին անկողնուս մոտ՝ նոսրամազ ծերունին, կինը և մոտ քսան տարեկան աղջիկը: Ծերունին հուզվեց, աչքերը լցվեցին, կինն ու աղջիկն էլ հուզված էին, շփոթված՝ ջանում էին վիրակապերից ազատ տեղ գտնել դեմքիս, որպեսզի համբուրեն: Բժիշկը հակվեց ու գոռաց. «Հարազատներդ են՝ հայրդ, կինդ, աղջիկդ»: Ահա, թե ինչ, մտածեցի, հարազատներ ունեմ ուրեմն:

Աղջիկս, պարզվեց, վերջերս ամուսնացել է (դեռևս վթարից առաջ), մեր տանն են ապրում ամուսնու հետ, ասում են՝ հաջող ամուսնություն է: Պարզվեց նաև, որ մայր չունեմ, վաղ է մահացել: Երբ հարցրի՝ ինչից, հայրս շփոթված կմկմաց, կցկտուր ինչ-որ բան ասաց քաղցկեղի, թե թոքաբորբի մասին ու կիսատ թողած՝ լռեց: Ես նորից հարցրի, բայց նա չխոսեց, այնուվախ անելով սրբեց աչքերը և գրպանից հանեց լուսանկարը: Բարձրահասակ, չորուկ կին էր, աչքերի տեսնողային փայլով: «Ինչքան ես նման նրան», - ասաց հայրս ու դարձյալ արտասվեց: Ես էլ հուզվեցի, սակայն ոչ ավելի, քան եթե կողքիս նստած լինեի արտասվող մի օտար ծերունի, այո, ոչ ավելի, մնացյալը ջնջված էր: Կինս ասաց, թե ես քանդակագործ եմ, նույնիսկ մասնակցել եմ ինչ-ինչ ցուցահանդեսների: Չհավատալու հիմքեր չունեի, հատկապես՝ երբ իջեցրին նկուղ և ցույց տվին ար-

վեստանոցը, որն ըստ նրանց պնդումների՝ իմն էր: Գործիքները ձեռքս առնելով հասկացա, որ քանդակագործությունից այլևս հեռու եմ: Ի՞նչ քանդակագործություն, երբ դանակ-պատառաքաղ գործածելն եմ մոռացել: Կինս պարզաբանեց նաև, որ ես իմ փողը հիմնականում վաստակել եմ շիրմաքանդակների պատվերներով՝ կոմպրոմիս, որը, ըստ նրա, միշտ հոգեկան տառապանք է պատճառել ինձ: Եվ քիչ չեմ վաստակել, նույնիսկ ետ գցած փող ունենք ահագին: Աղջիկս սիրունիկ է, թեև ոչ ավելի, քան փողոցում պատահած որևէ սիրունիկ աղջիկ... Սակայն այս վերջին նկատառումը կարծես թե անտրամաբանական էր, այո, անտրամաբանական ու անտեղի, ինչու՞ հանկարծ անցավ մտքովս... Դեհ, ոչինչ, հիշողություն կորցրած մարդ եմ, ներելի է:

Եթե մտահոգումդ լիովին չիրագործվեց, ապա գոնե պետք է փորձել օգտվել այնքանից, որքանն իրագործվեց... Մի րոպե, իսկ սա՞ ինչու մեջ բերեցի, և արդյո՞ք՝ ես, թե՞ դրսից հուշվեց... Չգիտեմ: Սակայն մտասևեռվել հարկավոր չէ, ինձ հետ արտառոց բաներ հիմա շատ են պատահում, վերցնենք, թեկուզ, այն տարօրինակ բառը՝ Վահեմե:

Վահեմե, Վահեմե... Ի՞նչ է այս անիծյալ Վահեմեն, որ ժամանակ առ ժամանակ հայտնվում-փայլատակում է ուղեղիս մեջ ու դուրս թռչում բերանիցս: Եվ ինչու՞ միշտ մեծատառ՝ Վահեմե, երբեմն նույնիսկ՝ ՎԱՀԵՄԵ: Վթարից եղավ, ըստ երևույթին՝ ուղեղիս մեջ, հիշողության կորստին զուգընթաց՝ միացան ինչ-ինչ փակ, գաղտնի կետեր, և ես հաճախ, կամքիցս անկախ, անհասկանալի ինչ-որ բառեր եմ արտասանում, որոնք սկզբում շատ էին, հիմա մնացել է միայն այս Վահեմեն: Կարծում եմ՝ հնչյունների պատահական միավորում չէ, գուցե մի ամբողջ համակարգ է խորհրդանշում, որովհետև նրա փայլատակումն ուղեղիս մեջ ուղեկցվում է տազնապի, հաճախ էլ խուճապի զգացումով, և ես ուզում եմ փախչել. չգիտեմ ումից, ինչից և ուր, բայց համոզված եմ՝ փախչել է պետք: Երբեմն էլ մտապատկերիս մեջ հանկարծ հայտնվում են ինչ-որ վիթխարի, թավամազ արարածներ, կատաղի աչքերով, հսկայական ժանիքներով, արյուն սառեցնող մռնչյուններով: Նաև ինձ անծանոթ երկխոսություններ են լսում՝ ցածրաձայն, վախեցած, ակնածալի, և այդ շշնջոցների միջից ականջս հաճախ որսում է նույն «Վահեմեն»:

Իսկ այն հոգեբույժն ասում էր՝ «Ձեր հիշողությունից ջնջվել է այն, ինչը...»... չէ, այս մասին ասել եմ ոնց որ, և ինչու՞ հանկարծ մեջ մտավ: Նաև՝ եթե լիովին չիրագործվեց, պետք է գոնե օգտվել... Չէ, ոչ էլ սա էի ուզում ասել: Բայց ի՞նչ էի ուզում... Դե լավ, թողնենք:

Տնից հեռացա,- սա չէի ուզում ասել, բայց հիմա արդեն ուզում

եմ,- հազիվ երկու ամիս ապրեցինք, չընտելացանք, մեզ ոչինչ չէր կապում այլևս և չէր կապելու՝ սա հասկացել էինք: Կնոջս հետ ընդհանուր անկողին չունեցանք այդպես էլ, թեև թվում է հակառակը պիտի լիներ՝ հաշվի առնելով նորույթի հանգամանքը: Սակայն չստացվեց, ինչ-որ բան խախտված էր: Մի խոսքով՝ հեռացա. որքա՞ն կարելի էր ապրել օտար տանը, օտար մարդկանց հետ: Մենք իրար բացարձակապես չէինք հասկանում, մենք միայն նյարդայնացնում էինք իրար:

Իսկ գիշերները...

«Դու մոռանում ես այն...», չէ, այսպես չէր... «Քո հիշողությունից ջնջվել է այն...», թու՛, դարձյալ մեջ մտավ, բոլորովին այլ բան էի ասելու: Բայց ի՞նչ... Ախ, այո: Իսկ որքան դժվար է ապրել, երբ գիշերները... Չէ, չէ, գիշերները կապ չունեն, այսինքն ունեն, բայց ոչ այս առիթով: Ոստի, որքան դժվար է ապրել կատարելապես օտարացած քաղաքում, օտար ազգի մեջ, որին կապող միակ օղակը բարեբախտաբար չջնջված լեզուն է, այն էլ՝ խճողված ինչ-որ անհեթեթ բառերով ու խզումներով: Շինություններ, փողոցներ, պատմություն... Այս կարգի բաները մեջս հույզեր, զգացմունքներ, զուգորդումներ չեն ծնում, միայն հետաքրքրությունս են երբեմն շարժում. զբոսաշրջիկի հետաքրքրություն, ոչ ավելի: Նորի՞ց սկսել... Ոչ, չի ստացվի, իմ տարիքի համար չէ: Անկեղծ ասած՝ չեմ էլ ուզում, այսպես հանգիստ է, այսպես ազատ եմ, իսկ մենք սիրում ենք ազատությունը, որքա՞ն ենք սիրում գիշերները... Ինչու՞ գիշերները, չէ, ազատությունը, ազատության մասին էր խոսքը: Ի վերջո կարծում եմ, որ ելակետ եկածի գլխավոր առաքելությունը վերջնակետին հասնելն է, և ընթացքը, բնականաբար, այնքանով ավելի հեշտ է, որքանով քիչ ես բեռնված, ավելորդությունները նկատի ունեմ, հատկապես՝ եթե արդեն ավելի մոտ ես վերջնակետին, քան ելակետին: Իսկ ինքնակամ ընդհատել ընթացքն արգելվում է, ՉԻ ԿԱՐԵԼԻ: Ինչու՞: Որպեսզի հասնես քեզ համար նախատեսված, ավելի խիստ՝ կանխորոշված վերջնակետին: Տրամաբանական է, չէ՞: Չգիտեմ, թե ինչու է այդպես, բայց որ տրամաբանական է՝ բացահայտ է, որովհետև ինչու՞ պիտի տրամաբանական լիներ, եթե այդպես չէր: Տրամաբանական է, չէ՞: Բայց տրամաբանական է որ... Եվ արդյո՞ք տրամաբանականն է որոշիչն այս դեպքում: Վերջապես ո՞վ ասաց, թե արգելվում է, ո՞վ... Ու՞ր է Հեղինակը, ո՞վ է տեսել կամ լսել նրան... Վահեմե... Խառնաշփոթը դարձյալ ներխուժեց... Վահեմե... Սրտխառնոցը սեղմում է կրկորդս... Վահեմե...

Եթե ալֆա կետից պիտի հասնես օմեգա կետին... Մի րոպե, հեշտ ես խոսում, մի՞թե ժամանակի և տարածության մեջ հենց էնպես կե-

տեր են լինում, մի՞թե յուրաքանչյուր կետ չունի նախապատմություն և շարունակություն, մի՞թե ելակետը, որն ըստ քեզ սկսվում է առաջին ճիչից, անվերջանալիորեն ետ չի գնում նախնիներիդ արյան միջով, և մի՞թե օմեգան իսկապես վերջակետ է՝ մութ փոսում թաղված: Եթե այժման ունի շարունակություն դեպի ետ, ինչու՞ օմեգան պիտի զրկված լինի դեպի առաջ շարունակվելու իրավունքից, տրամաբանական է, չէ՞... Թե՞ փրկում ես քեզ... Վերջապես քո ի՞նչ գործն է, թե որ գրողի ծոցն են շարունակվում կետերը, դու քոնի տերն ես, իսկ քոնը երկու այդ կետերի միջև ընկած հատվածն է, մնացյալին ձեռք մի տուր, տեր եղիր միայն քո հատվածին: Սակայն մի՞թե դա քոնն է, չէ՞ որ Արգելվում է: Իսկ, իսկ...

Իսկ գիշերները, գիշերները այլ են... Գիշերը ցերեկ չէ, որ խաբվես կամ երեկո, որ ավելի խաբվես, սակայն փոքր-ինչ այլ տարբերակով, անուշ՝ այսպես ասած, գիշերը խաբում է ճշմարտորեն ու դաժան: Գիշերն ուրիշ պատմություն է հյուսում, գիշերն իր թանձր պատմությունների մամլիչով ճմլում է հոգիս, մարմինս, միտքս, և քնած, թե արթուն՝ քանի որ փրկություն չկա, եթե գիշերն է խրել մագիլները, տեսնում են ցուրտ խավարի միջով դանդաղ առաջացող թափորը, թափորի մեջ նրանք՝ հայրս, կինս, դստրիկս, ուրիշներ, որոնք նույնքան օտար են, որքան հարազատ, ոչ, առավել հարազատ, հակառակ դեպքում այդքան օտար չէին լինի, ու բոլորը գլխահակ են, անկասելիության, անելանելիության կռահումից վիատ, կողք կողքի, իրար մեջ, բայց անջատ, ես էլ ահա մեջներն են, ու գնում ենք, գնում ենք դեպի մութ բիծը, որ չարագուշակ թարթում է առջևում, արդեն մտ: Դոփյուններն անհամարձակ պոկվում են թաց հողից ու բարձրանում վեր, արագ խլանում-տարրալուծվում սառն օդում, չհասնելով նույնիսկ ծառերի կատարներին, և սարսափեցնողն այնքան մութ բիծը չէ, որքան կոկորդ սեղմող լուռ բողբոջի անհասցե-անպատասխան լինելը, որքան ուրիշ, ուրիշ բան, ինչի անունն ու տեղն անհայտ է: Եվ մի՞թե վիհ տանող ճամփին իմաստ ունի հիշողությամբ բեռնվելը: Առջևում սարսափած ոռնում են գայլերը, խուճապահար կաղկանձում շները, օծերը չեն կծում, կատուները մլռտում են՝ վախեցած, հարազատի պես սեղմված առնետներին... Հաշտություն է, հաշտության ճամփա, վիհը հաշտեցնում է, և ճամփան էլ ավարտվում է արդեն: Բայց ես վեր եմ թռչում մածուցիկ վիհի պռնկին չհասած, երբ նոր-նոր աղեկտուր գոռում են առաջին գահավիժողները, վեր եմ թռչում, սարսափած աղաղակում՝ վայ մեզ, վայ մեզ... Վահեմե՛, Վահեմե՛... Ու անկողին չեն մտնում այլևս: Սակայն պատուհանների հետևում դողդոջուն դոփյուններ են լսվում... Պատուհանների ետևում նույն գլխահակ թա-

փորն է, նույն ոռնոց-աղաղակը: Թափորն է նաև փակ դռան ետևում և... մահճակալի տակ, այո, մահճակալի տակ: Իսկ պահարանի ետևում ի՞նչ է, իսկ ինչու՞ են երկարում-ցնցվում ալեհավաքի զույգ պոզերը... Ինչու՞ ճռռաց լոգարանի դուռը, ո՞վ է այնտեղ ծիծաղում թունոտ, ինչու՞ դժգույն ցուք սահեց առաստաղով, ու՞մ եք հրավիրում, է՛, պատրաստ չեմ, հագնվեմ գոնե, և մի ծիծաղեք այդպես: Լուսաբաց, լուսաբաց, խաբեբա, հիմարիկ, փրկիչ լուսաբաց, իջիր, հայտնվիր վերջապես...

Իսկ գիշերները... Ոչ, լուսաբացները, այո, լուսաբացները...

Իսկ լուսաբացները ես կանխավ եմ զգում, ժամացույցին նայելու կարիք չունեմ, ոչ էլ արտաքին հայտանիշների բացակայությունը շփոթության մեջ կզցի. լուսաբացը ես զգում եմ բջիջներով: Եվ երբ թիկնապարկն ուսիցս կախ, կարթածողը ձեռքիս՝ դուրս եմ գալիս տանից, փողոցում արդեն քստքստում է ցախավելը (ցախավելները սրբում են գիշերվա հետքերը, կեցցեն ցախավելները), անցնում է աղբատար մեքենան, պուրակում երևում են մարդ ու շուն... Առավոտ է: Ես քայլում եմ դեպի երկաթուղային կայարան, ես նստում եմ առավոտյան գնացքը. մեկ ժամ՝ և ես իմ սիրած լճափին կլինեմ: Ձկնորսության եմ գնում:

Մենակ եմ ապրում, տանից վաղուց հեռացել եմ. միմյանց չենք տեսնում այլևս, չենք փնտրում: Միայն հայրս է ժամանակ առ ժամանակ այցելում: Նստում ենք, լուռ նայում միմյանց... ասելիք չկա, ինչ էլ ասի՝ էնտեղից է, անցյալից, իսկ ես մասնակից չեմ, չկամ ես նրա անցյալում, չեմ հիշում, նա կարծես արդեն համակերպվել է այս իրողությանը, թեև երբեմն այնուամենայնիվ մոռանում է ու ինչ-որ բան հիշած սկսում. «Լուսահոգի մայրս էր քեզ բաղնիս տանում, չորս-հինգ տարեկան էիր, կնանիքանց բաղնիք էր տանում, դե հո տղամարդկանց չէ՞ր տանելու, գալիս էիր սիրուն, կարմրաթշիկ, ասում էիր պապ, էդ տոտաների ծիծիկները ինչի՞ է էդպես մեծ, քոնը փոքր: Շատ հարցասեր էիր: Մի անգամ էլ սայթաքել-ընկել էիր ու ճակատդ ճղել, լուսահոգին էնքան ախուվախ արեց, էնքան անիծեց իրեն...»: Երկար չեմ դիմանում, միշտ ընդհատում եմ գոռալով՝ ախր, այ հեր, էլի մոռացար, որ բան չեմ հիշում, բացարձակ չեմ հիշում ու չեմ էլ ուզում, ուրիշ մանկություն ինձ պետք չէ, ավելորդ տեղեկություններ ինձ պետք չեն: Նա վախեցած սկսվում էր ու նայում, թե ոնց եմ նյարդայնացած մի անկյունից մյուսը քայլում կրկնելով՝ Վահեմե՛, Վահեմե՛: Շատ է խեղճանում, շատ կծկվում, պատահում է՝ հանկարծ զրկում ենք իրար: Խեղճ մարդ: Բայց ես չեմ կարող հարթել կնճիռներդ, հայր, ես չեմ կարող ուղղել կորացած մեջքդ, հայր, ես չեմ կարող հանել ճպռտ կարոտն աչքերիդ միջից, հայր, ես չեմ

կարող ջնջել հիշողությունդ, հայր... Գնա, հայր, ես քեզ քո պատյանից հանել չեմ կարող, ես հոգուդ թեթևություն բերող չեմ՝ եթե նույնիսկ անդադար լսեմ պատմություններդ, ինքդ պիտի գտնես ինքնախաբեությանդ դեղը: Հեռուստացույց նայիր, նայիր առավոտից իրիկուն, նայիր գիշերով՝ եթե քունդ չի գալիս, նայիր գվարձալի ծրագրեր, հիմար, թեթև սերիալներ, դրանք կարող են մոռացնել, փրկել, փառք դրանք ստեղծողներին, նրանք են ամենամարդասերը: շատ գույն, քիչ միտք, պարզունակություն, հիմարություն, ծիծաղ... Գնա, հայր, ինձ հետ դժվար է, ես ավելի տառապանք կբերեմ, փրկություն չորոնես իմ մեջ: Եվ մի բարկանա, ես մեղք չունեմ, Մեղքն Ուրիշինն է: Գնա, միացրու հեռուստացույցդ ու նայիր, նայիր ինչ պատահի, ամեն բան...

Չէ, ամեն բան չնայես, զգույշ եղիր: Կենդանիների մասին մի հաղորդում նայեցի վերջերս: Անտիլոպների հոտը կտրում-անցնում էր բաց տարածքով, շտապում՝ պահ առաջ հասնել ծառերի հովիին: Իսկ հղի էգն ավելի ու ավելի հետ էր մնում, ծննդաբերությունը սկսվել էր՝ հենց այդտեղ, բաց տարածքում և զսպել այլևս անկարող էր: Հոտը հեռանում էր, իսկ անտիլոպը պառկել էր ու տագնապած մնչում էր՝ նայելով ցեղակիցների անտարբեր հետույքներին: Ահա, գնացին ջրերը, ահա, ցցվեց ձագուկի լորձածածկ մուրթը... Իսկ անտիլոպը շտապում է, ջղածգվում: Եթե ձագուկը ծնվի ու գոնե մի քանի րոպե կանգնի, հետո կվազի մոր կողքով, կփրկվի: Բայց երկնքում հայտնվեց առաջին ստվերը, ապա ևս մեկը, բորենին մոտակայքում լպստեց մուրթը, շնագայլերը տագնապած հաչացին: Անտիլոպը չարագուշակ մայեց, թեև ճիշտ կաներ լռել, ասենք՝ էլ ի՞նչ: Անգղներն առաջինն իջան ու արագացրին ծնունդը՝ քաշել-քաշքշելով մասամբ դեռևս արգանդում մնացած ձագուկին: Շնագայլերը մոտեցան, աշխատեցին քշել անգղներին, հեռվից գալիս էր բորենին... Ծննդի հոտը արբեցրել է բոլորին՝ խռնվել են, ծվծվում են, կաղկանծում, կծում, կտցում... Էգ անտիլոպը փորձում է ոտքի կանգնել, բայց ապարդյուն, վրա հասած բորենին փախցնում է շնագայլերին ու պողպատյա ծնոտները փակում նրա կոկորդին: Իսկ հեռվում անտարբեր արածում է անտիլոպների հոտը, բարձրից անտարբեր ջերմացնում է արևը, էլի ինչ-որ մեկն անտարբեր նայում է վերից կամ վարից: Անգղները վերջին պատառներն են կտցում, շնագայլերը լպստում են արնոտ մուրթները, բորենին քարշ է տալիս խեղդամահ անտիլոպին, հայտնվում են նոր բորենիներ. արդեն շատ բան չէ՝ բայց մի բան իրենց էլ կհասնի: Վերջ: Այսպիսի հաղորդումներ չնայես, հայր, անհապաղ փոխիր ճշմարտության ակիքը, նրանց էլ մի թողնիր ճշմարտությանը նայել, ճշմարտություն պետք

չէ, գվարձալի ծրագրեր նայեք, ծիծաղեք, անդադար ծիծաղեք, պայթելու չափ ծիծաղեք, հռհռացեք... Իսկ ես գվարձացնել չեմ կարող, ծիծաղել չեմ կարող, մոռացել եմ, երևի չեմ էլ կարողացել, չեմ կարող...

Իսկ այն հոգեբույժն ասում է... Թքած հոգեբույժի վրա, ես այլևս չեմ հիշում, թե ինչ է ասում նա, ինչ էր ասում, ինչ կասի կամ ինչ կասեն, ինչ ուզում են՝ թող ասեն, որովհետև...

Որովհետև ես ձկնորս եմ, ոչ ավելի, սա է իմ միակ զբաղմունքը, այո, այդպես է: Ահա, նստած եմ լճափին, ծալովի աթոռիս, իմ մշտական տեղում, կարթածողի կոթը խրել եմ քարերի արանքը, կարմիր լողակը վերովար է անում դեղնավուն ջրերի մեղմ ալիքներին համառիթմ՝ վեր-վար-վեր-վար... Իսկ ես հանգիստ ծխում եմ, թերմոսի մեջ տաք սուրճ ունեմ, լճափն էլ կատարելապես անմարդ է: Այս լիճը ոչ ոքի հարկավոր չէ, ջուրը տղմոտ է, լայծուն ջրիմուռներով ու կռկռան գորտերով լեցուն: Լողորդներին չի գրավում, ձկնորսներին՝ նույնպես, որովհետև ձուկ չկա կամ համարյա չկա՝ այս ամբողջ ընթացքում մեկ ձուկ է բռնած, այն էլ հյութված, խեղված մի մուտանտ, որ դարձյալ ջրին դարձրի: Հիմա իսկի խայծ էլ չեմ դնում կեռիկին, ի՞նչ իմաստ, մի՞թե ձուկն է կարևոր... Կարևորն այստեղ նստելն է՝ նստել, լսել եղեգների խշշոցը, գորտերի կռռոցը, թռչունների կռնչոցը, նայել ալիքներին վերովարվող լողակին... Եվ չմտածել, անջատել միտքը, դառնալ շրջակայքին համանման, համատեսակ, ներդաշնակ, նույնանալ՝ քարերին, փշերին, տղմոտ ջրին, եղեգին...

ԳՌՆԵՐ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐ, ԳՌՆԵՐ

Մշուշը փտող աղիքի պես ուռչում է շուրջս: Անմարդ բանջարանոցներն իրարից զատող արահետը ցեխոտ է, սայթաքուն: Ինչին դիպչում եմ՝ սառն է, թաց: Ուտքիս տակ մետաղային խշխշոց լսվեց. ժանգոտ շղթա է, մի ծայրը ծառին է կապած, մյուսը... կորչում է թփերի մեջ: Մոտիկ ինչ-որ ստվեր սահեց, սակայն շղթան անշարժ է մնում: Քայլերս արագացրի, մացառներից կառչելով մազեցեցի բլրակն ու վերջապես դուրս եկա ճանապարհ: Շենքի առեղի գորշ գանգավածն առջևումս է՝ մեկեն խոյացավ մշուշի միջից. կաթնագույն ծվենները փափուկ սահում են շուրջբոլորը թափված աղբակույտերի վրայով: Դռան ծոված փեղկը հոգնած ճռաց՝ դժկամորեն ներս առնելով ինձ: Կիսամութ: Պատի խոր ճեղքերից գորշ խլրտոց է նկա-

տելի: Սանդուղք, դռներ, պատեր, դարձյալ դռներ: Թակում եմ:

- Ու՞մ եք ուզում,- տղամարդու զգուշավոր ծայն է:

- Ես Մանվելին եմ փնտրում:

- Չկա այստեղ Մանվել:- Այդպես էլ չբացված դռան ետևում լարված լռություն է, ապա լռությունն էլ է լռում:

Պատին կավիճով գրված է. «Կուզեմ կգամ, չուզեմ՝ չեմ գա»: Կողքին մի ուրիշ գրություն. «Սուտասան»: Ավելի այն կողմ՝ հայիոյանք: Շխկրտոցով բարձրանում է վերելակը, կանգ է առնում, ետ քաշում փեղկերը՝ հրավիրում մտնել: Շրջվում եմ. փոշոտ սառը բազրիքով աստիճաններ: Այս հարթակը շատ ծանոթ է: Նեղլիկ միջանցքի երկու կողմերում երեքական դուռ պիտի լինի... Այդպես էլ կա: Չախ կողմի վերջին դուռը, պատվող մեխանիկական զանգով... Սակայն, ավաղ, դուռ չկա, իմ առջևում մութ, դատարկ խռոչ է: Ու՞ր է տունը, տունը չկա: Մթան մեջ ծանոթ ուրվապատկերներ են շարժվում: Թվացյալ է: Հեռանում եմ: Պատեր, աստիճաններ, դռներ...

- Ի՞նչ, Մանվել՞ը: Գիտե՞ք, այնպես գայրացած եմ այդ Մանվելի վրա, այնպես եմ գայրացած... Վաղու՞ց եք փնտրում:

- Վաղուց:

- Ամուսնուս անունն էլ Մանվել էր: Էհ, մեռավ խեղճը: Չլինի՞ նրան եք փնտրում:

- Ոչ:

- Արդեն գնու՞մ եք: Սպասեք, մի րոպե: Քանի որ եկել եք, գուցե օգնե՞ք այս նկարը պատին կախել, երեկ պոկվեց, քիչ մնաց գլուխս ջարդեր: Չե՞ք օգնի:

- Մուրճ տվեք, մեխ:

- Մեխը խալաթիս գրպանում է, ահա, հենց ընկավ՝ դրեցի գրպանս, որ չկորչի: Բայց մուրճ չունեմ: Այս քարով չե՞ք խփի. թթվի վրա դնելու քար է: Վայ հիշեցի. ախր ամուսնուս անունը Մանվել չէր, Սամվել էր, խելք չի մնացել գլխիս: Մանվելը ուրիշ պատմություն է, բայց ձեզ չեմ պատմի, գաղտնիք է: Թե՞ պատմեմ:

- Պետք չի:

- Արդե՞ն... Ի՞նչ հեշտ խփեցիք, ամուր ձեռքեր ունեք: Կարժես լավ եղավ, չէ՞: Շնորհակալ եմ: Թեյ կուզե՞ք: Բալի լիկյո՞ր, ես եմ պատրաստել: Չէ՞: Շտապու՞մ եք:

Վերելակն այս անգամ իջնում է՝ ասես առավել սաստիկ շխկրտալով: Մեզահոտ խցիկը դարձյալ հրավիրում է: Չարագուշակ ինչ-որ զգացում է ներշնչում այդ փակ տարածքը: Առանց մտնելու՝ դրսից սեղմում եմ ամենավերի կոճակը և ձեռքս արագ ետ քաշում: Ոչ մի արծագանք. չի խաբվում: Բարձրանում եմ աստի-

ճաններով՝ ետևից լսելով խցիկի քնծիծաղը. յուղոտ ճոպանը լարված-անհամբեր ցնցվում է: Ներբանս ինչ-որ մածուցիկություն է ձգմուն, այնուհետև գարշահոտ հետքեր թողնելով աստիճանների վրա:

Հնամենի, ոստոտ դուռը ճռնչալով ետ է գնում՝ պոկելով շրջանակից կառչած սարդոստայնները: Մթության միջից ընդամաջ է գալիս ծառի կեղև հիշեցնող ծերունական դեմքը: Փառակալած աչքեր: Շատ ծանոթ է դեմքը: Ծանոթ են նաև ներսից եկող հոտերը՝ քրտինքի, խոնավության, հնացած կերակուրի... Այնտեղ էլի մի քանի գառամայլներ կան, հանգած վառարանի շուրջ նստած՝ դատարկ հայացքները հառել են ինձ: Սիրտս ճմլվում է: Աներևույթ մի ուժ հրում է՝ ուզում եմ ներս մտնել: «Մանվելը...», - սկսում եմ, սակայն դուռը շխկոցով փակվում է քթիս դեմ:

Դարձյալ վերելակը: Արագացնում եմ քայլերս, որպեսզի չտեսնեմ նրա բացվող փեշերի հրավերը: Պատեր, աստիճաններ... Կրունկիս տակ շխկոցով ջարդվում է ներարկիչը: Դուռ: Ուզեցի թակել, սակայն ձեռքիս հպումից դուռն անձայն ետ գնաց:

- Ներսում մարդ կա՞,- հարցրի:

Կիսաբաց դռան ետևում ընդհատ շնչառություն լսվեց, կաթնասպիտակ շիթը դուրս սահեց՝ բռնեց ձեռքս, ներս է քաշում. տաք հպում է:

- Դե արի, վաղուց եմ սպասում:- Փականը փափուկ շխկում է իմ ետևում:

Նստեցինք. թախտը հոգնած տնքաց մեր ծանրության տակ: Նրա մարմինը շլացուցիչ սպիտակ է այնքան, որ անբնական է, նույնիսկ վանող: Պառկում է՝ դողացող ձեռքը դնելով ձեռքիս. տաք հոսանք է անցնում մեջս: Պատից ընկած ստվերը ծածկում է նրան, ստվերի ծածկոցից բարձր մնում են միայն կանգուն ստիճանները, փորը, ծնկները, ոտքի մատները: Ձեռքերը բարձրացնում՝ կանչում է: Այսչափ սպիտակ մարմինն անբնական է, բայց՝ տաք, թրթռուն... Միայն թե ինչ-որ արտառոց, ոչ մարմնական կշռույթ կա այդ թրթռանքում... Ինչը, սակայն, արդեն կարևորություն չունի:

- Հիմա դու լրիվ իմն ես,- հառաչանքի պես լսվում է նրա ձայնը ստվերի միջից: Ի՞նչ են նշանակում այս բառերը... Սակայն որևէ բան նշանակություն ունենալ չի կարող՝ երբ թախտն արդեն արագացող կշռույթով է ճռճում:

- Հագնվու՞մ ես...

- Այո:

- Կոճակդ պոկվեց, բեր կարեմ:

- Ոչ, շտապում եմ, ուրիշ անգամ: Լսիր, Մանվելին ո՞նց գտնեմ:
- Մանվելի: Վերելակի վարպե՞տն է:
- Նա վերելակի վարպե՞տ է...
- Չգիտեմ, երևի շփոթում եմ: Գնալուց առաջ չե՞ս համբուրում:

Միջանցք, աստիճաններ... Սեղմվում եմ պատին, որպեսզի բաց թողնեմ ահռելի դռանը. նա հոտոտում է տաբատս պոկված կոճակի տեղում, փնջացնում, գռմռում ու շարունակում իջնել:

Վերելակն է մոտենալով դղրդում: Չեմ կարողանում հրաժարվել, հոգնել եմ. մտնում եմ խցիկը, փեղկերն անմիջապես փակվում են՝ «Բռնվեցի՞ր»: Ծուղակ-խցիկը սլանում է վեր: Դղրդոցը սաստկանում է, ինչ-որ մետաղյա մասեր են պոկվում, ընկնում ցած, պլաստմասսե թևեր են անջատվում, սավառնում կողմ, փեղկերի միջև ձեռք է գոյանում, նայում եմ... Տարօրինակ է՝ վերելակը դուրս է եկել և շենքի արտաքին պատով է սլանում, վերում տազնապահարույց ցնցվող ճուպանը հեռանում է դեպի միզամած երկինք: Դղիրդ, էլի դղիրդ, և խցիկի պատը պոկվում-գահավիժում է: Վերելակը, պատից մի կերպ կառչած, հիմա էլ հորիզոնական ուղղությամբ է շարժվում: Պառկում եմ հատակին ու նայում... Գետինը չի երևում, մշուշ է: Հանկարծ հատակն էլ է պոկվում, և ես սուրում եմ վար՝ ձեռքերով մշուշը: Վայրէջքս, սակայն, փափուկ է ստացվում՝ ընկնում եմ մեծ աղբաբլուրի վրա: Ոտքի եմ կանգնում, թափ տալիս հագուստիս կպած չուլուփալսար: Քիչ հեռու, հնամաշ վերմակին նստած մեկը ինձ է նայում՝ անվրդով բաց թողնելով գլանակի կապտագորշ ծխաբուլաները:

- Նստիր,- հրավիրում է:- Նստում եմ: Ինձ է տալիս կիսատ գլանակը: Ազահորեն ներքաշում եմ կծվահամ ծուխը:- Ի՞նչ ես գլխապատառ այս ու այն կողմ վազվզում,- հարցնում է՝ վերստին վերցնելով գլանակը:

- Փնտրում եմ: Մանվելին:
- Այ թե ինչ...- Խորամանկ ժպտում է:- Ես եմ Մանվելը: Չես հավատու՞մ: Լավ, ուրեմն դու ես Մանվելը: Էլի չե՞: Որ էդպես է՝ վերցրու,- դարձյալ ինձ է տալիս գլանակը:- Խեղդիր, ես կշտացա:
- Ծխում եմ: Առջևում շենքի կիսաբաց դուռն է:
- Նորից մտնեմ,- ասում եմ՝ ցուցանելով շենքը:
- Մտիր, բա ոնց:

Գցում եմ քնթուկը, վեր կենում և քայլում դեպի դուռը՝ թիկունքիս զգալով հեզնական ժպիտի ծակոցը:

ՅՈԹ, ՎԵՑ ԿԱՍ ՈՒԹ

Սենյակում գոլորշի է, ինչպես բաղնիքում: Սակայն ցուրտ է: Խոնավ բարձր պատեր... Այս տան պատերն այսքան բարձր չեն եղել: Եվ պաստառն էլ ուրիշ է: Պաստառ առհասարակ չկա, սվաղի ֆակտուրան էր՝ շփոթության մեջ գցեց: Այդուհանդերձ, ինձ ծանոթ տունն է, ես դա զգում եմ: Եվ եթե չեմ սխալվում՝ ընթրիքի եմ հրավիրված: Տանտիրուհին կծկված-քնած է բազմոցին: Ինչու՞: Իսկ ե՞ս ինչու եմ հատակին նստած: Պատի տակով ջուր է ծորում, լճակի եզրը շուտով կոշիկիս կհասնի:

- Ո՞վ է այստեղ միզում,- հարցնում եմ՝ աշխատելով տեսնել սենյակի խորքը, սակայն հայացքս չի հաղթահարում գոլորշու պատնեշը, և հնաժճ փայտյա բազմոցին պառկած տանտիրուհուց բացի ոչ ոքի չեմ տեսնում:

- Չեմ միզում,- պատասխանում են ինձ արծազանքվող ձայնով:
- Իսկ այս ջու՞րը:
- Վերից է, հարևանի տնից, սովորական բան է:- Տանտիրուհին դեմքը վերջապես իմ կողմն է շրջում: Ի՞նչ խղճուկ է տեսքը: Մի՞թե սա է իմ բարեկամուհին: Բայց սա է, զգում եմ:
- Չբարձրանա՞մ, զգուշացնեմ,- ասում եմ ես. դա նաև փախուստի ենթագիտակցական մղում է:
- Անիմաստ է, նրանք երբեք տանը չեն լինում:
- Ո՞նց, իսկ ջու՞րը:
- Ի՞նչ կապ ունի:

Իսկապես որ, ի՞նչ կապ ունի: Թափուր բազմոցով սողում է ուտիճը: Տանտիրուհին հայելու առջև դեմքն է ներկում՝ սև, կապույտ, երկնագույն, վարդագույն: Գոլորշին սկսում է ցրվել: Անկանոն քառանկյան ձև ունեցող սենյակում, պարզվում է, ևս երեք կին կա, նրանք արդեն իսկ նստած են սեղանի շուրջը: Եվ մի տղամարդ, որը գլխիկոր կանգնած է հեռավոր պատի տակ, ասես պատժված լինի. դեպքից դեպք ուսի վրայով գողտուկ հայացք է նետում կանանց կողմը:

- Ընթրենք,- հրավիրում է մակիյաժն ավարտած տանտիրուհին. հայելին արտացոլում է պատի տակ կանգնած տղամարդու ցնցվող թիկունքը:- Քեզ ընթրիքի ենք հրավիրել, չե՞:

- Այո,- հաստատում եմ ու նստում սեղանի մոտ: Կանանց ներկու-
տած դեմքերով ժպիտի պես կծկում է անցնում:

Սենյակի լարված, բռնագրոսիկ մթնոլորտը սեղանի հարթութ-
յամբ երկու մասի է բաժանված: Կարի մասում ինչ-որ ձգող բան կա,
պարզորոշ զգում եմ: Ի վերջո ձեռքս աննկատ իջեցնում, շոյում եմ
մոտակա ոտքերը: Նրանք չեն հեռանում, սպասում էին: Ու՞մն եմ:
Տանտիրուհունը չեն, նրա ոտքերը ոսկրոտ են ու կարճ: Սրանք պա-
րարտ են, երկար: Պարզ է ումն եմ: Պատի տակ կանգնած տղամար-
դը դարձյալ նայում է ուսի վրայով և դավադիր ժպտում: Գցում եմ
պատառաքաղը և կռանում սեղանի տակ...

Փլուզման դրդող... Խավար...

Պառկած ենք բետոնե սալին, ձեռքերս շարունակում են ամուր
պահել պարարտ ոտքերը ծնկներից վեր, նրանք գոլ մածուցիկութ-
յամբ են լցրել գիրկս:

- Որտե՞ղ ենք,- հարցնում եմ. ձայնս կատարելապես անտազնապ
է:

- Ցածում,- նույնքան անտազնապ ձայն է, և ինձ մի պահ թվում է,
թե սեփական ոտքերս եմ գրկել:

- Սեղանի տա՞կ:

- Շատ ավելի ցած:

Աչքերս սկսում են վարժվել խավարին: Տեսնում եմ: Բետոնե սա-
լի մի կողմում անհատակ մութ է, այնտեղից սառը շունչ է բարձրա-
նում-խփվում դեմքիս: Մյուս կողմում աղբածածկ տարածություն է:
Խորքում շարժում կա, շշուկներ: Թավամազ ինչ-որ արարած դիպ-
չում է ձեռքիս:

- Չգնա՞նք,- հարցնում է կինը, որի գրկումս պահած ազդրերով
լորձ է ծորում:

- Ու՞ր,- թողնում եմ ոտքերը: Փտած կաղամբի հոտ:

- Բետոնի վերջում ձեղք կա, այ այնտեղ:

Թիթեյա տուփը խուլ թխկթխկոցով փախչում է ոտքերիս տա-
կից: Ջանում եմ տեսնել ձեղքը վերևում: Մանկան ճիչ:

- Կարծես ողջ է,- ասում է կինը՝ ցույց տալով ձայնի ուղղությամբ:
Տեսնում եմ՝ խառնշտորած մազերով պստիկ աղջնակ է, աղբակույ-
տի մեջ խրված՝ մեզ է պարզել թաթիկները: Բռնում եմ, քաշում...
Մարմինը, գոտկատեղից, զարմանալի դյուրությամբ պոկվում ու
թեթևորեն բարձրանում է, մնացյալը մնում է կույտի մեջ:

- Պոկվեց,- ասում եմ կնոջը, որն արդեն մագլցում է բետոնե սա-
լը:

- Տեսա,- ասում է:- Թող, կիսատ երեխան ու՞մ է պետք:

Թողնում եմ կիսված աղջնակին. կլորված աչքերի մեջ անիմաստ

ժպիտ կա, թլիկ՝ ինչ-որ ոտանավոր է թոթովում, անխռով: Ձայնն
աստիճանաբար խլանում է ետևում, ես մագլցում եմ՝ ուղեցույց ու-
նենալով սպիտակ, պարարտ հետույքը: Վերում աղոտ լույսն ար-
դեն երևում է ձեղքից:

Գիշերային փողոց: Ցեխաջուր: Լապտերները թույլ մարմրում են:
Թաց ռելսերի պողպատային արտացոլանք: Այրված, ավերված վա-
զոն: Որի ետևից հանկարծ տասնյակ թիկնոցավոր մարդիկ են դուրս
գալիս ու շրջապատում ինձ: Բոլորի աչքերը փայլում են մոլագարի
խախտված ժպիտով: Հեռվում հաչում են շները: Փնտրում եմ կնո-
ջը: Չկա: Չքվել է:

- Այս Գրքին ծանոթ ես,- չարախնդալով հարցնում է մոտեցածնե-
րից մեկը:

- Ծանոթ եմ,- ասում եմ՝ տեսնելով խաչը գրքի կազմին: Գրքեր
կան նաև մյուսների ձեռքին:

- Օրենքները կարո՞ղ ես թվել:

- Անգիր անել՝ դեռևս չի նշանակում իմանալ...- Փորձում եմ փրկել
ինձ. շատ հիվանդագին ու չար է նրանց աչքերի փայլը:

- Մի ցրի, հարց ենք տվել,- համառում է թիկնոցավորը:

- Հիմա, կփորձեմ հիշել, հիմա...

Քամի է բարձրանում: Մինչ ես անելիքս եմ մտմտում, սափրած
գլուխներով ինչ-որ մարդիկ են հայտնվում, առաջ են գալիս: Մյուս-
ները, թիկնոցների տակ պահելով իրենց գրքերը, ընկրկում են:

- Ութ ոլորտների մասին ի՞նչ կասես,- մոտենալով՝ հարցնում է ա-
մենախոշոր սափրագլուխը:

- Ի՞նչ ոլորտ... Եվ ինչու՞ հատկապես ութ,- հարցրեցի. ժամանակ
եմ շահում:

- Իսկ ես միշտ էլ ասել եմ՝ վեց,- միջամտեց երկրորդ սափրագլու-
խը:

- Գուցե ի՞նչ,- զգուշորեն նկատեց երրորդը:

- Ասացի՞ ութ,- համոզված պնդեց առաջինը:

- Սակայն ինչու՞ ոչ վեց...

Մինչ նրանք վիճաբանում են՝ սաստիկ ցանկություն եմ ունենում
կտտացնելու նրանց պլալան գլուխներին: Սակայն երկար չեմ
կռվում ցանկությանս հետ, որովհետև կտրուկ ուժգնացած քամին
փողոցի աղբի հետ քշում-տանում է շուրջս հավաքվածներին: Պա-
տերի վրա տեսնում եմ փախչող երկարուկ ստվերները, իրենք ար-
դեն չեն երևում: Երևի իմ ստվերն էլ է նրանց ստվերների հետ
քշվում, որովհետև որքան ջանում եմ հայտնաբերել ինքս ինձ՝ չեմ
կարողանում:

ԱՆԻՄԱ

Ինչու...

Սափրումն ավարտելու համար ստիպված եմ ժամանակ առ ժամանակ ձեռքով սրբել հայելին: Ինչու: Տարօրինակ է: Ինչու է քրտնում հայելին, եթե լոգարանում տաք ջուր չկա... Ում շունչն է, որ ասես դիտավորյալ հայելուն է խփում ու գոլորշով պատում պաղ մակերեսը: Մի՞թե... Դու՞ ես, Անիմա, որ դուրս ես եկել քո մշտական կացարանից և անտեսանելի պտտվում ես շուրջս: Կասկածներս հաստատվում են՝ դու, պարզվում է, երբեմն իսկապես դուրս ես սահում քո թաքուն խորշերից, որպեսզի նաև դրսից ծաղրես ինձ: Դուրս ես սահում, ազատորեն սավառնում՝ մշտադառնալից աչքը, սակայն, չհեռացնելով թիրախից: Բարի, թող քո ծաղրի թիրախը լինեն մշտապես, Անիմա, միայն թե չհեռանաս, չլքես ինձ, այլապես կդատարկվեմ՝ նկուղում մոռացված թեփաթափ խամաճիկի պես:

Ահա քո տաք շունչը ծոծրակիս, ահա քո բույրն ինձ իրենով պարուրած, ահա մազերիդ հպանցիկ շոյանքը դեմքիս, պարանոցիս... Բայց տեսնել քեզ անկարելի է, շոշափել անկարելի է, լսել՝ անկարելի, քանի որ...

Քանի որ Անիման իր աներևույթ, միայն կռահելի, թեթևորեն զգալի, սակայն արբեցնող հրաշալի էությունն ողնաշարիս մեջ է ապրում, այնտեղ է նրա խորհրդավոր օթևանը, այնտեղ է դարանակալում և այնտեղից տարածում իր նյարդաթաթիկները նրբին, որ անդադար, մերթ մեղմիկ, մերթ ուժգին, ճանկռում, խուտուտ են տալիս ներսս, հրելով որոնումների՝ միշտ, նույնիսկ՝ երբ հենց նոր եմ դատարկվել, նույնիսկ՝ երբ հենց նոր եմ գտել («Անիմա, սիրելիս, ահա, գտել եմ, նայիր, գնահատիր, ինքն է, չէ՞...»), որովհետև...

Որովհետև գտնել, ի վերջո, հնարավոր չէ, երբեք, որովհետև Անիման ներսումն ապրող, հյութերդ քամող խարդախ քած է՝ քեզ ի սկզբանե, քեզ քեզնից էլ առաջ խաբած: (Ներիր, Անիմա, հասունացել էր): Անիման փքված երակ է՝ ածելուն գայթակող, բայց սայրից ճարպկորեն խոյս է տալիս, փախչում-կորչում մաշկի տակ ինչ-որ տեղ: Նա չի հայտնվելու, չի պատռվելու երբեք, որպեսզի դեմքիդ խփի կարմիր, թանձր, սփոփող շիթով: Նա զգույշ է, խելացի, նա ծրագիր ունի, ունի տեր ու առաքելություն: Անիման հեռավոր

դղիրդն է դինոզավրերի, մռտոցը էգ կատվաշյուծի, Անիման ցանկության հառաչն է անտառային նախամոր, երկնագույն անհունում պայթող դեղին մետաղ է, որի հալոցքը թափվում-խարկում է կավահողը, ներծծվում-անցնում տակը նրա, խառնում այնտեղ անիմանալի հյութեր ու ծլեցնում շուշաններ դիվային, թունաբույր, որոնք կարող են մաշկ պատռել, թույն սրսկել մաշկի տակ՝ քաղցր թույն, որ սպանում է դանդաղ՝ մեկ կյանքի չափով, եթե ինքը չէ կյանքի չափ որոշողն առհասարակ: Անխիղճ Անիմա, սեր ներարկող անսեր Անիմա: Ահա, հայելին դարձյալ քրտնում է նրա քմծիծաղից: Հայելում աղավաղված է դեմքս՝ ստրուկիդ դեմքը, Անիմա: Գուցե չէ՞ս ուզում, որ ստրուկը դեմքը սափրի, գուցե ուզում ես, որ ստրուկը մորու՞ք պահի... Դե սաս, հուշիր, լրբուկ: Ես կսպանեմ քեզ մի օր, թեև գիտեմ, որ դրա համար պիտի ինձ սպանեմ: Սակայն...

Սակայն երբ Անիման չկա և աշխարհը դատարկ է նույնքան, որքան ներսդ՝ վատ է, շատ վատ: Սակայն...

Սակայն երբ Անիման կա և աշխարհը լիքն է, որքան ներսդ...

Դարձյալ վատ է:

Իսկ ո՞նց էր լինում, երբ լավ էր լինում, թե՞ այդպես չի եղել երբեք: Անիմա, սիրելի լրբուկ, խնդրում եմ, իմ անունից հայիոյանք փոխանցիր Հեղինակին, հասունացավ հայիոյանքի ժամանակը:

Ժամանակ... Դաժան բան է, Անիմա, գիտես: Կապույտ, վճիտ ծովը հոտած ճահիճ է դարձնում ու ձեռքդ մի ձեռնափայտ տալով՝ ուղարկում վերջին զբոսանքի: Ձեռնափայտը խրվում է, խրվում են ոտքերդ, մութ խորքերից սև ճահճածուկն է մոտենում երախաբաց: Այսպես է. ծով, ճահիճ, ձեռնափայտ, խրվող ոտքեր, հոգին խոցող կարոտախտ, արցունք՝ մածուցիկ ու գաղջ, թավջութակի մեղեդային պասաժ՝ ամենավերին հնչյունից, մինչև ամենավարինը և... Վե՞րջ կարծես... Վերջ: Լավ, իսկ ի՞նչ է անում իմ լրբուկ Անիման, երբ վերջն է: Ահա՛, Անիման դանդաղ ելնում է հարսնյակ դարձած մարմնից, գնում-մտնում ուրիշ մարմնի մեջ: Դավաճան Անիմա:

Բայց դա հետո, իսկ առայժմ...

Առայժմ Անիման պրկում է քեզ, խուտուտ տալիս, ճանկռում նյարդերդ, ներսից հրում, մղում է դուրս՝ որոնումների (սափրվեցիր արդեն, չէ՞): Դիմադրել անկարելի է, որքան էլ ուժեղ կամ բութ լինես: Եվ դարձյալ որոնումներ՝ Անիմայի հրամաններին հյու-հնազանդ: Որոնում ես լույսով, ավելի շատ՝ մթնով, որոնում ես, երբ մկաններդ թրթռում են, կենսալեցուն, նաև՝ երբ մսերդ կախկխված են անուռ, որոնում ես, երբ արևը խփում է աչքերիդ ու ետ թռչում հազարավոր զվարթ կայծերով, նաև՝ երբ անմնացորդ թաղվում է աչքերիդ մեջ, ինչպես լերդացող սպիտակուցի, որ ապակյա անո-

թով դրված է զննման սառը սեղանին: Որոնում ես...

Գտա, գտել եմ, Անիմա, նայիր, նրբիկ ձեռքն ինչ փափուկ է աս-
հում մարմարյա կրծքով, խռոված պտուկն ինչպես է վարդագունած
ըմբոստանում՝ ազատվելով ձեռքի փութանցիկ բռնությունից, նայիր
կիսախուփ մոխրագույն աչքերին...

Դե նայիր, մի թեքիր հայացքդ, խանդը վայել չէ քեզ, նայիր, ա-
մուր ոտքերը որքան բարեկազմ են, երկար, կանչող, կանչող-տա-
նող վեր, ներս, խառնարանը: Ինքը չէ՞, Անիմա, ինքն է, չէ՞:

Մեկ, երկու, երեք, չորս...

Բայց ի՞նքն է որ: Մի՞թե այսպիսին պիտի լիներ, մի՞թե նա նման
է քեզ: Փակում եմ աչքերս, հայացքս մղում ներս՝ դեպի թաքուն խոր-
շերը քո և, այս էլ ո՞ր երրորդ անգամ, ջանում տեսնել, գոնե փութան-
ցիկ, գոնե աղոտ... Ահա, մի պահ կարծես հայտնվեցիր... Բայց
անմիջապես էլ կորար ավաղ: Մի՞թե այդպես էլ երբեք թույլ չես տա-
լու, որ տեսնեմ քեզ: Մի՞թե միշտ ստիպված եմ լինելու կռահումի
վրձնով նկարել քեզ իմ մտապատկերում, հետո կասկածել, ջնջել,
դարձյալ նկարել, դարձյալ ջնջել...

Որոնել, որոնել, որոնել՝ ճշում է ողնաշարս, որոնել՝ արծազան-
քում են բջիջներս, ավիշս, արյունս: Եվ ես վերստին եմ ելնում որո-
նումների արահետ՝ երգելով կարոտի բալլադը. իմ հորինածը չէ,
Անիման է հուշում ներսից՝ կրծքավանդակս տավիղ դարձրած: Եր-
գը նույնն է միշտ, բայց երբեք կրկնությունը չէ նախորդի, արահետ
ելածը նույնն է միշտ, թեև...

Իսկ այս մեկը, Անիմա, նայիր, ամրակազմ է, եռանդով լեցուն,
արևահար մաշկից խոտի, ծաղկի, կաթի ու հացի բույր է տարած-
վում, անտառային նիմֆ լինի ասես, նրա մեջ խիտ է նախնիների
արյունը: Ի՞նչ կասես, Անիմա, դեմ չե՞ս, սիրելիս: Դեմ չես, զգում եմ,
նույնիսկ քաջալերում ես՝ կամաց խուտուտ տալով նյարդերս, սրե-
լով զգայություններս:

Մեկ, երկու, երեք...

Ի՞նչ ենք անում, Անիմա, արդյո՞ք չենք խաբում ինքներս մեզ: Ին-
չու՞ էիր լռում խորամանկ, ինչու՞ չասացիր՝ կանգ առ, ետ քաշիր
ցանկությունդ վավաշուտ:

Վիրավորված եմ: Խռովել եմ Անիմայից, հոգնել նաև: Կնստեմ այս
նստարանին, այս կապուտակ երկնքի մեջ, որի մի պստիկ սև կետն
եմ, ջրածնով փչած սև փուչիկ, որ սպիտակ դրոշը պարզած լողում
է աննպատակ. մի քիչ աջ, մի քիչ ձախ, վար, վեր, ցնցում... Փուչիկը
պայթում է:

Ո՞չ, թույլ չե՞ս տալիս, էլի՞ ճանկռում ես ներսս, հրում, մղում: Չեմ
զնա, հանգիստ թող, պիտի նստած մնամ այս փողոցի այս ծայրին,

այս փոշուտ, ծրտոտ նստարանին՝ բաճկոնիս օձիքը վեր հանած,
ձեռքերս գրպաններիս մեջ, հրաժարված: Հեռու մնա ինձնից, աշ-
խարհ, լուրեր մի ուղարկիր քո գույներով, ծայներով, հոտերով... Լու-
րերիդ խորհուրդը գիտեմ, գիտեմ նաև ջանքերիս սկիզբն ու
ավարտը:

Սակայն...

Սակայն ասված է՝ Անիմային մի բարկացրու, Անիման ուժեղ է
քեզնից, հզոր է քնքուշիկ Անիման, անկասելի: Անիմայի հետ բլոտ
չեն խաղում, ոչ էլ ռուլետ, նրա խաղը մեկն է և կանոնները՝ բոլորն
ընդդեմ քեզ:

Իսկ պարտադիր պարտության գորշ հորձանուտում կան փոք-
րիկ, հմայիչ, կարմրանարնջագույն ծաղիկներ, որ կարող ես դնել
վերքերիդ, իբրև սփուփանք: Դե իսկ Անիմային զուր մի բարկացրու,
նայիր, մռայլվեց կապույտ երկինքը, ծանրորեն կախվեցին ամպե-
րը կապարե, լողացին թաց մշուշները՝ արագ, ավելի արագ, ուժգ-
նացող քամին է նրանց քշում, տանում է նաև խաշամն ու փոշին,
սրբում փողոցը, ուրիշ փողոցներ, որ ձգվում-գնում են հեռու, և այն-
տեղ, սաղարթների ետևում, աղոտ մի կերպարանք է սահում հե-
րարձակ: Քամին ուժգնանում է, քամին հրում է, քամին պատվեր է
կատարում:

Ի՞նչ անեմ, Անիմա, հրամայիր, սիրելի լրբուկ, ելնե՞մ, գնա՞մ,
նորի՞ց...

CREATION

(Ըստ Ջոն Բոլթեյնի համանուն երաժշտության)

Եվ ահա գոյանում է խորհրդավոր մութ Կետը, գոյանում է Կետը՝
գերխիտ, գերնուրբ, այլանյութ: Կետը գոյանում, լուռ նստում է պա-
տին, երբ ակնդետ, տևական ես նայում: Պատը չէ պարտադիր պայ-
ման. Կետը կգոյանա ուրիշ տեղում, եթե ակնդետ ու տևական
նայես, եթե ինքդ քո մեջ ես՝ ներփակ, և բաց է թողնված միայն փողդ
Վեցերորդ՝ զաղտնիքին զգոն: Արդյո՞ք քո միջից չի ուրվագծվում
այլանյութ Կետը, որն անշուշտ ուրվագծվում է Դրսից, և որպես
հետևություն՝ ինքդ էլ Դրսից չե՞ս ուրվագծված արդյոք...

Սևեռուն չէ բնավ, շարժուն է Կետը. ահա, թրթռում, ուռչում, ծա-
վալվում, երերում է ջղամփոփ, ցցում շոշափուկներ, ձգում, ետ քա-
շում, դարձյալ ցցում. աչքը թարթում՝ թեքվում է ձախ, գալիս է աջ,
վեր, վար, կլորում է աչքը, դարձյալ թարթում, կուլ գնում-կորչում,
վերստին գոյանում ու կրկին կորչում: Կուզես նայիր, կուզես մի նա-

յիր՝ վրա բեր կոպերդ, սեղմիր, մեկ է, այստեղ է՝ Նա, վաղուց կալանել է քեզ, նրանն ես այլևս, այլանյութ Կետի մեջ ես դու, ինքը՝ քո մեջ, քո միջից է ուրվագծվում, իր միջից է ուրվագծում քեզ, և զգոն է Հսկիչը Դրսի: Կետը թրթռում է, երերում, թարթում է աչքը, սպասում անհամբեր: Եվ զգացումների զուգաբախման երջանիկ դիպվածով, որ հաճախ նաև պատվերով է հնարավոր, գերխիտ այլանյութն անզուսպ ուռչում է քո ներսում: Աչքերդ վառվում են դիվային բոսորով, շնչահատ ես հիացնունքից անսահման, և ելնում են նյարդերդ մաշկիդ դավաճանած, ձգվում են հեռու՝ արհամարհած ժամանակ ու տարածք, գտնելու համար սկիզբն ու շարունակությունն իրենց ու էլի բաներ, որոնց անունն անհայտ է իսպառ, բայց գոյությունը զգալի, մասնակցությունը նույնպես: Ձեռքերդ բազմաթիվ են, ունկերդ բյուրավոր, աչքերդ՝ ամենատես, ծայնալարերդ՝ հուժկու, եռանդդ՝ անչափելի: Եվ քեզ մերձակա տարածության մեջ սուրում են տողեր, թռչում ներկ-վրձին-մաստեխին, պտտվում հնչյուններ ներդաշնակ, որովհետև չեն կարող աններդաշնակ լինել հնչյունները, որ Դրվել են կողք-կողքի, երբ գերխիտ այլանյութն է ներսում ու դրսում, երբ դիվային շողշողում է կերպափոխ Աչքն այնտեղ, հեռավոր այն տարածքում, որ պարուրված է առեղծվածի շղարշով կիսաթափանց: Եվ դարձյալ շուրջդ, նաև քո մեջ, հնչյուն է ու չափ, ներկ ու կավ, ու ինքդ էլ նույն նյութից ես, ու տարզատել հնարավոր չէ այս կառույցը միաձույլ-հիասքանչ:

Ու զսպել անկարելի է՝ ինքդ քո անոթը չես արդեն, այլանյութ մորիկն է գալարում ներսդ, կուրծքդ պոկում-պատռում-այայթեցնում, եռցնում-դուրս բերում արյանդ գաղտնագիրը, և մորիկ ես ինքդ էլ՝ գերխիտ-գերնուրբ այլանյութի կերպափոխություն, ու տեղ չկա քեզ այլևս սովոր իրերի սովոր տարածքում, նրանք ծանծրայթն էին քո, զսպաշապիկը, թշնամին, դու այժմ՝ անտարբեր տերը նրանց, ուստի՝ դեպի դուրս, դուրս, դուրս...

Սլանում է Մորիկն արդեն՝ պատերից դուրս, իրերից դուրս, դուրս պատվիրաններից, չարչրկվածից այն կողմ: Թեքորեն սուրում է վեր՝ հատելով կատարները սաղարթների, շենքերի, իջնում է վար՝ սրբելով հրապարակ ու փողոց, դաշտ ու անտառ, հանկարծահորդ հուժկու կրքով լցնում-ցնցում մարմիններ հոգնած-սմբած: Ապա դարձյալ սլանում անզուսպ՝ ավերում տանիքներ, տապալում զմբեթներ, օդ հանում ավազներն անապատների, փրփրադեզ ալիքներն օվկիանոսների ուռցնում-տանում ցամաքների վրա, ժեռ քարեր թափում աղի ջրերի մեջ, խառնում ամեն բան, փշրում-աղում-տորում-հունցում...

Ապա դառնում, լիզում է Կավագունը վիթխարի, տաք, ճշտում պտույտն ու ընթացքը նրա, վերսլաց թռիչքով մխրձվում երկինք, ճախրում ինքնաբավ, ձայնում դիվային. «Ողջուն, ողջուն քեզ, ի՛ն՝ աշխարհ»:

ԱՅՍՏԵՂ ՔԵԶ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ

Երբ ամռան տապին հանկարծ ցուրտ զգացիր՝ Նա մոտ է, սահմելեցնելու չափ մոտ: Ձգո՛ն եղիր:

Եթե ձմեռվա սառնամանիքին շոգեցիր հանկարծ՝ Նա ճամփին է, ուր որ է կգա: Պատրաստվիր:

ՆԱ:
Նա հյուսում է կամ հյուսել է արդեն իր ծուղակ-սարդոստայնը: Նրա մանրալիք տաք-ցուրտ շունչն այստեղ է, չէ, այնտեղ, քիչ հեռու, չէ-չէ, արդեն շատ մոտիկ, ահա, խփում է ծոծրակիդ, դեքիդ է խփում՝ այրելով սթափությունդ, պրկելով մկան ու նյարդ, ճկելով տարածությունը ձեր միջև: «Նա ուղարկված է», - շշնջում են այրվող գիտակցությանդ վերջին բջիջներն ու ածխանում նույն պահին: Ուղարկված է... Այո, Նա ուղարկված է, ուղարկված է, որ...

Որ կենդանացնի:
Որ թարմ արյուն մղի թմրած-կնճռված անոթներիդ մեջ:
Որ ուտքի հանի, կանգնեցնի, ուղղի ողնաշարդ ծուռումուռ:
Որ ստիպի վազել լուսաբացին, թաց խոտերի մեջ:
Որ կյանք տա ու (զգոն եղիր)..
ու նորից խլի:
Որ ամեն ինչ տալով՝ չտա ոչինչ:
Որ տա ամեն ինչ, բայց խլի՝ առավել:
Որ, անտարբեր, հրի-զցի ջրափոսը նույն:
Որ բաց թողնի արյունդ ցեխաջրի մեջ:
Որ սպանի..
Ուստի զգույշ եղիր: Պատրաստ: Դե՛հ, փախիր:
Բայց փախչե՞մ որ..
Փախիր, արա՛գ, հարցուփորձը թող: Փախիր, դե՛...

Փախչում ես՝ չորեքթաթ. շուն, որի հիշողությունը ծեծ ու սարսափով է խցված: Փախչում ես ու մտածում՝ իսկ երբ հասնի՞ ի՞նչ եմ անելու... Ինչպե՞ս բացատրեմ, որ իրենից առաջ եմ ընկած ոչ իմ մեղքով, որ մորթիս տեղ-տեղ թափված է արդեն, որ ուրիշների մեջ փնտրեցի՞ իբրև անտեղյակ, թե ժամն ու տեղը չէ: Շտապեցի, խառ-

նեցի, շփոթեցի, կորցրեցի: Պարզապես ապրեցի: Իսկ հիմա ժամն է (ժամն է...), հիմա եկել է (եկե՛լ...), ահա: Դե պատասխան տուր, դե կանգնիր՝ հայելուն մեջքդ դարձրած ու փորձիր շրջվել ակնաբաց, ու տեսնել, տեսնել... Ոչ, մի՛ տես, չէ՞ որ կա՛ չտեսնելու տարբերակ: Կա փակ աչքերի տարբերակ: Այո, փակիր աչքերդ, պոկիր-խլիր նրան՝ ժամանակին անհաշվետու, և տա՛ր, տա՛ր, տա՛ր...

Բե՛ր, բե՛ր նրան, բե՛ր այստեղ, այս ավազների վրա, այս մանրալյակ լճակի եզերքը, քշիր հեռու այստեղից մարդ ու կենդանի (այս մրջնին նույնպես), հեռու, հեռու, հարյուր պարսեկ հեռու այստեղից, թող ոչ մի շոշափուկ չդարանի մոտերքում, քոնն է այս լիճը, քոնն է սիրով ներծծված տաք ավազը, քոնն է արևահամ մարմինն առողջ ու ջահել, դիր գլուխդ կրծքին ու... կարող ես ավարտվել: Ինչու՞ ոչ: Սրանից լավ տեղ ավարտի համար չկա, հաստատ: Սակայն սթափ-վիր, սթափվիր, որովհետև ու՞ր է, ո՞վ կտա...

Նա՞...

Նա մոտ չի թողնի՝ ձագին պաշտպանող էգ գայլի կատաղությամբ:

Նա անգութ է, դաժան, ինչպես որս չգտնող կատվառյուծ:

Նա խորամանկ աղվես է, կտանի ջրափ՝ ծարավ ետ կբերի:

Նա մի քիչ ջուր կթողնի իր ոտնահետքերում, որ լակես ագահ:

Նա կորբայի պես կնետի թույնը, թույնահաս տարածք կրճատելուն պես:

Նա մրջնակերի իր լեզվի վրա կհավաքի մարմինդ կաթվածահար, անկամ:

Նա հովազի ժանիք կխրի կոկորդո, հենց համբույր հուսաս:

Նա...

Կատարի քայլը վերջապես, քանի չի ընկել փոքրիկ դրոշը ժամացույցի:

Կատարե՞մ, հիմա՞... Լավ, կատարեմ: Ահա: Ի՞նչ եղավ... Մա՞տ...

Պարտվեցիր, պարոն:

Պարտվեցի՞: Գուցե: Սակայն հանձնվել չեմ ուզում: Պարզապես կիջնեմ խաղատախտակից, սա էլ տարբերակ է:

Խաղատախտակից դուրս՝ թաքուն խորշեր ու նրբանցքներ ունեմ, որոնց սայթաքուն հատակով կքայլեմ՝ լուսնով երկարած ստվերս առաջ գցած, կծխեմ ձմրթված սիգարեթը՝ տանիքի կաթոցից ձեռնափով ծածկած. բորբոքվող կրակը թեթև կայրի մաշկը ձեռնափիս- աղոտ հուշեր արևոտ լճափից, ուր թողեցի քեզ ինչ-որ ժամանակներում՝ համոզված, թե չկա վերջ, թե անսպառ են ավազները՝ սիրով ներծծված: Հիմա զուգահեռ եմ տանում: Բայց տեղ չի

հասնում դողդոջուն գիծը, գիծն առաջ գնալ չի կամենում. չգնա՛ս: Չգնա՛ս: Կանգ առ, ծեր սատանա, դեռ կարող ես գողանալ մի քիչ ժամանակ՝ թիկնոցիդ տակից հեզնանք նետելու աշխարհի դեմքին: Դու դեռ ունես ժամանակ՝ դռան նեղլիկ արանքով տեսնելու աստիճաններն արագ հաշվող սիրունիկ ոտքերը՝ վեր, վեր, էլի վեր... Հը՞, կյանքդ կտա՞ս: Բայց կտա՞ս որ, թե՞ ուզում ես դեռ մի քիչ էլ քարշ տալ ցեխերի միջով, ասֆալտին թողնելով մարմնիդ քսուքը: Մի քիչ էլ քարշ տաս, ապա պառկես այստեղ, այս թաց նստարանին, նայես ամպերին լուսնի ուղղությամբ ու սպասես, սպասես...

Շատ բան չէիր ուզելու. գլուխդ դնես փորիկի տաք փղոսկրին ու այդպես մնաս անշարժ, ապա վերջանաս, սպառվես, ներքաշվես ու գնաս այնտեղ, որտեղից եկար, որ էլ երբեք չդառնաս ետ, որովհետև...

Որովհետև քեզ այստեղ չեն սիրում:

Գ Ե Ի Ի Ր Ա Պ Ա Շ Տ Ա Կ Ա Ն Օ Ր Ո Ր Ո Ց Ա Յ Ի Ն՝ Դ Մ Տ Ի Ի Կ Ի Հ Ա Մ Ա Ր

Նառային

Դստրիկս երևի մանկապարտեզ գնար, մազերն առավոտյան կսանրեի, կկապեի՝ երկու ձիգ, ցից պոչուկ. կվազեր՝ ձեռքերը ետևում աջ-ձախ թափահարելով, աչքերն՝ արևին, ինչի պատճառով էլ կընկներ...

Հաճախ է ընկնում, քիթմութիկը միշտ ճանկոտված է, բայց աչքերն էլի արևից չի կտրում. «Ես արևի աղջիկն եմ», - ասում է: Գիշերով էլ է երկնքին նայում, բայց չի ասում՝ լուսնի աղջիկն եմ: Նրա ձեռքն ամուր բռնած պիտի պահել...

Բայց չէ, դստրիկս մանկապարտեզ չէր գնա, նա ազատություն է սիրում, ազատություն և ինձ: Ինձ սիրու՞մ ես, դստրիկ: Սիրում եմ՝ ասում է: Բայց ինչու՞ ես էդպես ժպտում... Խորամանկում է դստրիկը... Ամեն պահի կարող է փախչել, ասում է՝ երբ ուզեմ՝ կփախչեմ: Կարող է, այո, և՛ սիրել, և՛ փախչել, կարող է: Նրա ձեռքն ամուր բռնած պիտի պահել, միշտ: «Իսկ ազատությունը...», - հարցնում է նա խռոված-ուռցրած բերանով: Ազատությունը, դստրիկ... ազատությունը մի էնպիսի բան է, դա... Մի խոսքով, կարգին քայլել-վազել սովորիր, հետո ազատ կլինես ինչքան ուզես, ինչքան պետք լինի, ինչքան կկարողանաս... Ազատությունը... Դե լավ, հետո, ազա-

տուրքյան մասին՝ հետո:

Երազ եմ տեսնում. քայլում եմ ձորի պռնկով, դատրիկը ձեռքս թողնի՝ կրնկնեմ ձորը: Պինդ բռնի՛ր, ճստո՛: Ի՞նչ ազատություն, ինձ ազատություն պետք չի, ինձ դու ես պետք, պինդ բռնի՛ր: Արթնանում եմ. նրա աչուկները գլխավերևում են, նայում են զարմացած-տագ-նապած, հետո հասկացած ժպտում: Քրտինքս է սրբում իր պստիկ թաշկինակով, վրան՝ երկու ծուռտիկ տառ, ինքն է ասեղնագործել կարմիր թելով: «Մի վախենա,- ասում է,- ամուր եմ բռնել, չեմ թողնի, ես քեզ հետ եմ»: Էհ, դատրիկ, դատրիկ, «...չեմ թողնի»... Վստա՞հ ես: Վստահ է դատրիկը: Լավ դե, բռնի՛ր, սեղմի՛ր ամուր, կուզես՝ կծիր...

Թխվածք ենք ուտում, շոկոլադապատ էլ կլեր: Համեղ է: Դատրիկի հետ ինչ էլ ուտես՝ համեղ է: Թքով ու կրեմով շաղախված փշուրները հավաքվում են մորեգույն շուրթերին. լիզում է վարդագույն լեզվով: «Էդպես մի նայի, կուզե՞ս, կեր իմ բերանից»: Ինչու՞ ոչ, ուտեմ... Այսպես կրկնակի համեղ է: Հնար լինե՞ր՝ իմ կերակուրն առհասարակ քո բերանից կուտեի, ինչպես ծագն է ուտում մոր բերանից. չէ՞ որ դատրիկը կարող է և մայր լինել, ինչ ուզես կարող է լինել դատրիկը, եթե շատ ես սիրում նրան:

Պառկած ենք կարպետին՝ դարչնագույն, դեղին, կապույտ, կարմիր, կանաչ, դարձյալ դարչնագույն, ճերմակ... Ճերմակը կարպետի գույներից չի, նրա ոտնաթաթն է՝ ճկուն, առածգական: Մատներն անհանգիստ խաղում են: «Ա՛խխ,- ասում է դատրիկը:- Ո՛ւ՛ֆֆ,- ասում է դատրիկը», վերջապես հրում է ծունկս. «Դե թող էդ հոտածփտած գիրքը, դա քեզ ի՞նչ է տալու, մոռացիր գրքերը, ես կողքիդ եմ, նայի՛ր, դատրիկն եմ, չէ՞... մոռացա՞ր, ու՛ֆֆ»: Քեզ ո՞նչ կմոռանամ, ճստո՛, գիրքը էնպես, քեզնից պաշտպանվելու համար... Բայց գուր ջանք է: Այրելու եմ բուրբ գրքերը: Այրում եմ, ահա...

Դատրիկը պարում է այրվող գրքերի շուրջը, կրակի ցուլքերը խաղում են դեմքին, գրքերը երջանիկ են, իրենք էլ են հոգնել իրենցից, կյանք են ուզում, սեր, ազատություն, նրանք ծափ են տալիս կրակե ձեռքերով, երգում կրակե բերաններով, նվագում կրակե նվագարաններով... Դատրիկը նազանքով տանում-բերում է ձեռքերը, ձգվում պստիկ ոտնաթաթերի վրա, գալարում մարմինը, գլուխը շրջած՝ նայում օդում ցրված մազերի միջով. աչուկները խաղում են՝ սկզբում չարաճճի, հետո խորամանկ, ապա բազմանշանակ... Նրանց խորքից ինձ կանչում են, ինչ-որ բան են ասում... Ես ինչքա՛ն եմ, էս ինչե՛ր են ասում... Վա՛յ ինձ: Դատրիկը կրակների մեջ է պարում արդեն, կրակները գրկել են նրան, փաղաքշում են, լիզում...

Ինքն էլ է այրվում գրքերի հետ... Ջգու՛յշ... Դեմքն այլայլվեց, բայց աչքերի ժպիտն անփոփոխ է... Մաշկն անջատվում է մսից, թշտալով՝ շերտ-շերտ թափվում ցած: Ինքն էլի պարում է, ոչինչ չի զգում, գոռում եմ՝ չի լսում: Դուրս եմ քաշում կրակի միջից. պարային կեցվածքը պահպանած՝ տարակուսանքով նայում է: Այրվում էիր՝ ասում եմ: Ծիծաղում է, շարունակելով պարն ընդհատված տեղից...

Դատրիկը դեռևս քնած՝ ես հայելու առջև եմ, ինձ կարգի եմ բերում, երբ արթնանա՝ ուզում եմ հավանի ինձ: Նա էստեղ քնած՝ ես կարոտում եմ իրեն:Դե արթնացիր, շատ քնեցիր...Սախաճաշին ի՞նչ կուզես, ճստո՛: «Թթվասեր-կաթնաշոռ», - զնգում է հեզնական պատասխանը սենյակից: Դատրիկը հավելյալ ծայնալար ունի, որ զնգացնում է ամբողջ ծայնաշարը:

Դատրիկ, այ դատրիկ, ի՞նչ ես անելու, երբ մեծանաս: «Ես մեծ եմ արդեն, չես տեսնու՞մ»: Թող էդպես լինի, մեծ ես, բայց ի՞նչ ես անելու...

Լավ էր՝ չասեր, ես եմ մեղավոր, ինչու՞ հարցրի, էս ի՞նչ ինքնատանջումի տենդ է: Բայց դե... ինչ արած, մի օր լինելու էր: Մի օր: Իսկ այսօր, իսկ հիմա արի մոտս, քաղցրս, արի հեքիաթ պատմեմ: Չգիտե՞մ... Ճիշտ է, չգիտեմ, ոչ մի հեքիաթ կարգին չեմ հիշում: Բայց կպատմեմ, կհնարեմ: Չեմ կարո՞ղ... Դե կփորձեմ, արի, մի բան կպատմեմ, գուցե հեքիաթից էլ հետաքրքիր լինի, մոտ բեր ականջը: Ըհը, հարմարվիր: Խուտու՞տ... Բայց դու խուտուտ չունեիր... Հիմա ունե՞ս... Լավ, չեմ պատմի, արի գրկեմ քեզ, քունդ տանում է, քնիր, շնչիր վրաս, քթիկ-պնչիկից փուչիկներ ուռցրու, պայթեցրու կրծքիս...

Մազերն եմ շոյում: Հաճելի է. ձեռքս կարծես իր առանձին կյանքով է ապրում, բայց հաղորդագրություններ առատորեն ուղարկում է: Շատ եմ սիրում դատրիկին: Երևի սպանեմ: Հա, երևի մորթեմ նրան...

Շեղքը թեքությամբ հատում է պարանոցի երակները: Արյունը ցայտում է՝ վեր, կողմ, դեմքիս... Նրա ողորկ մաշկն արյուն չի պահում, սահեցնում է վրայով՝ կաթ... կաթ...կաթ-կաթ-կաթ...կաթ կաթ կաթ...կաթկաթկաթ... Լեզվով հավաքում-բարձրացնում եմ՝ ոտնաթաթերից, սրունքներից, ազդրերից, փորիկից, կրծքից, պարանոցից, դնչիկից... Խոր է վերքը, արյունը կանգ չի առնում... Ես կարող եմ ամբողջը խմել, ես կարող եմ ուտել դատրիկին... Թող իմ մեջ ապրի: Կուզե՞ս իմ մեջ ապրել, դատրիկ...

Չի ուզում: Ասում է. «Լավ է, դու իմ մեջ ապրիր»: Ապրեմ, դեմ չեմ, բայց դու կարո՞ղ ես ինձ սպանել... Լռում է: Գուցե մի օր կարողանա:

Մետրոյի դռներն անսպասելի բացվեցին, չհասցրի բռնել դստրի-
կի ծածանվող շարժը... Ուտնաթաթը մնաց դռների արանքում... Սուր
ձիչ... Է՛յ, ճստո, ու՞ր ես...

Գրկում եմ նրան, սեղմում կրծքիս. տաք, տաք է մարմինը: Այդ-
պես գրկած՝ անցնում եմ կամրջով, ապա թունելով, դարձյալ կա-
մուրջ, էլի թունել, կամուրջ... Բոլոր անցումները կամուրջ-թունելով
են, ի՞նչ եղավ աշխարհին... և ինչու՞ է ամբողջովին արնագույն, թե՞
միշտ է այսպես եղել... Քեզ եմ հարցնում, դստրիկ, դու ամեն ինչ գի-
տես, մի խորամանկիր, գիտես, ես վստահում եմ քեզ, միայն քեզ...

«Լա՞վ ես», - հարցնում է դստրիկը: Դե ո՞նց կարող եմ վատ լինել,
եթե գնգուն ծայնդ է հարցնում: Այ երբ մոռանաս, չհարցնես՝ լավ չեմ
լինի, շատ վատ կլինեմ, հաստատ: Դու մի մոռացիր, հա՞... Ինչ մի
դժվար բան է՝ օրական գոնե մեկ անգամ հարցնել՝ «Լա՞վ ես», տա-
րեկան երեք հարյուր վաթսուհինգ անգամ, տասը տարում... Չէ,
վախենամ՝ հոգնես-ծանձրանաս, ճստո՞, վախենամ... Վախենում եմ,
հա, երբեմն վախենում եմ...

Ուտե՞լ ես ուզում... Խմե՞լ... Կա՞թ... Նարնջի հյու՞թ... Դե խմիր, ա-
հա: Մի պզզացրու վրաս, չարաճճի: Գնանք զբոսնելու, թե չէ ե-
ռանդդ չի սպառվի: Ծնիկի պես մի թռչկոտիր, թող սանրեմ մազերդ:
Իջնենք ձոր, կուզե՞ս, քո թթի ծառն է՛նտեղ երևի կարոտել է քեզ: Նո-
րից կշիռոտվես ամբողջովին: «Ոչինչ, կլողացնես, ինձ լողացնել սի-
րում ես, չէ՞»: Սիրում եմ, կլողացնեմ, իհարկե:

Տղաներին էդպես մի նայիր, դստրիկ: «Ինչու՞,- հարցնում է,-
խանդում ե՞ս»: Դե չէ... Այսինքն, չգիտեմ... Բայց դու էդպես մի նայիր,
լավ... Շղթադ վեր քաշի՛ր, բլուզիդ կոճակը կոճկի՛ր, ի՞նչ տեսք է:

Փակում եմ դստրիկի աչքերը, պատին գրված հայիոյանքը նրա
համար չէ: Մատներիս արանքներով փորձում է տեսնել: Ձեռքս մի
կծիր, ավազակ: Կարդաց: Ամաչեց: Վազում է՝ չլմփացնելով փոսո-
րակներում հավաքված ջրերը: Երբ նա վազում է՝ նրան չես հասնի,
չես բռնի: «Ինձ չես ուզում բռնե՞ս, չես սիրու՞մ, չես կարոտում,
հա՞...»: Կարոտում եմ, ուզում եմ բռնել, բայց չեմ հասնում, դստրիկ,
երևի ուրիշ ժամանակի մեջ եմ վազում... Շուտ ետ արի՛, արի ինձ
վերադարձրու իմ ժամանակին, թե չէ էստեղ հարցեր են տալիս,
պատասխան չունեմ: Դե արի...Լավ, կսպասեմ, կսպասեմ՝ մինչև
հոգնես, գաս:

«Սպասիր: Սպասելն էլ վատ չի, գիտե՞ս»:

Չգիտեմ: Ես չգիտեմ, դստրիկ, չեմ էլ ուզում իմանալ: Պարզապես
սպասում եմ...

ՔԻԼԼԵՐԸ ՎԱՐՉՎԱԾ Է, ԹԻՐԱԽԸ ՊԱՏ- ՐԱՍ ՊԱՀԻՐ

*Էստե՛ Անուշին, իր հերթական
բացակայության առիթով*

Քաղաքն անհամ է, պարապ, անԱնուշ:

Բայց չէ, նրան մտքից չհանելու պատճառը բացակայությունը չէ-
երբ ներկա է՝ էլի մտքիդ մեջ է: Թեև նրա ներկայությունն անշուշտ
վտանգավոր է, տագնապահարույց. այլ կերպ ո՞նց... չէ՞ որ քիլեր է՝
Նրանց կողմից վարձված: Ինքը տեղյակ չէ, չի էլ հավատա՝ եթե
պատմեմ, ինքը չարաճճի երեխա է, կրակում է չգիտակցելով՝ աջ,
ձախ... Չէ, թիրախից երեք չի վրիպում, բայց և չի սպանում միան-
գամից, ձգձգում է՝ Հրամանին ենթակա. Այնտեղ չեն շտապում, ժա-
մանակ դեռ կա երևի, չգիտեմ ինչքան՝ բայց կա: Իրենից ոչինչ
կախված չէ, կրակելու կանչվածը՝ չի կարող չկրակել: Խեղճ աղջիկ,
հմայիչ, անկասելի ու նրբագեղ՝ ինչպես գենք: Ճիշտ է, երբեմն զգու-
շացնում է, բայց դա էլ Նրանք են՝ նրա անմեղ, սիրուն բերանով: Ա-
սում է. «Ադամանոյա ապարանջանը միայն ոտքիդ կրիր, միմիայն
ոտքիդ, / Փխրուն կրունկից փոքր ինչ վերև»*: Ի՞նչ է սա, եթե ոչ՝ քո-
ղարկված սպառնալիք, զգուշացում, ի՞նչ է, եթե ոչ՝ հերթական կրա-
կոց, այն էլ մոտիկից, քթիդ տակից՝ հենց ուզեցիր ապարանջանը
տեսնել: Կամ էս մեկը. «Դարձյալ շների ու մարդկանց մահվան ծմեռ
է, / Մահվան գիշեր է դարձյալ կեսգիշերին, / Անապահով, վայրագ,
անտեր»: Սա արդեն ակնարկ էլ չէ, պարզ սպառնալիք է, ճար ու-
նես՝ փրկվիր...

Հիմա չէ, հիմա կրակոց չկա, քաղաքն անվտանգ է, անտագնապ,
գնում եմ, գալիս, կուրծք-թիրախս անհուտորեն լքված է, անպետք,
կրակող չկա, Կրակողը քաղաքում չէ, հեռու է: Այ քեզ մահացու
տաղտուկ, այ քեզ անհամ քաղաք. ոչ սիգարետը համ ունի, ոչ
սուրճն ու օղին, ոչ աղը նույնիսկ... «Աղջիկը քամուն թողել էր անսեր,
/ Աղջիկը որոշել էր գժվել»... Մի գժվիր, աղջիկ, գիժ քիլերն ահա-
վոր է, մանրակրկիտ կտանջի: Թեև ներքուստ հպարտ եմ իհարկե,
էլ ո՞վ ունի գիժ քիլեր՝ գիժ, հմայիչ, անկասելի... Ինչպիսի՞ սպանիչ
մեկտեղում, այ թե վարձել են, հա՛: Բայց վարձը չեն տալու, Նրանք
գծուծ են, միայն՝ խոստումներ, էն էլ՝ ոչ էստեղի համար, այլ Էնտե-
ղի: Խաբում են, իսկ դու՝ հավատում ես, լռիկ-մնջիկ ենթարկվում,
նույնիսկ գնում՝ մոմ ես վառում, աղոթք մրմնջում՝ առ Վարձկաններ,

ինձ էլ խստորեն պատվիրեցիր՝ **Ուտքդ ուտքիդ մի դիր, եկեղեցուն չի կարելի այդպես նստել, մի լարվիր, թուլացրու քեզ, մտածիր Նրա՛ մասին, դիմիր Նրան:** Հերթական կրակոց է, որովհետև քո կողքին նստած՝ Նրա մասին ո՞նց մտածեմ, ո՞նց շեղեմ ուշքումիտքս... Չէ, հերթական ծուղակ է: Ասում եմ՝ ես սովորություններիս գերին եմ, չեմ կարող էսպես երկար նստել, իսկ նա, թե՛ **Թող վատ սովորություններդ, սովորիր այլ կերպ ապրել:** Ապրել: Ձեռ է առնում: Քիլե-րից ի՞նչ սպասես: Հետո ի՞նչ, որ արտաքուստ բարեհոգի է, քնքուշ նույնիսկ:

Գուցե սխալվում եմ, գուցե ուղեղիս մորմոքն է...

Բայց չէ, այնուհանդերձ, սարքված է էս ամենը, Վերից իջեցրած պիես է՝ բեմադրության համար պարտադիր: Իմ դերն ինձ վախեցնում է: Բայց հո չե՞մ ասի՝ է՛յ (ո՞վ կա այդտեղ), Տղերք, դերս փոխեք, հա՞... Ընկեր չունես էնտեղ, թշնամի են: Կամ էլ՝ բարեկա՞մ գուցե, ում նայում ես քո համակարգի փչացրած աչքով ու սխալ տեսնում... Բայց դե մի բան հո պա՞րզ է՝ ցավում է, երկաթ չի, միս ու արյուն է, հետն էլ՝ հոգի ու միտք:

Այնուամենայնիվ՝ ձգիր քեզ, թիրախ եղբայր, թույլ չես, հավաքիր ուժերդ, ասված է, չէ՞. «Վախ չունի, մահ չունի, / Սիրո հետ այլևս խաղ չունի»: Ասված է: Ինձ համար է ասված, որպես մաղթանք ապագայի, որովհետև հիմա դեռ ունեմ՝ երեքից էլ ունեմ քիչ-քիչ: Որովհետև Ավարտի Վճիռն ուշանում է, և ժամանակ դեռ կա, չգիտեմ ինչքան, երևի՝ ոչ շատ, բայց կա, հիմա «Կակտուսը կուզեր մինչև մահ այդպես մնալ արծանացած, / Արժանապատվորեն փշաքաղված, ջենտլմեն մինչև վերջ»: Ուստի ցցիր փշերդ, արծանացիր, խայտառակ մի արա քեզ, էդպես ձիգ կանգնիր, մինչև վերջ, հուշարարի կարիք չունես, մի պատիկ դերն ի՞նչ է, որ դժվարանում ես անգիր անել: Այ էդպես: Հայելի չկա, բայց զգում ես, լավ է, մի քիչ ծիծաղելի, բայց լավ: Սպասող կակտուսի արծան... Քիլեբո մեծացնում է հեռացումի շառավիղը, երեկ վաթսուն կիլոմետր էր, շատ-շատ՝ վեց հարյուր, այսօր արդեն հազարից ավելի է, վաղը՝ ի՞նչ իմանաս... Եվ առհասարակ, ի՞նչ իմանաս... Մի իմացիր: Կարևորը ճշգրտությունը կամ ճշմարտությունը չէ, այլ անհրաժեշտության գիտակցումը: Հիմա կարևոր է կռահել պահի հրամայականը, որ ասում է՝ դիմացիր, դիմացիր ժամանակին, մրրիկին, շոգին-ցրտին, լեղապարկի ծակոցին, Բացակայությանը: Սպասիր: Սպասիր, մինչև քիլե-րիդ տասանոցին խփելու հրաման ստանա վերջապես և այն ժամանակ... «Ես կփակեմ աչքերս, ինչպես այն ժամանակ, ետդարձի ճանապարհին ու կհավատամ քեզ, իսկ դու կտանես ինձ ձեռքս բռնած, խնամքով շրջանցելով գիշերվա թաքցրած բոլոր որոգայթ-

ները, ինչպես այն ժամանակ, ետդարձին...»: Ետդարձին, այո: Ետդարձը միշտ էլ դյուրին է ու դժվարին՝ և՛ այն ժամանակ, և՛ երբևիցե, սակայն մարդը ետ դարձող տեսակ է, նույնիսկ՝ քիլեբո: Այնպես որ՝ քաղաքդ սպասում է, «ակումբդ» սպասում է, թիրախդ սպասում է...

** Ծանոթ.- չակերտների մեջ առնված այս և մնացյալ տողերը հեղինակը «թեցրել է» Անուշ Ասլիբեկյանի բանաստեղծություններից ու պատմվածքներից:*

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՔԵՉ, ՄԱՐԴ

Ստածում եմ՝ Ադամի ու Եվայի վտարումը Եդեմական այգուց (դրախտից), նրանց տեղափոխումը այլ վայր, ուր շրջակայքն այլևս բարեկամական չէր, այլ խիստ թշնամական, ուր իրենց հացը պիտի տանջանքով վաստակեին, նույն մոլորակի սահմաններում չէր, Եդեմն այլ մոլորակ էր, աքսորավայրը՝ այլ, այսինքն՝ այս, ուր այժմ էլ բնակվում ենք, բայց միշտ նայում ենք երկինք՝ բնագույն դրոշմված հիշողությամբ Եդեմը որոնելով, իսկ այն չկա, Տերը պայթեցրել է կամ գուցե ամայացրել, բնակության համար անպիտան դարձրել, կամ էլ կա ու ախտահանվում է՝ նոր բնակիչներ ընդունելու համար, մի խոսքով՝ մենք դրա հետ էլ գործ չունենք, մերը չէ այլևս, մերը սա է՝ դժոխքը, որը, սակայն, հասցրել ենք սիրել. դեհ, շանը որտեղ էլ կապես՝ կապվում-ընտելանում-սիրում է: Իրականում՝ հեչ սիրելու բան չի: Հա, էլի որ՝ կապույտ երկինք, ծովեր, անտառներ, դաշտեր, ֆլորա-ֆաունա, բույրեր, գույներ... Բայց դե ի սկզբանե հո սիրելի չի եղե՞լ, ի սկզբանե մեր ուշքումիտքը ինքնապահպանումն էր, ստամոքս լցնելը, էդ հետո, երբ անտառից փախանք, քաղաքակրթություն ստեղծե՞ծինք, ազատ ու համեմատաբար անվտանգ ժամանակ ունեցանք ուրիշ, անտազնապ աչքով մեր շուրջը նայելու՝ նոր միայն գեղագիտության կետ սևեռեցինք մեր գիտակցության մեջ, որն, ըստ էության, արհեստածին է, իրականում՝ սարսափ է էս մեր մոլորակը, դժոխքն է, որ կա, էստեղ ապրելու բանածը բոլորի համար անփոփոխ միակն է՝ որսալ ու խժռել ուրիշին, արագ, քանի քեզ չեն խժռել, անդադար՝ երկնքում, ջրերի մեջ, հողի տակ, սաղարթներում, դաշտերում, լեռներում, ձորերում... Խժռիր մերծավորներիդ, քանի դեռ քեզ չեն խժռել...

Հիմա, այո, հաջողացրինք փախչել անտառներից, ու միմյանց խժռելու սարսափը կարծես թե թողինք էնտեղ մնացածներին, իսկ մենք խժռում ենք էնտեղից հետներս բերածներին, աճեցնում ենք,

բազմացնում, բուծում՝ խժռում, բուծում՝ խժռում... Է հա, բա ինչ անենք, հո սոված չե՞նք մնալու, բանաձևը մենք չենք կարգել, տերու-նական է, հակառակվելն՝ անկարելի... Իսկ միմյանց չենք խժռում, չէ... Էնպես, դեպքից դեպք, որպես շեղում, պաթոլոգիա: Բայց սա չէր, որ ուզում էի ասել, այսինքն էլի սա էր, բայց ոչ այս քանակով ու ոգևորությամբ, հիմնականում ուրիշ որսի մասին էի ուզում խոսել, նրա առավել նուրբ, զուտ մարդկային տեսակի մասին:

Մարդ ծնվեց, սսս՝, ծնվեց... Լարի՞ր թակարդներդ, աշխարհ, որ-սորդներ, պատրաստ եղե՞ք, նոր մարդ է գալիս...

Պորտը կտրեցին, այստահարեցին՝ վերջ արգանդային անդարդ կայֆերին: Ահա առաջին հոտերը, լույսն ու ստվերը, ծայները, ջեր-մաստիճանների տարբերությունները, խորդուբորդությունները... Ինչ-որ բաներ վանում են, ինչ-որ բաներ ձգում... Դեմքը խոժռեց՝ ծիծ դրին բերանը, լաց եղավ՝ օրորեցին, ձեռքերը թափ տվեց՝ կա-պեցին, էլի լաց եղավ՝ ծծակ տվին... Բառեր չի հասկանում, բայց ե-րանգները զգում է՝ ուտյուտյու՞, բալիկ ջան, պստիկ ջան, արի մոտս, ուտեմ քեզ, կծեմ թուշդ, ու՞մ ես նման, ի՞նձ, չէ, ի՞նձ, իսկ ու՞մ ես շատ սիրում...

Գայթակղում են՝ ծայնի երանգներով, սվսվոցով, շվշվոցով, ծածպոցով, խաղալիքներ շխշխկացնելով...

Որսը սկսված է... Սա քո մայրենին է՝ սա՛ սովորի, սա քո հայրենին է՝ էստեղ պիտի ապրես, սրանք քո ավանդույթներն են՝ պիտի կրկնես, սա գեղեցիկն է, սա տգեղը, սա բարին է, սա չարը, սա ճիշ-տը, սա սխալը՝ հանկարծ չշփոթես... Ես Հիսուսն եմ, ունեցածդ թա-փի՝ իմ ետևից արի՛, ես Յահվեն եմ՝ արի-վկայի՛, ես Մուհամեդն եմ՝ ինձ լսի՛, գյավուրների հետ գործ չունես, ես Բուդդան եմ՝ արի պայ-ծառատես դարձնեմ, ես Սատանան եմ՝ ինձ լսի, որ կյանքից վայելք ստանաս, ես Նիցշեն եմ՝ արի գերմարդ դարձնեմ, ես կոմունիզմի դրոշն եմ, մտի տակը, ես դեմոկրատիան եմ՝ անկատար եմ, բայց այլընտրանք չունես... Մարդ ախպեր, էստի արի, էս համը լավն ա, էս հոտը լավն ա, էս ոճը քո վրով ա, էս երգը լավն ա, է՞դ... էդ լավը չի, դեն գցի, լավը սայա... Ես օդին եմ, գարեջուրը, ես սիգարետն եմ, ես հաշիշը, ես մորֆին ու կոկայինը, ես թղթախաղն ու ռուլետկան, ես, շշշը՛, ես սսսեքսսսն եմ...

Ու էսպես՝ անդադար, ամբողջ ճամփեդ որոգայթներով է սփռված, մի պահ ժամանակ չեն տա, որ տեսնես՝ ով ես, ինչ ես ու-զում, ինչ չես ուզում, որսում են ու որսում, որսում են ու որսում... Ու վերջապես հասկանում ես՝ սա է, պիտի որսվես, նույնն է թե՛ պիտի ապրես, ապրելն ուրիշ ձև չունի էս քաղաքակրթության մեջ: Կան, անշուշտ, կան ոմանք, քչերը, կարելի է ասել՝ բացառիկ անհատա-կանություններ կամ հոգեկան հիվանդներ, որ ժամանակ առ ժամա-

նակ ըմբոստանում են, հրաժարվում, իբր՝ ես չեմ որսվում, ես ձեզ-նից չեմ, ես ուրիշ եմ, ու նրանցից ոմանք հանուն ազատության կա-րող են նույնիսկ վազել կամրջից նետվելու... Ով պլստաց՝ պլստաց, վերջ, կորցրինք, չենք էլ իմանա՝ շահեց, տանուլ տվեց, իսկ ով չհասցրեց պլստալ՝ հասնում-բռնում ենք, թե՛րն ոլորում, սաստում՝ չի կարելի, եկեղեցին արգելում է, հասարակությունը պախարակում. նիհիլիզմ է, պարտվողականություն, հոգեկան շեղում... Կբուժենք, կվերադարձնենք հասարակությանը, բա ո՞նց, թե չէ՛ ամեն մեկը որ էսպես ինքնազուխ փախչի՝ ու՞մ ուղեղն ու գրպանն ենք մտնելու, ու՞մ ձեռն ենք հրացան տալու ու սահմանների վրա պահակ կարգե-լու, ո՞վ է քվեարկելու, ո՞վ է հաստոց աշխատացնելու, ու՞մ ենք բանտ նստացնելու, ո՞վ է արյուն տալու, ո՞վ է կոմպի դեմ նստելու-ապուշանալու, դրոշի տակ մտնելու, առաջնորդի ետևից գնալու, ու՞մ ենք ասելու՝ մեղքի զգացում, պատասխանատվություն, «Ազ-գը վեր է ամեն ինչից...», «Մահ իմացյալ անմահություն է...» և այլն, և այլն: Էնպես որ, ետ եկ մոլորյալ, թեկուզ՝ ճղած ջինսով, մագ-մո-րուքով, շեղված սեռականով... Հա, մի զարմանա, եթե տենց կպած ազատություն ես ուզում՝ ա՛ռ, ջոկի՛ պանկ, ռոքեր, բայթեր, բոմժ... Որն ուզես, բայց՝ էստեղ, հասարակության աչքի առաջ, մոտիկ, հե-ռու զգնաս, չպլստաս հանկարծ...

Ու էսպես շարունակ՝ ընկնում ես մի թակարդը, դուրս գալիս, ընկ-նում մյուսը...

Սակայն...

Սակայն մեկ էլ հանկարծ գալիս է ժամանակ, երբ զարմանքով հայտնաբերում ես, որ որոգայթները պակասեցին, էլ էնքան էլ չեն որսում... Ո՞նց թե... Կյանքի բանաձևը փոխվե՞ց...

Չէ, նա անփոփոխ է, դու փոխվեցիր, գնա՛, ասում են, հանգստա-ցիր, թոշակ-մոշակ... Այ քեզ բան... Տխրում ես, թախանձագին նա-յում սրա-նրա աչքներին, թե՛ որսացեք, էլի՛... Բայց չէ, որոգայթներից մնացել են դեղերը, հեռուստասերիալները, կակտուսները, թզբեղը, նարդին... Էլի վատ չի, եթե էսպես մնա, բայց ժամանակը կանգ չի առնում ու հետո... Հետո գալիս են վերջին որսորդները՝ դագաղա-գործն ու փոս փորողը: Ահա, պառկացրին վերջին թակարդում, մե-խեցին... Պրծ, էլ դուրս չես գա... Ի՞նչ, հոգու անմահություն... Դեհ, ի՞նչ իմանանք, գուցե կա, անհնարին չէ, ամեն դեպքում հույսդ մի կորցրու, մեկ էլ տեսար ու իսկապես...

Ու պատկերացնում ես՝ նոր որս կսկսվի՝ ուրիշ ոլորտում, ձգո-ղականության ուրիշ դաշտում, ֆիզիկա-քիմիայի ուրիշ պայմաննե-րում, ուրիշ կյանքի ուրիշ օրենքներով...

Էհ, համբերություն քեզ, մարդ ջան:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ - ԱՌԱՔՅԱ- ԼԸ ԵՏ Է ՎԵՐՅՎՈՄ

Ջոն Քոլթեյնի հիշատակին

Ստացվեց այնպես, որ Ջոն Քոլթեյնի անունը լսեցի ավելի վաղ, քան նրա երաժշտությունը: Տարօրինակ էր՝ ջազի սիրահարների զրույցից որսած այդ անվան մտովի կրկնությունը մի տեսակ անբացատրելի խորհրդավորություն, ակնածանք էր ծնունդ հոգուս խորքերում: «Ջոն Քոլթեյն»... հնչյունների այս համադրությունը այնպիսի անսովորական էր, մեղեդու պես էր ու առաջիկա ասես փոխարինում էր երաժշտությանը, որը ոչ մի կերպ չէր հաջողվում ձեռք բերել (խորհրդային երկրում ջազային ծայնագրությունները դյուրությամբ չէին ձեռք բերվում): Վերջապես, մի երեկո միացրեցի ռադիոընդունիչը պատահական կայանի վրա՝ հենց այնպես, առանց որոշակի մտադրության, ու հանկարծ... Տենոր-սաքսոֆոնի հնչյունները ստիպեցին անշարժանալ խորհրդավոր դող անցավ մարմնովս... Նա է: Հաղորդավարը քիչ անց հաստատեց կռահումս: «Giant Steps»-ստեղծագործությունն էր: Կապանքներից ձեռքազատված ավանգարդ չէր կարծես, սակայն շատ արտասովոր էր, անսպասելի: Տենորի հնչուններն ասես ավտոմատային կրակահերթերով էին հաջորդում միմյանց, կազմում ֆրազներ, որոնք սերտ շերտերով միահյուսվում էին ու աննկարագրելի հրճվանք պատճառում: Հնչերանգը բացառիկ էր՝ մետաղային, պիրկ, հավաք: Հայտնվել էի երաժշտական բոլորովին նոր աշխարհի առջև: «Նվագում էր Ջոն Քոլթեյնը», - հայտարարեց ռադիոն, ասես հայտարարելով նաև, որ ծուղակի դուռն իմ ետևում փակված է:

Եվ ահա, տարիներ անց, կարդալով երաժշտական տեսաբան Ջեյմս Քոլիերի տողերը, թե՛ «Ոչ մի ջազային երաժշտի չվերաբերվեցին այնպես, ինչպես Ջոն Քոլթեյնին: Նա ունկնդրի հերթական սիրեցյալ չէր, նրան պաշտում էին որպես սուրբի, որպես ոմն միստիկական արարածի, ում ներկայությունը երկրի վրա, իբր, ընդունակ է փոխելու աշխարհը», բացարձակապես չզարմացա: Չափազանցություն չէր նաև մի ուրիշ տեսաբանի պնդումը, թե Քոլթեյնն արտածում է «Սիրո բարձրագույն ուժը»: առհասարակ, դժվար է չափազանցել, երբ խոսքը Քոլթեյնին է վերաբերում- Քոլթեյնը միշտ ավելին է:

Ջուր կլինի փորձը՝ Քոլթեյնին «բացել» երաժշտական ընդունված լեզուների բանալիներով, նույնիսկ ջազի լեզուն, որը, անշուշտ, առանցքն է նրա երաժշտական ծուլվածքի, բավարար չէ: Քոլթեյնին լիովին (եթե դա առհասարակ հնարավոր է) ընկալելու, զգալու, հասկանալու համար պետք է բժախնդորոն հետամուտ լինել նրա ընթացքին, յուրացնել իր խորհրդանիշները, իր լեզուն, որը թեև պարունակում է ջազի ու դասականի փորձը, արևելյան, հատկապես՝ հնդկական ձևերը, աֆրիկյան ռիթմերն ու մեղեդային տարրերը, սակայն, որքան էլ հակասական է, կարծես բոլորովին կախված չէ դրանցից՝ ինքնիշխան է, մեկուսի. Քոլթեյնն ամեն բան ներառել և այն աստիճանի է յուրացրել-տարրալուծել, որ դարձրել է սեփական բջջահյութի պես, և զատել-տարանջատել այլևս անկարելի է: Նրա տեխնիկան հնարավոր է կրկնել, նրա ֆրազները հնարավոր է նմանակել, կարելի է առավելագույնս մոտենալ նրա հնչերանգին, կարելի է մաթեմատիկորեն ճշգրիտ հաշվել նույնիսկ պաուզաների տևողությունը կամ վիբրացիաների հաճախականությունը, սակայն նվագել Քոլթեյն, ստեղծել նրա լեզվով, շարունակել նրա ստեղծածն անկարելի է. դա երաժշտական ուրույն, բացառիկ տեսակ է, որ հագեցած հետևողականությամբ հասցվեց իր ավարտին, ամփոփվեց «Expression» ավբոնով և կնքվեց մահվամբ:

Եթե Քոլթեյնի ստեղծագործությունը բաժանենք երեք շրջանների, ապա մինչև 1960 թվականն ընկած շրջանի նրա պրպտումներն ու ձեռքբերումները արելի է զուտ ջազային համարել (հնչյունային շերտերի ոճ, բազմատոնայնություն, էքսպերիմենտներ արևելյան ձևերի և ծայնաշարային կամ մոդալ կոչված ջազի ասպարեզներում): Այս ընթացքում Քոլթեյնն աշխատեց իր ժամանակի ջազային համարյա բոլոր հեղինակությունների հետ և արդեն մեծ ճանաչում ուներ՝ նա ջազի առաջատար տենոր, ապա նաև սոպրանո-սաքսոֆոնահարն էր: Սակայն հռչակը չէր թուլացնում որոնումների տենդը: Ով քիչ թե շատ հետևողականորեն հետամուտ էր թրեյնի ընթացքին (թրեյն- Քոլթեյնի կեղծանունն է, որ ազգանվան հապավումը լինելով՝ անգլերեն նշանակում է գնացք), համոզված էր՝ տեղապատույտ չի լինելու, սրա վկայություններն էին «Giant steps» և հատկապես «My Favorite Things» ավբոնները, որոնք կրում են մի շրջանի ավարտի և մի այլ շրջանի գալստյան նշանները:

Եվ ահա, «Chasin the Trane», «India», «Impression» ծայնագրությունները եկան հայտնելու, որ Ջոն Քոլթեյնը մուտք է գործում ավանգարդային ջազի ասպարեզ, ավելի ճիշտ՝ այդ ասպարեզը նաև ինքը սկզբնավորեց մի քանի ուրիշ երաժիշտների հետ միաժամանակ: Մի պահ, ամենասկզբում, ընդհանուր ավանգարդային ոգևոր-

րությունն իր հորձանքով տարավ նրան («The Avant-Garde» ալբոմ), սակայն Ջոնը շուտով կռահեց, որ այդ ճամփան տանում է ձկնի պաշտամունքի. ավանգարդ՝ հանուն ավանգարդի, ավանգարդ՝ ամեն գնով- հրապուրիչ էր, բայց իր ուղին չէր, ևս մի փորձ էր, փորձություն, որ պիտի անցներ ու անցավ: Ջոն Քոլթրեյնն առավել զգույշ, առավել նպատակային էր քանդում հարմոնիկ ու չափական կապանքները. քանդում էր, երբ կար դրա անհրաժեշտությունը, սակայն կարող էր նորերը ստեղծել, եթե ծագում էին նման անհրաժեշտություններ՝ դրսևորելով մեծ համբերություն, հետևողականություն և պատասխանատվություն: Քոլթրեյնի համար խնդիր չէր՝ ետ դառնալ, եթե այնտեղ ինչ-որ բան է մոռացված, եթե այնտեղից կանչ է լսվում (օրինակ՝ «Crescent» ալբոմը), որովհետև...

Որովհետև ինքն **ուրիշ տեղ** էր գնում, **ուրիշ տեղում** էր հաշիվ տալու - Ջոնն, ըստ ամենայնի, արդեն գիտեր դա:

Վերջապես, իր համար մեդիտացիաների ընթացքում, Քոլթրեյնին հաջողվեց (իր իսկ վկայությամբ) Հադորդակից լինել և ստանալ Համաձայնությունը. այսպես սկզբնավորվեց, ապա, 1964-ին, ծայնագրվեց Ջոն Քոլթրեյնի երևի թե մանիֆեստային ալբոմը՝ «A Love Supreme»-ը: Չորս մասերից կազմված այս երաժշտական աղոթք-խոստովանությունը Ջոնը համարում էր իր համեստ նվիրումն Աստծուն: «A Love Supreme»-ը, սակայն, հեռու է հոգևոր երաժշտության ծանոթ ձևերից՝ անհանգիստ է, կրքոտ, պրպտող ու բազմերանգ: «A Love Supreme»-ին հետևում է նույն զգացումներով, բայց առավել կրքոտ ալբոմի՝ «Sun Ship»-ի ծայնագրությունը: Այսպիսով դրվում է սկիզբը Քոլթրեյնի վերջին՝ հոգևոր շրջանի երաժշտության:

Քոլթրեյնը չէր կարող կարծրանալ-մնալ միակ կրոնի կաղապարներում, այստեղ նա նույնպես հարազատ է իր բնույթին՝ ուսումնասիրում է բոլոր հայտնի կրոնները, իմաստաբանական ուրիշ գրքեր, մետաֆիզիկա, անտարբեր չէ նաև գիտական հայտնագործությունների նկատմամբ, հատկապես հետաքրքրվում է էյնշտեյնի հարաբերականության տեսությամբ, և նրա ուշ շրջանի երաժշտության մեջ դրսևորվում է հարաբերականության գաղափարը. իր կատարումներում նա ձգում կամ սեղմում է ժամանակը, մոտեցնում-հեռացնում, տրոհում-հավաքում է տարածությունը: Այս ամենը նրա երաժշտությունը դարձնում է ավելի ու ավելի հարուստ, խիտ, թանձր, բազմաբնույթ, ազդեցիկ: Նրա կատարումներն ընդունակ են այնպիսի տրամադրություններ, հույզեր ու զգացումներ գայթակղել-հանել հոգուդ խորքերից, որոնց գոյության մասին չես էլ կասկածել երբևէ, ասես նրանք ծպտված-թաքնված են եղել՝ սպասելով

Ջոն Քոլթրեյնին, միայն նրան վստահելով:

Սակայն ընդունել Երկնային Կամքը՝ Քոլթրեյնի համար չնշանակեց հեռանալ, անտարբերանալ, մեկուսանալ երկրայինից, այսինքն՝ ընտրել հեշտ ճանապարհ, զգել վրայից ամեն պատասխանատվություն, դառնալ եսակենտրոն: Ջոնն իր մոլորակի իսկական քաղաքացին է, բռնությունները, ահաբեկչությունները, ռասիզմի դրսևորումները, պատերազմները նրան անտարբեր թողնել չեն կարող, սրանք ցավով են արձագանքում նրա հոգում, բնականաբար՝ նաև երաժշտության մեջ: Այսպիսի արձագանքները երկակի են, մի դեպքում՝ տխուր, մելամաղձոտ, ողբերգական (օրինակ «Alabama»-ն, որ նվիրում է Ալաբամա նահանգի մի եկեղեցուն ահաբեկչության զոհ դարձած չորս սևամորթ աղջիկների, կամ՝ «Peace on Earth» չքնաղ մեղեդին, որ նվիրված է Հիրոսիմայում և Նագասակիում ատոմային պայթյուններից զոհվածների հիշատակին), մյուս դեպքում՝ կրքոտությամբ ընդվզող: Նույնիսկ ամենաաստվածանվեր ստեղծագործությունների կատարման ընթացքում հաճախ է բողոքի պոռթկումով ըմբոստանում նրա սաքսոֆոնը՝ այնպիսի կրքոտությամբ, որ թվում է, թե նա անմարդկային տանջանքով ջանում է կտրատել-պոկել անարդարությունների խեղդող շղթաները: Այս կարգի կատարումներն ընթանում են հուզական չափազանց բարձր, գերհագեցած մակարդակով, և ունկնդրելիս բառացիորեն շնչահեղձ ես լինում տառապանքի ուժից, ձգտումի թափից, ակամայից տառապակցում ես՝ տառապակցում ես քեզ տառապակցողին:

Ուշ շրջանում, սակայն, գերակշռող է դառնում խոհական վերաբերմունքը: Բնորոշող են «Out of this world» պիեսի երկու կատարումները՝ վաթսուներկուսին («Coltrane» ալբոմ) և վաթսուհինգին («Live in Seattle» ալբոմ): Առաջին դեպքում իշխում են ընդվզումների, բողոքի պոռթկումները: Իսկ երկրորդ կատարումը փոխիստփայական ընթացք ունի. փոխված է հնչերանգը, որը մետաղային, պոռթկող, բողոքող չէ, այլ նուրբ է, խորքային, խորհրդավոր, իսկապես՝ անդրաշխարհային, ինչպես և հուշում է գործի անվանումը: Մեկնարկը հմայող է, ներուժով լեցուն, ծավալվող, գայթակղող-տանող: Բայց ապշեցնողը հատկապես ֆինալն է: Մինչ այդ իր խռպոտ, մեթոդ-ծանակող տենորով ներխուժել էր Ֆարոա Սանդերսը՝ դրամատիկ լարվածություն սրսկելով կոմպոզիցիայի հյուսվածքում (Սանդերսը, թերևս, հենց դրամատիկ բախումներ ստեղծելու նպատակով է խումբ վերցվել վաթսուհինգին, ինչպես վաթսուականների սկզբում՝ հանրահայտ ավանգարդիստ, այտ-սաքսոֆոնահար, սրնգահար և բաս-կլարնետահար Էրիկ Դոլֆին), հաջորդել էր ան-

հաշտ երկխոսությունը Ջոնի և Ֆարոայի միջև, ապա՝ Մք'Քոյ Թայների դաշնամուրի շաղախող-հաշտեցնող կատարումը, ու վերջապես՝ ավարտը... Ջոն Քոլթերյնի այս ընդամենը երկու-երեք թույլ տևող վերջերգը անհավատալի ընդգրկում, խորություն ու խտություն ունի: Ինչպիսի՜ աներևակայելի, առեղծվածային ուժ է պետք՝ կարողանալու համար այդ ժլատ ֆրագների, հնչերանգի փոփոխման, պատվանների, շնչի ջերմության ու տատանումների շնորհիվ զգացնել տալ մի ավարտուն փիլիսոփայական գաղափարի ներկայությունը, որը, երևի թե, առավել մոտ է կրոնական էքզիստենցիալիզմին: Ամենավերջին հնչյունը, թվում է, միտված է սայթաքելու դեպի արևուտը: Բայց ոչ, այդպես թվում է առաջին ունկնդրումից, հնչյունի անսպասելի բնույթն է խաբում: Լուծումն անսպասելի է, արտառոց, անկանխատեսելի, բայց արևուտը չէ, Ջոն Քոլթերյնի հայտնաբերած ճամփան է, և այդ հնչյուն-ճամփան չէր կարող դյուրությամբ իմանալի լինել, սակայն երբ իմանում ես՝ նա քեզ վարձատրում է գյուտի, մասնակցության անսպասելի հրճվանքով:

Գերհզոր խտացման սկզբունքով է կառուցված «Creation» ստեղծագործության կոմպոզիցիան (ձայնագրություն՝ ապրիլ 2, 1965 թ., Նյու Յորք Սիթի), որի տևողությունը մոտ քսան թույլ է, սակայն իր մեջ սեղմել-ամփոփել է աշխարհի արարումը. աշխարհի արարում՝ ըստ Ջոն Քոլթերյնի: Արարման կախարդական միջոցը երաժշտությունն է (թեև, ինչ-որ տեղ, Քոլթերյնը կարծես դուրս է գալիս զուտ երաժշտական հասկացություններից): Մեկնարկային զույգ ֆրագներից հետո սաքսոֆոնի թանձր հնչյունները սուրում են սառը տիեզերքով, արագորեն շիկացնում այն, ստեղծում ձևեր, սերմեր ցանում, հյուսվածքներին կենդանություն տալիս: Մեկնարկի ֆրագները կրկնվում են՝ դարձյալ ու դարձյալ: Թվում է՝ կրկնությունը չափազանցված է, սակայն այդպես կարելի է մտածել խնդրին զուտ երաժշտական առումով մոտենալու դեպքում, իսկ այստեղ արարման տքնանքն է, կրկնություն չէ, բացի այս՝ նույնիսկ կատարելապես նույնական թվացող ֆրագներում ուշադիր ունկնդիրը կգտնի ձևի, չափի, դադարի կամ վիբրացիաների ինչ-ինչ տարբերություններ: Կառուցված ձևերը երբեմն պայթեցվում են՝ ֆրագային բեկորներ չպարտելով տարածության մեջ, ապա՝ նորովի հավաքվում, նոր առանցքների շուրջ, նույն արարման պրոցեսն է, նախնական քառսին ձև ու բովանդակություն հաղորդելու տքնանքն: Ամեն բան կարգի է բերվում, ենթարկվում օրենքի: «Creation»-ի ժամացույցային քսան թույլները չեն խոսում նրա իրական տևողության մասին, նա ունի իր ներքին ժամանակային կարգը, գուցե՛ն՝ անժամանակ է՝ մեկ ակնթարթ կամ միլիոնավոր տարիներ... Եվ ահա, տեսնում ես աստ-

ղեր, արևներ, մուրակներ, որ Քոլթերյնը մոտեցնում է՝ ջարդելով ժամանակ ու տարածություն, զգում ես Բարձրյալի ամենաստեղծ, ամենաընդգրկուն էներգիան, ուր դիվային բան կա նաև՝ Աստվածորեն դիվային:

Գերխտացման, ժամանակախախտման կամ ժամանակաշինության այս նույն սկզբունքով է ճամփորդում Թրեյնը տիեզերքով իր «Interstellar Spase» ավբոնում, նույն կերպ է զարգանում «Evolution» ստեղծագործությունը («Live in Seattle» ավբոն), ուր կյանքի սկզբնավորման-զարգացման ընթացքն է: Եվ երբ իր արտառոց «OM»-ի ձայնագրությունից հետո Քոլթերյնն ասում է, թե ընկալել է կյանքի բոլոր ձևերի հարաբերակցությունն ու ներդաշնակությունը՝ հավատում ես, որովհետև ապացուցում է:

Քոլթերյնի վերջին շրջանի (1964-1967 թվականներ) ստեղծածն ունկնդրելն, առհասարակ, դյուրին վայելք չէ, առջև ասես պայման կա դրված՝ ուզում ես վայելել՝ պիտի չարչարանք տանես, և որքան շատ, որքան խոր՝ վայելքդ, համապատասխանաբար, այնքան շատ ու խոր կլինի: Ջոնի երկրպագուներից շատերը չէ, որ ընդունում-սիրում են նրա վերջին՝ առավելագույնս ազատ, հոգևոր շրջանը: Սակայն հենց այստեղ է իսկական Քոլթերյնը, նրա բուն էությունը: Այս շրջանի նրա ստեղծագործությունը երաժշտական կրոն է, երաժշտական ընծայում չէ այս կամ այն կրոնի ներսում, այլ երաժշտությամբ արտահայտված առանձին, ինքնուրույն հոգևոր կոնցեպցիա, որն առաջին հերթին ենթագիտակցությանն է ուղղված ու երևի թե շատ ավելի է մոտ Իսկությանը, շատ ավելի ազդեցիկ է, քան խոսքը: Խոսքը հաճախ խեղաթյուրում է, խորամանկում, խոսքը, այսպես, թե այնպես, շահախնդրությունների կրող է, իսկ Քոլթերյնի կրոնը գերծ է շահախնդրությունից, բացարձակապես անկեղծ է, մաքուր, անմիջական:

Ուշագրավ է, որ Քոլթերյնի վաղ շրջանի սիրելի մեղեդիները մինչև վերջ մնացին նրա հետ. հիսունութին ձայնագրած «I want to talk about you»-ն, «Naima»-ն, ուրիշ մեղեդիներ, վաթսուին ձայնագրած «My Favorite Things»-ը ուղեկիցն են նրա համարյա ամբողջ ընթացքի, սակայն, իհարկե, նույնությամբ չեն կատարվում: «My Favorite Things»-ի առաջին ձայնագրությունը երաժշտական, գեղագիտական որոնումների արտահայտություն էր, Ռոջերսի մյուզիքլի այս պարզ մեղեդին ջագ-վալս ռիթմով հնչեցնող Քոլթերյնի ստպանուն հնչյունային չքնաղ նախշեր է ստեղծում, ժանյակներ հյուսում, և այս խաղն անչափ հմայիչ է: Նույն ստեղծագործության հետագա յուրաքանչյուր կատարում ավելի ու ավելի է խտացնում նյութը, թանձր երանգներ հաղորդում ֆրագներին, ռիթմը, պահպա-

նելով իր հիմքը, աստիճանաբար կարծես ձերբագատվում է (Քոլթերեյնին առհասարակ տրված է այդ ապշեցուցիչ շնորհը՝ մնալ չափական և հարմոնիկ շրջանակներում, միևնույն ժամանակ՝ չմնալ, ազատվել): Իսկ արդեն ամենավերջին կատարումներում սպարանոյի հնչյունին տիեզերական վիբրացիաներ են հաղորդվում, խորհրդավորություն, և «My Favorite Things»-ը ուղղվում է Երկինք: Նույնն է կատարվում «Naima»-ի հետ (ստեղծագործությունը նվիրված է կնոջը՝ Նաիմային): Այս քնքուշ սիրո և կարոտի մեղեդին հետագայում և հատկապես «Live At The Villedge Vanguard Again» ալբոմի ձայնագրություններում ուշագրավ փոխակերպումների է ենթարկվում: Մեղեդային գիծն անփոփոխ է, սերը, կարոտը, քնքշությունը մնում են, նույնիսկ առավել ուժգնանում (նկատենք, որ Քոլթերեյնի ավանգարդայնությունը խոչընդոտ չէ մեղեդայնությանը, հակառակը, առավել է շեշտում, գտում, քնքշացնում մեղեդին), սակայն հանկարծ զգում ես, որ բոլոր ապրումները, հույզերը, զգացմունքներն ուղղված են ուրիշ տեղ, Ջոնը այս սիրո պատմությունը պատմում է նրան՝ Բարձրյալին, սա խոստովանություն է, ապաշխարանք, սա արդեն սիրո և կարոտի փիլիսոփայություն է: Այսպես, Քոլթերեյնի վաղ շրջանի մեղեդային ամբողջ սերն ու քնքշությունը, կարոտն ու թախիծը ուղեկցեցին նրան ու փոխելով իրենց բնույթը՝ հանգրվանեցին նրա ուշ շրջանի ավանգարդային ստեղծագործություններում՝ «Serenity» մասը «Meditations» ալբոմից, «Welcome»՝ ակնածալից հրավերն ուղղված Բարձրյալին («Kulu Se Mama» ալբոմ), «Pease on Earth» մելամաղձոտ պիեսը ճապոնական համերգների ձայնագրություններից, «Ogunde» փոքրիկ, սակայն ազդեցությամբ հզոր մեղեդին «Exspression» ալբոմից...

«Exspression»: Ահա և եկանք ավարտին:

«Interstellar Spase» և վերջին՝ «Exspression» ալբոմների միջև ժամանակային տարբերությունը չնչին է, սակայն, չնայած ընդհանրություններին, նրանք տարբեր են՝ թե՛ վերաբերմունքով, թե՛ իմաստով, թե՛ տրամադրությամբ և թե՛ մեղեդայնությամբ: Ոչ այնքան ունկնքախ՝ սակայն նույնը չէ նաև հնչերանգը: Ըստ երևույթին, Ջոնը կռահել էր, որ վերջը շատ է մոտ, որ իր ենթագիտակցական միտվածությունն առ ինքնավերում, մոտեցրել է իրեն հանգուցալուծմանը, հրաժեշտին, նաև՝ Հանդիպմանը: Ուստի, «Interstellar Spase»-ի տիեզերական ճամփորդությունից հետո եկել էր ամփոփման ժամը: «Exspression»: Ունկնդրելուց հետո մտածում ես, որ, իսկապես, Տերն իր Ջոն Քոլթերեյն որդուն ուղարկել է երկիր հաստիկ առաքելությամբ՝ իմանալու՝ արդյո՞ք մարդիկ ունակ են ճշմարիտ երաժշտություն լսել:

Փորձարարություն չկա այլևս. ամեն բան արդեն փորձված է: Նույնիսկ այն, որ ալբոմի «To be» կոմպոզիցիան Քոլթերեյնը կատարում է ֆլեյտայով, չի զարմացնում: «Բայց նա երբեք ֆլեյտա չի նվագել...», - տարակուսում ես միայն ունկնդրումից հետո, իսկ ընթացքում ուշադրությունը չի շեղվում ո՛չ գործիքային, ո՛չ ժանրային ու տեսակային, ո՛չ էլ տեխնիկական խնդիրների կողմը: Տեխնիկա ասվածն այլևս այն աստիճանի հաղթահարված բան է, որ պարզապես վերացած է: Չկա: Գործիքը Քոլթերեյնի շնչի շարունակությունն է, օրգանապես միացած է արյան շրջանառությանը, մկաններին, նյարդերին, ուղեղին, սրտին: Գործիք չկա. Ջոնը պարզապես խոսում է, երգում է... Ինքն է՝ մերկ, մաշկատված, արնածոր, նյարդաբաց: Դասականի կամ ջազայինի, արևելյանի ու հնդկականի առավել կամ սակավ ներկայության մասին չես մտածում, ազատանազատի խնդիր չկա՝ սրանք անցած բաներ են, ամեն ինչ մարսված է, յուրացված, չկա:

Դեռևս մեկ տարի առաջ խմբից հեռացան Մք'Քոյ Թայները և Էլվին Ջոնսը՝ թերևս արդեն չհասկանալով, թե ուր է տանում Թերեյնը կամ էլ, պարզապես, անկարող լինելով ուղեկցել նրան: Նրանց փոխարինած էլիս Քոլթերեյնը և Ռաշիդ Ալին գուցե նույնպես չգիտեին, սակայն ուղեկցեցին: Իսկ Քոլթերեյնի համար այս անցուդարձն, ըստ երևույթին, արդեն առանձնակի նշանակություն չունեի. նրա երաժշտությունը վաղուց արդեն ավելի շատ մեներգ էր, մենախոսություն, և ճամփան էլ արդեն եկել էր՝ եկել էր մի հանգրվանի, որից այն կողմ Հանդիպումն էր, Անհայտությունը: «Exspression»-ը հրաժեշտի երգ է (ալբոմը ձայնագրվել է մարտին, իսկ արդեն հուլիսին Ջոն Քոլթերեյնը կնքեց իր մահկանացուն). հրաժեշտ, միևնույն ժամանակ՝ ողջուն- ահա, այս ապրումներով են ներծծված ալբոմի բոլոր չորս ստեղծագործությունները:

«To be» կոմպոզիցիան պանթիստական երանգավորում ունի, նա ասես հողագնդի ամենօրյա ու ամենամյա պտույտն է պահում իր մեջ, ըմբռնված է արևածագը, ժայռերի ջերմացումը կեսօրին, հյուսվածքների հյութաշարժը, թավուտում խոնջացող կատվառյուծի շնչառությունը, բազեի ճախրանքը... Ֆլեյտայի հնչյունները թիթեռնիկների պես թևածում են օդում, նստում մերթ այս, մերթ այն ծաղկին, դարձյալ թռչում՝ բարձրանալով ճերմակ լույսին ընդառաջ... Լինել: «To be»: Պարզապես՝ լինելու վայելք, նաև՝ տխրություն, քանի որ ամեն լինելություն իր ավարտն ունի:

Իսկ երբ լինելը վայելելուց գատ՝ սկսում ես մտածել, մտածել լինելու իմաստի, սկզբի ու ավարտի մասին՝ թեթև տխրությամբ չես պրծնի, պատրաստվիր ողբերգություն ընդունելու, որովհետև մեր-

ծավոր ես, հաղորդակից, ցավակից, մեղսակից նաև: Այս ապրումներով է լեցուն «Ogunde» փոքրիկ պիեսը: Ավանգարդային լինելով հանդերձ՝ «Ogunde»-ը վճիտ, անհնարինության աստիճանի նուրբ ու քնքուշ մեղեդի է՝ մեղեդու զուտ քոլորեյնյան տեսակ, որի երանգներն առկա են ալբոմի նաև վերջին երկու կոմպոզիցիաների հյուսվածքներում:

«Offering» և հատկապես ալբոմին ընդհանուր անուն տված վերջին՝ «Exspression» պիեսները նման են միմյանց, թեև առաջինը մեկ ամիս վաղ է ձայնագրված, նրանք ասես նույն կոմպոզիցիայի միմյանց լրացնող-շարունակող մասեր լինեն՝ նույն տրամադրությունն է, նույն հագեցածությունը, նույն կրքոտ կատարումը: Սակայն «Exspression»-ը ավելի թանձր է, խոր, էքսպրեսիվ՝ իր անվանը համաձայն: Նրա միջով առաջ ես գնում՝ ինչպես լավայի կամ հենց իր՝ Քոլորեյնի արյան միջով, ուր խտացած է նրա ողջ էությունը, ուր երաժշտության կրող է յուրաքանչյուր գնդիկ: Տենորը երբեմն թավջութակի պես խավոտ ու դրամատիկ է հնչում, երբեմն էլ հողմապտույտի պես խոյանում է՝ վեր հանելով հնչյունային ամբողջ ծավալը, որը նման կրքոտ պահերին առանձին տարրերով անորսալի է այլևս: Հնչյունաշարերն այնքան հագեցած են, սերտ, որ անընդմեջ ալիքներով ծածկում են ունկնդրին, պիտի ձգնես զլուխդ բարձր պահել՝ շնչահեղձ չլինելու համար: Բուռն, կրքոտ աղոթքներ են բարձրանում երկինք, նրանցում՝ հարցեր, նաև՝ թողության միջնորդություն մնացողների համար: Ապա՝ կատարյալ համաձայնություն, խոնարհություն, ներդաշնակություն և... Անպարագիր սեր, որ տարածվում է դեպի վեր ու դեպի վար: Ահա վերջին խոստովանությունը, կարճ աղոթքը, և հրաժեշտի տևական հնչյունը նուրբ թրթռալով մարում է՝ դանդաղ տարրալուծվելով Լուսի մեջ...

Առաքելությունն ավարտված է - Առաքյալը ետ է վերցվում:

ԿՈԼԱԺ-ԲԼՅՈՒՉ՝ ՏԻԲԵԹՅԱՆ ՇԱՆ ՀԱՄԱՐ

Վիզս թքոտ էր՝ երբ սթափվեցի նինջից. առատորեն թքոտ էր, ու այդ մածուցիկ թուքը տարօրինակ հոտ էր արտածում՝ կաթի, մածոնի, խոտուծաղկի... ու էլի ինչ-որ հագիվ որսվող երանգ, որը, կարծես, թաքուն փսփսում էր ներսումս ծպտված մեկի հետ, այդուհանդերձ սակայն՝ անձանոթ էր... Չէ, ինչ-ինչ զգացում ժամանակ առ ժամանակ, այնուամենայնիվ, բարձրանում էր հոգուս խորքերից, ինչպես, ասենք, ձերմակ ձկան փայլփող մաշկն է ձողփելով հանկարծ հայտնվում ջրի մակերեսին կամ, ասենք, ինչպես ջերմու-

թյունն է բարձրանում տղմոտ, խաղաղ ջրի երեսից, երեկոյան գրվին: Թաշկինակով սրբեցի: Նուրբ գործվածքը թրջվեց. իսկապես թքոտ էր վիզս: Միտքս էլ այլայլված էր, ասես ուղեղիս գալարները լցված լինեին նույն թքով: Սափրվել է պետք, արագ, սափրվել: Էլեկտրականով չէ, ածելով, ձերմակ-փափուկ փրփուրի միջով: Այ այսպես, մաքուր-մաքուր, սլլուն, որ նույնիսկ ձանձր սայթաքի: Սակայն թքի տեղում մաշկիս սպիտակ բծեր պահպանվեցին՝ եթե հայելին չի խաբում... Ասես բնատուր խալեր լինեն կամ էկզեմա, կամ՝ խարան, որովհետև, եթե ուշադիր եմ նայում, ներսում գրեթե կան արաբեսկների նմանվող կամ էլ՝ ես եմ գրում իմ աչքերով, որ գալիս են ուղեղիս թքայլցված գալարներից: Ծանր հևոց եմ լսում. արդեն վաղուց էի լսում, բայց աշխատում էի չլսել, հիմա լսեցի: Դուռը կիսաբաց է: «Վրա բեր դուռն ու նայիր ետևում»: Չկա, ոչ ոք չկա: Հանգիստ: Թեև գետինը մի շնաչափ տարածքով խոնավ է ու հոտ է գալիս՝ կաթի, մածոնի, խոտուծաղկի... և էլի մի հագիվ որսվող երանգ...

Հոտը շարունակվում է թաթնահետքերով՝ շեմքին, աստիճաններից, շքամուտքում, փողոցում... Բրոնզյա ականջօղերով աղջնակը բոքիկ ներբաններով քստքստացնում է ասֆալտը. մեջքի մկանները լարված են (փոքրիկ հովազիկ), ասես զգում է հայացքս: Օդում բուրդ է ծվեն-ծվեն սավառնում կամ էլ՝ բարդու բամբակներն են: Պատի տակ մի կին բուրդ է զգում բարդու դալար ճյուղով: Կարճում եմ տարածքն իմ ու աղջնակի միջև: Լսում եմ: Նա կամացուկ երգում է.

«Օ՛, սրբազան Տիբեթ, դու բարձր ես ու հեռու, Իսկ Մոլոս շունն ապրում է քո խոր ծերպերում...»:

Նա երգում է ու խոպոպիկները խաղում են արևահար դեմքին, ու սերին, նա երգում է, հետո կծում ձեռքի հացը և ուտելով շարունակում երգել: Իսկ օդում ծանր հևոց կա, թույլ վնգստոց:

- Ի՞նչ երգ է,- հարցրեցի:
- Բյուզ է,- ասաց,- Մոլոսյան բյուզ: Պապիկս էր երգում:
- Պապիկդ նե՞օգր է:
- Ամենահին: Սովորական հայ: Թեև մաշկը շատ էր թուխ:

Նա թաթիկով ինձ վար կանչեց, և երբ ծնկի իջա, վիզս գրկեց ու երգեց ականջիս.

«Ես Տիբեթում փնտրում էի Մոլոս շանը, Բայց Դալայ Լաման փակեց ճամփես: Դմբոյի մեկն է այդ Լաման, խելք չկա գլխում...»:

Տաք շնչի ռիթմից թմրող գիտակցությանս միջով զգացի թուքը, որ ծածկում էր վիզս ականջիս մոտ: Հևոց: Թուք: Երգ: Հևոց, թուք, հևոց, թուք... Հետո բացեցի աչքերս ու... չկար աղջնակը. ասֆալտով ոտնաթաթերի հետքերն էին փախչում՝ չորս ոտնաթաթ-երկու թփփոց, չորս ոտնաթաթ-երկու թփփոց... ու հեռվում՝ արեգակի արնագույն սկավառակին տատանվող խոպոպիկներ, դեղնականաչավուն աչքեր, որ դեպի ներս ու դուրս նույնքան խոր են, անըմբռնելի, բայց՝ զգալի, ինչպես ջերմությունն է բարձրանում լճակի մակերեսից երեկոյան գովին, ինչպես հրացանից թաքնված կաթավն է տարբերվում խոտից ու քարից, եթե շատ ես ուշադիր...

«Օ՛, սրբազան Տիբեթ, դու բարձր ես ու հեռու», - երգեցի ես՝ նկատելով, թե գորշ ասֆալտին ինչպես են առանձնանում շագանակագույն ոտնաթաթերս սրճարանի մոտ: Սառույցի խորանարդիկները խշրտոցով թափվում են բարձր բաժակի մեջ: Ծարավ:

- Թան տվեք,- կանչում եմ:
- Իսկ ինձ՝ կոկա: Կիյուրասիրե՞ս: Ես էլ ծարավ եմ:
- Բայց պայմանով՝ չես երգելու:
- Հենց երգելու եմ: Ինչո՞ւ չերգեմ, երգելու եմ:
- Չէ, մի երգիր:
- Չէ, երգելու եմ, արդեն երգում եմ, նոր բլյուզ եմ հորինել, լսիր:

*«Իմ սերն ապրում է Աշտարակում, նա լքել է ինձ,
Ու թե չվերադարձավ, ես կգնամ դեպի կամուրջը:
Աշտարակի պոպոքը, Համայակիս սապոզը, Համայակ ջան...»:*

- Դու ծխո՞ւմ ես,- ապշեցի՝ նայելով, թե ինչ սովոր ազահությունք է ներքաշում ծուխը:

- Բայց ես մեծ մարդ եմ, դու չես տեսնում:

Բաժակի ապակու ետևից առողջ ատամները իրականից մի քանի անգամ խոշոր են երևում. նա խմեց կոլան, բաժակը թափով շխկացրեց սեղանին ու մինչ ես բարձրացնում էի գետնին ընկած մոխրամանը՝ չքվեց:

Ո՞ր գնաց... չիհնի՞ իսկապես կամրջի կողմ: Ո՞ր կամուրջն է: Սա չէ՞: Ամենահարմարը սա է: Շուրջս, տաք օդի մեջ, հևոց եմ լսում, կամացուկ կաղկանձ: Սա ամենաբարձր ու դրանով՝ ամենահարմար կամուրջն է: Ահա, ահա ոտնահետքերը՝ չորս-չորս, չորս-չորս... Ահա և չուզունե բազրիքը: Բայց ոչ, բազրիքին չի հասել կարծես, ջուրն էլ ցածում հանդարտ է, անտազնապ. մի սևամորթ պապիկ ափից ձուկ է որսում սպինինգով, այդքանը:

Ո՞ր է նա... էյ, ո՞ր ես...

«Այստեղ եմ: Չէ, սխալ կողմնորոշվեցիր, այս կողմ, այստեղ եմ... Դե չէ, էլի, օֆ, էս կողմ նայիր: Էլի՞ չտեսար: Դե դու պարզապես քյոռ ես, ոնց էլ հասել ես էստեղ: Մոտեցիր բազրիքին, մոտեցիր, քեզ համար նոր երգ եմ երգելու»:

- Ոչ,- գոռացի ու փախա:

Սակայն երզը սավառնում էր իմ փախչող ականջների շուրջը.

*«Երբ կինը թախծում է, հակում է գլուխն ու լաց լինում,
Իսկ երբ տղամարդն է թախծում,
գնացք է նստում ու հեռանում»:*

Գնա՞ցք: Իհարկե: Կայարան, գնացք: Կագոն, խցիկ, պատուհան: Հարևաններ... Ահա՛ երկու հարևան, չէ՛ երեք հարևան: Երրորդը (կամ էլ առաջինը, կամ երկրորդը) իմ գլխավերևում էր կծկված, չնկատեցի: Ստատիկ է ամեն բան՝ հարևաններս, գնացքը, կայարանը և ես նույնիսկ, որ շարժվում եմ միայն ինձնից դուրս կամ իմ ներսում, իսկ արտաքին-իրականում՝ անշարժ նստած եմ պատուհանի մոտ, աչքս էլ չեմ թարթում: Բայց հաչոց կա մոտերքում, և հաչոցը, պտույտներ գործելով շուրջս, մոտենում է.

*«Մոլուսների ցեղից եմ ես, բայց ապրում եմ Ալազյազում,
Ապրում եմ ես Ալազյազում, բայց ձեզ սիրուն երգ եմ ասում:
Ալազյազա ոչխարների բլյուզն է սա, օխչարի բլյուզ...»:*

Միջանցքից ոչխարի հոտ փչեց, հաչոց-երզը դադարեց, բայց թքակաթ հևոցը դեռևս լսելի է: Տաք, թաց ու փշոտ լեզուն հպվեց ծոճրակիս, ապա հեռացավ՝ տանելով հևոցն ու հոտը:

- Ո՞ր ենք գնում,- հարցրեց դիմացիս տղամարդը: Մենք նույն պատուհանի միջով ենք նայում, բայց՝ տարբեր դիտանկյուններից, թեև ոչ մի ուղղությամբ էլ ոչինչ չի փոխվում:

Նրան ոչ ոք չի պատասխանում, իսկ նա այլևս չի կրկնում իր հարցը. այնպիսի բավարարված տեսք ունի, կարծես պատասխանել են: Գնացքը կանգնած է, այդպես էլ չշարժվեց: Միջանցքի ուղեգործից մերկ ոտնաթաթերի քստքստոց է լսվում... Միջանցիկ քամով քշվող մագերի անձրևը ներխուժում է խցիկ: Ինքը նստում է ծնկներիս. արևահար մաշկով ամուր պզդերը գրկում են մեջքս: Ժպտում է մեծ, դեղնականաչավուն աչքերի խորքով, ուր վախենում եմ ուշադիր նայել: Այնուհանդերձ նայում եմ... Այնտեղ ամեն բան շարժվում է, տաք է, խլրտուն, իրոնիկ. զոհեր կան այնտեղ անհամար, սակայն

բռնություն չկա, ողբերգություն չիք: Զոհերի թվում սկսում են հայտնվել և ես՝ մաս առ մաս՝ ոտքս, ձեռքս, կիսադեմս... Հայացքս կտրուկ պոկում եմ՝ փրկվելու հույսով: Նա ծիծաղում է: Ու դեմքիս է խփում կաթի, մածոնի, ծխախոտի, ծաղկի հոտը: Նա երգում է տարօրինակ կրծքային ձայնով, ուր կան թռչունների, շների, կատունների, փղերի ձայներ ու նաև կաթի, խոտուծաղկի ձայն:

*«Իմ միակ սերն ապրում է հեռու Տիբեթում,
Իսկ գրպանս ծանրացնում է մերկ ատրճանակը:
Եվ ես կկրակեմ Լամայի վրա, եթե չթողնի գտնեմ նրան»:*

- Ո՞ւր է ատրճանակը,- հարցնում եմ:
 - Այստեղ է,- պատասխանում է՝ ձեռքն ազդրերի արանքը մոցնելով:- Կրակե՞մ:
 - Կրակիր:
 - Ապրել ուզո՞ւմ ես:
 - Ուզում եմ:
 - Թըրըխկ,- կրակում է:- Դե ապրիր:
- Ուղեղիս մեջ ամեն բան խառնվում է՝ ժամանակներ, զուգորդումներ, տարածություններ, նույնացումներ... <Ետո խաղաղվում է շփոթի ալիքը: Սթափվում եմ: Իսկ նա չկա արդեն: Բայց հեռոց կա շուրջս ու վիզս թաց է. թքոտ ժանիքների հետքեր կան մաշկիս:
- Գնացքը չի շարժվում:
- Ոնց որ թե հասանք,- նկատում է գլխավերևումս թառած մեծ արաղաղը:
 - Կարծես թե...- արծազանքում է նրա դիմացի հավիկը:
 - Հաստատ հասել ենք,- վերջակետ է դնում դիմացիս հնդուհավն, ու բոլորն իջնում են գնացքից:
- Ես էլ եմ իջնում: Կայարաններ չկան հրապարակի համայնապատկերը պերսպեկտիվ չունի. բոլոր պատկերները նստած-ստանձված են միմյանց: Երկգագաթ լեռն էլ այստեղ է, ու ծովն էլ այստեղ կլինեք, եթե լեռն թափանցիկ լինեք: Իսկ լեռան լանջերից առատորեն թափվող սելավը նաև այստեղ է թափվում՝ բոլորիս ու ամեն ինչի վրա, ու նաև ագռավն է դուռնդուռնալով թռչում մեր գլխավերևում, ետևից՝ աղավաղված հանդիմանանքի կռկռոցով: «Ես վայրի դժի միսը շատ համով ա, է՞», - լսում եմ ինչ-որ մեկի նվաղուն ձայնը և լեզվի ծապոցը: Այդ ձայնն էլ է սոսնձվում ընդհանուրին: Ամեն ինչ իմն է և ես ամեն ինչինը՝ եթե ունենալու աչքով նայեմ: Սակայն, ցանկությունները սպանելու դեպքում, ընկալումը շատ ավելի անսպասելի ու հետաքրքիր է դառնում, պարզապես հրաշալի է. ամեն ինչ քո և դու

ամեն ինչի մեջ, ու ամեն ինչ միացյալ, անմրմունջ, անցանկություն ու անկամ պտտվում է անապատի տապի կշռույթն ունեցող ժամանակի մեջ. գնում ենք դեպի վերջը կամ սկիզբը, ինչը հիմա տարբերակելի չէ և անհիմաստ է նաև: Հմայիչ շրջապատույտ է, այսպիսի զգացում երեխան է ունենում, երբ առաջին անգամ մտնում է գվարձանքների գրոսայգին: Աղիներս խուտուտ տալով գալարվում եմ, սիրտս նման է ամառային խաղաղ ջրում կռկռացող գորտի: Մի՞թե Հանդիպում է լինելու: Չէ, Հանդիպումն ամեն բան կփչացնի, այս ամենը նպատակագրությամբ է հմայիչ:

Սակայն միզափամփուշտիս անսպասելիորեն այցելած ցանկությունը միանգամից ժամանակ և նպատակ է հաղորդում տիեզերքին, մեն միակ մի ցանկություն ամեն բան փչացրեց: Ես ցանկապատի ետևում՝ իմ ետևում շան հեռոց լսեցի ու կամացուկ վնգստոց: Ո՞ւր էիր, է՞, մոլոսների անվեհեր սերունդ, վախեցե՞լ էիր ժամանակագուրկ զբոսանքից, դավաճան: Մի լիզիր ձեռքս, չե՞ս տեսնում՝ զբաղված է: Դե, մի քաշիր...

Կանաչ խոտին մի հին կարպետ է տարածված, որի նախշերի կշռույթը շատ նման է քիչ առաջվա զբոսանքի կշռույթին: Կարպետին օբսիդիանե մոխրաման կա ու ծիրանի փայտից ծխամորձ: Նստում եմ ծալապատիկ: Երկու տաքուկ ձեռքեր գրկում են վիզս, զույգ տաք կրծքերը սեղմվում են մեջքիս, զույգ սուր ժանիքներ ծակում են մաշկս. արյան բարախիկ առվակներ են իջնում կրծքիս... Հոսող արյան միջից՝ գաղտնի փսփոցներ: Ովքե՞ր և ինչե՞ր կան այս արյան մեջ, որքա՞ն է ետուառաջի թափը նրա գնդիկներում ու պարապ ընթացքը գնդիկների միջև: Կրծքերը պոկվում են մեջքիցս՝ ափսոսանք թողնելով հոգուս մեջ, բայցև անմիջապես հայտնվում են հայացքիս առաջ ու մտածում եմ՝ տեսնե՞լն է ավելի հաճելի, թե՞ զգալը: Նա նստում է գոգիս, ձեռքիցս վերցնում և կարպետին է դնում ծխամորձը, ապա արնոտ բերանով արնելու չափ պինդ համբուրում բերանս. արյան համ, կաթի համ, դաշտային խոտուծաղկի համ...

- Աչքերի մեջ նայելը վտանգավոր է: SOS:
- Փակիր աչքերդ,- գոռում եմ:
 - Բո՞ աչքերը փակիր,- հանգիստ խորհուրդ է տալիս:
- Սակայն ուշ է. բռնված եմ արդեն ու տեսնում եմ՝ ժայռեր, ծերպեր, վիթխարի ծառեր... Ահա, մոլոսները կատաղի հաչոցներով հալածում են արնածոր գոհին. նրա վերջը եկել է, ինքն էլ գիտի, բայց շարունակում է փախչել. մահվան խաղը պատշաճ ընթացք պիտի ունենա անշուշտ:
- Գնացքն այդպես էլ չշարժվեց,- ասացի՝ հայացքս մի կերպ խլելով:

- Երբ դուրս եկար՝ շրջակայքը չէ՞ր փոխվել, նո՞ւյնն էր:
- Փոխվել էր:
- Իսկ դու ասում ես՝ չշարժվեց: Կուզե՞ս բախտդ գուշակեմ,- հարցրեց:
- Մի բլուրդ հիշեցի, պապս էր երգում,- ասացի ու երգեցի.- «Ես գնացի գնչուհու մոտ՝ բախտս իմանալու: Նա նայեց ձեռքս ու ասաց՝ դե դու անհույս անհաջողակ ես, չավալե»:
 - Գնչուհիներին մի լսիր, ինձ լսիր:
 - Դու ո՞նց ես գուշակելու:
 - Ես պարզապես կբարձրանամ այն բարդու կատարին և էնտեղից կտեսնեմ բախտդ:

Նրա առածգակյան, ձկուն ոտնաթաթերը ծառի կեղևն են հրում իմ գլխավերևում: Իսկ ես ժամանակ առ ժամանակ հաջողացնում ու լիզում եմ այդ ոտնաթաթերը: Նա ծիծաղում է՝ «Խուտուտ մի տուր, կընկնենք»: «Դե ինչ, երևա՞ց բախտս», - հարցնում եմ ես: «Դեռ ոչ: Մի շտապիր, հազիվ կեսին ենք հասել»: «Չեմ էլ շտապում: Իսկ հիմա չերևա՞ց...»:

ՏՈՆԴԱՐՉԻ ԿՈԼԱԺ

Տարօրինակ էր... ճողփյունը լսվեց ավելի վաղ, քան մարմինս մտավ աղաթթու հիշեցնող թանձր, սառը, կանաչավուն ջուրը: Մի՞թե կանխեցիր... Բայց ոչ, դու քեզ ջուրը նետել չէիր կարող, այդքան համարձակություն չունես, և հետո՝ տեսակի խնդիր է. չէ, չեմ ասում, թե վատն ես, բայց դա կապ չունի: Եվ առհասարակ, ոչ ոք դա անել չէր կարողանալու՝ հենց այդ տեղում, հենց այդ ժամին ու հենց այդ ձևով, այլապես ի՞նչ իմաստ իմ արածին... Չգիտեմ: Եվ ոչ ոք էլ չկա այնտեղ կարծես: Չգիտեմ: Ահա, նստած եմ տղմոտ հատակին ու չգիտեմ: Չայներն այստեղ խուլ եմ՝ խլորեն ուժգին, արտասովոր թրթռայնությամբ: Կողքիս՝ ջարդված շիշ, «Կիլկա» պահածոյի դատարկ տուփ, պղպջակների վերձիգ, օրորուն շարաններ, նաև՝ իմ բերանից: Սա՞ ով է... Պոսեյդոնն է, թե՞ խեղդամահ եղած մեկը, որ պատած է ջրիմուռներով... ծանոթ է կարծես, ահա կրծքի այս երկայնակի սպին, նաև՝ ազդրի դաջվածքը՝ «Միշտ հիշելու եմ», չի երևում, թե ինչ է հիշելու, սակայն ես կարծես թե կռահում եմ... Լավ, չսևեռվեմ: Տիղմից դուրս ցցված...

Տիղմից մեկ երրորդով ցցված լրագիր՝ «...համագումարի որոշումներին՝ կանաչ ճանապարհ...»:

Տիղմից մեկ ու կես երրորդով դուրս պրծած ռադիո՝ «Տոնական

շքերթն ավարտվեց մեծ հրավառությամբ: Շքերթին ներկա էին...»:

Տիղմից երկու երրորդով դուրս մնացած հեռուստացույց, սև-սպիտակ էկրանին՝ «Փոքրիկ կարասների պարը»:

Տիղմից երեք չորրորդով լվացված կրպակ՝ «Пиво-воды», կրպակի մոտ բանվորական արտահագուստով տղերքը պորթվեյն են խմում և ծխում Կազբեկ: «Ողջույն»: Ողջույն-ողջույն: Լավ եմ, ոչինչ: Չէ, շնորհակալ եմ, ուրիշ անգամ:

Ականջներս սկսում են սաստիկ ճնշվել, կուրծքս՝ նույնպես: Նաև՝ տաղտուկն է ճնշում արդեն և մի ուրիշ բան, որ սեղմում է կոկորդս, և հետո ցուրտ է ու լավ թրջվել եմ: Ուստի դուրս գամ: Դու՛րս, վե՛ր, թափով... ահա...

Թաց հետագիծ՝ փողոցի ասֆալտին, հետո՝ միայն թաց ոտնա-հետքեր, կոշկահետքեր, ներբանահետքեր: Սիգարետ... Սիգարետներս թրջվել են: Ափսոս: Լուցկին էլ թաց է: Էհ, ես էլ չեմ ծխի, փոխարենը՝ երկար կապրեմ, երկար ապրելը կարևոր է կարծում եմ... Ազբավը ծրտեց կոշիկիս, ասում են՝ հարստանալու նշան է, թե՞ հարստանում եմ, երբ գլխին է ծրտում... Բայց ծխել ուզում եմ: Ջրի տակ լավ էր, ծխելը մտքովս չէր անցնում: Ի՞նչ... Հա, բարև, բարև...

- Բարև: Լսիր, եղբայր, մի սիգարետ հյուրասիրիր, եթե ունես: Լողացե՛լ... Հա, լողացա թեթևակի: Վերջի՞նն է... ֆիլտրն էլ պոկված... Ոչինչ, ֆիլտրն էական չէ, ֆիլտրը, մեկ է, չեմ ծխելու: Դեհ, կրակ էլ տուր: Չունե՞ս: Դե լավ, շնորհակալ եմ, հաջողություն:

Հաճելի է, գրողը տանի, հաճելի է՝ շրթունքներիդ արանքում սիգարետ կա, ու դու էլ անկախ-ազատ զբոսնում ես փողոցով ու կոստյումդ էլ չորանում է կամաց-կամաց: Լավ է: Իհարկե, առավել լավ կլիներ, եթե սիգարետը վառած լինեի: Բայց այդպես էլ՝ շուտ կծխվեր-կզգար: Իսկ այսպես երկար կարելի է ունենալ այն՝ շրթունքներով սեղմած, կանխավայելքի զգացումի ետառաջփոխանցումով՝ շրթունք-ուղեղ, ուղեղ-շրթունք, շրթունք-ուղեղ... Մազոխիզմ:

- Մի թուփ, պարոն, էյ, ընկեր, մի թուփ... Վառեմ սիգարետս Ձեր կրակով, եթե դեմ չեք: Ահա: Շնորհակալ եմ: Հաջողություն Ձեր գործերին:

Հաճելի է, գրողը տանի, ծխելով մտնել զբոսայգի: Ափսոս միայն, որ կարուսելը չի վազում ծառուղիներով, հեքիաթը չի տարածում զբոսայգիներով, այլ անդադար պատվում է նույն տեղում: Թեև սա էլ գուցե իր հմայքներն ունի, գուցե իսկապես լավ է, որ կարուսելը նույն տեղում է պատվում. պատվում է, պատվո՞ւմ... Այ, եթե տունդ պտույտի ներսում լինի, երբեք չես կորցնի. պտույտի ներսում հեշտ է գտնել տունը կամ որևիցե այլ բան, որքան էլ հարբած կամ մտացրիվ լինես, պարզապես կսեղմես շրջանը, կսեղմես, մեծից փոքր՝

պտտվելով կզնաս, էլի կտեղմես շրջանը... Սակայն դա լավ է, եթե տունդ քար ու թիթեղից է, իրական, իսկ եթե մտակառույց է, ավելի լավ է փոքրից մեծ պտույտներով գնալ, որովհետև տարածքը մեծացնելիս ինչ-որ բան գտնելու հնարավորություն միշտ էլ կա, կորած չէ, մնում է: Այդպես, փոքրից մեծ, պտտվում ես, պտտվում ու տարածվում տիեզերքով, բայց չես կորչում, որովհետև պտտվելիս միշտ զգում ես կենտրոնի առկայությունը. ցավոք, վերադարձը կարող է երկար տևել ու կարող է չհասցնես, բայց գոնե հանգիստ կլինես, որ դարձի ճամփին մնացիր:

Ծուռ հայելիների սենյակ: Հրաշալի է, հանգիստ, անբարդությամբ: Իսկական հայելու մեջ նայել չարժե, իսկական հայելին փորձանք է, փախիր: Ծուռը լավ է: Բուռ... հա-հա-հա... բեե... հի-հի-հի... ուռ-ուռ... Բայց... Բայց երկրորդ ծուռ գլուխը հայտնվեց... ծանոթ է, հատկապես կուրծքը, նաև ազդրը: Ուռուռ... Չէ, սրա հետ զվարճանալ չի ստացվի: Մագերին ջրիմուռներ կան, հայացքն իբր բազմիմաստ է, պաղած ժպիտը՝ անտանելի, պարզապես զգվելի: Թու: Սրտխառնոցը ծավալվում է արագորեն: Փսխոց՝ ուղիղ հայելու վրա:

Էհ, հաճելի է, գրողը տանի, հաճելի է փայտյա ընդարձակ նստարանին այսպես նստել, նույնիսկ՝ փռվել, ու նայել կարուսելին, որը չի պտտվում ու երևի վաղուց չի պտտվել: Բայց ճռճում է: Քամուց է: Հաճելի է զգալ ադրենալինի ավելացումն արյանդ մեջ, որը պարբերական ընդառաջումներդ առ աշխարհ դարձնում է սարսուռ, խղճահար, հուզումնալից...

Ճռռ, ճռռ... Ձիուկի մռուրը ջարդված է, խրխինջն արգելք չունի, փղիկի կնճիթը կիսված է, բայց ինքը խրոխտ է, թեև չի մեծանում, տարիներն անցնում են, ինքը չի մեծանում, գուցե դրանի՞ց է խրոխտ ու երջանիկ: Իսկ սա ո՞վ է... Պոսեյդոնն է կամ խեղդվածը, հեծել է եղջերվին, որի եղջյուրները սղոցված են: Ինձ են նայում եղջերուն ու նրա հեծյալը: Ժպտում են: Ճռռոց: Կարուսելը պտտվում է դանդաղ: Խեղդամահ Պոսեյդոնը ոգևորված գոռում է, ինչպես կռվի ելած ռազմիկ: Պտույտներն արագանում են: Կարուսելը կատաղի է պտտվում արդեն, հեծյալը թրթռացող ժապավեն է դառնում, որի շարժումը, եթե չլինի ճռռոց-թրթռոցը՝ չի էլ զգացվի: Այ, այդպես պիտի պտտվես, եթե ուզում ես տարածք ներառնել ու տեր լինել: Միայն թե շնչասպառ չլինես:

Կուրծքս քոր եկավ: Ազդրիս վրայով, տաբատի տակ, մրջյուն վազեց: Ցրտում է: Գնալ է պետք: Այո, ժամանակն է, պետք է գնալ՝ փոքրից մեծ պտույտներով և չկասկածել. սա շատ կարևոր է՝ չկասկածել:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ԿՈՒԼԱԺ

Որտեղի՞ց է լսվում այս շշուկը...

«Եթե չես ուզում խաբված լինել...»:

Կրդովեցնող է, նույն միտքը մտածելիս, եթե վազում ես՝ այլ է, եթե պառկում ես՝ այլ, եթե զուգարանում ես՝ այլ, եթե գնացքում ես՝ այլ է ու այլ:

«Եթե չես ուզում...»: «Եթե չես...»: «Եթե...»:

Այնուամենայնիվ, որտեղի՞ց է այս շշուկը՝ ներսի՞ց, դրսի՞ց, վերի՞ց, վարի՞ց...

«Եթե չես ուզում խաբված լինել...»:

«Իսկ ինչպե՞ս է գնացքը...»:

Կա-չկա տրոհված ես, եղբայր. չլինի՞ գիտակցությունդ չդիմացավ, պայթեց ու բեկորները հիմա ֆռֆռում են գլխիդ շուրջն, ինչպես էլեկտրոնները՝ միջուկի:

«Իսկ ինչպե՞ս է գնացքը շրջանցել...»:

Հանգիստ, մի՛ տագնապիր, հանգիստ նայիր, մարգագետնին հանգիստ նայիր: Մարգագետնի՞ն...

«Եթե չես ուզում խաբված լինել՝ ընկեր մի ունեցիր, միայն՝ ծանոթներ, տարածություն պահիր՝ որպես անկասելի պայման: Եվ դարձյալ՝ եթե չես ուզում խաբված լինել՝ ընկեր մի՛ ունեցիր, շուն ու կատու ունեցիր»:

Ահա թե ի՞նչ...

«Ինչպե՞ս է գնացքը շրջանցել մարգագետնինը և մտել քաղաք, եթե քաղաքը բոլոր կողմերից շրջապատված է մարգագետնի համասեռ տարածքով: Մարգագետնի միջո՞վ է եկել... Բայց մարգագետնի վրա՞ ոչ մի հետք: Իսկ գնացքը դրսից է եկել, դրսից է եկել և դուրս պիտի գնա, պարզապես՝ այստեղով է անցնում. կանաչ լույս, շչակի ծայն, մագութի հոտ, գծանցում ու նման բաներ: Մի խոսքով՝ մտել է քաղաք, բայց մարգագետնին ոչ մի հետք չի թողել: Գուցե մարգագետնինը կլանել է հետքերը՝ գնացքի անցնելուց անմիջապես հետո: Բայց դե մարգագետնի ինչի՞ն է՝ հետք քողարկելը»:

Լավ, կարևոր չի: Ո՞ւր են նոր ընկերներս, որոնք չեն խաբելու՝ ինչպես խոստացված է: Ո՞ւր են շներն ու կատուները, կենդանուներն ու հովազները: Է՛յ, բաբուին կամ մակակ, թող պիջակս, մի քաշի... Ո՞ւր են: Այստեղ են: Գազանանոցն է՞լ հանրային գրադարանի ներքնահարկում լինի: Երևի ուրիշ տեղ չի եղել, ժամանակավոր ապաստան է՝ Կարմիր Գիրք, հետո կտանեն սպանդի՞ Սև Գիրք, գու-

ցե և չտանեն սպանդի, տան կրկեսին կամ երշիկի գործարանին: Գարշահոտ է՝ սովորական գազանանոցային գարշահոտ, որին երբ սովորում ես՝ հաճելի է դառնում՝ ջունգլիներ է հիշեցնում՝ ջունգլիներ, սավանաներ... եթե նույնիսկ երբեք չես եղել ջունգլիներում ու սավանաներում: Խաժ աչքերի փայլատակումներ... Աստված կա՞ այս աչքերի գազանային խորքերում: Կա, բոլոր շերտերում էլ կա, բոլոր բջիջներում ու նույնիսկ պարապ տեղերում: Բայց դա ի՞նչ կարևոր է հիմա: Ճանկերի քերող կծկում, ժանիքների կափկափյուն: Աստված կա՞... Դե կա, կա, հանգստացիր, սա ի՞նչ հիվանդություն է, Աստվածային հիվանդություն: Մոռացիր: Կա, բայց քոնը չի: Չէ, կա, բայց զբաղված է, քեզնով զբաղվելու ժամանակ չունի: Հանգիստ թող Աստծու դին: Մոռանալ, չսևեռվել, մոռանալ, մոռանալ: Գազանանոցը: Գազանանոցն է՞լ գրադարանի ներքնահարկում... Չէ, սա ասել եմ արդեն: Գազանանոցը: Հա, գազանանոցում, ուրեմն, կուզես՝ նստիր, կուզես՝ կանգնիր (էս ինչեր եմ խոսում), կուզես... Բայց ոչ, սա հաստատ գազանանոցի մասին չի այլևս: Մարգագետնի մասին է, որովհետև բաց մարգագետին եմ դուրս եկել, օդ եմ շնչում: Ահա, ուրեմն, այս մարգագետին կոչվածը... Սակայն ստոպ, մարգագետինն չնայես գեղեցիկ-տզեղ, չար-բարի, տխուր-ուրախ հասկացությունների ցածրունքից, կպարտվես, որովհետև մարգագետինը քո իմաստություններից անդին է փռված: Մարգագետինը... էյ, այդպես մի նայիր, զգուշացվեցիր, չէ՞, մի նայիր...

Մարգագետնի գմբուխտյա հարթությունով, լուսատուիկների պես, ցրված թարթում են ծաղիկները՝ դեղին, կարմիր, կապույտ, ճերմակ: Ծաղիկների գլխիկներն ավարտուն են, գուցե՝ ամենամավարտուն բանն այս աշխարհի, այստեղ նույնիսկ մազաչափ ոչինչ չես ավելացնի ու չես պակասեցնի: Ձեռք մի տուր, մի խառնվիր նրանց մեղեդուն քո խաչափառ բաղաձայնով, կամաց շնչիր, գլխարկդ հանիր՝ անդրմարգագետնյա շերտերում ավերված քաղաքներ կան, դինոզավրերի ու մամոնտների ոսկորներ, ԴՆԿ, կորած մշակույթներ. մի՛ մտածիր գեղեցիկի ու տզեղի մասին, հանկարծ չասես, թե սա հենց այն գեղեցիկն է, որը փրկելու է աշխարհը, անհեթեթ մի եղիր, մարգագետինը գրքի էջ չէ, պարզապես նայիր, հոտ քաշիր, շնչիր, հանիր միջիցդ հույզերը, թող միայն տեսնելու, զգալու կարողությունը: Չե՞ս կարող: Դե շրջվիր ուրեմն: Ի՞նչ տնքոց էր: Շրջվիր, շուտ, շուտ, չնայես... Թու քո... չհասցրիր, դե հիմա արի ու սրա տակից դուրս արի:

Դողաց: Երեբայ: Մարգագետինը բառաչեց ու երերաց: Ուռեց այստեղ-այնտեղ, պայթեց-պղպջակ թողեց: Ժայթքեց՝ դեղնականաչավուն բիոմասսա դարձած՝ բառաչով ու մռնչյունով, հառաչով ու

տնքոցով, հաչոցով ու կռինչով, թառանչով ու շշուկով. շշուկներ՝ միմյանց ընդհատող, միատեղ, արագ, արագ, արագ... Հրաշալի է բուրում մարգագետինն այնուամենայնիվ: Փնջաց ու... Հանդարտվեց կարծես: Բայց տակը քլթքլթոց կա: Դողում է: Դարձյալ երերաց: Շարժվեց: Պոկվեց ու գալիս է քաղաքի վրա, բոլոր կողմերից: Դե վազիր, որ փախչես, որովհետև գալիս է կատաղած բիոզավադրությունը, գալիս է բիոկրեժը: Կանգ առ, ստոպ, գազաններին մոռացար՝ նոր ընկերներիդ. իջիր վար ու արծակիր նրանց, թող իրենց գլխի ճարը տեսնեն: Բայց ոչ, ուշ է, բիոմագման արդեն լցվում է ներքնահարկ: Վեր, վեր, դեպի ձեղնահարկ, թեև անվերջ բարձրանալ անկարելի է, բայց դա հետո, հիմա հստակ տրամաբանությունը կխանգարի միայն, փախուստն ավելի շատ բնագողով է լինելի: Գրադարանի միջանցքներում՝ մարդիկ, մարդիկ... մենակ, զույգերով, խումբ-խումբ՝ խոսում են, ծխում են, խոսում են... Տեղյակ չեն: Էհեյ, փախեք, Մարգագետինը շարժվեց, գալիս է: Չեն ուզում լսել: Դեհ, չեն ուզում, թող չուզեն: Վեր, հարկերով՝ վեր: Հիմա պատուհանից դուրս նայիր: Պատուհանի՞ց: Այո, պատուհանից. բացիր պատուհանը: Ի՞նչ ժապավեն է ոլոր-մոլոր ընթանում ներքևում: Գնա՞ցքն է: Մի հեռավոր քաղաքից մյուս հեռավոր քաղաք գնացող գնացքն է, որն արդեն դժվարությամբ է հաղթահարում Մարգագետնի դիմադրությունը: Ամեն դեպքում՝ միակ հույսն է. այս հարկից վեր՝ միայն երկինքն է: Թռիր պատուհանից, այսինքն՝ ցատկիր. լավ նշան բռնիր, չվրիպես հանկարծ, դե՞... Ստացվեց: Հիմա՝ վազոնի ներսը: Էս ո՞ւր են ուղևորները: Էհե՛յ, ուղևորներ, ով քնած է՝ արթնացեք, ով արթուն է՝ վեր կացեք, բիոշերտն իր հիշողությունն արթնացրած, իր մեջ ամեն բան կենդանացրած՝ գալիս է: Ահա, արդեն ծածկել է անիվները, հասել սանդուղքին: Բացիր խցիկների դռները, որը փակ է՝ թակիր, ուժեղ: Էհե՛յ, ուղևորներ... Էհե՛... էյ... Տիկին: Տիկին՞...

- Տիկին, դուք այստեղ հանգիստ ծխում եք, իսկ այնտեղ... Չէ, այդպես մի նայեք նրան... Բայց... Պիտե՞ք, դուք շատ հրապուրիչ եք, տիկին, այդ անփույթ, այդ անփույթ կոճկած խալաթը...

- Խալաթս... Լավն է, չէ՞:
- Խավոտ է ու կանաչ, ինչպես մարգագետինը:
- Բայց երկար չի՞. մի քիչ վեր չբաշե՞մ փեշերը, պարոն:
- Բարի եղեք, արեք այդ բանը:
- Դե՞... բարձրացնում եմ, պատրաստ եք, շնչակտուր չե՞ք լինի: Մի րոպե... Կամաց, խնդրում եմ, ցավեցրիք, կամաց... Դե իսկ հիմա՝ ցավեցրեք, ըի՛ր, մի քիչ էլ...
- Ախ, տիկին, տիկին, տիկին...

- Սպասեք: Սպասեք, պարոն:
- Տիկին... Բայց ինչո՞ւ...
- Պատուհանից լրտեսում են, ահա, նայեք:

Քլքթաղող Մարգագետինը բարձրացել ու իր միլիարդավոր թարթող աչքերով լրտեսում է. նրա կանաչադեղնավուն մակերեսով ցրված այդ տարագույն աչուկները լուսատուրիներ են հիշեցնում, նրանք հասել են պատուհանի վարի եզրին և հետաքրքրված նայում են ներս:

- Նայում են՝ թող նայեն, կհասցնենք:
- Ես չեմ կարող այսպես, պարոն, ես...
- Լավ, գնացինք, շուտ:

Գնացքի տանիքը սայթաքում չէ, ինչպես կարող է թվալ հեռվից նայողին, օդն էլ այստեղ մաքուր է, քամին՝ թարմացնող, վերևում՝ երկինքը:

- Տիկին, տիկին, տիկին... Ախ, տիկին, ձեր ներսում ասես վրեժխնդիր մարգագետինը լինի...

- Քիչ խոսեք, պարոն, ձեր եռանդը մի վատնեք: Շարժվիր, դե շարժվիր, ավելի թափով:

- Տիկին-տիկին...

Իսկ ներքևում ծփում-քլքթում է բարձրացող անձայր, տաք Մարգագետինը:

ԿՈՒԼԱԺ՝ ՁԵՄՖԻՐԱՅԻ ՀԱՄԱՐ

Տարօրինակ է... Ինչո՞ւ մետրոյի գնացքը չի պտտվում փողոցներով, այլ՝ միայն գետնի տակ, մութ թունելներով, մի ծայրից մյուսը: Եվ ինչո՞ւ այսպես կենտրոնաձիգ է ամեն բան, ու փողոցները չեն փախչում տիեզերքով, և երբեք չեն հանդիպում տարբեր մոլորակների փողոցներն իրար: Ինչո՞ւ ծակոտկեն է ամեն բան, ինչպես կոշտուկ քերելու պեմզա, և հատվածավոր, ինչպես աղբանոցում մնացած ձաքձքված այլումին, և տուն գալիս ստիպված ես ցատկոտել՝ ցնցելով միսդ, ու խիստ կենտրոնացած ոտքերիդ տակով փախչող ծակոտկեն նյութին՝ տունդ աչքաթող ես անում հանկարծ, ետ դառնում ու սկսում նորից: Իսկ...

Իսկ քո լքած տարածքում նորովի է ամեն բան, հետաքրքիր, իսկ քո թողած լուսանկարի վրա աղը դեղինով դուրս է տվել տեղ-տեղ, և ցուրտ է այնտեղ, սառնամանիք, մինուս քառասուն: Սարսափ: Իսկ ձայներիզը, որ մոռացար, շատ պտտելուց ձաքձքել է, ինչպես ոտքի տակ ընկած այլումինե լար, բայց էլի պտտվում է ու խզխզում,

և նրա պտույտների ներսում կա ամեն բան ու նույնիսկ՝ երիցուկների դաշտ, բայց ցուրտ է այնտեղ հիմա, սառնամանիք, հյուսիսային արջ, սառույցներ, լայկաների մրսած հաչոց, եղջերուներ, չուլչա-ներ, յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի վրա մեկ չուլչա, որը ջերմություն չի երագում, որովհետև չգիտի, թե ինչ է դա: Մինուս քառասուն: Սարսափ: Իսկ քեզ հետ կապված ժամանակը հաստ ու սերտ բետոնի շերտ է, բետոնում՝ քո գազահատ հրահանը, սիգարետի դատարկ տուփ, թրջված լուցկի, գարնանը տուն դառնալու անզգուշությունն ունեցած թռչնի գույզ թևիկներ, կնճռոտ գուլպա, լաքը թռած պայուսակ, քթիկը թեթև դեղնած վարտիք, ի՞նչ անհեթեթ է այս վուալով շյապան, բետոնի մեջ՝ կտրված-ցրված ուլունք, ակից դուրս արծած տոպագ, եղունգ հարդարելու սպտիկ խարտոց... Իսկ քեզ հետ կապված ժամանակը բետոնե սուզանավ է, որ լողում է Բարձրյալ պլազմայի միջով, ու ամեն անկյունում սիգարետի կրակ են ուզում ծանոթ դեմքեր, իսկ կրպակի մոտ մեր ժամանակի վկաները փրփուր են փչում գարեջրի վրայից ու ցրված ժպտում գավաթի միջով, ժպտի տակ՝ բարեհոգություն, ներողամտություն, ժպտի տակ՝ ափսոսանք, ակնարկ, ժպտի տակ... ժպտի տակ... խորքում, ավելի խոր... նախամոր չորացած ծծերն ու դիվային կրակող աչքերը, գայլահմա քուրմն ու հմայված գայլեր, ցուլեր, եղջերուներ ու հիպնոսի մեջ քնած թրատամ վագր, ժպտի տակ՝ վարդագույն միս, ուրիշ մսեր...

Համար քառասուն մթերային խանութ, մսի բաժին: Խորշել պետք չէ, միս, քո եղբայրներն են, և միսն էլ պոեզիա է, մեղեդի ու ռիթմ, նաև պատմություն՝ եթե դեռ տաք է, թրթռում, եթե քրոմոսոմները ծիգ շվվում են լիֆտի ձկված ճոպանների նման, այլ ոչ ձաքձքված, ինչպես ոտքի տակ ընկած-մոռացված այլումինե լարեր: Մեր սուզանավը նաև այստեղ է՝ մսերի ներսում. նույն սուրբ պլազմայի մսային խտացումն է, հետո կլինի ապախտացում-լործ-փրփուր, վերստին՝ խտացում, հեղուկացում, գերխտացում, բետոն, ավմաստ, ուրան, երկրաշարժ, պայթյուն, ազատում, թռիչք... Ստո՛պ, կանգ առ, մի՛ս, շուրջդ նայի՛ր, չափդ ճանաչի՛ր, լյարդդ կխցանվի, երկամդ ձաք կտա, հնարավորից մեծ բեռ մի վերցրու ողնաշարիդ, որ օստիոքոնդրոզով կերվում է արդեն, ու ծակոտկեն է՝ ինչպես կոշտուկ քերելու պեմզա, կամ հինավուրց տաճարի պատ: Մտիր խանութ, մի՛ս, մոտեցիր մսի բաժնին, ուր հիմա միս չկա կարծես. ճանձերն են բզզում սկուտեղին լերդացող արյան երեսին: Տունն այստեղ է... <Ե՛յ, հե՛յ, ո՞ւր ես... Բարձրացրու լերդացող արյան լեզվակն ու տակը նայիր: Ճանձ, քշշ, մի խանգարի, ինչ համառն է այս ճանձը, դե քշշ... Ո՞վ ես, ճանձ, բզզոցդ շատ է ծանոթ՝ ետ-ետ գնա-

ցող, էլի ետ, էլի... ճանճ, մողես, լորտու, սարյակ, անտիլոպ, մարաբու... Ո՞վ ես դու... Եվ քայլքդ էլ ներդաշնակ չէ. ոտքդ կարճ է մյուսից կամ երկար (այս դեպքում մյուսն է կարճ), աչքդ էլ լավ չի տեսնում, եթե առհասարակ տեսնում է... Եվ ուրեմն գիտեմ քեզ, ճանաչեցի, գիտեմ...

Պապ, պապ, ծեր մեղու-անտիլոպ, մարաբու, քո բզզոց-բառաչ-կռնիքն էր, ճանաչեցի: Լսիր, ծեր դմբու, քո ինչի՞ն է այդ կռնիքը, բա դա քո՞ կռնիքն էր, որ գնացիր կամավոր, փոխանակ հանգիստ արադդ խմելի: Հերոսի մողեյը ֆեֆեռ՞ում է հոգեկանիդ պարունակներում, հանգիստ չէր թողնո՞ւմ... Չգիտե՞ս: Պատասխանը չիբուխի ծուխն է՝ անտարբեր, ուրվապատկերների կերպափոխ գալարումներով երկինք ծգվող... Վարի շրթունքիդ թուրուն է կպել, թքի՛ր, ավելի ուժեղ, չէ, պինդ է կպած, թե՞ ուժ չի մնացել մեջդ, սպասիր, ո՞ր ես գնում, սպասիր պոկեմ, էյ, ո՞ր... Հա, հասկացա... բայց դե քիչ խմիր քո այդ զգվելի ճաճան, լսո՞ւմ ես... Ահ, լսող չես, լավ, մոռացանք... Ո՛չ քեզ, ոչ, այլ քեզ հետ կապված ժամանակը, այնպես որ՝ բայ-բայ: Սակայն ի՞նչ աղմուկ է, ինչ է, մի՞ս...

Ուրեմն դառնանք համար քառասուն խանութին: Միս են բերել՝ կարմիր մարմարիոն, ճարպաշերտերով կշռույթավորված, ռիթմիկ ու թրթռուն, ներդաշնակ ու բուրավետ: Ու մտերը խոնավել են մսի շուրջ ու լարված-տազնապած միտք են անում, թե ընթրիքը որ ճամփով տանեն: Իսկ ընթրիքից հետո նրանք գուցե տխրեն, թախծեն, գուցե լաց լինեն, որովհետև... որովհետև մոռացված ֆոտոների վրա միևնույն քառասուն է միշտ ու մի տարածք, ուր էլ չես մտնի, ուր ամեն բան բետոնե սուզանավ-տիեզերանավի մեջ է, ու լողում է անորոշ: Հիշո՞ւմ ես...

Սերը հանկարծ թունելախորշով է գալիս, երբ անհամբեր սպասել ես նրան ամենուրեք: Նա գալիս է վերջապես՝ ռիթմիկ խփելով ռելսերին. խփոցն ուժգնանում է, դղրդոց է արդեն. դղրդոց-դղրդոց, դղրդոց-դղրդոց, դղրդոց-դղրդոց... Թունելից դուրս մղվող քամին ուժգին խփում է դեմքիդ, մթի պոչն անցնում է վրայովդ ու հանկարծ... Լավայի պես ժայթքում է լույսը, ողողում մարմինդ, հոգիդ, միս... Հիշո՞ւմ ես...

- Հիշո՞ւմ ես:

Ահ, ոչինչ էլ չես հիշում դու: Եվ ինձ էլ կարծես պետք չէ արդեն, փուհ... գնաց, թռավ, ու սուզանավ-տիեզերանավն անտեր է, չունի նախապատմություն և չունի վերջնագիր. ինքն իրենով է ու իր անվերջ-անհեթեթ պտույտներով: Իսկ կար ժամանակ... Սարսափ... Լավ, չփորփրենք... Բայց, այնուհանդերձ, կար ժամանակ ու... Ի՞նչ էր, միս, հիշո՞ւմ ես... Ահ, ոչինչ էլ չես հիշում այլևս, ու ինձ էլ հարկա-

վոր չէ կարծես, փուհ... գնաց, թռավ... Ու երբեք էլ չեն պատվելու վագոններ սառնամանիքով զսպանակված փողոցներում, ու եթե ամռանը բացվեն նույնիսկ զսպանակները՝ փողոցները չեն փախչի տիեզերքով, որովհետև անտարբերորեն ծակոտկեն է ամեն բան, համառորեն հատվածավոր ու անխզելիորեն կենտրոնաձիգ: Իսկ իմ թողած ֆոտոն կերպել է դեղին քիմիայով ու ցուրտ է այնտեղ, միևնույն քառասուն, սարսափ... Իսկ իմ թողած ձայներիզը չորացել է, ճաքճքել ու շատ պտտելուց հիմա ճռճռում է, խռխռում... չէ, կռկռում է կարծես՝ կռռ, կռռ, կռռ...

Կռռ,- կռկռում է ինչ-որ մեկը պատուհանից այն կողմ, պատի ելուստի վրայից: Կռռ, կռռ... Գորտ է, ջրհորդանի ետևից թշերն է ուռչնում Կարբերաբար՝ կռռ, կռռ... Աչուկները խոնավ են, քթիկը նույնպես: Ծանոթ: Դո՞ւ ես... դո՞ւ ես, տատ: Ողջույն: Ախր ես էլ մտածում եմ միշտ՝ ո՞ր կորավ պատվիկ պառավիկը, չէր կարող այդպես անհետ ու անդարձ կորչել: Եկար ուրեմն... Դե արի, արի... Դու ես, չէ՞... Հա, դու ես, քոնն են այդ պլշած-տարակուսած աչքերը, այդ մեծ կոշտուկը ոտքիդ բութ մատին, որ միշտ քերում ես պեմզայով... Դու ես, չէ՞, տատ, ես էլ ասում եմ՝ ո՞ր չքվեց այս կինը, մեռավ, ինչ է... Բայց նույնիսկ մեռնելը հո չի՞ նշանակում, թե իսպառ ոչինչ դարձավ, չէ՞: Ո՞նց ես, ի՞նչ կա-չկա... ինձ հետ չես խոսո՞ւմ... Հա, անձրևի ես սպասում, դեռևս երեսուկյոթ թվից: Այնուամենայնիվ ուզում ես ինչ-որ բան ասել: «Կռռ»: Մի տանջվիր, ես գիտեմ, թե աչքերդ այդպես թարս ոլորելիս՝ ինչ ես ասում սովորաբար. ասում ես՝ «Այ տղա, բայց կարո՞ղ է այնպես լինել, որ ես երբեք էլ չտեսնեմ էն խոտը, էն ծովը, երիցուկի դաշտերը...»: Ճշմարտացի եմ, չէ՞: Հիմա տեսա՞ր, որ անհնարին բան չկա, հիմա ուզես՝ կթռնես-կտեսնես դաշտերն ու ծովը, միայն թե անձրև գա: Վաղուց չկա: Կաշիդ չորանում է: Ի՞նչ անեմ: Ախր չի պտտվում մետրոն փողոցներով ու շատ է կենտրոնաձիգ ամեն բան: Լսիր, կուզե՞ս սպանեմ քեզ: Ցավ չես զգա, խոստանում եմ. գորտ սպանելն իմ սիրած զբաղմունքն է, դեռ մանկուց: Ու դու գուցե վերջապես հասնես, գուցե անձրև գա վերջապես, ու տունդ տեսնես, հը՞: Չէ՞: Գնո՞ւմ ես: «Լկտի լաճ»: Վախեցա՞ր: Սպասիր, կատակեցի. թեև եթե ուզեիր... Դե սպասիր, ոտքերդ ջրիմուռն է խճճել, սպասիր պոկեմ: Զգույշ թռի. բարձր է... էխ տատ, տատ: Իսկ հիշո՞ւմ ես...

Իսկ դու՛ հիշո՞ւմ ես...

Ահ, ոչինչ էլ չես հիշում այլևս, ու ինձ էլ կարծես պետք չէ: Ուստի մտքը մոռացությունս բետոնի մեջ ու՝ ստոպ-կադր: Ու հեռացեք վերջապես թափվող անձրևի խորապատկերով, հեռացեք, սուզվեք... Ու հեռացող թաց այդ պատկերի ժամացույցը աղավնու թևաբախու-

մը չէ, այլ բետոնե սուզանավ-տիեզերանավի անտարբեր պտույտը մութ խորշերով, պտույտը և իմ սրտխփոցը: Եվ ամալիտուդները մերձենում են՝ ավաղ, և մոտ է համախփումը, ու պայթյունն էլ մոտ է բնականաբար: Ու վերստին կբացվի անձրև-վարագույրը և... Հե՛յ, գորտեր, մեղուներ, անտիլոպներ ու մարաբուներ, պատիկ-պատիկ տատիկներ-պապիկներ, վերստին կցատկոտեք ծակոտկեն հարթություններում, ու երիցուկներին՝ վերստին՝ ողջույն:

Ծանոթագրություն՝ կողմի կառույցում օգտագործված են Չեմֆիրայի երգերի տեքստերից վերցրած հատվածներ:

ԿՈՒԱԺ՝ ԽԵՂՃԻԿԻ ՀԱՄԱՐ

- Ասացիր՝ «խեղճիկ, իմ խեղճիկ»: Այսպես ասացիր նրան: Ինչո՞ւ, ինչո՞ւ ասացիր՝ «խեղճ, խեղճիկս, իմ խեղճիկ...»: Եվ, գիտե՞ս, դեմքդ այնքա՛ն ցավակցող էր, այնքա՛ն ցավակցող... Ինչո՞ւ այդպես ասացիր, ի՞նչ է, շա՞տ է աղքատ:

- Ոչ:
- Հիվանդ է ու անտե՞ր:
- Ոչ: Իսկի հիվանդ չի:

- Աղքատ չի, հիվանդ չի... Ուրեմն ինչո՞ւ ասացիր՝ խեղճիկս, դեմքդ էլ այնպես տառապակցող էր, այնպե՛ս ցավակցող, ասես իր կյանքը հավասարապես ապրել ես իր հետ կամ առհասարակ որևէ մեկի հետ: Գուցե ապրե՞լ ես:

- Չասես այդ բառը:
- Չէ, լուրջ եմ ասում, այդպես լինում է՝ երբ մարդը շատ է զգայուն: Եվ, ահա, ասացիր՝ «իմ խեղճիկ»: Ինչո՞ւ ասացիր, ինչո՞ւ այդպես խոնավացան աչքերդ, ասա... Չե՞ս ասում: Ի՞նչ է, վախենո՞ւմ ես... Բայց ինչո՞ւ, ինչի՞ց:

- Որովհետև... որովհետև...

Դժվարանում էի արտաբերել, թեև ասելիքս գիտեի ու լեզվիս ծայրին էր: Սակայն շատ էի դժվարանում, կարծես մի այնպիսի բան էի ասելու, որ երբեք չէի ասել, կարծես բացելու էի մի մեծ գաղտնիք, որը, լռելուս հետ, գնալով ավելի մեծ գաղտնիք էր դառնում: Թեև ասելիքս ծեծված, շատ ծեծված խոսք է, որպիսին ասում են միմյանց շատ հաճախ ու շատերը: Ուրեմն ինչո՞ւ եմ հապաղում, ինչո՞ւ եմ լռում, ինչո՞ւ է պաղել արյունս ու ջղաձգվել ծնոտս, ինչո՞ւ է նյարդային ցնցվում կոպս, և տարածությունն իմ շուրջը սառչում-ընկղմվում

է սարսափի խավարում՝ հենց գիտակցությունս կռահում է, որ ուզում եմ ասել. ահա, ահա, այ, հենց հիմա կասեմ: Ինչո՞ւ այն, ինչը հասարակ բան է բոլորի համար ու միշտ, ինձ համար հանկարծ դարձավ անտանելիորեն դժվարին, ի՞նչ է փոխվել այն ոչ հեռավոր ժամանակներից, երբ ես նույնպես շատ հանգիստ ու նույնիսկ ժպտալով կասեի դա: Բայց փոխվել է, ո՞նց է փոխվել և ո՞նց կուզեի, որ չփոխվեր: Կուզեի՞ որ: Հը՞: Ի՞նչ կասեք այս առիթով, պարոն... Լռո՞ւմ եք՝ բազմանշանակ ու ծաղրական: Լռեք, լռեք, դուք կապ չունեք, սա ձեզնից առաջ էր ու միշտ, այո՞, ա՛յս եք ուզում ասել ձեր ժպտուն աչուկներով:

Դե՞, ինչո՞ւ ես այդպես ցնցվում, ասա ու պրծիր, էլի, ախր քրտնել ես, կապտել-կանաչել... Կպայթի սիրտդ, եթե չասես: Դե՞...

Իսկապես որ, ինչո՞ւ եմ այդպես դողում, գուցե ցո՞ւրտ է, ինչո՞ւ է այսպես խուճապահար բաբախում սիրտս, ի՞նչ անեմ, ասե՞մ... չասե՞մ...

- Որովհետև... Որովհետև...

Կմկմացի, կմկմացի... ու...

Ասացի վերջապես:

Ու ի՞նչ... Կարծես ոչինչ էլ չկատարվեց, ոչ մի տերև նույնիսկ չչարժվեց, ոչ մի դիվահար չգոռաց, ոչ մի շուն չոռնաց... Իհարկե, իմ գառանցանքն էր, ամեն բան լավ է, փառք Աստծուն: Ասացի: Ասացի... «Որովհետև ապրում է»: Այդքանը: Կարծում էի՝ սոսկալի բան կսկսվի: Սակայն, փառք Աստծուն... Սակայն...

Սակայն սպասեք, մի րոպե, այս ի՞նչ է... Մթնում է կարծես, աստիճանաբար: Կտրուկ: Մթնեց: Չարաշշուկ ու սառը քամի փչեց, որ նման է կծիկն արագորեն բացող օձի: Մի՞թե... Այո-այո, ահա, ինչ-որ բան ուժգին ձայնեց, ինչ-որ մեկը հռչում է դիվային, ինչ-որ բան է կատարվում... Սկսվո՞ւմ է...

Սկսվում է:

Սկսվեց, սկսվեց, սկսվեց... Երկինքը բառաչում է, փոթորիկն ուժգնացավ անսպասելիորեն, ձայնեց քաթանե վարագույրը՝ ճիշտ երկու կես եղավ, կարմիր լուսինը ձաքեց դղիրդով և շրջվեց ջրերի մեջ, ծովն ուռեց, պրկեց կեղևը, ջրերն ահագնացան, պայթեցին ու սուրացին վիրավոր զոմեշի մռնչյունով: Ծանր իջած ամպերը քսվեցին ալիքներին, կայծակը շառաչով խփեց աղի ջրերին, լուսինը... Ո՞ւր է լուսինը... Ծնածկներն են հոշոտում արնագույն լուսինը: Սակայն նավը, նավն անկարող է այլևս դիմակայել... Ախր ասվեց քեզ, բոցման, ասվեց, չէ՞. «Հեյ, բոցման, ի՞նչ ես անում, զուր ես նստում դու նավակ...»: Ասվեց, չէ՞, ասվեց նաև՝ «Տես, ամպերն են այնտեղ կիտվում (մոտավորապես այսպես էր կարծես), դեպի երկինքն ան-

հատակ...»: Իսկ դո՞ւ...

«Յո-խո-խո և մի շիշ թթօղի»:

- Հեյ, նավավար, ի՞նչ ես անում, սթափվիր, նայիր, ամեն բան գրողի ծոցն է գնում, վեր կաց, արագ:

- Գրողի ծո՞ց... Էհեյ, իջեցրեք առագաստները, անջատեք շարժիչը, շուտ... Ղեկը, դեկն ամուր պահիր, չթեքես, կողը խութերին է խփվում, զգույշ, թեքիր, թեքիր, ասացի:

- Ասացիր՝ մի թեքի:

- Վայ ինձ, վայ իմ օրին, ձկների կեր են դառնալու վերջը, ես ձեր դմբո, դանդալոչ... Կտրեք, արագ, իջեցրեք այդ փալասները, որոտ ու կայծակ, կործանվում ենք, կրիաներ, շնածկան ծնունդներ, ես ձեր... Վայ մեզ, վայ մեր օրին...

Նավավարի երգը.

*«Քայքայվեց սարքը թիավարության,
Հիմնախիլ եղավ կայմը բարձրաբերձ,
Առագաստն ամբողջ իր թռչնարանով
Պատահաբար դարձան ծվեններ անկարկատելի,
Առասանները ձգման՝ խզվեցին,
Կտրվեց պարանն ապավանդակի,
Խարսխակալը քանդվեց հիմնիվեր,
Ծռվեցին սամիքն ուղղընթացության,
Սուզվեց հիմնալաստ նեցուկը նավի,
Ղեկն իր կազմվածքով ընկղմվեց անհետ,
Չստակապերը հոշված՝ թափվեցին,
Ավերակ դարձավ նավագոզն ամբողջ,
Նավախելը իր եզրաշրթերով խախտված դուրս թռավ,
Գահավորակը հանգստարանի փլված խորտակվեց,
Տախտակամածը քայքայվեց իսպառ,
Պնդիչ գամերը դուրս թռան տեղից:
Որպես արդյունք այդ ավերածության՝
Մնաց ողբերիս հուշարձանն այս լոկ»:*

Կամաց, զգույշ... Ի՞նչ եղավ: «Ցավում է»: Ցավո՞ւմ է: Սակայն ինչո՞ւ, ի՞նչ արեցի, ընդամենը ոտքս դրեցի գետնին, որ քայլ անեմ, չքայլե՞մ, կանգնած մնամ, թե՞ կանգնել նույնպես չի կարելի: «Զգույշ, ցավում է»: Իսկ սա՞ ով է... Եվ ինչո՞ւ... Ես հենվեցի ծառին, չհենվե՞մ: «Ախ, ցավում է»: Բայց ինչո՞ւ, ես ընդամենը լողում եմ, չլողա՞մ: Չքայլե՞մ: Չթռչե՞մ... Իսկ իմ թռչելը նույնպե՞ս ցավ է ինչ-որ

մեկին: «Ախ, ոնց է ցավում, կամաց»: Բայց ինչո՞ւ, ընդամենը շնչում եմ, չշնչե՞մ...

Կանգնիր, անշարժացիր, շունչդ պահիր, չշարժվես՝ այսպես առավելագույնս արդար ես մերձավորներիդ նկատմամբ, և հաշտ ես խղճիդ հետ, բայց... Ղեհ, թքած մարմնի վրա... Սակայն չէ՞ որ մարմինն էլ դու ես... Սսսս, վեր չնայես, վեր մի նայիր, իջեցրու հայացքդ, մի մտածիր, չնայես, չմտածես, չքննարկես, այնտեղ ՆԱ է: ՆԱ քեզ հետևում է: ՆԱ միշտ հետևում է՝ երբ հիվանդությունը հետաքրքիր է, այնպես ձևացրու, իբր չես տեսնում, անտեղյակ ես, ամեն բանից անտեղյակ, իմ խեղճիկ, սուլիր, թռչուններին նայիր... Չէ-չէ, թռչունները վերևում են, մկներին նայիր: Մկներին նայելով՝ սուլիր անտազնապ մի մեղեդի. թեթև, ինչպես մկների անցուդարձը, մաքուր, ինչպես ցորենի պահեստից ելած մկան մորթին, վճիտ, ինչպես քեզ նայող մկան աչքը: Բայց ո՞վ, ով կասի, թե ինչու է մուկը մուկ և ցորենի սիրահար, ո՞վ կասի, թե ինչու է ցավում ամենուրեք և ահա այստեղ, այ՛, այստեղ, այս կրծքավանդակի տակ: Ախ այս շրջիկ ցավը, այս անընդմեջ, խեղդող ցավը, որ ցավ էլ չէ, բայց ուժեղ է ցավից, ո՞վ...:

«ՓՈԶԶՈ.- Ո՞վ է Գողոն:

ԷՍՏՐԱԳՈՆ.- Գողոն:

ՓՈԶԶՈ.- Դուք ինձ Գողոյի հետ շփոթեցիք:

ԷՍՏՐԱԳՈՆ.- Օ՛, ոչ, սըր, ոչ մի վայրկյան, սըր, ի՞նչ եք ասում, սըր...

ՓՈԶԶՈ.- Ո՞վ է նա, քեզ եմ հարցնում՝ ո՞վ է այդ Գողոն:

ՎԼԱԴԻՄԻՐ.- Օ՛, Գողոն... Նա, նա այնպես, մի ծանոթ է...

ԷՍՏՐԱԳՈՆ.- Իսկի կարգին ծանոթ էլ չէ, հազիվ գիտենք նրան:

ՎԼԱԴԻՄԻՐ.- Ճիշտ է, մենք նրան վատ ենք ճանաչում...

բայց միևնույն է...

ԷՍՏՐԱԳՈՆ.- Անձամբ ես նրան նույնիսկ չեմ ճանաչի, եթե տեսնեմ:

ՓՈԶԶՈ.- Դուք ինձ շփոթեցիք նրա հետ:

ԷՍՏՐԱԳՈՆ.- Գիտե՞ք ինչ... դուք հասկանո՞ւմ եք... փոշին... լարվածությունը... սպասումը... Սպասումը... Ես խոստովանում եմ... Ես կարծեցի... միայն մեկ վայրկյան...

ՓՈԶԶՈ.- Սպասո՞ւմ... Ուրեմն դուք սպասո՞ւմ եք նրան: ՍՊԱՍՈ՞ՒՄ...»:

Հեյ, նավավար, ամուր կառչիր, ամուր... Մեկ, երկու, երեք... Ի՞նչ

է, չստացվե՞ց, սուզվո՞ւմ ենք... Դեհ, ինչ արած, ամեն բան մարդուս համար է, խեղճիկիս համար, մաքառիր, քո ծովն է, քո սիրած ծովը, նավավար, դու այնքա՛ն սիրում ես աղի ջրի ցայտը, թարմ քամին, որ ծովի հոտն ունի, ձկներին և շնածկանը նույնիսկ, որը, նայիր, հեռվում ճեղքում է ծովի մաշկն իր սև լողակով: Թափ տուր քեզ ու լողա, նավավար, ետ մի նայիր գայրացած, խեղճիկ, նավը չկա, այսինքն կա, բայց ուրիշ տեղում և բացարձակ անօգուտ քեզ համար, մի մտածիր այլևս նավի մասին: Սա՞ռն է ջուրը, մամլո՞ւմ է կրծքավանդակդ, հագուստդ ծա՞նր է, վա՞ր է քաշում... Սակայն աշխատեցրու թևերդ, թափ տուր, թափ... Ո՞ւր... Դե ինչ կարևոր է, մեկ է՝ ցամաքը չի երևում բոլոր կողմերից, դու լողա, լողա, ապրել ուզում ես, չէ՞, խեղճիկ, ուրեմն ապրիր: Այնուամենայնիվ, ի՞նչ լողակ է, որ չարագուշակ դարձդարձումներով կտրում է ջուրը և այնքան հեռու չէ արդեն... Փրկի՞՛ջ... Շնածուկը փրկի՞՛ջ... Նայած ո՞վ է ուղարկել... Չէ-չէ, այնուամենայնիվ անշարժացիր, դու գիտես մեջքին անշարժ պառկելու ձևը, անշարժացիր, գուցե գերանի տեղ դնի ու անցնի անտարբեր, միայն թե հոտ չառնի, արյան հետք չկա՞ վրադ... Հոտ չհանես հանկարծ, չմիզես, չփսխես, հե՛յ, նավավար, դիմացիր: Էհ, նավավար, գուր նստեցիր դու նավակ: Մյուս կողմից էլ՝ մի բան պիտի նստեիր, չէ՞, նավավար: Էհ...

*«Գնացի մարդի, ունեցա որդի,
Գդակը պոպոզ, անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին, ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան, վա՛յ որդի ջան...»*

Ո՞ւր է գնում այս սևամորթ խեղճիկը. տես-տես, ոնց է պճնվել, կուրծքը ներկրտած, դեմքը ներկրտած, քթից՝ օղակ, ձեռքին՝ բամբուկ... Եվ ուրախ է ոնց, երջանիկ է, անկեղծ ու անմիջական, ինչպես կարող է լինել միայն ջունգլիաբնակ խափշիկը: Մատուբին: Ինչո՞ւ: Աա՛ա, գնում է հարևան գյուղը Մատուբին, հարս է բերելու այնտեղից Մատուբին, սիրունիկ, խուճուճմազիկ, աչքաբաց հարսիկ, որի մաշկը Մատուբիի մաշկից էլ սև է, համարյա կապույտ: Այո, երջանիկ է Մատուբին, քըշքը, ցեցեներ ու փղեր, Մատուբին չի վախենում, նա սիրահարված է և ուժեղ, չքվեք ջայլամներ ու ընծուղտներ, Մատուբին խրոխտ քայլում և ուրախ երգ է դնում՝ «Ուկու լելե, մարատուկա, էյ Մատուբի, ուլա ուռկա»: Իսկ սա՞ ով է, ո՞վ է այս թեփուկավոր խեղճիկը, որ կամաց-անձայն սահում է Մատուբիի հետևից, գետի դեղին ջրի միջով, գետակի մացառներով քողարկված... ծեր ալիգատորն է, որ մի քիչ խուլ է, մի քիչ էլ կույր,

բայց քաղցած է, ո՞նց է քաղցած, երեք օր հաց (միս) չի դրել դեղնաժանիք երախը, ինքը քշել է բորենուն անտիլուպի լեշի մոտից, բայց ջահել առյուծն իրեն է քշել հետո, ինքը դարանել է շիմպանզեին, բայց նա փախել-ծառն է բարձրացել, ու հիմա կոկորդը դողում է բարկությունից ու քաղցից, նաև՝ արյան կարոտից, որ տաք շիթով պիտի իջներ կերակրափողով, եթե հաջողեր: Մատուբիի երջանկությունը նրան ի՞նչ... Թո՛ւ, թքա՛ծ Մատուբիի սիրո պատմության վրա, երջանիկ կամ դժբախտ՝ Մատուբին միս է, կոկորդիլոսային ծեր գոյությունը մի քիչ էլ քարշ տալու միջոց: Եվ լողում է ալիգատորը, հետևում է Մատուբիին՝ ջանալով անձայն շարժվել ու մոտենալ, մոտենալ, մոտենալ անձայն՝ ցսս՛ս, ցսս՛ս, ցսս՛ս...

Ծեր կոկորդիլոսի երգը.

*Ես թշնամին չեմ Մատուբիի, չէ,
Բայց թշնամի չեմ նաև ինձ, չէ,
Մատուբին թող իր հարսին խժռի, թե կարող է,
Իսկ ես՝ Մատուբիին, թե կարողանամ: Այո:*

Արվին ելավ, կարմրեց, դեղնեց, ճառագայթեց. փախե՛ք խավարասերներ ու խոնավասերներ, փախե՛ք ստորգետնի բնակիչներ, ձեր ծակերը մտեք, արվին ելավ ու ջերմությամբ ողողեց ամեն բան, կյանքը լցվում-ուռցնում է թոքերդ, զվարթությունից խեղճվում ես կարծես, ուզում ես ծնկի իջնել, երջանկացած խեղճիկ, ուզում ես արածել, խժռել խոտը, ծաղիկը, հողը, ջերմացած քարերը կրծել, թավալ տալ դեզի ու աթարի մեջ, դեմքդ քսել ծառերի կեղևներին՝ արնել, ամբողջ տիեզերքը ներշնչել-արտաշնչել ու շնչակտուր լինել լույսից, կենսախնդությունից, ու սեր ես ուզում, խեղճիկ, բոլորն ու ամեն բան թող սիրեն քեզ ու դու՝ բոլորին, դու լավն ես, չէ՞, խեղճիկ, շատ լավն ես, չէ՞, քնքշանքի, ուշադրության արժանի, սիրո արժանի, իմ խեղճ խեղճիկ: Ուստի, մի հեռացիր, արվի, մնա երկնակամարում, խաբիր, կա՛ց, մի լքիր...


Ոչ: Ոչ: Ստվերները պիտի կամացույ սողոսկեն, երկարեն, ստվերներն իրենց սլաք-ծայրերով պիտի ցույց տան քեզ մութ խորշերի մուտքերը, և դու, մածուցիկ ու գորշ թախիծ դարձած իմ խեղճիկ, պիտի ներծծվես-թափանցես մութ մուտքերով բորբոսնած խորշերի խավար ընդերքը, ուր ցուրտ է սաստիկ, սառը, բեկբեկուն, անհաղորդ, բիրտ, բայց... Բայց էլի աշխարհ է, գոյություն, թող որ՝ վախ, սահմնվում, թող որ՝ դող ու տագնապ, խուճապ ու ցավ, բայց էլի աշխարհ է, խեղճիկ, դիմացիր, տոկա, մինչև նոր արվի ծագի:

Բայց կծագի՞ արդյոք, արդյո՞ք նրա բազմաթիվ ծագումներն ապացույց են գալիք ծագումի, մի օր ավարտվելու է, չէ՞, ինչպես ամեն բան, և ուրեմն՝ ինչո՞ւ դա հենց այս օրը չի կարող լինել... Հենց այս օրը, այո, վերջ, չկա, չկա, չի լինելու, չկա այլևս նոր արփի...

Բայց դու մի սարսափիր, խեղճիկ, գուցե կա՞: Չգիտե՞ս: Չգիտես, այո, չգիտես. դեհ, եթե չգիտես՝ ուրեմն չգիտես, տառապանքներդ էլ զուր են ուրեմն, ուրեմն սողա քո խորշերով, գնա, խեղճիկ, մի թախծոտ մեղեդի երգելով գնա...

Գնա, Ջոն, թեև... Սպասիր, երգդ ավարտիր:

Ջոնի երգը.



Չէ, Ջոն, մի ավարտիր, հերիք է, խնդիրը կարծես պարզ է արդեն, հողագունդն հաղորդակից չէ քեզ, ունկնդիր չունես, շատ է չորացած այս հողագունդը քեզ ունենալու համար, Ջոն, իմ խեղճիկ, հավաքիր մեղեդիներդ, վերցրու, վերցրու նոտաներդ ու տար վեր, վերադարձրու Տիրոջը, ասա՝ չընկալեցին, Տեր, չուզեցին, չզգացին, ասա՝ նրանց այլ բաներ են պետք, նրանց ճամփան ուրիշ է, Տեր: Տար երգերդ, Ջոն. փախցրու, քանի չեն պղծել, ոչինչ չթողնես, չկա, չի եղել և չէր էլ կարող լինել, սխալմունք էր:

Իսկ Մատուբին...

Սակայն ի՞նչ Մատուբի, Մատուբին ո՞վ է, ախր ո՞վ է այդ Մատուբին, նրա տիրոջ մերը... Ի՞նչ գործ ունես Մատուբիի հետ, ի՞նչ անենք, որ Նոյից է սերվել ու նրա նախնին էլ Արարատի փեշով է իջել, ինչո՞ւ ես ուզում աշխարհի բոլոր խեղճիկներին գլխիդ հավաքել, դու քեզ հերիք չե՞ս, դու քո կոկորդիլոսն ու երգը չունե՞ս... Վերջ, ոչ մի Մատուբի, մենք էգոիստ ենք, եսապաշտ: Վերջ...


Այո, եսապաշտ ենք, մորթապաշտ, և ջանում ենք փրկվել. ինչո՞ւ ոչ: Ինչո՞վ: Սիրով: Այո, սիրով. ճերմակ կրծքիկ, ճերմակ ծնկիկ, ճերմակ պարանոց, բարակ մեջք... Եվ դու գուցե փրկվես, խեղճիկ, իր՞, փրկություն է, չէ՞, նման է փրկության, չէ՞... Թեև իմացիր՝ հենց մատդ դրիր աշխարհի բերանը՝ մսաղացը քաշելու է՝ տանի անմնացորդ:

Սակայն ինչե՞ր են սպասում քեզ այնտեղ, ի՞նչ լորձառատ գիշերներ, լորձամած առավոտներ, և դու՝ լորձասույզ, լորձակյաց, երջանիկ ու պարարտացող՝ ինչպես մի սունկ, որ հպարտ է իրենով, լորձարյուն խեղճիկ, որին կթվա, թե խեղճիկ չէ այլևս: Սակայն...

Ի՞նչ է, չստացվե՞ց: Դեհ, ուրեմն հաց թխիր, ցորեն ցանիր, ջուրը շուռ տուր արտիդ վրա, հերկիր, հնձիր ու ասա՝ «Կանգ առ ժամանակ, քանզի հրաշալի ես»: Հրաշալի է, չէ՞... Չէ՞... Ինչո՞ւ չէ, խեղճիկ, ինչո՞ւ ես հռչում, լկտի խեղճիկ: Ուստի ո՞նց անենք, թողնենք հեռանա՞նք, առհասարա՞կ, ընդմի՞շտ...

«Լինել, թե չլինել, այս է խնդիրը.
Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ...»:

Ոչ, ոչ սա, սրա վրայով շատ են անցել-դարձել, հոգնեցնող է: Ուրիշ բան փորձենք, ասենք թե՛ սա.



Չէ, սա էլ լավ օրի չի բերում, ավելի շատ կործանում է, քան փրկություն: Գուցե...

$$E=mc^2$$

Մի բուպե, կանգ առ, խեղճիկ, ինչո՞ւ այդպես սարսափեցիր: Սպասիր, այ խենթուկ, ո՞ր ես գլխապատառ սլանում դեպի մութը, դե կանգնիր վերջապես: Կա՛, կա՛ այնուհանդերձ փրկություն... Որտե՞ղ... Որտեղ, որտեղ... Այ, այնտեղ, նայիր, շունչ քաշիր, աչքերդ մաքրիր փոշուց և նայիր, տեսնո՞ւմ ես, հեռվում, դե այնտեղ, էլի, ուշադիր նայիր, դարձյալ մաքրիր աչքերդ, նայիր, տեսա՞ր, չե՞ս տեսնում... Տեսա՞ր... Չէ՞... Դե, ահա, ահա՝ ձեռքս ուղղությամբ նայիր, ցուցամատիս, չէ՛ բթամատիս, չէ՛-չէ՛ ճկույթիս, տեսա՞ր... Դարձյալ՝ չտեսար: Ուշադիր նայիր, այ այնտեղ, հորիզոնի գծին, ձախ, ձախ, ոչ այդքան, աջ բեր հայացքդ, մի քիչ էլ... Տեսա՞ր... Չէ՞... Ախր ուշադիր նայիր, խեղճիկ, կանգնիր քարին, ահա, հիմա նայիր, չտեսա՞ր, մի քիչ աջ, չէ՛, մի քիչ ձախ, տեսա՞ր, չէ՞, մատիս ուղղությամբ, այնտեղ, աջ, չէ՞, ձախ, չէ՞...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նամակներ՝ գրողական փորձառության հեռադրությունից5

«ՇԱՐԺԱՍԱՆԴՈՒԴՔ» ժողովածուից (1985-1993թթ.)

Առնետը8

Մութ պատուհան.....17

Ճարպոն և կյանքը.....22

Ծերունին և ծովը.....28

Արևային նավ.....33

Անվավոր թշնամիներ.....37

Մղձավանջներ.....43

Ճեպընթացը խավարի մեջ.....53

Շարժասանդուղքը.....71

Աղջիկը, ժամագործը, ես83

Պառակտում.....92

Հայելու առջև.....95

Չարագուշակ արծիվ.....100

Փոս.....104

Վախը.....112

Թիկնապարկ.....119

Անվերջ որոնում.....126

«ՍՏՎԵՐՆԵՐ ԽԱՄԱՃԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑՈՒՄ» ժողովածուից
(1994-1997թթ.)՝ բացառությամբ աստղանիշով նշվածների

Փոքրիկ աղջիկ.....129

Նավեր, գնացքներ* (2006թ.).....131

Կառամատույց.....140

Հայկուհու պարը.....145

Բեքի.....154

Անհրաժեշտ տարածություն.....171

Պախմեղ*(2008թ.).....174

Չալոյի վերին կռիվը *(2007թ.).....179

Գիր-դուշ* («Մարդկանց տուն ուղարկիր» ժողովածուից).....185

Կիսավեր տան պահակը.....189

Նամակ ընթացքից.....198

Անմարդ լճափին թողած գրառումներ.....206

Դռներ, աստիճաններ, դռներ.....213

Յոթ, վեց կամ ութ.....217

Անիմա.....220

Creation.....223

Այստեղ քեզ չեն սիրում.....225

«ՄԱՐԴԿԱՆՑ ՏՈՒՆ ՈւՂԱՐԿԻՐ» ժողովածուից (1998-2003)՝
բացառությամբ աստղանիշով նշվածների

Գերիրապաշտական օրորոցային՝
դատրիկի համար* (2008թ.).....227

Քիլլերը վարձված է, թիրախը պատրաստ պահիր* (2007թ.)...231

Համբերություն քեզ, մարդ* (2009թ.).....233

Առաքելությունն ավարտվեց-Առաքյալը ետ է վերցվում.....236

Կոլած-բլուզ՝ տիբեթյան շան համար.....244

Տունդարձի կոլած.....250

Մարգագետնային կոլած.....253

Կոլած՝ Ջեմֆրայի համար.....256

Կոլած՝ խեղճիկի համար.....260

Գուրգեն Վազգենի Խանջյան
Նամակներ ընթացքից

պատմվածքներ
էսսեներ
կոլաժներ

Խմբագիր՝
Շապիկի նկարը՝
Համակարգչային ձևավորումը՝

Արքմենիկ Նիկողոսյան
Սուրեն Խաչիկյանի
Նառա Վարդանյանի

Ծավալը՝ 17 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500 օրինակ

Տպագրվել է՝ ԱԶ «Արայիկ Մարկոսյան» տպարանում